470	Propaganda of the Armenian dissidents in Edessa; the Armenian catholicos Nerses and his successor Grigor Abirad; the exchange of letters of consent and faith between the Syriac patriarch and the Armenian catholicos.
474	Deaths of Nur ad-Din and of Amaury; Qilij-Arslan increases his influence; the murder of Mleh in Cilicia; the Turks in Sasun.
476	Salah ad-Din departs from Egypt and takes control over Damascus; release of the Frankish prisoners in Aleppo; war with Seif ad-Din.
479	The death of Najim ad-Din of Mardin; war between Manuel and Qilij-Arslan; the Turkish oppression of Christians in Melitene.
483	The war of Salah ad-Din with the Franks in Palestine and his defeat; his victories in Baalbek and Damascus.
486	The death of the emperor Manuel; military events among the Turks; the death of Seif ad-Din.
488	The struggle over succession between Andronicus and Isaac [II] in Constantinople; the murder of Andronicus; the deaths of the Turkish Atabeks of Amida, Mardin and Khelat; the military expeditions of Saladin; Leon, prince of Cilicia.
492	The war between the Kurds and Turcomans; the customs and settlements of the Kurds.
494	Saladin conquers Jerusalem, Akko and the whole of Palestine; the war between Qilij-Arslan and his son.
498	The Franks arrive in Akko to liberate Jerusalem; the defeat of the Turks at Iconium by German troops, their emperor [Frederick Barbarossa] drowns at Silifke.
500	The deaths of Qilij-Arslan and Saladin; the struggle of their successors.
503	Leo, the Armenian king of Cilicia; the wealth and prosperity of his country.
506	[1. Continuation] The « *son of Konstantin* » [Hethum, 1226–1269], still a child, is married to the pious empress Zabel and later becomes king.
507	*« And now is the year 695 of the Armenian era [A.D. 1246] and we will report briefly what had happened in between ».*
507	Political events in Armenia, Georgia and the Near East between 665 of the Armenian era [A.D.1216] and 678 [A.D.1229].

525	[Colophon of the scribe Grigor of Akants in the year 1273] *« In the year 678 of the Armenians* [A.D. 1229] *was completed the world history of Mar Michael, the holy patriarch of the Syrians, beginning with the time of Adam … these are from Adam up to the completion of the books of Mar Michael 6430 years. And now is the year 722 of the Armenians* [A.D. 1273]*; in this year was written this manuscript through the hand of the miserable Grigor. With the will of God we will write down the remaining 44 years* [the period from A.D. 1229 to 1273] ».
—	**History of the Nation of Archers [Mongols] by Grigor [of Akants].**[33]
1*	**Again from Mar Michael the Syrian: On Priesthood.**
21*	**Tables of the Patriarchs of Antioch, Rome, Alexandria, Ephesus, Constantinople, Jerusalem.**
27*	[2. Continuation] The apostolic origin and orthodoxy of the Armenian Church.
32*	The succession of the Armenian patriarchs from the apostle Thaddeus up to catholicos Constantine Bardzrbertsi.
40*	[3. Continuation] « *He* [Constantine] *is now in the 25th year of his patriarchate at Hromkla*»; eulogy on the catholicos.
41*	The translation from Syriac into Armenian; the value of Michael's history for the Armenians.
42*	The date of the translation, ordered by Constantine, in the year of Christ 1248 and in the year 695 [sic] of the Armenians, in the 25th year of catholicos Constantine and in the 25th year of king Hethum.
43*	[Colophon of Stephanus, abbot of the monastery of Akants]. His order to Grigor to write down the history of Mar Michael[34] beginning from Adam up to the year 678 [A.D. 1229] of the Armenians, as well as the history of the Archers [Mongols], who « *were in Armenia 44 years until our time* ».
45*	[Colophon of the scribe Grigor of Akants]: the *Vorlage* of Michael's history comes from the monastery Awag Anapat [Cilicia].

---

[33] The history of the Mongols composed by Grigor and considered as a continuation of Michael's chronicle is extant in all manuscripts of *Version II*. Nevertheless the text was left out in the edition, Jerusalem 1871, neither was it translated by Langlois. For the full text see Ms. Jerus. 32, fol. 523–592 and the edition by N. BOGHARIAN, *History of the Tartars* [in Armenian], Jerusalem 1974, pp. 17–67; translation by R. BLAKE—R. FRYE, History of the Nation of the Archers, in: Harvard *Journal of Asiatic Studies* 12 (1949), pp. 269–399.

[34] Another colophon of the scribe Grigor in Ms. Jerusalem 32, fol. 594 (see N. BOGHARIAN, Main Catalogue of Manuscripts in the Monastery of St. Jacob [in Armenian], vol. 1, Jerusalem 1966, col. 146), which was not taken over in the edition, Jerusalem 1871, repeats that Stephanus ordered the copy of Michael's Chronicle.

նութեանց , մին սովորական (1) որ առ բազումս գտանի , յորմէ փոխեալ է և Գաղղիերէնն . միւսն փոքր մի համառօտեալ, այլ գլխովին տարբեր թարգմանութիւն , զոր 'ի դէպ համարեցաք տպագրել, իբրեւ միակ օրինակ որպէս համարիմք , որ և բազում ուրեք օգնէ 'ի լուսաբանել զմիւսն : Զսոցանէ հարկ է մեզ տալ լիովին տեղեկութիւն . այլ նախ 'ի դէպ համարիմք խօսել կարճառօտիւք զհեղինակէ գրոցս որչափ ինչ գտանեմք յառաջնոցն քան զմեզ խօսեցեալ հետախոյզ քննութեամբ :

Ծնաւ Միխայէլ , որպէս կարծի , յԱնտիոք քաղաքի , յամի 1126 , 'ի յԱսորի ծնողաց Յակոբիկ կոչեցելոց . անուն հօր նորա Եղիաս երէց 'ի Մելիտինոյ, 'ի Պանտխեան տոհմէ : Կեանք նորա անտխական անծանօթ է ամենեւին . յերեսուն և վեց ամաց հասակի եկաց նա վանահայր մենաստանի սրբոյն Պարսամայ Ճանայի , մերձ 'ի Մերտին , ուր է այժմ աթոռ կաթողիկոսութեան Ասորւոց : Զկնի վախճանի Յովհաննու ԺԱ Պատրիարքի , ընտրեցաւ սա ինքն Միխայէլ յաջորդ Աթոռոյն 'ի ժողովի եպիսկոպոսաց գումարելոց 'ի վանս Փշնի, և է նա հարիւրերորդ 'ի չորս աթոռակալացն. օծաւ 'ի 18 ամսեանըն հոկտեմբերի, 1166։ Ի սկիզբն անդ գահակալութեանն ըստ վաղեմի սովորութեան ազգին, որպէս գրէ նա ինքն (յեր. 472) առաքէ զգիր դաւանութեան իւրոյ առ Ս. Ներսէս Շնորհալի, և զաթոռն պատրիարքական՝ որ էր յայնժամ'ի յԱմիթ քաղաքի, փոխադրէ 'ի վանս Մար Հանանայ (Ս. Անանիայ) մերձ 'ի Մերտին քաղաք։ Յետ այնորիկ ել Միխայէլ յայցելութիւն վանացն, հաստատէր վանահարս, և քաղաքաց քաղաքաց կարգէր եպիսկոպոսունս։ Եկն ել և յԵրուսաղէմ յերկրպագութիւն սուրբ Տեղեաց, և դարձաւ անտի յԱնտիոք յամի 1168։ Ի միւսում տարւոջ առաքեցաւ առ նա Քրիստափոր հանդերձ թղթով 'ի կողմանէ Մանուէլ կայսեր վասն խնդրոյ միաբանութեան (1)։ Ի նոյն նպատակ արդէն իսկ սկիզբն լեալ էր թղթակցութեան 'ի մէջ Ս. Ներսեսի Շնորհալւոյ և Կայսեր, ուր վասն եկեալ էր 'ի Հռոմկլա երկիցս անգամ Թէորիանէ և Յովհաննէս վարդապետ յունակրօն առ յիշեալ Կաթողիկոսն. յորմէ հրաւէր հասեալ և առ Միխայէլ Պատրիարք երթալ առ նոսա 'ի ժողովն Հայոց, նա փոխանակ առաքէ յառաջնում նուագի զՅովհաննէս եպիսկոպոս Քեսնոյ, և յերկրորդումն զԹէոդորոս Բար—Վեհեբոն կոչեցեալ, տալ պատասխանի բանից Թէորիանեայ։ Միխայէլ գովութեամբ յիշատակէ 'ի պատմութեան իւրում (400) զՅովհաննէս եպիսկոպոս ասորի, մինչև յաղթահարել նորա բանիւք զիմաստասէրն Յունաց։ Եւ կասկածեալ զՆերսիսէ, զոր յանդէպս համարէր նա հակամէտ լինել ընդունելոյ զդաւանութիւնն յունական եկեղեցւոյն, հրաժարեալ 'ի ժողովոյն դառնայ յետս։ Յետ ընդունելոյ Կայսեր զԹուղթ խոստովանութեան Հայոց, զնոյն խնդրէ և 'ի Միխայելէ. և նորա առաքեալ զդաւանութիւն հաւատոյն, կնքէ զբանն յայտնելով եթէ ցանկալի է նմա կալ ընդ Յոյնս 'ի սէր միաբանութեան առանց հեռանալոյ յուղղափառութենէ հարց իւրոց և 'ի հայրենաւանդ ծիսից։ Այսպէս խնդիրն միաբանութեան մնայր առանց յաջողելոյ որպէս ընդ Հայս՝ նոյնպէս և ընդ Ասորիս։

---

(1) Սովորական օրինակն ամօք ինչ յառաջագոյն տպագրեցաւ 'ի Ս . Աթոռս , այլ հրատարակութիւն նորա յետս թողաւ ցարդ . ապաւելով զերկոսին օրինակն միանգամայն հանել 'ի հրապարակ :

---

(1) Միք. Չամչեան. Հտ. Գ. յեր. 107։

Միխայէլ Պատրիարք այր հաստատամիտ և կապեալ սիրա ընդ հայրենի կրօնս իւր, սիրող էր և պայծառութեան եկեղեցւոյն իւրոյ. քանզի մինչդեռ ընդ Շնորհալւոյն թըղթակցէր վասն վերոյիշեալ խնդրոյն, 'ի նմին ժամանակի ձեռն արկանէր 'ի շինութիւն եկեղեցւոյ վանացն Ապու—Քաղեբայ մերձ 'ի

Կարկառ։ Յերկրորդում ամի 1170, գտանէր նա 'ի վանս Մար Հանանայ, 'ի ժամանակի յորում շարժն ահագին սասանեցուցանէր զքաղաքս Սուրիոյ (463)։ Եւ ինքն Միխայէլ ոչ դլայր դադարէր յայցելութեանց իւրոց և 'ի շինութենէ եկեղեցեաց ընդ պաշտպանութեամբ խնամոց քրիստոնեայ իշխանացն Փռանկաց, յորոց ձեռս էր յայնժամ իշխանութիւն քաղաքացն Ասորեաց։

Յաւուրց անտի գահակալութեան իւրոյ ունէր Միխայէլ պիշխանութեան իւրոյ թեկնածուս և նախանձոտս յեպիսկոպոսաց անտի, որք ընդ ակամբ հայէին 'ի նա, վասն որոյ և 'ի պատեհ առեալ զբացակայութիւն նորա յաթոռոյն, ընտրեն 'ի ժողովի եպիսկոպոսաց զնախայիշատակեալն Թէոդորոս Բար-Վեհեբուն, որ կոչեցաւ Յովհաննէս. և այսպէս յերկուս ձեղքէր պատրիարքութիւնն՝ ունելով իւրաքանչիւր վիճակս առանձին։ Իսկ Միխայէլ գումարեալ զեպիսկոպոսունս իւր, ընկենու զՅովհաննէս յԱթոռոյն. և նա, ըստ գրելոյ Ասեմանեայ, յետ ոչ բազում ամաց հաստատի յիշխանութեան իւրում 'ի ձեռն Լեւոնի Բ. 'ի սահմանս Կիլիկիոյ. այլ ոչ տեւեալ առաւել քան զամս 13, խափանի աթոռ նորա և դադարէ երկպառակութիւնն (1)։ Նոյնպէս

---

(1) Միք. Չամչեան. Հտ. Գ. յեր. 153։

Միխայէլ բազմահոգ և բազմայած կենօք եւ յընտանի խռովութիւնս անցուցեալ զաւուրս իւր՝ վախճանի յամի 1199, 'ի հասակի 73 ամաց, կացեալ յաթոռն ամս 33. և մարմին նորա ամփոփի յիւրաշէն եկեղեցւոջ վանացն սրբոյն Պարսամայ, յայրի միում զոր իւր էր փորեալ 'ի կենդանութեանն։

Ոչ դուզնաքեայ ոք էր Միխայէլ յազգի անդ իւրում և առաջնի եկեղեցւոյն, այր զօրաւոր բանիւք եւ լի ազդեցութեամբ. յամբառնալ իւրում յաթոռն թէպէտ և ունէր անձին հակառակորդս, այլ նա ամենայնի յաղթէր. որպէս և զեղբօրորդի իւր զՅեսու, որ դաղտ խորամանկէր 'ի ծերութեան նորին զբարձրագոյն աթոռոյն թեկն ածելով, նախատակած արարեալ ցրուէր զխորհուրդս նորա զամենայն։ Զհամարումն և զվարկ ազգին իւրոյ ստացեալ ունէր 'ի շնորհս հանճարոյ իւրոյ և գիտութեան, եւս առաւել աշխատութեամբք և մեծախորհամ վաստակօքն զոր վաստակէր 'ի շինութիւնս վանորէից և եկեղեցեաց. այլ առաւել քան զառաւել նշանաւոր էր 'ի նմա նախանձ ազգային եկեղեցւոյն իւրոյ և հայրենաւանդ ծիսից, որով թերեւս փոքր ինչ քան զչափն անցեալ թուիցի յաչս քննասիրաց, եթէ չիլ ակամբ և միակողմանի դատիցեն զնորա հակակրութիւնն զոր ցուցանէ յամենայն առխթս ընդդէմ չորրորդ ժողովոյն և քաղկեդոնականաց, վասնորոյ և առ Ս. Ներսէս Շնորհալի գրեալ զգուշացուցանէ զնա ՚ի ժամանակս խնդրոյ միաբանութեանն, յասելն (459). “Այդ կրօնքդ ՚ի մերըս մերձ է. բայց ես ոչ կամիմ զճշմարտութիւն կրօնից հարցն ձերոց փոխել. զի թէ մեծ և կամ փոքր և կամ դաւանութիւն փոխեսցէ, երեւի թէ թերի էիք մինչեւ ցայժմ և արդ լցայք, և դեռ կատարեալ եղերուք ակն առեալ մարդոյ”։ Քանզի այն պակասութիւն զոր տեսանեմք ՚ի Միխայէլ, որ ՚ի մոլեռանդութիւն ածէ զմարդ, բազմապատիկ առաւել տեսանելի է ՚ի Յոյնս և յեկեղեցականս նոցին, որք որպէս զՀայս՝ զնոյն օրինակ և զԱսորիս հերետիկոսս համարէին վասն ոչ ընդունելոյ զչորրորդ ժողովոյն խոստովանութիւն, այն է երկուս բնութիւնս ՚ի Քրիստոս։ Այս ուրեմն ոչ է ստգտանելի պատմագիրս եթէ ՚ի զգուշութիւն եկեղեցւոյն իւրոյ և ապագայ սերընդոյն բազում ինչ և կասկածելիս և դժուարահաւանելի դէպս և արտավէպս ՚ի մէջ բերէ ՚ի գիրս յայս, որք համարին ստուերածս արկանել զիմաստութեամբ նորին և զքաջախոհութեամբ։

Միխայէլ ոչ միայն ընդհանուր պատմութեան, այլ և աստուածաբանական խնդրոց ցուցանէ զինքն հմուտ գոլ, որպէս տեսանի 'ի քահանայութե՟ Ճառին որ յաւարտ պատմութեանս. տեղեակ Թուի նա և յունական, հռովմէական և Արաբացւոց լեզուաց. իսկ հայերէն բարբառոյ ոչ այնչափ, մանաւանդ եթէ և անգէտ իսկ ազգային պատմութեանս վարկանի, որպէս երեւի 'ի պատմել անդ զմահուանէ Նեբրովթայ, զորմէ ասէ մեռանել ընդ փղատակօք աշտարակին, և ապա 'ի գիտնոցն Հայոց անշուշտ տեղեկացեալ ուղղէ զկարծիսն՝ յասելն (16). “Աստուածե» ցաք յետ ժամանակի սպանանելն նմա 'ի Հայ» կայ որդւոյ Թորգոմայ »: Որչափ մեծ է հակակրութիւն նորա առ քաղկեդոնականս, նոյնչափ առաւել համակիր է և համախոհ ընդ եկեղեցւոյն Հայոց և ընդ ել ընդ ազգին, մինչեւ զԹագաւորութիւն և զքահանայապետութիւն Հայոց պարծանս համարել Ասորւոց, և նորօք ունել աճումն եկեղեցւոյ իւրեանց 'ի Քրիստոս և սիւն հաստատութեան (Ճառ. քհ. 31,) վասն որոյ և զՃառն իսկ քահանայութեան համարի յօրինեալ 'ի նպաստ և 'ի պարծանս հայկական եկեղեցւոյս զոր և աւարտէ 'ի մեր քահանայապետութիւն, 'ի մէջ բերելով զգաւազանագիր Կաթողիկոսացն Հայոց մինչեւ ցաւուրս իւր: Այսչափ ինչ զքաղաքավարութենէ կենաց և զանձին յատկութեանց խօսեցեալ հեղինակիս , խօսեսցուք և զնորին գրոցն պատմութեան :

Որպէս կանխեցաք ասացաք , կրկին են առ մեզ թարգմանութիւնք մի քան զմի զանազանեալք եթէ՛ շարակարգութեամբ պատմելեացն իւրաց և եթէ յապաւմամբն և յաւելմամբ ինչ ինչ պարագայից : Մեք 'ի բազում պատճառաց և 'ի մասանց համարիմք զերկուսն եւս ուրոյն յեղեալ 'ի մեզ յասորի բնագրէն, թէպէտ և 'ի նմին թարգմանչէն և 'ի նմին յարմարողէ ըստ լեզուիս մերոյ . քանզի որչափ տարբեր իցեն թարգմանութիւնքն այնչափ մերձագոյնք են միմեանց 'ի յոլով տեղիս ոճով ասացուածոյն և բառից ընտրութեամբ և զուգադրութեամբ: Եւ որ անկասկած առնէ զմեզ 'ի կարծիս մեր զանազան լինել թարգմանութեանցս , այն է զի 'ի համառօտութեանս յայսմիկ գտանին պարագայք և մասնաւոր յիշատակութիւնք բոլորովին այլազգ քան զմիւսն : Օրինակ իմն, զծագմանէ Աբդլմուճնեացն խօսելով, օրինակն մեր ասէ (431) երկուս որդիս ունել Աբդլայի , այն է Աբդլմինի և Ազուր , որք յանցեալ ընդդէմ պատուոյ հօր իւրեանց՝ փախչէին 'ի կողմն Ափրիկոյ : Իսկ միւս թարգմանութիւնն ասէ . Ալեայ խալխիպին Եգիպտոսի էին որդիք երեք , յետ մահուան հօրն երեցն իշխանացեալ խորհէր սպանանել զերկուս եղբարս իւր, որոց իմացեալ զմիտս նորա, փախչին 'ի Սպանիա. և անուն նոցա Աբդալըս և Սամուէլ։

Արդ քանզի չիք 'ի միջի ասորական բնագիրն՝ որ կորուսեալ համարի իսպառ, դըժուարին է յոյժ գիտել զհարազատ թարգմանութիւնն. այլ այս իմն անտարակուսելի է, զի երկոքին եւս են ազատ թարգմանութիւնք, որպէս գրի 'ի վերջաբան յաւելուածի օրինակիս եթէ (41) «Զյոլովիւք զանց » արարաք զոր առ մեզ գիւտ էր, և ոչ գը» րեցաք զի մի աւելորդս թուիցիմք աշխա» տել. և էր որ կրկնեցաք զայլոց գրոց աս» ցեալսն կարճառօտիւք՝ վասն զտեղին լնլոյ » և զոճն պահելոյ»։ Այլ որ ինչ առաւել հետազօտութեան և քննայուզելոյ են կարեւորութիւնք առ 'ի յայտ ածել զերկուց օրինակացս զարժէս, թողեալ կորովամիտ հնախուզից, մեք զմերոյ գրչագրէս տացուք տեղեկութիւն, որ առաւել քան զմիւսոյ թարգմանութեան զյոլովագոյն օրինակն գրաւեալ ունի զվարկ մեր։ Միակ օրինակ է մատեանս, միածալ, բամբակաթուղթ, բոլորագիր, երկսիւնեան, գրեալ 'ի թուին Հայոց ՉԻԲ, ձեռամբ Գրիգոր վարդապետի միաբանի Ականց Անապատի, որ երեւելի էր 'ի դարուն յայնմիկ յաշխարհին Կիւլիկիոյ և հարուստ ձեռագրօքն հռչակաւոր լեալ։ Առաջին բնագիրն յորմէ ընդօրինակեալ է երկրորդս այս , գրեալ է քսան և եւթն ամօք յառաջագոյն , այն է 'ի Թուին ՈՂԵ , որպէս ցուցանէ մակ-քայս այժմ (507) ։ Առաջնոյ ընդօրինակողին է շարայարութիւնն սկսեալ յամէ 1216 մինչև 1229 , այն է թիւն Հայոց ՈՀԸ . յորում կրկնէ որ ինչ զԶապելէ և զնորին ամուսնութենէ են բանք ։ Իսկ Միխայէլ , որ վախճանեալ համարի յամի 1199 , որպէս եդաք և մեք , հասուցեալ զպատմութիւն իւր մինչև ց1196 կամ ցհայ թուականութիւնն ՈԽԵ (603) , աւարտէ երիւք ամօք յառաջ քան զթագադրութիւն Լեւոնի Բ . և որ ինչ յետ այնորիկ համառօտ բանք զԶապելէ , համարի և այն յայլմէ յաւելեալ յասորի բնագրին , մինչև ցամն ՈՀԸ , յորում ժամանակի էին Զապելի ուստերք և դստերք 'ի Հեթմոյ ։ Ապա թէ ոչ՝ հարկ լինի մեզ ընդունել , եթէ կեանք Միխայելի անցեալ իցեն զհարիւրամենիւք , որպէս և Գրիգոր 'ի կրկին յիշատակարանս իւր (525 . 44) նմա ընծայէ որ ինչ մինչև ցՈՀԸ պատմին բանք ։

Իսկ թէ ո՛ ոք թարգմանիչք եղեն կրկին երկասիրութեանցս , ոչ ոք ցարդ ճշգրտագոյն ինչ լուսաբանեաց ։ Առաջին թարգմանութիւնն եղեւ որպէս համարի , ձեռամբ Իշօխ քահանայի և Վարդանայ՝ աշակերտի Վանականին՝ նմին սատարչի , որպէս և յօրինակս ինչ նոյն Թարգմանութեանն յանուանէ յիշատակի այսպէս. «Այլ և մեք իսկ տառապեալ ոգի Վարդան վարդապետս» (1)։ Արարեալ է ըստ խնդրոյ Կոստանդին Ա. Կաթողիկոսին յամի 1248, ՚ի Թուին Հայոց ՈՂԷ, որ ստուգագոյն հաշուով պատասխանէ 1248 ամին Քրիստոսի (42)։ Իշօխ էր ազգաւ Ասորի, որոյ անուն ՚ի մեզ Յեսու լսի և ոչ Իսահակ, որպէս ոմանք կարծեն։ Ի հնագոյն ձառընտրի միում գտանեմք զձեռն Յակոբայ Արճեցւոյ ՚ի սուրբն Թադէոս և յԱբգար, «Թարգմանեալ ՚ի Թուին ՈՂԷ, յԱսորւոց, ՚ի ձեռն Շմնի քահանայի ասորւոյ, հրամանաւ Վարդան վարդապետի». առանց տարակուսանաց և սա Շմնն է Յեսուն. քանզի ՚ի նմին ձեռագրի յիշատակի դարձեալ ՚ի սկիզբն գրոցն յորում խօսի ՚ի վերայ բնութեան աշխարհի և բնական աշխարհագրութեան, անուն հեղինակին Իշօխ քահանայ, որ է ասէ՝ ըստ հայումս Յեսու։ Այն սա հաւանիմ ասել՝ եթէ իցէ եղբօրորդի Միխայելի պատրիարքի Յեսու անուն, զոր վերագոյն յիշեցաք, այր գիտնական և հմուտ բժշկական արուեստի։ Արդ յասացելոցս աստի դիւրին է մեզ մակաբերել՝ եթէ Թարգմանիչ երկոցունցս իսկ օրինակաց իցէ Իշօխ քահանայ։ Իսկ Վարդան վարդապետ յարգարիչ ևեթ լեզուին՝ պարզ և ընտանի խօսիւք ժամանակին իւրոյ յարմարեալ։ Քանզի երկոքին իսկ բնագիրք ասեն թարգմանեալ հրամանաւ նորին Կաթողիկոսի և 'ի մի և 'ի նոյն թուականի (41). նախ զհամառօտն մեր զայս, և ապա զմիւսն, որ և տարածեալ կայ յազգիս.

---

(1) Տես յառաջին օրինակի տպագրին. յէջ. 613։

Ի տպագրութեանս յայսմիկ կարեւոր դատեցաք դնել 'ի ստորեւ իւրաքանչիւր իջի զբացայայտութիւն մթին իմացուածոց բառից և իմաստից որք թուին սպրդեալ յաւէտ յասորի թարգմանչէն քան յընդօրինակչէս, քանզի միօրինակ մթութիւնք գտանին և 'ի միւսում թարգմանութեան՝ մանաւանդ 'ի յատուկ անուանս մարդոց և քաղաքաց, զոր ուղղեցաք յայլուստ կամ 'ի մէջ փակագծի եդեալ և կամ 'ի ստորեւ։ Եւ ուրեք եւս հարկ եղեւ մեզ լուսաբանել զպարագայս ինչ դիպաց, յոր հեղինակն կարի ճըշտութեամբ խնայեալ էր, մինչեւ անյայտ մնալ պատմութեան՝ որոց չիցեն տեղեակք։

Երկրորդ գիրք երկասիրութեան Միխայէլի է ճառն յաղագս Քահանայութեան, զոր 'ի վախճան պատմութեան իւրոյ 'ի միւս թարգմանութեան հայերէնին (532) խոստանայ գրել ասելով. “Դարձեալ նովին յուսով ”. . . . երկրորդ անգամ ծովամուխ լիցուք

„ յանհատական խորս քահանայական կարգաց „ և զարդուց, եթէ ուստի՛ սկսաւ և ո՛ւր լըցաւ և յո՛ կատարի։ . . . „ Ի սմին ճառի փայլէ առաւելապէս հմտութիւն հեղինակիս յաստուածաբանական գիտութեան և խորին հանճար նորին։ Եւ սկիզբն եդեալ քահանայութեան զԱդամ, առեալ իջուցանէ մինչեւ 'ի ճշմարիտ քահանայապետն Յիսուս, և անտի յԱռաքեալս։ Խօսի ուրոյն և զհնգից Աթոռոցն, 'ի մէջ բերեալ և ըզկարգ աթոռակալացն. և կնքէ զճառն 'ի կաթողիկոսութիւնն Հայոց, հիմն եդեալ նորա զՅիսուս կամ զԲարթողիմէոս և զԹադէոս առաքեալսն, և զեկեղեցին Հայաստանեայց կոչէ “Պատկերեալ 'ի Փրկչէն անդրանիկ հաւատով 'ի ձեռն Աբգարու „ (27). և զգաւազան հայրապետացն հասուցանէ մինչև 'ի Ներսէս Շնորհալի։ Ի սմին ճառի առաւել զգալի ցուցանին տարբերութի̃ք թարգմանութեանցն, և է քան զպատմութիւնն առաւել համառօտեալ, մինչեւ առաջիկայ տպագիրն հազիւ թէ զերրորդ մասն միւս թարգմանութեան կազմէ։ Այլ ոճ ասացուածոյ երկոցունցն համեմատ է բարձրութեան իմաստից ճառին, յորմէ յայտնագոյն երեւի լինել Վարդանայ քան այլոյ ումեք հետեւորդ մատենագրի, որ և լրացուցանէ զկարգ Կաթողիկոսացն մինչեւ ցաւուրս իւր Կոստանգլն Ա. զոր ներբողական բանիւ գրուատէ ։

Ընդ Միխայելի և այլ գրաւոր աշխատութիւնք և եկեղեցական մատենագրութիւնք որք չեն թարգմանեալ 'ի Հայումս ։ Նորա է դարձեալ և Խոստովանութիւնն հաւատոյ որ գտանի 'ի միւսում թարգմանութեան (574) կից Ճառին քահանայութեան ։

Իսկ որ ինչ յաղագս Գրիգոր վարդապետի են գիտելիք, որ է գրիչ հայերէն բնագրիս, որ խոստանայ յեր. 528, գրել զանցս 44ից ամաց, սկսեալ յամէ 1248 մինչև 1272, այն է զյարձակումն Թաթարաց 'ի Հայս, որոյ գործ ընծայի յազգիս մերում Մաղաքիայ ուրումն աբեղայի, խօսեցեալ է մեր արդէն 'ի յառաջաբանի նոյն պատմութեան Թաթարաց տպեալ 'ի սուրբ Աթոռս յամի 1870 ։

ՏԵԱՌՆ ՄԻԽԱՅԷԼԻ

ԱՍՈՐՒՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

յԱդամայ սկսեալ մինչեւ առ մեզ։

Ա

Ես, եղբարք աստուածասէրք և ուսումնասէրք, հայելով 'ի բազմութիւն ժամանակագրաց որում կարօտեալ էի, խնայեցի յիմ և յոլովից լսելիս 'ի յաճախութենէ զրուցաց, և համառօտեցի՝ քաղելով զպիտանին և ըղշահաւորն՝ յեկեղեցականացն և յարտաքնոցն. ընդոստուցանել զմահաբեր ծուլութիւնս բազմաց, և 'ի բաց հանել զանգիտութեանն խաւար, ակն կալեալ վերին հատուցմանն աշխատութեանս մերոյ. թողլով զսա գանձ Եկեղեցւոյ եւ վարժարան մանկանց նորոյ Սիոնի, որ զկնի մեր գալոց են։

Եւ պարտ է մեզ սկիզբն գրոցս դնել զսկիզբն մարդկութեանս զԱդամ, զի շինուածըն հաստատեսցի հիմամբ. և է այսպէս օգուտ ասողացս և լսողացն։ Բայց պարտ է նախ դնել զանուանս պատմագրացն՝ ուստի հանդերձեալ եմք ժողովել զնիւթ շինուածոյս մերոյ։

Ափրիկանոս և Յեսու (1), և Դեքսիպոս (Հեգեսիպպոս) և Յովսեպոս հրեայքն գրեցին մինչեւ ՚ի գալուստն Քրիստոսի։

Անանոս կրօնաւոր աղէքսանդրացի, գըրեաց ՚ի յԱդամայ մինչեւ ՚ի Կոստանդիանոս թագաւորն։

Եւսեբիոս Պամփիլեայ, յորոց գրոց ժողովեաց զիւրն և անուանեաց Եկեղեցական։

Զոսիմոս և Սոկրատ և Թէոդորետոս հերետիկոս, ՚ի Կոստանդիանոսէ սկսեալ մինչ ՚ի Թէոդոս (փոքրն) գրեցին։

Յովհաննէս Անտիոքայ և Ճեպեղու (2), և Թէոդորէ գրակարդացն Կոստանդնուպօլսոյ, և Զաքարիա եպիսկոպոս Մելտենւոյ, գրեցին ՚ի Թէոդոսէ մինչև ՚ի Յուստինիանոս Ծերն։

Յովհաննէս ասիացին գրեաց յԱնաստասայ մինչ ՚ի Մօրիկ։

---

(1) Յեսուայ՝ կամ ըստ բնագրին Յեսովայ պատմագրի գործք կորուսեալ համարին. նոյնպէս և Սկեա երէց Մելետինոյ և Դիոնէսիոս Աղէքսանդրիոյ, են իսպառ մեզ անծանօթք։

(2) Ճեպեղ քաղաք է ՚ի սահմանս Լիբանանու։

Կաւրա (Կօրիա կամ Կիւրոս), 'ի Յուստիանոսէ մինչ 'ի Հերակլ գրեաց, և վասն մտանելոյն Տաճկաց յերկիրն Ասորւոց, որ եղեւ 'ի ժամանակս Հերակլեայ։

Եւ սուրբն Յակովբ ուռհայեցին համառօտ ընդ ամենն էանց։

Եւ Դիոնէսիոս պատրիարքն գրեաց 'ի Մօրկէ՝ մինչ 'ի Թէոփիլէ Թագաւորն Յունաց, և մինչ 'ի յԱհարոն (Հարուն) ամիրայն Տաճկաց։

Իգնատիոս եպիսկոպոս Մելտենւոյ, և Սաւա երէց Մելտենւոյ և Յովհաննէս 'ի Քեսնոյ, և Դիոնէսիոս (Աղէքսանդրացի) Սալիպին որդին, արարին համառօտ պատմագրութիւն յԱդամայ մինչև յիւրեանց ժամանակն։

Արդ՝ տեսեալ ժամանակագիրքդ հայելով 'ի յօժարութիւն ուսումնասէր լսողաց ժամանակին՝ փարթամագոյնս գրեցին. իսկ մեք 'ի յերեկոյացեալ ժամանակս հայելով 'ի ծուլութիւնս մեր, կարճագոյն և թեթեւակի անցցուք ընդ իւրաքանչիւրսն։

Այլ և պարտ է ուսումնասէր արանց ոչ տկարանալ վասն աւելի և պակաս գնելոյն զթիւ ժամանակաց, զի ճշմարիտ է բանն Տեառն, թէ Հայր եդ յիւրում իշխանութեան զգիտութիւն ժամուց և ժամանակաց։ Զի յոլով զանազանութիւն գտանի յԵւթանասնիցն թարգմանութիւնն, և զոր ունին Ասորիք, զայն որ Աբգար արքայ ետ թարգմանել, և ստուգեաց Յակոբ ուռհայեցի հնարիւք լեալ իբրեւ զմի 'ի Հրէիցն՝ զի մի թագուսցեն զճշմարտութիւն 'ի նմանէ։

Արդ՝ ըստ Եւթանասնիցն՝ Ադամ լեալ երկերիւր և երեսուն ամաց, ծնաւ զՍէթ. և եկեաց այլ ևս չորեքհարիւր վաթսուն ամ։ Եւ լինին ամենայն ժամանակք կենաց նորա իննհարիւր երեսուն ամ, մինչեւ 'ի հարիւր երեսուն և եւթն ամն Մաղաղիէլի. և մեռաւ վաթսուն ամաւ յառաջ քան զծնունդն Ենովքայ. և է միջոցն սխալ և ոչ իմանան։ Իսկ ըստ Ասորւոցն՝ Ադամ լեալ հարիւր երեսուն ամաց, ծնաւ զՍէթ. և եկաց այլ եւս ութ հարիւր ամ, որ ճշմարտապէս ինն հարիւր երեսուն ամ է։ Ենանոս կրօնաւոր առնու վկայութիւն յԵնովքայ գրոցն, թէ Ադամ յետ ելանելոյն 'ի դրախտէն, զկնի եւթանասուն ամի գիտաց զԵւա, և ծնաւ ըզԿայեն, և յետ եւթն ամի ծնաւ զԱբէլ. և զկնի յիսուն և երեք ամի ծնանելոյն զԱբէլ՝ սպան զնա Կայեն. և սգայր զԱբէլ Ադամ և Եւա հարիւր ամ, և ապա ծնաւ զՍէթ որդի մխիթարութեան։

Եւ Մադիդիոս (Մեթոդիոս) պատարիացի ասէ. թէ յետ երեսուն ամի ելիցն 'ի դրախտէն՝ ծնաւ զԿայեն և զԿլիմիա քոյր իւր, և զկնի երեսուն ամի ծնաւ զԱբէլ և զԴելուդա քոյր իւր. և զկնի հարիւր երեսուն ամի սպանաւ Աբէլ, և յերկերիւր և երեսուն ամին Ադամայ ծնաւ Սէթ ։ Եւ այսու գիտասցես զաննմանութիւն պատմագրացն ։

ՅԱդամայ մինչև յԱրեդի վեցերորդ ծնունդն ժողովին ամք ինն հարիւր երեսուն ։ Յայսքան ժամանակս ոչ գոյր թագաւոր, զի Ադամ ձեռագործ Աստուծոյ յերկիւղ և 'ի խրատ կարգաւորութեան բաւական էր նոցա. և յետ նորա մահուանն իշխէր Սէթ հարիւր եւթանասուն և ութ ամ ։ Եւ 'ի ժամանակս Սեթայ յիշեցին որդիք նորա զկեանս դրախտին և հրաժարեցին յամուսնանալոյ, և ելին 'ի լեառնն Ահերմոնի, և կային ժուժկալութեամբ, և վասն այնորիկ անուանեցան Որդիք Աստուծոյ և հրեշտակք ։

Սէթ՝ ըստ Եւթանասնիցն կեցեալ ամս երկերիւր և հինգ, ծնաւ զԵնովս, և ըստ Ասորւոցն հարիւր յիսուն ամ. և լինին աւուրք ժամանակաց նորա ինն հարիւր եւթանասուն ամ ըստ Յունաց և Ասորւոց ։

Ենովս՝ ըստ Ափրիկանի և Ենանոսի ծնաւ որդի 'ի (հասակի) հարիւր իննսուն ամաց. և ըստ Ասորւոցն՝ իննսուն ամաց ։ Սա յուսացաւ կոչել զանուն Տեառն Աստուծոյ, և յորդորէր զմարդիկ 'ի գործս բարեաց. և լինին ամք նորա ինն հարիւր և հինգ ։

Կայենան հարիւր եւթանասուն ամաց

ծնաւ որդի ըստ Եւթանասնից, և ըստ Ասորւոց՝ եւթանասուն ամաց. և ամենայն ամք նորա ութ հարիւր յիսուն ։

Մաղաղիէլ հարիւր վաթսուն և հինգ ամաց ծնաւ որդի ըստ Եւթանասնից, և ըստ Ասորւոցն վաթսուն և հինգ ամաց. և ամենայն ամք նորա ութհարիւր իննսուն և եւթն ամ։

Արեդ՝ ըստ Եւթանասնից և ըստ Ասորւոցն հարիւր վաթսուն և երկու ամաց ծնաւ որդի, և ըստ Սամարացւոցն վաթսուն և երկու ամաց. և լինին ամենայն ժամանակք նորա ինն հարիւր վաթսուն և երկու ամ, մինչև ՚ի վեց հարիւր ամ՟ն ՚Նոյի ։

Ի քառասուն ամ՟ն Արեդի լցաւ հազար ամ։ Եւ յայսմ ամի ձանձրացեալ որդիքն Սեթայ իջին ՚ի լեռնէն Ահերմոնի, և անկան ՚ի ցանկութիւն կանանց, և էին թուով երկերիւր։ Եւ ՚ի նոյն ժամանակս կացուցին թագաւոր՝ որում անունն էր Սամարիոս (1). և վասն այսորիկ պատմէ Ենանոս, թէ յիջանելն ՚ի լեռնէն և ՚ի հրեշտակական վարուցն որդւոցն Սեթայ, բարկացան եղբարք իւրեանց, և ոչ ետուն նոցա կանայս ։ Եւ նոքա գնացին առին ՚ի դստերացն Կայենի զորս ընտրեցին. և ծնան ՚ի նոցանէ հսկայք ամբարտաւանք, վնասակարք և սպանողք ։ Եւ մինչ 'ի յայս ժամանակս կայր երկիւղ Աստուծոյ և խաղաղութիւն, և առատ բարձաւ, և կալաւ զնոսա խռովութիւն և պատերազմ և սպանութիւն։ Եւ լուան զայս որդիքն Սեթայ որ կային յերկրորդ կլիման, որ է բաժին, և եդին և նոքա իւրեանց թագաւոր 'ի Քաղդէացւոց երկրին՝ զԱղորոս (1)։ Սա եգիտ զաստեղագիտութիւնն և զթիւս կենդանակերպից և մոլորակաց և զշրջմունս նոցա. և 'ի սմանէ անուանեցաւ քաղդէութիւն։ Եւ սա թագաւորեաց ամս իննսուն և ութ։ Եւ զկնի նորին որդի իւր Աղփարոս թագաւորեաց ամս քսան և ինն և աւուրս երկերիւր յիսուն և հինգ։ Եւ զհետ նորա թագաւորեաց Աղմին քաղդէացի 'ի Փուդիւիղոն քաղաքէ, ամս հարիւր քսան և ութ և աւուրս ութսուն։

---

(1) Աբուլ Փարաճ Սամիազոս կոչէ զսա. իսկ Վարդան և միւս թարգմանութիւնն Սամիրոս կամ Սամիրս ։

Չորրորդ թագաւոր՝ Ամանոն քաղդէացի թագաւորեաց ամս հարիւր ութևտասն, և աւուրս հարիւր երեսուն։

Հինգերորդ՝ Ամակարոս քաղդէացի թագաւորեաց ամս հարիւր եւթանասուն և եւթն, և աւուրս հարիւր իննսուն և եւթն։

Վեցերորդ՝ Դինոս հովիւ քաղդէացի թագաւորեաց ամս իննսուն և ութ, և աւուրս երկերիւր երեսուն։

---

(1) Եւսեբի այսպէս ուղղագրէ զանուանս թագաւորացն. Աղովրոս, Աղապարոս, Աղմեղոն, Ամմենոն, Ամեգաղարոս, Դաոս

Եւթներորդ՝ Եւտուրինքոս քաղդէացի թագաւորեաց ամս հարիւր եւթանասուն և հինգ, և աւուրս հարիւր իննսուն և հինգ ։

Ութերորդ՝ Սամփիոս քաղդէացի յԱնարքուն քաղաքէ, թագաւորեաց ամս հարիւր իննսուն և հինգ, և աւուրս երկերիւր երեսուն ։

Իններորդ՝ Օտխարտոս 'ի յԱնարքուն քաղաքէ, թագաւորեաց ամս եւթանասուն և ութ, և աւուրս երեք հարիւր երեսուն ։

Տասներորդ՝ Բախսոթրոս որդի նորա թագաւորեաց ամս հարիւր եւթանասուն և եւթն, և աւուրս հարիւր իննսուն և հինգ ։ Ժողովին ամք հազար հարիւր ութսուն և երեք, և աւուրք երկերիւր և հինգ ։ Եւ յաւուրս սորա եղեւ ջրհեղեղն ըստ քաղդէացի գրոց ։

Առ զժամանակ թագաւորացս հազար հարիւր ութսուն և երեք(1), և զառանց թագաւորութեան ժամանակն հազար յիսուն և երկու, և առնի ընդ ամենայնն մինչ 'ի ջրհեղեղն՝ երկու հազար երկերիւր քառասուն և երկու ամք ըստ Աստուածաշունչ գրոց ։

Իսկ Ենովք եղեալ հարիւր վաթսուն և

նոս, Եդորանքոս, Ամենփսինոս, Ոտիարտէս, Քսիսութրոս ։

(1) Միւս թարգմանութիւնն ունի 1180 ամ, իսկ զանիշխանութեան ժամանակն դնէ 1062, որով գումարքն նշանակեալ ամքն 2242 ։

հինգ ամաց՝ ծնաւ որդի ըստ Եւթանասնիցն (զՄաթուսաղա), և ըստ Ասորւոցն վաթսուն և հինգ ամաց։ Սա եգիտ գիր, որով Բաղդէացիք վարին։ Եւ հաճոյ եղեալ Աստուծոյ զերկերիւր ամ, փոխեցաւ որպէս գիտէ փոխողն Աստուած՝ ուր կայ։ Ոմանք ասեն թէ 'ի դրախտն ուստի ել Ադամ։

Մաթուսաղա լեալ ամաց հարիւր ութսուն և եւթն՝ ծնաւ որդի ըստ Եւթանասնիցն և Ասորւոցն։ Եւսեբի և Անանոս հարիւր վաթսուն և հինգ ամաց ասեն, իսկ Սամարացիքն վաթսուն և երկու։ Եւ լինին ամենայն ժամանակք նորա ինն հարիւր վաթսուն և երկու, մինչեւ յիննսուն և ութ ամն Սեմայ։

Ղամէք լեալ ամաց հարիւր ութսուն և ութից, ծնաւ որդի ըստ Եւթանասնիցն, և ըստ Ասորւոցն հարիւր ութսուն և երկու ամաց, և ըստ Սամարացւոցն յիսուն և երեք ամաց։ Եւ լինին ամենայն ժամանակք նորա եւթն հարիւր եւթանասուն և երեք ամ, մինչեւ 'ի վաթսուն և ինն ամն Սեմայ. և սա մեռաւ նախ քան զհայրն քառան և ինն ամաւ։

Ի հազար վեց հարիւր վաթսուն և վեց ամի ելիցն Ադամայ ծնաւ Նոյ, այր արդար 'ի ծնողացն իւրոց, և պահեաց հինգ հարիւր ամ, և ըստ Ասորւոցն հինգ հարիւր երկու ամ. և յերեքհարիւր յիսուն և ութերորդ ամին սորա կատարեցան երկու դարք։

Ասէ Ենանոս, թէ 'ի յաճախել մեղաց մարդկանն, թողեալք եղեն 'ի ձեռաց Աստուծոյ. և յորդեցին 'ի նոսա պատերազմունք և կռիւք, և լցաւ երկիր ոսկերօք ըսպանելոցն, և կուտեալ լինէին իբրև զբլուրս. և բարկացեալ Տէառն Աստուծոյ՝ ած ջրհեղեղ 'ի վերայ նոցա, և կորոյս զնոսա յերկրորդ ամսեանն Իար իէ։ Եւ տեւեաց ջուրն ամ մի, մինչև 'ի նոյն ամիսն և 'ի նոյն քանիս ամսոյն. և ելին հրամանաւ Աստուծոյ Նոյ և որդիք իւր կանամբք իւրեանց 'ի տապանէն. և մատոյց Նոյ պատարագ Աստուծոյ 'ի սուրբ անասնոցն, և հոտոտեցաւ Տէր 'ի հոտ անուշից։ Եւ էր Նոյ դարագլուխ երրորդ։ Յովսեպոս ասէ, թէ տապանն մնաց յՌուփլմէ լեառն 'ի Պխիդացւոց երկիրն. բայց ճշմարտապէս կայ 'ի Հայք մեծ, 'ի լեառնս Արարադայ, որ է Մասիս ըստ բնակչացն։

Եւ էին որդիք Նոյի Սէմ, Յաբեթ, Քամ. յիննասուն և ութ ամին Սեմայ եղեւ ջուրն, և հարիւր ամաց ծնաւ որդի։ Եւ բաժանեաց Նոյ որդւոց իւրոց զերկիր. և ետ Սեմայ զՊարսից աշխարհն, և զՊեկտուրս մինչև 'ի Հնդիկս, յՌինոյ-Կորուրա, որ է Նեղոս։ Եւ Քամայ ետ յՌինոյ-Կորուրայէ մինչև 'ի Գադիրոն։ Յաբեթի ետ 'ի Մադիէ մինչև 'ի Գաթիրոն հիւսիսոյ։

Ազգն Յաբեթի ունին յակնէն Տիգրիս

գետոյ, որ բաժանէ ընդ Մադէ (1) և ընդ Պարսս: Եւ ազգն Սեմայ բնակեցին յարեւելից և յարեւմտից Եփրատայ և Դկլաթու: Եւ ազգն Քամայ ունին զԳեհոն գետ, որ բաժանէ զսահմանս նոցա: Եւ որդիք Յաբեթի են Հայք և Մակեդոնացիք և Մադացիք և Յոյնք և Լատինացիք և Վրացիք և Ալանք: Եւ որդիք Քամայ են Հնդկացիք, Եգիպտացիք, Հեթացիք, Յեբուսացիք, Հաբաշիք՝ որ են Քուշացիք, Գերգեսացիք, Արութացիք: Եւ որդիք Սեմայ՝ Աթուրացիք, Քաղդէացիք՝ որք են Ասորիք, Եբրայեցիք, Փրանգք, Պարսիկք: Եւ Սեմացիք ունին յարեւելից մինչեւ յարեւմուտք ընդ մէջս երկրի: Եւ որդիք Յաբեթի ունին զհիւսիս յարեւելից մինչեւ յարեւմուտս: Եւ որդիքն Քամայ զհարաւ ունին:

Եւ զի ետես ՚Նոյ նախ քան զջրհեղեղն մեծ՝ զպատերազմունս եւ զապականութիւս կորուսելոցն, վասն այն պատճառի բաժանեաց նոցա զերկիր, և եդ նզովս զի մի զրկեսցեն զմիմեանս վիճակօք:

Զի յետ ջրհեղեղին ասեն՝ թէ որդի եղեւ ՚Նոյի Մանիտոս (2) անուն, որ յայնկոյս ծովուն առ զսահմանս իւր: Եւ խնդրեաց ՚ի հօրէն յանկերացն Եդամայ, և ետ նմա զխռունս ծնգայն 'ի յիշատակ ։ Եւ սա աճեցոյց զաստեղագիտութիւնն ։

---

(1) Յօրինակին Մադդէ:

(2) Միւս թարգմանութիւնն Մանիտոն:

Սէմ լեալ հարիւր երեսուն ամաց ծնաւ զԱրփաքսադ ըստ Եւթանասնիցն, և ըստ Ասորւոց հարիւր ութ ամաց ։ Արփաքսադ հարիւր երեսուն և հինգ ամաց ծնաւ զԿայնան ։ Զայս Կայնան և զժամանակս իւր Եւսեբի ոչ յիշէ ։ Այս Կայնան բազմացոյց ըզՔաղդէացւոցն զմոլորութիւնն և զկախարդութիւնն ըստ աստեղացդ ըղձութեան ։ Եւ որդիք նորա իբրև Աստուծոյ երկրպագեցին նմա, և կանգնեցին նմա պատկեր 'ի կենդանութեանն իւրում, և այս է սկիզբն կռոց երկրպագութեան ։ Սա շինեաց քաղաք և անուանեաց Խառան 'ի վերայ անուան որդւոյ իւրոյ ։ Եւ Ղուկաս յիշէ զսա յԱւետարանին, և Մովսէս ոչ յիշէ վասն պատճառիդ ։

Արփաքսադ լեալ ամաց չորեքհարիւր վաթսուն և հնգից, և ըստ Ասորւոցն չորեքհարիւր երեսուն և ութ ամաց՝ (մեռաւ)։ Կայնան լեալ ամաց հարիւր երեսուն և իննից՝ ծնաւ զՍաղա ։ Սաղա հարիւր երեսուն ամի ծնաւ զԵբեր, և եկաց չորեքհարիւր վաթսուն ամ. և ըստ Ասորւոց երեսուն ամաց ծնաւ, և եկաց չորեքհարիւր երեսուն և երեք ամ և մեռաւ ։

Եբեր հարիւր երեսուն և երեք ամի ծը-

նաւ զՓաղէկ, և ապա զԵկտան ըստ Ենանոսի ժամանակագրի, իսկ ըստ Ասորւոցն երեսուն և չորս ամաց. և եկաց երեք հարիւր քառասուն և երեք ամ. և են որ ասեն, թէ սովաւ կոչեցան Եբրայեցիք, զի 'ի հարիւր քսան ամի Փաղեկայ բաժանեցաւ երկիր յաճախել ազգին:

Ի սկիզբն աւուրցն Ռագաւայ սկսան շինել զաշտարակն յերկիրն Սենաար: Եւ Ներբովթ հսկայ որսայր շինողացն որս, և կերակրէր զնոսա: Եւ շինեցին զամս քառասուն՝ երկուցեալք 'ի նզովիցն Նոյի, զի անցին զերդմամբ և զնզովիւք նորա, և զրկեցին զիրեարս և ակն ունէին ջրոյ. և զայս հնարք իմացան, զի ապրեսցին սովաւ: Եւ իջեալ Տէրն բաժանեաց զլեզուս նոցա, զմի լեզուն յեւթանասուն և երկու լեզուս: Եւ Եբեր այր ծեր և աստուածապաշտ՝ ոչ միաբանեաց ընդ նոսա, և ասեն՝ թէ բուն լեզուն Ադամայ առ նմա մնաց: Եւ նա անուանեաց զերկիրն զայն Բաբելոն, որ թարգմանի ܒܠܒܠ *ըստ Քաղդէացւոց լեզուին՝ որ է Ասորւոցն: Եւ սուրբն Յակոբ և սուրբն Եփրեմ և սուրբն Վասիլ և սուրբն Գրիգոր Նիւսացին վկայեն այսմ, թէ առ Եբեր մնաց լեզուն Ադամայ: Եւ սուրբն Յակոբ ուռհայեցին և Յովհաննէս խթրայցին և այլք ասեն թէ, այն է լեզուն Ադամայ որ մնաց առ*

Եբեր, զոր այժմ Հրէայք ունին, և ոչ Քաղդէացիքն զոր Ասորիք ունին(1)։ Բայց զարմանամ թէ որպէս ծածկեցաւ այս 'ի նոցանէ, որ ըսկիզբն ազգին Իսրայելի Յակոբ է, և յորժամ անցին ընդ ծովն, ապա անուանեցան Եբրայեցիք. և ոչ վասն Եբերայ, զի Եբրայեցին անուն թարգմանի, և 'ի յանցանել ծովուն առին նոր լեզու որպէս զայլ պարգևսն, ըստ Սաղմոսին որ ասէ. "Յելանելն յերկրէն

---

(1) Մթին են բանքս, թուի եթէ ասիցէ՝ ոչ Քաղդէացին։ Սոյն այս հաստատած բանից գտանի 'ի գիրս Աբուլֆարաջայ, առեալ 'ի բնագրէն պատմութեան Միխայէլի. "Վարդապետք մեր Վասիլ և Եփրեմ ասեն, եթէ յԱդամայ մինչև յԵբեր միմիայն լեզու էր մարդկան, ասորականն, զոր ընդ Ադամայ խօսեցաւ Աստուած։ Եւ լեզուս այս բաժանեցաւ յերկուս բարբառս, յորս ընտրելագոյնն է արամեանն զոր Եդեսացիք, Խառանացիք և բնակիչք ներքին Ասորւոց 'ի կիր առնուն։ Երկրորդն է Պաղեստինեանն զոր Դամասկացիք, բնակիչք Լիբանանու և մնացեալ մասն բնակաց ներքին Ասորւոց խօսին։ Երրորդ բարբառն որ է խառնագոյնն, է Քաղդէացւոցն նաբատեանց, որ 'ի գործ ածի 'ի լերինս Ասորեստանի և յաւանս Իրաքայ։ Յովհաննէս եդեսացի հաստատէ, եթէ ազգ մարդկան ոչ դադարեաց երբէք 'ի խօսելոյ զլեզու եբրայական յետ խառնակութեան լեզուացն 'ի Բաբելոն։ ("Պատմ. Հայրապետանց. յեր. 11)։ Եւ 'ի Տարեգիրն ասորական (յեր. 9), ասէ. "Սուրբն Բարսեղ և սուրբն Եփրեմ ասեն, եթէ նախ քան զբաժանումն լեզուացն՝ առաջին լեզուն էր ասորականն, որպէս երևի 'ի բառէս Բաբելոնացւոց՝ խառնակումն։ Իսկ սուրբն Յակոբ և սուրբն Յովհաննէս մեդացի ասեն՝ Հրէիցն լինել այն լեզու որ մնաց առ Եբեր, որ էր այր արդար և ոչ միաբանեաց ընդ նոսա 'ի շինութեան աշտարակին Բաբելոնի։"

Եգիպտացւոց, լեզու զոր ոչ գիտէր՝ լուաւ։» Եւ առաջին լեզու քաղդէացին է, ուստի Իսրայելացիք են, և ունէին զհինն՝ մինչև ըզնորն առին, ապա առաջինն բարձաւ 'ի նոցանէ, և այլ ոչ կալան զայն։

Փաղէկ լեալ ամաց հարիւր երեսնից ծընաւ զՌագաւ, և ըստ Յունացն երեսուն ամաց. և եկաց երեքհարիւր քառասուն և երեք ամ, իսկ ըստ Յունացն երկերիւր երեսուն և ինն ամ։

Ի ջրոյն մինչ 'ի բաժանումն լեզուացն ըստ Եւթանասնիցն վեց հարիւր վաթսուն ամ է, նոյնպէս և ըստ Յունացն։

Ռագաւ լեալ ամաց հարիւր երեսուն և երկուց՝ ծնաւ զՍերուք, և ըստ Յունացն՝ յիսուն և երկուց ամաց. և եկաց երեքհարիւր երեսուն և ինն ամ, իսկ ըստ սուրբ գրոյ՝ երկերիւր երեսուն և ինն ամ։ Ի ժամանակս յայս Նեբրովթ շինեաց երիս քաղաքս, զԱրեգ, զՈւռհա և զՄծբին։ Եւ զկնի ցրուելոյ յաշտարակէն, որդիքն Քամայ եկին յերկիրն Փղշտացւոց և Քանանու. և հայեցեալ 'ի պարարտութիւն երկրին և 'ի վայելչութիւն, հաճեցան և բնակեցան անդ, և ոչ գնացին 'ի վիճակն իւրեանց որ կայր յարևմտից Եգիպտոսի, և ժառանգեցին զկրկնակի նզովքն Նոյի, զծիծաղելոյն և զսահմանափոխութեանն զոր

՚ի բաժանել վիճակին նոցա եդ ։

Ի յեւթանասուն և չորրորդ ամին Ռագաւայ լցաւ երեք դարն, որ է երեք հազար ամ, և ՚ի յեւթանասուն ամին նորա շինեցաւ աշտարակն. և զկնի քառասուն ամի շինուածոյն ցրուեցան ընդ երկիրն ամենայն. և լցաւ երկիր պատերազմօք, և որ յաղթէր, պատկեր յաղթութեան կանգնէին նմա և երկրպագէին ։ Ի հարիւր և տասըն ամին Ռագաւայ անկաւ աշտարակն ։ Զկնի ջրոյն առաջին թագաւորեաց ՚ի Բաբելոն Նեբրովթ. և ՚ի քառասուն ամին Ռագաւայ թագաւորեաց Նեբրովթ. և ՚ի սաստիկ շնչմանէ աստուածառաք հողմոյն շրջեցաւ աշտարակն, և մեռաւ Նեբրովթ սպանմամբ աշտարակին զարկուցմանէ (1), և են ժամանակք թագաւորութեան նորա վաթսուն և ինն ամ։ Որպէս Մենանդրոս պատմէ մեզ, և յերկրորդ գիրքն Յովսեփայ(2) պատմի, թէ թագ նորա հիւսածոյ էր և ոչ կռանակոփ ։

Ի մեռանելն Փաղեկայ տեսին որդիքն Եկտանայ եղբօր Փաղեկայ, թէ նոցա ոչ տուաւ ժառանգութիւն, զայրայան և եդին իւրեանց երիս գլխաւորս, զՍաբա, զՈւփիր և զԵւիլա. և հնարիմացութեամբ կազմեցին զէնս, թուր, աղեղն, զրահս, սաղաւարտս, վահան, և սկսան այսու յաղթել ամենեցուն. և փախչէին առաջի նոցա: Եւ վասն զերծման և ապրելոյ 'ի նոցանէ, սկըսան շինել բերդս և ամրոցս. և այս եղեւ պատճառ և սկիզըն զինագործութեան: Եւ 'ի յաղթահարիլն բազմաց՝ աղաչէին զորդիսն Եկտանայ, առնուլ իւրեանց ժառանգութիւն զոր և կամիցին, և խաղաղանալ 'ի պատերազմելոյ ընդ նոսա: Եւ էառ Սաբայն զմշկաբեր երկիրն, զոր Սաբա կոչեաց յիւր անուն: Եւ Ուփիր զաշխարհն ոսկեհանաց, որ է Հնդիկք: Եւիլա՝ զպատուական ականց երկիրն, որ Եւիլատ կոչեցաւ յանուն նորա:

---

(1) *Միւս թարգմանութիւնն զայս օրինակ պատմէ. "Ոմանք ասեն զՆեբրովթ ՚ի յաշտարակին անկմանէն մեռանիլ. բայց մեք ստուգեցաք յետ ժամանակի սպանանիլ նմա ՚ի Հայկայ որդւոյ Թորգոմայ ։ . . . ."*

(2) *Վկայութիւն Յովսեփայ երկրորդ Գրոցն ոչ յիշի ՚ի միւս թարգմանութեան. և Յովսեփն կարծի Յովսեպոս լինել*

Սերուք լեալ ամաց հարիւր երեսնից՝ ծընաւ զՆաքովր ըստ Եւթանասնիցն, և ըստ Եբրայեցւոցն և Ասորւոցն հարիւր ամ պակաս գայ 'ի Ջրոյն մինչեւ ցայս վայր: Եւ եկաց Սերուք երեք հարիւր երեսուն ամ. և յաւուրս նորա իմացեալ եղեւ դահեկանի և դրամի շինուած անուամբ գրոյ թագաւորացըն: Եւ Սերուք շինեաց զՍրուճ յանուն իւր:

Յայսմ ժամանակի երեւեցան Ամազոնքըն յազգէն Թորգոմայ այսպիսի պատճառաւ: Եղեւ զի կին մի մնաց ժառանգ թագաւորութեանն Թորգոմայ, և ոչ կամեցաւ այր առնուլ. և էր յաղթող, և ելանէր աւերէր զբազում աշխարհս: Եւ եղեւ նենգութիւն ինչ 'ի զօրաց նորա, և զայրացեալ կոտորեաց զարուական զօրս իւր, և արար զօր կանացի. և միանգամ՝ յամին առ սակաւ սակաւ երթային խառնէին ընդ արս յայլ աշխարհ, և զծնեալ էգսն ապրեցուցանէին և զարուսն սպանանէին: Եւ զայն տեսեալ՝ ժողովեցան յամենայն աշխարհէ միաբան թագաւորութիւնք, և աւերեցին զամրոց թագաւորութեան նոցա զԱլիւն քաղաք 'ի կողմս հիւսիսի, և ապա բարձաւ անկարգութիւնն, և արքն առին զիշխանութիւնն որք ծնեալ էին 'ի կանանց անտի, օրինօք ամենայն երկրի, և ապրէին արուքն և լցաւ աշխարհն:

Զկնի քառասուն ամի մահուանն Նեբրովթայ և խափանելոյ թագաւորութեանն յորդւոցն Քամայ 'ի Բաբելոն, թագաւորեաց Կամբիւրոս քաղդէացի 'ի ժամանակս Սերուքայ, 'ի յիսուն և վեց ամին: Սա շինեաց զՀօշ քաղաք(1), որ ասեն զԱսպահան. և յայսմ ժամանակի տարածեցաւ զինագործութիւնն, և սկսան գերել զմարդիկ և վաճառել: Ի յեւթանասուն ամին Սերուքայ Կամբիւրոս արքայ քաղդէացի, պատերազմեալ ընդ Կալաւոս ազգին(1), յաղթահարեաց զնոսա և ելին 'ի լերինս ։ Սերուք ուսոյց Նաքովրայ զաղանդն Քաղդեացւոց կախարդել և հմայել 'ի նշանս աստեղաց ։ Կամբիւրոս թագաւորեալ ամս ութսուն եւ հինգ . զկնի նորա երրորդ թագաւորեաց 'ի Բաբելոն Սամիրոս 'ի հարիւր և վեց ամին Սերուքայ, ամս եւթանասուն և երկու ։ Սա պատերազմեցաւ ընդ Յոյնս և ընդ Փըռանգս և ընդ Բանանացիս, և 'ի ներքոյ հարկի կացոյց զնոսա . և շինեաց բազմութիւն քաղաքաց յաշխարհին Քաղդեացւոց և Պարթեւաց . և սա սկսաւ չափ և կանգուն և կշիռ (սահմանել)։ Նա սա եւս գտեալ խայտուածս և պատկերս 'ի կտաւս, և զտաւղարուեստ ապրիշումագործելոյ(2). և զամենայն գոյնս ներկուածոյ սա սահմանեաց ։ Նա զայս ասաց Սամատրոս(3) մոգ յիւր պատմութեանն վասն նմա, եթէ երեք աչք ունէր և եղջիւր . և սա էր հսկայ քաջ, որ և եհան 'ի Քաղդէացւոցն զՍեբրոլլթեանն, և ջնջեաց զազգըն նորա անուն ։ Նաքովր լեալ ամաց եւ-

---

(1) Վարդան Նեբրովթայ առնէ շինեալ զՀօշ: Պատմ. եր. 24. Տպ. Մոսկուայ:

---

(1) Ի միւս թարգմանութեանն՝ Սամիրոսի ասէ առեալ, պատերազմ ընդ ազգին Կալաւու (Գաղատացու)։

(2) Միւս թարգմանութիւնն խաղագործութիւն դնէ, որ զնոյն նշանակէ . որպէս ունի և Վարդան . իսկ 'ի տպեալն առաջինն՝ անգիտաբար փոխեալ է 'ի խրատագործութիւն ։

(3) Յօրինակիս Սամարոս ։

թանասուն և իննից՝ ծնաւ զԹարա ըստ Եօթանասնից, և ըստ Ասորւոյն քսան և ինն ամաց. և եկաց երկերիւր և մի ամ ըստ Եօթանասնից, և ըստ Ասորւոյն հարիւր քառասուն և ութ ամ։ Եւ ՚ի քսան և հինգ (ամին) Նաքովրայ ըստ(1) *Եօթանասնից, էր* ճգնութենըն Յովբայ, որպէս ասէ ընծանէ Արուժ ժանանոյին. և ասէ այսպէս. «Այր մի էր մեծատուն յորդւոյն Յեկտանայ, անուն նորա Յովբ, որ պատերազմեցաւ ընդ ժամանակս (ամս) ընդ սատանայի, և զօրութեամբն Աստուծոյ յաղթող գտաւ ՚ի վերայ նորա։» Իսկ Յովսեփոսիր (2) ասէ, թէ յիննսուն ամին Նաքովրայ եղեւ ճգնութիւն Յովբայ։ Բայց ասեն ոմանք, թէ էր նա յորդւոյն Եսաւայ, որ ասէ ՚ի կարգ որդւոյ նորա՝ թէ Յոբաբ որդի Զարեհի. և հինգ հարիւր ամաւ յառաջ է քան զՄովսէս (3)։

---

(1) *Աստանօր ՚ի բնագրեն թուղթ մի անկեալ էր, զորոյ զպարունակութիւնն ՚ի միւս թարգմանութենէն ՚ի փոխ առեալ եդաք ստոր նոտրագրաւ։*

(2) *Ոմանք համարին զսա լինել հեղինակն գրոց* Hypomnesticon *կոչեցեալ ըստ Յունաց, զոր Փաբրիկիանոս հրատարակեաց ՚ի Համբուրգ քաղաքի յամի* 1741։ *Գրեալ է մատեանս ընդ մէջ Ե և Զ դարուց, յորում գտանին պատմութիւնք առասպելականք և մոլորածինք։*

(3) *Որ ինչ զՅոբայ խօսի աստանօր Միխայէլ, առնու ՚ի գրոյն Յոբայ, և այս բանք ըստ ասորական բնագրի միոյ գտանի և ՚ի յունական թարգմանութեան, յորմէ յեղեալ տեսանի և ՚ի մերումն ՚ի ձեռն թարգմանչաց, ՚ի վախճան ԽԲ գլխոյն, զկնի* 17 *համարոյ, ուր ասէ. «Յառաջ էր անուն նորա Յոբաբ... և հայր նորա Զարեհ, որդի որդւոյն Եսաւայ, և մայր նորա Բոսորայի, որպէս զի լինել նմա հինգերորդ յԱբրահամէ»*

Ի յեւթն ամին Թարայի թագաւորեաց ՚ի Բաբելոն Արփքաղադ (Արփաքսադ) ամս ութեւտասան : Եւ յետ սորա խափանեցաւ թագաւորութիւն Քաղդէացւոց ամս եւթն մինչեւ ՚ի Բելուս թագաւորն Աթուրայի․ զի պատերազմէին ընդ միմեանս Քաղդէայեք և Աթուրայեք և Մադայեք յաղագս թագաւորութեանն, մինչեւ զօրացաւ Բելուս Աթուրայի, և ել ՚ի հնազանդութենէն Բաբելացւոց, և տիրեաց թագաւորեալ նոցա, և իշխեաց ամենայն Ասիոյ ամս վաթսուն և երկու : Եւ Աթուրեա քաղաք է առընթեր Մաւսլա, զոր Աթուրեա կոչեն՝ յԱթուրէ շինեալ զառաջինն : Քասրոս ոմն թագաւորեաց ՚ի Բաբելոն, և Մահերն եղբայր Թարայի սպան զնա, և ասեն թէ՝ վասն ոսկեղէն պատկերին զոր էառ ՚ի Նաքովրայ, որ էր քրմապետ Կայնան կռոցն : Արդ շինեցաւ Դամասկոս ՚ի Մարեթոսէ (1) Հիւթացւոյն՝ նախ քան զծնանելն Աբրահամու հինգ ամաւ. և Յովսեպոս ասէ թէ, յՈւզէ յորդւոյ Արամայ շինեցաւ Դամասկոս:

Անդրոնիկոս պատմագիր ասէ (2), թէ ՚ի Ջրոյն մինչեւ յԱբրահամ՝ են ամք հազար ութսուն և մի, և յԱդամայ՝ երեքհազար երեսուն և հինգ, և ՚ի բաժանմանէն երկրի մինչեւ յԱբրահամ՝ չորեքհարիւր քսան և մի ամ : Եւ այս հաւասարեցան Յունաց և Ասորւոց թիւն:

Ի ծնանելն Աբրահամու մեռաւ Նաքովր : Աբրահամու մօրն Մալքա Բուաէր անուանն (1). և յետ փոքու ամի ծննդեանն Աբրահամու ծնաւ Սարա դուստր Թարայի ՚ի Զմրուբայ (2) կնոջէ՝ և ոչ ՚ի մօրէն Աբրահամու, որպէս ինքն ասէ առ Փարաւոն և առ Աբիմելէք (Թէ քոյր իմ է (3)) ՚ի հօրէ և ոչ ՚ի մօրէ:

---

(1) Վարդան ասէ շինեալ յԱրամայ հիւթացւոյ: Եր. 24:

(2) Անդրոնիկոս պատմագիր, զորոյ զվկայութիւնն ՚ի մէջ բերէ Միխայէլ․ համարի յոմանց՝ թէ իցէ Անդրոնիկոսն Աղեպեան կոչեցեալ․ յիշատակեալն և ՚ի Հերոնիմոսէ ՚ի Յառաջաբանութեան Դանիէլի :

Եւ Աբրահամ եղեալ եւթնևտասան ամաց, սկսաւ ՚ի կամաց իւրոց խնդրել զԱստուած: Յայսմ ժամանակի եղեւ բարկութիւն Աստուծոյ ՚ի վերայ Բաբելացւոյն: Զի թռչունք զոր ձայ կոչեն, ուտէին զանդաստանս նոցա. և իւրաքանչիւր ոք այնչափ հերկէր և ցանէր, զոր պահել կարէր ՚ի բաց քշելով զթռչունսն. և ՚ի պահելն Աբրահամու զանդաստանս հօր իւրոյ, ձանձրանայր ՚ի հալածելոյ զձագսն. և խնդրեաց օգնութիւն յամենայն անուանեալ աստուածոցն, և ոչ եգիտ. և յարեգակնէ և ՚ի լուսնէ և յաստեղաց և յերկնէ հայցեաց և ոչինչ օգտեցաւ. ապա ասաց. «Անհասանելի Աստուած՝ ամենից վերագոյն և արարիչ այս թռչնոց և անդաստանաց, յայտնեա զքեզ ինձ և հալածեա զսոսա:» Եւ վաղվաղակի վերացան թռչունքն, և այլ ոչ դարձան յանդաստանսն: Յայն ժամն ծագեաց շնորհ ողորմութեանն Աստուծոյ ՚ի սիրտն Աբրահամու, և ասաց. «Գտայ զԱստուած զարարիչն ամենայն արարածոց։» Եւ յաճախեաց Աբրահամ 'ի խնդրուածսն երեւիլ նմա Աստուծոյ(1)։

---

(1) Վարդան ունի «Մալքաթու էր անունն»: Անգ:

(2) Ոմանք յօրինակաց ՚ի Զրմուբայ:

(3) Ծննդոց. Ի. 12:

Յայսմ ժամանակի թագաւորն Բելոս մեռաւ, և թագաւորեաց Նինոս որդի նորա ամս յիսուն և երկու, երկրորդ (լեալ) թագաւոր Աթուրացւոց։ Սա շինեաց զՆինուէ, և փոխեաց զաթոռ թագաւորութեանն իւրոյ յԱթուրեայ 'ի Նինուէ. և կազմեաց կուռք մեծ արկածու(2), հօր իւրոյ Բելոսի (Բելոս) ոսկեղէն, և ետ երկրպագել նմա։ Եւ յայնժամ շինեցան Ռաքովթ և Ռասան և Քաղանէ. և աստ շինեցաւ Երուսաղէմ։ Եւ Աբրահամ զտուն կռոց հօր իւրոյ որ կայր 'ի յՈւռհա, այրեաց, և Առան եղբայր իւր ջանաց փրկել զկուռսն յայրմանէ, և ընդ նմին այրեցաւ։ Եւ 'ի վախճանն ամին՝ Աբրահամ և Թարա հայր իւր և Նաքովր(1) եղբայր իւր և Ղովտ որդի Առանայ, յՈւռհայէ Քաղդէացւոց եկեալ եկին բնակեցան 'ի Խառան ամս չորեքտասան. և հրամանաւ Աստուծոյ եկեալ Աբրահամու եկն բնակեցաւ յերկիրն Քանանացւոց։ Եւ լեալ Աբրահամ ութսուն և հինգ ամաց, մտաւ յԵգիպտոս, և ծնաւ զԻսմայէլ 'ի Հագարայ աղախնոյ իւրոյ։ Եւ եկաց Իսմայէլ հարիւր երեսուն և եւթն ամ, մինչև 'ի վաթսուն ամին Յակովբու։ Յայսմ ժամանակի թագաւորեաց Շամիրամ կին Նինոսի 'ի վերայ Աթուրացւոց՝ ամս քառասուն և վեց։ Եւ սա շինեաց թլեր՝ բլուր 'ի հողոյ կուտեալ ամրոց։ Բայց մեք գտաք այլ պատճառ թլացըդ, թէ 'ի յաճախել պատկերապաշտութեան յամենայն տեղիս, եհան Աստուած հողմն փոթորիկ յերկիր, որ առեալ զկուռսն թաղեաց 'ի տեղիս տեղիս հողակուտս։ Եւ բնակեալ 'ի նոսա դեւքն, կան 'ի սանջանս 'ի նոսին կուռսն. և մինչև ցայսօր դիւթք և կախարդք առ թլովք գործելով զարուեստս իւրեանց, լսեն ձայն որ գայ 'ի դիւացն։

---

(1) Ի գիրս Ծննդոց համառօտակի խօսի զկոչմանէն Աբրահամու. իսկ 'ի գիրս արտաքնոյ պատմագրաց. Հրէից և Ասորւոց, գտանին բանք երկարապատումք զԱբրահամէ, առանստոյգս համարեալ. որպէս և Գիրքն Արդարոյ կոչեցեալ, յորոյ հանեալ է և Միխայէլ զոր ինչ առաւելաբանութեամբ խօսի զվարուցն Աբրահամու։ Ի միւսում թարգմանութեան յաւելեալ տեսանին և այլ պարագայք. յորում և զվարուցն Մելքիսեդեկի բանք լինին՝ հետեւելով անստոյգ պատմութեանցն րաբունեաց Հրէից.

(2) Միւս թարգմանութեան օրինակքն ունին կուռ ձուլածոյ, կամ ձեւ ահարկու՝ ոսկեղէն։ Եւ թերեւս իցէ կռածու։

Աբրահամ իննսուն և ինն ամաց եղեալ թլփատեցաւ. և հարիւր ամաց լեալ՝ ծնաւ նմա Իսահակ ըստ աւետեացն Աստուծոյ։

(1) Յօրինակի մերում Նաքովր։

Եւ ամք ծառայութեան նոցա յԵգիպտոս՝ չորեքհարիւր և երեսուն ամ ըստ Առաքելոյն: Եւ սկսանի ժամանակ պանդխտութեան նոցա յեւթանասուն և եւթն ամի Աբրահամու, յորժամ ել 'ի տանէ հօր իւրոյ, որպէս հրամայեցաւ 'ի Տեառնէ : Ի հարիւր հնգետասան ամին եհան զԻսահակ 'ի զենումն. և հնգետասան ամաց էր Իսահակ, և այլք երեսուն ամաց ասեն, և մեք հաւանիմք հնգետասան ամին : Եւ եկաց Աբրահամ հայր իւր եւթանասուն և հինգ ամ, մինչեւ յերեսուն և հինգ ամի Յակովբայ : Ի յինն ամին Իսահակայ պատմեցաւ Աբրահամու՝ թէ ծնան որդիք Նաքովրայ եղբօր քո : Ի հարիւր երեսուն և չորս ամին Աբրահամու և յերեսուն և եւթն Իսահակայ, մեռաւ Սառա հարիւր քսան և եւթն ամաց: Եւ առեալ Աբրահամու զԿենդուրա 'ի կնութիւն. և էր Աբրահամ հարիւր քառասուն և երկու ամաց : Յերեսուն և ութ ամին Իսահակայ էառ զՌեբեկա 'ի կնութիւն. և 'ի վաթսուն և 'ի մի ամին(1) Իսահակայ յղացաւ Ռեբեկա. և գնաց Ռեբեկա առ Մելքիսեդեկ աղօթիւք խնդրել յԱստուծոյ զպատճառ վիճման մանկանցն որ յորովայնի նորա, զի գիտասցէ՝ յայտնելով նմա Աստուծոյ։ Եւ նա առեալ հրաման 'ի Տեառնէ՝ ասէ. «Երկու ազգ են յարգանդի քում, և երկու ժողովուրդք. և ժողովուրդ զժողովրդեամբ ել և ել առնիցէ, և երէցն կրտսերոյն ծառայեսցէ (1)։» Անիանոս ասէ, 'ի վաթսուն ամին Իսահակայ ծնաւ Ռեբեկա, և այլք հարիւր ամաց ասեն։ Երէցն Եսաւ՝ որ է Եդոմ, 'ի նմանէ Եդոմայիք՝ որ են Փռանկք. կրտսերն Յակովբ, յորմէ Իսրայելացիք։

---

(1) Աստանօր տարբերի օրինակս մեր 'ի պատմութենէ սուրբ գրոց, յորում ասի քառասնամեայ առնուլ Իսահակայ զՌեբեկա և վաթսնամեայ ծնանել որդիս: Ծնն. ԻԵ. 20-26:

Ի յեւթանասուն և 'ի վեց ամին Իսահակայ մեռաւ Աբրահամ. 'ի հնգետասան ամին Յակովբայ Իսահակ եկաց հարիւր ութսուն ամ, մինչեւ յերեսուն և մի ամն Ղեւեայ։ Եւ էր Աբիմելէք թագաւոր քաղդէացի, որ է Գերերա Փղշտացւոց, բարեկամ տանն Աբրահամու։ Եւ լեալ Յակովբ եւթանասուն և եւթն ամաց, 'ի հարիւր երեսուն և եւթն ամին Իսահակայ գնաց 'ի Խառան օրհնութեամբ հօր իւրոյ. և եկաց Յակովբ հարիւր քառասուն և եւթն ամ, մինչեւ յերկոտասան ամն Կահաթու. և մեռաւ զկնի երկերիւր երեսուն և երկուց ամաց խոստմանն Աստուծոյ տալ որդւոց նորա զժառանգութիւն երկրին. և յԵգիպտոս եկաց ամս եւթնևտասան։ Եւ Եսաւ էառ կանայս 'ի դստերաց Քանանացւոցն. և յորժամ գիտաց թէ չէ հաճոյ հօրն, էառ զՄաղայէթ դուստր Իսմայելի ։

---

(1) Ծննդ. ԻԵ. 23։

Յայսմ ժամանակի շինեաց Եմովր հայր Սիւքեմայ քաղաք, և կոչեաց զնա յանուն որդւոյ իւրոյ Սիւքեմ, յորմէ յափշտակեցաւ Դինա երկոտասան ամաց. և որդիքն Յակովբայ սպանին վասն նախանձու քեռն իւրեանց երեք հազար անձինս ։ Եւ Եսաւ բնակեցաւ ՚ի Սէիր ։ Յակովբ ութսուն ամաց եղեալ՝ առ զԼիա, և ութսուն և հինգ ամաց եղեալ՝ ծնաւ նմա Ռուբէն, և ութսուն և եւթն ամաց եղեալ՝ ծնաւ Շմաւոն, և յութսուն և ինն (ամաց՝) ծնաւ Ղեւի ։ Յերրորդ ամին Ղեւեայ և յիննսուն և մի ամին Յակովբայ ծնաւ Յովսէփ. և ՚ի տասն ամին Ղեւեայ ել Յակովբ առ Իսահակ հայր իւր. և ՚ի քսան ամին Ղեւեայ վաճառեցաւ Յովսէփ. և յերեսուն և մի ամին Ղեւեայ մեռաւ Իսահակ հարիւր և ութսուն ամաց ։ Զկնի մահուանն Իսահակայ վարձեցին որդիքն Եսաւայ զորդիսն Ամմոնայ և Մովաբու և զԱրամ, և եկին ՚ի Քեբրոն պատերազմել ընդ Յակովբայ և ընդ որդիս նորա ։ Եւ խրատացեալ Յակովբու եհար նետիւ և սպան զԵսաւ. և փախեան եկեալքն ՚ի վերայ նոցա ։ Յակովբ հարիւր երեսուն ամաց եղեալ՝ էջ յԵգիպտոս, յերկրորդ ամի սովոյն և ՚ի յինն ամի իշխանութեանն Յովսեփու ։ Բաս

Ասորւոյն եւթանասուն ոգի մտին յԵգիպտոս, և ըստ Եւթանասնիցն և ըստ սրբոյն Ստեփաննոսի նախավկայի՝ եւթանասուն և հինգ։ Եւ այս է պատճառն. զի Ասորին զՅովսէփ և զերկուս որդիս Յովսեփու միայն համարէ, և Եւթանասունքն զորդիս որդւոցն Յովսեփու՝ որք դեռ չէին ծնեալք՝ թուեն։

Ղեւի լեալ քառասուն և վեց ամաց ծնաւ զԿահաթ. ոմանք զՅովբայ փորձանքն յայսմ ժամանակի ասեն։ Կահաթ լեալ վաթսուն ամաց՝ ծնաւ զԱմրամ. և եկաց հարիւր երեսուն և երեք ամ, մինչեւ յերրորդ ամն Մովսեսի։ Ամրամ եւթանասուն ամաց ծնաւ ըզՄովսէս. և յերեսուն և հինգ ամի իշխանութեանն Յովսեփու թագաւորեաց Աթուրացւոյն Աշապարոս (1)։ Եւ յերեսուն և ութ ամի իշխանութեանն Յովսեփու թագաւորեաց Եգիպտացւոցն Քեբրոն՝ ամս երեքտասան։ Եւ մեռաւ Ամրամ յԵգիպտոս նախ քան զելանելն Իսրայելի երեքտասան ամաւ, կեցեալ ամս հարիւր երեսուն և հինգ։ Եւ եկաց Յովսէփ հարիւր և տասն ամ, և մեռաւ ՚ի վեց ամին Ամրամայ և խոստմանն Աստուծոյ յերկերիւր ութսուն և վեց (ամին). և զկնի մահուան նորա մտին ազգ նորա ՚ի ծառայութիւն։ Եւ յայնմ ժամա-

---

(1) Ըստ Սամուէլի Աշպադաս, որ տիրեաց ամս 32։

նակի Թագաւորեաց Ամենոփթիս(1) Եգիպտոսի ամս քառասուն և երեք ։ Սա սկսաւ հեղձուցանել զորդիսն Իսրայելի ՚ի Նեղոս գետ ։

Եւ ծնաւ Մովսէս յեւթանասուն ամին Ամրամու, և յերեքհարիւր յիսուն ամի խոստմանն Աստուծոյ ։ Եւ ընկեցաւ ՚ի գետն, դուստրն Թագաւորին՝ Թերմութիս, և Եբրայեցին կոչէ զնա Մարիա, զոր Քանթարա Թագաւորն Մեմփիս քաղաքի առ ՚ի կնութիւն, սա առ զՄովսէս ՚ի ջրոյն, և եղեալ տասն ամաց՝ տուաւ յուսմունս յԱնէսն և յԱմրէսն, և նոքա ուսուցին զնա ։

Ի մտէն յԵգիպտոսի մինչեւ յելսն՝ երկու հարիւր հնգետասան ամ ։ Ի քսան և երկու ամին Մովսիսի նեղել սկսաւ Թագաւորն զԻսրայէլ շինուածովք քաղաքաց ։ Եւ ՚ի քսան և ութ ամին Մովսիսի շինեցին զՀերմուպօլիս(2). և արարին պատերազմ Քուշացիք ընդ Եգիպտացիսն, և յաղթեցին և տարան գերի զՀռաքուսա մայրգիրն Մովսիսի, և առին ՚ի կնութիւն ։ Եւ յերեսուն և եւթն ամին Մովսիսի ծնաւ Յեսու որդին Նաւեայ, և Մովսէս շինեաց զՀերմուպօլիս, և պատե-

---

(1) *Ըստ Եւսեբեայ* ԱՄԵՆՈՓԹԻՍ, *որում տայ ամս* 30 *կամ* 31 ։ Քրոն․ Հտ․ յեր․ 24․ 96 ։

(2) *Վարդան* (Պատմ․ յեր․ 28)․ ԹԵՐՄՈՒՊՕԼԻՍ *անուանէ յանուն* Թերմութեայ *մայրագրին իւրոյ․ և այս մեզ ուղղագոյն թուի ։*

րազմեցաւ ընդ Եթիուբաս թագաւորն Փըղշտացւոց (1) զտասն ամ, և յաղթեաց նմա, և առ 'ի նմանէ զՃռաքուսս. և Քամփարայ՝ (2) այրն Թերմոթեայ ոխացաւ ընդ Մովսիսի, և կամէր սպանանել զնա. և զչարէր վասն յաղթութեանն նորա, և չկարէր մեղանչել նմա վասն Թերմոթեայ անուանեալ մօրն Մովսիսի, զոր Մովսէս դարձոյց 'ի գերութենէն. և յորժամ մեռաւ կինն այն, առաքեաց զՔանթիս սպանանել զՄովսէս. և Մովսէս իմացաւ զայն և փութացաւ սպան զնա. և ինքն փախեաւ, և գնաց յԱրաբիա առ Ռագուէլ Մադիանացին:

ՅԱբրահամայ և 'ի Կենդուրայ ծնաւ Եկսան(3), և յԵկսանայ ծնաւ Դադան, և 'ի Դադանայ ծնաւ Ռագուէլ, և յՌագուելայ ծնաւ Յոթոր, և 'ի Յոթորայ ծնաւ Յոբաբ: Եւ առ Մովսէս զՍեփովրա դուստր Յոթարայ իւր 'ի կնութիւն. և քառասուն ամաց էր Մովսէս:

Յայսմ ժամանակի երևեցաւ Ասկղեպիդէս բժիշկ. և սա էր Կեկրոփս, որ թագաւորեաց յԱտիկէ, որ է յԵգիպտոս (4): Վասն

---

(1) Միւս թարգմ. ընդ Եթովպացիսն ասէ տուեալ Մովսէսի պատերազմ, և զԹագուհի նոցա զԹեոբաս վարեալ 'ի գերութիւն: Իսկ Ճռաքուսս՝ նոյն է զոր և Թերմոթիս կոչէ:

(2) Նոյն է զոր վերագոյն կոչեաց Քանփարս. իսկ միւս թարգմանութիւնն ունի Քանադրս:

(3) Նոյն է որ 'ի սուրբ գիրս Յեկտան կոչի: Ծննդ. ԻԵ. 2:

(4) Յօրինակին թուին բանք վրիպեալք 'ի գրչէ. Քանզի

սմա ասեն թէ յառաջին ամին Գոդոնիէլի թագաւորեաց. և Յոյնք ասեն թէ սա շինեաց զԱթէնս յանուն կնոջ իւրոյ Աթենայ: Սա տիրեաց ամենայն Ասիոյ, և անուամբ նորա կոչեցաւ գաւառն Կապադովկիա: Եւ յաւուրս սորա երեւեցաւ ձիթենի ՚ի դղեկին Աթենայ. և սա արար գիր Յունաց յԵգիպտացի գրոյ, զի գիտէր զերկուցն լեզուն: Սա եբեր զընակիչս Մեմփիս քաղաքի և բնակեցոյց յԱթէնս, ուստի սերմանեցաւ իմաստութիւնն ՚ի կողմանս հիւսիսոյ:

Իսկ Մովսէս եւթանասուն և ութ ամաց եղեալ, երեւեալ խօսեցաւ ընդ նմա Աստուած ՚ի լեառն Սինեայ:

Յայսմ ժամանակի յԵգիպտոս թագաւորէր Փանոս. ծնաւ սմա որդի, և անուանեաց զնա Որամսոխ: Եւ սա արար մեծ նեղութիւն Իսրայելացւոցն. եւ սա կոչեաց զանուն իւր կրկին Եգիպտոս, զի նախ Արիա կոչէր(1)*: Եւ ՚ի չորս հարիւր և երեսուն ամի խոստմանն Աստուծոյ, որ է ութսուն ամ Մովսիսի, արժանի եղեւ երեւմանն Աստուծոյ. և առ հրաման հանել զԻսրայէլ յԵգիպտոսէ: Եւ անցին Եբրայե-*

Կեկրոփս թագաւորեաց յԱտտիկէ, և ըստ սմանց՝ նախ յԵգիպտոս թագաւորել սա: Տես և յԵւսեբիոս, ՚ի Քրոն. Հտ. Բ. էր. 100:

(1) *«Եգիպտոս որ յառաջագոյն Աէրիա կոչէր, յԵգիպտոսէ արքայէ անուանեցաւ», Եւսեբ. Քրոն. էր.* 108:

ցիքն ցամաքաւ ընդ ծովն, և ընկղմեցաւ Փառնոս Թագաւոր զօրօք իւրովք։ Եւսեբիոս ասէ, թէ Կանաքարիս (Քէնքէրէս) կոչէր ընկղմեալն Փարաւոն և ոչ Փառնոս. և որք ոչ էին (գնացեալ) զկնի Փարաւոնի, ամենայն որք զգործն յորում կայր՝ աստուածացոյց, որպէս պատճառ փրկութեան անձանց իւրեանց եղեալ։

Յայսմ ժամանակի եմուտ աստեղագիտութիւնն ՚ի Պարսս և կախարդութիւնն. և աստ շինեցաւ տաճարն Ապողոնի յԱթէնըս, և կոչեցաւ Արիսպագոս՝ որ է տուն դատաստանի։ Եւ աստ շինեցաւ Կորնթոս քաղաք, որ նախ Էուրիա (1) կոչէր։ Եւ յայսմ ժամանակի երեւեցան Փիւնիկ և Հրակլէս(2) իմաստասէրք։ Եւ նախ քան զԿիկրոպս Ալիու կոչէր աշխարհն, որ յանուն նորա կոչեցաւ Կապադովկիա։ Եւ աստ եղեւ հարուածն Եգիպտոսի շարժմամբք, որ և եւթն ամիս ՚ի տուն և ՚ի քաղաք ոչ իշխէին մտանել, այլ վրանօք արտաքոյ և բացօթեայք կային։ Եւ զկնի հեղձմանն Թագաւորեաց յԵգիպտոս Աքարոս։ Զկնի վեց ամի ելիցն Իսրայելի

---

(1) Միւս Թարգ. Եփիրա։ Սիւնկեղոս դնէ Եփիւրա։

(2) Եւսեբիոս (՚ի Քրոնիկոնին յէր. 106) ասէ, ՚ի ԽԸ ամին Կեկրոպեայ "Հերակղէս ՚ի Փիւնիկէ ճանաչէր Դիւցազն յորջորջեալ. որ և ցայժմ իսկ ՚ի Գամրաց և ՚ի Հեղլենացւոց անուանի։"

Թագաւորեաց 'ի վերայ Աթենացւոցն Կրոնոս(1), և անուն դստերն նորա Ատիկէ, յորոյ անուն կոչեցաւ Ատտիկէ աշխարհն ։

ՅԱդամայ մինչեւ 'ի Մովսիսի ութսուն ամն և յելսն յԵգիպտոսէ Իսրայելի՝ լինին ամք երեք հազար ութ հարիւր քառասուն և երկու, և 'ի յութսուն ամին Մովսէս ետ պատերազմ ընդ Ամաղեկայ ։ Ի նմին ամին յերրորդ ամիսն ել 'ի լեառնն և ընկալաւ զօրէնս ։

Ապողոմէս իմաստասէր եբրայեցի ասէ, թէ Մովսէս արար զգիրն Եբրայեցւոց. և աստի երեւի թէ գիր և լեզու եբրայեցւոյ կրտսեր է քան զԱսորւոցն ։

Յութսուն և յերկու ամին Մովսիսի կանգնեաց զխորանն, և 'ի նմին տարւոջ բերին լրտեսքն զողկոյզն 'ի ձորոյն Բէթղահեմի. և 'ի գալ տարւոյն առաքեաց Բաղակ զԲաղաամ մոգ, անիծանել զԻսրայէլ ։ Եւ եղեալ Մովսէս հարիւր և քսան ամաց կատարեցաւ ։ Սա գրեաց հինգ գիրս. և յետ սորա կացին դատաւորք Իսրայելի, և առաջինն Յեսու՝ որդին Նաւեայ, որ առ զգաւազանն Մովսիսի և զիշխանութիւնն՝ ութսուն և երեք ամաց. և նա էած զԻսրայէլ յերկիրն Աւետեաց ։ Սատակեաց եւթն ազգս քանանացիս, և զերկիր նոցա ժառանգեցոյց որդւոյն Իսրայէլի . և դատեաց զնոսա քսան և ութն ամ. և կատարեցաւ հարիւր և ութն ամաց: Եւ սմա և զԳոդոնիելի միջոցն այլ ոք չասէ ինչ, բայց Ափրիկանոս ասէ՝ երեսուն ամ: Այս Գոդոնիէլ եկաց դատաւոր քառասուն ամ. բայց ութ ամ ծառայեցին Քուսասարթեմայ, զոր սպան Գոդոնիէլ. այն ութն սմա է համարեալ. և Յոյնք յիսուն ամ ասեն զորս դատաւորութիւնս:

---

(1) Եւսեբիոս Կրանոս անուանէ, և զանուն դստերն՝ Ատթիս

Յաւուրս սորա շինեցան քաղաքքն Բիւթանիոյ՝ Մալոս, Պալոս, Թէասոս, Ալկիոնէ, Մարունտոս: Եւ աստ շինեցան և ՚ի Միկիլա քաղաքք: Յայսմ ժամանակի թագաւորեաց Արգիացւոցն Պալամիդոս (1), որ է սկիզբն թագաւորութեան նոցա: Ի նոյանէ էր Փիլոռոնոսն՝ բարոյախօսն անասնոց և թռչնոց: Յետ Գոդոնիէլի ծառայէ Իսրայէլ Եգղոմայ մովաբացւոյ ութևտասն ամ, զոր յարեալ(են) յամս Աւովդայ եփրեմացւոյ, որ դատեաց ութսուն ամ: Աստ շինեցաւ Ակադմոն քաղաք ՚ի Կադամոնէ(2). և յութ ամին սորա թագաւորեաց Աթենայ Աքիլաթոս(3): Եւ ՚ի քան ամի սորա Թագաւորեաց Աթուբացւոցն Ղամբարիդոս՝ (1) ամս երեսուն և երկու։ Եւ սա շինեաց Բալաքսէ 'ի Թագաւորէն Աթուբացւոց։ Եւ սա կատարեաց չորս դարըն, որ է չորս հազար ամ։

---

(1) Ըստ Եւսեբեայ՝ Պելոփոր թագաւորեաց Արգիացւոց յեւթներորդ ամի դատաւորութեան Աւովդայ: (Քրոն. էր. 114):

(2) Կադամոն երեւի թէ իցէ ընթեռնլի Կադմոս. իսկ զԱկադմոն՝ անուն անծանօթ, մարթ է ուղղել և ընթեռնուլ Լակեդեմոն, քանզի և ըստ Ապուլֆարաճայ՝ առ դատաւորութեամբ Աւովդայ հիմնեցաւ Լակեդեմոն (Քրոն. առք. էր. 16):

(3) Ըստ Եւսեբեայ Երեքթէոս:

ՅԱդամայ մինչև 'ի Մովսէս քսան և եւթն ծնունդ է, և 'ի Մովսիսէ մինչև սա ոչ զծընունդն թուէ, այլ զանուանս դատաւորացն միայն։ Զկնի Աւովդայ ծառայեցին Յաբինայ ամս քսան։ Եւ զօրացաւ Սամեգար, որ սպան 'ի Փղշտացւոց վեց հարիւր այր մաճով արօրոյն։ Եւ եկն Սիսարա ինն հարիւր կառօք երկաթի, և զօրացաւ Բարակ Դեբովրայիւ և յաղթեաց նմա։ Եւ Յայել կին Քաբերայ վարեաց խոփ ընդ ծամելիւն Սիսարայ և սպան զնա։ Եւ ամք դատաւորութեանն Բարակայ են քառասուն։

Ի յԱւոդայ երեքտասաներորդ ամին եկին Կադմոս և Փիւնիկոս 'ի Թեբայեցւոցն յԱսորիս, և թագաւորեցին Սրոյ և Սայդոյ։ Եւ ասեն ոմանք՝ թէ Կադմոս արար գիր Յունաց յեգիպտացի գրոյն։

Պալոմպիս (Պելոպս) կալաւ զթագաւորութիւն Արգիացւոցն, որ նախ Մուկեացիք(2) կոչէին մինչև յիջանելն առ նոսա յորդւոցն

---

(1) Ըստ Եւսեբեայ Ղամբրիդէս։

(2) Մուկեացիք կամ ուղղագոյն եւս Միկեացիք են բնակիչք Միկէն քաղաքի որ յԵլլադա։

Հերակլեայ։ Յայսմ ժամանակի Իլիոն քաղաք յԻլոսէ շինեցաւ։ Եւ յայսմ ժամանակի Աքայիա՝ յԱքից շինեցաւ ։ Եւ սա երեւեցաւ կինն Սաբիլէ, որ մեկնեաց զհարիւր իմաստասիրին երազն, որ միապէս տեսին եւթն արեգակն, և էին 'ի Հռովմ տեսոյքս երազոյն եւթն արեգականն։ Նա թագաւորեաց Միդոս 'ի վերայ Ափրիկեցւոցն ։

Ի քսան և յութ ամին Բարակայ թագաւորեաց Աթուրացւոցն Պանուս(1), ամս քառասուն և հինգ ։ Եւ սա տայ զօրհնութիւնն երգով Դեբովրա ։ Զկնի Բարակայ իշխեցին Մադիանացիք Իսրայէլի ամս եւթն։ Եւ Գեդէոն և կոտորեաց զնոսա Աստուծով զօրացեալ․ և դատեաց զԻսրայէլ ամս երեսուն և երեք․ դիր զծառայութիւն եւթն ամին 'ի սմա ժամանակս, լինի քառասուն ։ Յերրորդ ամին Գեդէոնի թագաւորեաց Աթենացւոց Իդոս(2) ամս քառասուն և ութ․ և յերեսուն և յերեք ամին Գեդէոնի թագաւորեաց Աթուրացւոց Սոսարմոս՝ ամս ինն և տասն։ Եւ սա թագաւորեաց 'ի Թեբայիս (Թեբէ) Ապողոն երաժիշտ, որ ասեն թէ շարժէր զքարինսն նուագօք գեղեցկօք․ և յայլ գիրս գտաք թէ յԱթէնս թագաւորեաց երկրորդ Կեկրոպէս։ Գեդէոն ծնաւ որդիս եւթանասուն, և զկնի մահուանն Գեդէոնի ապա Աբիմելէք հարճորդի նորա զեւթանասուն որդիսն Գեդէոնի, և դատեաց զԻսրայէլ ամս երիս։ Եւ զկնի նորա Թովղա ամս քսան և երկու։ Ի սորա ութ ամին թագաւորեաց Աթենացւոյն Թեսեւս՝ ամս երեսուն, և Աթուրացւոցն Միթրոս՝ ամս քսան և եւթն։ Ի քսան և մի ամին սորա շինեցաւ Տարսուս 'ի Կիլիկիա 'ի Ըրխոսէ (Պերսէոս) որդւոյ Տանայի. և սա շինեցաւ Կարքեդոն, և Իլոն առաւ։ Զկնի Թովղայ Յայիր գաղատացի՝ ամս քսան և երեք։ Ի վեցերորդ ամին սորա թագաւորեաց Ամուկասս (1) Եգիպոսս ամս քսան և վեց։ Ի չորեքտասան ամին սորա թագաւորեաց Աթուրացւոցն Տուտոլս ամս երեսուն և մի. Յոյնք ամս Տիթոնիս ասեն. և ոմանք ասեն թէ սա էառ զԻլիոն քաղաք և աւերեաց։ Ի սորա վեշտասան ամին թագաւորեաց Աթենացւոյն Մենթոս (Մենեսթէ), ամս քսան և երիս։

---

(1) Ըստ Եւսեբեայ Պաննիաս ։

(2) Ըստ Եւսեբեայ և Թովմ. Արծ. Էգէոս . . . Սոփարմոս

Զկնի Յայիրայ ծառայեցին Այղապգեաց ամս ութևտասն. և ա՛ռ զդատաւորութիւնն Յեփթայի ամս վեց. քսան և չորս ամ համարին ամս։ Եւ զերաժիշտն Փիլիմոն(2) աստ ասեն, որ արար դասս երաժշտայ. և սա արար պատկեր շարժուն ոտիւք։ Սա շինեցաւ Կիւրինէ քաղաք և Սուր, յառաջ քան զշինութիւն Տաճարին չորեքհարիւր քառասուն ամաւ։

---

(1) Ըստ Եւսեբեայ Ամիկղէս։ (2) Միւս թարգմ. Փիլոն։

Ի չորրորդ ամին Յեփթայեայ թագաւորեաց 'ի վերայ Աթենացւոցն Դիմափոս(1) ամս երեսուն և երիս։ Եւ 'ի վերայ Եգիպտացւոցն Դիուսքուլուլիոն (2), և այլք ընդ նմա 'ի կարգին՝ հարիւր եւթանասուն և ութ ամ։ Եւ աստ թագաւորեցին Լատինացիքն որ կոչեցան Հռոմայեցիք. առաջին թագաւորն Ենիաս՝ ամս երեք։ Զկնի Յեփթայեայ ոմանք զԵլոն ասեն դատաւոր. և Եւթանասունք զԱբդոն դնեն, որ դատեաց ամս ութ։ Եւ զկնի Աբդոնի Փղշտացիքն տիրեցին ամս քառասուն. Եւ զկնի Ելոնի և Աբդոնի՝ Սամփսոն յաջորդէ Դանայ. սա դատեաց զԻսրայէլ ամս քսան. և յերրորդ ամի իշխանութեանն պատերազմէր ընդ Փղշտացիս։ Եւ 'ի հինգ ամին սորա եղեւ իրքն Հռութայ։ Եւ յերկրորդ ամին սորա թագաւորեաց Աթուրացւոցն Տաւտէոս(3) ամս քառասուն։ Եւ յինն և տասներորդ ամին Սամփսոնի մեռաւ Զեւս, և թաղեցաւ 'ի Կրիտոս՝ կեցեալ ամս ութ հարիւր ութսուն. և վասն բազմակեցութեանն Զեւս կոչեցաւ յանուն աստեղն, որ նախ Պիոս կոչէր 'ի ծնողացն ։

---

(1) Ըստ Եւսեբեայ՝ Դիմոփոս (Դիմոփոն) ոչ առ Յեփթայեաւ այլ առ Աբդոնաւ ասէ թագաւորեալ։

(2) Դիոսքուլուլիոն ոչ թագաւորի՝ այլ հարստութեան է անուն, Դիոսպոլիտացւոց կոչեցեալ յԵւսեբեայ. որ եղեւ քսաներորդ հարստութիւն, և տեւեաց ամս 178։ Քրոն. եր. 124։

(3) Միւս թարգ. Տոտէմէոս։ Եւսեբիոս ունի Տէտէոս. (Քրոն. հտ. Բ. եր. 99)։

Եւ զկնի Սամփսոնի կեցին որդիքն Իսրայելի ամս երկոտասան ։ Յովհաննէս պատմագիրն գրէ, թէ Սամեգարն եղեւ զկնի Սամփսոնի՝ ամս քառասուն . և Ափրիկանոս ասէ, թէ չգոյր նոցա դատաւոր . և էր խաղաղութիւն, և ոչ նեղէին յաւուրսն յայնոսիկ ուստեք ։ Հեղի դատեաց զԻսրայէլ ամս քսան ըստ Եւթանասնիցն, և ըստ Ասորւոցն ամս քառասուն . և ամենայն ժամանակըն Հեղեայ եւթանասուն և ութ ամ ։ Յերեսուն և յութերորդ ամին (կենաց իւրոց) Հեղի եղեւ իշխան, և յեւթնևտասներորդ ամի իշխանութեան նորա ծնաւ Սամուէլ . և 'ի քսան ամին ընծայեցաւ Սամուէլ 'ի խորանն ։ Եւ զկնի մահուանն Հեղեայ եղեւ Տապանակն 'ի տան Ամինադաբայ ամս քսան ։ Եւ 'ի քառասուն և երկրորդ ամի կենացն Սամուէլի, և 'ի քսան ամի իշխանութեան նորա խնդրեցին որդիքն Իսրայելի թագաւոր ։ Եւ աստ կատարեցաւ ժամանակ դատաւորացն, և սկըսաւ թագաւորութիւն նոցա 'ի Սաւուղայ ։

Առաջին թագաւոր Սաւուղ՝ ամս քառասուն, և յերրորդ ամի թագաւորութեան իւրոյ յաղթեաց Ամաղեկացւոցն . և 'ի տասներորդ ամի սորա ծնաւ Դաւիթ, և 'ի քսան և երրորդ ամի թագաւորութեանն Սաւուղայ օծաւ թագաւորն Դաւիթ 'ի Սամուէլէ ։ Եւ էր Սամուէլ վաթսուն և հինգ ամաց և Դաւիթ երկոտասան ամաց. և 'ի քսան և ութ ամին իւրոյ սպան զԳողիադ. և յերեսուն և մի ամին եղեւ տօն 'ի Նաւադ Հռամայ, և մարգարէանայր ընդ մարգարէսն Սաւուղ, թէ Դաւիթ է թագաւորելոց. մարգարէութիւն չար տան իւրոյ: Եւ յերեսներորդ ամի ծննդեանն Դաւթի մեռաւ Սամուէլ մարգարէ: Եւ զկնի հինգ ամի մահուան Սամուելի սպանաւ Սաւուղ և Յովնաթան որդի իւր, թագաւորեալ ամս քառասուն:

Եւ Դաւիթ թագաւորեաց 'ի Քեբրոն ամս եւթն: Սա շինեաց զՍիոն, և յԵրուսաղէմ թագաւորեաց երեսուն և երիս ամս. 'ի տասներորդ ամի թագաւորութեանն իւրոյ եհան զՏապանակն, և եհար նմա վրան: Եւ 'ի բերելն զՏապանակն, շնորհն Աստուծոյ որ 'ի նմա՝ գթացաւ յԱդամ, և անկաւ 'ի վերայ գերեզմանին Ադամայ. և մեռաւ Ոզիա, զի արգելուլ կամէր 'ի սրբելոյն իւրմէ: Ասէ զայս Յակոբ ուռհայեցին:

Նաթան մարգարէն էր 'ի Գաբաւոնայ, որ խնամէրն զԴաւիթ, և 'ի մեղանչելն Դաւթի 'ի Բերսաբէ (1), նախ իմացաւ Նաթան մարգարէ և եկն ապրեցուցանել զԴաւիթ, և 'ի գալն հանդիպեցաւ մեռեալ մի, և մինչ թաղեացն զնա և եկն առ Դաւիթ՝ գործեցաւ շնութիւնն, և դարձաւ տրտմութեամբ. և 'ի սպանանելն զՈւրիա, ապա եկն յանդիմանել զնա յերկուց չարացն վերայ, և ետ նմա նշան զմահ առաջին որդւոյն Բերսաբէի. և երկեաւ Դաւիթ յԱստուծոյ և ապաշաւեաց: Յերեսուն և ինն ամի թագաւորութեան իւրոյ Դաւիթ ընտրեաց 'ի Ղեւտացւոցն արս հարիւր ութսուն և ութ, և արար զնոսա դասս քսան և չորս: Երկոտասան այր 'ի դաս մի, սպասաւորս Տապանակին և Սաղմոսացն: Եւ ետ պատերազմ ընդ շըրջակայ ազգացն, և յաղթեաց ամենեցուն. և եկաց ամս եւթանասուն, և թագաւորեաց ամս քառասուն:

---

(1) Յօրինակին 'ի գէջէանոյ . . . 'ի Բէրսաբէէ:

Եւ թագաւորեաց Սողոմոն ամաց երկոտասանից, և քառասուն ամ թագաւորեաց. և եհան սա զԱբիաթար քահանայ, և ըսպան զԱդոնիա և զՅովաբ: Եւ 'ի չորրորդ ամի թագաւորութեանն իւրոյ սկսաւ շինել զտաճարն, և կատարեաց զնա յութ ամ, 'ի լեառն Ամուրհացւոց, որ է այժմ Երուսաղէմ: Եւ գրեալ է 'ի գիրս Թագաւորացն, թէ յետ չորեքհարիւր և ութսուն ամի ելանելոյն յԵգիպտոսէ՝ շինեցաւ տաճարն. ըղնոյն ասէ և Պօղոս, թէ "Ետ նոցա դատաւոր չորեքհարիւր և յիսուն ամ, մինչև 'ի Սամուէլ մարգարէ." և թողին 'ի ժամանակ ծառայութեան Այլազգացն ամս երեսուն: Յեըետուն եւ 'ի չորս ամին իւրոյ Սաղոմոնի շինեաց տուն կռոց Քամովսայ մովաբացւոց եւ Մեղքումայ ամմոնացւոց , ուր կայր տունն Ափրոդիտեայ աստուածուհւոյն Յունաց . Մովաբացւոյն տաճարն յեւթն ամն շինեցաւ , եւ Ամմոնացւոյն՝ յերեքտասան . բարձրութիւն նոցա երեսուն կանգուն եւ լայնութիւնն յիսուն . եւ արար նոցա զարդ ոսկւոյ յոլով , եւ ծով պղնձի եւ եղինս : Եւ քակեաց (Սաղոմոն) զՆախոք եւ շինեաց զԹեամուր մերձ Հեմայ, եւ զԱսոր եւ զՀեսուր եւ զՄակդուր եւ զԲասաղէ եւ զԷդուր՝ ըզներքին եւ զվերին , եւ զԻերդէոմթ , եւթն քաղաքս : Եւ յառաջին ամի թագաւորութեան իւրոյ եղեւ նմա որդի Ռոբովամ 'ի Նամայէ ամմոնացւոյն : Եւ 'ի Դամասկոս թագաւորեաց Հադադ , ոսոխն Սաղոմոնի : Եւ ամենայն ժամանակն Սաղոմոնի յիսուն եւ երկու ամ : Եպիփան ասէ , թէ Աքիա մարգարէացաւ Սաղոմոնի , թէ հանդերձեալ ես բարկացուցանել զԱստուած . նոյնպէս եւ զՌոբովամ յանդիմանեաց՝ թէ նենգութեամբ գնաս ընդ Աստուծոյ : Եւ սա (Աքիա) ետես տեսիլ , որ լուծք եզանց կոխէին զԻսրայէլ եւ զքահանայսն , եւ ասաց ցՍաղոմոն , թէ կանայք հեռացուցանեն զքեզ 'ի Տեառնէ : Եւ սա յանդիմանեաց զՌոբովամ զորդին Նաբատեայ վասն երինջոյն եւ մեռաւ , և թաղեցաւ 'ի Սելով առաջի կաղնոյն (1) ։

Եւ զկնի մահուանն Սաղոմոնի բաժանեցան երկոտասան ցեղքն , և եղեն ընդ Երոբովամայ Նաբատեան , որ թագաւորեաց ամս քսան և երկու . և ընդ Ռոբովամայ մնացին երկու ազգն , և կոչեցան Յուդա և Իսրայէլ ։ Ռոբովամ թագաւորեաց յԵրուսաղէմ ամս եւթնևտասն , և եկաց յիսուն և ութ ամ ։ Նա էր մարգարէն Սամէա , որ երկրորդ անգամ յանդիմանեաց զՌոբովամ 'ի վերայ սեղանոյն . և սա ասաց Յուդայի , թէ “Մի՛ կռուիք ընդ Իսրայէլի , զի 'ի Տեառնէ եղեւ բաժանումնդ ։” Եւ սա պատուեաց զհանդերձն յերկոտասան մասն , և ետ Երոբովամայ Նաբատեան և զերկուսն ետ Ռոբովամու որդւոյն Սաղոմոնի ։ Եպիփան ասէ , թէ Իուդ էր անուն մարգարէին , և էր յերկրէն Սամարացւոց , և սպան զնա առիւծն , զի խոտորեցաւ 'ի բանէն Տեառն ։ Զկնի Ռոբովամայ թագաւորեաց Աբիա որդի նորա ամս երիս . և ել 'ի վերայ նորա Երոբովամ ութսուն հազարաւ , և Աբիա ընդդէմ ել նմա քառասուն հազարաւ . և սպան յԻսրայելէ յիսուն հազար այր ։ Եւ ա՛ռ Աբիա կանայս չորեքտասան, և եղեն նմա որդիք քսան և չորս և դստերք վեշտասան։

---

(1) Աստանօր միւս թարգմանութիւնն 'ի մէջ բերէ հարցմունս ինչ դշխոյին Սաբայ ընդ Սաղոմոնի 'ի վերայ այլ և այլ նիւթոց , որ գտանին առանձինն և 'ի գրչագիր մատեանս ։

Զկնի Աբիայ թագաւորեաց որդի նորա Ասա ամս քառասուն և մի, և եկեաց ամս վաթսուն։ Սա փորեաց ջրհոր մերձ 'ի Մասեփա յահէ թագաւորին Իսրայելի։ Սա 'ի հնգետասան ամին այրեաց զգտեալ կուռն և եբարձ զպոռնկութիւն յերկրէ, և զմայր իւր եհան 'ի տիկնութենէ զի պաշտէր զԱստարտն, և այրեաց զկուռն մօր իւրոյ։ Ի քսան և ինն ամին սորա թագաւորեաց Եղա 'ի վերայ Իսրայելի երկուս ամս, և Զամբրի ծառայն իւր սպան զնա և թագաւորեաց եւթն օր(1)։ Եւ բաժանեցաւ Իսրայէլ, ոմանք երթային զհետ Ամրեայ, և ոմանք զկնի Թամնեայ. և յաղթեալ Ամրեայ, թագաւորեաց երկոտասան ամ։ Եւ սա գնեաց զլեառն Սամարիա 'ի Սամերայ տեառնէ նորա, և շինեաց անդ քաղաք և անուանեաց Սամարիա, որ յետոյ կոչեցաւ Սեբաստիա, որ այժմ ասի Նամլուզ։ Իսկ Թամնի տեսեալ թէ յաջողեցաւ Ամրեայ, այրեաց զարքունիսն, և ինքն ընդ նմին այրեցաւ։

Ի քառասուն և մի ամին Ասայի թագաւորեաց յԵգիպտոս Փողքիրիս(2) ամս չորս։ Եւ զկնի Ասայի թագաւորեաց Յովսափատ ամս քսան և ինն ։ Յերրորդում ամի սորա թագաւորեաց Իսրայէլի Աքաաբ որդին Ամրեայ՝ ամս քսան և երկս ։ Սա էառ կին զԵզաբէլ դուստր Իթէբղի(1) (Եթբաաղ) թագաւորին Սրոյ և Սեդայի (Սիդոն) ։ Եւ սա շինեաց զԵրիքով զնզովեալն Յեսուայ որդւոյ Նաւեայ՝ Աբիրոնաւ անդրանկաւ իւրով և Զերծելաւ կրսերաւ ․ Աբիրոնաւ հիմն էարկ նմա , և Զերծելաւ կրսերաւ կախեաց ըղդուռնն՝ ըստ բանին Յեսուայ ։ Եւ այլք զանազան ասեն շինիչ հրամանաւ Աքաաբու, և զորդիսն սմա ասեն՝ Աբիրոն և Զերծել ։

---

(1) Միւս Թարգմ. յաւելու աստ. “Եւ յարեան երկու ազգք՝ Ամրի և Թամնի թագաւորել։ »

(2) Ըստ Եւսեբեայ Նէֆէրխէրէս։

Յերկրորդ ամին Յովսափատու թագաւորեաց 'ի վերայ Լատինացւոցն Կարպանդոս ամս երեքտասան ։ Եւ 'ի չորրորդ ամին Յովսափատու թագաւորեաց 'ի վերայ Աթուրացւոցն Սեբրանոփոս(2) ամս յիսուն ․ և յերեքտասան ամին նորա թագաւորեաց յԵգիպտոս Իսկոքորոս ամս վեց ։ Եւ 'ի չորրորդ ամին նորա թագաւորեաց Աթենացւոցն Ակալոս(3) երեսուն ամ ։ Յիննևտասաներորդ ամի նորա թագաւորեաց յԵգիպտոս Բաստանիքոս(1) ամս ինն ։ Սա ՚ի քսան և երեք ամի նորա թագաւորեաց ՚ի վերայ Լատինացւոցն Ագրիպաս՝ ամս քառասուն և մի։ Սա ՚ի քսան և ինն ամի սորա թագաւորեաց ՚ի վերայ Իսրայելի Ոքոզիա ամ մի ։ Սա ըզկնի նորա Յովրամ եղբայր նորա ամս երկոտասան. և ՚ի նոյն ամի թագաւորեաց ՚ի վերայ Յուդայի Յովրամ ամս ութ. և զհետ նորա Ոքոզիա ամ մի։ Յովրամ արքայ Յուդայ որդի Յովսափատու առ զԳոդողիա քոյր Աքաաբու իւր ՚ի կնութիւն, և սպան զեղբարսն իւր. և եհար զնա Տէր բորկութեամբ և մեռաւ, և առ զթագաւորութիւնն Ոքոզիա։ Սա առաքեաց Եղիսէէ օծանել զՅէու որդի Ամզի(2) ՚ի վերայ Իսրայելի, որ սպան զՅովրամ զորդին Աքաաբու, և զՈքոզիա արքայ Յուդայ. և Եզաբէլ հնգետասան ամաւ յետոյ սպանաւ քան զԱքաաբ զայրն իւր ։

---

(1) Վարդան դնէ զԲՐԷԼ ։ Պատմ․ էր․ 36 ։

(2) Ըստ Սամուէլի Ոճրապանէս , որպէս և Դիոդորոսն կոչէ Ոստոնէր ։

(3) Եւսեբիոս և Սամուէլ ուղղագոյնս գրեն՝ Մէգակլէս, որ էր քսաներորդ երրորդ թագաւոր Աթենացւոցն հարստութեան՝ սկսեալ յԻնաքոսէ ։

Սա զկնի մահուանն Ոքոզիայ արքայի Յուդայ, Գոդողիա մայր նորա կորոյս զամենայն զաւակ թագաւորութեանն. բայց մանուկ մի պահեցաւ առ Յովիդեայ քահանայի. և թագաւորեաց ինքն Գոդողիա վեց ամ։ Սա Յէու թագաւորեաց ՚ի վերայ Իսրայելի քսան և ութ ամ։ Սա զտաճարն Բահաղու որ կոչի յո—ւ, այրեաց հանդերձ պաշտամանէիւքն ։ Քահանայապետն Յովիդեա սպան զԳոդողիա և թագաւորեցոյց զՅովաս վեցամեայ ՚ի վերայ Յուդայ, որ թագաւորեաց քառասուն ամ ։

---

(1) Ըստ Եւսեբեայ Փոխնակէս ։

(2) Յօրինակին Ամնէ ։

Յերրորդ ամին Յովասայ թագաւորեաց Դիոգինէս(1) ՚ի վերայ Աթենացւոցն ամս քսան և ութ ։ Եւ ՚ի տասներորդ ամին թագաւորեաց Աթուրայցւոցն Սկրագանխոս քսան և երկուս ամս ։ Եւ ՚ի քսան և երկրորդ ամին Յովասայ թագաւորեաց Եգիպտոսի Եսնուքոս(2) ամս քսան և մի ։ Եւ ՚ի քսան և երրորդ (ամին) թագաւորեաց ՚ի վերայ Լատինացւոցն Ռոմելոս(3), ամս ինն և տասն ։ Այս Ռոմելոս յոյժ ամբարտաւանեալ ՚ի վարս իւր՝ երկնառաք հրով այրեցաւ արքունեօք իւրովք։ Իսկ յերեսուն և եւթներորդ ամին Յովասայ մեռաւ Եղիսէէ, զկնի յիսուն ամի համբարձմանն Եղիայի ։ Ի քսան և եւթներորդ ամին Յովասայ թագաւորեաց ՚ի վերայ Իսրայելի Յովաքազ՝ ամս եւթնևտասն ։ Եւ յերեսներորդ առաջներորդ ամին Յովասայ եղեւ դատաւոր Ա-

---

(1) Եւսեբիոս կոչէ Դիոգնետոս, որում տայ 25 ամս․ իսկ Սամուէլ Դիոգնիտէս կոչէ, և համաձայնի Միխայէլի՝ տալով 28 ամս ։

(2) Եւսեբիոս զսա Սէսոնխոսիս անուանէ, և ասէ լինել առաջին թագաւոր ԻԲ․ հարստութեան Բուբաստացւոց ։

(3) Եւսեբիոս այլափոխեալ ունի զանունս, զոր կոչէ Արէմուղոս Սիլուիոս ։

թենացւոցն Բարակլիս (1) ամս իննևտասն ։ Յովաս զկնի մահուանն Յովիդեայ 'ի բաց եկաց 'ի Տեառնէ . և սպան զԶաքարիա որդի Յովիդեայ 'ի տաճարին, և ինքն սպանաւ 'ի ծառայից իւրոց ։

Եւ թագաւորեաց որդի նորա Ամասիա ամս քսան և ինն ։ Սա յաղթեաց Եդովմայեցւոցն, և բերեալ զաստուածս նոցա պաշտէր . սա եկաց ամս յիսուն և չորս ։ Ի սորա տասներորդ ամին թագաւորեաց Իսրայէլի Յովաս ամս վեշտասան . և 'ի վերայ Լատինացւոցն թագաւորեաց Անտոնինոս (2), ամս երեսուն և ութն ։ Եւ յերրորդ ամին Ամասիայ թագաւորեաց Եգիպտոսի Եսթրոն՝ ամս ութնևտասն ։ Եւ աստ եղեւ դատաւոր Աթենացւոցն Արիփոն (3) ամս քսան ։ Իսկ յեւթնևտասներորդ ամին Ամասիայ թագաւորեաց Աթուրացւոցն Թոնոս Կոնկողերոս (4), որ կոչի յունարէն Սարդանապալոս, ամս քսան ։ Ի սորա ժամանակին գնաց Յու-

---

(1) Այն է Փէրէկլոս կամ Փարակլոս ըստ Եւսեբեայ և Սամուէլի ։

(2) Եւսեբի փոքր մի ուղղագրէ զանունս կոչելով Աւէնտինոս փոխանակ Աւէնտինոսի ։ Նոյնպէս զԵռմրոնն կոչէ Ռոմրդոս, որոյ ուղիղն է Ռոմրդոն ։

(3) Աստանօր օրինակս մեր շփոթեալ ունէր զկարգ բանիցս, զոր ուղղեցաք ըստ Եւսեբեայ ։ Սա զԱրիփոնն ուղղագոյն եւս գրէ Արիփրոն ։

(4) Օրինակս մեր, որպէս և միւս թարգմ. գրեն Թո-

նան քարոզել Նինուէի ։ Սա (Սարդանաբալոս) զղջացաւ և դարձաւ առ Տէր ապաշխարութեամբ . և զկնի զղջմանն եղեւ նմա պատերազմ ընդ Արբակէս (1) մարացին , որ են Մարք , և տեսեալ թէ յաղթի ՚ի Մարէն , այրեաց զանձն։ Ամք թագաւորութե̃ Աթուրացւոց բովանդակն լինի հազար հարիւր յիսուն և վեց , որ եղեւ զկնի խափանելոյ թագաւորութեանն Բաբելացւոց։ Եւ յառաջին ամէն Վալոսի (Բելոս) հօրն Նինոսի՝ լինին ամք հազար երեքհարիւր։ Եւ Արբակէս մարացին օգնութեամբն Հայոց եբարձ զթագաւորութիւնն Աթուրացւոց և փոխեաց ՚ի Մարս (2) ։ Զկնի մահուանն նորա եկաց թագաւոր ՚ի Նինուէ յազգէ քաղդէացի Փուլ անուն նորա Եփուա (3). և ՚ի սմանէ սերեցան Թագղաթփաղասար , Սաղմանասար , Սենեքերիմ, որ յիշէ զնոսա աստուածային Գիրք ։ Եւ սոքա իշխեցին Կիլիկեցւոց և Փիլիպեցւոց . և ՚ի սոցանէ են Նաքոնոս և Նաքուբոլոս և Նաբուպալասար և Նաբուգոդոնո-

---

Նոսխոնոս Կողէրոս , կամ Թոնոսխոն Կողէրոս ։

(1) Երկոքին թարգմանութիւնք այլակերպեալ ունին զանունն՝ դնելով Արբայ Յէէ կամ Արբակէս և Արբասկէս ։

(2) « Վարբակէս մար քակեալ զթագաւորութիւն Ասորեստանեայց՝ ՚ի Մարս փոխադրեաց ։ » (Եւս . Քրն . Հտ . Բ · Եր · 166) ։

(3) Կրկնութիւն համարի Փուլ կամ Փուա անուանս ։ “ Փուայ ամս վեշտասան . ՚ի սորա վեշտասան ամին եղաւ առաջին Ողիմպիադն . „ (Սամուէլ . ՚Ի Գրչագիրս) ։

սոր . և թուին ամք սոցա 'ի Փուայէ մինչեւ յԱղէքսանդր մակեդոնացին չորեքհարիւր քսան և չորս ամ : Եւ զկնի մահուանն Աղէքսանդրի թագաւորեցին Սելեւկոս, Անտիոքոս, Կիլիքոս՝ որ զԿիլիկիա շինեաց . Սուրոս՝ որ զՍորիա շինեաց, յորմէ Ասորիք կոչեցան, որ մինչեւ ցնա Քաղդեացիք կոչէին . և Սելեւկոս զՍելեւկիա շինեաց . Անտիոքոս զԱնտիոք շինեաց զկնի աւերմանն Սաղովմնի : Նոյնպէս և զՈւռհա զշինեալն 'ի Նեբրովթայ և զքակեալն 'ի Սենեքերիմայ՝ Սելեւկոս շինեաց հրամանաւ Աղէքսանդրի : Եւ այս Սելեւկոս բնակեցոյց զմարդկան բազմութիւն 'ի Տարսոն Կիլիկեցւոց, զի վասն վատախառնութե̅ տեղւոյն չբնակէին անդ զառաջինն :

Յութևտասներորդ ամին Ամասիայ թագաւորին Յուդայ թագաւորեաց 'ի վերայ Իսրայելի Յերոբովամ ամս քառասուն . և յԵգիպտոս թագաւորեաց Տուլօթիս (1) *ամս երեքտասան : Եւ կռուեցաւ Ամասիա ընդ Յովաս արքային Իսրայելի, և հարեալ մեռաւ 'ի նմանէ : Եւ եկեալ յԵրուսաղէմ Իսրայելացիքն քակեցին 'ի պարսպէն չորեքհարիւր գիրկ, և առին ոսկի և արծաթ որ կայր 'ի տան Տեառն և 'ի տան թագաւորին, և դարձան 'ի Սամարիա . և Ամասիա բերեալ յԵրուսաղէմ՝ թաղեցաւ : Եւ թագաւորեաց*

---

(1) Եւսեբիոս Տոնէփաղէս կոչէ .

Ազարիա որդի նորա ամս յիսուն և երկու, և եկաց ամս վաթսուն և ութ և մեռաւ ։

Յառաջին ամին Ազարիայ, որ և Ոզիա, եկաց դատաւոր Աթենացւոց Թասպիոս (1) ամս քսան և եւթն ։ Եւ յերկրորդ ամին Ոզիայ Թագաւորեաց Եգիպտոսի Սոսախս (2), ամս քսան և հինգ ։ Եւ 'ի տասն ամին Ոզիայ Թագաւորեաց Լատինացւոց Փրիկոս ամս քսան և երիս ։ Եւ 'ի քսան և եւթն ամին Ոզիայ Թագաւորեաց Եգիպտոս Ոսորաթոն(3) ամս ինն ․ զսա անուանեցին Եգիպտացիքն Երակլէս ։ Եւ 'ի քսան և ութ ամին Ոզիայ եկաց դատաւոր Աթենացւոց Ագմիտոր(4) ամս քսան ։ Եւ 'ի քսան և ինն ամին Ոզիայ Թագաւորի Յուդայ Թագաւորեաց 'ի վերայ Իսրայելի Զաքարիա ամս վեց և ամիսս չորս ։ Եւ զկնի Զաքարիայ Թագաւորեաց Իսրայելի Սելում ամիս մի ։ Եւ զկնի նորա Թագաւորեաց Մանայեմ ամս տասն ։ Ի քըսան և չորրորդ ամին իւրոյ, Ոզիա համարձակեալ արկանել խունկ 'ի Տաճարին, և եղեւ բորոտեալ ամենայն մարմնովն ․ և արգերաւ մարգարէութիւնն Եսայեայ զկնի քսան և չորս ամի մարգարէանալոյն իւրոյ, և լռեաց քսան և ութ ամ, մինչև մեռաւ Ոզիա, և յետոյ այլ մարգարէացաւ վաթսուն և մի ամ։ Եւ յերեսներորդ երրորդ ամին Ոզիայ թագաւորեաց Լատինացւոցն Ամուլոս(1) ամս քառասուն և երիս։ Եւ յերեսներորդ չորրորդ ամին Ոզիայ եղ Փուլ արքայ Բաբելացւոց 'ի վերայ Սամարիայ, և առեալ 'ի Մանայեմէ հազար քանքար ոսկւոյ՝ և դարձաւ։ Յերեսներորդ վեցերորդ ամին Ոզիայ թագաւորեաց Եգիպտացի Բասմոս(2) ամս տասն։ Եւ 'ի քառասուն ամին Ոզիայ թագաւորի Յուդայ թագաւորեաց 'ի վերայ Իսրայէլի Փակէէ ամս տասն։ Եւ 'ի քառասուն և մի ամին Ոզիայ թագաւորեաց Մակեդոնացւոցն Կօնոս(3) երկրորդ թագաւոր՝ ամս երկոտասան։ Եւ 'ի վերայ Աթուրացւոցն թագաւորեաց Թակղաթփաղասար ամս երեսուն և հինգ։ Եւ 'ի քառասուն և վեց ամին Ոզիայ թագաւորեաց յԵգիպտոս Կուքրոս(4) ամս քառասուն և չորս։ Եւ 'ի քառասուն և ութ ամին Ոզիայ թագաւորեաց առաջին թագաւորութիւն Լիւդացւոց։

---

(1) Թեսպիէոս ըստ Եւսեբեայ, որ էր, ասէ, որդի Արիփրոնայ ։

(2) Միւս Թարգմ. ունի Խոխո ․ իսկ Եւսեբի կոչէ Պէտուբաստես, որ էր 'ի քսաներորդ երրորդ հարստութենէ ։

(3) Ոսորթոն ըստ Եւսեբեայ ։ Միւս Թարգմ. ոչ յիշատակէ զանուն սորա ։

(4) Ագամեստոր ըստ Եւսեբեայ ։

---

(1) Ամուլիոս ըստ Եւսեբեայ։ (2) Փսամմոս ըստ Եւսեբեայ։

(3) Կոմինոս ըստ Եւսեբեայ. ուղղագոյն եւս՝ Կոյինոս.

(4) Պիքորոս ըստ Եւսեբեայ, առ որով, ասէ, գառն խօսեցաւ. Հտ. Բ. էր. 170.

Եւ ել Թակղաթփաղասար թագաւորն Աթուրացւոց և գերեաց զՅուդա և զԻսրայելի մեծ մասն . և այս եղեւ սկիզբն գերութեանն Իսրայելի ։ Եւ գերեցան իշխանք մեծամեծք, Ինաբէլ(1) Բէթմեքա, Ենոք, Կանձ, Եսուր(2), Գեղադ, Գաւդի, և զերկիրն Նեփթաղիմայ ։ Եւ զկնի մահուանն Ոզիայ երեւեցան փառքն Տեառն 'ի տաճարին։ Յետ մահուանն Ոզիայ թագաւորեաց Յովաթամ որդի նորա ամս վեշտասան ։ Սա յաղթեաց Ամոնացւոց և արար ընդ հարկաւ ։ Յերրորդ ամին Յովաթամայ թագաւորեաց երրորդ թագաւոր Մակեդոնացւոցն Տունիոս(3) ամըս երեսուն և ութ . սոքա են ազգակից Հայոց ։ Զկնի Յովաթամայ թագաւորեաց Աքազ որդի նորա ամս վեշտասան , որ արար չար առաջի Տեառն ։

Փակէէ թագաւորն Իսրայելի առեալ ըզՀռասոն թագաւորն Դամասկեայ , և երթեալ 'ի վերայ Յուդայ՝ կոտորեաց 'ի նոցանէ երկոտասան բիւր . և Աքազ առաքեաց վարձեաց զԹակղաթփաղասար , որ եկն սպան զՀռաոմն, և գերեաց զԵդոմացիս և գնաց ։ Երկրորդում ամին Աքազու ապստամբեալ Ովսէ 'ի Փակէէ, սպան զնա, և ինքն Թագաւորեաց 'ի վերայ Իսրայէլի ամս ինն ։ Յութերորդ ամին Աքազու Թագաւորեաց Աթուրացւոցն Սաղմանասար ամս չորեքտասան, և եկն 'ի վերայ Իսրայէլի, և առար ընդ հարկաւ ։ Եւ յետ ժամանակի ապստամբեալ Ովսիայ, առաքեաց առ Աբդիմելէք քուշացին, որ է Հաբաշի, և կայր նա յԵգիպտոս, գալ օգնել նմա ։ Եւ յեւթն ամին Ովսիայ, և յութ ամին Աքազու ել Սաղմանասար 'ի վերայ Սամարիայ և պաշարեաց զնա երիս ամս, և առ զՍամարիա և գերեաց զտասն ցեղսն և տարաւ 'ի Բաբելոն ։ Ամք Թագաւորացն Իսրայէլի երկերիւր յիսուն՝ և բարձաւ. յԱդամայ լինին ամք միահամուռ՝ չորեքհազար երեքհարիւր երեսուն։

---

(1) Յօրինակիս անջատ ունէր ԻՆ . ԱԲԷԼ. վասն որոյ և 'ի տպեալն միւս թարգմանութեան սխալմամբ դնէ՝ ԷԲՆ ԱԲԷԼ.

(2) Ոմանք կանձէսուր . թերեւս ուղղագոյն եւս իցէ .

(3) Զսա Եւսեբիոս Տիւրիմմոս կոչէ . և տայ նմա երեսուն և երկուս ամս ։ Իսկ Սամուէլ Տիւրէմ կոչէ , և ըստ Միխայէլի որոշէ նմա ամս երեսուն և ութ .

Աքազ իջոյց յերկոտասան եզանիցն զծովըն պղնձի՝ զարարեալն 'ի Սողոմոնէ արքայէ ։ Եւ զկնի մահուանն Աքազու Թագաւորեաց Եզեկիա յԵրուսաղէմ ամս քըսան և ինն, և եկեաց յիսուն և չորս ամ. և Սամարիա մնաց 'ի հրամանս Աթուրացւոցն ։ Յութերորդ ամին Եզեկիայ առաքեաց Սաղմանասար պահանորդս Սամարեայ կողմանցն։ Եւ մինչեւ ցայս վայր Լատինացիք կոչէին՝ Թագաւորք հնգետասան, և յեւթն ամին Ա-

քաղու Թագաւորեաց Ռոմելոս, և իւր անուամբն շինեաց զՀռոմ քաղաք. ոմանք ասեն յանուն դստերն շինեաց՝ որում անուն էր Հռոմէ։ Եւ յայնմ հետէ կոչեցան Հռոմայեցիք.

Յայսմ ժամանակի շինեցաւ Ռոդոս կղզի, որոյ պտուղք ծառոցն մաղտաքէ են։ Նա շինեցաւ Սալինա քաղաք ՚ի Սիկիլիա, և ՚ի Պանտոս շինեցաւ Տրափոր(1) *քաղաք, ՚ի Բիւթանիա Կիզիկոն շինեցաւ, և յԻտալիա Կալոնան (Կոլոնիա) և Լուկա (Լուկանիա) շինեցան։ Նա կանգնեցան Թագաւորք Լակեդեմոնացւոցն, առաջին Նքխոս*(2)*, և այլք որք Թագաւորեցին ամս երեքհարիւր քառասուն։ Եւ սա (՚ի Հռոմ) շինեցան տաճարք քան և չորս, առեննատեղիք երկու, փողոցք* երեքհարիւր քսան և չորք։ Կուռք ոսկեղէն ութսուն, և պատկերք վաթսուն և չորք՝ փղոսկրեայք, և տունք երեւելիք քառասուն և վեց հազար վեց հարիւր և երեք. և իշխանաց կայք հազար եւթն հարիւր յիսուն և հինգ, և կանա՝ (աղուգայք) որ ածէր ջուր 'ի քաղաքն՝ հազար երեք հարիւր յիսուն և երկու։ Խաբազք (1) հացեփեացք երկու հազար եւթանասուն և չորս. տլսմերք (տլսմունք) պղնձիք՝ (2) երեք հազար եւթնհարիւր ութսուն և հինգ։ Եւ յետ բազում ժամանակաց Տիտոս և Վեսպիանոս բերեն զդրուհան Երուսաղէմի և սիւնս 'ի Տաճարէն և այլ զարդերս, և յաւելին 'ի զարդն Հռոմայ։ Եւ արտաքոյ քաղաքին շուրջն գայր քառասուն մղոն, և մէջ քաղաքին 'ի չորից կողմանց՝ երկոտասան մղոն. և է միջն երկոտասան ոձ դարձի եզանց հերկողաց։ Եւ թիւ մարդկանն երկոտասան բիւր. և երկրորդ անգամ թուեալ՝ գտաւ վեշտասան բիւր. և երրորդ անգամ թուեալ՝ (3) քսան և եւթն բիւր, և չորրորդ թուեալ՝ քառասուն և վեց բիւր. և հինգերորդ թուեալ՝ չորեքհարիւր վեշտասան. և 'ի թագաւորութեան Կղօդեայ՝ վեց հարիւր յիսուն և չորս բիւր։ Եւ 'ի թագաւորութեանն Օգոստեայ և Արքեղայոսի որդւոյ Հերովդէի եղեւ 'ի Հռոմ սով մեծ, և վաճառէին զմոդ մի ցորեան 'ի քսան և եւթն դահեկան և կէս։ Եւ 'ի թագաւորութեանն Տիտոսի եղեւ 'ի նմա մահ տարաժամ, որ մեռանէր յաւուրն բիւր մի։

---

(1) *Անուանք քաղաքացս այլափոխեալ երեւին. Եւսեբիոս ասէ շինեալ ՚ի Սիկիղիա Ագեղա քաղաք յամի Աբրահամու* 1326, *և Փառէզիս ՚ի Պամփիղա։ (Քրոն. էր.* 180)։ *Իսկ Աբուլֆարաճ ասէ՝ շինեցաւ քաղաք ՚ի Կիլիկիա Սամինա անուն։*

(2) *Աքխոս, կամ ըստ այլոց օրինակաց Արխոս, է յայտնի սխալ ընդօրինակողաց. փոխանակ գրելոյ Եւրիսթէոս։ Սամուէլ անեցի զչորս Թագաւորացն Լակեդեմոնացւոց ՚ի մէջ բերէ յիւր Քրոնիկոնին, այսպէս. «Ա. Եւրուսթեւս՝ ամս* 42. *Բ. Ագիս ամ մի. Գ. Եքեստրատոս՝ ամս* 35. *Դ. Լաբոտէտիս՝ ամս* 37. *Ե. Դորիսթոփոս՝ ամս* 29. *Զ. Ագեսիղաւոս՝ ամս* 44. *Է. Արքեղաւոս՝ ամս* 60. *Ը. Տեղեկղոս՝ ամս* 40. *Թ. Աղկամանէս՝ ամս* 37. *Եւ սպառեցան յամս* 327։» *Տես և յԵւսեբիոս. Հտ. Ա. էր.* 319.

---

(1) Խաբազ خباز բառ արաբերէն, նշանակէ հացագործ։

(2) Էին անօթք պղնձիք գրեալք ներքոյ և արտաքոյ գրով, զոր մարդիկ առ 'ի պահպանութիւն անձանց, և 'ի բժշկութիւն 'ի վեր առնուին։ Գտանին և առ մեզ այսօր ինակ անօթք պղնձիք արաբացի գրովք։

(3) Յօրինակին մեր պակասէր տող մի, զոր յաւելաք 'ի միւս թարգմանութենէն։

Յայսմ ժամանակի զՍամարացիսն ուտէին առիւծք։ Եւ առաքեաց Սաղմանասար 'ի գերելոցն քահանայ մի Եզրաս անուն, և ուսոյց նոցա զօրէնս, և գրեաց նոցա ասորի գրով զհինգ գիրքն Մովսիսի։ Վասն այսորիկ Սամարացիքն այլ գիրս ոչ ընդունին յօրինացն և 'ի մարգարէիցն՝ բաց յԱրարածոյն։

Ի վեց ամին Եզեկիայ թագաւորեաց Աթուրացւոյն Սենեքերիմ. և եկեալ զօրքն նորա յԵրուսաղէմ, կոտորեցան հարիւր ութսուն և հինգ հազար։ Սենեքերիմ զկնի ինն ամի թագաւորութեան իւրոյ սպանաւ յորդւոցն, որք գնացին 'ի Հայս. և թագաւորեաց Ասորդան որդի նորա երիս ամս։ Եւ յԵգիպտոս թագաւորեաց Սաւիքոն (1) հնդկացի ամս երկոտասան։ Եւ 'ի վերայ

---

(1) Ըստ Եւսեբեայ՝ Սաքաւոն կամ Աքագոն եթէովպացի։

Մակեդոնացւոցն թագաւորեաց Փրիտիկոս(1) ամս յիսուն և մի ։ Յութևտասն ամին Եզեկիայ թագաւորեաց Աթուրայեցւոյն Բելդան, որ է Բաղտան ։ Սա առաքեաց պատարագ Եզեկիայ յԵրուսաղէմ վասն դարձի արեգականն, գիտացեալ թէ յԱստուծոյն Իսրայելի եղև նշան կենդանութեան Եզեկիայ։ Եւ սա քարոզեաց զանուն Տեառն Աստուծոյ ընդ ամենայն երկիրն Բաբելացւոց և Ասորւոց. և սա շինեաց պատկեր ճշմարտին Աստուծոյ և ետ երկրպագել նմա . և դարձոյց զամենայն աշխարհ իւր 'ի պաշտելոյ զարեգակն ։

Ի քսան ամին Եզեկիայ թագաւորեաց Մադացւոց Կուրտակոս (2) ամս երեքտասան։ Ի քսան և ինն ամին Եզեկիայ թագաւորեաց յԵգիպտոս Տրաքոս Հնդկացի (3) ամիս քսան ։ Զկնի Եզեկիայ թագաւորեաց Մանասէ ամս յիսուն և հինգ ։ Եւ եկեաց վաթսուն և եւթն ամ։ Յերրորդ ամի իւրոյ թագաւորութեանն սպան զԵսայի մարգարէ, և բազում արիւն արդար եհեղ. և թոզաւ 'ի ձեռաց Աստուծոյ և անկաւ 'ի ձեռս Ասորւոց զօրացն, և տարան զնա գերի յԱթուր, և եդին 'ի հոր կապանօք. և ասաց զպատուական աղօթման ապաշխարութեան զՏէր ամենակալն. և ընկալաւ Աստուած զաղաչանս նորա և արձակեաց զնա յերեսուն և եւթն ամին իւրոյ ։ Իսկ Եսայի մարգարէն եդաւ 'ի Սելով, և տուաւ 'ի պատիւ մարգարէին շնորհք բժշկութեան. և Սելով առաքեալ ասի, մի՝ վասն Եսայեայ որ առաքեալ ասի վասն բանին որ ասաց. «Աւասիկ ես՝ Տէր առաքեա զիս» (1). և միւս՝ զի 'ի գալ Այլազգացն արգելոյր ջուրն, և յորժամ Եսայի մարգարէն գայր ժողովրդեամբն, առաքեալ լինէր յԱստուծոյ 'ի պաշարման Երուսաղէմի յԱսորւոցն ։

---

(1) Պէրդիկկաս ըստ Եւսեբեայ ։

(2) Զկուաքսարէս թագաւորն Մարաց ոչ յիշատակէ Եւսեբի. այլ առաջին թագաւոր դնէ Մարաց զԴիոկէս՝ տալով նմա ամս 54. իսկ Միխայէլ ասորին յիշէ և զԴիոկէս իշխեալ 'ի չորրորդ ամէ Մանասէի. իսկ զանունն այլակերպեալ դնէ Դիոկղեայոս .

(3) Եւսեբիոս ուղղագրէ կոչելով Տարակոս փոխանակ Թարակոյ. Միւս Թարգմանութիւնն դնէ Տրակոս .

Ի չորրորդ ամին Մանասէի թագաւորեաց Մադայեցւոցն Դիուքլայոս (2) ամս յիսուն և չորս ։ Ի քսան և մի ամին Մանասէի թագաւորեաց յԵգիպտոս Մարոխ (3) ամս երկու ։ Ի քսան և ինն ամի Մանասէի թագաւորեաց Մակեդոնացւոցն Արգէոս՝ ամս երեսուն և ութ. և յերեսուն և երրորդ ամին Մանասէի թագաւորեաց յԵգիպտոս Ստեփանթոս (4) ամըս հինգ։ Եւ ՚ի քսան և վեց ամին Մանասէի Թագաւորեաց Ասորւոց փոքր Սենեքերիմ՝ ամս երեսուն և հինգ։ Եւ ՚ի քառասներորդ ամին Մանասէի Թագաւորեաց Հռոմայեցւոցն Տակլլիոս(1) ամս երեսուն և երկու։ Սա էր որ եգիտ զհանդերձն ծիրանի և զգաւազանն ոսկի թագաւորական։ Ըստ մեզ Տուլլոս է սա։ Աստ Թագաւորեաց Եգիպտացւոցն Նեքոն(2), ամս ութևտասն։ Ի քառասուն և չորս ամին Մանասէի Թագաւորեաց Եգիպտոսի Փսամիտիկոս(3) ամս քառասուն և չորս։ Յայսմ ժամանակի եղեւ առաջին շինութիւնըն Բիւզանդի՝ ձեռամբ Բիւզոսի իշխանի. և զկնի ինն հարիւր և եւթանասուն ամի մեծացաւ՝ նորոգեալ ՚ի Կոստանդիանոսէ, և ետ անուն Կոստանդնուպօլիս։ Եւ աստ վեճարեցան Թագաւորք և դատաւորք Աթենացւոց։

---

(1) Եսայի. Զ. 8.

(2) Տես 'ի վեր՝ յէր. 54. ծանօթութիւն 3.

(3) Եւսեբիոս դնէ 'ի նմին ամի թագաւորել Ամերէս Եթովպացի՝ ամս 12։

(4) Ըստ Եւսեբեայ Ստեփինաթէս.

Զկնի Մանասէի Թագաւորեաց Ամոն ՚ի վերայ Յուդայ ամս երկոտասան. և յերրորդ ամի նորա թագաւորեաց Մադացւոց Նըբրակտիոս(1) ամս չորեքտասան : Եւ յերկոտասան ամին Ամոնի թագաւորեաց Աթուրացւոցն Նաբուպալասար՝ ամս երեսուն և երկս . և սա էր մոգ : Եւ 'ի նմին ամի թագաւորեաց Մակեդոնացւոց Փիլիպպոս՝ ամս երեսուն և ութ : Յերրորդ ամին թագաւորութեանն Ամոնայ ծնաւ Ովսիա . և Ամոն պաշտէր զկուռս , և հարին ծառայքն նորա և մեռաւ . և են ժամանակք նորա քսան և չորս ամ:

---

(1) Ըստ Եւսեբեայ Տուղոս Ոստիղոս։ փոքր մի յետոյ Տուլլոս կոչի։ Օրինակս մեր ունէր ՚ի իէ ամին Մանասէի։

(2) Եւսեբիոս զերկուս անձինս կարգէ յայսմ վայրի՝ Նեքեփսոս՝ որում յաջորդէ Նեքաւով. որ է Նեքոսն Միսայելի. և ժամանակ իշխանութեան երկոցունցն՝ դնէ ամս չորեքտասան։ Իսկ միւս Թարգմ. նոյնացուցանէ զերկոսին անուամբ և տայ նմա ամս վեց։

(3) Եւսեբիոս դնէ զսա ՚ի յիսներորդ չորրորդ ամին Մանասէի։

Եւ թագաւորեաց Ովսիա որդի նորա յԵրուսաղէմ ամս երեսուն և մի . և եկաց երեսուն և ինն ամ: Եւ եղեն նմա որդիք չորս , Յովհաննէս , Յովակիմ , Յովաքազ , Սեդեկիա : Յայսմ ժամանակի մարգարէանայր Սոփոնիա յազգէ Շմաւոնի : Ի սոյն ամին Ովսիայ թագաւորեաց Հռոմայեցւոցն Մարկոս Անկոս(2) ամս քսան և չորս: Յերեքտասան ամին Ովսիայ սկսաւ Երեմիա մարգարէանալ: Ի չորեքտասան ամին Ովսիայ թագաւորեաց Մադացւոցն Կոստանդոս(3) ամս երեսուն և երկու: Սա գնաց և առ զՆինուէ և զԱթուրացիսն: Յերեսներորդ ամին Ովսիայ թագաւորեաց յԵգիպտոս Նեքաւով, որ է Նեփառս, ամս վեց։ Սա ել 'ի կողմանս Եփրատայ պատերազմեալ ընդ Աթուրացին 'ի Մնբէճ։ Եւ ել Ովսիա ընդդէմ նորա առանց հրամանի Աստուծոյ, եւ սպանաւ 'ի նմանէ եւ թաղեցաւ յԵրուսաղէմ. եւ թագաւորեաց Յովաքազ որդի նորա. եւ յետ երեք ամսոյ դարձաւ Նեքաւով Կաղն եւ տարաւ զՅովաքազ յԵգիպտոս, եւ կացոյց թագաւոր զեղբայր նորա զՅովակիմ, եւ եդեալ հարկ տասն քանքար ոսկւոյ եւ հարիւր արծաթոյ։ Սա թագաւորեաց ամս երկոտասան։

---

(1) Ըստ Եւսեբեայ Փրաորտէս :

(2) Ըստ Եւսեբեայ Անկոս Մարկոս , զորոյ սկիզբն իշխանութեանն դնէ 'ի չորրորդ ամէն Ովսիայ :

(3) Եւսեբի ուղղէ զանունս կոչելով զնա Կիաքսարէս :

Յերրորդ ամին Յովակիմայ թագաւորեաց Հռոմայեցւոցն Տարկինոս Ուբրիկոս(1) ամս երեսուն եւ ութ։ Ի նոյն ամի թագաւորեաց Աթուրացւոցն Նաբուգոդոնոսոր քաղդէացին որդին Նաբուպալասարայ՝ ամս քառասուն եւ չորս. որ եկն յԵրուսաղէմ եւ տարաւ գերի զանօթս տան Տեառն, եւ եդ հարկս Յովակիմայ, եւ տարաւ զԴանիէլ եւ զընկերս իւր։ Եւ յետ քակելոյն 'ի Նեքաւովէ Մնբէճ քաղաքի՝ շինեցաւ վերստին յԱթուրացւոցն. եւ եղաւ անդ կուռքըն Կայնանայ։ Եւ կոչեցաւ Յարապօլիս. (Յերապօլիս) որ թարգմանի քահանայից քաղաք(2) վասն քրմացն կախարդացն, որոց աղանդին աշակերտեցաւ յետոյ Մարդեծան։

---

(1) Ըստ Եւսեբեայ Տարկինոս Պրիսկոս։

(2) Ըստ Յունական ստուգաբանութեան։

Եւ ել դարձեալ Նեքաւով ՚ի կողմանս Եփրատայ և սպանաւ ՚ի Նաբուգոդոնոսորայ։ Եւ թագաւորեաց յԵգիպտոս Փանեթոս (1) ամս եւթնեւտասն։ Յութերորդ ամին Յովակիմայ և Նաբուգոդոնոսորայ հինգերորդ ամին եկն յԵրուսաղէմ Նաբուգոդոնոսոր, և առ զհարկն և դարձաւ։ Եւ յութերորդ ամին Նաբուգոդոնոսորայ մեռաւ Յովակիմ, և թագաւորեաց Յովաքիմ որդի նորա, որ է Յեքոնիա, ամիս երիս, և ՚ի բաց եկաց ՚ի Տեառնէ։ Եւ եկն Նաբուգոդոնոսոր յԵրուսաղէմ և գերեաց զՅեքոնիա և զմայրն և զիշխանսն, և տարաւ զնոսա ՚ի Բաբելոն և եդ ՚ի կապանս ամս երեսուն և հինգ։ Եւ եդ թագաւոր Երուսաղէմի զՍեդեկիա։ Յառաջին գալն հայրն Նաբուգոդոնոսորայ Նաբուպալասար առաքեաց զնա յԵրուսաղէմ. և յորժամ դարձաւ, մեռեալ էր հայրն, և ինքն առ զթագաւորութիւնն։ Յինն և տասներորդ ամի թագաւորութեանն Նաբուգոդոնոսորայ եկն Նաբուզարդան և այրեաց զԵրուսաղէմ և զՏաճարն զկնի գերելոյն և մահուանն Սեդեկիայ, որ թագաւորեաց ամս մետասան։ Ի չորրորդ ամին Սեդեկիայ թագաւորեաց Մադայացն Իս-

---

(1) Ըստ Եւսեբեայ Փսամմութէս։

ռիկոս (1), ամս երեսուն և ութ։ Ի մետասան ամին Սեդեկիայ թագաւորեաց Եգիպտոսի Եփրոս (2) ամս քսան և եւթն։ Եւ 'ի նոյն ամի գերեցաւ Սեդեկիա և ամենայն Հրեայքն, բայց 'ի սակաւուց աղքատաց որ գործէին զգործ արքունի. և նախ քան զաւեր Տաճարին Երեմիա մարգարէն տարաւ պահեաց զտապանակն Տեառն։

ժամանակք նեղելոյն զերուսաղէմ։

Ի չորրորդ ամէն Յովակիմայ, որ առաջին Նաբուգոդոնոսրայ, մինչև 'ի մետասան ամին Սեդեկիայ, որ է վերջին աւեր Երուսաղէմի, և զկնի աւերմանն Երուսաղէմի եկ Նաբուգոդոնոսոր 'ի վերայ Սրոյ և քակեաց զնա՝ ծովասոյզ արարեալ զքարինն. և Սուրացիքն զստացուածս իւրեանց նոյնպէս ծովամոյն արարեալ փախեան նաւուք։ Եւ զԲիրամ արքայ Սուրայ սպանին, որ կեցեալ էր զամենայն ժամանակս թագաւորացն Յուդայ։ Եւ տուաւ Եգիպտոս աւար զօրացն Նաբուգոդոնոսորայ փոխանակ աշխատութեան նոցա 'ի վերայ Սուրայ։

Ի քսան և եւթն ամի գերութեանն Երուսաղէմի մեռաւ Նաբուգոդոնոսոր թա-

---

(1) Իսպէկոսն է Աժդահակ ուղղագրեալ յԵւսեբեայ։

(2) Ըստ Եւսեբեայ Վափրէս, որում տայ ամս 25։

գաւորեալ ամս քսան. և էառ զթագաւորութիւն նորա Իլմարովդակ որդի նորա ամիս երիս։ Զսա եհան զԵքոնիա ՚ի բանտէն, և ուտէր ՚ի սեղանն արքունի։ Եւ զկնի նորա Բաղտասար ամս երկուս։ Եւ յառաջին ամին Բաղտասարայ եւտես Դանիէլ զտեսիլ չորից կենդանեացն, յօրինակ չորս թագաւորութեանն աշխարհի։ Եւ Դարեհ Մադէ, որ է Մար, սպան զԲաղտասար և դարձաւ թագաւորութիւնն Քաղդէացւոց։ Եւ յաւուրս Դարեհի մադացւոյ արկաւ Դանիէլ ՚ի գուբ զառաջինն, և Դարեհ կացոյց զնա վերակացուն ամենայն իշխանաց։ Եւ Կիւրոս պարսիկ սպան զԴարեհ, և եբարձ զթագաւորութիւն Մարաց և Աթուրացւոց, և արար Կիւրոս զաթոռ թագաւորութեան իւրոյ ՚ի Բաբելոն, և արար զԴանիէլ հաւատարիմ իւր։

Եւ Դանիէլ նախանձու Աստուծոյ վառեալ կործանեաց զկուռսն Բելայ, զոր կանգնեալ էր յանուն Վիլոսի, և սպան զվիշապն։ Եւ զչարեալ ընդ նա՝ արկին երկրորդանգամ ՚ի գուբ ՚ի մէջ եւթն առիւծուց. և յայսմ (Նաւադի) առաքեցաւ Ամբակում յԱստուծոյ՝ բերել կերակուր Դանիէլի. և այրեալ Դանիէլ՝ կորեան թշնամիք նորա։ Եւ յայսըմ ամի մեռաւ Ամբակում. և Դանիէլի տեսեալ տեսիլ, իմացաւ զկատարումն եւթանասուն ամին զոր վճռեալ էր Աստուած ՚ի ձեռն Երեմիայ մարգարէի ։ Եւ պահեաց քսան և մի օր . և ետես ՚ի վերայ Տիգրիս գետոյ այր մի սպիտականզգեստ , որ ասէր ցնա . “ Քսան և մի օր է որ կռուիմ ընդ իշխանին Պարսից , դարձուցանել զորդիս ազգին քո ” Որ և յառաջին ամին Կիւրոսի դարձան հինգբիւր , եւ սկսան շինել զՏաճարն ։ Եւ ՚ի վախճանն ամի գերութեանն Հրէից սպան զԿիւրոս Մակսատա (1) կինն իւր , և առ զթագաւորութիւն նորա Կամբիսոս . և վասն սորա ասեն Եբրայեցիքն՝ թէ կոչէր Նաբուգոդոնոսոր (2) , որ սպան զԱրփաքսաթ Մար ։ Եւ յաւուրս սորա եղեն իրքն Յուդիթ կնոջ , որ սպան զՀողեփեռնէս , որ էր յազգէն Մագոլգայ (3) , որ են Թուրք ։ Կամբիսոս թագաւորեալ ամս ութ՝ առին զկնի նորա զթագաւորութիւնն երկու եղբարք մոգք , ամիսս եւթն ։ Եւ զհետ սոցա թագաւորեաց Դարեհ մոգացի ամս երեսուն և վեց ։ Եւ ՚ի յերկրորդ ամին սորա կատարեցաւ երկրորդ եւթանասունն գերութեանըն Հրէից յայրմանէ Տաճարին , և առաջին եւթանասունն ՚ի վճռէն Երեմիայի էր . վըկային Զաքարիա և Անգէաս, որ ասեն. «Մինչեւ յերբ ոչ ողորմիս Երուսաղէմի և քաղաքացն Յուդայ .... զի այս եւթանասուն ամ է (1)։» Քողովլին ասէ 'ի Սաղովմոնի շինուածոյն մինչեւ 'ի վեց ամն Դարեհի հինգ հարիւր ութ(2) ամ։ Ի հնգետասան ամին Դարեհի լցաւ հնգերորդ դարն։ Եւ 'ի վեշտասան ամին Դարեհի սկսաւ վեցերորդ դարն։

---

(1) Զ Միխայէլի օրինակին Եւսեբի ուղղէ յաւելն (յեր . 200 .) “ Տոմիրիս թագուհին Մասագետացոց սպան զԿիւրոս ։ ” Զնորին բանն և Սամուէլ բառ առ բառ ՚ի մէջ բերէ յիւր Քրոնիկոնին ։

(2) Եւսեբիոս , Քրոն . յեր . 200 .

(3) Յօրինակին Մոգոլգայ ։

Զկնի Դարեհի թագաւորեաց Քսերքսէս որդի իւր ամս քսան և մի։ Եւ յերկրորդ ամին իւրոյ առ զԵգիպտոս, և 'ի մետասան ամին առ զԱթէնս և հրով այրեաց զնոսա. առ և քաղաքս բազումս։ Յաւուրս սորա եղեն իրքն Եսթերայ և Մուրդքէի և Համանայ, որ էր յազգէն Ամաղէկայ. բայց Յովհաննէս (Ասիացին) ոչ համարի՝ թէ առ սա եղեն Եսթերայ իրքն, զի թէ եղեալ էր առ նա, Եզր ընդէր ոչ գրէր (3)։ Եւ ոմանք ասեն

---

(1) Զաքարիա. Ա. 12.

(2) Աբուլֆարաճ համաձայն մերումս դնէ մինչ ցեւթն ամն Դարեհի 508։ Իսկ ոմանք յօրինակաց միւս թարգմանութեան դնեն 536 ամ։

(3) Զայն կարծիս Յովհաննու և Եւսեբիոս հաստատէ. ոչ զՔսերքսեայ՝ այլ զյաջորդէն նորա զԱրտաշէսէ խօսելով, յասելն. «զԵսթերայ և զՄուրթքէի իրսն ոմանք առ սովաւ ասեն։ Բայց ես չառնում յանձն. քանզի ոչ եթէ լռէին զնորա գործն՝ Եզրի գիրքն, որ առ սովաւ պատմեն զԵզրի և զՆեեմիայ 'ի Բաբելոնէ ելանելն, և զգործն 'ի նոյանէ լեալ որ 'ի նոյն գիրս կային։» Զայսպիսի դիտողութիւնս Եւսեբի գտանեմք 'ի մէջ բերեալ և 'ի Նախադրութեան գրոցն Եսթերայ։

ասեն զդարձն Հրէից և ոմանք առ Դարեհիւ։ Զկնի Քսերքսեայ թագաւորեաց Արտաւանոս հինգ ամիս. և զհետ նորա Արտաշէս (Արտաքսերքսէս) Երկայնաբազուկ՝ ամս քառասուն և մի։ Ի յեւթն ամին նորա ել Եզրաս դպիրն շինել զպարիսպն Երուսաղէմի։ Սա գրեաց զհին կտակարանն, շնորհելով նմա յԱստուծոյ. և՚ի խնամոցն Աստուծոյ պահեցան հին օրինակքն ՚ի տեղիս տեղիս, և յետոյ գտան համաձայնք միմեանց։

Եւ ՚ի քսան ամին Արտաշխի ել Նեեմի տակառապետն Արտաշխի հրամանաւ նորին, օգնել Եզրի, որ յամեալ անդէն յԵրուսաղէմ ՚ի շինելն՝ ամս երկոտասան(1)։ Եւ արկաւ հիմն Երուսաղէմի՚ի քահանայապետութեան Յովիդայեայ որդւոյ Եղիասէի։ Նեեմի ետ բերել ՚ի Ջրհորոյ՝ ողջակիզացն՝ մօրացեալ, զկնի եւթանասուն ամի, և արկեալ ՚ի վերայ սեղանոյն իբրև զառաջինն (վառեցաւ հուր)։

Զկնի Երկայնաձեռին թագաւորեաց Արտաշէս միւս երկուս ամիս, և զկնի նորա Սիկդինոս(2) ամիս եւթն, և յետ նորա թագաւորեաց Դարեհ Նուդոս (հարճորդի) ամս ինն և տասն։ Եւ ՚ի հնգետասան ամին նորա ապստամբեաց Եգիպտոս ՚ի Պարսից, և եդին իւրեանց թագաւոր զԱմնէսիոս զկնի հարիւր քսան և չորս ամի խափանելոյն։ Զկնի Աղէքսանդրի թագաւորեաց Մակեդոնացւոցն Պերտիկոս՝ ամս քսան և ութ։ Եւ 'ի յիննևտասն ամի Դարեհի թագաւորեաց Մակեդոնացւոցն Արխատոս (1), ամս երիս։ Իսկ 'ի Հռոմ Կապաւրիոն. և սա պատերազմ եդ ընդ Կապատուկք և ընդ Գաղատացիս. եւ յետ հարիւր ամի յաղթեցան Հռոմայեցիք, և առին զՀռոմ և քակեցին զնա 'ի հիմանց, և մնաց միայն արքունիքն(2)։ Յայնմ ժամանակի եղև շարժ սաստիկ, և բազում քաղաքս կլաւ երկիր։ Եւ թագաւորեաց Պարսից Արտաշէս ուչեղ՝ ամս քառասուն։ Եբրայեցիքն առ սովաւ ասեն զԵսթեր։ Ի հնգետասան ամին Արտաշիսի, Ոստուկարտորն (3) Հռոմայ յԱփրիկէ աւերեաց զԿարքեդոն, և յանուն իւր կոչեաց զնա Ափրիկէ։ Եւ յԵգիպտոս թագաւորեաց Ամբետրիս (4), ամս վեց, և Մակեդոնացւոցն թագաւորեաց Արքեղայոս ամս չորս։ Եւ դարձեալ Ամուտոս (5) ամ մի, և ապա Պուսինոս ամ մի, և ապա Ամունդիս (Ամինդաոս) վեց ամ։ Եւ ՚ի վեշտասան ամին Արտաշիսի թագաւորեաց Մակեդոնացւոցն Արքայոս(1), ամս ութ և տասն։ Եւ ՚ի քսան ամին Արտաշիսի թագաւորեաց Եգիպտոսի Փսամութոս(2) ամ մի. և զկնի նորուն Մարկիս ամ մի. և ապա Նիկտապիս ամս ութև տասն։ Եւ յերեսուն և հինգ ամին Արտաշիսի թագաւորեաց Մակեդոնի Աղեքսանդր ամ մի. և յետ նորա Պտղոմէոս երեք ամ։ Եւ ՚ի քառասուն ամին Արտաշիսի թագաւորեաց Եգիպտացւոցն Տէոս(3) ամս երկու. և զկնի նորա Նենքդեբոս (Նեքտանեբոս) ամս երկոտասան։ Եւ զհետ Արտաշիսի թագաւորեաց Պարսից միւս Արտաշէս Ոքոս կոչեցեալ։ Սա հնազանդեաց զԵգիպտոս և եբարձ զթագաւորութիւն նոցա. և Կանաքոս (Նեքտանեբոս) թագաւորն Եգիպտոսի փախեաւ յԵթովպիա (4), աղանդով խմացեալ յառաջագոյն զաւերն․ և ասեն թէ սա է հայրն Աղէքսանդրու, որ է Նեքտանեբոս․ և խափանեցաւ թագաւորութիւնն Եգիպտոսի քառասուն և երկու ամ, մինչև ՚ի Պունթիմոս, զոր կոչեն Պտղոմէոս, ոմն ՚ի բարեկամացն Աղէքսանդրի ։

---

(1) Նեեմ. Ե. 14։

(2) Ըստ Եւսեբեայ Սոգդոնիոս։

---

(1) Ըստ Եւսեբեայ Ոխէոսէս։

(2) «Գաղատացիք և Կեղտացիք զՀռոմ կալան բաց 'ի Կապիտոլեայն։» Եւսեբի, Քրոն. յեր. 218։

(3) Դիկտատոր Հռոմայեցւոց՝ այն է Սկիպիոնն, որ Ափրիկեցի կոչեցաւ վասն զԱփրիկէ նուաճելոյ։ Որպէս յայտ է, 'ի հակառակ միտս առեալ են արեւելեանք զգործս Սկիպիոնի։

(4) Ըստ Եւսեբեայ Եմիրթէոս, երկրորդ թագաւոր 27 րդ հարստութեանն Եգիպտացւոց։

(5) Ըստ Եւսեբեայ Ամինտաս . . . Պաւսանիաս։

---

(1) Ըստ Եւսեբեայ Արքեղաոս։ Տեւողութիւն և կարգք ամաց թագաւորացս ոչ համաձայնին Քրոնիկոնին Եւսեբեայ. նաև միւս թարգմանութիւնն իւրաւ տարբերի։

(2) Ըստ Եւսեբեայ Փսամմութէս. իսկ զՄարկիս ոչ յիշատակէ Եւսեբիոս, այլ յաջորդ դնէ նմա զՆեփերիտէս, թագաւորեալ ամիսս չորս։ Եւ ապա զՆեկտանեբոս, զոր Նեկտաբիս անուանէ օրինակս։

(3) Յօրինակիս Տէոոս. իսկ միւս թարգմ. Դէոս։

(4) "Ովքոս կալաւ զԵգիպտոս ՚ի փախստականութեան Նեքտանեբայ յԵթովպիա, առ որով դադարեցին թագաւորք Եգիպտացւոց" Եւսեբիոս. Քրոն. յեր. 222.

Արտաշէս Ոքոս թագաւորն Պարսից հնազանդեաց զՀրեայսն, և տարաւ զնոսա բնակեցոյց առընթեր ծովուն Կասբից յՈւռկանա քաղաք ։ Եւ յայսմ ժամանակի թագաւորեաց Մակեդոնացւոց Փիլիպպոս հայրն Աղէքսանդրի, ամս քսան և եւթն․ և անուն կնոջ նորա Ողոմպիադա ։ Սա երեւեցաւ Արիստոտէլ և Եպիկուրոս փիլիսոփայք ։ Ի յերեքտասան ամին Ոքոսի պարսկի ծնաւ Աղէքսանդր ՚ի յութ ամի թագաւորութեան հօր իւրոյ ։ Եւ զկնի Ոքոսի թագաւորեաց Պարսից Արիքորէս (1) որդի նորին՝ ամս չորս ։ Եւ զկնի նորա Դարեհ որդի Արտաշրի՝ ամս վեց ։

Եւ յառաջին ամի նորա թագաւորեաց Մակեդոնացւոցն Աղէքսանդր որդի Փիլիպպոսի քսան ամաց․ զառաջինն թագաւորեաց յԵլլադա (յԵլլադաս) ։ Նա էր հասակաւ երեք կանգուն, բայց մեծ խելօք և քաջութեամբ, որ կորոյս յաշխարհէ երեսուն և հինգ թագաւորս . և ունէր զօրս երկոտասան բիւր ։ Որ և 'ի վեց ամի թագաւորութեան իւրոյ, և 'ի վեց ամին Դարեհի պատերազմեցան 'ի Սիս Կիլիկեցւոց, և մեռաւ Դարեհ ։ Եւ 'ի նա կատարեցաւ թագաւորութիւնն Պարսից, տեւեալ ամս երկերիւր երեսուն և մի ։ Եւ Աղեքսանդր շինեաց երկոտասան քաղաքս յանուն իւր ։ Սա եդ դուռըն Հոնաց, չապականել նոցա զերկիր . և էր դուռն երկաթի երեքտասան կանգուն երկայն, և լայն ութ կանգուն ։ Սա եկեալ յԵրուսաղէմ պատարագեաց Աստուծոյ, և թոյլ ետուն Հրեայքն, և պատուեաց զքահանայապետն Անորոմաքոս(1)։ Եւ յորժամ Սամարացիքն սպանին զքահանայապետն Անորոմաքոս, վասն թոյլ տալոյ նմա հեթանոսին պատարագել Աստուծոյ, բռաւ Աղեքսանդրոս և եկն յԵգիպտոսէ և քակեաց զՍամարիա և ջնջեաց զազգն, և ած Մակեդոնացիս և բնակեցոյց 'ի Սամարիա . և զկնի երկոտասան ամի և ութն ամսոյ թագաւորութեան նորա դեղատուութեամբ մեռաւ 'ի Բաբելոն ։ Սա է առաջին թագաւոր Յունաց, և յետ նորա թագաւորեաց յԵգիպտոս Պտղոմէոս, որ եբեր ըզմարմին նորա յԵգիպտոս և թաղեաց. և կատարեցաւ բանն թէ «Քօշն այծեաց յաղթէ խոյին Դարեհի: Եւ բարձաւ մի եղջիւրն և երեւեցան չորս եղջիւրքն, (1)» բարեկամքն: Եւ յետոյ եղեն տասն եղջիւրքն տասն թագաւորք բաժանեալք:

---

(1) Ըստ Եւսեբեայ Արսէս ասայ ։

---

(1) Եւսեբի ուղղելով զանունն քահանայապետին որ էր Ոնիա՝ զԱնորոմաքոսէն ասէ եթէ էր տեսուչ կողմանցն Պաղեստինի յԱղեքսանդրոսէ կացուցեալ, և Սամարացւոց ըսպանեալ զԱնորոմաքոս, պատժեցան և ինքեանք յԱղեքսանդրէ 'ի դարձին նորա յԵգիպտոսէ ։ Քրոն . յեր . 222 ։

Իսկ Պտղոմէոս թագաւորեալ ամս քառասուն: Եւ յառաջին ամին էառ զԵրուսաղէմ նենգութեամբ, և տարաւ գերի յԵգիպտոս առ Ոնիայիւ քահանայապետիւ. և 'ի նմանէ կոչին և այլ թագաւորքն՝ Պտղոմէոսք: Ի չորս ամին Պտղոմեայ թագաւորեաց 'ի վերայ ամենայն Ասիոյ Անտիգոնոս՝ ամս ութեւտասն: Սա դարձեալ շինեաց զԱնտիոք անուամբ որդւոյ իւրոյ Անտիոքու (2): Յերեքտասանամին Պտղոմեայ թագաւորեաց 'ի վերայ Ասորւոց և Բաբելոնի մինչեւ 'ի Հնդիկս Սելեւկոս՝ ամս երեսուն և երիս: Եւ սա կատարեաց զշինուածն Անտիոքու, և շինեաց զՍելեւկիա, զԼատիկն, զԵփեմիա(3), զԲերիա՝ որ է Հալէպ, զԲալու, զՄարաշ, և բնակեցոյց 'ի նոսա Հրէայս. և պատուեաց զնոսա, և արար մուտ և ել առ ինքն ընդ սիրելիս իւր։ Նա շինեաց մեծ աշտարակն Աղեքսանդրու 'ի մէջ ծովուն Նեփրոսի և անուանեցաւ Պրուտոս (1). և շինեաց զնա Սոստրատոս Կանդիացի՝ տեղի դիտի Աղեքսանդրու ընդ ծով և ընդ ցամաք (2)։ Իսկ Սելեւկոս ըմբռնեաց զԴեմետր 'ի Կիլիկիա, որ Թագաւորեալ էր ապստամբութեամբ, և սպան զնա, և ինքն իշխեաց ամենայն Ասիոյ։ Եւ սկիզբն Թագաւորութեան սորա, որ է զկնի երկոտասան ամի մահուանն Աղեքսանդրու, սկիզբն է Թուականութեանն Ասորւոց։

---

(1) Դան. Ը. 7—8:

(2) «Անտիգոնոս զԱնտիգոնէ առ Օրէնտ գետով շինեաց զոր Սելեւկոս նորոգեաց և անուանեաց Անտիոք:» Եւսեբիոս Քրոն. յէր. 226:

(3) Եւսեբիոս (անդ) Ապամէա անուանէ, որ է Համա. իսկ Թուրքն՝ Բէգղա կոչէ:

Զհետ առաջին Պտղոմեայ Թագաւորեաց յԵգիպտոս Պտղոմէոս Փիլադելփոս՝ ամս երեսուն և ութ։ Եւ յառաջին ամին նորա Թագաւորեաց Մակեդոնացւոց Պտղոմէոս Կրանոս (3) ամ մի. և զկնի նորա Մալագարոս (4) ամիս երկու. և Անթիպատրոս աւուրս քսան և վեց. և յետ Անթիպատրեայ Սոսթենէս ամս՝ երկու։ Ի հինգ ամին Պտղոմեայ Թագաւորեաց զկնի Սելեւկիոսի Անտիոքոս Սոտէր՝ ամս իննեւտասն. և 'ի վեց ամին Պտողոմեայ թագաւորեաց Մակեդոնացւոցն Անտիգոնոս՝ ամս երեսուն և վեց։ Եւ 'ի նոյն ամի թարգմանեցան գրեանքն 'ի Կիպրոս լեզու, յերեսուն և 'ի չորս թուին(1) Ասորոց, եւթանասուն եւ երկու թարգմանիչք. վեց վեց այր 'ի ցեղից երկոտասան որդւոցն Իսրայելի, որք են այսոքիկ։ Յազգէն Ռուբէնի՝ Յովսեպոս, Եզեկիել, Եղիսէէ, Զաքարիա, Յովհաննէս, Եզեկիել։ Յազգէն Շմաւոնի՝ Յուդա, Շմաւոն, Ադէ, Սամուէլ, Մաթէ, Սաղամիա։ Յազգէն Ղեւեայ՝ Նեմէի, (Նոյեմի) Յովսէփ, Թէոդոսի, Իսոս, Ուրանիա, Տուկիաս։ Յազգէն Յուդայ՝ Յովնաթան, Աբարի, Եղիսէ, Անանիա, Զաքարիա, Եզեկիա։ Յազգէն Իսաքարայ՝ Իսահակ, Յակոբ, Յեսու, Շմբատ, Շմաւոն, Ղեւի։ Յազգէն Զաբուղոնի՝ Յուդա, Յովսէփ, Շմաւոն, Զաքարիա, Շմաւոն, Սաղամիա։ Յազգէն Գադայ՝ Սմբատիա, Սեդեկիա, Յակոբ, Իսահակ, Եսայի, Մատթէոս։ Յազգէն Ասերայ՝ Թէոդոսի. Իասոն (Յասոն), Յեսու, Թէոդոտոս, Յովհաննէս, Յովնաթան։ Յազգէն Դանայ՝ Թէոփիլէ, Աբրահամ, Իդասմոս, Իասոն, Երեմիա, Դանիէլ։ Ի ցեղէն Նեփթաղիմայ՝

---

(1) Ոմանք համարին զՊրուտոս այլափոխեալ 'ի յունական ֆարոս բառէն, որ նշանակէ լապտեր նաւահանգստաց։

(2) « Սոստրատոս Դեքսիփանայ՝ կնիդացի, կանգնեաց յԱղեքսանդրիայ դիտանոցին աշտարակ բարձրաբերձ։ » Եւսեբի. Քրոն. յեր. 228։

(3) Ըստ Եւսեբեայ Կերաւնոս։

(4) Ըստ Եւսեբեայ Մելեագրոս։

---

(1) Յօրինակին յայտնի վրիպակաւ գրեալ էր յերեք հարիւր երեսուն և չորս։

Երեմիա, Ղազար, Զաքարիա, Բանիա, Եղիշէ, Տաթան։ Յազգէն Բենիամինի՝ Յովհաննէս, Իղաւոս, Եկդի, Թէոդոսի, Ներսամ, Եզեկիէլ։ Յազգէն Յովսեփայ՝ Քաղէբ, Սամուէլ, Յովսէփ, Յուդա, Յովնաթան, Թադի։ Թարգմանեցան 'ի Կիպրոս յունարէն գրով, և տարան յԵգիպտոս և եդան յԱրքունին։ Այլք 'ի տեղն ասեն թարգմանեալ և 'ի Փարան կղզի. այլ այս է ճշմարտութիւն։

Ի թուին Հայոց ԿԲ (62), *և 'ի հնազանդութեանն Յունաց յետ եւթանասուներկուց ամաց, խորհեցան կողմանքն Պարսից և արեւելից, եթէ "Պատառեցան Մակեդոնացիքն 'ի միմեանց և տկարացան, և են հեռաւորք 'ի մէնջ, և խռովութեամբ և չարչարանօք ունին զմեզ. զի՞նչ կայ մեր և նոցա, եկայք դիցուք մեզ մտաւոր թագաւոր։" Եւ թագաւորեցուցին իւրեանց զԱրշակ քաջ յորդւոցն Աբրահամու որ 'ի կենդուրայ 'ի Բահլ քաղաքէ, որ է սահմանակից Մադացւոց երկրին. Նմանապէս և աշխարհն Ուռկանացւոց (Վրկանաց), որ կան 'ի հիւսիսոյ կողմանէ Պարսից աշխարհին, յորժամ տեսին թէ տունն Պարսից եդին իւրեանց թագաւոր, կանգնեցին և նոքա իւրեանց թագաւոր. երբեմն հնազանդէին Պարթեւաց, և երբեմն ոչ։ Նմանապէս և*

Հայք զկնի քաջ և յաղթող և տիեզերասաստ թագաւորացն հայկազանց, որք բարձին զթագաւորութիւն Մադայւոց և հնազանդեալ ունէին զամենայն թագաւորութիւնս հիւսիսի, և զամենայն ազգս շուրջանակի զոր մեք ոչ կարացաք գրով գտանել և տողել զշարս նոցա մինչև յԱղեքսանդր՝ որ սպան զՎահէ թագաւոր հայկազնի և եբարձ զթագաւորութիւնն Հայոց մինչև յայսմ ժամանակի. յորում դարձեալ կանգնեցաւ թագաւորութիւն նոցա 'ի Պաղեստինէ մինչև 'ի Թետալիա (1), և մինչև 'ի ծովն Կասպից և յայնկոյս լերինն Կովկասու, 'ի Վաղարշակայ եղբօրէ Արշակայ սկսեալ. մինչև 'ի յետին Արշակ(2). զոր մեք թողումք այլոց հաւաստի գրողաց և գիտողաց (3)։

Իսկ զկնի Փիլադելփոսի թագաւորեաց յԵգիպտոս Պտղոմէոս Երկադիս (Եւերգետէս)։ Եւ 'ի նոյն ամի թագաւորեաց Ասորւոց Սելեւկիոս Կալանիկոս։ Ի նոյն ամի թագաւորեաց Մակեդոնացւոցն Դեմետրիոս Փիլիպպոս։ Յայսմ ժամանակի էր քահանայապետն Օնիա, որդի Սիմէոնի Արդարոյ։

---

(1) Թետալիա է յերկրին Պարսից առ երի Խորասանայ, ոչ հեռի 'ի Կասպից ծովէն։

(2) Վերջին թագաւոր Արշակունեաց եղեւ Արտաշիր և ոչ Արշակ, ըստ պատմութեան Մովսիսի Խորենացւոյ։

(3) Մովսէս Խորենացի. Բ. 1—6։ —Յովհ. Կաթ. և այլք։

Եւ Ոնիաս ոչ կամեցաւ տալ զհարկն Պտղոմեայ. և նա կամեցաւ գալ յԵրուսաղէմ: Եւ առաքեցին զՅովսեպոս հաշտութիւն առնել. և եգիտ շնորհս առաջի Պտղոմեայ, և առ ՚ի նմանէ իշխանութիւն զօրապետութեան, ամենայն Հրէաստանի(1):

Եւ ՚ի ՁԷ (87) թուին Յունաց թագաւորեաց Սելեւկոս Կռանոս (Կերաւանոս) ամս երիս. և յետ նորա թագաւորեաց Անտիոքոս Մեծն՝ ամս երեսուն և մի: Յայսմ ժամանակի է նահատակութիւնն Մակաբայեցւոց:

Եւ ՚ի ՂԳ (93) թուին թագաւորեաց Եգիպտացւոյն Պտղոմէոս Փիլոպատոր՝ ամս եւթնեւտասն. և սաստիկ նեղէր զՀրեայսն. և մարտեաւ ընդ նմա Անտիոքոս և յաղթեաց նմա, և զԵգիպտոս արար ընդ իւր իշխանութեամբ. և ՚ի դառնալն յԵգիպտոսէ առ զԵրուսաղէմ: Եւ աստ վճար էառ առաջին Գիրքն Մակաբայեցւոց:

Ի ՃԺ (110) թուին թագաւորեաց Եգիպտացւոց Պտղոմէոս Եպիփանէս՝ ամս քսան և մի: Սա առաքեաց զՍկոպաս զօրավարն(2), և հնազանդեաց զՀրէաստան և զՓղիշտս (Փղշտացիս). և ելեալ ընդ դէմ նորա Անտիոքոս, կոտորեաց զնա. և առ ինքն դարձոյց զառեալ 'ի նմանէ քաղաքսն։ Այս Անտիոքոս արար սալարկ զճանապարհս քաղաքաց։ Եւ սա արար 'ի ճանապարհս նշանս իջեւանաց զոր փարսախ կոչեն, և շինեաց կամուրջս քառակուսս 'ի վերայ գետոց և յառուս. և արար դիւրագնաց զճանապարհս հարթելով։ Սա 'ի մետասան ամին արար պատերազմ ընդ Հռոմայեցիս և յաղթեցաւ. և ետ զորդին պատանդս 'ի Հռոմ՝ տալ հարկս յամենայն ամի հազար քանքար ոսկւոյ. և այս եղեւ սկիզբն հարկելոյ Ասորւոց ընդ Հռոմովք։

---

(1) Եւսեբիոս. Քրոն. եր. 232:

(2) Եւսեբիոս. (Քրոն. եր. 236) Սկոպան անուանէ զզօրավարն Պտղոմեայ:

Ի յերրորդ ամին Անտիոքու թագաւորեաց Մակեդոնացւոյն Փիլիպպոս՝ ամս քըսան և չորս (1). և աստ կատարեցաւ մարգարէութիւնն Դանիէլի (2), թէ թագաւորն հիւսիսոյ տայ պատերազմ ընդ թագաւորն հարաւոյ, որ է Անտիոքոս ընդ Պտղոմեայ, որ ետ նմա զդուստր իւր և դարձաւ առ 'ի նմանէ ըստ ոմանց ասելոյ։

Եւ այս Անտիոքոս մեռաւ յԻլամացւոց աշխարհն(3), քարկոծեալ 'ի տաճարն Նենեայ աստուածուհւոյն իւրեանց, որ (Անտիոքոս) էր այսակիր, յորմէ հետէ ստացան'ի նմանէ Շըմունի և որդիք իւր, որ և խրատ առեալ 'ի գիտնոցն՝ զի բերցէ զնշխարս սպանելոցն և անկեալ առաջի նոցա զգլխոցի. և հրամայեաց բերել առ ինքն։ Եւ յորժամ տանէին յԱնտիոք, բարձեալ 'ի ջորիս մնդկօք, և հասեալ մօտ 'ի Հաղախ քաղաք (1), դիպեցան նոցա որք տային զմահ Թագաւորին։ Եւ եդան նշխարք նոցա 'ի տեղւոջն ուր լուանն. որ և յետ ժամանակի յայտնեցան սքանչելեօք, և շինեցան տեղին վանք, և է մինչև ցայսօր ժամանակի։

---

(1) Եւսեբիոս (Քրոն. ձեր. 234) տայ սմա ամս քառասուն և երկուս, յերրորդ ամէ Պտղոմեայ փիղոպատորի։

(2) Դանի. ԺԱ. 11։

(3) Իլամացւոց երկիրն է յաշխարհին Պարսից, որոյ գլխաւոր քաղաքն է Շօշ։

Զկնի մահուանն Անտիոքու Թագաւորեաց Սելեւկիոս. և Պիոդորոս հաւատարիմ նորա յոյժ նեղէր զՀրեայսն, և պատժեցաւ յԱստուծոյ։

Ի Թուին Յունաց ՃԼԱ (131) Թագաւորեաց Անտիոքոս Եպիփանէս որդի Անտիոքու. որ կայր պատանդ 'ի Հռոմ՝ ամս մետասան։ Սա գնաց'ի վերայ Պտղոմեայ յԵգիպտոս, և արգելին զնա Հռոմայեցիքն. և դարձաւ 'ի Հրէաստան, և ետ զքահանայապետութիւնն Յասոնի յեղբայրն Ոնիայ (2). և վշտացան ընդ միմեանս։ Մատաթէ՝ որդի Յոհաննու որդւոյ Շմաւոնի քահանայի, յորդւոցն Յովնադաւքայ, նստէր 'ի Մովդիիմ, և ունէր հինգ որդիս, Յովհաննէս, Շմաւոն, Յուդա Մակաբէ, Եղիազար Աւարան, Յովնաթան (1) որ սպան զյանցաւորսն Աստուծոյ, և ել որդւովք իւրովք 'ի լեառն ապստամբեալ յԱնտիոքէ:

---

(1) Հաղախ քաղաք մերձ է 'ի Նփրկերտ։

(2) Եւսեբիոս, Քրոն. յէր. 238։ Յօրինակին սովորաբար Ոնիա գրի.

Ի ճխթ (149) թուին մեռաւ Անտիոքոս Եպիփանէս 'ի Պարս հարուածօք հօր իւրոյ 'ի ցասմանէ Աստուծոյ: Քանզի մեծն Անտիոքոս էր որ պղծեաց զՏաճարն կանգնելով պատկեր Զեւսայ 'ի նմա, և 'ի լեառն Գարիզին շինեաց տաճար Զեւսայ Քսանթոսի (2), աղաչեցեալ զնա Սամարացւոցն: Ի Պտղոմեայ ութևտասան ամին թագաւորեաց Եպիփան Եւպատոր (3) ամս երկու: Սա նեղէր զՀր-

---

(1) Տես 'ի գիրս բ. Մակաբայեցւոց Ա. 2. յորում առ իւրաքանչիւր անուանս դնին և մականուանք նոցին:

(2) Միւս թարգմանութիւնն և շաղկապաւ եդեալ՝ երկուս շաստուածս համարի, փոխանակ զՔսանթոսն՝ կամ ուղղագոյն եւս Քսենիոսն մակդիր դնելոյ Զեւսայ: Եւսեբեայ թարգմանիչք, յորմէ առնու և Միխայէլ, հոյակապ նշանակութեամբ դնեն օտարասէր. “Անտիոքոս 'ի Շամրին (Սամարիա) 'ի Գարիզին լերին Արամազդայ (Զեւսայ) օտարասիրին մեհեան շինէր, և զայն 'ի Շամրայցւոց ուտէպ զնա աղաչելոյ. (Քրոն. յէջ. 240:)— “Եւ 'ի Շամրին զօտարասիրին Արամազդայ:„ Սամուէլ.

(3) Շփոթութիւնք են յանուանս: Եպիփան՝ է Անտիոքոսն՝ յաջորդն Անտիոքոսի Եւպատորի, զոր ընագիրք Ասորւոց այլափոխեալ կոչեն Ուպատոր: Ա յայտս և անունս Ղօրղօրա. Թուի թէ իցէ ասորական հնչումն փոխանակ Գորգիասի եղեալ, որ էր զօրապետ ընդ սպարապետութեամբ Լիւսիասայ: Ա. Մակբ. Գ. 38: Զ. 30—45.

րեայն՝ խոստագոյնս. և սա առաքեաց զԽոռզօրա զօրապետն իւր հարիւր քան հազարաւ ՚ի վերայ Երուսաղէմի. և մեռաւ Ղազարոս (Եղիազար) ՚ի ներքոյ փղի, և կոտորեցան յոյժ բազմութիւն Հրէից, որ և ՚ի թաղելն զնոսա գտան ՚ի ներքոյ հանդերձից նոցա նկարք պատկերաց կռոց (1)։

Յայսմ ժամանակի շինեցաւ տաճար յԵլիապոնտոս(2) Եգիպտոսի Ոնիայէ. նման Տաճարին որ յԵրուսաղէմ, առանց հրամանի Աստուծոյ. և առնէին ՚ի նմա քահանայագործութիւն ըստ օրինացն. և զՏաճարն որ յԵրուսաղէմ նորոգեաց Յուդա Մակաբէ, և մնաց շէն մինչեւ ՚ի Տիտոս և ՚ի Վեսպիանոս։ Եւ զկնի Յուդայի եկաց Յովնաթան, որ սպանաւ ընդ Աղէքսանդրու ՚ի Տրիփոնայ, և եկաց ՚ի տեղի նորա Շմաւոն։ Սա առաքեաց ՚ի Հռոմ վահան ոսկեղէն, և ետ բերել տախտակ պղնձի նշան ուխտի դաշանց.

(1) Ի գիրս Բ. Մակաբայեցւոց ԺԲ. 40. այսպէս պատմի. «Իբրեւ հասանէին ՚ի ճակատու տեղի, գտանէին զիւրեանց եղբարց զդիակունսն. և ՚ի ներքոյ հանդերձից նոցա յուռութս ուլունս և բժժանս յամենայն կռոց, ուր ընդ անութ ունէին։»

(2) Յելիոպոնտոս է յայտնի սխալ փոխանակ գրելոյ Յելիոպօլիս (Արեգ քաղաք)։ Իսկ Եւսեբիոս (յէր. 240) կոչէ Ոնիապօլիս. և Սամուէլ Անեցին։ Եւսեբիոս՝ (անդ) որդւոյ Ոնիայ քահանայապետի ասէ շինեալ յԱրեգ քաղաքի զՈնիապօլիս, ուստի ամենայն հաւանութեան է ասել եթէ Ոնիապօլիս զնա կոչեաց յանուն հօր իւրոյ Ոնիայ։

և առաքեաց զՅովհաննէս զորդին իւր և կոտորեաց զզօրսն Անտիոքու (Անտիոքոսի), և ազատեցան 'ի հարկէ նոցա ։ Եւ աստ կատարեցան երկրորդ գիրք Մակաբայեցւոցն ։

Ի ՃՀԴ (174) *Թուին սպանաւ Շմաւոն 'ի Պտղոմեայ, և առ զտեղի նորա Յովհաննէս ։ Յայսմ ժամանակի կանգնեցաւ գլխաւոր Հրեայ 'ի յՈւռհա մինչև 'ի գալ անդ նախնեացն Աբգարու արքայի*(1)։ *Յայսմ ժամանակի գնաց Յովհաննէս քահանայապետն Հրէից յՈւռկանիա պատերազմիլ ընդ նոսա . և վասն այսորիկ կոչեցաւ նա Հուրկիանոս (Հիւրկանոս ։) Յայսմ ժամանակի Թագաւորեաց Անտիոքոս Ագրիպաս* (2), *և եկն յԵրուսաղէմ և նեղեաց զնոսա ։ Եւ եբաց Յովհաննէս Հուրկիանոս զգերեզմանն Դաւթի Թագաւորին, և եհան զոսկին և զզարդըն ամենայն Թագաւորացն, և եհան 'ի նմանէ երեք հազար քանքար ոսկւոյ, և ետ 'ի նմանէ երեք հարիւր քանքար Անտիոքու*

---

(1) Չունիմք 'ի պատմութեանց ազգիս հաւաստիք թագաւորելոյ Հրէից յՈւռհա նախ քան զնախահարս Աբգարու, եթէ ոչ յաւուրս Վաղարշակայ 'ի Բագրատունեաց տանէ զոր գնիցեմք իշխեալ 'ի վերայ Ուռհայոյ տանուտերական իրաւամբք . և կամ մի ոք 'ի Հրէից գերելոյ 'ի Տիգրանայ Բ. որ և բնակեցոյցն զնոսա 'ի Միջագետաց կողմն, ըստ Պլինիոսի · գիրք Զ. Գլ. 28 ։ Տես և 'ի Պատմ. Հայոց. Հա. Ա. յեր. 570 ։

(2) Ըստ Եւսեբեայ Անտիոքոս Գրիպոս ։

և գնաց ։ Եւ յայսմ ժամանակի քակեաց Հուրկիանոս զՍամարիա ։

Ի թուին ճՂԶ **(196)** *թագաւորեաց Պտղոմէոս Սովտէր՝ ամս եւթնևտասն ։ Եւ ՚ի նոյն ամի գնաց Անտիոքոս և Հուրկիանոս ընդ նմա, և սպանին զՍիստիս* (1) *թագաւորն Պարթևաց ։*

Ի չորրորդ ամի Պտղոմեայ թագաւորեաց յԱսորեստան Անտիոքոսն Կիզիկոս՝ ամս ութ և տասն ։ Ի մետասան ամին Պտղոմեայ մեռաւ Յովհաննէս Հուրկիանոս և առ զտեղի նորա Արիստաքուլոս որդի Յովնաթանայ՝ ամ մի ։ Սա առաջին թագ եդ և անուանեցաւ թագաւոր և քահանայապետ ։ Եւ երկու եղբարք սորա Աղէքսանդրոս և Անտիգոնոս նենգիւ սպանին զմիմեանս ըստ մարգարէութեան հօրն իւրեանց, որ Աստուած նովաւ խօսէր ։ Զկնի Արիստաքուլեայ առ զպատիւն Յովհաննէս միւս եղբայրն իւր, որ կոչեցաւ Յաննէ, ամս քսանևեւթն, որ և չարչարէր զազգն իւր զՀրէայս ։

Յայսմ ժամանակի հալածեցաւ Պտղոմէոս ՚ի Կղէոպատրեայ մօրէն իւրմէ, և թագա-

---

(1) Չէք ուրեք ՚ի պատմագիրս Սէտէս անուն թագաւոր Պարթևաց, ոչ Պարսից և ոչ Հայոց, և ոչ ՚ի գիրս Եւսեբեայ յիշատակի այս. վասն որոյ թուի այլափոխութիւն իմն լեալ ՚ի բնագիրն Միխայէլի, քանզի և երկոքին իսկ թարգմանութիւնք ունին Սէտէս ։

ւորեաց Պտղոմէոս Աղէքսանդր ամս տասն ։ Ի վեց ամին սորա բարձան թագաւորքն Ասիացւոց և Ասորւոց, և հնազանդեցաւ Անտաք Հռոմայեցւոցն։ Յայնմ տեղւոջ Գիրք հին կտակարանացն կատարեցան ։ ՅԱդամայ լինին ամք հինգ հազար եւթանասուն և երկու, և աստի մինչեւ 'ի ծնունդն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ ամք հարիւր քըսան և չորս ։ Եւ թիւք ժամանակաց թագաւորացն Ասիացւոց 'ի Սելեւկոսէ, որ զկնի մահուանն Աղէքսանդրու մինչեւ տիրեցին Հռոմայեցիք՝ ամք երկերիւր և վեշտասան ։

Ի թուին (Ասորւոց) ՄԻԲ (222), դարձաւ Պտղոմէոս հալածեալն՝ յաթոռ իւր, (և եկաց) ամս ութ։ Ի թուին ՄԼԷ (237) թագաւորեաց Պտղոմէոս Դիոնէսիոս ամս երեսուն, որ էր որդի Սոտերայ և եղբայր Կղէոպատրեայ (1) ։ Ի հինգ ամին Պտղոմեայ մեռաւ Յովհաննէս Ոնիա որ և Աղէքսանդրոս, և առ զթագաւորութիւնն կին նորին Աղէքսանդրա, որ կոչեցաւ Սաղինէ, ամս ինն, և էր օրինապահ։ Սա ունէր երիս որդիս, Հիւրկանոս և Արիստաբուլոս և Անտիգոնոս ։ Եւ եղեւ Հիւրկանոս քահանայապետ և եղբայրն վիճէր ընդ նմա մինչեւ առ զթագաւորութիւնն։ Եւ եկն Պոմպէոս զօրապետն Հռոմայ, և տարաւ կապանօք զԱրիստաբուղոս և կացոյց զՀիւրկիանոս քահանայապետ ամս երեսուն և չորս ։ Սա շինեաց զպարիսպն Երուսաղէմի զքակեալն ՚ի Պոմպէէ ։ Եւ աստ եղեն Հրեայքն հարկատուք Հռոմայեցւոցն ։ Եւ բազում աշխարհ հաւանեցոյց Պոմպէոս ՚ի Հայոց և յԱսորւոց և յԱրաբացւոց . և մեծացաւ Պոմպէոս այս մինչեւ Տուկրատոր (1) անուանեցաւ ։

---

(1) Եւսեբիոս. Քրոն. Հտ. Ա. յեր. 246. ուր զԴիոնէսիոս կոչէ Նոր Դիոնէսոս ։

Եւ յայսմ ժամանակի մեռաւ Պտղոմէոս , և Թագաւորեաց Կղէոպատրէ (2) ամս քսանեւերկու ։ Ի յերկրորդ ամին սորա ըսպանաւ Պոմպէոս ՚ի Գայիոս Յուլիոսէ ։

Յայսմ ժամանակի էր Հերովդէս . և այս է ազգն նորա ։ Այր մի Անթիպատրոս անուն Ասկաղոնացի՝ որդի Հերովդի քրմապետի կռոցն Ապողոնի ։ Այս Անթիպատրոս գերեցաւ յԻդումայեցւոցն , և հայր նորա Հերովդէս չկարաց փրկել զնա , և մնաւ և մեծացաւ յԻդումայեցիս . և առ ՚ի կնութիւն զդուստր Արետայ Թագաւորին Արաբացւոց զԿուփրիաէ (3) և սա եղեւ բարեկամ Հիւրկանեայ քահանայապետին, որ և օգնէր նըմա ընդ եղբօրն կռուելով։ Գնացեալ վասն նորա առ Պոմպէոս, և եղեւ ծանօթ Հռոմայեցւոց, և կացուցին զնա իշխան Հրէից. և եղեալ էր նմա որդիք Յովսէփ և Փրօրա և Փեսաղոս (Փեսայէլ) և Հերովդէս, չորս որդի և դուստր մի անուն Սողոմէ։ Եւ եղեն Յովսէփ և Փեսաղոս ընդ հօրն իւրեանց իշխանք Հրէիցն ։ Եւ ոմն 'ի Հրէիցն (1) դեղով սպան զԱնթիպատրոս երկու որդւովքն. և եղեւ Հերովդէս փոխանակ հօրն իշխան Հրէիցն ։ Եւ 'ի կարեաց ժամու երթայր նա 'ի Հռոմ, և ծանօթացաւ նոցա ։

---

(1) Ընթերցիր Աւտոկրատոր . Autocrate, որ նշանակէ բացարձակ տէր . զայս անուն տային Հռոմայեցիք ինքնակալաց ։

(2) Այն է յիշատակեալն վերագոյն քոյր Պտղոմեայ Դիոնեսիոսի ։ Ցօրինակին սխալմամբ դնի Թագաւորել սորա ամս երկու փոխանակ դնելոյ քսան և երկու , որպէս եդաք ։

(3) Եւսեբիոս (Քրոն. Հտ. Բ. յեր. 254) զԿիպրէ արտաքացի՝ ասէ լինել մայր Հերովդի , և ոչ կին ։ Տես և ՚ի Յովսեփ .

Եւ յայնմ ժամանակի եկն զօրավարն Հայոց Բարզափրան և գերեաց զՀրէաստան, և տարաւ գերի զՀիւրկանոս և զՓրօրա եղբայրն Հերովդի. և Հերովդէս փախստական անկանի 'ի Հռոմ։ Եւ նա զԹագաւո-

---

պոս Փլաւիանոս (Յղ. Պատեր. Հր. ըստ հայ Թարգմանութեան Գիրք. Ա. Գլ. Զ) որ Կիպարիս անուանէ զմայրն Հերովդեայ։

(1) Յովսեպոս պատմէ (Յղ. պատերազ. Հր. Գպ. Ա. Գլ. Թ. ԺԳ.) եթէ Մաղքոս անուն ոմն դաւաճանեաց ըղկեանս Անթիպատրի 'ի կոչունս 'ի ձեռն ծառայից Հիւրկանեայ, և զՅովսէփ որդի նորա 'ի ձեռն Պապիոս ուրումն անուանելոյ։ Իսկ վասն Անտիգոնոսի ասէ, ածեալ զնա Սոսիայ կուսակալի Ասորւոց առ Անտոնիոս, սակրով սպանեալ։ Զ Հիւրկանեայ ոչ ինչ որոշակի ծանուցանէ Խորենացի. իսկ Յովսեպոս (Յղ. Պատեր. Հր. Գիրք Ա. Գլ. ԺԷ) ասէ, եթէ առ պկասկած սրտի իւրոյ փարատելոյ՝ սպան զնա Հերովդէս յետ դարձին նորա 'ի գերութենէ Հայոց։

րութիւնն 'ի վերայ Հրէից , նեղեալ սպան զԱնտիգոնոս զոր եդեալ էր Հայոց , և ինքն նստաւ : Եւ յորժամ դարձաւ Հիւրկիանոս 'ի Բագրատունեացն (1) յարձակմանէ յԵրուսաղէմ, եւ զնա սպան Հերովդէս և զորդի նորա զՅովնաթան : Եւ աստ կատարեցաւ բանն թէ , «Ո՛չ պակասեսցէ պետ և իշխան 'ի Յուդայէ , մինչեւ եկեսցէ որ իւր է թագաւորութիւնն .» (2) զի աստ պակասեցան պետքն Հրէից :

Եւ եկն Տէրն արքայորդին ծննդեամբ 'ի Բեթղեհէմ, 'ի կատարման եւթներորդացըն Դանիէլի (որ ասէ). «Եւթներորդք եւթըն, և եւթներորդք վաթսուն և երկու.» (3) որ լինին ամք չորեքհարիւր ութսուն երեք՝ սկսեալ 'ի վեց ամէն Դարեհի մինչեւ յաւիտեան : Որ և կայ 'ի Թարգմանութիւնն Եբդարու , թէ Դանիէլ հիւանդացեալ մեռանէր 'ի վերայ Տիգրիս գետոյ , և անկեալ 'ի վերայ երեսացն գոչեաց առ Տէր . «Ցոյց ինձ Աստուած զՔրիստոսն քո , մինչչեւ մեռեալ իցեմ.» և եկն առ նա Գաբրիէլ և ասէ. «Հանգիր դու 'ի խաղաղութիւն, այր ցանկութեանց, զի դեռ չեւ է ժամանակն. այլ մինչեւ կատարին եւթներորդքն քո, ապա գայ Քրիստոս և խաչիւ մեռանի. և ազատէ զձեզ 'ի դժոխն առ ձեզ եկեալ. և արդ մխիթարեա զքեզ յուսով գալստեան նորա : „ (1)

---

(1) Առ Հերովդեաւ Արշակունիք և ոչ Բագրատունիք թագաւորէին 'ի վերայ Հայոց . ուստի յայտնապէս սխալ է աստ 'ի փոխանակ գրելոյ 'ի Բաղափրանայ :

(2) Ծննդոց . խթ . 10 :

(3) Դան . թ . 24—27 : Երեմիա Իթ . 20 :

Եւ մինչ 'ի տեսիլն Դանիէլի՝ թագաւորացն պատիւն Բոմբէոս լինէր կոչեցեալ. և աստիսկան Աւտոկրատոր (Աւտոկրատ) կոչէր(2): Եւ յայնմ ժամանակի կուռք՝ որ կայր յՈղիմպիոս, շանթիւք այրեցաւ, յորժամ թագաւորեաց Օգոստոս կայսրն : Եւ նոյն կայսրն զԼուսիտանիա կղզին քակեաց, և սկսաւ զմի մի 'ի կղզեաց քակել. վասն զի գտաւ մռստութիւն (խռովութիւն) 'ի կղզիս(3): Բայց նախ Գայիոս, որ և Յուլիոս կոչեցաւ կայսր 'ի լեզուն Հռոմայ, զի մօրն մեռելոյ (յարգանդէ) հանաւ կենդանի մանուկն. և բարեքաղդ եղեալ թագաւորեաց, որ խափանեալ էր թագաւորութիւնն Հռոմայեցւոց ամս չորեքհարիւր վաթսուն և երկու, 'ի Տարկինոսէ մինչեւ 'ի Գայիոս Յուլիոս: Եւ 'ի շինելոյն Հռովմայ մինչեւ 'ի կրկնակի թագաւորութիւնն եւթն հարիւր և երկու ամ: Այս Գայիոս Յուլիոս լինեալ յԵգիպտոս հաստատեաց զթագաւորութիւնն Կղէոպատրեայ կնոջ: Եւ Գայիոս կոյնան թարգմանի: Այլ Անդրոնիկոս(1) թէ, հինգ ամ թագաւորեաց և ապա սպանաւ դաղտ: Եւ թագաւորեաց Օգոստոս ամս յիսուն և վեց և ամիս վեց:

---

(1) Դանիէլ Թ. 21 :

(2) Աղօտ են բանք այսր հատածիս. միւս թարգմանութիւնն փոխանակ Բոմբիոսի՝ ունի Բոբէոս, որ և այն ոչինչ իմաստ ընծայէ : Զկնի Տարկինոսի վերջնոյ թագաւորին Հռոմայ, որ եկաց յաթոռն 'ի վախճանել գերութեանն Հրէից 'ի Բաբելոն. նստան հիւպատք բռնատեանք. և երբեմն ռամկապետք և դիկտատորք մինչեւ ցՅուլիոս Գայիոս որ կոչեցաւ ինքնակալ. Աւտոկրատ (Autocrate): Իսկ բառս Բոմբիոս մարթ է առնուլ իբրեւ մակդիր և անուն պատուոյ հիւպատոսիցն. իբր Պոմպոզոս, և սոյգ պայս նշանակութիւն այս բառդ 'ի Լատինականն : Տես և յԵւսեբիոս 'ի Քրոնիկոնին, յեր. 204:

(3) «Կայսր զԼուսիտանիա և զոմանս յՈվկիանոսի կղզեաց վանեաց.» Եւսեբ. Քրոն. Հտ. Բ. յեր. 250 :

Ի յութ ամին Օգոստեայ թագաւորեաց Հրեից Հերովդէս և խափանեաց զթագաւորութիւնն և զքահանայութիւն նոցա, զի ընդ ձեռամբ արար զվակամն և տայր կաշառօք: Եւ թագաւորեաց ամս երեսուն և հինգ. և զառաջինն ոչ ընդունէին զնա յԵրուսաղէմ, մինչեւ արար պատերազմ և քակեաց զերկու պարիսպն, և զքաղաքն կոտորեաց 'ի Հրէից, և ապա տիրեաց 'ի վերայ նոցա: Եւ սա արար որ յամենայն ամի քահանայապետ փոխէր: Սա առաքեաց 'ի Բաբելոն և ետ բերել զԱնանէ (1), և արար զնա քահանայապետ ամ մի, որ չէր Ղեւտացի: Եւ զկնի նորա արար զԱրիստաբուլոս որդի Հիւրկանեայ քահանայապետի զեղբայր կնոջ իւրոյ. և սպան զնա և հաստատեաց զԱնանէ: Բայց թէպէտ և փոխեցաւ սահման օրինացն և ամի ամի կաշառօք ունէին և փոխէին զմիմեանս. և այսու պատճառաւ բազում էին քահանայապետք, այլ 'ի ժամ մտանելոյ 'ի Սուրբն Սրբոց ոչ ոք 'ի նոցանէ համարձակէր, այլ ըզԶաքարիա և զԱբիա կարգէին մտանել, որք չէին այնպիսիք, այլ ըստ օրինացն և արդարք:

---

(1) Միւս թարգմանութիւնն դնէ, „որ է Անդրոնիկոս կոչեցեալ յոմանց:„ Իսկ բառդ կոյնան ոչ ինչ 'ի հայումս նշանակէ, թերեւս պարտի գրել գայսոն, որ և 'ի Յոյն և 'ի Լատին լեզուին որպէս և առ մեզ՝ նշանակէ գեղարդն, նիզակ.

Ի յերրորդ ամին Հերովդի եղեւ Սամուսատ ընդ Հռոմօք, յաղթեալ զօրացն Հայոց որ կային 'ի վերայ Եփրատ գետոյ, և տային հարկս 'ի Միջագետաց (2): Յայսմ ժամանակի զօրավարն Օգոստեայ Անտոնինոս ապըստամբեալ յՕգոստեայ՝ թագաւորեաց և սիրեաց զԿղէոպատրա գնալով յԵգիպտոս 'ի համբաւ նորա: Եւ եկն 'ի վերայ նորա Օգոստոս և ըմբռնեաց զնա և աղաչանօք սինկղիտոսացն ապրեցաւ և խաղաղացան. և մեծ գերութիւն առաքեաց յայսմ կողմանէ 'ի Հռոմ Օգոստոսն: Եւ Կղէոպատրա ունէր նենգութիւն ընդ Հրեայս և ընդ Արաբացիս, և խնդրեաց յԱնտոնինոսէ իշխանութիւն ՚ի վերայ նոցա, և ետ ՚նմա. և այս պատճառաւս եղեւ երկրորդ խռովութիւն Օգոստեայ ընդ Անտոնինոսի. և դարձեալ յաղթեցաւ Անտոնինոս և Կղէոպատրա, որք ՚ի միասին ընդդիմացան Օգոստեայ։ Եւ յորժամ՝ տեսին զպարտութիւն անձանց իւրեանց, անձնասպան եղեն երկոքին՝ Անտոնինոս և Կղէոպատրա. և Օգոստոս սպան զԱրեգակն և զԼուսին զորդիսն Կղէոպատրեայ (1)։ Եւ յայսմ՝ ժամանակի բարձաւ թագաւորութիւնն Պտղոմեանց յԵգիպտոսէ որ Յունաց կոչէին, տեւեալ ամս երկերիւր իննսուն և վեց, և եղեն ընդ Հռոմօք։ Եւ են ոմանք որ ասեն թուեն զժամանակն Օգոստեայ, որ կոչեցաւ Սեբաստոս, որ է յաղթող (2), յորժամ՝ սպանան Անտոնինոս և Կղէոպատրա և որդիք իւր։

---

(1) Ըստ Եւսեբեայ Անանէղոս:

(2) Մովսէս Խորն. Գիրք Բ. Գլ. 21.

Եւ յայսմ՝ ժամանակի երեւեցաւ Յուդա գալիլեացին ՚ի Գամաղա քաղաքէ։ Սա և Սադովկ փարիսացին յարեան և ասացին. «Չէ արժան մեզ հարկս տալ Հռոմոց։» Յիննևտասն ամին Օգոստեայ առաքեաց զՏիբերիոս զօրապետն իւր ՚ի Հայս (3), և

---

(1) Եւսեբիոս Քրոնիկոն. Հա. Բ. յեր. 256։

(2) Սեբաստոս կամ՝ Սեւաստոս ըստ Յունաց նշանակէ Աւգոստոս, և ոչ յաղթող. զոր Միխայէլ շփոթէ ընդ միմեանս։

(3) Միւս թարգմանութիւն ունի յԵգիպտոս։

արար ընդ նոսա խաղաղութիւն. և դարձեալ ՚ի Հայոց՝ գնացեալ ՚ի կիւրենական աշխարհն, արար զնոսա հնազանդս, որ է անդր քան զԵգիպտոս: Յայսմ ժամանակի շինեաց Հերովդէս զՍամարիա, և Սեբաստիա կոչեաց յանուն Օգոստեայ. և շինեաց զՓանիոն ՚ի Փանիա (1), *և մեծացոյց զարքունիսն Երուսաղէմ: Եւ շինեաց զանուանեալն աշտարակ Ստրատոնեան՝ քաղաք, և անուանեաց Կեսարիա յանուն կայսեր. և նորոգեաց զԳաբաա ՚ի Գալիլեա: Եւ սա յաճախ արար հեղումն արեանց. և սա ըսպան զկին իւր Մարի* (2) *անուն, և սպան զամենայն օրինագէտ և զիմաստուն այր Հրէայ: Եւ յայսմ ժամանակի եղեն աւետիք Սրբոյ Կուսին. և յետ ինն ամսոյ և հինգ աւուր՝ ծնունդ կենարար Բանին Աստուծոյ Տեառն մերոյ* ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ *՚ի քառասուն երեք ամին Օգոստեայ և յերեսուն երեք ամին Հերովդի, և ՚ի թուին Ասորւոց երեք հարիւր հնգետասան: ՅԱդամայ մինչև ՚ի ծնունդն Քրիստոսի՝ ամք հինգ հազար երկերիւր ութսուն և չորս. այս ըստ Եւսեբի, իսկ ըստ Եւթանասնիցն՝ ամք հինգ* հազար հարիւր իննսուն և ութ . և ըստ Ենանոսի՝ ամք հինգ հազար իննսուն և մի . և ըստ այլոց՝ հինգ հազար հինգ հարիւր և երեք . և ըստ Ասորւոցն՝ ամք հինգ հազար .քըսան և վեց ։ Եւ էր մուտ տարւոյն երկուշաբաթ , և երկոտասանալուսնեայ էր տարին ։

---

(1) Եւսեբիոս, Քրոնիկոն. Հա. Բ. յեր. 258:

(2) Այն է Մարիանէ կամ Մարիամնէ թոռն Հիւրկանեայ վերջնոյ, զոր ՚ի գրգռութենէ քեռ իւրոյ Սողոմեայ՝ ըսպան Հերովդէս: Յովսեպ. Յղ. պատերազմ. Հր. Գիրք. Ա. Գլ. ԺԵ:

Ի քառասուն և երեք ամին Օգոստեայ առաքեցաւ Կիւրինոս իշխան 'ի Սինկլիտոսէն Հռոմայ գրել զազգն Հրէից և դնել գլխահարկս վասն պատճառի Յուդայի Գալիլեացւոյն և այլոց բազմաց , որք ասէին՝ “Չէ պարտ է մեզ հարկս տալ մահկանացու մարդոյ (1) ։” Եւ լսելի եղեւ բանն 'ի Հռոմ և բարկացան , և արարին բան զոր չէր լեալ մինչեւ ցայնժամ , և 'ի նմին ժամանակի յայտնեցաւ Տէրն մեր ծննդեամբ ։ Յիշէ զայս ժամանակս Լուգիանոս հռոմայեցի որ կայր յայսմ կողմանէ , և գրէր առ կայսր զպատահեալսն . գրեաց և ասաց , թէ “Պարսիկք եկին մերին յիշխանութիւնքս , և մատուցին պատարագ տղայի միոյ ծնելոյ 'ի Հրէաստանի . և թէ ո՞վ է , կամ ո՞յր որդի , դեռ չեմք լուեալ ։” Եւ գրեաց կայսրն թէ, “զՀերովդէսդ արքայ կացուցեալ եմք 'ի վերայ Հրէիցն , նա գրէ առ մեզ ։” Եւ եկին մոգքն յերեսուն և հինգ ամին Հերովդէի։ Եւսեբի և Նիւսացին ասեն , թէ յորդւոցն

---

(1) Գործ . Ե . 36—37 ։

Բաղդատմու մոգքն էին, և Յակովբ ուռհայեցին ասէ, թէ յազգէն Իլամայ Սեմացիք էին. և այլք ասեն, որդիք թագաւորացն Արաբայ և Սաբայ էին ըստ՝ Դաւթի բանիցն (1). և երեք թագաւոր էին, զի երեք ցեղ պատարագ մատուցին։ Եւ ոմանք ութ թագաւոր ասեն, որպէս Միքիա ասէ. "Ութ վարիչ մարդկանց"(2)։ Եւ սուրբն Յակովբ երկոտասան իշխան ասէ, որ գտեալ էր գիրք, թէ երեքհազար ձիաւոր և հինգ հարիւր հետեւակ ունէին։ Եւ յորժամ եկին 'ի յԵփրատ գետ, 'ի տեղին որ ասի Կալանիկոս, որ է Ռախղա, և լուան թէ սով է 'ի Հրէաստանի, և թողին անդ զբազումս, և երկոտասան իշխան հազար հեծելով գնացին և տեսին. և յորժամ տեսին, դարձան առ զօրս իւրեանց, որոց անուանք են այս. Դահանդուր որդի Արտաւազայ. Ճաթէսփ որդի Գուդքարայ. Արշակ որդի Մահդուգայ. Զրուանտ որդի Վարիդուդայ. Արիհու որդի Խոսրովու. Արտաշէս որդի Ուլիաթայ. Աշթանքուզա որդի Իշրոնայ. Մեհդուք որդի Հումայ. Աքշիրիշ որդի Սահապանայ. Սալտանա որդի Բելտանայ. Մարուդաք որդի Բելայ։ Եւ թագաւորին՝ որ առաքեաց զնոսա՝ Փիր—Ճապուհ անուն։ Կէսք երկու ամաւ յետ ծնընգեանն ասեն զգալ մոգուցն. բայց չայլք ստուգեն թէ երկու ամաւ յառաջ գուշակեցաւ աստեղը, և ելին 'ի գալ. և յերեկոյն ծնաւ Տէրն, և մոգքն վաղն եկին: Եւ մընայ Մարիամ Աստուածածինն 'ի Բեթղահէմ զքառասուն օր, և ապա գնաց 'ի Տաճարն. և ընկալեալ 'ի գիրկս իւր զՕծեալն՝ Սիմէոն ծերունին, որ հրամանաւ Հոգւոյն պահեցաւ կենդանի 'ի Պտղոմեայ ժամանակացըն, որ մի էր 'ի Թարգմանչացն, և 'ի գրելըն զԵսայի մարգարէ, եկեալ 'ի տեղին որ ասէ. “Ահա կոյս յղասցի և ծնցի (1).” Եւ յորժամ գրեաց՝ դարձեալ զղջացաւ, և ասաց. “Հեթանոսք զխո՟րդ հաւատան այսմ, այլ ծաղր առնեն զմեզ.” և ջնջեաց առ ժամայն զգրեալն, և դարձեալ տրտմեցաւ և ասաց. “Եթէ իմ ընկերքն գրեն, այսպն լինիմ. և լինի հակառակութիւն:” Եւ 'ի տրտմութենէն ննջեցին ինքն և ընկերքն իւր, և 'ի զարթնուլն տեսին գրեալ զարմանալի գրով որպէս ոսկեղինաւ: Եւ խնդացեալ Սիմէոն ելաց և երանեաց զժամանակն կուսածին և զաչսն որ տեսանէ և զշուրթն որ համբուրէ զԷմմանուէլին: Եւ ասէ ցնա Հոգին. “Մի՛ տեսցես զմահ մինչեւ տեսցես դու զՕծեալն.” և կատարեցաւ բան Տեառն: Եւ յայն ժամն վաթսուն ամաց էր Սիմէոն, և երեքհարիւր քառասուն և չորս ամ այլ ապրեցաւ մինչ որ հասաւ երանութեանն ։ Իսկ Յովսէփ և Մարիամ հանդերձ մանկամբըն գնացին 'ի Նազարէթ յետ ընծայելոյն . և հրամանաւ հրեշտակին գնացին 'ի Եգիպտոս յետ վաթսուն և երկու ամին ծնընդեանն Տեառն , և այլք ասեն՝ թէ զկնի երկու ամի գնացին ։

---

(1) Սաղմ. ՀԱ. 10։ (2) Միքիա Ե. 5։

---

(1) Եսայի. Է. 14:

Եւ Հերովդէս կոտորեաց զմանկունսն խաբեալ 'ի Մոգուցն , և զայրացեալ այրեաց զգրեանն Հրէից , և ջնջեաց զյիշատակ թագաւորութեանն և զքահանայութեանն՝ զի մի՛ք լիցէ , սեպհական և որդիք իւր ժառանգ թագաւորութեանն ։ Բայց Եգիպտոս և յայլ աշխարհ պահեցան գրեանն խնամօքն Աստուծոյ ։ Եւ Տէր եհար զՀերովդէս չարաչար ցաւօք յոտից մինչև ցգլուխ, և որդեցաւ ամենայն անդամօք , և բժիշկք ոչ կարէին օգնել նմա . և եդին զնա 'ի ջերմին ձէթ , և խառեաց ցաւն ։ Եւ ըմբռնեալ զգլխաւորս Հրէիցն՝ և եդ 'ի բանտի , և պատուիրեաց փեսային իւրում Աղէքսին և քեռ իւրում Սողոմէի , զի 'ի մահուան նորա սպանցեն զնոսա , զի ակամայ Հրեայքըն լացցեն յաւուր մահուան նորա . զոր և արարին իսկ ։ Եւ նա նեղեալ 'ի դառն ցաւոց սպան զանձն , և չարամահ եղև յերեսուն և հինգ ամի թագաւորութեան *իւրոյ (1) ։ Եւ կացոյց Օգոստոս թագաւոր զԱրքեղայոս զորդի նորա՝ ամս ինն ։ Եւ զկնի ինն ամի տուաւ յաքսորս 'ի Բէնան քաղաք վասն չարեաց իւրոց(2). և ա՛ռ զիշխանութիւնն Հերովդէս չորրորդապետ ։ Եւ 'ի նմին ամին մեռաւ Օգոստոս և թագաւորեաց Տիբեր ամս քսան և երեք ։*

Առաջին Հերովդէսն ունէր ինն կանայս և ութ որդիս ։ Ի Դոսիոսէ (Դոլքէս) Անթիպատրոս եղեւ, այն որ սպան զերկուս եղբարս իւր, և սպանաւ 'ի հօրէն իւրմէ ։ Եւ 'ի Մարէ (Մարիամնէ) դստերէ Հիւրկիանեայ(3) ծնաւ զԱղէքսանդրոս և զԱրիստաբուլոս, զոր սպան Անթիպատրոս, և զՀերովդէս՝ որ կոչեցաւ Անթիպատրոս, այն որ էառ զՀերովդիադա և սպան զՅովհաննէս(4)։ Եւ 'ի Մեղքսա սամարացւոյն ծնաւ զԱրքեղայոս, որ թագաւորեաց զհետ նորա ։ Եւ 'ի Կղէոպատրեայ երուսաղէմացւոյն միւս Հերովդէս և Փիլիպպոս, որ ունէր զՀե-

---

(1) Յովսեպոս, (Յղ. պատեր. Հր. Գիրք Ա. Գլ. ԻԱ)։

(2) Յովսեպոս, (Յղ. պատեր. Հր. Գիրք Բ. Գլ. Ը.) և Եւսեբիոս (Քրոն. յեր. 262.) կոչեն նոյնպէս Բէնան կամ Բիէննա, 'ի Գաղատացւոց երկրին, և այն իսկ է Վիեննա մայրաքաղաքն Աւստրիոյ ։

(3) Մարիամնէ ոչ դուստր՝ այլ թոռն էր Հիւրկանեայ և դուստր Աղէքսանդրի ։

(4) Այս Հերովդէս ոչ թոռինն Հիւրկանեայ է որդի, այլ միւս Մարիամնեայ դստեր Սիմէոնի քահանայապետի ։

բովդիադա կին , և առաւ յեղբօրէն . զնի և ինքն Փիլիպպոս սպանաւ 'ի նմանէ : Եւ 'ի Բաղդայէ՝ Փիապոս (Փասայէլ) : Եւ որդիք որդւոյն նորա են այսոքիկ . Արիստաբուլեայ եղբօրն Աղէքսանդրի եղեւ որդի Հերովդէս , որ և թագաւորեաց 'ի Քաղկիդա: Եւ Ագրիպպաս որ կոչեցաւ Հերովդէս , այն որ սպան զՅակոբ զեղբայրն Յովհաննու , և որդնեռալ եղեալ մեռաւ : Եւ վանեալ սա զհօրեղբայրն իւր , և էառ զթագաւորութիւնն . և եղեւ սմա որդի Ագրիպպաս , որ թագաւորեաց զկնի նորա : Եւ դստերք Բերինիկէ և Դրուսիլա , որ եղեւ կին Փելիքսայ իշխանին : Ի չորեքտասան ամին Տիբերեայ, որ է ՅԼԷ (337) թուին, առաքեցաւ Պիղատոս իշխան Հրէաստանի , և յետ ամայ միոյ , որ է յԱդամայ հինգ հազար հինգհարիւր երեսուն և եւթն, մկրտեցաւ Տէրն 'ի Յորդանան 'ի Յովհաննէ , յունվարի 'ի վեց և 'ի տիբէթի քսան և մի , յաւուր կիւրակէի:

Եւ 'ի նոյն ամի Գերմանիկոս կայսրն զօրացաւ 'ի վերայ Պարթեւաց և Տիբեր ըզՏուրթէոս (Դրուսոս) արար հաղորդ իշխանութեան իւրոյ և ինքն դեղով մահու սպանաւ . և 'ի նոյն ամի արքունիքն Համքիսոփ այրեցաւ(1) . և 'ի Տիբերեայ ժամանակին շինեաց

---

(1) “ Պամփէլի թէատրոնն հրձիգ եղեւ : ” Եւսեբ . Քրոն . յեր . 262 :

Հերովդէս զՏաբարիա (1) և զԲայիս (2) ։ Եւ Պիղատոս զպատկերն Օգոստոսի եմոյծ ՚ի Տաճարն, և զգանձանակ Տաճարին Թափեաց ՚ի ջրէջսն ։

Յայսմ ամի ընտրեցան Առաքեալք երկոտասան ։ Ա. Սիմոն Պետրոս ՚ի ցեղէն Նեփթաղիմայ, որ շինեաց խորան յառաջ յԱնտիոք, և յամս Կղօդեայ կայսեր եկ ՚ի Հռոմ, և եկաց անդ ամս քսանևհինգ, և յերեքտասան ամի ՚ի Ներոնէ կատարեցաւ ։ Բ. Անդրէաս եղբայր նորա որ քարոզեաց ՚ի Նիկիա և ՚ի Նիկոմիդիա և ՚ի Սկիւթիա և յԱքայիա, և սմա առաջին Աթոռն յԵփեսոս ։ Գ. Յակոբ որդի Զեբեդեայ ՚ի ցեղէն Զաբուղոնի, որ սպանաւ ՚ի Հերովդէ Ագրիպպայ, և եղաւ մարմին նորա խուր մարմարիկէ (3) ։ Դ. Յովհաննէս եղբայր նորա քարոզեաց յԱսիա, և եկաց մինչև ցեւթըն ամն Տրայիանոսի, և կատարեցաւ փառռաւոր մահուամբ ։ Ե․ Փիլիպպոս յազգէ Ասերայ, ՚ի Բեդսաիդա․ քարոզեաց յԱփրիկէ եւ թաղեցաւ ՚ի Փռիգեա ։ Զ․ Բարթուղիմէոս յազգէն Իսաքարայ յԱդաւիր գեղջէ, քարոզեաց ՚ի Հայաստանեայս, եւ անդ կատարեցաւ սքանչելի նահատակութեամբ ՚ի յՈւրբիանոս քաղաքի(1), որ այժմ կոչի Հաղբակ, ՚ի Սանատրկոյ յամբարշտէ եւ յանօրէն թագաւորէն։ Է․ Թովմաս յազգէն Յուդայ, քարոզեաց Պարթեւաց եւ Մադացեաց եւ Հնդկաց, եւ անդ նահատակեցաւ ։ Ը․ Մատթէոս յազգէն Իսաքարայ, ՚ի Նազարեթէ, մեռաւ ՚ի Բաքաղս եւ թաղեցաւ յԱնտիոք․ եւ յետոյ տարաւ յայնկոյս ծովուն ։ Թ․ Սիմոն Կանանացին յազգէն Եփրեմի, ննջեաց ՚ի Համս․ եւ յայլ տեղ գտաք, թէ ՚ի Կուրիս ։ Ժ․ Յուդա՝ որ կոչեցաւ Թադէ․ որ վասն խնամատութեան խորոյ ասէին Լեբէոս, որ է սիրտ եւ հոգի, քարոզեաց ՚ի Հայս եւ յԱսորիս, եւ կատարեցաւ ՚ի Սանատրկոյ ՚ի Հայս, ՚ի տեղւոջն յորում եհար զվէմն եւ բղխեաց աղբիւր երեքտասան ակն․ երկոտասանն յառաքելոցն անուն, եւ միւսն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի․ որ կայ մինչեւ ցայսօր ՚ի բժշկութիւն ամենայն ախտից եւ հիւանդութեանց ։ Նա է պատուական մարմին եւ նշխարք ոսկերաց նորա և որքոյն Անդրէասոյ 'ի տեղւոջ նահատակութեան իւրեանց ամփոփեալ։ ԺԱ. Յակոբոս Ալփեայ որդի՝ յազգէ Մանասէի, որ մեռաւ 'ի Սրուճ։ Յուդա մատնիչն յազգէ Դանայ 'ի Սկարիովտայ գեղջէ։ ԺԲ. Մատաթէ փոխանորդն նորա՝ յազգէն Ռուբէնի, յերկիրն մարդակերաց։

---

(1) Հերովդէս Անտիպաս չորրորդապետ Գալիլեայ շինեաց զքաղաքս Տիբերիա, և ՚ի Պերիա զՅուլիադա քաղաք, զոր և յանուն կնոջ Տիբերի կայսեր կոչեաց. (Յովս. Յն. Պատմ. Հր. Գիրք Բ. Գլ. Ժ.)

(2) Իսկ Եւսեբիոս (Քրոն. յեր. 262) Դեքիոպս անուանէ, զոր Միխայէլ կամ ընդ օրինակօղք նորա վրիպակաւ գրեն Բայիս կամ Աբայիս ։

(3) Կամ Յոփմարմարիկէ․ բառ անիմանալի․ իսկ քաղաքն յորում աւանդի թէ կայցեն նշխարք մարմնոյ նորա՝ բայց ՚ի գլխոյն, է Կոմբոստելլա, յաշխարհին Սպանիացւոց ։

---

(1) Այս քաղաք կոչի ՚ի գիրս Մովսէսի Խորենացւոյ Արեբանոս․ Բ․ 31։

Գրեաց Յովսեպոս վասն Տեառն մերոյ այսպէս. “Երեւեցաւ յաւուրս մեր այր մի որում Յիսուսն անէին. և բազում նշանօքն զոր առնէր նա, յայտնի էր՝ թէ նա է Քրիստոսն. և վասն նախանձու մատնեցին զնա Պիղատոսի դատաւորի։ Եւ սպանին զնա խաչիւ. և յետ երից աւուրց տեսին զնա կենդանի. և ոչ մեկնեցան 'ի սիրոյ նորա հաւատացեալքն 'ի նա, և մինչեւ ցայսօր աճէ հաւատ նորա. և ստուգեցաւ թէ նա ինքն էր Քրիստոս որդին Աստուծոյ կենդանւոյ (1)։”

---

(1) Ի բնագրին այսպէս ունի. “Զայսու ժամանակաւ էր այր իմաստուն՝ անուանեալն Յիսուս, և եթէ արժան է մեզ այր կոչել զնա. զի էր սքանչելագործ, և ուսուցիչ այնոցիկ որք յօժարութեամբ ընդունին զճշմարտութիւնս, և զբազում 'ի Հրէից անտի և 'ի հեթանոսաց աշակերտս ունէր։ Քրիստոսն իսկ է նա. զոր չարախօսեալ իշխանաց ազգին մերոյ, Պիղատոս ետ զնա 'ի պատիժ խաչի։ Սակայն այնոքիկ որ իսկզբանէ սիրեցին զնա, ոչ դադարեցին 'ի սիրոյ անտի նորա. զի երեւեցաւ նոցա յետ երից աւուրց միւսանգամ կենդանի, որպէս մարգարէքն Աստուծոյ զայս և այլ բազում ինչ սքանչելիս զնմանէ նախ խօսեցան։ Եւ մինչեւ ցայ-

Արդ՝ ըստ Յովսեփայ վկայութեանն՝ նախ սկսաւ հաւատ նորա երկոտասան առաքելովքն (1), զոր գրեցաք վերագոյն. և ապա ընտրեցան եւթանասուն և երկու աշակերտքն, որոց անուանքն են այս։ Ա. Ադէ։ Բ. Ախէ։ Գ. Պաղար։ Դ. Անանիա։ Ե. Յակոբ։ Զ. Եզիա։ Է. Բառնաբաս։ Ը. Մաթէնիս։ Թ. Կիւրակոս։ Ժ. Յովսէփ։ ԺԱ. Նիկոդիմոս։ ԺԲ. Նաթանայէլ։ ԺԳ. Յուդաս։ ԺԴ. Յուստոս։ ԺԵ. Շիղա։ ԺԶ. Բառնաբաս։ ԺԷ. Յովհաննէս, որ նա ինքն է Մարկոս։ ԺԸ. Ամիուս։ ԺԹ. Նիձէ։ Ի. Յասոն։ ԻԱ. Մանիլ։ ԻԲ. Դուբլեքսիմոս։ ԻԳ. Աղէքսանդրոս. ԻԴ. Շմաւոն։ ԻԵ. Կիւրինէ։ ԻԶ. Լուկիոս։ ԻԷ. Կղէոպաս։ ԻԸ. Սիմէոն։ ԻԹ. Յովնա։ Լ. Բուգլոս։ ԼԱ. Դիւստրոս։ ԼԲ. Զաքիդոն։ ԼԳ. Տիտոս։ ԼԴ. Պատրոբա։ ԼԵ. Երմի։ ԼԶ. Ասնկրիտոս։ ԼԷ. Պրիսկոս։ ԼԸ. Պուկաս։ ԼԹ. Արիստաբուլոս։ Խ. Դէմաս։ ԽԱ. Տիմոթէոս։ ԽԲ. Պեւի։ ԽԳ. Եփրեմ։ ԽԴ. Հերովդէս։ ԽԵ. Սիլուանոս։ ԽԶ։ Նիկիանէս։ ԽԷ. Յովհաննէս։ ԽԸ. Թէոդոս։ ԽԹ. Նիկոս։ Ծ. Մարտուլոս։ ԾԱ. Լասին։ ԾԲ. Զաքարիա, որդի այրւոյն, զոր յարոյց ՚ի Նային։ ԾԳ. Սիմոն բու-

---

սօր ժամանակի ոչ նուազի ժողովուրդն քրիստոնէից որ ՚ի նմանէ անուանեալ էր ։ » Յովսեփ. Յղ. պտմ. Հր. Բ. 10։

(1) Յօրինակին պակասէ։

րոսն ։ ԾԳ. Ստեփանոս ։ ԾԴ. Սոսքոս ։ ԾԵ. Ապեղէս. ԾԶ. Իասոն ։ ԾԷ. Շմաւոն. ԾԹ. Յովսէփ, որ է Բառնաբաս ։ Կ. Երաոսս ։ ԿԱ. Ամիմաս. ԿԲ. Յուլիոս ։ ԿԳ. Փիլիպպոս ։ ԿԴ. Պրոքորոն ։ ԿԵ. Նիկանովր. ԿԶ. Տիմոն ։ ԿԷ. Պարմենաս ։ ԿԸ. Ագաբոս ։ ԿԹ. Կեփաս, զորմէ ասաց Պաւղոս՝ թէ ընդդէմ դարձայ նմա։ Եւ ինքն Պաւղոս անօթն ընտրութեան, որ թէպէտ և տրուպ գրէր զինքն, այլ մեծ էր յամենեսեան ։

Յայսմ ժամանակի երեւեցաւ իմաստասէրն Փիլոն, եբրայեցի-աղեքսանդրացի ։ Սա գրեաց զպատմութիւնս Հրէից և վասն Գայիոսի, որ արար զանձն իւր աստուած. և 'ի միայնակեացն Եգիպտոսի. և վասն արարածոցն մեկնութիւնս. և վասն վաստակոց երկրի. և վասն մտաց արդարոց, որ յորժամ զարթնու՝ աղօթէ ։ Եւ վասն աւերման լեզուաց. և վասն աշխատելոց 'ի վարդապետութիւնս, և վասն զանազանութեան անուանց գրենոց և երկու Կտակարանաց ։ Եւ վասն տեսլեանց և երազոց հինգ ճառս. և հինգ վասն ելանելոյ հոգւոյ 'ի մարմնոյ. և չորս վասն օրինացն, և այլս բազումս ։ Եւ յաւուրս Կղօդեայ կայսեր եղաւ գրեանք նորա 'ի մատենն գանձուց թագաւորացն Հոռոմոց ։

Յայսմ ժամանակի եւթն հերձուած գըտաւ 'ի Հրէայս, որպէս ասէ Յովսեպոս (1). Առաջին՝ Դպրացն, որ կոչին օրինականք ։ Երկրորդն՝ Պեւտականք, որ ունին զաւանդութիւն ծերոցն ։ Երրորդն՝ Փարիսեցւոցն, որ հաւատան յարութեան որպէս Դպիրքն, և ասեն և խոստովանին հրեշտակ և հոգի. և պահեն երկու օր 'ի շաբաթն. և մկրտին յաճախ, և հաւատան աստեղաց և բախտից ։ Չորրորդն՝ Սադուկեցւոցն, որ ուրանան զյարութիւն և զհրեշտակ և զհոգի, և առին զանուն 'ի Սադովկայ քահանայէ ումեմնէ ։ Հինգերորդ՝ Մկրտողք, որք ասեն՝ թէ չկարէ մարդ ապրել, թէ ոչ յամենայն աւուր մկրտի ։ Վեցերորդ՝ Ուխտականք, որք չուտեն ինչ շնչաւոր. և զՄովսէս և զմարգարէսն ոչ ընդունին, և այլ ունին գրեանս փոխանակ նոցա ։ Եւթներորդ որ պահեն զօրէնս և ընդունին զմարգարէս, և մի Աստուած՝ մի անձն դաւանին, և զյարութիւն գրոցն ոչ խմանան (2) ։

Յիննեւտասն ամին Տիբերեայ կայսեր առաքեաց Աբգար Հայոց արքայն առ Յիսուս թուղթ աղաչանաց 'ի ձեռն Անանիայի (Անանէի) հաւատարմին իւրոյ, աշխատել և գալ առ նա, և լինել թագաւորակից նմա. և հաւատաց 'ի նա և երկրպագեաց նմա յառաջ քան զչարչարանսն: Եւ Յիսուս գրեաց պատասխանի և երանեաց զԱբգար, և խոստացաւ յետ յարութեան իւրոյ առաքել նմա քարոզ և պատճառ կենաց զմի յաշակերտաց իւրոց: Իսկ նա վասն ջերմութեան սիրոյն զոր ունէր առ Տէր մեր, առաքեաց դարձեալ զՅովհաննէս նկարագիր (1), փութել և բերել զպատկեր նորա, զի գտեալ յայնմանէ վայելեսցէ: Եւ գնացեալ Յովհաննէս ոչ կարէր հաւասարել վայելչութեան գեղոյ նորա, այլ և փոփոխէր փառաց 'ի փառս. և հիանայր նկարիչն: Եւ ապա ողորմութեան և գթութեան աղբիւրն խնդրեաց զդաստառակն և ետ 'ի վերայ երեսացն. և նկարեցաւ տիպն 'ի հանդերձեղէնն: Եւ էր այս յառաջ քան զչարչարանսն քսան և չորս աւուրբք. և բերաւ և տուաւ Աբգարու: Եւ մեծամեծ հրաշք և սքանչելիք լինէին 'ի նմանէ, մինչև եկն Թադէոս առաքեալն: Ի նոյն ամի խաչեւ մեռաւ Տէրն և թաղեցաւ, և յարուցեալ երեւեցաւ աշակերտաց իւրոց, և հաստատեալ օրհնեաց զնոսա՝ խոստանալով զՀոգին սուրբ. և ինքն համբարձաւ յերկինս: Եւ 'ի նոյն ամի յաւուր Պենտեկոստէին Պիղատոս զպատկեր կայսերն եմոյծ 'ի Տաճարն, որպէս Յովսեպոս գրեաց, և յայնժամ եղեալ ձայն 'ի շնորհացն որ կայր անդ, ասէին. "Գընամք աստի, գնամք. և այլ ոչ եւս դառնամք:" Յիշէ զայս և Փիլոն յերկրորդ գիրքն իւր:

---

(1) Յովսեպոս, Յդ· պատերազ· Հր· Գիրք Բ· Գլ· Ը ։

(2) Յովսեպոս 'ի գիրս իւր Յդ· պատերազ· Հր· չորեսին աղանդս և եթ յիշատակէ, զՓարիսեցւոց, զՍադուկեցւոց, զԵսսենանց, և զՅուդայի գալիլեացւոյ որ յորդորէր զՀրեայս ոչ տալ հարկս կայսեր. նոյնպէս ասա ազատամտութիւն գովել, և ձկտումն նոցին 'ի վնաս կայսերական գանձուն, պատժեցան 'ի Հռոմայեցւոց ։

---

(1) Մովսէս Խորենացի (Բ. 29) և այլք. ասեն եթէ յառաջնում նուագի յառաքել Աբգարու զԱնանէ պատուիրեաց նմա հանել և զպատկերն Յիսուսի. իսկ զերկրորդ գնացողն ոչինչ յիշատակեն. և անունդ Յովհաննէս 'ի Յայսմաւուրս (Օգոս. 16) և եթ գտանի յիշատակեալ, թերևս 'ի նոյն գրոց Միխայելի առեալ:

Եւ Եգրիպպաս գնաց 'ի Հռոմ ամբաստան զՀերոդէսէ հօրեղբօրէ իւրմէ, և ըմբռնեցաւ 'ի Տիբերեայ (1): Առ սա առաքեաց Աբգար արքայ Հայոց երկիցս անգամ վասն Քրիստոսի աստուածութեանն, եւ տրտունջ զՀրէից. գրեաց և 'ի Բաբելոն առ Ներսէհ, գրեաց և առ Պարսից թագաւորն (2): Եւ եղեւ այս 'ի խնամոցն Աստուծոյ, զի 'ի նորութեան հաւատոյն հակառակութիւն մի լիցի, և վասն այսորիկ զառաջինն առանց ընդդիմութեան տարածեցաւ սուրբ Աւետարանն, և թուեաւ վաղվաղակի ժամանակ այսր թագաւորաց, որք ոչ հակառակէին վասն Քրիստոսի աստուածութե̄ն, խրատեալք 'ի յԱբգարու արքայէ, յառաջեալ և նախապատիւ Թագաւորէ, որ առաջին ձեռն ետ ՚ի Քրիստոս՝ որպէս ասաց Դաւիթ: Եւ Տիբեր կեցեալ եւթանասուն և ութ ամ և Թագաւորեալ քսան և երեք ամ՝ մեռաւ:

---

(1) Յովսեպոս. Յղ. պատեր. Հր. Գիրք Բ. Գլ. ԺԱ.

(2) Մովսէս Խոր. Բ. 30.

Եւ Հերովդէս Թագաւորեաց քսան և երեք ամ, այն որ սպան զՅովհաննէս և ՚ի Տեառնէ պատուհասեցաւ. Հերովդիաւ կնաւ իւրով, եդեալ ՚ի բանտի կապանօք ՚ի Պաւանիա (Սպանիա), և անդէն սպանան երկոքեան (1): Եւ զկնի Տիբերի Գայիոս Թագաւորեաց, և եհան ՚ի կապանաց զԱգրիպպաս, և եդ զնա Թագաւոր Հրէից: Ի սոյն ժամանակի առաքեցաւ դատաւոր Փելիքս (2) յԵգիպտոս, և սա յոյժ նեղէր զՀրեայսն ամս հինգ, և զտեղի պաշտամանն նոցա պղծէր անսուրբ զոհիւք. և վասն այսր պատճառի առաքեցին դեսպանս առ Գայիոս աղաչել ըզնա, յորոց մի էր և Փիլոն փիլիսոփայ եբրայեցի յԱղէքսանդրէ, և ոչ լուաւ նոցա, այլ և առաքեաց ՚ի Պատրանիա (3) իշխանն Ասորւոց դնել զպատկերն իւր յամենայն մեհեա-

---

(1) Յովսեպոս (անդ), ուր ասէ. Հերովդէս որ ՚ի Հռոմ գնացեալ էր դատ վարել ընդդէմ Ագրիպպայ յանդիմանեալ ՚ի Գայիոսէ. փախստական լինի ՚ի Սպանիա, և անդ ընդ Հերովդիաւ կնաւ իւրով վախճանի ՚ի պանդխտութեան:

(2) Եւսեբիոս (Քրոն. յէր. 268) Փղակոս Աւուղիոս զսա անուանէ:

(3) Եւսեբիոս (անդ), Պետրոն կամ Պետրոնիա անուանէ զիշխանն Ասորւոց:

նըս, և 'ի տաճարս Հրէից պաշտել աստուածս (1). և աստ կատարեցաւ ասացեալն 'ի Դանիէլէ "Պղծութիւն աւերածոյն (2) :"

Յայսմ ժամանակի Սիմոն և Կերինդոս և Մենանդրոս (3) երևեցան : Եւ յայսմ ժամանակի Փիլոն և Պետրոս (առաքեալ) հանդիպեցան միմեանց 'ի Հռոմ, և խօսեցան ընդ իրեարս առաջի Գայիոսի : Եւ հարցեալ Փիլոնի զՅովհաննէս աշակերտն Քրիստոսի, թէ "Ո՞ ինչ է Աստուած." և պատասխանի տուեալ Յովհաննէս ասէ. "Սէր է Աստուած :" Եւ Փիլոնի հաւանեալ տարաւ 'ի տունն իւր արարեալ սէր. և հաւատացեալ մկրտեցաւ : Իսկ Գայիոս վասն կարի խըստութեանն սպանաւ 'ի ներքինեաց միջէ, թագաւորեալ ամս չորս : Եւ թագաւորեաց Կղօդիոս ամս չորեքտասան : Եւ Ներոնպաս թագաւորեալ ամս եւթն, և կացեալ չորրորդապետ ամս երկու, որ և այս առ զՀերովդէին հարուած, և եհար զնա հրեշտակ Աստուծոյ և մեռաւ :

---

(1) Յովսեպոս 'ի գիրս Յհ. պատեր. Հր. Գիրք Բ. Գլ. ԺԲ. *մանրամասն պատմէ զանցս. և զաստափիկ հրամանն Գայիոսի, որոյ և մահ պատահեցեալ Պետրոնեայ վասն հեզաբար չարժելոյ 'ի կատարումն ամբարիշտ հրամանացն, և քան զդատապարտութեան վճիռն՝ վաղ հասեալ առ նա լուր մահուան կայսերն, ազատի 'ի տարապարտ կորստենէ :*

(2) Դանիէլ. Թ. 27 :

(3) Եւսեբիոս. Պատմ. Եկեղ. Գ. 26. 28 :

Յամն Կղօդեայ 'ի տօնի Զատկին յանկարծ եղեւ ամբոխ յԵրուսաղէմ 'ի Տաճարին. և կոխեալ զմիմեանս մեռան երեսուն հազար անձինք։ Եւ Կղօդիոս կացոյց թագաւոր Հրէից զԱգրիպպաս որդի Ագրիպպայ, և ըզՓելիքս առաքեաց դատաւոր Գալիլեացւոց և Սամարացւոց։ Եւ թագաւորեալ Կղօդիոս ամս երեքտասան, մեռաւ 'ի տան իւրոյ։ Եւ առ զթագաւորութիւնն Ներոն ամս երեքտասան։ Եւ սա առաքեաց զՓեստոս և եհան զՓելիքս, որոյ առաջի եկաց Պաւղոս։ Եւ դարձեալ եհան Ներոն զՓեստոս, և եդ 'ի տեղի նորա զԱլբինոս (1). և զայս ևս եհան և եդ զՓլորոս. և յաւուրս սորա ապստամբեցին Հրեայք 'ի կայսերէ։ Յայսմ ժամանակի անկաւ հուր յերկնից 'ի Հռոմ. և այրեաց շինուածս բազումս, և ամբոխ մարդկան ընդ նոսա։ Իսկ Ներոն յերեքտասան ամին իւրոյ յարոյց հալածանս եկեղեցւոյ, և սպան զՊաւղոս։ Եւ առաքեաց յԵրուսաղէմ զՎեսպիանոս և զՏիտոս որդի նորա վասն ապստամբութեանն Հրէից։

Եւ 'ի Յուդբուդա (Յովդապատ) քաղաքի ամրացեալ էր Յովսեպոս զօրավար և պատմագիր (2). և չոգաւ Վեսպիանոս և էառ ըզքաղաքն Յոտապատա, և կոտորէր զնա. և զօրավարն Յովսէպոս երթեալ ընդ առաջ ասէ. «Աւետեմ քեզ Վեսպիանէ, զի փութով վճարի Ներոն և թագաւորես 'ի տեղի նորա.» և վասն այնորիկ ոչ սպան զնա (1): Եւ Ներոն սատեցեալ յամենեցունց սպան զանձն իւր, և թագաւորեաց Գալպաս (Գալբա) ամիս եւթն, և սպանաւ 'ի մէջ Հռոմայ: Եւ Սուբատոլոս (2) թագաւորեաց 'ի Գերմանիա, և Աւթոն (Օթոն) 'ի Հռոմ. որ և զկնի երից ամսոց սպան զինքն: Եւ թագաւորեաց Բիտալիոս (Բիտելլիոս) ամիս ութ. և եղեալ ամբոխ 'ի վերայ նորա սպանին զնա: Եւ այս համբաւ հասեալ 'ի Վեսպիանոսի զօրքն որ ընդ նմա, թագաւորեցին զնա թագաւոր և Տուկարտոր: Եւ ինքն Վեսպիանոս յորժամ ե-

---

(1) Յովսեպոս Ալբինոս զսա անուանէ, որոյ գործ անիրաւութեան գրեալ կան 'ի գիրս, Յղ. պատեր. Հր. Գիրք Բ. Գլ. ԺԶ։—Եւսեբի. Քրոն. յեր. 270։

(2) Նա ինքն է Յովսեպոս Փլաւիոս հեղինակն գրոց Հնու-

թեանց Հրէից. և Պատմութեան պատերազմաց Հրէից:

(1) Յովսեպոս Յր. պտմ. Հր. Գիրք Գ. Գլ. ԺԳ:— Եւսեբի. Քրոն. յեր. 272:

(2) Զ Սուբատոլոս ոչ ուրեք առ պատմագիրս գտանեմք յանուանէ յիշատակեալ 'ի շարս կայսերաց զկնի Ներոնի իշխել Հռոմայ: Այլ հայեցեալ 'ի գիրս Եւսեբեայ 'ի Քրոնիկոնին, յեր. 274, նոյն կարգաւ գտանեմք և Միխայելի պատմել և սխալմամբ Սուբատոլոս փոխանակ Բիտելլիոսի եդեալ. քանզի յայտ է անմիջապէս որպէս Եւսեբիոս՝ զտեղի թագաւորելոյ նորին, այն է Գերմանիա: Իսկ զի յետ Օթոնի դնէ սպանանելն և զԲիտուլլոս, որ նա ինքն է Բիտալիոս, զայս համարիմ յայլմէ պատմագրէ առեալ Միխայելի և ոչ յԵւսեբեայ, համարելով զնա այլ ոք լինել քան զԲիտալիոս:— Յովսեպոս. Յր. պտմ. Հր. Գիրք. Ե. Գլ. Զ:

զեւ այս նմա, թողեալ զորդին Տիտոս 'ի վերայ Երուսաղէմի՝ և ինքն գնաց յԵգիպտոս, և հնազանդեաց ինքեան զկողմանսն զայնոսիկ. և այնր կողմամբ գնաց ծովով 'ի Հռոմ, և թագաւորեաց 'ի վերայ նոցա ամս ինն և ամիս մետասան :

Եւ Տիտոս էառ զԵրուսաղէմ 'ի Զատկի տօնին, և հարիւր քսանևմեկ բիւր Հրէայք կորեան. և քակեցաւ Երուսաղէմ զյետին աւերն, և այրեցաւ Տաճարն յահկի ամսեան: Ի նմին ամի յԱդամայ հինգ հազար չորեքհարիւր երեսուն և ութն. և 'ի յարութենէ Տեառն մերոյ ամք քառասուն. և յառաջին շինուածէն մինչեւ 'ի յետին աւերն՝ երկու հազար հարիւր իննսուն և երկու ամ: Եւ յերրորդ ամին Վեսպիանոսի առաւ Երուսաղէմ. և մինչ գաղթեցան, յԵրուսաղէմ էին երեքհարիւր բիւր. և յայն Զատկին որ ժողովեցան, ածաւ 'ի զենումն Զատկին քսանևհինգ բիւր գառինս(1), և զամեն գառն տասն այր ճաշակէին սուրբքն, և անսուրբքն ոչ կարէին ուտել. և որ կերանն, էին երկերիւր և տասն բիւր. վեց բիւր սրով մեռան, և հարիւր տասն բիւր սովով, և տասն բիւր գերի վարեցան: Եւ 'ի հնգետասանամենից 'ի վեր յԵգիպտոս առաքեցին յաղիւսագործութ̃ի, և 'ի հնգետասանամենէ 'ի վայր՝ բաժանեցան զօրացն: Եւ զայս քառասուն ամ ետ Աստուած ժամանակ ապաշխարութեան, և յորժամ ոչ զղջացան, խնդրեցաւ վրէժ արեան Որդւոյն Աստուծոյ: Եւ աստ բարձաւ թագաւորութիւնն Հրէից, և մնաց միայն թագաւորութիւնն Հռոմայ յամենայն աշխարհի, բաց 'ի Հայոց որ կային և նոցա թագաւորք:

---

(1) Ի հայ *թարգմանութեան* Յովսեպոսի Յղ. պատեր. Հր Գիրք Է. 17.) *քանզի չունիմք 'ի ձեռին զբնագիրն, գնէ քսան և հինգ բիւր՝ վեց հազար և հինգ հարիւր գառինս,* 256.500. *և բազմապատկեալ* 10*իւ՝ գնէ* ՄՀ (270) *բիւրս, որ առնէ* 2.700.000. *փոխանակ գնելոյ* 2.565.000: Իսկ *առ 'ի թարգմանութեան* Միխայէլի *գրոցն գնի հարիւր տասն բիւր՝ փոխանակ հարիւր տասնի, որ առնէ* 2.500.000. *և տարբերութիւնն ծագի 'ի թուոյ* 6500 *գառանցն զորոց զանց արարեալ է* Միխայէլ:— Եւսեբ. Քրոն. յեր. 274.

Զկնի Վեսպիանոսի թագաւորեաց Տիտոս որդի նորա: Եւ յերկրորդ ամի սորա Աստուած քարոզեցաւ 'ի զօրացն, և կարծեաց նա 'ի միտս իւր ամբարտաւանեալ, և եհար զնա հրեշտակ Տեառն և մեռաւ: Եւ թագաւորեաց եղբայր նորա Դոմետիանոս՝ ամս հնգետասան և ամիս հինգ: Սա հալածեաց 'ի Հռոմայ զամենայն աստեղագէտ և զկախարդ. և սա հրամայեաց այլ այգի ոչ տնկել(1): Յայսմ ժամանակի աճեաց քրիստոնէութիւնն. և եհարց Պատրուքուլոս զվարդապետն իւր Րուփինոս, թէ ի՞նչ նշանակէ այսքան բազմութեան հաւատալ 'ի խաչեալ այր մի, որ և Թէոդորոս իմաստապետն Աթենացւոց և Ափրիկանոս աղէքսանդրացի և Մարտինոս իքալթու (հիպատոս) հաւատացին 'ի նա, թողեալ զվայելչութիւն աշխարհիս: Նա պատասխանի և ասէ. "Մի՛ զարմանար ընդ այդ, զի կարծեմ թէ և աստուածքն հնազանդին նմա:" Եւ նա ասէ. "որպէս." և ասէ ցնա. "Զի անախտութիւն և անմեղութիւն և անբծութիւն է քաղցրութիւն նորա. յայտ է զի 'ի վեր է քան զամենեցուն քաղցր այդ:"

---

(1) « Դոմետիանոս զուսողս և զփիլիսոփայս Հռոմայեցւոց մերժեաց: » Եւսեբ. Քրոն. յեր. 276: — « Հրաման ետ կայսր 'ի քաղաքս որթ մի՛ տնկել: » Անդ. 278:

Յայսմ ժամանակի Ապողոնիոս տիւանեցի չինեաց տաճար բագուց դիւական զօրութեամբ, և ասաց. "Աւա՛ղ, զի որդին Մարիամու կանխեաց քան զիս: Զի ես կամէի հնազանդել աշխարհ 'ի ձեռն արուեստիս իմոյ:" Իսկ Դոմետիանոս վասն խստութեան սրտի իւրոյ սպանաւ, և բարձան ազգն Վեսպիանէի: Եւ թագաւորեաց Ներուաս ամ մի, և Աստուած քարոզեցաւ 'ի սինկղիտոսէն, և ապականեցաւ հիւանդութեամբ և մեռաւ (1): Եւ թագաւորեաց Տրայիանոս ամս քննեւտան։ Սա հալածէր զքրիստոնեայս. և Շմաւոն Կղէոպեանց Երուսաղեմի եպիսկոպոսն և Իգնատիոս Անտիոքու եպիսկոպոսն կատարեցան 'ի Քրիստոս։ Իսկ Պլինիոս Սեկունդոս (1) հրամանաւ Թագաւորին բազումս կոտորեաց 'ի քրիստոնէից. և զղջացեալ գրեաց առ Տրայիանոս, թէ "Քրիստոնէից ամենայն ինչ բարի է. բայց կռոց ոչ զոհեն, և ընդ առաւօտս Քրիստոսի երկրպագեն։" Իսկ նա գրեաց թէ՝ ջնջեա զդոսա (2)։

---

(1) "Ներուաս յախտէ ապականեցաւ 'ի Սաղուստեան բուրաստանին:" — "Սինկղիտոսն զՆերուաս աստուած համարեցաւ:" Եւսեբ. Քրոն. յեր. 280:

Յայսմ ժամանակի ապստամբեցին Հրեայքն յԵգիպտոս, և եդին Թագաւոր իւրեանց անուն Լուկիաս, որ և առեալ ընդ Հրեայսն եկն յԵրուսաղէմ. և առաքեաց Տրայիանոս զԼուսիոս, և կոտորեաց զբիւրս 'ի նոցանէ, վասն այնորիկ մնաց Լուսիոս իշխան Հրէիցն (3)։ Յայսմ ժամանակի Հրեայքն որ 'ի Կիպրոս կռուեցան 'ի վերայ Սազամինայ քաղաքի, և առեալ զքաղաքն կոտորեցին զՅոյնսն որ ՚ի նմա: Նոյնպէս և Հրեայքն որ ՚ի Լիբիա՝ մարտեան ընդ Յոյնսն և կռուէին. և Յոյնք որ յԱղեքսանդրէա և ՚ի Կիւրինէական աշխարհն, պատերազմ յարուցին և կոտորեցան ՚ի նոցանէ: Յայսմ ժամանակի երեւեցաւ Սեկունդոս իմաստասէր լռակեացն: Զկնի Տրայիանոսի թագաւորեաց Ադրիանոս՝ ամս քսան և մի:

---

(1) Ամենայն օրինակք Թարգմանութեանցն երկոցունց ունին Սինկղիտոս փոխանակ Սեկունդոսի, որպէս ունի Եւսեբիոս 'ի Քրոնիկոնին՝ յեր. 280։

(2) Եւսեբի. Պատմ. Եկեղ. Գ. 33. ուր այսպէս 'ի մէջ բերէ զպատասխանին Տրայիանոսի. "Տոհմն քրիստոնէից անխտիր մի խնդրեսցին 'ի մահ, բայց եթէ դէպ ումեք լիցի դատեսցի։"

(3) Օրինակս մեր համաձայն Եւսեբեայ խօսի զապստամբութենէ Հրէիցն. իսկ միւս Թարգմանութիւնն չփոխէ ունի զբանն և զԼուսիայ ոչինչ յիշատակէ։ Եւսեբիոս, Քրոն. յեր. 282։ Պատմ. Եկեղ. Դ. 2. ուր ասէ, թէ էր իշխան

Ի չորրորդ ամի նորա թագաւորքն Հայոց որ յՈւռհա, բարձան, և լինէին անդ իշխանք. և մնաց ՚ի մեծն Հայք թագաւորութիւն: Յութևտասն ամին Ադրիանու դարձեալ ապստամբեցին Հրեայքն յԵրուսաղէմ՝ խաբեալ յառնէ միոջէ որ անուանէր Աստղ(1): Եւ առաքեաց Ադրիանոս կոտորեաց զնոսա, և հալածեաց յԵրուսաղեմէ զՀրեայսն, որ հայիլ անգամ ոչ իշխէին ՚ի կողմն Երուսաղեմի: Եւ զԵրուսաղէմ քանդեաց. և առընթեր Երուսաղեմի շինեաց

՚ի վերայ ամենայն եգիպտացւոց (Հրէից) Ղապապոս անուն ոմն:

(1) Եւսեբի (Պատմ. եկեղ. Դ. 6.) անուանէ Բարքոքեբայ կամ Բարքոխեբայ. Աստեղորդի, այլ իրօք՝ էր այր սպանող և աւազակ. Եւ առաքեալ ընդդէմ նորա յԱդրիանոսէ Յուլիոս Սեւերոս, որ պաշարեալ ժամանակս բազումս զտեղի ապաւինի նորա, յաղթեաց և սպան զնա. և ամենայն Հրեայք ՚ի բաց մերժեցան ՚ի կողմանց Երուսաղեմի ընդ պատժով մահու:

քաղաք մի Իլիոս Ադրիանոս, և բնակեցոյց քրիստոնեայս և հեթանոսս, և սահմանեաց կտրել զականջս Հրէիցն ուր և իցեն՝ զի նշանաւորք լինիցին ։ Եւ սա սահմանեաց առանց այլ պատճառի վասն քրիստոնէութեան չհալածել զնոսա ։ Ի քսան և մի ամին սորա ժողով եղեւ առաջին 'ի Նիկիա, քառասուն և երեք եպիսկոպոսօք, և նզովեցին զՍաբէլ լիբէացին, որ ասաց թէ մի անձն է սուրբ Երրորդութիւնն ։ Եւ նզովեցին զՎաղէնտիանոս որ ասաց՝ յերկնից բերել զմարմինն ։ Յաւուրս սորա էր Ակիւղաս թարգմանիչ (1) ։

Զկնի Ադրիանոսի թագաւորեաց Տիտոս Անտոնինոս, որ կոչեցաւ Սեբաստոս և Արդար և որդիք իւր ընդ նմա՝ ամս քսան և երկու ։ Եւ Անտոնինոս հայր աշխարհի թարգմանի (2) ։ Ի սորա ժամանակս Յուստիանոս Նիկապօլսեցի, որ կայ առընթեր Երուսաղեմի,

---

(1) Ակիւղաս էր պոնտացի, ազգական Ադրիանոսի կայսեր, որ ընկալաւ զքրիստոնէութիւն, և 'ի մերժիլն յեկեղեցւոյն վասն յաստեղագիտութիւն պարապելոյ, դարձաւ 'ի Հրէութիւն, և թարգմանեաց զԱստուածաշունչ գիրս 'ի յոյն լեզու ։ Ս. Եպիփան ։ Վարդան 'ի Յառաջաբան. Սաղմ. Մեկնութեանն ։

(2) Այսպէս կոչեցաւ և Ադրիանոս վասն պէսպէս պարգեւաց և բարեաց զոր ցուցանէին ժողովրդեանն ։ Եւ զՀայր անունն դրոշմէին 'ի սկիզբն հրովարտակաց իւրեանց և 'ի վերայ դրամոյն ։ Եւսեբի. Քրոն. յէր. 584. 286 ։

գնաց 'ի Հռոմ և ետ թուղթ աղաչանաց առ Թագաւորն, և դադարեցաւ հալածանքն քրիստոնէից(1)։ *Ի սորա ժամանակս կատարեցաւ Պօղիկարպոս եպիսկոպոսն Զմիւռնիոյ*(2)։ *Եւ աստ երևեցան Կերդոն, որ նա ինքն է Մարկիոն, և Մարկոս*(3) *եկեալ 'ի Հռոմ, ասացին ոչ գոլ յարութիւն. և զօրէնս չար ասացին, և ոչ ասացին զՅիսուս որդի այնմ որ օրէնքն և մարգարէիւքն քարոզեցաւ, այլ աներևելոյն և բարերարին որդի. և էին կախարդք. և 'ի վերայ մկրտելոյն ասէին՝ յանուն հօր աներևելոյն, և յանուն մօր Ճշմարտի, և յանուն որդւոյն որ էջ 'ի վերայ Յիսուսի։ Եւ այլ անուանս տաղէին։*

Ի *թուին* Նորոց ՆՀԵ (475) *թագաւո-*

---

(1) Յուստինոս է 'ի Նէապօլիս քաղաքէ (Նապլուս) ծնեալ յամի իբր 114. 'ի հեթանոս ծնողաց. և հետևող Պղատոնեան վարդապետութեան։ Յերեսներորդ ամի կենացն՝ դարձեալ 'ի քրիստոնէութիւն վկայեաց վասն հաւատոյն 'ի Հռոմ քաղաքի յամի 168. ամբաստանեալ 'ի Կրեսկէս կիւնիկեան փիլիսոփայէ։ Ունի զանազան մատենագրութիւնս. գրեաց նա և գիր ջատագովութեան զքրիստոնէից առ կայսրն։ Եւսեբի. Քրոն. յեր. 286. 288։

(2) Եւսեբիոս. Քրոն. յեր. 288։

(3) Կերդոն ազգաւ Ասորի, և Մարկիոն աշակերտ նորա, որ եկաց գլուխ աղանդոյն Մարկիոնացւոց։ Իսկ Մարկոս էր աշակերտ Վաղենտինոսի հերետիկոսի։ Եւսեբ. Քրոն. յեր. 286. ուր զՎաղենտինոսէ ասէ, հասին 'ի Հռոմ յեպիսկոպոսութեան Հիւգինեայ։

րեաց Մարկոս Աւրեղիոս ընդ որդիս Անտոնինոս և Լուկիոս՝ ամս իննևտասն (1) ։ Ի յառաջին ամին սոցա Վաղքէշ (Վաղարշ) Թագաւորեալ Պարսից եկն յաշխարհն Հռոմայ, և բազում գաւառս աւերեաց. և եկին ընդդէմ նորա Անտոնինոս և Լուկիոս եղբարք, և հնազանդեցին զՊարթևս և զՊարսս. և Լուկիոս զօրացեալ կայսր անուանեցաւ ընդ եղբարս իւր (2) ։ Եւ եղեւ այլ պատերազմ ընդ Հռոմայեցիս և ընդ Գերմանացիս և ընդ Կարուտացիս և ընդ Սարմատացիս և ընդ Գալլիեա (3) ։ Եւ դարձեալ զօրացաւ Լուկիոս. և անուանեցաւ Եւփակարփոր ։ Եւ սա թագաւորեալ ամս ինն՝ և մեռաւ ։ Եւ Անտոնինոս առ ընկեր թագաւորութեան իւրոյ զԿոմիդոս որդի իւր, զի նեղէին զնա չքնաղկայքն. և Անտոնինոս հիւանդացեալ մեռանէր ։ Եւ Կոմիդոս թագաւորեալ ամս երեքտասան՝ և խեղդեցաւ ՚ի տան ձիոց (1) ։ Եւ զկնի նորա թագաւորեաց Պերտենաքս՝ վեց ամիս, և սպանաւ ։ Եւ թագաւորեաց Սուրինոս (Սեւերոս) ամս ութևտասան ։ Եւ յառաջին ամին նորա եղեւ պատերազմ մեծ ընդ Հրէայս և ընդ Սամարացիս ․ և յինն ամին յարոյց հալածանս քրիստոնէից, և բազումք վկայեցին ։

---

(1) Անտոնինոս՝ որ կոչէր Մարկոս Ղուկիոս (Լուսիոս) Հեղիոս Աւրեղիոս Կոմոդոս Անտոնինոս, էր որդի Մարկոսի Աւրեղիանոսի. իսկ Ղուկիոս Վերոս կամ Բերոս էր եղբայր նորին՝ որ ընդ իւր թագաւորեցոյց. և որդին իւր Կոմոդոս թագաւորեաց զկնի Ղուկիոսի Վերոսի յամի 180 ։

(2) Եւսեբիոս. Քրոն. յեր. 288 ։

(3) Եւսեբիոս (Քրոն. յեր 290) ուղղէ զանուանս ազգացն ընդ որս պատերազմեցան Հռոմայեցիք. "Հռոմայեցւոց պատերազմ՝ յարեաւ ընդ Գերմանացիս, ընդ Դակս և ընդ Սարմատս և ընդ Կուադս ։ Գալլիեա յայտնի սխալ է օրինակողաց. յօրինակս միւս թարգմանութեան գրի Գալլէնացիս ։

Յաւուրս սորա յարեւմտից հիւսիսոյ ել ազգ մի բարբարոս (2), և գնաց ընդդէմ նորա Սուրինոս և սպանաւ (3) ։ Եւ թագաւորեաց Անտոնինոս (Կարակալլա) որդի իւր՝ ամս եւթն ։ Սա դարձոյց զաքսորեալսն վասն հաւատոյ, և էր մի ՚ի նոցանէ Աղեքսանդր (եպիսկոպոս) Երուսաղէմի ․ և Անտոնինոս սպանաւ ՚ի Միջագետս ՚ի մէջ Ուռհայոց և Խառանայ (4) ։ Եւ թագաւորեաց Մակար ամ մի և սպանաւ (5)։ Եւ թագաւորեաց Անտոնինոս ամս չորս ։ Ի ժամանակս նորա շինեցաւ Նիկոպօլիս ՚ի Փղշտացւոց աշխարհին։

---

(1) Եւսեբիոս՝ հեղձեալ յանկարծակի վախճանեցաւ, ասէ, ՚ի յապարանսն Բեստիլիանոսի ։ Քրոն․ յեր․ 294 ։

(2) Մովսէս խորեն․ Բ․ 62 ։ Ստեփ․ Ասողիկ Ա․ 6 ։

(3) Եւսեբիոս Քրոն․ յեր․ 294 ։

(4) Անտոնինոս Կարակալլա մինչդեռ յԱսիա էր, յարձակեցաւ. և ՚ի վերայ Արտաւանայ Պարսից թագաւորին և մեռաւ ՚ի պատերազմի, որպէս յիշատակէ և Մովսէս խորենացի․ Բ․ 72 ։

(5) Այն է Մակրինոս ըստ Եւսեբեայ ։ Քրոն․ յեր․ 296 ։

որ է Նմաւուս (1)։ Եւ յետ սորա թագաւորեաց Աղէքսանդր Մամեայ՝ որդի երկիւղած և հաւատացեալ կնոջ, որ և շատ օգնում արար քրիստոնէից։ Ի յերրորդ ամի սորա և 'ի ՂԽԲ (542) *թուին թագաւորեաց Պարսից Արտաշիր որդի Բաբակայ (2), որ է սկիզբն թագաւորութեան Պարսից, որ տեւեաց ամս չորեքհարիւր ութևտասն, որ և Սասանեանք կոչին։ Եւ կացին զկնի միմեանց թագաւորք քան և ութն, մինչև յարեաւ թագաւորութիւնն Արաբացւոց Մահմետիւ և եբարձ զնա։*

Զկնի Աղէքսանդրի թագաւորեաց Փիլիպպոս ամս եւթն (3), և խաղաղացան քրիստոնեայք։ Եւ յառաջին ամին նորա թագաւորեաց Պարսից Շապուհ որդի Արտաշրի՝ ամս երեսուն և մի։ Յայսմ ժամանակի հազար ամ շինութիւնն Հռոմայ լցաւ։ Եւ Դուգիոս (Դեկոս) սպան զՓիլիպպոս և զոր-

---

(1) Եւսեբիոս, Քրոն. յեր. 296։

(2) *Յետ կործանելոյ Արտաւանայ զպարթեւական Տէրութիւնն և զկեանս իւր 'ի ձեռն Արտաշրի որդւոյ Բաբակայ կամ ըստ այլոց՝ Սասանայ, սկսաւ սա ինքն Արտաշիր թագաւորել 'ի վերայ Պարսից՝ կանգնելով զՍասանեան հարստութիւնն յամի փրկչին* 226։ *Ագաթանգեղոս։—Մովսէս Խոր. Բ.* 64։—*Միք. Չամչ. Հա. Ա. յեր.* 361։

(3) *Եւսեբիոս զկնի Աղէքսանդրի յիշատակէ զՄաքսիմինոս, որ եկաց յաթոռն ամս երիս. որում յաջորդեաց Գորդիանոս՝ ամս վեց. և ապա Փիլիպպոս։ Քրոն. յեր.* 298։

դին իւր և թագաւորեաց ամ մի, և սպանաւ 'ի Ներուդոս(1) *և թագաւորեցին Բուրոս և Գամուրինոս, և Գաղոս և Բաղոս ամ մի. և թագաւորեցին Ուլերիանոս և Գաղերոս ամս հնգետասան* (2). *և յարուցին հալածանս եկեղեցւոյ: Եւ Շապուհ թագաւորն Պարսից աւերեաց զԱսորիս և զԿիլիկիա և զԿապադովկիա գերութեամբ* (3) : *Եւ Գոթացիքն անցեալ ընդ Տանաւիս գետ՝ գերեցին զաշխարհն և աւարին: Յայնժամ Գաղերիոս դադարեաց 'ի հալածելոյ զեկեղեցի Աստուծոյ, և 'ի շնորհաց Աստուծոյ աճեաց հաւատս սքանչելեօք 'ի ձեռն սրբոց արանց. և զի առնոյր Աստուած վրէժս 'ի թշնամեացն ճշմարտութեան 'ի հալածիչ թագաւորացն:*

Ի թուին ՇՁԸ (588) *թագաւորեաց Կաղատիոս (Կլօդիոս) ամ մի. և յետ նորա թագաւորեաց Աւրելիոս (Աւրեղիանոս) ամս* վեց և ամիս վեց ։ Սա շինեաց պարիսպ մի այլ Հռոմայ . և սա յարոյց հալածանս , և շանթահար եղեալ մեռաւ , և դադարեաց հալածումն , և թագաւորեաց Տարտիանոս (Տակիտոս) ամս վեց . և սպանաւ 'ի Պոնտոս , և թագաւորեաց Պուլիրիանոս (Փլորիանոս) և սպանաւ 'ի Տարսոն Կիլիկիոյ(1)։ Իսկ Պարսից թագաւորեաց Որմիզդ ։

---

(1) *«Դեկոս զՓիլիպպոս հանդերձ որդւովն սպանանէ. և վասն նորա քինին և մերումն եւս կարգի հալածանս (քրիստոնէից) յարոյց: Դեկոս հանդերձ որդւովն յԱբրիտոս սպանանի»: Եւսեբ. Քրոն. յեր.* 298:

(2) *Բուրոս կամ Բալոս Հերեննիոս, և Գամուրինոս՝ որ է Հոստիլիանոս ոչ յիշատակին 'ի գիրս Եւսեբեայ. այլ զկնի Դեկոսի դնին Գաղղոս և Վողուսիանոս, զոր Միխայէլ Բաղոս կոչէ. ապա Վաղերիանոս և Գաղիանոս: Քրոն. յեր.* 298. 300:

(3) *Մովսէս խորեն. Բ.* 74:

Ի թուին ՇՂԳ (593) ծնաւ Կոստանդիանոս ։ Իսկ զկնի Պուլիրիանոսի թագաւորեաց Պրոբոս ամս եւթն ։ Եւ 'ի նոյն ամի թագաւորեաց 'ի Պարս Վարհարան (Վահրամ) ամս երիս ։ Եւ յետ նորա Վարհան որդի իւր թագաւորեաց ամս հնգետասան ։ Իսկ սինկղիտոսն յորժամ կամէր ապստամբել 'ի Հռոմայ , ամրացոյց զԱնտիոք և սպանաւ ։ Եւ զկնի Պրոբեայ թագաւորեաց Կարոս և որդիք իւր Կարինոս և Նումիրինոս՝ ամս երկու(2)։ Եւ Կարոս մեռաւ 'ի Միջագետս , և Նումիրինոս սպանաւ յԱփրիկէ (Թրակէ)։ Եւ Կարինոս 'ի պատերազմի Դարմիացւոցն ըսպանաւ(3) ։ Եւ թագաւորեաց Դիոկղետիանոս . և աստի սկսանի թուականն թագաււորելոյ Դիոկղետիանոսի, որ է Նորուոց ՇՂԴ (594)։ Եւ զկնի Դիոկղետիանու թագաւորեցին Մաքսիմիանոս, զորոյ զդուստրն կին ունէր Դիոկղետիանոս. և Մաքսիմինտէս որդի Մաքսիմիանոսի թագաւորեաց ՚ի Հռովմ, և Կոստանդիանոս ՚ի Գաղլիա (1). սոքա ՚ի միում ժամանակի թագաւորեցին։ Դիոկղետիանոս և Մաքսիմիանոս ՚ի կողմն արեւելից վարէին զիշխանութիւնն միաբանութեամբ միմեանց։ Եւ յայսմ ժամանակի ապստամբեաց Եգիպտոս, և գնացեալ Հռոմայեցւոցն հնազանդեցուցին և զբազումս սպանին։ Ի մետասան ամին Դիոկղետիանոսի թագաւորեաց ՚ի Պարս Ներսեհ՝ ամս ութն, և զկնի նորա Որմիզդ որդի իւր՝ ամս հինգ։ Եւ ՚ի յիննևտասն ամին Դիոկղետիանոսի քակեցան եկեղեցիք և զօրացան հալածանք (2), և ընդ հալածմանն սով սաստիկ, մինչ մոթ մի ցորեանն երկու հազար հինգ հարիւր դրամ էր (3)։ Եւ վասն առաւել

---

(1) Եւսեբ . Քրոն. յեր. 300 ։—Մովսէս Խոր. Բ. 75։

(2) Եւսեբ. Քրոն. յեր. 302 ։—Մովսէս Խորեն. Բ. 76։— Սամուէլ։

(3) Եւսեբիոս որպէս և Մովսէս Խորենացի փոքր մի այլազգ պատմեն զմահ սոցա։ "Ի Կարայ վախճանելն 'ի Միջա-

---

գեսս, Նումերիանոսի առ նովաւ լինէր սպանանել ՚ի Թրակ. և Կարինոսի նոյնպէս ՚ի կռանակոյ պատերազմին։„ Քրոն. յեր. 302։ Մովսէս Խորեն. Բ. 76։ Իսկ Ապուլֆարաճ յաղագս մահուան Կարինոսի խօսելով՝ սպանաւ, ասէ, ՚ի պատերազմին ընդդէմ Գերմանացւոց, որով փոքր ինչ մերձենայ Գործացւոց բանին. սակայն զերկոցունց իսկ զմահուանն ուղղեն Եւսեբի և Խորենացին, որք ասեն ՚ի կռանակոյ հայկազնոյ սպանեալ։

(1) Յօրինակիս Գալիէլա։ (2) Եւսեբի, Պատմ. Եկեղ. Ը. 3։
(3) Եւսեբիոս, Պատմ. Եկեղ. Թ. 8։

ամբարշտութեան Դիոկղետիանու եհար ըզնա Աստուած, և նա յանձնեաց զթագաւորութիւնն 'ի Մաքսիմիանոս, որ ոչ էր պակաս չարեօք քան զնա ։ Եւ ինքն Դիոկղետիանոս ազգի ազգի ցաւօք նեղէր և տրորեցաւ . և գիտաց եթէ յԱստուծոյ էր հարուածն , և գրեաց թուղթ խաղաղութեան եկեղեցւոյ և շինութեան(1)։ Եւ Մաքսիմիանոս ոչ կամէր , և չկարաց լուծանել զհրամանն , այլ առ ժամանակ մի դադարեաց հալածումն(2) ։ Եւ դարձեալ ասաց թէ՝ “Աստուածքն հրամայեն չխափանել զհալածումն.” և սկսաւ հալածել և հանել 'ի քաղաքաց զքրիստոնեայս(3) , և խրատեցաւ աշխարհ երաշտով և տարաժամ մահու , որ զտասն մեռեալն 'ի գերեզման մի դնէին(4)։ Եւ խառացոյց պատերազմ ընդ Հայս , և եհաս նմա բարկութիւն , և դառն ցաւօք մեռաւ ։

Եւ յետ այսորիկ թագաւորեաց Կոստանդ հայրն Կոստանդիանոսի . և ունէր երկու կին , զՀեղինէ և զԹէոդորա դուստր Մաքսիմիանոսի ։ Եւ յութ ամի թագաւորութեան իւրում առ հաղորդ թագաւորութեան իւրոյ զԿոստանդիանոս որդին Հեղինեայ, որ և երեք ամ ընդ հօրն թագաւորեաց և մեռաւ հայրն. և ինքն Կոստանդիանոս թագաւորեաց 'ի ՈԻԳ (623)(1) թուին Հայոց: Յովհաննէս ասիացին ասէ. թէ հայրն Կոստանդիանոսի դարձաւ յաստուածպաշտութիւն, և Սեղբեստրոս զհայրն բժշկեաց 'ի քորոտութենէ. և Պետրոս և Պաւղոս երեւեալ Կոստայ՝ խրատեցին զնա կոչել զՍեղբեստրոս մկրտել զնա: Այսմ վկայէ Սոկրատ հռովմայեցի(2): Այլ Իգնատիոս մետինացին ասէ, թէ յորժամ թագաւորեաց Կոստանդ դիանոս, կային Թագաւորք Մաքսիմիանոս և միւս Մաքսիմիանոս (Մաքսիմոս), և Մաքսիմինդէս (Մաքսենտիոս) և Սեւերոս, և չորեքին հալածիչք էին . և ՚ի մեռանելն Սեւերեայ՝ իշխանքն նորա ետուն զԹագաւորութիւնն Կոստանդիանոսի, և կեսար քարոզեցին զԼիկիանէ փեսայ իւր ։ Եւ յետ եւթն ամի կալաւ Կոստանդիանոս Թագաւորութեանն իւրոյ հաղորդ զԼիկիանէ, որ և զաղտ հալածէր զքրիստոնեայս . յետոյ և ապստամբեաց և մեռաւ ՚ի նմանէ ։

---

(1) Եւսեբիոս, պատմ. եկեղ. Ը. 17։
(2) Եւսեբիոս, պատմ. եկեղ. Թ. 1։
(3) Եւսեբիոս, պատմ. եկեղ. Թ. 2—4։
(4) Եւսեբիոս, պատմ. եկեղ. Թ. 8։

---

(1) Եւսեբեայ Քրոնիկոն դադարին մինչեւ 'ի քսաներորդ ամն Կոստանդիանոսի:

(2) Եւսեբիոս յԵկեղեցական պատմութեան իւրում (Ը. 14) բազում գովութեամբ խօսի զհօրէն Կոստանդիանոսի, և ցուցանէ զնա իբրեւ արդարեւ հաւատացեալ այր, յաւելուն. «Հանդարտ էր ամենայն վարուք իւրովք և առ այնոսիկ որ 'ի ներքոյ իշխանութեան նորա էին, քաղցրութեամբ էր, և առ Աստուած սիրով : . . Նա միայն յաւուրս մեր ըստ արժանի առաջնորդութեան թագաւորաց կատարեաց զժամանակ իշխանութեան իւրոյ, և այլով պատուով, և առ ամենայն մարդ 'ի շահ օգտութեան զանձն իւր տայր : . . Ոչ զտաճարս եկեղեցեաց քակեաց նա, և ոչ նորոգեաց 'ի վերայ մեր ինչ մի ('ի նեղութեանցն), վասն այսորիկ փոխման բարիոք կատարեալ երանութեամբ ընկալաւ նա. զի յաջխորհէ աստի յայտնանէ նա միայն եւ 'ի թագաւորութեան իւրում միաբանութեամբ և փառօք» Իսկ որ ինչ յայսմիկ պատմի զԿոստասայ, Սոկրատ (Թ.) որդւոյ նորա Կոստանդիանոսի վերագրէ. որպէս և աւանդութիւնն իսկ զայն հաստատէ: Տես և 'ի Մովսէս Խորենի. Բ. 2:

Եւ յերկրորդ ամի Կոստանդիանոսի Թագաւորեաց Պարսից Շապուհ եւթանասուն ամ ։ Եւ Կոստանդիանոս գնաց պատերազմել ընդ Մաքսիմինեայ որ ՚ի Հռոմ . և խորհեցաւ ՚ի միտս իւր և ասէ՝ Թէ «Կուռքն չօգնեաց ինչ առաջին Թագաւորացն .» և ասաց . «Որ Աստուած օգնէ ինձ ՚ի պատերազմիս, նմա երկրպագեմ ։» Եւ ՚ի հասարակ աւուրն ետես խաչ լուսեղէն, և գիր ՚ի նմա որ ասէր . «Այսու յաղթես ։» Եւ որք ընդ նմա էին՝ նոյնպէս տեսին ։ Եւ յայնըմ գիշերի երեւեալ նմա Քրիստոս, ասէր ցնա . «Սրա զօրինակ երեւելոյն քեզ և յաղթես ։» Եւ եղեւ ընդ առաւօտն արար նոյնպէս (1) ։ Եւ աստի եղեւ օրէնք Թագա-

(1) Եւսեբիոս առանց յիշատակելոյ զերեւումն խաչին

ւորաց քրիստոնէից խաչ տանել առաջի։ Եւ յորժամ՝ եղեւ պատրաստ՝, յերեւել խաչին յաղթեցաւ ամբարտաւանն, գետասոյզ եղեալ 'ի Տիբերիոս գետ։ Եւ էր կին Կոստանդիանոսի դուստր Դիոկղետիանոսի՝ Վիկղիտ անուն(1), որ եւ 'ի միասին մկրտեցան, զի դեռ չէր մկրտեալ Կոստանդիանոս(2)։ Յայսմ՝ ժամանակի մեծն Գրիգորիոս 'ի Հայս փառաւորեալ մեծամեծ նշանօք, որ եւ 'ի ձեռն նորա դարձան ամենայն Հայք յաստուածպաշտութիւն. եւ նա եղեւ նոցա քարոզ եւ քահանայապետ երեւելի շնորհօք նման սուրբ Առաքելոյն Պետրոսի։ Եւ 'ի յերրորդ ամի իւրոյ թագաւորութեանն Կոստանդիանոս ընդարձակեաց զԲիւզանդիա, եւ աճեցոյց 'ի

յօդս առէ՝ յետ յաղթութեանն եւ մտանելոյ 'ի Հռոմ, հրամայեաց կանգնել 'ի քաղաքին զնշան փրկչին։ Թ. 11։ Մովսէս Խորեն. Բ. 80։ Սոկրատ. Զ։

(1) Մովսէս Խորենացի (Գիրք. Բ. Գլ. 80) եւ Սոկրատ (Ը.) ասեն եթէ Մաքսիմինդա էր անուն դստերն Դիոկղետիանոսի. իսկ այլք Փաւստա կոչեն՝ դուստր Մաքսիմիանոսի Հերքեւլեայ եւ Եւտրոպեայ, եւ ոչ Դիոկղետիանոսի, որոյ դուստր անուն էր Վաղերիա, որ ամուսնացաւ ընդ Գաղերիոսի։

(2) Յաղագս մկրտութեան մեծին Կոստանդիանոսի այլ եւ այլ կարծիք են առ քննադատս։ Ժամանակակից պատմիչք յորս գտանին արք երեւելիք սրբութեամբ եւ ընդ հարս եկեղեցւոյ համարեալք, եւ բազումք եւս 'ի յետնոց պատմագրաց ասեն զԿոստանդիանոսէ, եթէ 'ի Նիկոմիդիա լեալ եւ զվախճան իւր նկատեալ՝ ետ ածել զինքն 'ի հանքային ջուրս Հեղիանուպօլսոյ, ապա յաշտարակին Աքիւրոնի ուր ժողովեալ

եմս չորս (1) միլ. և պարգևարեաց զնա զարդուք, և անդ փոխեաց զԹագաւորութիւնն Հռոմայ, և յանուն իւր կոչեաց զնա Կոստանդինուպօլիս, և արար զբնակիչս նորա ազատ. և շինեաց եկեղեցի մեծ Իրինեայ(2) անուն, և միւս այլ յանուն Առաքելոյն: Եւ երեւեցաւ միայն Եփոխարփոր, զամենայն զհոգն իւր եղեալ ընդ Աստուծոյ: Եւ շինել հրամայեաց ընդ ամենայն երկիր եկեղեցիս, և քակել զմեհեանս կռոցն. և եդ օրէնս մի ոք լինել զինուոր կամ ձիաւոր, որ ոչ իցէ ծնունդ սուրբ Աւազանին: Թէոդոս(3) ասէ, թէ նկարիչք զտախտակ և զորմն զար-

---

նորա զեպիսկոպոսունս (արիոսականս) ընկալաւ զկնիք մկրտութեան: Զայս օրինակ պատմէ և Եւսեբի 'ի վարս Կոստանդիանոսի (Գիրք Դ. Գլ. 61): Տես զայսմանէ և զմիաբանման կարծիս քննաքանից յԵրեւակն Յովհաննու պատուելոյ Տէրոյենց. 1857. Հտ. Ա. Թիւ 4 և այլն, յորում 'ի մէջ բերէ զհակառակ կարծիսն Տ. Կէրանժէ Բենեդիկտեան կրօնաւորի, որ ցուցանէ զմկրտութիւնն Կոստանդիանոսի 'ի Հռոմ լինել 'ի ձեռն Սեղբեստրոսի, որպէս ասէ և մերս Մովսէս Խորենացի. Պատմ. Բ. 80:

(1) Մովսէս Խորեն. (Բ. 85) հնդապատիկ, ասէ, մեծացոյց զքաղաքն:

(2) Իրէնէ է բառ յունարէն, որ նշանակէ խաղաղութիւն. յայս անուն կոչեցաւ նախ մեծ եկեղեցին Կոստանդինուպօլսի, զոր նորոգեալ և գեղազարդեալ ապա 'ի Կոստանդեայ որդւոյ նորա և կրկին պարսպօք շրջապատեալ կոչեցաւ սուրբ Սոփիա, որ է իմաստութիւն աստուածային կամ սուրբ:

(3) Յօրինակին Դէոդոս, միւս թարգմանութիւնն Թէոդորոս կոչէ:

դարեն 'ի զբօսանս մարդկան . իսկ ժամանակագիրք զժամանակ բանիւ զարդարեն :

Արդ յայսմ ժամանակի երևեցաւ Արիոս երէց աղէքսանդրացի 'ի մէջ եւթն երիցանց, զոր եդիտ զէն սատանայ, և ջանայր կրկնել զարարածոցս երկրպագութիւն, զի եւ նըմա ասել զորդին Աստուծոյ արարած: Եւ կային նմա այլ համախոհք վեց, զոր ցուցանէ Թուղթն այն զոր գրեաց առ Եւսեբի Նիկոմիդացի, որք են այսոքիկ . Եւսեբիոս Կեսարու (1), և Թէոդոս Լաւոդիկեայ, Յուլիանէ (2) Սրոյ եպիսկոպոս, Աթանաս Անաւարզայ, Գրիգոր Տարութոյ, Աթիոս Լիդիոյ (3): Եւ յորժամ յայտնեցաւ չարութիւն նորա, նզովեաց զնա Պետրոս եպիսկոպոս (4). և նա սկսաւ զբազումս առնել իւր խորհրդակիցս. զՄարիս Քաղկեդոնացի, զԵւսեբիոս Նիկոմիդացի, և զՄելիտոս եպիսկոպոս Եգիպտացի, որ և 'ի ժամանակ հալածմանն զոհեալ էր, և լուծեալ յաստիճանէն, և զԱխիլթայէս, և զայլս բազումս :

---

(1) Այն է հեղինակին եկեղեցական պատմութեան զորմէ բազումք Արիոսեան ասեն լինել, որ ասպնջականեաց իսկ զԱրիոս 'ի մեկնել նորա յԱղէքսանդրիոյ, և նզովեցաւ յերկրորդ ժողովոյն Նիկիոյ 'ի հինգերորդ նստին :

(2) Յօրինակիս Փաւլինէ :

(3) Համարի թէ զԹէոնասայ կամի ասել. որ եպիսկոպոս էր Մարմարիկոյ որ 'ի Լիբիա . զոր տառափոխութեամբ Լիդիա գրէ .

(4) Պետրոս էր Պատրիարք Աղէքսանդրիոյ որ վկայեաց

Եւ 'ի սմին ժամանակի եղեւ շարժ սաստիկ Անտիոքոս, եւ զբազում շինուածս բընակչօքն սպանանեաց, զշարժումն աղանդին (Արիոսի) նշանակելով։ Եղեւ այլ ինչ պատուհասումն յեկեղեցի վասն Զատկին. զի կողմանք արեւելից ընդ Հրէայսն տօնէին 'ի չորեքտասան լուսնին, եւ կողմն արեւմտից միշտ 'ի կիւրակէի։ Եւ յայսմ ժամանակի նախ Աղէքսանդր արար ժողով Աղէքսանդրիա բազմութիւն եպիսկոպոսաց, եւ նզովեաց զԱրիոս եւ զամենայն խորհրդակիցս իւր։ Եւ գրեաց զանէծսն եւ ետ տանիլ ընդ նա յամենայն երկիր, բայց ոչ չէջանէր հուրն ապականիչ, մինչեւ եհաս բանն առ Թագաւորն Կոստանդիանոս. եւ նա տրտմեցաւ յոյժ եւ գրեաց Թուղթս առ Աղէքսանդր եպիսկոպոս եւ առ Արիոս՝ հաշտութիւն առնել ընդ միմեանս, եւ զչար կարծիքն բառնալ 'ի մտաց Արիոսի։ Եւ ոչ այսու խաղաղէր պղտորումն եկեղեցւոյ. եւ սկսաւ տարածանիլ աղանդն, եւ հարկ եղեւ Մեծին Կոստանդիանոսի ժողովել հրաման տալ ընդ ամենայն երկիր, ժողովիլ 'ի Նիկիա Բիւթանացւոց։ Եւ ժողովեցան երեքհարիւր ութ եւ տասն Եպիսկոպոսք. եւ գլխաւորք էին այսոքիկ, Ոսիոս Կուռտուբեայ, Բիգոս եւ Բի-

---

յամի 311։ Սոքա են նամակքն գրեալ առ Ակակիոս 'ի վերայ հաւատոյ։ Տես 'ի ձեռագիրս։

դէդ (Վիկենդ) երիցունք փոխանակ Պապուն Հռոմայ, Աղէքսանդր Աղէքսանդրու, Արիստակէս մեծ Հայոց և փոքր Հայոց, Յուլիոս Սեբաստիոյ, Եւստաթէոս Անտիոքու, Յակոբ Մծբնայ։ Եւ շինեաց Թագաւորն մեծ և ընդարձակ ապարանս, ուր նստէին ժողովն. և ինքն յոտն կացեալ անձամբ սպասաւորէր։ Եւ նոքա տեսին շնորհս աստուածային յերեսս Թագաւորին, և եդին նմա աթոռ ՚ի մէջ իւրեանց, և աղաչէին նստել. և ոչ լուաւ նոցա, այլ կայր և ծառայէր ըղպէտան և լսէր զբանս նոցա։ Եւ էին ընդ եպիսկոպոսունս երիցունք և սարկաւագունք հազարք և բիւրք. և Թագաւորն սպասէր զամենեսեան իւրովք ծախիւք ՚ի քսանէն Իար ամսոյ մինչև ՚ի յութևտասան Հէզէրանայ ամսոյ։

Եւ զառաջինն սկսան քննել բանաւորքն (տրամաբանք) և հռետորքն իմաստասիրական ոճով, և բազումք երթային զհետ նոցա։ Ապա յարուցեալ ոմն մանկագոյն իշխան ասէ. «Քրիստոս և Առաքեալքն ոչ աւանդեցին մեզ բանս արուեստաւորս, այլ հաւատ հաստատուն, որ պահի գործովք առաքինութեան։» Եւ ապա լռեցին նոքա, և թողին յեկեղեցականսն. և նոքա եդին զսահման Առաքելոցն՝ հաստատելով զնոցայն։ Եւ բազումք անհաւան լինէին, և Թագաւորն հանէր զնոսա ՚ի Թուոյ ժողովոյն, և ճշմարտօք լնոյր զթիւն ։ Եւ էին ոմանք որ ետուն թուղթս հակառակութեան և նախանձու միմեանց առ թագաւորն. և նա հաշտեցոյց զնոսա և այրեաց զթուղթ միաբանութեանն ։ Եւ աղաչեաց թագաւորն 'ի միասին կատարել զտօն Յարութեանն Քրիստոսի, և զկիւրակէն մեծարել ժողովով և պարապմամբ գործոյ ։ Եւ այնպէս սահմանեցին յաւուր կիւրակէի տօնել զՅարութիւն Քրիստոսի Աստուծոյ մերոյ զկնի հին Զատկին. և պատուել զկիւրակէն դատարկացեալ, ըստ կանոնաց Առաքելոցն շատանալ աստուածային գրովք և ոչ վայրապար գործովք. և 'ի շաբաթու յիշատակ Մարտիրոսաց կատարել ։ Եւ ինքն թագաւորն սահմանեաց զանարգողսն քահանայից և եպիսկոպոսաց չար մահուամբ սպանանել ։ Ի քսան ամի Կոստանդիանոսի եղեւ ժողովն, և լինին յԱդամայ հինգ հազար ութ հարիւր երեսուն և երեք ամք ։ Եւ արձակեցաւ ժողովն պատուով և պարգեւօք թագաւորին. և նզովեցան զկնի Արիոսի եպիսկոպոսն Նիկոմիդու Եւսեբիոս, Թէոգնիոս եպիսկոպոս Նիկիոյ, Մարիս Քաղկեդոնի, Թէումաս Մարկոտի(1), գլխաւոր արք ։

Իսկ թագուհին Հեղինէ երազովք աւե֊

---

(1) Ընթերցիր Թէոնաս Մարմարիկոյ եպիսկոպոս, զոր վերագոյն Աթիոս Լիւիոյ կոչեաց ։

լեան եւ Երուսաղէմ հանդերձ Սեղբեստրոսիւ Հռոմայ հայրապետիւն, և եգիտ 'ի վերայ գերեզմանին պատկեր Սողկայ, որ է Ափրոդիտէս. և սուրբ Խաչն Քրիստոսի թաղեալ կայր 'ի բազում ժամանակաց, և տանջեալ զՀրեայն եգիտ Յուդայիւ զխաչըն ։ Նա էր եպիսկոպոս Երուսաղէմի Մարկոս անուն. և շինեալ զեկեղեցին ետ ցՄարկոս ։ Նա արար դասս կուսանաց և կրօնաւորաց Երուսաղէմ. և իւրովք ծախուք խնամէր զնոսա ։

Բայց Արիոս 'ի ձեռն ումանց կեղծաւորաց խաբեաց զԹագաւորն զի ետեսցէ զնա և լուիցէ 'ի նմանէ դաւանութիւն. և հրամայեաց Թագաւորն ։ Եւ նա գրեաց կոնդակ մի մեծ զՆիկիոյ դաւանութիւնն, և փոքր մի այլ՝ զիւր հայհոյութիւնն, և ունելով թաքուն 'ի ձեռն, ետ (զմեծն) ցԹագաւորն, և ասաց. "Քան զայս աւելի ես ինչ ոչ դաւանեմ ։" Եւ յորժամ ած 'ի Թագաւորէն զմեծ կոնդակն 'ի ձեռն, յայն որ ունէր ըզփոքրն, յորում էր գրեալ իւր հայհոյութիւն, ասաց. "Նզովք սաստիկ 'ի վերայ՝ թէ այլ ազգ փառաւորեմ զԱստուած քան զայս որ աստ գրեալ է ։" Եւ հաւատաց Թագաւորն մինչեւ Աստուած խայտառակեաց զնա պատուհամբ ։ Եւ առաւել հաստատեցաւ 'ի հաւատս Թագաւորն և յոյժ խնամով զԹայր յեկեղեցիս. և ազատ արար զեկեղեցիս ընդ ամենայն երկիր, և ապրանք և մուտք եկեղեցւոյ և տուանց հարկաց. «Եւ ունիցին, ասէ, ամենայն եկեղեցի զհին և զնոր Կտակարանս լիով, և որբք և այրիք կայցեն 'ի ծախս եկեղեցւոյն. և գիտունք եղիցին եկեղեցականքն Աստուածաշունչ գրոց. և մասն ինչ յաստեղաբաշխութենէ կալցի եկեղեցի զտօմարական արհեստն, զի մարթասցին վարել զժամանակս տօնից և զմոլորակացն, և զայլ բաջաղմունս աստեղագիտութեանց մի ընկալցի եկեղեցի:»

Եւ Կոստանդիանոսի երեք որդիք էին. աւագ որդին անուանեալ հօրն (Կոստանդին), և միջնայն անունն Կոստան (Կոստաս) և կրտսերոյն անունն Կոստոս (Կոստանդ), որ և արար զնոսա կեսար(1): Աւագ որդին պահեաց զուղղափառութիւնն, նոյնպէս և կրտսերն մինչև ցմահ. և զաւագ որդին կացոյց 'ի Կոստանդինուպօլիս, և զմիջինն յարևելից կողմն, և զկրտսերն 'ի Հռոմ: Յայսմ ժամանակի եղև սկիզբն հաւատոյ Հնդկաց և Վրաց(2): Եւ կազմեաց Կոստանդիանոս հանդերձեղէն եկեղեցի շրջեցուցանել ընդ ինքեան. և շինեաց յԱնտիոք եկեղեցի մեծ ութանկիւնի։ Եւ շինեաց կամուրջ 'ի վերայ Տանուխ գետոյ, և անցուցեալ զզօրսն 'ի վերայ՝ գնաց 'ի Սկիւթացիս որ են Խուզք, և կոտորեաց զնոսա մասամբ, և զայլսն դարձոյց 'ի քրիստոնէութիւն։

---

(1) Յօրինակս գրոցս այլ ընդ այլ դնին անուանք որդւոցն Կոստանդիանոսի վասն կարի յոյժ մերձաւորութեան ձայնիցն. վասն որոյ և շփոթին բազումք 'ի պատմագրանց:

(2) Մովսէս խորեն. Բ. 83—Սոկրատ. ԻԳ. ԻԴ:

Յայսմ ժամանակի եկն Շապուհ արքայն Պարսից 'ի Մծբին, և դարձաւ ամօթով։ Եւ Յակոբ ուռհայեցին ասէ, թէ «Կոստանդիանոս կամեցաւ գնալ 'ի վերայ Պարսից, և եկն 'ի Նիկոմիդիա՝ հիւանդացաւ, և խնդրեաց մկրտութիւն և մկրտեցաւ, զի չեւ էր մկրտեալ, քանզի ակն ունէր 'ի Յորդանան մկրտիլ։ Եւ արար կտակ երից որդւոցն. և ետ զկտակն յերէց մի արիանոս Եւսեբի անուն. և ժամանակն (հասակն) Կոստանդիանոսի վաթսուն և հինգ ամ. թագաւորեալ երեսուն և երկու ամ՝ մեռաւ խաղաղութբ 'ի մեծ կիւրակէն Պենտեկոստէին, 'ի քսան երկու Իար ամսոյ։ Եւ տարեալ զմարմինն 'ի Կոստանդինուպօլիս՝ եդաւ յեկեղեցւոջ սուրբ Առաքելոյն։

Եւ կտակաւագ որդւոյն՝ աթոռն Կոստանդնուպօլիս, և միջնոյն՝ Անտիոք և արեւելից կողմըն, և կրտսերոյն՝ Հռոմ։ Եւ 'ի մահուան օրն միջին որդին առընթեր հանդիպեցաւ 'ի Նիկոմիդիա, և առ զկտակն յերիցուէն. և երէց որդին Կոստանդիանոսի եկն յաշխարհն կըր-

սեր եղբօրն՝ գնալով 'ի Հռոմ։ Եւ կրսեր որդին Կոստաս կեսար էր կարգեալ զԴաղմատիոս 'ի Հռոմ, որ էր եղբայր մեծին Կոստանդիանոսի։ Այս Դաղմատիոս սպան զԿոստանդիանոս՝ զաւագ որդին Կոստանդիանոսի առանց կամաց կրսեր եղբօրն. և Կոստաս սպան զԴաղմատիոս փոխանակ սպանանելոյ նորա զԹագաւոր եղբայրն իւր։ Եւ ունէր Դաղմատիոս երկուս որդիս, ընդ Գալլոս և զՅուլիանոս. կամեցան և զնոսա սպանանել, և ոչ սպանան, զի Գալլոս հիւանդ էր և Յուլիանոս տղայ, և զերծան այսու պատճառաւս։ Եւ յետոյ հաշտեալ ընդ նոսա՝ եդ 'ի դպրոց 'ի գիւղ մի Մակալիանուն, մօտ 'ի Կեսարիա Հայոց։ Եւ յորժամ զարգացան ուսմամբ, եղեն վկայասէրք և սկսան շինել վկայարան որբոյն Մամասայ, և կողմն Գալլոսի հաստատէր, և կողմն Յուլիանոսի փլանէր, զոր հանդերձեալ էր լինել գուշակէր։

Եւ Կոստան միջին որդին զԳալլոս կեսար կարգեաց յԱնտիոք, որ և ապստամբեաց 'ի վերայ Թագաւորին։ Եւ լուաւ Թագաւորն և առաքեաց սպան զնա, և ընդ Յուլիանոս եդ 'ի բանտի. և Թագուհին Եփսիա (Եւսեբիա) բարեխօս լեալ առ Թագաւորն՝ եհան 'ի բանտէն, և առաքեաց յԱթէնս ուսանել ուսումն իմաստասիրու-

թեան ։ Եւ անդ էին Գրիգոր Աստուածաբանն և Բարսեղ, և իւր եղբայրն Գրիգոր Նիւսացին ։ Եւ մարգարէացան վասն Յուլիանոսի զոր ինչ լինելոց էր ։

Յայսմ ժամանակի Կոստան որդին Կոստանդիանոսի Մեծի շինեաց քաղաք մի յերկրին Սելեւկիայ, և անուանեաց զնա Կոստանդնուպօլիս(1)*։ Եւ 'ի վեց ամին Կոստասի բռնացաւ Մագնենտիոս. և եհան 'ի Կոստասէ զԻտալիա և զԱփրիկէ. և թագաւորեաց 'ի Սիրմի ։ Եւ 'ի դաւաճանէ զօրացն սպանաւ Կոստաս ։ Եւ ընդ նմին սպանաւ եղբօրորդին իւր Կոստանդիանոս, որ երեք ամ թագաւորեալ էր ընդ նմա։ Եւ լուեալ զայս Կոստանեայ և զայրացմամբ լցեալ չոգաւ և սպան զՄագնենտիոս, և ընդ նմին սպան զՆուփիլիս, որ էր յազգէ թագաւորաց, որ ընդ Մագնենտիոսի էր թագաւորեալ ։ Եւ յաւուր սպանման նորա երեւեցաւ նշան խաչին յարեւելից կողմանէ ։ Եւ եմուտ թագաւորն 'ի Հռոմ երեւելի փառօք. և դարձեալ 'ի Կոստանդնուպօլիս՝ արար զՅուլիանոս կեսար, և ետ նմա կին զքոյր իւր զԵլինէ (Հեղինէ), որ Կոստդիա կոչեցաւ ։*

---

(1) *Միխայէլ և կամ Թարգմանիչք և ընդօրինակողք սխալին աստ յանուանակոչութեան քաղաքիս. զոր ամենք ընթեռնուն և Կինոպօլիս։ Աբուլֆարաճ ասէ, եթէ Կոստաս կայսրն ընդարձակեաց զԱմիթ և կոչեաց զնա Աւգուստա։ (Բըրգրո. տար. յէր. 64.)*

Յայսմ ժամանակի Հրեայքն որ էին ՚ի Պաղեստինէ, ապստամբեցին և սպանին ըզզօրականս Հռոմայեցւոցն. եւ առաքեաց Թագաւորն և կոտորեաց զնոսա: Իսկ Յուլիանոս գնացեալ ՚ի Գաղիա (1) ընդդէմ բարբարոսացն, յաղթեաց, և հաստատեցաւ Թագաւոր քարոզեցաւ ՚ի զօրացն (2): Եւ լուեալ զայս Թագաւորն Կոստան, զարհուրեցաւ և մկրտեցաւ ՚ի Զօյիոսէ եպիսկոպոսէ (3) Անտիոքու, որ էր արիանոս. և եկն ընդդէմ Յուլիանոսի. և ընդ մէջ Կիլիկիոյ և Կապադովկիոյ մեռաւ՝ կեցեալ ամս քառասուն և ութ, և Թագաւորեալ ամս քսան և հինգ: Եւ սա Թէպէտ խաբեցաւ ՚ի Սեբեոսէ արիանոսէ երիցու և սիրէր զԱրիանոսքն, այլ արարած ոչ ասէր զորդին Աստուծոյ, այլ ծնունդ Հօր՝ բայց կրսեր ասէր։ Եւ սա եւս կամէր՝ առանց հաղորդելոյ ոչ ելանել 'ի պատերազմ՝ առանց հոգեւոր վահանին, այլ 'ի ժամ մահուանն զղջացաւ և դաւանեաց զուղղափառութիւնն և մկրտեցաւ։

---

(1) Գաղիա է Գաղղիացւոց երկիրն. Gaule անուանեալ ՚ի հնոց:

(2) Յուլիանոս ՚ի Բեննա քաղաքի Գաղատացւոց լեալ, ետես երազ. յորմէ գրգռեցաւ առնել արշաւան ընդդէմ Կոստանայ, որ ըստ գուշակութեան իմիք եղելոյ զնմանէ՝ ոչ էր ապրելոց անդր քան զամն 361: Յուլիանոս առ ՚ի յանկուցանել զիւրեւ զզօրականս, քարոզեաց ապստամբութիւն կրօնի. և ինքն իսկ առ ժամն կեղծաւորեցաւ զքրիստոնէութիւն: Այլ հասեալ ՚ի Լիւրիկէ, յայտնի դաւանեաց զկուռս. և ՚ի Թրակէ հասեալ, առ քաղաքս բազումս: Յայնմ ժամանակի Կոստաս որ ընդդէմ Պարսից կայր ՚ի մարտս պատերազմաց չոգեալ, եկ ՚ի մահ դառնալ յԱնտիոք, և ունել զդէմ շահատակութեանցն բռնաւորին:

(3) Եւզոյիոս անուանեալ ի պատմագիրս, էր եպիսկոպոս Անտիոքայ յարիանոսաց, զորմէ ասի մեռեալ յանխղճութեան:

Իսկ Յուլիանոս էառ զթագաւորութիւնն կեսար լեալ՝ ամս հինգ, և թագաւորեալ ամս երկուս։ Եւ զայն եւս գտեալ է իմ, որ ասեն, թէ Յուլիանոս Մեծ Կոստանդիանոսի եղբօրորդի է։ Քանզի ասեն, թէ երկու եղբայր ունէր Մեծն Կոստանդիանոս 'ի հօրէ կողմանէ, Լամտիոս և Կոստիոս (1). և Լամտիոս իւր անուամբ որդի մի ունէր. և Կոստոսի եղեն երկու որդի, Գալլոս և Յուլիանոս. և Գալլոս ապստամբեալ սպանաւ. և Յուլիանոս կեսար լեալ և յաղթեալ բարբարոսացն՝ և անցանէր ընդ փողոց մի և պսակ հիւսուածոյ անկաւ 'ի (վերայ) գլխոյն. և այն եղեւ պատճառ ոմանց ասել, թէ յաղթութեան նշան է, և այլք կորստեան ասէին նշան։ Այլ ես զառաջինն պատմութիւնն ստուգեցի քան զերկրորդս։ Բայց զի վարժեալ էր Յուլիանոս կախարդութեամբ և դիւաց ծառայութեամբ, ընդյաղթութիւն իւր և զմահ Թագաւորին (1) 'ի դիւացն համարէր։ Եւ պղտորեաց զկարգ թագաւորութեանն, և ագանէր հանդերձս փիլիսոփայութեան և ծաղր առնէր զծիրանիսն՝ զգենլով մաշկեակս այծի։ Եւ սա սկըսաւ ծածուկ զաղբիւրականն զօհիցն արեամբ պղծել, և ցանել տայր 'ի վերայ ամենայն կերակրոց, զի կերողքն և ըմպողքն զնորին կամսն ստասցին։ Եւ 'ի մտանելն 'ի Կոստանդնուպօլիս՝ Եւդոքսիոս քարոզեցաւ։

---

(1) Լամտիոսն է Դալմատիոս՝ եղբայր Մեծին Կոստանդիանոսի. և Կոստիոսն է Յուլիոս Կոստաս միւս որդի նորա և հայր Գաղղոսի և Յուլիանոսի։

Եւ եկեալ յԱնտիոք ոսկւոյ զդահեկանս, և առաստացոյ զհաց և զգինի. և նոքա արարին նմա նախատինս՝ ասելով ցնա ամբոխն. "Օ՜ երկայն մօրուօք ընդէ՞ր պահես պարապ. կտրեա և արա չուան և դիր յեղջերսն զենլեացն քոց, և գոլաւ տար նուէր դիւացն չաստուածոց քոց։" Եւ նորա բարկացեալ՝ կամեցաւ սրով մաշել զքաղաքն, և չեջայց զնա խմաստասէրն Լիբանոս (2) ասելով. թէ "Չպարտին քեզ մահ, այլ նախատինս փոխանակ նախատանացն քոց." և ժողովեալ զնոսա նախատեաց զնոսա և եթող զնոսա։ Եւ կայր 'ի լեառն Սնոփրքու վանք մի Պաւուլա անուն (3). և անդ կայր գերեզմանն Բաբերայ եպիսկոպոսին . և Յուլիանոս կամեցաւ 'ի տեղւոյն կանգնել ըզպատկերն Ապողոնի , և արկանել վիճակ վասն երթալոյ նորա 'ի Պարս , և ոչ ետ նմա պատասխանի դեւն . և գիտաց թէ վասն Բաբերայ է , և հրամայեաց զնա հանել և տանել 'ի քաղաքն . և քրիստոնէիցն առեալ խնդութեամբ տարան սաղմոսիւք և լապտերօք . և դեւքն սկսան խօսել ընդ նմա բարիս (1) : Եւ նորա զուարճացեալ եդ առաջի պատկերին երկու սեղան . զմինն ելից խնկով , և զմիւսն ոսկւով . և եդ առաջի հուր , և ասէր . “ Ով արկանէ ափով մի խունկ 'ի վերայ հրոյ , թող առնու ափով մի ոսկի :” Եւ բազումք 'ի պարզամտաց խաբեցան և առին զոսկին . և յետ այնորիկ յուտել և յըմպել նստան , և ըստ սովորութեանն նկարէին զխաչն 'ի վերայ գինւոյն . և մին ասէ . “ Օ՜ ի՞նչ է այդ , յետ ուրացութեանդ խաչակնքեալդ :” Եւ նոքա զարհուրեալ ասէին . “ Ե՞րբ ուրացաք :” Եւ նա ասէ . “ Յառնուլն զոսկին յետ խնկոյն :” Եւ նոքա ընկեցեալ զգինին և արտաքս դիմեալ ընկեցին զոսկին յերեսս Թագաւորին՝ քրիս-

---

(1) Այն է Կոստաս կայսր Բիւզանդիոյ որ մեռաւ 'ի պատերազմին ընդդէմ Յուլիանոսի, զոր պատմեաց վերագոյն։

(2) Լիբանոս կամ Լիբանիոս էր փիլիսոփայ և վարժապետ հռետորութեան որդւոյն Յովհաննու Ոսկեբերանի։

(3) Միւս Թարգմանութեան օրինակքն ունին [illegible],

համարի եթէ իցէ տեղի կռոցն Ապողոնի 'ի Դափնի մերձ յԱնտիոք քաղաք . իսկ յօրինակիս մերում՝ գրի Պաւուլս որ մերձագոյն է անուան սրբոյն Բաբերայ՝ քան Ապողոնի :

(1) Յովհ . Ոսկեբերան . 'Ի ճառքն Բաբելաս . Գ.Լ. ԺՆ .

ամնեայս ասելով զմիքեանս։ Եւ թոյլ ետ նոցա զտանջելն ՚ի ժամուն յայնմիկ, զի մի անուն մարտիրոսի առցեն։

Սա փոխեաց զանուն քաղաքաց, զԿեսարիա կոչեաց Բագլէ, և զԿոստանդինուպօլիս՝ Բիւզանդիա (1). և շինեաց Հիւրանոց, աղքատանոց և տեղի որբոց և այրեաց դարմանոյ՝ խաբէութեամբ։ Եւ հրամայեաց ընթեռնուլ զառասպելս հեթանոսաց, և չարգելուլ զորդիս քրիստոնէից յարտաքին ուսմանց։ Եւ եկեալ յԱնտիոքայ սպառնալեօք թէ դառնայ ՚ի Պարսից խաղաղութեամբ, և առաքեաց յՈւռհա պատրաստել ինչ նմա, և ոչ ընկալան։ Եւ գնացեալ ՚ի Խառան՝ զոհեաց դիւաց, և պատուեաց զՀրեայսն որ անդ կային. և հրամայեաց երթալ յԵրուսաղէմ և շինել զՏաճարն և զոհել ըստ օրինացն։ Եւ նոքա առեալ երեք հազար մոթ կիր և ժողովեալ ՚ի ցրմանէն և պնդեալ՝ սկսան շինել. և հողմ ուժգին ցրուեաց զկիրն, և շաղախով կամեցան շինել, և իջեալ հուր այրեաց զշինուածսն և զգործիսն։ Եւ Հրեայքն որ յՈւռհա, յարեան ՚ի վերայ քրիստոնէիցն և սատակեցան ՚ի նոցանէ։

---

(1) Անունս քաղքին եթէ պարտ իցէ ընթեռնուլ Մոժոյ, ոչ եթէ փոխեալ համարին անուանակոչութիւնք յիշեալ քաղաքացս, այլ զառաջին անուանսն զոր ՚ի հեթանոսութեան ունէին, նորոգեալ։

Իսկ Յուլիանոս յամեալ 'ի Խառան՝ և դարձեալ զոհեաց դիւաց առաջի կռոցն զոր կանգնեաց 'ի Խառան. և մինչ զոհէրն, անկաւ Թագն 'ի գլխոյն, և ձին զոր առընթեր ունէին, կոխեաց զնա և պատառեաց զհանդերձն. և ասացին բարեկամք իւր, թէ «Ասըն քրիստոնէիցդ է զոր զհետ քո տանիս:» Եւ նա դարձոյց քսան և երկու հազար 'ի զօրացն. բայց զնշան Խաչին զոր տանէին ըստ (սովորութեան) առաջնոցն, ոչ դարձոյց, զի ասաց. «Ա՛ դիտէ, թէ յաղթեն մեզ Պարսք, պարտութիւնն Խաչին լիցէ.» և տարաւ ընդ իւր զօրք երեք հարիւր իննսուն և հինգ հազար պատերազմող, բաց 'ի սպասաւորացն և 'ի գործաւորացն. և ուր և երթային՝ կանգնէր կուռս և զոհէր, և հարցանէր, և ասէին դեւքն, թէ «Հոմագունդք գամք ընդ քեզ աստուածոց բազմութիւնք. և տամք քեզ զճակատագիրն Աղէքսանդրու և զբախտին, և Արէս աստղն կայ 'ի գլուխ զօրացդ(1):» Եւ եկն 'ի Տիզբոն և աւերեաց: Եւ ելեալ Շապուհ գնաց փախստական, և առաքեաց առ նա տալ նմա գանձ բազում զի դարձցի, և ոչ կամեցաւ. և ապա ժողովեալ զՊարսս, եկն 'ի վերայ Տիգրիս գետոյ. և գնացին պատգամաւորք առ երկոսին, և ոչ կարացին առնել խաղաղութիւն: Եւ յանկարծակի

(1) Արէս ըստ դիցաբանից էր չաստուածն պատերազմի:

եկն նետ մի դիպեցաւ փորոտեացն Յուլիանոսի, և վայթեցաւ արիւնն. և առեալ յարենէն ափովն՝ ձգեաց ընդ երկինս ասելով. «Յաղթեցեր, Գալիլեացի. արդ սա 'ի վերայ Աստուածութեանդ և զթագաւորութիւնս:» Եւ ինքն ոչ ագանէր զրահս և սաղաւարտ՝ հպարտացեալ դիւացն խոստմամբ. այլ զնետն 'ի յօդիցն էառ, թերևս ոչ 'ի մարդկանէ, այլ 'ի զօրութենէ Աստուծոյ. և կատարեցաւ մարգարէութիւնն որ եղեւ նմա յԱնտիոք. զի յորժամ զՔրիստոսի պատկերն 'ի տանէն եռատես կնոջն, ուր բազում բժշկութիւն լինէր, քակեաց Յուլիանոս և կանգնեաց 'ի տեղին կուռք, և իջեալ հուր՝ այրեաց զկուռսն(1). և եկեալ պատմեցին նմա մինչ մտանէրն յԱնտիոք. և նա 'ի ժամն ետես վարդապետ մի 'ի քրիստոնէիցն, և ասաց ընդ Լիբիանոս իմաստասէրն. «Հարց ընդ վարդապետդ, թէ ո՞ւր է ձեր հիւսանն որդին:» Եւ պատասխանեալ նորա ասէ. «Յարուեստն իւր կայ. Եռ-

---

(1) Եւսեբիոս 'ի գիրս որ վասն եկեղեցւոյ (Է. 17) պատմէ զպատկերէս, զոր կինն տեռատես կանգնեալ էր, ասէ, 'ի յիշատակ սքանչելեացն զոր եցոյց նմա Տէր, 'ի Պենադա քաղաքի առաջի դրաց տան իւրոյ 'ի բարձր վիմի, և էր պղնձի: Զայս պատկեր ետ Յուլիանոս կործանել, և 'ի տեղի նորա կանգնել պատկերս կռոց, որ 'ի կայծականց մաշեցաւ: Եւսեբիոս իբր ականատես պատմէ զպղնձի պատկերէս, որ կայր, ասէ, տակաւին յաւուրս իւր:

—ոո—ի (դագաղ) չինէ թագաւորիդ մահուանս» և լուռ եղեն ։ Եւ նոյն բանն եղ ՚ի գլուխ ․ և կազմեցին Բ—ո—ի կամօք և զօրութեամբ հիւսանն Արդւոյն , և եդին ՚ի ներքս ։

Եւ ընտրեցին այր մի զօրագլուխ (1) և ասացին ․ «Թագաւորեա դու փոխանակ Յուլիանեայ ՚ի վերայ մեր ․» և նա ասաց ․ «Ես դիւապաշտից ոչ թագաւորեմ ։» Եւ նոքա ընդ մի բերան ասացին ․ «Եւ մեք ամենեքեան քրիստոնեայք եմք ։» Եւ ետ դնել զթագն ՚ի գլուխ խաչին ․ և ասաց ․ «Եկայք երկրպագեցէք ․» և ամենեքեան երկրպագեցին ․ և ապա առեալ եդ ՚ի գլուխ իւր ։ Եւ վասն սովոյն և սղութեանն արարին սէր ընդ Պարսիկս ․ և ետուն զՄծբին առանց մարդկանն , հանելով ՚ի նմանէ զբազմութիւն քրիստոնէից բնակելոյն ՚ի նմա ։ Եւ դարձան՝ բերելով զմարմին անօրինին ՚ի Կիլիկիա , և պահեցին ՚ի սահմանս Տարսոնի անարգապէս ։ Եւ եթող Յուլիանոս ՚ի բանից իւրոց ճառս քառասուն ։

Իսկ Յուբիանոս այր բարի և աստուածապաշտ ուրախ արար զքրիստոնեայս ․ և եղեւ մեծ ցաւոյն բժշկութիւն , բայց չեւաք արժանի վայելման ․ ոչ յերկարեաց , այլ ՚ի մէջ Գաղատիոյ և Բիւթանիոյ կալաւ զնա ցաւ երիկամանցն և մեռաւ՝ եւթն ամիս միայն թագաւորեալ, և ոչ հասաւ 'ի Կոստանդնուպօլիս։ Եւ եկեալ զօրքն 'ի Նիկիա թագաւորեցուցին զՎաղենտիանոս որ էր 'ի փանիոյ (Պանոնիա), 'ի Կապպալիոն քաղաքէ, այր իմաստուն. և կամեցան գնել նմա ընկեր, և ասէ ցնոսա. “Այդ չէ 'ի ձեր կամքդ, այլ յիմս. դուք զիս ընտրեցէք, և զընկերն իմ ես ընտրեմ։” Եւ հաւանեցան նմա. և նա առ իւր ընկեր զեղբայրն իւր զՎաղէս, որ մկրտեալ էր յԵւդոքսէ եպիսկոպոսէ, որ էր արիանոս, նորա զաւանութեանն. և զնա եդ թագաւոր յարեւելից կողմանէ. և էր ջատագով արիանոսացն։

---

(1) Այն է Յովլանոս , զոր փոքր մի զկնի կոչէ Յուբիանոս ։

Եւ Վաղենտիանոս առ զՀռոմ և պահեաց զհաւատն Նիկիոյ, և զորդին իւր ըզԳրատիանոս օգոստոս քարոզեաց։ Եւ դընացեալ Վաղէս յԵդեսիա 'ի Մարկիանուպօլիս. և 'ի հասանելն նորա անդ՝ եգիւ շարժ, որ այլ ընաւ չէր լեալ և ոչ լուեալ. զի 'ի շարժել ծովուն, եհարկ զնաւսն ընդ պարիսպ քաղաքին. և դարձաւ ծովն և գնաց 'ի ներքս քան զսահմանս իւր, թողեալ զտեղին։ Եւ ժողովեալ բազմութիւն մարդկան յափշտակել ինչ 'ի նաւացն, և դարձաւ ծովն և կըլաւ զամենեսեան և տարածեցաւ 'ի վերայ ցամաքուն, և բազում քաղաքս և գաւառս ընկղմեաց զապականութիւն Վաղեսի նշանակելով։ Իսկ Վաղենտիանոս յանդիմանէր զեղբայրն վասն չարափառութեանն, և ’ի յոչ լսելն՝ բարկացաւ և ոչ տայր նմա օգնական պատերազմել նմա ընդ Գոթացիսն, ասելով. “Ոչ օգնեմ ես առն որ ընդ Աստուած պատերազմի։”

Եւ ինքն Վաղենտինիանոս չոգաւ ’ի պատերազմ ’ի Սարմատիա, և զարհուրեցան Սարմատացիքն, և խնդրեցին խաղաղութիւն ’ի նմանէ պատգամօք։ Եւ զարմացաւ Վաղենտինիանոս ընդ գարշութիւն նոցա և ընդ տգիտութիւնն. և հարցեալ զնոսա և իմացեալ՝ զի այնք որ առ նա եկին՝ ընտրելագոյնքն էին, և բարկացաւ և ասաց. “Եղո՛ւկ զՀռոմայեցիք, որ թողեալ են ձեզ թագաւորութիւն և իշխանութիւն անասնոցդ.” և մեծ աղաղակաւ քաջալերէր զզօրսն չառնել ընդ նոսա սէր, այլ բառնալ զնոսա. և ’ի խստագոյն գոչմանէն պատառեցան երակք փողիցն, և մեռաւ ութսուն և չորս ամաց՝ թագաւորեալ ամս մետասան(1)։ Սա արտաքոյ օրինաց երկու կին էառ. առաջին ըզ-Սեւիրէ (Սեւերա) և երկրորդ զՅուստինէ դուստր Յուստիանոսի. Այս Յուստիանոս ետես տեսիլ և պատմեաց թէ յինէն ծիրանի նիւթ ելանէր, և էր իշխան. և լուեալ Վաղենտինիանոս սպան զնա, զի մի ծնցի, ասէ, թագաւոր. և յետոյ էառ զդուստրն նորոս . 'ի նմանէ ծնաւ որդի մի , զոր յիւր անուն կոչեաց Վաղենտինիանոս , և երեք դուստերս, զՊաղինէ՝ որ եղև կին Մեծին Թէոդոսի , և 'ի նմանէ ծնան Արկադէոս և Ոնորիոս (1): Եւ 'ի մահուանն Վաղենտինիանոսի չէր մօտ առաջին որդին Գրատիանոս , որ էր յառաջին կնոջէն , այլ 'ի զօրացն Թագ եդին 'ի գլուխն Վաղենտինիանոսի որդւոյն փոքր , որ էր չորից ամաց :

---

(1) Սոկրատ. ԴԱ.

Իսկ Վաղէս արար զօրագլուխ զԳրատիանոս և առաքեաց 'ի պատերազմ ընդ Գոթացիս , և յաղթեցաւ: Եւ Վաղէս նախատեաց զնա , և Գրատիանոս ասէ . “Պարտութիւնս այս չէ իմ, այլ քո , զի պատերազմիս ընդ Քրիստոսի (2): ”

Յայսմ ժամանակի Մաւիէ դշխոյն Տաճկաց բազում վնասս հասուցանէր Հռոմայեցւոցն . և խոստանայր խաղաղութիւն, եթէ ձեռնադրեն գաւառի նոցա եպիսկոպոս ըզՄովսէս անապատաւոր: Եւ Վաղէս լուեալ զայս՝ առաքեաց յանապատն խնդրել կրօնաւոր, որոյ անուն Մովսէս էր. և գտեալ զմին բերին առ նա. և ոչ կամէր ձեռնադրիլ յարհամանացն, այլ յաքսորելոցն ուղղափառացն: Եւ հրամայեաց թագաւորն. և առեալ զեպիսկոպոսութիւնն ՚ի հալածելոց ուղղափառացն, գնաց: Եւ ընդ երթալն նորա բազում Տաճիկք քրիստոնեայք եղեն, զի դըշխոյն Մաւիէ հռոմայեցի էր ազգաւ, գերեալ ՚ի Տաճկաց. և վասն գեղեցկութեան իւրոյ կին լեալ Տաճկաց թագաւորին. և յետ մահուան թագաւորին, ինքն ունէր զթագաւորութիւնն: Եւ վասն նորա բազումք դարձան ՚ի քրիստոնէութիւն (1): Եւ յայսմ ժամանակի շինեաց Վաղէս տէմփան յԱնտիոք, որ է բանտ ուղղափառացն: Եւ յանկարծակի երևեցաւ զօրք՝ գնալով ընդ երկինս մարմնաւոր տեսլեամբ: Յայսմ ժամանակի ծնաւ մանուկ մի յԱնտաք միականի, որ ունէր չորս ոտք և չորս ձեռք և մօրուք։

---

(1) Սոկրատ (ԴԼԱ) ոչ յիշատակէ եթէ 'ի Պաղինէ (Գաղղա) ծնան Արկադէոս և Ոնորիոս , քանզի սոքա արդարև յԷլիայ Պղակիլլայէ 'ի միւս կնոջէն Թէոդոսի եղեն , որ էր դուստր Անտոնի Սպանիացւոյ , որ եղև հիւպատոս յամի 382:

(2) Յայսմ պատերազմի ոչ եթէ Գրատիանոս՝ այլ Տրայիանոս վարէր զպաշտօն զօրավարութեան . առ որ յանդիմանութիւնս արար Վաղէս յաղագս անյաջողութեամբ յետս դառնալոյ: Ամմիանոս Մարկեղինոս ԼԱ. 7. 8:

---

(1) Սոկրատ (Դ.Դ.) ՚ի հայ թարգմանութեան այլազգ պատմէ զՄովսիսէ: Էր, ասէ, Մովսէս արաբացի ազգաւ, և հաւատացեալ ՚ի Քրիստոս, առանձնացեալ ճգնէր յանապատի, սքանչելի լեալ առաքինութեամբն: Լուեալ սորա ընդ պատերազմ զոր տայր Մաւիա թագուհի ընդդէմ քրիստոնէից, երթեալ համոզէ զնա ՚ի խաղաղութիւն. և հաստատէ դաշինս ուխտի: Տեսեալ զվարս սորա բանագնացն ձեռնադրել ՚ի քահանայութիւն ՚ի Ղուկիոսէ եպիսկոպոսէ Աղէքսանդրիոյ, որ էր արիոսական: Մովսէս արհամարհեաց զնա վասն աղանդոյն, ընդունի զձեռնադրութիւն յեպիսկոպոսաց անտի ուղղափառաց որ ՚ի հալածանս կային, և դարձեալ առ Մաւիա՝ կնքումն տայ հաշտութեանն:

Յայսմ ժամանակի ելին Գոթացիքն և գերեցին բազում գաւառս, զՍկիւթիա և զԹրակիա և զՄիւսիա և զՄակեդոնիա և զԱքայիա և զամենայն Եղլադա. և Վաղէս փախեաւ ՚ի Կոստանդնուպօլիս, և ամբոխն նախատէին զնա ասելով. «Տուր մեզ զէն և երթիցուք կռուեսցուք։» Եւ ել զայրացմամբ և սպառնացաւ նոցա՝ որ ՚ի դառնալն քակէր զքաղաքն։ Եւ գնացեալ յաղթեցաւ ՚ի նոցանէ, և փախեաւ ՚ի գիւղ մի. և պատերազմողք բարբարոսաց պատեցին զգիւղն, և նա թաքեաւ ՚ի տուն յարդի. և յուզեալ զնա ոչ գտին, այլ այրեցին զգիւղն և այրեցաւ նա ընդ յարդին, առհաւատչեայ յաւիտենական հրոյն(1), և կեցեալ ամս յիսուն, և թագաւորեալ ամս եւթնևտասն։ Եւ առ զթագաւորութիւն Գրատիանոս, որ յաւուրս հօրն Վաղենտինիանոսի [illegible] էր ՚ի Հռոմ. և սա կանգնեաց զուղղափառութիւն, և արար հաղորդ թագաւորութեան իւրոյ զԹէոդոս սպանիացի, որ նա էր քարոզեալ յառաջագոյն թագաւոր զԳրատիանոս, և նա փոխարինեաց և ետ նմա զԿոստանդինուպօլիս և զամենայն արեւելս։ Յայսմ ժամանակի շինեցաւ հրամանաւ սոցա Մասալայն ։ Եւ լուեալ բարբարոսացն զկորուստն Վաղէսի, եկին մինչեւ ՚ի պարիսպն Կոստանդինուպօլսի. և ելեալ Թէոդոս կոտորեաց զնոսա, և գնացեալ յաշխարհն նոցա, արար զնոսա ընդհարկաւ ։ Եւ եղեւ խաղաղութիւն եկեղեցւոյ և աշխարհի զկնի քառասուն ամի արիանոսացն չարութեան (1) ։

---

(1) Պատմագիրք ոչ համաձայնին ընդ միմեանս ՚ի պատմել զեղանակ մահուան Վաղէսի։ Սոկրատ ասէ. «Հասեալ յԱդրիանուպօլիս, հրով այրեալ սատակեցաւ. անհաս ՚ի մարդկան գիտութենէ՝ թէ զիարդ և կամ զինչ օրինակաւ հրով այրեցաւ.» Ղ. Ն.։—Մովսէս Խոր. Գ. 33.

Յայսմ ժամանակի մեռաւ Արտաշիր թագաւորն Պարսից, և առ զթագաւորութիւնն Շապուհ որդի նորա ։ Եւ յերրորդ ամին Թէոդոսի սպանաւ Գրատիանոս ՚ի Մաքսիմիանոսէ բռնակալէ ՚ի Հռոմ (2), և թագաւորեաց փոքր Վաղենտիանոս ՚ի Հռոմ։ Եւ Թէոդոս և Վաղենտիանոս մարտուցեալ ընդ Մաքսիմոսի բռնակալի, սպանին զնա, և ինքեանք երեւելի փառօք մտին ՚ի Հռոմ։

(1) Սոկրատ, Ե, Է ։

(2) Կղեմէս Մաքսիմոս սպանիոյցի, էր բարձրագոյն պաշտօնեայ պատերազմի ՚ի բանակին որ կայր յերկրին Բրիտանացւոց, համհարզ Թէոդոսի, այլ ՚ի լսել զնորա գահակալութիւնն որ եղեւ ՚ի ձեռն Գրատիանոսի, յարձակեալ ՚ի Գաղղիա և զհետ մտեալ նորին որ փախուցեալ ՚ի Մաքսիմոսէ ՚ի Լիոն քաղաք ապաստանել փութայր, զնա՛ ետ համբուրել ՚ի ձեռն ուրումն Անդրագաթ կոչեցելոյ։ Սոկրատ գլխովին այլազգ պատմէ զմահ Գրատիանոսի, զոր տեսցես ՚ի գիրս նորա, ԾԴ ։

Եւ ապա եկն Թէոդոս 'ի Կոստանդնուպօլիս , և առաքեաց զստրատելատն յարեւելս գործակալ(1) . և յորժամ եկն յԱնտիոք , ետես անդ հակառակութիւն յեկեղեցին , և արար խաղաղութիւն և եդ զաթոռն 'ի Մելետիոս : Եւ 'ի չորրորդ ամին Թէոդոսի կամեցաւ սրբել զեկեղեցի յարիանոսացն . և արար մեծ ժողով հարիւր և յիսուն եպիսկոպոսաց . և գլխաւորք էին այսոքիկ : Մելիտոս Անտիոքու, Տիմոթէոս Աղէքսանդրու, Կիւրեղ Երուսաղէմի , սուրբն Ներսէս Հայոց Մեծաց՝ դարձեալ յաքսորանացն , Գրիգոր աստուածաբան Կոստանդնուպօլսի , և Գրիգոր Նիւսացին . և նզովեցին (նախ) զաղանդն Արիոսի , և ապա զՄակեդոնն , որ իշխեաց յանդգնել և զսուրբ Հոգին արարած ասել : Եւ հաստատեցին զհաւատն Նիկիոյ , և յաւելին 'ի հաւատամքն վասն սրբոյ Հոգւոյն , զի այս խնդիր յետոյ շարժեցաւ(2) :

Եւ զկնի տասն ամի եպիսկոպոսութեան

---

(1) Ստրատելատն 'ի յոյն լեզու զօրավար նշանակէ . և էր անուն նորա Շապուհ , որ եկեալ յԱնտիոք ետես բաժանեալ զեկեղեցին 'ի մէջ Մելետիոսի և Պաւլինոսի . իւրաքանչիւր առանձինն կալեալ աթոռ : Պաւլինոս ոչ հաճեալ ընդ առաջնորդութիւն Մելետիոսի , որ ասէր երկուցն եւս աթոռոց մնալ մինչև 'ի մահ . իսկ որ նախն մեռանիցի՝ բարձցի նորա աթոռ , վասն որոյ Շապուհ յանձնեաց զաթոռն ցՄելետիոս , տուեալ Պաւլինոսի զմի միայն եկեղեցի :

(2) Սոկրատ . Ճ . ՃԱ : —Մովսէս Խոր . Գ . 33 :

իւրոյ, Աստուածատուրանն եւ 'ի Կոստանդնուպօլիս, եւ էառ զաթոռն Նեկտարիոս: Եւ Թէոդոս յորժամ ետես զՄելիտոս, ասաց թէ «Զսա տեսի ես յերազի, որ օրհնէր զիս Թագաւոր»: Եւ սա մեռաւ 'ի ժողովն, եւ խօսեցաւ Գրիգոր Նիւսացի վասն նորա գերեզմանական ճառս. եւ բերաւ մարմինն յԱնտիոք: Եւ Մելիտոս խափանեաց զքահանայն ընդունելոյ զխոստովանութիւն, եւ սահմանեաց զի կատարեալքն առցեն եւ յամենեցունց մկրտեալքն: Զի քահանայ մի յԱնտիոք հրապարակեաց զխոստովանութիւն սարկաւագի միոյ, որ անկեալ էր 'ի կին մի մեծազգի, եւ եղեւ յոլով սպանութիւնս (1): Եւ ասաց Մելիտոս, թէ «Լաւ է զաջ դնել 'ի վերայ դժնկի փշոյ եւ ոչ 'ի վերայ տգիտաց եւ անկատարից»:

Յայսմ ժամանակի հանդիպեցաւ Թէոդոս 'ի Թեսաղոնիկէ, եւ հիւանդացաւ, եւ մկրտեցաւ յԱքիլայ եւ առողջացաւ. եւ եկեալ 'ի Կոստանդնուպօլիս շինեաց ըզմեծ եկեղեցին զԱնաստասիա (Յարութիւն): Եւ յայսմ ժամանակի ծնաւ նորա որդի 'ի Գալլէ (Գալլայ) կնոջէն, եւ կոչեաց զանուն նորա Ոնորիոս. եւ Գալլէ ծնեալ զՈնորիոս մեռաւ (2): Եւ կայր նորա պատկեր յԱնտիոք, և լուեալ զմահ նորա՝ քարշեցին և ընկեցին 'ի շուկայն: Եւ բարկացաւ յոյժ Թագաւորն Թէոդոս. և առ զիշխանութիւնն Անտիոքու, և ետ զնա Լատիկ (Լաւոդիկէ) քաղաքի՝ զանուանիլն մայրաքաղաք և աԹոռ Աւետարանչի. և դատաւորքն արարին յոլով սպանութիւն վասն այնմ գործոյ (1): Եւ լուեալ զայն միայնակեաց մի Ասպողոս անուն (2). եկն և յանդիմանեաց զիշխանսն, և գրեաց առ Թէոդոս, Թէ "Վասն պղնձի պատկերի միոյ չէ պարտ այնչափ բարկանալ, և զպատկեր Աստուծոյ ապականել՝ զմարդիկ: Պղնձի պատկեր շատ կարես կազմել. Թէ պատկեր Աստուծոյ անկարանաս չինել, զայդ ո՞չ գիտեմ: Եւ քանի՞ եւս զհոգիս մեր անարգեմք մեղօք, և չէ ումեք հոգ, որ է պատկեր Աստուծոյ նախատեալն:" Եւ զայս լուեալ Թագաւորին՝ լռեաց ՚ի բարկութենէն և հաշտեցաւ ընդ քաղաքին ։

---

(1) Սոկրատ. ճժ.

(2) Տես 'ի ծանօթութեան 3. յեր. 154.

---

(1) Ըստ պատմութեան Յունաց՝ Թէոդոս եդ նոր հարկս 'ի վերայ Անտիոքացւոց առ 'ի տօնախմբել զհնգամեանն որդւոյ իւրոյ և զտասնամեանն իւր: Անտիոքացիք ընդդէմ կացեալ հրամանին և զարձանն իսկ պղնձի զկայսեր արկեալ կործանեցին: Սաստիկ զայրացեալ կայսեր ընդ անարգանսն, զյանցաւորսն մահու դատեաց, և գլխաւորքն 'ի բնակչաց եդան 'ի բանտի: Յայնժամ Փլաբիանոս հայրապետ Անտիոքայ երթեալ առ կայսր, հզօր բանիւք իւրովք հաշտեցուցանէ ընդ ժողովրդեանն, և զպատուհասն նոցա 'ի բաց դարձուցանէ: Յովհ. Ոսկ. Ճառ անդրիանդին, ԻԱ:

(2) Ասպողոս կամ Ասպողին էր միայնակեաց և այր առանց դպրութեան, Մակեդոնիոս կոչեցեալ ըստ Թէոդորետոսի, և Գարէկեր մականուանեալ:

Յայսմ ժամանակի Թեսաղոնիկէ, որ է գլուխ Իտալիոյ (1), ապստամբեալ ՚ի Թագաւորէն քարկոծեցին զիշխան Թագաւորին որ ՚ի քաղաքին ։ Եւ Թագաւորն զայրացեալ հրամայեաց կոտորել զքաղաքն . և մեռան եւթն հազար արդար և մեղապարտ ։ Եւ Ամբրոսիոս եպիսկոպոս եկն առ Թագաւորն ՚ի Մեդուլէնէ (Միլան) քաղաք և դիպաւ Թագաւորին առ դրան եկեղեցւոյն, զի կամէր մտանել, արգել զնա և ասէ . «Զամաչե՞ս, արեամբ շաղախեալ, մտանել ՚ի տուն Աստուծոյ . այլ դարձիր և ա՛ռ կապանս ՚ի ձեռըս իմ, զոր առաքեաց քեզ Աստուած ։» Եւ Թագաւորն դարձաւ . և յետ ութ ամսոյ եկն տօն ՚Ծննդեանն . և Թագաւորն նստեալ լայր դառնապէս . և եհարց զնա մագիստրոսն Ռուփինոս(2), և ասէ . «Զի՞նչ է, արքայ, ընդէ՞ր լաս ։» Եւ նա ասէ . «Ընդէ՞ր չլամ, զի ահա ծառայք և մուրացկանք մտանեն յեկեղեցի, և ես արգելեալ կամ յեկեղեցւոյ և կապեալ յերկինս ։» Եւ նա

---

(3) Աստ փոխանակ Իտալիոյ պարտ է ընթեռնուլ Իւէջիոյ, այն է Լիւրիկէ ։

(2) Այս Ռուփինոս էր պաշտօնեայ Թագաւորին, որ գրգռեաց զԹէոդոս ՚ի մահ մտանել անձինս հնգետասան հազար ըստ այլոց պատմագրաց ։

ասէ . “Ես փութամ և աղաչեմ զեպիսկոպոսն ։” Եւ ասէ Թագաւորն . “Ես ոչ հաւատամ թէ լսէ քեզ, և ակն առնու երեսաց, և արհամարհէ զօրէնս Աստուծոյ ։” Եւ սակայն գնաց Ռուփինոս . և Թագաւորն երկիւղիւ զհետ երթայր ։ Եւ յորժամ ետես եպիսկոպոսն զՌուփինոս, բարկացաւ և ասէ . “Պի՛ղծ, քո խրատու եղեւ այն ամենայն ։” Եւ նա անկեալ առ ոտսն աղաչէր և ասէր . “Ահա և Թագաւորն գայ ընդ հետ իմ ։” Եւ նա ասէ . “Չթողում զնա յեկեղեցի . և թէ կամիցի՝ ընդունիցիմ զսպանութիւն ՚ի նմանէ որպէս և զայլսն ։” Եւ գնացեալ ընդդէմ Թագաւորին՝ պատմեցին զասացեալս ՚ի սրբոյն . և ասէ Թագաւորն . “Թող երթամ և խնդութեամբ ընդունիմ զնախատինսն ըստ արժանեացն իմոց ։” Եւ յորժամ եկն, կայր արտաքոյ և աղաչէր արտասուօք . և ձայնեաց առ նա եպիսկոպոսն և ասէ . “Ամբարտաւան, անօրէն, ընդէ՞ր եկիր այդր ։” Եւ ասէ Թագաւորն . “Յօժարութեամբ ընդունիմ, հայր սուրբ, զանարգանս և զբանադրանսդ, և առանց քո կամաց ոչինչ առնեմ . միայն մի փակեր (զդուռն) ընդդէմ երեսաց իմոց, զի արտաքուստ ՚ի ներքս տեսից զերեսս քո և զեկեղեցիդ Աստուծոյ ։” Եւ եպիսկոպոսն կայր յեկեղեցին և ասէ . “Ո՞ր աղաչխաբութիւն կրեցեր, զի զիս և զդուռն եկեղեցւոյս տեսցես ։» Եւ Թագաւորն ասէ. «Միայն ցոյց դեղ վիրաց իմոց և արարից ։» Եւ ասէ եպիսկոպոսն. «Խի՛ստ ես ընդդէմ վնասակարաց. գրել տուր օրէնս, զի արգելցեն զվնասապարտսն երիս աւուրս. և թէ տակաւին կասկածանօք է, քառասուն աւուրս. և հարց և փորձ լիցի, և վկայիւք և քննութեամբ ՚ի յայտ եկեսցէ իրաւն. և զինչ տեսցեն զկնի շիջման բարկութեանն, արասցէ զնա պատշաճն պատուհաս ։» Եւ նոյն ժամայն գրեցին. և առաքեաց առ ամենայն գաւառս և իշխանս երկրի, զի այնպէս արասցեն ։ Եւ ապա հրամայեաց Թագաւորին մտանել յեկեղեցին. և նա մտեալ յեկեղեցին՝ ընկէց զինքն ՚ի վերայ գետնոյն ասելով. «Մերձեցաւ անձն իմ ՚ի հող. Տէր ապրեցո զիս ողորմութեամբ(1) ։» Եւ արտասուելով արքայ կանգնեցաւ և գնաց մերձ ՚ի խորանն. և կամեցաւ երթալ յիւր տեղին, և արգել զնա եպիսկոպոսն և ասէ. «Լաւ է քեզ լինել յետոյ և ՚ի վայր քան զամենեսեան, մինչեւ կատարեալ ապաշխարես ։» Եւ յանձին կալաւ ամենայն խոնարհութեամբ, և գնաց կանգնեցաւ ընդ այլ ապաշխարողսն ։ Այսպիսի էր երկիւղ և հաւատ Թագաւորին(2) ։

---

(1) Սաղմոս. ՃԺԸ. 25 ։
(2) Սուրբ Օգոստինոս, Ցչ. քաղաքին Աստուծոյ. Ե. 26.

Յայսմ ժամանակի գտան ՚նշխարք Ամբակումայ մարգարէին և Միքիայ, յԱըւթրաբուլոս Պաղեստինացւոց (1) յայտնութեամբ եպիսկոպոսին. և յԵրուսաղէմ գտան ՚նշխարք սրբոյն Ստեփաննոսի և որք ընդ նմա՛ առ Յովհաննու եպիսկոպոսին Երուսաղեմի։

Ի յերեքտասան ամին Թէոդոսի քարոզել ետ զորդին զԱրկադէոս թագաւոր յարևելս. և յայնժամ Ուգանոս (Եւգինէոս) և Ուրբոգոստոս (Արբոգաստոս) իշխանք խաբէութեամբ սպանին զՎաղենտինիանոս ՚ի Հռոմ։ Եւ Թէոդոս թագաւորեցոյց զՈնորիոս ՚ի Հռոմ։ Եւ եղեալ սակաւուք ընդդէմ ապստամբացն որ էին բազումք, և առեն զթագաւորն որ ընդ նմա էին. «Թող տուր մինչեւ հասանեն զօրքն։» Եւ նա եմուտ ՚ի քարայր մի առանձինն, և գոչեաց առ Տէր. և երեւեցաւ նմա Յովհաննէս Աւետարանիչն և Փիլիպպոս առաքեալն, և առեն զնա. «Մի՛ զարհուրիր և օգնականի մի՛ մնար, զի մեք եկաք ՚ի Քրիստոսէ օգնել քեզ.» որ եղեւ իսկ. զի ՚ի վաղիւն կորեան երկոքին բռնակալքն(2)։

---

(1) Այն է Եղեւթերոպօլիս քաղաքն Յուդայաստանի՝ ՚ի ցեղին Դանայ։

(2) Սոկրատ ասէ. եթէ Եւգինէոս պարտեալ ՚ի մարտին յոտս Թէոդոսի դիմէր յանյիշաչարութիւն նորին ապաստանեալ, և զօրքն անդէն զնա գլխատեցին։ Իսկ Արբոգաստոս ՚ի հետամտոցն իւր ոչ կարացեալ զերծանիլ, ընդ սուր իւր ելեալ վախճանէր. ԾԺԴ։

Եւ յորժամ դարձաւ թագաւորն յաշխատութենէն և եկն ՚ի Միդիլի (Միլան), կալաւ զնա ցաւ երիկամանցն և մեռաւ, կեցեալ ամս վաթսուն, թագաւորեալ ամս վեշտասան և ամիս ութ (1)։

Յայսմ ժամանակի թագաւորեաց ՚ի Պարս Սուռհարօն Գերմանշահ (Վռամ Կրման,) որդի Շապհոյ, եղբայր Արտաշրի՝ ամս մետասան։

Այս Թէոդոս ՚ի կենդանութեան իւրում աղաչեցեալ յԱմղիքոսէ եպիսկոպոսէ հալածել զարիանոսն, և ոչ լուաւ նմա, մինչեւ յաւուր միում նստէր թագաւորն և թագաւորեալ որդի նորա Արկադէոս ընդ նմա. և եմուտ Ամղիքոս, և ետ ողջոյն Թէոդոսի, և յորդին ոչ հայեցաւ, և կարծեաց թագաւորն թէ ոչ տեսաւ զորդին, և ասէ. “Հայր օրհնեա՛ զորդիս։” Եւ նա ասէ. “Դու բաւական ես մեզ թագաւոր, զդա ոչ պատուեմ, բայց թէ զմի ՚ի ծառայից։” Եւ տրտմեցաւ և զայրացաւ յոյժ թագաւորն։ Եւ ասէ եպիսկոպոսն. “Դու մահկանացուդ զնախատինս որդւոյդ չկարես տանել. իսկ անմահն Աստուած զանպատուութիւն որդւոյն իւրոյ ո՞չ խնդրէ ՚ի ձեռաց քոց։” Եւ հաւանեալ թագաւորն՝ հրամայեաց հալածել զարիանոսն, և ընկենուլ յամենայն համարձակութենէ։

---

(1) Սոկրատ. ճժե.

Յայսմ ժամանակի յԷմմաուս Պաղեստինեայ ծնաւ մանուկ մի, որ 'ի լանջացն 'ի վեր երկու էր գլխովք, և չորս ձեռօք. և ապրեցաւ երկու ամ։ Յորժամ մինն ուտէր, միւսն չուտէր. և երբ մինն ննջէր, միւսն արթուն կայր. և էր զի խաղային ընդ միմեանս, և երբեմն լային, և երբեմն ծիծաղէին, և մինն քան զմիւսն երկու աւուրբք յառաջ մեռաւ։

Իսկ Թագաւորն Արկադէոս էր ողջախոհ և ժուժկալ. և ներքոյ ծիրանեացն ագանէր 'ի ծածուկ մազեղէնս, և սիրէր զկրօնաւորսն։ Յայսմ ժամանակի ածաւ Յովհան յոյժ փափաքանօք 'ի Կոստանդինուպօլիս, և էր զօրաւոր բանիւք և նշանօք և վարդապետութեամբ։ Բայց կային ոմանք որ անդոսնէին ըզնա վասն ոչ յստակագոյնս խօսելոյ 'ի բարբառն Յունաց, զի Ասորի էր ազգաւ և այնու էր վարժեալ։ Սա մեռաւ յաքսորս 'ի Կոմանս Հայոց, կեցեալ ամս յիսուն. և եւթն ամ եպիսկոպոս եկաց և զերիս ամս յաքսորս եկաց (1)։ Նա յորմէ հետէ մկրտեցաւ, ոչ երդուաւ և ոչ երդուեցոյց, և ոչ սուտ խօսեցաւ, և ոչ նկալեաց զոք, և ոչ արբ գինի, և ոչ ծիծաղեցաւ, և ընդ մարդոյ ոչ ճաշակեաց. և յորժամ երթայր յաքսորս, եհար զձեռն յեկեղեցին և ասաց. “Ողջ մնաս, սուրբ Եկեղեցի, բնակարան փառացն Տեառն: Եւ ես ՚ի պարգեւացն ՚զոր առի յԱստուծոյ, երկոտասան հազար ճառս եդի ՚ի գանձս քո, որ են ութ հարիւր գիրք:”

---

(1) Սուրբ Յովհաննէս Ոսկեբերան յաջորդեաց զՆեկտարիոս յամի 397, և 'ի 26 փետրուարի ամին դատապարտեցաւ յաքսորս յամի 404, և փոխումն նորա եղեւ յամի 407, յորմէ յայտ է եթէ եկաց նա յաթոռն ամս իբր եւթն։ — Սոկրատ, ԶԺԷ.

Յետ այսորիկ հիւանդացաւ Արկադէոս, և եդ քարոզել զորդի իւր զԹէոդոս Թագաւոր ութամեայ: Եւ Ոնորիոսի ոչ եղեւ որդի, և նա միայն էր ժառանգ, երկեաւ Արկադէոս վասն որդւոյն և արար կտակ, եւ յանձնեաց զորդին ՚ի Պարսից Թագաւորն Յազտաճառ (Յազկերտ): Եւ խնդաց յոյժ յորժամ լուաւ Յազտաճառ, և առաքեաց դաստիարակ մանկանն այր մի բանաւոր Անտիոքոս անուն, և առաքեաց սպառնալիս յամենայն տուն թագաւորութեանն Հռոմոց, եթէ ոչ ահիւ և զգուշութեամբ սնուցեն զմանուկն: Եւ մեռաւ Արկադէոս Թագաւորեալ ամս երեքտասան: Եւ կայր խաղաղութիւն ՚ի մէջ Պարսից և Հռոմոց. և Քրիստոնեայք որ ՚ի Պարս էին, աճէին և կային անկասկած ՚ի ձեռն միջնորդութեան Մարութայի եպիսկոպոսի: Եւ մեռաւ Ոնորիոս ՚ի Հռոմ անորդի, և թագաւորեաց Կոստանդիանոս (Կոստաս Գ.) և նա սպանաւ 'ի բռնակալէ ումեմնէ, և մնայ Թէոդոս միայն զկնի Ոնորիոսի, որ թագաւորեաց ամս երեքտասան, և ժառանգ ոչ եթող: Եւ յայնժամ Թէոդոս զՎաղենտիանոս հօրաքեռորդին իւր արար կեսար, և առաքեաց 'ի Հռոմ ընդ մօր իւրոյ. և յետ այնորիկ առաքեաց նմա թագ, որ և թագաւորեաց ամս երեսուն և երկու: Եւ էր Թէոդոս այր սուրբ և չքնաղ, և անձէթ և անքինի էր սիրտն նորա զաւուրս ապահոցն: Եւ սա զՌեբրանի եպիսկոպոսին մազեղէնն առնոյր զկնի վախճանելոյ եպիսկոպոսին, և զգենոյր զամենայն գիշեր. և էր անոխակալ և ողորմած այնչափ, որ 'ի հարցանելն թէ՝ «Ընդէ՞ր թողուս զմահապարտն կենդանի.» և նա ասէ. «Երանի՜ թէ զմեռեալսն կարէի 'ի կեանս դարձուցանել, թող թէ զկենդանիսն 'ի մահ փոխել: Այդ Աստուծոյ է գործ՝ սպանանել և կեցուցանել:»

Յայնժամ ժամանակի Յազդաճատ թագաւորն Պարսից մեռաւ, և առ զթագաւորութիւնն Երհարան որդի նորա ամս քսան և երկու (1): Եւ բարձաւ սէրն 'ի միջոյ թագաւորացն. և հարան Պարսիկք յոլով անգամ աղօթիւք թագաւորին:

Յայնժամ ժամանակի առաքինի երևեցաւ

---

(1) Այնէ Վռամ Բ. որ նստաւ զկնի Յազկերտի յամի 419 կամ ըստ այլոց 421.

Ակակ Ամիթայ եպիսկոպոսն, գնելով զգերեալսն ի Պարսից մինչև տայր զսպաս եկեղեցւոյն. զարծաթեղէնս և զոսկեղէնս՝ ի գինս ծառայիցն ասելով՝ թէ «Աստուածն մեր պէտս ոչ ունի ոսկեղէն և արծաթեղէն սպասուց»։ Եւ գովեցաւ հաւատ նորա ի Պարսս. և խնդրեաց զնա Պարսից թագաւորն, և յոյժ մեծարեաց ի փառս Քրիստոսի։ Յայսմ ժամանակի հռչակաւորք էին Սիմէօն սիւնակեաց Ջնոսք և Մօր Պարսամա ի սահմանս փոքր Հայոց։

Ի այն ժամանակս էր Նեստոր պատրիարք ի Կոստանդնուպօլիս. և էր նորա քահանայ մի Անաստաս անուն, որ յաւուր միում յամբիոնն խօսեցաւ զնոր հերձուածն, զՄարիամ մարդածին և ոչ Աստուածածին դաւանեալ։ Եւ ակն ունէր ժողովուրդն Նեստորի պատուհասել զնա. և նա ոչ միայն ոչ մեղադրեաց, այլ և նա ի նմին չհերձուածն և տարածեաց։ Եւ վասն որոյ պատճառի եղեւ մեծ ժողովն Եփեսոս ի քառասուն և մի ամին Թէոդոսի, և ի ՉԽԲ (742) թուին Ասորւոց. և ի Քրիստոսէ չորս հարիւր քսան և երեք (1), եղեւ առաջին ժողովն Եփեսոս. և էին անդ երկերիւր եպիսկոպոսք, և եւթն ի նոցանէ էին նզովեալք

---

(1) Ժողովն Եփեսոսի գումարեցաւ յամի 431, ի 24 ամի իշխանութեան Թէոդոսի։

՚ի Թուայն, և միայն յուղղափառութեան հարիւր իննսուն և երեք եպիսկոպոսք երեւելիք ։ Եւ Մեծն Սահակ Հայոց մեծաց անպարապ եղեալ, գրեաց Թուղթ հաւանութեան զոր ինչ և սահմանեցին ։ Էին և բազմութիւն քահանայից և կրօնաւորաց . և գլխաւորք էին այսոքիկ . ՚ի Հռոմայ Արկադէոս և Պրոկղէոս եպիսկոպոսք փոխանորդք Կեղեստինոս Հռոմայ պապուն . Կիւրեղ՝ Աղեքսանդրի . Մեմնոն՝ Եփեսոսի , Յովհաննէս՝ Անտիոքու , Ակակ՝ Մելիտենւոյ , Յոբնաղ՝ Երուսաղէմի , և այլք որ արարին նզովս Նեստորի . և Յովհան՝ Անտիոքու(1), և քսան և վեց եպիսկոպոսք ընդ նմա ոչ գրեցին նզովս Նեստորի , մինչեւ ինքեանք նզովեցան ընդ նմա ։ Եւ գնաց Նեստոր յաքսորս ։ Եւ ապա եղեւ ընդ Կիւրղի Յովհաննէս , և խոստովանեաց զմիաւորութիւն , որ ոչ գիտէր զչարութիւնն Նեստորի . և ապա հաստատեցին և ասացին . “Եթէ ոք այլ ժողով կամ եպիսկոպոս կամ Թագաւոր , նոր հաւատ և նոր սահման դնէ յետ այսորիկ , եղիցի նզովեալ . այլ զՆիկիային հաւատոյն կալցի սուրբ եկեղեցի մինչեւ ցկատարած աշխարհ հի ։ Եւ նզովեալքն զինի ‘Նեստորի այսոքիկ էին. Թէոդորիտոս՝ Կիւրոս քաղաքի. Անդրէ՝ Սամուսատեայ, Աղեքսանդրոս՝ Մնբէճայ, Արիանոս՝ Սրոյ, Յովհաննէս Կիլիկիոյ, Եւթերիոս՝ Տարօնոյ. և այլք ընդ նոսա. և 'ի տեղի ‘Նեստորի եդին զՄաքսիմոս 'ի Կոստանդինուպօլիս (1) ։

---

(1) Յովհաննէս եպիսկոպոս Անտիոքայ աշակերտակից գոլով Նեստորի , վասն որոյ կողմն ունէր զառաջինն . այլ յետոյ ՚ի վերայ հաւատոյ միաբանութեան նոցին , յետս եկաց ՚ի հաղորդակցութենէ նորա ։

Պատճառ ժողովոյն Քաղկեդոնի ։

Ի քսան և յինն ամի թագաւորութեան իւրոյ լուաւ Թէոդոս զաղմուկն Փլաբիանոսի եպիսկոպոսի Կոստանդինուպօլսի, և զԵւտիքի վանայերէցի,և հրամայեաց երկրորդ ժողով լինել յԵփեսոս, զինի ութ և տասն ամի առաջին ժողովոյն որ առ Կիւրղիւ (2). և գրեաց առ Դէոսկորոս զայս օրինակ.

“ Ինքնակալք կայսր Թէոդոս և Վաղենտիանոս յաղթող թագաւորք. առ սուրբ հայրդ Դէոսկորոս եպիսկոպոսապետ առաքելական աթոռոյդ Աղեքսանդրու ։ Դիտութիւն լիցի սրբութեան ձերոյ, զի արմատ դառնութեան ‘Նեստորի շառաւիղեալ թուի առ Փլաբիանոս, և Մանեայ կարծիքն առ

---

(1) Սոկրատ, ճՀԱ ։

(2) Երկրորդ ժողովն Եփեսոսի եղև յամի 449. 'ի 42 ամի Թէոդոսի, և ոչ 'ի 29 որպէս սխալմամբ գրէ Միքայել ։

Եւ ամիքէս վանական, որպէս լուայք. և գործս այս մշակութեան ձեր է պատշաճագոյն, որքեւ զեկեղեցի անարատ հարսն Քրիստոսի, վասն որոյ փութացիք ՚ի թիկունս հաստատել արամութեան երկնաւոր առագաստին. և բերցես ընդ քեզ տասն մետրապոլիտս և տասն այլ եպիսկոպոս բանաւորս իմաստութեամբ, որ կարող են զպայծառութիւն հաւատոյ ուղղափառութեան վառել և դնել ՚ի վերայ աշտանակի՝ յուրախութիւն երկնաւորաց և երկրաւորաց։ Եւ ՚ի գալն քո ածցես տասն այլ եպիսկոպոս ՚ի Պաղեստինէ. և ՚ի Փղշտացւոց. բեր և զՅօբնաղ եպիսկոպոսապետն Երուսաղէմի, զի ընդդէմ՝ էր նա ՚Նեստորի և Լեւոնի չարափառաց. և մի բերցես զհիւանդացեալսն ՚ի հաւատս առ Կիւրղիւ՝ զԹէոդորիտոս եպիսկոպոս Կիւրիոյ քաղաքի, և զայլս ընդ նմա։ Եւ Յուլիանոս հռոմայեցի որ առ մեզս է, լնու զտեղն Հռոմայ, զի և նա հիւանդ ցուցաւ Քաղկեդոնի ժողովին իւր տումարովն։ Եւ ած զմեծ ճգնաւորն և զհայրն անապատի փոխանակ ամենայն արեւելից վանօրէից զՄօր Պարսամա, զի կարի ջանայր նա հակառակ ՚Նեստորի և տումարին Լեւոնի։»

Եւ սուրբն Դէոսկորոս առեալ զթուղթ թագաւորին, արար որպէս հրամայեցաւ. և եկն Քաղկեդոն ՚ի ժողովն, հարիւր քսան և ութ եպիսկոպոսօք ։ Եւ գլխաւորք էին այսոքիկ․ Դէոսկորոս՝ Աղէքսանդրի, Յոբնաղ՝ Երուսաղէմի, Դոմնոս՝ Անտիոքու, Եւստաթէոս՝ Բիւրիտայ, Թէոդոլիս՝ (Թէոդոլոս) Կեսարիոյ Հայոց, Եւսեբիոս՝ Կիլիկիոյ, Վասիլիոս Սելեւկիոյ, և Մօր Պարսաւմա գլուխ վանականաց։ Եւ արարեալ քննութիւն յոլով, Եւտիքէս ուղղայաւ կերպարանօք և ոչ ճշմարտութեամբ, վասն որոյ ոչ եղեւ ընկալեալ, և նզովեցաւ, զի առ աչօք ասէր զմարդկութիւն Տեառն մերոյ։ Եւ այս արարեալ էր դաւանութիւն Փլաբիանոս, բերին յառաջ և կարդացին, որ ունէր զՆեստորի մոլորութիւնն․ և գտաւ ՚ի նմա ձեռագիր ՚ի Վասիլիոսէ եպիսկոպոսէ Սելեւկիոյ և զՅուլիանոսի Հռովմայեցւոյ և զԵւտոկիոսի Կիպրացւոյ, և զՍելեւկոսի Եմեսացւոյ ։ Եւ ՚ի լսելն զայս ամենայն ժողովն՝ նզովեցին ասելով․ “Բարձէք, բարձէք, այրեցէք հրով զանաստուած տումարդ․” և նզովիւք ընկեցին յաթոռոյ զՓլաբիանոս և զԵւսեբիոս և զԴոմնոս Անտիոքու, և հինգ եպիսկոպոս ընկերաց նորա, և զԻրինէոս Սրոյ, զԱկակիոս Պերուլայ(1), զԹէոդորիտոս Կիւրիայ, և զԻբաս Ուռհայոյ, զՍեբերիոս Թղմայ(2), զԴանիէլ Խառանու, և զտոմարն Լեւոնի արհամարհեալ յառաջին ժոզոյլոյն, ոչ համարեցան պատշաճ ընթեռնուլ:

---

(1) Ըստ Ասեմանեայ՝ Սոփրոնիոս Դէլլայ։

(2) Ըստ Ասեմանեայ՝ Եւսեբիոս Տորիլայ։

Եւ եկն թուղթ ’ի թագաւորացն ’ի Թէոդոսէ և ’ի Վաղենտինիանոսէ, ոչ յաւելուլ և ոչ պակասեցուցանել ’ի հաւատոյ ուղղափառութեան Նիկիոյ, Կոստանդնուպօլսին և Եփեսոսին, այլ զնոյն հաստատել. վասն որոյ դաւանեցին՝ մի Տէր, մի Քրիստոս, մի Որդի, մի դէմ, մի բնութիւն յետ անճառ միաւորութեանն. նոյն Աստուած և մարդ կատարեալ, հոգի, մարմին, միտք, ճշմարտապէս և ոչ կարծեօք:

Իսկ զկնի արձակման ժողովոյն, յորժամ գնացին (առաքեալքն) առ ’ի Լեւոնէ, և պատմեցին նմա զոր ինչ եղեւն, շարժեցաւ ’ի բարկութիւն Լեւոն, և առաքեաց կոչեաց առ ինքն զՓլաբիանոս, և լուաւ նմա զդաւանութիւնն և հաճեցաւ. և այնչափ զայրացոյց Փլաբիանոս զԼեւոն ընդդէմ Դէոսկորոսի աւելով, թէ “Արհամարհեաց զքո տումարն և նեստորական ասաց զքեզ.” եւ նա ’ի տարակոյս անկեալ խնդրէր հնարս ընկենուլ զԴէոսկորոս փոխանակ նախատանաց իւրոց: Յայսմ ժամանակի գնացին թագուհին Թէոդոսի և քոյր նորա Պուլքեր ’ի պատճառս աղօթից ’ի Հռոմ, և ըստ պատշաճի մեծարեցան ’ի Վաղենտինիանոսէ թագաւորէն և յամենայն բնակչաց Հռոմայ: Եւ արքայն

Վաղենտինիանոս առեալ զնոսա երթայր 'ի տաճար առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի, ուր կային նշխարք նոցա. և զայն խնդրեալ Լևոնի, ընկէց զինքն 'ի գետին 'ի ներքոյ վիրապաղութին, և երեսք 'ի վայր, և ոչ յառնէր ընդառաջ նոցա, մինչև վերացուցեալ զվարագոյրն՝ և տեսին զի լայր հեծեծանօք, և հարցեալ զպատճառն աղաչանօք, բուռն հարկանէին նստուցանել զնա, և ասէր (1). «Պատուեաց Դէոսկորոս զհաւատս ուղղափառ և արհամարհեցաւ աթոռ սուրբ Առաքելոցս 'ի նմանէ:» Եւ նոքա մխիթարեցին զնա և ասեն. «Լինի ըստ կամաց քոց՝ զոր ինչ հրամայես:» Եւ կալաւ զնոսա բարեխօս առ Թէոդոս Թագաւորն, տալ հրաման տիեզերական ժողովոյ, խափանել զԴէոսկորոսին. և նոքա երդմամբ յանձն առին: Եւ 'ի դառնալ կնոջ Թագաւորին և քեռ նորա Պուլքերիայ, գրեաց զկնի նոցա Թուղթ աղաչանաց զի արասցէ ժողով յոլովաթիւ քան զԴէոսկորոսին՝ քննել ստուգիւ զիւր տումարն և չդնել զնա ընդ Նեստորի չարափառի: Իսկ իբրև լուաւ Թագաւորն, հրամայեաց 'ի նորա խնդրոյն, և ասաց. «Ես հաստատեալ եմ և հաւանեալ Կիւրղի և Դէոսկորոսի սուրբ սահմանին, որք դատեցան զտումարն Լեւոնի զուգաքան Նեստորի անիծելոյ ։ ” Եւ ուղղափառութեամբ կեցեալ Թէոդոս թագաւորն՝ մեռաւ յիսուն ամաց, թագաւորեալ քառասուն և երկու ամ․ զի ութամեայ թագաւորեաց ։

---

(1) Յօրինակին և նստէր:

Եւ թագաւորեաց Մարկիանոս քեռորդի թագաւորին Թէոդոսի ընտրութեամբ Պողքերիայ, այր ծեր ագէտ և առանց դըպրութեան ։ Եւ թագաւորեաց ամս վեց և ամիսս հինգ, որ և ասեն թէ պոռնկութեամբ միաւորեալ էր ընդ Պողքերիայ յառաջագոյն։ Եւ յառաջին ամի թագաւորութեան նորա գայ Թուղթ աղաչանաց 'ի Լեւոնէ այլ նոյն օրինակ զոր յառաջագոյն գրեաց, վասն ժողովոյ առ Մարկիանոս և առ Պողքեր, յիշեցուցանելով նմա զկանխաւ խոստումն ։ Եւ ետ բերել առ նոսա զիւր տումարն, զի նոցա սաստիւ և հրամանաւ շրջեցուցանեն ընդ աշխարհն ասիական առ եպիսկոպոս, զի ձեռնարկ արասցեն 'ի տումարն նախ քան զժողովն ։ Եւ նոքա հաւանեցան վասն երկու պատճառի․ առաջին՝ վասն խոստմանն և երդմանն Պողքերի, և երկրորդ՝ զի օրէնք էր չդնել թագաւոր 'ի Կոստանդնուպօլիս առանց թագաւորին Հռոմայ և հայրապետին։ Եւ այս առանց նոցա եղեւ, և յերկիւղի էին վասն մխորման, (վասն այնորիկ) գրեցին Թուղթ աղաչանաց և սպառնալեաց յերեսայ Թագաւորին և Պողքերայ, և իշխանօքն և 'ի Լեւոնէ եկեալ եպիսկոպոսօքն առաքեցին ընդ աշխարհ, և 'ի հաւան ածին ձեռագրով չորս հարիւր քառասուն և վեց եպիսկոպոս ։

Եւ յորժամ դարձան և տարան առ Թագաւորն և առ Պողքեր զԼեւոնի տումարն, յորում կայր չորս հարիւր քառասուն և վեց եպիսկոպոսի ձեռագիր, խնդացին և հրեանք այլ ձեռնագրեցին. և հրաման ետուն ժողովել ընդ ամենայն երկիր՝ բաց 'ի Հայոց, որ չէր ընդ իշխանութեամբ նոցա։ Եւ յերկրորդ ամին Մարկիանէի ժողովեցան եպիսկոպոսք վեց հարիւր. և գլխաւորք էին այսոքիկ. 'ի Հռոմէ փոխանակ Լեւոնի՝ Տրոմոպիկոս, Լուքաս, Լիկինիոս, Ասկողայոն. Յոբնաղ՝ Երուսաղէմի, Դէոսկորոս՝ Աղեքսանդրի, Դոմնոս՝ Անտիոքայ, Վասիլիոս Սելեւկիոյ, և Պետրոս Կորնթացին՝ եպիսկոպոսն Դաղացւոց և գլխաւոր Փղշտացւոց աշխարհին, և Թէոդորիտոս զոր Կիւրեղ նզովեալ էր յԵփեսոս՝ եղին գլուխ ժողովոյն. և ասաց Դէոսկորոս. «Ի՞նչ է այդ անօրէնութիւնդ. ասէ աստուածընկալն Պաւղոս, թէ — Զոր քակեցին՝ վերստին շինիցեմ, յանցաւոր առնեմ՝ զանձն իմ(1)։ — Զքակեալդ նզովելով զիա՞րդ զ՚նէք գլուխ, և չիւիք զմեռեալդ։» Եւ օգներ նմա զառաջին Յոբնաղ. և չարժեցան և եղեն ամենն ընդ Դէոսկորոսի և ասացին. «Կիւրեղ սահմանեաց նզովիւք, որ այլ նոր ինչ չդնիցի, և մեք զնոյն ասեմք, նզովեալ եղիցին որ այլ նոր սահման դնեն և կամ նզովեալն Կիւրղի ընդունին։» Եւ յետ այսորիկ թագաւորն սկսաւ փաղաքշել, և ինքն անձամբ սպասաւորէր, և աղաչէր և կաշառուէր. և ետ Յոբնաղայ երեք գաւառ 'ի Փղշտացւոց աշխարհէն. և բազում թախանձանօք ած զնա 'ի հաւան չորս հարիւր քառասուն և վեց եպիսկոպոսօքն, որ նախ ձեռնադրեալ էին։ Եւ մնացին յուղղափառութե՟ ընդ Դէոսկորոսի երկերիւր յիսուն և չորս, որ կրեցին բանդ և կապանս և նեղութիւնս և մահ, և ոչ մեկնեցան 'ի սիրոյն Քրիստոսի։ Եւ հաւանեալքն տումարին Լեւոնի, երկու բնութիւն ասացին յանկացեալ, և խաբէութեամբ զկոյսն Աստուածածին, զի թէ յանկանից բնութիւն մարդոյն քան նոցա չարեացն, զիա՞րդ է Աստուածածին։ Եւ լցան տիեզերք խռովութեամբ և արեամբ. երկու ամ և կէս յամեաց ժողովն. և դարձան աքսորեալքն և նզովեալքն 'ի Կիւրղէ և 'ի Դէոսկորոսէ 'ի պատիւ և յիշխանութիւն զօրականօք և թղթով թագաւորականաւ. ընդ որս և Յոբնաղ գնաց յԵրուսաղէմ։

---

(1) Թղ. առ Հռովմայեցիս. ԺԵ. 20 ։

Եւ եղեւ խռովութիւն մեծ յԵրուսաղէմ, զի չընդունէին զնա, և ձեռնադրեցին իւրեանց պատրիարք զԹէոդոսիոս (1) . և Յոբնաղ գրեաց առ Մարկիանէ, և առաքեաց զօրագլուխ զօրօք, և հանին զԹէոդոսիոս և հաստատեցին զՅոբնաղ։ Եւ շրջէր վերստին ընդ աշխարհն Պաղեստինէ և ընդ Փղիշտ, և դարձուցանէր 'ի մոլորութիւն. և զուղղափառսն ծեծէին և հալածէին, յափշտակէին զինչսն. և բազումք 'ի Հրէից շրջէին և կոտորէին զուղղափառսն։ Իսկ 'ի Պետրոսէ պատկառէին 'ի Գազացւոցն եպիսկոպոսէ, զոր ասեն որդի թագաւորին Վրաց պատանդ լեալ 'ի Կոստանդինուպօլիս և յօժարեալ 'ի խիստ կրօնս, եղեւ հռչակաւոր առաքինութեամբ. և հարկեալ արարին եպիսկոպոս։ Եւ սա յանդիմանեաց զՄարկիանոս, և նզովեաց զժողովն, և գնաց տրտմութեամբ։ Եւ ոչ ոք իշխէր ընդդիմանալ նմա վասն գերազանցեալ առաքինութեան նորա։ Այս Պետրոս գրեաց 'ի Հայս, և երանեաց վասն ոչ լինելոյ նոցա 'ի ժողովն, և ասաց յայտնապէս. “Իքաղկեդոն ուրացան զՔրիստոս . դուք այնու կացէք 'ի հայրենի հաւատդ որ շնորհեցաւ ձեզ 'ի Տեառնէ և աշխարհիդ ձեր . զի որպէս երբեմն սերմն մարդկութեան այդուստ սփռեցաւ ընդ աշխարհ , նոյնպէս առ ձեզ պահեցաւ սերմն ուղղափառ հաւատոյ . և 'ի ձէնջ տարածեալ է ընդ բազումս : Այլ լերուք հաստատուն վէմն Քրիստոս , որդեակք իմ : » Ընդ որս և մեք հաւատացեալքս 'ի Աստուած Հայրն ամենակալ, և յՈրդին միածին 'ի Տէրն և 'ի Փրկիչն մեր Յիսուս Քրիստոս , և 'ի Հոգին սուրբ Աստուած ճշմարիտ , փառաւորեմք զսուրբ Երրորդութիւնն և զմի Աստուածութիւնն , այժմ և հանապազ յաւիտեանս յաւիտենից . ամէն :

---

(1) Արեւմտեանք զԹէոդոսիոս համարին իբր կրօնաւոր որ յանդուգն բարուք. և վասն իրիք յանցանաց տարագրեալ յԱղեքսանդրիոյ և փախուցեալ 'ի Պաղեստինէ ունէր զաթոռըն Երուսաղէմի 'ի ժամանակի զի Յոբնաղ 'ի ժողովն գըտանէր Քաղկեդոնի.

Բ

Յովհաննու միայնակեցի տեսանողի, աշակերտի Պետրոսի եպիսկոպոսի Վիրիացւոյ, եթէ անօրէն եւ ամպարտաւան ժողովն Քաղկեդոնի 'ի բարկութենէն Աստուծոյ եւ 'ի թողլոյ 'ի մեղաց եղեւ. եւ ոչ 'ի Հոգւոյն Սրբոյ, որպէս Նիկիայն, Կոստանդնուպօլսին եւ Եփեսոսին. եւ վկայեն այսմ նախատեսութիւնք սրբոցն որ եղեն յառաջագոյն եւ որ զկնի ժողովոյն ։

Ա. “ԱՅՍ աղանդոյ սկիզբն Նեստոր եղեւ, զոր պատմեաց մեզ հայրն մեր և հայրապետն սուրբն Պետրոս, եթէ Ես էի 'ի Կոստանդինուպօլիս, և 'ի տօնի սրբոց Քառասնիցն հայեցաւ Նեստոր 'ի պատկեր Տիրամօրն որ կայր յեկեղեցին և ասաց. “Մի՛ պարծիր, ո՛վ Մարիամ, թէ զԱստուած ծընար. զի ոչ ծնար զԱստուած, այլ դու մարդ ես և մարդ ծնար։” Եւ 'ի նոյն ժամն լլկեցաւ 'ի դիւէ, և զարկաւ զգետնի, և բարձեալ սարկաւագացն տարան 'ի յարկս իւր ։ Եւ այս եղեւ սկիզբն պղտորման և ամբոխի սուրբ Եկեղեցւոյ ։”

Բ. “Պատմէր մեզ նոյն հայրն մեր վասն Պաղակիոսի ուռհայեցւոյ, որ էր այր սուրբ միայնաւոր, և ունէր հոգի մարգարէութե̃.

ոս լուսաւ զհերձուածն Իբասայ (1), և սաստեալ նմա և զայրացեալ եկն ՚ի Փլիշտ, և կայր հանդարտութեամբ։ Եւ էր անդ Իւիլոս եպիսկոպոս, այր սուրբ և սքանչելի, և հանապազ գայր առ նա ՚ի Գաղացւոց քաղաքն վասն հոգեւոր իրաց. և յաւուր միում եկեալ ՚ի զարմացման, և հարցեալ զնա զպատճառն՝ ասէ ցՊետրոս. “Յառնէ թագաւոր մի Մարկիանոս անուն, և առնէ ժողով և հալածէ զուղղափառսն. և կրեմք ես և դու, և ՚ի նոյն կատարիմք։” Եւ էր այս յառաջ քան զեւթն ամս ժողովոյն։”

Գ. “Նոյն յիշեցեալն Պաղակիոս յաւուր միում ետես տեսիլ, և սկսաւ ասել. “Ա՜յ Պողքեր, վա՜յ Պողքեր.” և ժողովեցան ՚ի հարցանել, և ասաց. “Պողքեր՝ որ նուիրեաց զինքն Աստուծոյ, պոռնկեալ անկանի յԱստուծոյ, և հալածէ զուղղափառ հաւատացեալսն ՚ի նա ՚ի ձեռն Մարկիանոսի։”

Դ. “Պատմեաց մեզ Պաղակիոս վասն Պամփիլոսի սարկաւագի։ “Յաւուր միում, ասէ, աղօթէր ՚ի սուրբն Գողգոթա յԵրուսաղէմ, որ եկեալ ՚ի հիացման, և սկսաւ ասել երիցս անգամ. “Ա՜յ Եւբիլիոս (Պրոյիլոս) պատրիարք Երուսաղէմի։" Եւ հարցեալ զնա՝ ասէ. "Այս Եւկլիոս որ տեսանէք պատուեալ յամենեցունց, լինի ժողով 'ի Քաղկեդոն, և ընկենուն յանարգանս և յաքսորս և 'ի մահ։"

---

(1) Իբաս եպիսկոպոս Եդեսիոյ համախոհ գտաւ Նեստորի խոստովանութեանն, վասն որոյ և՚ի բաց մերժեցաւ յաթոռոյն։ Այլ յետոյ ՚ի թոյլտուութենէ ժողովոյն Քաղկեդոնի դարձաւ կրկին յաթոռ իւր և վարեաց զնոյն ցկեանս։

Ե. "Եւ ասաց Պաւղոկլիոս ցՊետրոս հայրապետ և ցՅովսէփ ներքինի. "Այժմ կարդացէք զգրեանդ, զի զգուշասջիք եկեղեցւոյ զոր յանձնեաց ձեզ Աստուած։ Զի գայ ժամանակ, որ ոչ պարապիք 'ի հալածանաց։" Եւ Պետրոս զարմացաւ և ասէ. "Զի՞նչ ասես։" Եւ նա ասէ. "Տրտմութիւն մեծ կրեսցէ սուրբ եկեղեցի յետ աւուրց. և յորժամ լինի, յիշեսջիք զիս։" Եւ ինքն սկսաւ միայն աղօթել զայս. "Տէր Աստուած իմ անսասան պահեա զիս յուղիղ հաւատս. և մի տանիր զիս 'ի ժամանակ տրտմութեան եկեղեցւոյ քո, այլ որպէս կամիս, առ զհոգիս՝ թէ 'ի տուէ, թէ 'ի գիշերի, թէ 'ի տան և թէ 'ի բացեայ։" Եւ յաւուր միում երթալով նմա 'ի Ճանապարհ, ետես այր մի սուրբ և ասէ ցնա. "Յիշեա զիս յաղօթս քո։" Եւ ինքն անկեալ մեռաւ. և ազդ արարեալ առնն 'ի մերձակայ գեղջն. եկին և տարան, պատուով թաղեցին։"

Զ. "Պատմեաց մեզ Յովհաննէս քահանայն աղէքսանդրացի, թէ "Մինչ էի ես մանուկ, գնալ կամեցայ 'ի մեծ քաղաքն Ատալիս յուսումն իմաստասիրութեան, և

՚ի գնալն մախ յայրն ուր կայր մարգարէն մեռեալ. և սկսայ աղօթել՝ հանդիպիլ հաճոյիցըն Աստուծոյ. և եղեւ ձայն առ իս. "Որդեակ չկայ խաղաղութիւն, չկայ ժամանակ բարւոյ. զի յառնէ Թագաւոր Մարկիանէ անուն և առնէ ժողով, ուր ուրանան ըզմահն Աստուծոյ խաչիւ. և յառնէ պատրիարք ուղղափառ Պրոտերոս անուն, որ կայ ընդդէմ չար ժողովոյն, և ՚ի նոյն կատարի վկայութեամբ. և փոխէ զդաւանութիւն նորա Տիմոթէոս անուն. և շփոթ ժողովոյն մնայ մինչեւ ցՆեռնն:"

Է. "Հայրն Օնեան որ կոչէր մարգարէ, ՚ի Բրաղրու գեղջէ՝ փղշտացի, ասաց ցհայրըն Ստեփաննոս. "Թէ կամիս բարեգործութիւն առնել, արդ արա. եթէ կամիս յօտարութիւն գնալ, արի գնա, զի ժողով կամի լինել չար, և հալածումն յառնէ եկեղեցւոյ:" Եւ ինքն խնդրեաց յԱստուծոյ մահ, և ննջեաց քան զժողովն Քաղկեդոնի յառաջ:"

Ը. "Պատմեաց հայրն Անոկտիոս Պամփիլեցի գլուխ եղբարց, թէ "Այր մի սուրբ բնակէր յառանձնական տեղւոջ, և եկն առ նա սատանայ և ասէ. Հնազանդեաց ինձ: Եւ նա ասէ. Մ՛ի, բա՛րէ քեզ(1): Եւ ասէ սատանայ. Չհնազանդիս. ահա առնեմ ժողով որ ամենեքեան հնազանդին նմա։ Եւ զայս ասաց զի հաւանեցոյց զժողովն ասել, թէ ոչ յայտնեցաւ Աստուած, այլ մարդն։”

---

(1) Յօրինակին Մէ՛ բարէ քեզ:

Թ. “՚Նախ քան զժողովն, յորժամ կամէր լինել, ՚նսեմացաւ արեգակն. եւ տեղաց օդք քարինս եւ հող. եւ քարինքն որպէս ձեռագործ էին մարդկան։ Եւ ամենք Երուսաղէմացիք եւ Փղշտացիք առին ՚ի ձեռս եւ կուրացան։ Եւ Եւսերի առեալ ՚ի քարանցն առաքեաց առ Եւդոքսիա ՚ի Կոստանդնուպօլիս. եւ գուշակեաց թէ՝ պատճառ խաւարման եկեղեցւոյ լինելոց է։”

Ժ. “Եւ Պետրոս եւ Անդրէ աշակերտան իւր մկրտեցին, թէ յորժամ եղեւ ժողովն, կուրացեալքն այն օծանէին զաչս իւրեանց արեամբ սպանելոցն վասն ուղղափառութեան, եւ բժշկէին։”

ԺԱ. “Եւ յետ ժողովոյն, ՚ի Կեսարիա յորժամ վիճէին Քաղկեդոնականքն, թէ մարդոյն խաչեցաւ, եղեւ պատարագն իւրեանց միս եւ արիւն մարդոյ. եւ չկարացին ճաշակել, եւ մնաց առ բազումս պահեալ։

ԺԲ. “Եւ յորժամ զառաջինն Թագն ՚ի գլուխն եդաւ Մարկիանոսի, խաւար կալաւ զամենայն երկիր, գուշակելով զխաւարումն եկեղեցւոյ. եւ ինքն ասաց թէ՝ “Օյն նշանակեաց որ մինչեւ յիս խաւար էին աշխարհքս, եւ ինեւ սկսանի լոյս եւ բարութիւն։”

ԺԳ. “Յեկեղեցւոյն վերայ, որ շինեալ կայ 'ի տեղւոջ համբառնալոյ Տեառն, կայր խաչ մի ոսկեղէն, և ընդ լինել ժողովոյն՝ յանկարծ այրեցաւ և փոշի եղեւ, և սուգ եղեւ ժողովրդոցն. և գրեցին 'ի Կոստանդնուպօլիս, և առաքեցին խաչ պղնձի և եդին 'ի տեղւոջն։”

ԺԴ. “Ասաց հայրն Եսայի թէ՝ “Ասաց ինձ հայրն Պօղոս եթէովպացի, որ էր հարիւր և տասն ամաց, թէ յետ քսան ամի լինի շփոթ մեծապէս 'ի ձեռն Մարկիանէ, որ թագաւորէ վեց ամ։ Եւ զկնի լինի սակաւ մի խաղաղութիւն եկեղեցւոյ, և դառնան անդրէն 'ի նոյն չարիս մինչեւ 'ի սուտ Քրիստոսն։”

ԺԵ. “Ասաց հայրն Օլենոն, որ ասի Եւրէճ—[illegible], որ յանդիման (1) Աղէքսանդրի էր, թէ “Գնացի առ նոյն հայրն Եսայի, և տեսի որ զախրայն 'ի ձեռին ունէր, և միտք իւր վերացեալ էր, և կարծեցի թէ աղօթէր, և դարձայ. և կոչեաց զիս և ասէ ցիս. Գրեա՛, թէ սուրբն Տիմոթէոս, որ այսօր յաքսորս է, յետ սակաւ ժամանակի դառնայ, և կանգնէ զուղղափառութիւնն երկու ամ, և ապա ննջէ։ Եւ յետ իւր լինի սարկաւագապետն եպիսկոպոս. և յաւուրսն յայնոսիկ լինի պատառումն յեկեղեցւի, որ ոչ ողջանայ մինչ 'ի յայտնել ապիղծ Նեռինն։”

---

(1) Յօրինակին յանդգայն։

ԺԶ. “Հայրն Պաւղոս անապատացին պատմեաց, թէ “Ոմն միայնակեաց տեսանող տեսանէր, զի ժողովեալ էին ամենայն եպիսկոպոսք և վառէին թոնիր. և կային լուսապատկեր երիտասարդ մի, և ձգեցին 'ի ներքս և ծեփեցին. և յետ երեք աւուր ետես ելեալ, և ասէ Տէր. “Ո՞վ էին որ արկին ըզքեզ, և զիա՞րդ զերծար։” Եւ ասէ. “Հրեայքն Նեստորականք, Քաղկեդոնեայք եպիսկոպոսքըն, որ ասեն՝ մարդն խաչեցաւ, և արկին զեկեղեցի իմ։ Եւ ծեր մի որ ոչ միաբանեաց ընդ նոսա, զերծոյց զիս ամենեւին յայրմանէն։ Եւ ասեմ. Տէր, ո՞վ էր նա։ Եւ ասէ, Դէոսկորոս. և որպէս կիւրենացին էր Սիմոն, որ եբարձ զխաչն իմ. և Կիւրենա աշխարհէ Լիբիոյ, որ բառնան զխաչն իմ պարծանաց 'ի ձեռն Դէոսկորեայ եւ պահեն զուղղափառութիւն։”

ԺԷ. “Տիմոթէոս 'ի ժամ ննջման իւրոյ պատմեաց, թէ “Մինչ մանուկն էի և երթայի 'ի դպրոց, հանդիպեցաւ ինձ փառատեսիլ ծեր մի, և համբուրեաց զգլուխ իմ և ասաց երեք անգամ. Ողջոյն ընդ քեզ Տիմոթէոս, հայրապետ կատարելութեան (1)։”

ԺԸ. “Եւ դարձեալ ասէ նոյն Տիմոթէոս,

---

(1) Միւսն յաւելու. Դու լինիս պատճառ ուղղափառութեան անդամոց Քրիստոսի։

թէ "Ի տեսլեանն երթայի ես 'ի Սելևկիամ, և տեսի վանք մի աւերակ. և դարձեալ էին մրգաբեր ծառքն 'ի փուշ և այգին բեկոտեալ. և հարցի թէ այս ի՞նչ է. և ասէ ոմն ցիս. "Այս վանքն Իւլիանոսի (Յոբնադի) է, յորմէ կոչեցաւ յեպիսկոպոսութիւն, և եղեւ հակառակ Դէոսկորոսի 'ի ժողովն Քաղկեդոնի. և կատարեցաւ առ նա բանն, թէ "Եղիցի բնակութիւն նորա աւերակ, և 'ի յարկս նորա մի՛ ոք իցէ որ բնակիցէ (1)։"

ԺԹ. "Ի յաղուհացսն շրջէր Իւլիանոս ըստ հին ժամանակին 'ի վանորայսն, և գնաց 'ի դուռն տեսանողի մենաւորի ումեմն. և փակեաց ընդ դէմ նորա։ Եւ նա բախէր. և ասէ մենաւորն. "Գնա սուտ քրիստոս, գնա Յուդա մատնիչ։" Եւ ասէ. "Պահքն տարեալ է զխելքն։" Եւ գնացին ամօթով։"

Ի. "Անագանոս(2) մի յԵրուսաղէմ 'ի Պրոպատիկէն տեսանէր զՏէրն, զի մտանէր 'ի Տաճարն հրեշտակօք, որ ունէին լապտերս շիջեալս, և ասէր. "Մոռացան զերախտիսն իմ և զպարգեւսն իմ։ Եղկելին Իւլիոս արար զտունս իմ այրս աւազակաց, բոզանոց և պոռնկանոց և շնանոց։" Եւ բացաւ առաջի նորա խորհրդանոցն, և սկիհն էր աղտեղի և փշրտեալ հանդերձիւ ծածկեալ. և առաց Տէրն . “ Հանէք , ձգեցէք , զի ոչ է իմ դա։” Եւ ցանագանան ասէ . “Ել աստի։” Եւ նա ասէ . “Ողորմութեամբ օգնեա ինձ Տէր։” Եւ ել Տէրն և գնաց ։ Եւ այս տեսիլ յայտնի եղեւ ամենայն քաղաքին . և լուաւ Խուլինիոս թէ համբաւեցաւ տեսիլն . և 'ի գիշերին աներեւոյթ արարին զմանուկն . եւ թէ զի՞նչ արարին , Աստուած գիտէ ։”

---

(1) Սաղմոս. ԿԸ. 26։

(2) Ընթերցող։

ԻԱ . “ Յաւուրսն յայնոսիկ Պետրոս ամեն սուրբ , ետես զսուրբ խորհուրդն ապականեալ . և այլ ոչ եւս հաղորդեցաւ մինչեւ ցմահ ։”

ԻԲ . “ Այն անապատաւոր Պաւղոս անուն, որ բնակեալ էր հեռի յԵրուսաղեմէ հնգետասան միլ , տեսանէր դաշտ մի , և 'ի մէջ դաշտին բլուր մի , և 'ի բլրին խորան մի , և 'ի վերայ խորանին սիւն մի ոսկի՝ ակամբ և մարգարտով զարդարեալ . և ցոլմունք շառաւիղաց հրեղինաց հատանէին 'ի նմանէ . և շուրջ զնովաւ բազմութիւն զօրաց՝ որ կային նմա 'ի սպասու . և եղեւ ձայն յերկնից որ ասէր . “Նզովեալք են ամենեքեան որ ասեն երկու բնութիւն ։” Եւ որք շուրջ զխորանաւն կային , ասացին . Ամէն ։ Եւ աղինք ամենայն լցեալ ունէին զդաշտն սասանեալք յոյժ ։ Եւ եղեւ այլ ձայն որ ասէր . “Նզովեալք եղիցին որ բաժանեն զմին զանբաժանելին . նզովեալք եղիցին ուրացողքն զմինն.» և ամենեքեան աղաղակէին. Ամէն։»

ԻԳ. «Եւ յետ սակաւ մի աւուրն զԼուկինիոս զի անցանէր, և ասաց. «Վասն այսորիկ անցանեմ ընդ քեզ, զի այլ ակն ոչ ունիմ տեսանել զքեզ. ՝ի պատերազմ երթամք, և նեղութիւն ունիմք կրել. կամ կախել ըղ-խորհուրդն Աստուծոյ կայ առաջի, կամ մեռանիլ. զի խնդրեն ՝ի մէնջ ուրանալ զհայրենի հաւատս մեր, և զՍիմոնին և զԱրէկյն խոստովանել, թէ ոչ էր Աստուած որ չարչարեցաւ և մեռաւ (1)։»

ԻԴ. «Ետես այր եւս նոյն ինքն ծերն Պաւղոս զՅոբնադ մերկ կանգնեալ յանկեան մի և սեւացեալ իբրև զածուխ։ Եւ ասէ ծերն. «Ընդէ՞ր է այդպէս։» Եւ ասէ. «Տեսանեմ զամօթ իմ, զի ոսկի բազում ժողովեալ եմ սուտ քրիստոսին, այն որ պատերազմելոց է ընդ բնութիւն հողոյ։» Եւ իմացաւ ծերն, թէ ընդ մարդկային բնութեանս է պատերազմելոց, որ ՝ի հողոյ ստեղծեալ։»

ԻԵ. «Էր վանք մի ՝ի սահմանս Տրապոլեայ, (որոյ) առաջնորդին անուն Պանուփիոս, որ եղեալ էր ՝ի հարկէ եպիսկոպոս։ Եւ Վասիլիոս եպիսկոպոսն Սելեւկիոյ մինչ երթայր ՝ի ժողովն Քաղկեդոնի, տարաւ զնա

---

(1) Թարգմանիչն ՝ի բացատրութիւն անուանս Ի-Է-Ն-Է-Ա կամ Լէ-Էնէա յաւելեալ ունէր աստ զայս բան. «Որ էր քառոսն Յորնադ էր այս։»

՚ի հետ. և ետես զի զառաջինն ամենեքեան նզովէին զատողն երկու բնութիւն, միաբանեալքն ընդ Դիոսկորոսի, և յետոյ դարձեալ ուրացան զմին և աքսորեցին զԴիոսկորոս. և նորա տրտմեալ արգելեալ զինքն ՚ի տուն մի, և արտասուօք հայցէր ինքն յԱստուծոյ յայտնել նմա զկամս իւր: Եւ եղեւ ՚ի հիացման, և տեսանէր կոնդակ մի ոսկեգիր տարածեալ ՚ի կամարէն երկնից մինչեւ ՚ի վայր, և յերկուց կողմանց գրեալ լուսաւոր գրով. «Նզովեալ լիցի ժողովն Քաղկեդոնի. ուրացան զիս, ուրացան զիս. նզովեալ եղիցին, նզովեալ եղիցին:» Եւ ՚ի գիշերին մեռեալ ՚ի նաւ, գնաց և պահեաց զքաղաքն Տրապօլիս յուղղափառութեան հնգետասան ամ:»

ԻԶ. «Ստեփաննոս հայր եղբարց, ՚ի Սելեւկիոյ Դուկու վանից, ասաց թէ «Զհաւատամ թէ Վասիլիոս եպիսկոպոս անկաւ ՚ի ճշմարտութենէն, զի գլուխն և (այր) շնորհաց է:» Եւ յորժամ դարձաւ ՚ի ժողովոյն, խնդրեաց ՚ի Տեառնէ ցուցանել նմա՝ թէ ունիցէ՞ ուղղափառութիւն. և տեսանէ տեսիլ՝ զի մտանէր յեկեղեցին, և պատուեցին զնա ժողովուրդքն. և եմուտ ընդ նմա այր մի լուսաւոր. և յորժամ կամէր բանալ զբերանն և տալ աղօթս, էած զմատն ՚ի բերանն, և դարձոյց եհան զնա յեկեղեցւոյն *և ասէ․ “Չես արժանի․ այլ որպէս դարձուցեր դու զերեսդ յԱստուծոյ, դարձուսցէ Աստուած զիւրն 'ի քէն։”*

ԻԷ․ “Այս Ստեփանոս խնդրեաց յԱստուծոյ ցուցանել նմա ստուգութեամբ, թէ զի՞նչ կոչի ժողովս Քաղկեդոնի․ և տեսանէր զմի յառաքելոցն Քրիստոսի, որ տանէր զնա յարքունիս, ուր կային եպիսկոպոսք ժողովոյն, և ասէ․ “Այս են աւելիքն Քրիստոսի, այս են ուրացողք նորա։” Եւ ետ նըմա խարազան և ասէ․ “Հան զամենեսեան զաւելիքդ Քրիստոսի։”

ԻԸ․ “Այր մի հոգեւոր Ռոմանոս անուն, 'ի գեղջէ Աբէլմէուլայ (Պաղեստինի) առաջնորդ եղբարց վեցհարիւրոց․ որք ասէին ընդ նա, թէ “Ընդէ՞ր լռեալ կաս, և ոչ նախանձիս զնախանձ Տեառն վասն չար ժողովոյն Քաղկեդոնի։” Եւ ասաց․ “Ներեցէք ինձ զաւուրս սակաւս։” Եւ գնաց ընդ անապատն 'ի կողմանս Հարաւոյ և աղօթեաց անսուաղ տասն օր․ և խնդրեաց 'ի Տեառնէ յայտնել նմա զճշմարտութիւնն։ Եւ եղեւ ձայն առ նա․ “Գնա պահեա զհաւատն Նիկիոյ։” Եւ չոգաւ պատմեաց եղբարցն, և նոքա ասեն․ “Իսկ Յոյնք ասեն թէ զնոյայն մեք ունիմք, այդ զի՞նչ է։” Եւ դարձեալ գնաց կրկնեաց հայրն զպահսն․ և եղեւ ձայն․ “Գնա ընդ Պետրոսի, Դէոսկորոսի, Գրիգորէ Աստուածաբանին, Գրիգորի Նիւսացւոյ, Բարսղի, Գրիգորի սքանչելագործի։» Եւ գնաց պատմեաց վանիցն. և նոքա ասեն. «Վասն Քրիստոսի որպէս զմեր սիրտս, զի և նոքա ասեն, թէ մեք զԳրիգորին և զԲարսղին ունիմք և զայն ՚ի յուղղափառացն հաստատեցաք։» Եւ գնաց երկրորդեաց զպահքն. և ետես տաճար պարզեալ յերկնից մինչեւ յինքն, և էր գրեալ. «Ուրացան զիս ՚ի Քաղկեդոն, և անցին ընդ սահման ուղղափառացն. վայ է նոցա, և նզովք է բաժին նոցա։» Եւ իբրեւ ընթերցաւ, ոչ գնաց առ եղբարսն, այլ յԵրուսաղէմ գնացեալ պատմեաց։ Եւ շարժեցան եկեղեցականքն ՚ի վերայ Յոբնաղայ։ Եւ ընկեցին ՚ի յաթոռոյն և եդին պատրիարք զԹէոդոսիոս։ Եւ լուաւ Մարկիանէ, և առաքեաց վերստին հաստատեաց զՅոբնաղ յԵրուսաղէմ։»

ԻԹ. «Պատմեաց քահանայն Եփիլոս կեսարացին, թէ. «Մինչ էր Տիմոթէոս յաքսորս ՚ի Խորախաւսանաս կղզի (1), գնացի առ նա, և տեսի յոտս նորա վէրս սաստիկ, նա՝ ասէր անբժշկելի. և մերձաւորքն ոչ դարմանէին զնա. և ես աղաչեցի զի թոյլ տայցէ ինձ հրափլ և մաքրել զթարախն, և ասէ ցիս. «Ո՞չ տեսանես սակի յաչս իմ։» Եւ ասեմ՝ «Այո՛։» Եւ ասէ ցիս. «Մինչ կայի ես ՚ի ժողովն Քաղկեղոնի , և առանձնացեալ կայի յաղօթս , երևեցաւ ինձ սեաւ մի Եթէովպացի . և ունէր 'ի ձեռին տումար մի, յորում կայր ձեռագիր բազում եպիսկոպոսաց . և ասէ ցիս. «Ընդէ՞ր չդնես զձեռագիր քո 'ի սմա . դի՛ր , թէ չէ՝ աւելի զուգիդ ։» Եւ իբրև ոչ լուայ նմա , եղարկ զուչս իմ, և վայթեցաւ արիւն յուչացս իմ. և թուեաց թէ՝ փլաւ ատուղն. և գոհացեալ զԱստուծոյ , եդի զձեռս իմ անուամբն Քրիստոսի աչացս և բժշկեցայ , և մնաց սպին յիշատակ իրացն ։ Նոյնպէս և այս վէրս 'ի սատանայէ է , որ կուրացոյց զիս . և արդ թող տուր , թէ պատեհ տեսանէ Տէր , կարող է բժշկել . և այս չէ շատ 'ի դիւական ժողովելն ինձ ։»

---

(1) Ըստ այլ թարգմանութեան Խրաւսանոս։

Լ. «Այս Պետրոս՝ զօրավար Մարկիանէի պատմեաց զօրավարին Զենոնի , թէ «Յոյժ սիրով ընկալայ զժողովն Քաղկեդոնի . և էի հալածիչ ուղղափառացն , մինչև տեսի 'ի տեսլեան ոմն որ ասէր ցիս . «Ի չարէդ 'ի բաց կաց . և եկ տես զոր ցուցանեմ քեզ։» Եւ տարաւ եցոյց ինձ տեղի անձաւեղի լուսով լցեալ . և կայր անդ Թէոդոս (1) . և եցոյց (այլ) տեղի , յորում հուր բորբոքէր , և անդ կայր Մարկիանոս և ամենայն դաւանողքն Լևոնի . և զայն տեսեալ 'ի բաց կացի, և եղէ ընդ Դէոսկորոսի և ընդ Տիմոթէի։»

---

(1) Միւս թարգմանութիւնն յաւելու և Կոստանդիանոս

ԼԱ. "Երկու աբեղայք կեղծաւորք, անուն միոյն Կիրակոս և միւսոյն Յուլիանոս, պատմեցին թէ՝ "Այր առ մեզ վկայարան մի նշանագործ, և յետ ժողովոյն ձայն եղեւ 'ի շիրմէն՝ 'ի շնորհէն որ անդ կայր, թէ "Այլ ոչ կամ ես աստ. մի՛ գայք առ իս. ուրացան զՔրիստոս 'ի Քաղկեդոն, և ընկալան բազումք և դուք ընդ նոսա:"

ԼԲ. "Ի Կեսարիա Փղշտացւոց կայր երկու տապան, Յովհաննու Մկրտչին և Եղիսէի մարգարէին. և սարկաւագ մի Կոստանդին անուն սպասաւորէր սրբութեամբ. և զկնի ժողովոյն Քաղկեդոնի սկսաւ լալ. և ետես զնա այր Ազօղա անուն և եհարց թէ վասն է՞ր լաս: Եւ նա ասէ. "Յամենայն աւուրս մտանէի, և տեսանէի նստեալ 'ի վերայ տապանացն զՅովհաննէս և զԵղիսէէ, և մխիթարէի. և արդ 'ի տարածել աղանդոյն Քաղկեդոնի՝ կամիմ՝ գնալ և զրկիլ 'ի տեսլենէ սրբոցս:" Եւ նա ասաց թէ՝ "Յառաջ խնդրեա 'ի սրբոցդ, և առ զհրաման ըստ Աստուծոյ կամացն:" Եւ լուաւ նմա, և սկըսաւ խնդրել պաղատանօք. և երեւեցաւ սրբոցն ասեն. "Արի գնա աստի, զի և ոչ մեք մնամք աստէն, այլ գամք զհետ քո, և ոչ թողումք զքեզ. մի՛ տրտմիր:"

ԼԳ. "Հայրն Զոսիմոս անապատաւոր խնդրէր տեղի, և եկն 'ի Բեթէլ. և կայր անդ վանք մի, և աղաչեցին լինել առ նոսա. և նա ասէ, թէ "Յաղանդէն Քաղկեդոնի փախչիմ:" Եւ նոքա ասեն, թէ "Եւ մեզ չէ մնեալ աղանդն այն." խաբելով զնա: Եւ հաւատաց նոցա, և յանձն էառ մնալ առ նոսա. և ՚ի գիշերին յայնմիկ երևեալ նմա Յակոբ նահապետն ասաց. "Մի՛ կենար ասա զի յուրացողացն Քրիստոսի են դոքա:" Եւ յարուցեալ գնաց:"

ԼԴ. "Պատմեաց հայրն Պետրոս վասն Եղեւթերոսի (Եղեւթերոս) որոյ, որ բնակեալ էր ՚ի Կիլիկիա ՚ի լեառն Տորոս. և էր գլխաւոր և ընդակեր, մինչև որսորդք ըմբռնեցին զնա որպէս անասուն. և իբրև իմացան՝ աղաչեցին զնա լինել ընդ եղբարս, և նա յանձն էառ. և ժողովեցան առ նա աշակերտք: Սա ՚ի վախճանելն իւրում՝ ասաց ընդ աշակերտսն իւր. "Դրեցէք, որդեակք, և առաքեցէք ընդ ամենայն երկիր, թէ յետ քառան և չորս ամի լինի ժողով և ուրանան զՔրիստոս. փախիք և դուք և գնացէք ՚ի Մեծըն Հայք և յԵգիպտոս, զի անդ միայն ուղղափառութիւն, և անտի ածէ ՚ի Միջագետս, և փառաւորի Քրիստոս ՚ի նոցունց:"

ԼԵ. "Դարձեալ պատմեաց հայրն Պետրոս թէ՝ "Ի մեռանելն Թէոդոսի Թագաւորի, ոմն ՚ի յանապատն Եպիպոսի (Եգիպտոսի՞) ետես հոգւոյն զմահ Թագաւորին և ձայնեաց ուժգին և ասաց. “Տեսաւ այսօր ուղղափառութիւն 'ի բազմաց. ահա փլաւ երկինքն, և ոչ ոք է որ ցաւի և ողբայ զաղէտս։”

ԼԶ. “Յորժամ էր Նեստոր յաքսորս 'ի Թեբայս Եգիպտոսի, գնաց անդ 'ի Թագաւորէն Կոմիտոս տալ հաց զօրացն արքունի. և երթեալ առ Նեստոր ասաց, թէ “Կամին մեծ օրէնք դնել 'ի ժողովն։” Եւ զկնի այնորիկ եկն մագիստրոս անդ 'ի խնդիր նմա. և սկսաւ ասել Նեստոր. “Միթէ սուտ ասէք՝ թէ Մարիամ չէ Աստուածածին և ոչ ծնեալն 'ի նմանէ Աստուած։” Եւ նոյն ժամայն թափեցաւ լեզուն, և սկսաւ ուտել զլեզուն և զայլ միսքն, մինչև սատակեցաւ և գերեզմանն չընկալաւ զնա։ Եւ զայս պատմեաց Տիմոթէոս 'ի գիրս իւր։”

ԼԷ. “Փոտինոս միայնակեաց սկիւթացի, եկն յԵգիպտոս և ասաց. “Պետրոս հայր, մի՛ տրտմիր վասն չար ժողովոյն և Պռոտերի զոր առաքեցին աստ պատրիարք. քանզի երկնաւորն Երուսաղէմ աղաչեն զԱստուած վասն սուրբ եկեղեցւոյ և վաղագոյն սատակեն զՊռոտէր։”

ԼԸ. “Ոմն սարկաւագ Մակիլ անուն, աշակերտ հօրն Պետրոսի Թեբայեցւոյ, որ կեցեալ էր առանձնական երեսուն և հինգ ամ, եղեւ ձայն առ նա երկնաւոր, թէ “Ել յաշխարհ և օգնեա ուղղափառութեան։”

Եւ եկն 'ի Լիկիա գաւառ և բնակեաց անդ երկոտասան ամ։ Եւ եղեւ կրկին ձայն առ նա թէ՝ “Երթ յանդիմանեա զՆեստոր։” Եւ մինչ յանդիմանէր, և նա չլսէր, և առեալ զնա մագիստրոս ոմն, տանջեաց զնա և արկ 'ի բանտ. և նա աղաչէր զՏէր 'ի բանտին, և յանկարծ անկաւ 'ի գլխին Թէոդոսի թագաւորին կղմինտր մի յօդոյն և շատ ցաւեցոյց. և 'ի տեսլեանն ասացաւ նմա, թէ “Վասն Վասլի տանջանացն եղեւ քեզ այդ.” զի յորժամ՝ յանդիմանէր զՆեստոր, թագաւորն մօտ կայր և լսեաց։ Իսկ յորժամ՝ զտեսիլն ետես թագաւորն, զահի հարաւ և եհան զՎասիլն 'ի բանտէն, և առեալ խրատ 'ի նմանէ և թողութիւն. և խրատն էր ժողովն Եփեսոսի որ եղեւ։”

ԼԹ. “Կին մի անուն Եղինէ (Հեղինէ) երկիւղած յԱստուծոյ, ետես տեսիլ թէ՝ “Յետ երեք ամի Նեստոր անուն լինի պատրիարք, և դու մի հաղորդիր 'ի նմանէ.” բայց լսեաց զտեսիլն մինչ Վասիլն յանդիմանեաց զՆեստոր. զնոյն տեսիլ ետես և վասն ժողովոյն Քաղկեդոնի որ եղեւն։”

Խ. “Պատմեաց հայրն Պետրոս փիւնիկեցին, թէ “Մինչ մանուկն էի ես առ վարդապետին իմում, և էաք 'ի Կոստանդինուպօլիս, և անկաւ 'ի վերայ իմ հիւծումն, և սկսայ որոնել՝ թէ զիա՞րդ Երրորդութիւնն *միահաւասար է, և երեք՝ և մի է։” Եւ երևեցաւ ինձ սուրբն Պետրոս առաքեալն, և եհան զիս 'ի բլուր մի, և եցոյց ինձ լոյս անպարագիր մեծութեամբ և անհաս, և ասաց. “Այս Հայրն։” Եւ եցոյց ինձ այլ լոյս նոյնպէս անպարագիր և ասաց. “Այս Որդին։” Եւ ասեմ. “Նման է Հօրն։” Եւ եցոյց ինձ այլ լոյս անպարագիր և ասէ. “Այս Հոգին Սուրբ։” Եւ ասեմ՝ նման է Հօր և Որդւոյ։ Բայց Որդին մարդկապէս փայլատակէր անճառ և անհասական, և կայր 'ի մէջն յաջմէ Հօրն, և սուրբ Հոգին յաջմէ Որդւոյ։”*

ԽԱ. *“Նիփոն ոմն աղէքսանդրացի, որ մկրտեալ էր 'ի հօրէ մերմէ, ունէր կին Քաղկեդոնի աղանդոյն, և չմիաբանէր ընդ հաւատս առն՝ մինչև հիւանդացաւ մերձ 'ի մահ, և յափշտակեցաւ 'ի տեսիլ, և ետես դրախտ անպատմելի և ասացին. “Այս է տեղի առն քո։” Եւ ետես խաւար, և անտի գայր ձայն լալոյ. (և ասեն. “Այդ է տեղի այդմ աղանդոյ ուր կաս։”*[1]*) Եւ առողջացաւ և դարձաւ յուղղափառութիւն։”*

ԽԲ. *“Մաւտինէ, որ կոչի խոստովանութիւն, այսինքն խնամատար եկեղեցւոյ, էր յոյժ ողորմած, բայց խմորեալ էր 'ի ժողովն Քաղկեդոնի։ Եւ սա հիւանդացեալ ետես*

---

(1) *Ի մէջ փակագծի եղեալն պակասէր յօրինակին, և լրացուցաք 'ի միւս թարգմանութենէ։*

տեսիլ նման ասացեալ կնոջն . և ետ տանել զինքն 'ի վանքն Սամանոսի , և հաղորդեցաւ յուղղափառութիւնն ։ Եւ յետ երեք աւուր ննջեաց . և իւր ողորմածութիւնն եղեւ պատճառ փրկութեան իւրոյ , որ չեթող զինքն 'ի կորստեան ։”

խգ. “Պունիտոս ոմն երէց՝ ազգաւ Փըռանգ , որ ոչ հաւանէր երկու բնութեանն՝ ոչ մտօք և ոչ բանիւ , ետես 'ի տեսլեանն հոտեալ մեռեալ մի 'ի սուրբ Յարութեանն, որ յանկարծակի կենդանացաւ . և ունէր 'ի ձեռին թուղթ ոսկէներկ արտաքոյ և ներքոյ. և յորժամ եբաց , լցեալ էր աղտեղութեամբ . և յորժամ զարթեաւ , մեկնեաց և ասաց . “Դարձեալ նորոգի աղանդն Քաղկեդոնի .” զի յայնժամ նորոգեալ էր 'ի Զենոնէ արքայէ ։”

խդ. “Սարկաւագ մի սպասաւորէր սուրբ Յարութեանն (տաճարի) յԵրուսաղէմ. և եղեւ նմա շնալ ընդ կնոջ , և եմուտ ննջել զգիշերն 'ի սուրբն Գողգոթա . և եղեւ ձայն թէ՝ “Ապականեաց Յոբնաղ և աշակերտք իւր զտեղի սրբութեան իմոյ։” Եւ վաղիւն գտաւ ձգեալ 'ի փողոցին , և խոստովան եղեւ զեղեալն . և լուեալ բազմաց ողջացան յաղանդոյն ։”

խե. “Պատմեաց Վասիլիոս երանելին թէ , 'ի գեղ մի էր Պատաւլինէ անուն երեց մի Քաղկեդոնիկ, որ վիճէր ընդ աշխարհականի ուղղափառի. և կատարումն իրայն եղև, զի երէցն խնդրեաց հրով փորձել զհաւատսն. և կապեցին զմէկ ձեռն ուղղափառին և զերկուսն ընդ միմեանս, և վառեցին 'ի ներքոյ հուր, և այրեցաւ ձեռն երիցուն, և ուղղափառն անհոգ կայր, և փառաւորեցին զՔրիստոս :»

ԻԶ. «Ի գիւղ մի անուն Սալոու, այր մի Եղիփան անուն չհաղորդէր ընդ այլսն, և երէցն սպառնացաւ, և նա առեալ զկինն իւր փախեաւ. և երէցն նոյն օրն հարեալ 'ի բարկութենէն Տեառն՝ մեռաւ : Եւ դարձուցեալ զԵղիփան 'ի տուն իւր, ամեն գեօղն դարձան յուղղափառութիւն :»

ԻԷ. «Յորժամ Պետրոս պատրիարքն էր Աղէքսանդրիա յաքսորս, եղև ձայն առ Պիուր միայնաւորն սուրբ, թէ «Արի գնա առ հայրն Պետրոս, և մխիթարեա զնա :» Եւ առաջնորդեաց նմա սիւն լուսոյ, և ած զնա առ հայրն Պետրոս, 'ի տուն միում: Եւ ետես տանուտէրն շնորհ երկնաւոր 'ի վերայ նոցա, և աղաչեաց մկրտել զորդին իւր, և դարձաւ յուղղափառութիւն :»

ԻԸ. «Ետես հայրն Պիու, զի բազում աբեղայք խաչ մի առեալ ձգէին առ խեւարօք և վիճէին. և ասաց թէ «Հերձուած մի լինի, որ ոչ բժշկի մինչև 'ի կատարած:»

ԽԹ. «Կին մի երանելի յԵրուսաղէմ Ուեւակիա անուն, գնաց երկրպագել ՚ի տաճար Համբարձմանն, և ետես զՏիրամայրն անդ նստեալ փառօք, և յերեսս ՚ի վայր անկաւ. և Տիրուհին կանգնեաց զնա և ասէ. «Մի՛ վախեր, և կաց յուղղափառութեան, զի չարչարանք Որդւոյ իմոյ այլայլեցան ՚ի բերան պղծոց. և եղեւ եկեղեցի որպէս ըղկոտորեալ անտառ առ լերամբ, և ոչ խաղաղի մինչեւ ՚ի կատարած:»

Ծ. «Լեւոնտիոս ասկաղոնացի, մարգարէացաւ վասն նորա Զենոն անապատական թէ՝ «Լինիս եպիսկոպոս, բայց ոչ մեռանիս եպիսկոպոս:» Եղեւ եպիսկոպոս և սիրելի Նեստորի. և ՚ի յաքսորիլն Նեստորի, աղաչէր զՅոբնաղ հաստատել զՆեստորի աղանդն: Եւ ՚ի լինել ժողովոյն գնաց առ նա (Լեւոնտիոս) և ջանայր յոյժ յերկուս բնութիւնն. և ՚ի դառնալն յիւր քաղաքն, կամեցան քարկոծ առնել, և փախեաւ ՚ի Կիպրոս, և բարկութեամբ (Տեառն) սատակեցաւ. և իւր ընտանիքն գնացին և բերէին զնա նաւով. և եղեւ հողմն սաստիկ և ընկեցին զնա ՚ի ծովն նաւորդքն, գիտելով թէ աշխարհական է, զի կայր աշխարհական մի այլ Կոստանդնուպօլսեցի մեռեալ. և այնպէս ՚ի գլուխ ել մարգարէութիւնն Զենոնի որոյ առնն Աստուծոյ:»

ԾԱ. “Այր մի ասկաղնայի Նիկիտէ անուն, սաստիկ յանդիմանէր զԲաղկեդոնացիսն. և երևեալ նմա սատանայ 'ի կերպարանս հրեշտակի, ասէ ցնա. “Ընդէ՞ր հայհոյես զսուրբ ժողովն։” Եւ փլոյց զաղխւան պատն 'ի վերայ նորա, և ոչինչ եղեւ նմա. և յարուցեալ խաչակնքեաց ընդդէմ (սատանայի) և չիք եղեւ։”

ԾԲ. “Պատմեցին մեզ երկու եղբարք Կիլիկեցիք, թէ “Գնացաք առ Թէոդորոս Մանուեստացին (Մոպսուեստացի), որ անկեալ 'ի խելաց և արարեալ էր մեկնութիւն Գործոցն և Աւետարանին Յովհաննու գըլխոյն, և յանդիմանեցաք զնա. և եհար ըզնա հրեշտակ Տեառն, և յետ երից աւուրց սատակեցաւ, որ էր յաշակերտացն Նեստորի (1)։”

ԾԳ. “Ի Պամփիլիա երկու դասք, ուղղափառք և հերետիկոսք, միայն կռուէին, և վիճէին վասն հաւատոյ. և վկայութիւն ճշմարտութեանն կամեցան խնդրել, և գըտան հնար զայս. բերին զտումարն Լեւոնի և զսահմանն ուղղափառացն, և ընկեցին 'ի հուր. և այրեցաւ տումարն Լեւոնի և անաբառ մնայ ուղղափառացն . և միաբանեալ դարձան յուղղափառութիւն :»

---

(1) Թէոդորոս Մոպսուեստացի 'ի Մամեստիա քաղաքէ, ոչ աշակերտ՝ այլ առաւել վարժապետ և ուսուցիչ գտաւ Նեստորի. որ 'ի նորա գրոցն հաւաքեաց զթոյնս չարափառութեան իւրոյ։

ծԴ. «Նախ քան զժողովն Քաղկեդոնի երեք ամաւ, յԵրուսաղէմ յեւթներորդ ժամու աւուրն երեք արեգակն երեւեցաւ, մի յարեւելք, մի յարեւմուտք, և մի 'ի մէջ երկնից, որ ցուցանէ թէ երեք ժողովն է լուսաւորիչ աշխարհի և ոչ այլքն :»

ծԵ. «Ի դառնալն Յոբնաղայ 'ի ժողովոյն Քաղկեդոնի՝ եկին ընդդէմ եկեղեցականք և ժողովրդականք յանդիմանել զնա . և հայրն Պետրոս նստաւ 'ի լռութեան, և երեւեալ նմա Փրկիչն ասէ . «Ես զրկեցայ և հաւատս իմ այպանեցաւ, և դու հանգի՞ստ խնդրես քեզ :» Եւ յարուցեալ գնաց նա՝ և Թէոդոսիւ ընդ նմա, այն որ յետոյ ձեռնադրեցաւ եպիսկոպոս, որ և կարի խիստ հալածէր զՅոբնաղ : Եւ հրամայեաց Յոբնաղ զօրականի միում ըմբռնել զնա որպէս խռովարար . և շարժեցաւ հայրն Պետրոս, բուռն եհար զուրարէն Յոբնաղայ և պատառեաց, և ասաց . «Դու ես որ հաւատս փոխես . զայն թող, զքո գործքն այս գիշեր ասեմ՝ զինչ գործեցեր . և խնդրեմ հուր երկնաւոր մաշել զքեզ և զքոյդ :» Եւ անկաւ յոտս նորա և ասաց . «Աղօթեա, հայր սուրբ, խնայեա :» Եւ առեալ զԹէոդոս գնաց Պետրոս 'ի յարկս իւր :»

ԾԶ. “Թէոդոսիոս այր իմաստուն եւ սուրբ, տանջէր 'ի խորհուրդս իւր վասն երկու բնութեանցն, եւ խնդրէր յԱստուծոյ լաւով՝ յայտնել նմա։ Եւ երեւեցաւ նմա Յովհաննէս Աւետարանիչն եւ ասէ. “Որ էրն 'ի սկզբանէ, նա է զոր շօշափեցաք, զԲանն կենաց, եւ ոչ է երկու բնութիւն։” Եւ զայս լուեալ հաստատեցաւ 'ի մի բնութեանն։”

ԾԷ. “Այր մի սուրբ տեսեալ բազում ժողով եպիսկոպոսաց, եւ 'ի միջի նոցա Պաւղոս առաքեալ որ ասէր. “Ա՞յդ է իմ պատուէրն, զա՞յդ ուսուցի. արդ եկայք առէք 'ի սափորս եւ լուացէք զերեսս ձեր։” Եւ իբրեւ լուացին՝ ամենեքեան սեւացան, եւ ասէ. “Այդպէս ամենեքեան սեւացայք։”

ԾԸ. “Մարկիանէ ամն աշխարհակալն յանդիմանեաց զՊամփիլոս եպիսկոպոսն, որ ասէր քարոզ երկու բնութիւն ասելով. եւ մատնեցին զնա տուկի (դքսի) քաղաքին, եւ տանջեաց զնա արջառաւջոք. եւ այր մի լուսաւոր մօտ կայր նորա՝ եդեալ ձեռն, եւ ոչ ցաւէր նմա, սակայն իջանէր արիւն. եւ առար բժշկութիւն ցաւոց 'ի ժամուն յայնմիկ։”

ԾԹ. “Սուրբն Տիմոթէոս պատմեաց հօրն Յովհաննու յորժամ յաքսորս էր, թէ “Յորժամ կամէր լինել ժողովն Քաղկեդոնի, եւ եկին հրաւիրել զիս. եւ յայնմ գիշերի տանէին զիս յեկեղեցին 'ի պատարագի, և նշխարն էր սեւացեալ իբրեւ զածուխ, և բաժակն քացախ, և ոչ կարացի հաղորդել, և իմացայ զոր կամէր լինել։"

Կ. "Անաստաս աբեղայ ուռհայեցի, աշակերտեցաւ հօրն մերում Պետրոսի և հաղորդեցաւ 'ի նմանէ, և յայնմ գիշերի նոր մկրտեալ տեսանէր զինքն, և ան ծեր մեկնեաց, թէ յուղղափառութիւն դառնալ՝ նորանալ է սրբութեամբ։"

ԿԱ. "Թամանոսին երէց պատմեաց մեզ, թէ "Յորժամ գայր հերետիկոս եպիսկոպոսն 'ի ժողովոյն Քաղկեդոնի, մկրտէի ես տղայ մի, և տեսայ ես և ժողովրդականքն, զի Հոգին Սուրբ աղաւնակերպ ել յաւազանէն և գնայր, և ասաց յօդաւոր ձայնիւ, թէ "Ես ոչ այլ դառնամ յայդ աւազանդ։"

ԿԲ. "Պատմեաց մեզ հայրն Պետրոս, որ կայր իւր եկեղեցական մի, որ խոնարհեալ էր յաղանդն Քաղկեդոնի, և դիպեցաւ նմա 'ի նեղ շուկայ մի, և ջանայր դարձուցանել զերեսս իւր, և նեղ էր տեղին՝ չկարաց. և եկեղեցականն երկրպագելով ողջոյն ետ, և նա յամօթոյն էառ զողջոյնն. և յայնմ գիշերի տեսանէր դաշտ մի, ուր ժողովեալ կային ամենայն սուրբք, և Քրիստոս Աստուած 'ի մէջ նոցա փառօք նստեալ։ Եւ գնաց երկրպագեաց նմա, և Տէրն դարձոյց զերեսս իւր 'ի նմանէ . և գիտաց թէ այն է պատճառն, զի էառ զողջոյն հերետիկոսին, և անկաւ յերեսս իւր . և մինչ բարեխօսէին ամենայն սուրբք, ոչ հայեցաւ 'ի նա :»

կգ. «Ոմանք աշխարհականք արեւելեան ուղղափառք գնային ճանապարհաւ 'ի Նիւրիտոնիա, և գնային առ Սիւնակեաց մի, և նա ասաց ցնոսա . «Լսեմ' թէ ոչ հաղորդիք յեկեղեցիս մեր :» Եւ նոքա ասեն . «Ունիմք առ մեզ հաղորդ 'ի հարցն մերոց ուղղափառաց, և նոցա հրամանաւ հաղորդիմք :» Եւ նա սաստեաց և ասէ . «Դուք աշխարհականքդ և զխա՞րդ իշխէք նախատել զմեզ . և զոր ունիք առ ձեզ, այդ չէ հաղորդ :» Եւ նոքա արտմեցան և ասեն . «Զի՞նչ է այս :» Եւ յաւուր կիւրակէի տեսին զհաղորդն իւրեանց և էր փառեալ լուսով և անոյշ հոտով . և ամ̃ե 'ի նոցանէ հաւատացեալ էր Սիւնակեցին, և տեսանէր զիւր մասն միս արիւնաթաթախ, և մեղայ ասաց . և հաստատեցան յիւրեանց կրօնսն, և փոխեցաւ մասն և հաղորդէին անխիղճ :»

կդ. «Ստեփաննոսի սարկաւագապետին Երուսաղէմի քոյր մի կայր կուսան սուրբ, որ պահօք և աղօթիւք կատարէր զաւուրս իւր . և եհաս 'ի կատարելութիւն այնչափ, որ յորժամ երթայր յեկեղեցին սուրբ Ստեփաննոսի և Յովհաննու, տեսանէր զսուրբն

Ստեփաննոս և զՅովհաննէս . և յետ ժողովոյն Քաղկեդոնի դարձեալ գնայր աղօթէր ըստ սովորութեանն ընդ խմորեալն յաղանդըն . և երեւեալ նմա սուրբն Ստեփաննոս ասէ . « Քոյր, երթ նիստ 'ի տան քո , մի գար այսր . և մեք առ քեզ եկամք . զի ընդ այս ժողովոյս չկամիմք լինել ուրացողաց Քաղկեդոնացւոց : »

ԿԵ . *« Այն մի ուղղափառ պամփիլացի բնակէր յԵրուսաղէմ, և գնաց ընդ մեծ ժողովոյ 'ի տաճար Համբարձմանն, և դիպեցաւ նմա մնալ 'ի տաճար Համբարձմանն , և փակեցաւ դուռնն , և զգիշերն աղօթեաց յեկեղեցին , և վաղիւն չոգաւ 'ի խրճիթն : Եւ յետ աւուրց կալաւ զնա ցաւ մահու , և տեսանէր զի կային առ ընթեր նմա հրեշտակք , և վիճէին ընդ նմա . դարձաւ առ մերձակայքն և ասէ . « Տեսէք զի՞նչ ասեն ընդ իս մեղադրութիւն , թէ զի՞արդ վճարես ուղղափառութեամբ զկեանս քո , և համարես զքեզ կատարեալ, զի զանարժանիցն պատարագն տեսեր և զհաղորդութիւնըն , և աղօթեցեր ընդ նոսա : » Այն կինն այն կանգնեալ 'ի հիւանդութենէն՝ ապաշխարեաց , զի խնդրեաց յԱստուծոյ և ընկէց զինքն յանդիման սեղանոյն Աստուծոյ , և գոչէր արտասուօք թէ՝ զի՞արդ խոստովանեսցուք զհաւատն ուղղափառ , յայտնեա մեզ* *սուրբ եկեղեցի : Եւ եղեւ ձայն 'ի սուրբ սեղանոյն և ասաց . “Որդին Աստուծոյ նո՛յն է որ ծնաւն 'ի կուսէն , նոյն է որ խաչեցաւն , նոյն է որ թաղեցաւ , նոյն է որ յարեաւ և գալոց է :”*

ԿԶ. “*ՅԱտալիա*(1) *Պամփիլացւոց կուսանաց վանաց աւագ մի կայր , որում անուն էր Զոյի , և էին ուղղափառք : Եւ յաւուր միում յափշտակեցաւ մտօք 'ի դրախտն , և ցուցին նմա զծառն կենաց . և տեսանէր թէ որպէս պարք մեղուաց գային և ջանային յարենալ 'ի ծառն կենաց : Եւ սարկաւագ մի լոյս զգեցեալ հալածեաց զնոսա . և հարցանէր Զոյի թէ՝ “Զ՞ինչ է այդ :” Եւ ասէ սարկաւագն . “Ծառս Քրիստոս է , և մեղուքս ժողովն Քաղկեդոնի , որք չեն արժանի մերձենալ 'ի Քրիստոս :” Եւ մինչ եկն Կղոդոնիոս եպիսկոպոսն յԱտալիա*(1)*, յանդիմանեաց զնա Զոյի, թէ ընդէ՞ր ձեռադրեցեր 'ի տոմարին Լեւոնի: Եւ նա ասաց . “Մատամբ գրեցի , և ոչ մտօք :” Եւ ասէ Զոյի . “Մեռեալ ձեռք զիա՞րդ կարէ գրել առանց կենդանի մտաց :” Եւ հրաժարեաց 'ի նորանէ իւր կուսանօքն :”*

ԿԷ. “*Լեւոնտիոս անապատական տեսանէր զեկեղեցի մերկ , և զխորհուրդն վայ-*

---

(1) Յօրինակիս Իտալիա :

թեալ, և ասէին. “Այս է Նոյա եկեղեցին և տապանն, որ չորրորդութիւն խոստովանեցան 'ի Քաղկեդոն:”

ԿԸ. “Եւ այլ ոմն սուրբ և տեսանող տեսանէր զեկեղեցին Կոստանդինուպօլսի ախոռ լեալ, և լի անսուրբ անասնովք և գարշ և զազիր հոտով:”

ԿԹ. “(Եպիփանոս) եպիսկոպոս Հայր վանից Պամփիլեայ տեսանէր զեպիսկոպոսն Ամղիքոս զԵդեսեայ քաղաքի, այն՝ որ կոչէր ողորմած, և զԵպիփան Պերկացի՝ թաղեալ 'ի ցեխս գարշ մինչև ցպարանոցն: Եւ ասէ Ամղիքոս (զԵպիփան). “Դու բարի գործովք զարդարեալ, զիա՞րդ եղեր այդպէս:” Եւ պատասխանի ետ (Եպիփան) և ասէ. “Բարին յԱստուծոյ էր և չարս 'ի մէնջ. զի հնազանդեցաք ժողովոյն Քաղկեդոնի:” Եւ ասէին թէ՝ նա էր նորոգել զտումարն Լեւոնի:”

Հ. “Այլ մի սուրբ և զգաստ Ակլթասալի անուն, յետ ժողովոյն Քաղկեդոնի մտօք յերկուս բաժանեալ տարակուսէր՝ թէ յորո՞ց հաղորդեսցի, և հայցէր յԱստուծոյ ցուցանել նմա. և տեսանէր եկեղեցի մի երկխորանի, և մեծ խորանն էր մերկ և Քաղկեդոնիկ մի 'ի վերայ, և փոքրն զարդարուն և ճառագայթաւոր և մանուկ մի հրեղէն 'ի վերայ նորա, և ասէր՝ թէ “Առ իս եկ՝ հաղորդեաց, 'ի բաց կաց յուրացողացդ:” Եւ էր ինքն Քրիստոս որ ասէր զայս ։»

ՃԱ. «Ի վանս հօրն Ռոմանոսի էին երկու եղբարք, Տիմոթէոս և Յովհաննէս. Տիմոթէոս վախճանեցաւ և պատեցին զնա և տարան 'ի թաղել, և յանկարծ նստաւ 'ի դագաղին առընթեր գերեզմանին և ասէ. «Գիտէ՞ք, եղբարք, որ առ իս չկայր այլ մեղաց պատճառ քան զայն՝ որ իբրու կարծէի զերկու բնութիւնն ։ Եւ վասն այնորիկ տանին զիս 'ի տանջանս, և խնայեաց յիս ողորմութիւնն Աստուծոյ, որ ասեմ ձեզ զայս վասն ձեր զգուշութեան, և որ հայցէք վասն իմ թողութիւն ուղղափառութեամբն ձերով ։»

ՃԲ. «ՅԱնտիոք Սորուգոյ մերձ յայքունիան բնակեալ էր ոմն այր սքանչելի, որ ոչ առնոյր ինչ յումեքէ, բայց սակաւ բանջար, որով լնոյր զպէտսն իւր. և զի սաստիկ և յայտնի յանդիմանէր զՔաղկեդոնիկոն, ըսպանաւ 'ի նոցանէ տանջանօք. քանզի ասէր նա՝ թէ «Հոտ անօրէնութեան գայ ինձ հանապազ 'ի տեսանելն իմ զնոսա. և ոչ կարեմ տանել լռութեամբ ։»

Ի վեց ամին Մարկիանէի և ՚ի ՉԿԹ թուին Նորուոյ սպանաւ Վաղենտինիանոս Հռոմայ թագաւորն. և աստ պատառեցաւ թագաւորութիւնն Հռոմայ ՚ի Կոստանդնուպօլսէ: Որպէս Մարկիանէ առանց Հռոմայ կամացին նստաւ յաթոռ թագաւորութեանն, նոյնպէս և նոքա գնացին ըստ կամաց իւրեանց: Ընդ նմին և պատառեցաւ կարգ եկեղեցւոյ և բարձաւ խաղաղութիւն եկեղեցւոյ զկնի ժողովոյն Քաղկեդոնի: Եւ մեռաւ Մարկիանէ լցեալ նզովիւք ՚ի սրբոց աբանց ժամանակին, թագաւորեալ վեց ամ: Եւ ՚ի նոյն ամի թագաւորեաց ՚ի Հռոմ Լեւոն Թրակացի ազգաւ՝ յիշխանացն Մարկիանէի (1). Եւ ՚ի նոյն ամի թագաւորեաց Պարսից Պերոզ, և արար հալածումն Քրիստոնէից. և արար պատերազմ ընդ Հռոմայեցիս: Եւ Լեւոն ետ զդուստր իւր Զենոնի, և կացոյց զնա թագաւոր կողմանցն արեւելից (2), և զԲասիլիսկոս արար ստրատեբառ 'ի Թրակիա (1), և Միուրինոս եղեւ կեսար 'ի Հռոմ (2), և յետ սակաւու ըսպանաւ Ռակիմերայ և քարոզեցան Անթիմոս և Լուքարոս կեսարք։

---

(1) Լեւոն Թրակացի որ էր հրամանատար, կոչեցաւ ՚ի ծերակուտէն յաթոռն կայսերական Կոստանդնուպօլսի:

(2) Զենոն իսաւրացի ազգաւ, փեսայացեալ Լեւոնի՝ կացուցաւ ընդհանուր զօրապետ Արեւելից բանակին:

Յայսմ ժամանակի շինեցաւ Կալանիկոս, որ է Ասողայ, հրամանաւ Լեւոնի Թագաւորի, և կոչեցաւ Լեւոնտոպօլիս։ Եւ սաստ 'ի սոյն ժամանակս եղեւ Հրայրեաց 'ի Կոստանդնուպօլիս, որ ոչ էր լեալ յաւիտենից, և այրեցաւ 'ի ծովէ մինչեւ 'ի ծով. և ել թագաւորն զվեց ամիս և ոչ կարաց մնանել 'ի քաղաքն ։ Եւ յայնժամ՝ սահմանեաց Լեւոն կայսր, թէ յաւուր կիւրակէի յեկեղեցիս կացցեն մեծ և փոքր՝ յաղօթս և յուսումն, և այլ ինչ մի՛ գործեսցեն յաւուր կիւրակէի ։

---

(1) Բասիլիսկոս եղբայր Վերինեայ կնոջ Լեւոնի կայսեր, եղաւ գլուխ բանակին որ առաքեցաւ ընդդէմ Գինսերիկայ թագաւորին Վանդալաց։

(2) Միուրինոս (Մայորիանոս) կացուցաւ կայսր 'ի ձեռն Ռիկիմերայ, որ ունէր յայնժամ 'ի ձեռին զսանձս գերագոյն կառավարութեան Հռոմայ, և Լեւոն հաստատեաց զկայսերութիւն Միուրինոսի յամի 457։ Յետ սակաւու մոռացեալ Ռիկիմերայ ըզդ առաւելութիւն իշխանութեան Միուրինոսի առ որով նսեմանայր ճոխութիւն իւր, ետ սպանանել զնա 'ի Գորդոնա որ 'ի գաւառին Միլանու, յամի 460, և կացոյց նմա յաջորդ զմի լուկանացի՝ Լիբիոս Սեւերոս կոչեցեալ, զոր Միխայէլ [illegible] անուանէ։ Զկնի վախճանի սորա Ռիկիմեր կացոյց կայսր զԱնթեմիոս հաճութեամբ Լեւոնի, յամի 467։ Եւ զսա յաջորդեցին հետզհետէ Ոլիբրիոս, Գոնդըբադոս, Գլիւսերիոս. այլ կայսերութիւն սոցա ոչ ընկալաւ հաստատութիւն 'ի Լեւոնէ կայսերէ Բիւզանդիոյ, որպէս սովորութիւն էր ցայն վայր, վասն որոյ Նա ինքն Լեւոն առաքեաց կայսր յԻտալիա զմի ոմն յընտրելոց իւրոց Յուլիոս Նեպոս, որ էր 'ի կայսերական գերդաստանէն, և պսակեցաւ յամի 474, և եղեւ վերջին 'ի կայսերս Հռոմայ, յորմէ և այսր դադարեաց կայսերութիւնն Հռոմէական։

Եւ յաւուրս Լեւոնի ամիս մի օդք հող և մոխիր տեղաց, և առաւել 'ի Կոստանդինուպօլիս, և կուտեցաւ թիզ մի, և զահի հարան աշխարհ և ակն ունէին անցման ․ և 'ի բազում տեղիս հուր վայթէր և այրէր ըզտեղիս տեղիս ։ Եւ յայնմ ժամանակի Կիզիկոն քաղաք 'ի շարժմանէ և 'ի կայծականց շրջեցաւ ․ և բազում քաղաքք և գեօղք 'ի Թըրակիս ապականեցան ։ Եւ թագաւորն Լեւոն աղէցաւութեամբ մեռաւ, թագաւորեալ ամս ութևտասն ։ Եւ յաւուրս սորա ոչ պակասեաց խռովութիւն և աւեր աշխարհի և եկեղեցւոյ, և գիտաց ամենայն իմաստուն թէ ժողովն Քաղկեդոնի զայրացոյց զԱստուած ։ Եւ խռովեցաւ հոգի նորա սուրբ յամպարիշտ դաւանութեանց նոցա ։

Եւ թագաւորեաց փոքր Լեւոն հրամանաւ մեծ Լեւոնի, վեցամեայ, որ էր թոռն նորա, և որդի Զենոնի՝ կողման արեւելից թագաւորին ։ Եւ յետ ամի միոյ եկն հայր նորա Զենոն՝ զի երկիրպագցէ որդւոյն ․ և կին նորա, մայր տղայոյն, խաբեաց զնա որպէս զմանուկ եւ ասէ. «Յորժամ գայ հայր քո եւ երկրպագէ քեզ, դիր զթագն ՚ի գլուխ նորա եւ դու երկրպագեա նմա»: Եւ արար այնպէս. եւ յետ սակաւ միոյ մեռաւ տղայն Լեւոն, եւ տրտմեցան բազումք: Եւ էր Զենոն յԻսորի ազգէ, եւ ազաչէր զնա թագուհին մեծ Լեւոնի Բերինիա (Վերինէ) կամն ժողովոյն Բաղկեղանի՝ զի ընկալցի զնա, եւ ոչ կամաւ նմա: Իսկ թագուհին ընկէց զնա ՚ի թագաւորութենէ եւ եդ զեղբայր իւր զԲասիլիսկոս, որ էր մինչեւ ցայնվայր ապստամբեալ ՚ի Լեւոնէ յԻրակլիա, եւ բարձեցաւ թագաւոր եւ արար զորդին իւր զՄարկոս կեսար: Եւ Զենոն փախեաւ յերկիրն Իսաւրոց՝ թողեալ զթագաւորութիւնն, եւ մտեալ ՚ի բերդն Սաղամէ դադարեաց. եւ կին իւր Արկանիա (1) եկն առ նա գաղտագնաց:

Եւ Բասիլիսկոս որդւովն թագաւորեաց ամս երկու. եւ էր ակիծ եւ չարադեւ, եւ գրէր ամենայն ուրեք զԲաղկեղանին հասանել եւ քարոզել ՚ի վերայ աշտարակի, եւ հալածել զուղղափառսն, եւ եղեւ աղէտք յոյժ ամենեցունց. եւ դային առ Զենոն, եւ եղեւ ժողով մեծ: Եւ Բասիլիսկոս առաքեայ զԱրտխեա (Արմատիոս) զօրագլուխ պատերազմիլ ընդ Զենոնի։ Եւ Զենոն խոստեցաւ ընդ նմա 'ի խաղաղութիւն, և խոստացաւ զնա կեսար առնել։ Եւ առեալ ըզԶենոն զօրօքն ածին 'ի Կոստանդնուպօլիս, և ընկալան քաղաքն խնդութեամբ. և փախեաւ Բասիլիսկոս որդւովքն յեկեղեցի մի. և առաքեաց Զենոն մերկացուց զնա 'ի ծիրանեացն, և առաքեաց 'ի Լամիս Կաստրա(1) Կապադովկացւոց. և ածին 'ի բուրգն մի և փակեցին յամենայն կողմանց, և դառնապէս մեռաւ անդէն։ Եւ Զենոն արար զԱրմատիոս զօրավար և զորդին իւր կեսար(2). և զկնի այնորիկ սպանաւ Արմատիոս, և զորդին արարին ընթերցող եկեղեցւոյ։

---

(1) Արկանիա. այն է Արկադնէ՝ կին Զենոնի, որ դուստր էր Լեւոնի Ա. կայսեր Յունաց.

Յայնժամ թագաւորն 'ի ձեռն Ակակայ պատրիարքի Կոստանդնուպօլսի յորդորեալ յուղղափառութիւն առաքեաց առ Պետրոս պատրիարքն Անտիոքու և առ Տիմոթէոս պատրիարքն Աղէքսանդրու, որ կային 'ի քաղաքի 'ի Կոստանդնուպօլիս, հարցանել հաւատոյ խոստովանութիւն. և նորա ետուն գրով զՆիկիայն և զԱւրղին և զՊիսակորուսին, և ասացին թէ՝ “Մեք յայդ եմք։” Եւ Թագաւորն առաքեաց ընդ ամենայն երկիր և ձեռնադրեցին 'ի դաւանութիւնն յայն եւթն հարիւր եպիսկոպոսք, և ասացին թէ՝ “Նզովեմք զտումարն Լեւոնի, նզովեմք ըզժողովն Քաղկեդոնի, նզովեմք զԻբաս, նզովեմք զՆեստոր որ ապատառեցին զհաւատս, և նզովեալք եղիցին ոչ նզովիցէ նոցա։” Եւ ընկալեալ Թագաւորն և հաւանեալ՝ առաքեաց զՊետրոս զոր Թափիչն կոչեն, պատուով մեծաւ յԱնտիոք յաթոռն իւր, և անդ կատարեցաւ։ Եւ զՏիմոթէոս յԱղեքսանդրիա, զոր ձեռնադրեալ էր ուղղափառացն զկնի Պրոտերեայ, և կայր յաքսորս։

---

(1) Կաստրա 'ի լեզու Յունաց և Լատինաց նշանակէ աշտարակ, բերդ. իսկ Լամիս է Լիմնէս անուն, ուր բանտարկեալ լինէին կասկածաւոր անձինք առ բիւզանդեան կայսերութեամբ։

(2) Որդին Արմատիոսի կոչէր Բասիլիսկոս, որ ապա զրկեալ յիշխանութենէ եղև եպիսկոպոս Կիւզիկոնի, 'ի Բիւթանիա

Ի յայսմ ժամանակի ապստամբեցին Սամարացիքն, և եդին իւրեանց Թագաւոր հաստատուն, և զբազումս կոտորեաց 'ի քրիստոնէից, և մտեալ 'ի Կեսարիա՝ քակեաց զեկեղեցիսն։ Իսկ զօրքն Հոռմայեցւոց գըտանեալ 'ի վերայ նոցա կոտորեցին. և զՀուտոս Թագաւորեալն Հրէից առաքեցին առ

---

(1) Պրոտերիոս էր 'ի Քաղկեդոնականաց. որ յաջորդեաց զաթոռն Աղեքսանդրիոյ զկնի Դէոսկորոսի զոր Մարկիանոս կայսր աքսորեաց 'ի Գանգրաս Պափլագոնիոյ վասն պաշտպան երեւելոյ Եւտիքեայ մոլորութեանն։—Եւագրիոս Պատմ. Եկեղ. Բ. 5։

(2) Անէ Յուստոս կամ Յուստասոս կոչեցեալ, որ էր գըլուխ յաւազակաց։

Զենոն թագաւոր, և զշինեալն 'ի Հրէից տաճարն՝ օրհնեցին եկեղեցի յանուն սրբոյն Մարխամոյ, և զգտեալ Հրէայսն յԱնտիոք կոտորեցին:

Յայսմ ժամանակի եղեւ շարժ, և Նիկոմիդիա քաղաք կործանեցաւ. և էր այս մեծերորդ շրջումն Նիկոմիդիայ 'ի շարժմանէ: Եւ յետ այսորիկ մեռաւ թագաւորն Զենոն վաթսուն ամաց, թագաւորեալ ամս վեշտասան: Եւ Փիւրոս (Պերոզ) թագաւորն Պարսից, դառն հալածիչն քրիստոնէից չարամահ եղեւ, և էառ զթագաւորութիւնն Բալաշ (Վաղարշ) ամս չորս. և յաւուրս սորա խաղաղութիւն եղեւ քրիստոնէից: Եւ թագաւորեաց Անաստաս 'ի տեղի Զենոնի. և ընդ թագաւորելն գտաւ չարիք 'ի մանկունս դպրոցացն, և լուեալ թագաւորն բարկացաւ և կոտորեաց զամենայն դպրոցս Կոստանդինուպօլսի: Եւ սորա հրամանաւ շինեցաւ քաղաքն զոր Տարա կոչեն, վասն անդ ստանալոյ զԴարեհ, և անուանեաց զնա Անաստաս յանուն իւր՝ Անաստասուպօլիս (1): Եւ յաւուրս սորա 'ի շարժմանէ ընկղմեցաւ Նիկոպօլիս: Եւ զկնի Բալաշայ թագաւորեաց Պարսից Կուտ (Կաւատ). և Համազասպ (2) եղբայր նորա հալածեաց ըզ-

(1) Միքայէլ Չամչեան. Պատմ. Հայոց, Հտ. Բ. յեր. 235:

(2) Համազասպ է սխալ օրինակողաց, փոխանակ գրելոյ Համասպ կամ Ջամասպ:

Կոստան ամս երկու. և դարձեալ զօրացեալ Կոստան սպան զեղբայրն և թագաւորեաց միւս երեսուն։ Եւ յայնժամ ելին Հոնք և յաղթեցին Պարսից, և կարծեցին Պարսիկք թէ Հոռոմայեցւոց բանիւ եղեւ, և ժողովեալ զօրս՝ եկին յերկիրն Միջագետաց և առին քաղաքս բազումս(1)։

Յայնմ ժամանակի եղեւ Պատրիարք Կոստանդնուպօլսի քսաներորդ՝ Տիմոթէոս, յոյժ առաքինի և իմաստուն, որ ասաց թագաւորին և գրեցաւ կանոն զսուրբ Աստուածն խաչեցար ասել ընդ ամենայն երկիր. և խնդաց Անաստաս եւ սահմանեցաւ յերկիր ամենայն։ Եւ եղեւ ժխոր մեծ 'ի Կոստանդինուպօլիս՝ թէ զԵրրորդութիւնն խաչեն. և ելին Նեստորականք և սպառնացան Տիմոթէի, և սպանին երէց մի զՏիմոթէի. և Տիմոթէոս զայրացեալ գնաց 'ի քաղաքէն։

Յայնմ ժամանակի երեւեցաւ այրն բանաւոր Փելիքսիանոս արքեպիսկոպոս, որ է Մնբէճայ, ձեռնադրեալ 'ի Պետրոսէ Անտիոքու։ Սա արար յոլով գրեանս ուղղափառ վարդապետութեան։ Զսմանէ լուաւ թագաւորն (Անաստաս) և առաքեաց տարաւ 'ի Կոստանդինուպօլիս եպիսկոպոսօք և վարդապետօք, և մի էր 'ի վարդապետացն Սեւերիանոս և երկու հարիւր քահանայ ընդ նմա.

---

(1) Միքայէլ Չամչեան, Պատմ. Հայոց, Հտ. Բ. յէր. 232։

և հրամայեաց Թագաւորն քննութիւն առնել վասն հաւատոյ. և յաղթողք երևեալ վարդապետութեամբ Փիլոքսիոս (Փեղքսիանոս) և Սևերիանոս ընդդէմ չարափառացն։ Եւ հրամայեաց Թագաւորն հանել ՚ի գերեզմանէն Եւփիմեայ վկայի զտոմարն Լևոնի և Քաղկեդոնի, և այրեցաւ հրով։ Եւ Բալասիոս (Փլաբիանոս) ոչ կամէր զայրելն, և ցուցաւ այնու. Թէ՝ հոմախոհ է Քաղկեդոնի, որ էր պատրիարք Անտիոքու, և նզովեցաւ և ընկեց յաթոռոյ։ Եւ Փիլոքսիոս ձեռնադրեաց եպիսկոպոս ՚ի Կոստանդինուպօլիս զմեծն Սևերիանոս, զի հզաւր և իմաստուն և վարժեալ Աստուածաշունչ գրովք. և յաւուր ձեռնադրութեան իւրոյ ասաց զճառն, որոյ սկիզբն այս է. «Որք քարմանեն զմիաւորութիւն Որդւոյն Աստուծոյ.» և կայ ՚ի նմա ամենայն որոտ աղանդաւորաց, զոր (զճառն) և ունին Յոյնք և կարդան ՚ի յանդիմանութիւն իւրեանց։ Յայս ժամանակս էր Արճոյ եպիսկոպոսն, և ունէր շնորհ աստուածային և ոչ ՚ի դպրութենէ մարդկան. զոր ընկալաւ զնորա վարդապետութիւնն Սևերիանոս պատրիարքն Անտիոքու, այն որ ձեռնադրեցաւ ՚ի Կոստանդինուպօլիս յաքսորելն զԲալաւիոս։ Եւ երևեցաւ Սիմոն բրուտն, որ արար ճառս և շարականս ուղղափառ դաւանութեան։

Յայսմ ժամանակի Թագաւորն Պարսից Կաւան (Կաւատ) ժողովեալ զօրս՝ եկն 'ի Կարնոյ քաղաք եւ էառ զնա. եւ արար սէր եւ ոչ կոտորեաց զնոսա, զի ոչ անարգեցին զնա յորժամ պաշարեալ էր զքաղաքն. եւ դարձաւ եկն յԱմիթ յաշնան ժամանակն եւ սաստիկ նեղէր զնոսա: Իսկ եկեալ էր առ նոսա Յովհաննէս վանական 'ի Կարթմայ եւ քարոզէր մեծատանց ողորմել աղքատացն, եւ ընդ այլ ամբոխին ասէր. “Սրբեցէք զձեզ պահօք եւ լալով եւ հսկմամբ գիշերականօք:” Իսկ երեւեալ նմա հրեշտակ Աստուծոյ ասէ. “Յովհաննէս, կորնչի քաղաքս այս վասն մեղաց, եւ դու փախճանիս եւ ոչ տեսանես զաւեր քաղաքիս:” Այլ նա ոչ դադարէր յաղօթից եւ 'ի քարոզելոյ. եւ եկն անձրեւ սաստիկ եւ երկայն հանգերձիւք իւրեանց Պարսիկքն ըսկսան նեղիլ եւ տկարանալ. եւ զի շինեալ էին փայտեղէն բերդս, եւ տարեալ առ պարիսպն, եւ քաղաքին խմատունքն ջուր հացհամեմի արկին 'ի վերայ եւ այրեցին՝ ձգելով կրակ 'ի նա: Իսկ Թագաւորն Պարսից խընդրեաց ինչս եւ ոսկիս զի գնայցէ. եւ նոքա անարգեցին զնա եւ 'ի չարիս իւրեանց ոչ զղջացան. եւ բարկացաւ Տէրն եւ մատնեաց զքաղաքն եւ կոտորեցին 'ի նմա անձինս ութսուն հազար, եւ զայլսն գերեցին. բայց միայն զի մեծ եկեղեցին լցեալ էր ժողովրդեամբ, *խնդրեաց զօրագլուխն Հայոց և թողաւ այն(1)։ Եւ եմուտ թագաւորն յեկեղեցին, և ետես զպատկերն Փրկչական նկարեալ 'ի խորանն, և հարցեալ թէ ո՞վ է. և ասեն՝ թէ “Աստուածն է քրիստոնէից։” Եւ երկրպագեաց նմա թագաւորն, և ասաց. “Սա երեւեցաւ ինձ 'ի տեսլեան և ասաց. մի երթար, մատնեմ զքաղաքս 'ի ձեռս քո։ Արդ ոչ ես առի զքաղաքս, այլ Աստուածն իւրեանց ետ ինձ, զի մեղան նմա (2)։”*

Եւ առեալ զերի բազում գնաց յՈւռհա, և ոչ կարաց առնուլ զնա. և գնաց յերկիր իւր՝ թողեալ 'ի յԱմիթ հեծեալ։ Եւ լուեալ զօրացն Հռովմայեցւոց, եկին պաշարեցին զԱմիթ և ոչ կարէին ինչ առնել քաղաքին, զի որ 'ի գլխաւորացն Ակդան անուն, յոյժ զօրաւոր և խոհեմ էր, և յաղթահարէր զՀռովմայեցիսն։ Ապա այր մի Պադան անուն եկն 'ի Կարթայոյ գեղջէ և խօսեցաւ ընդ Հռովմայեցւոցն զոր ինչ առնելոց էր, և չոգաւ խաբեաց զԱկդան և ասէ. “Առ ընդ քեզ չորս հարիւր ձիաւոր և երթամք բերեմք հինգ հարիւր ձի, որ կան յարօտս 'ի բացեայ։” Եւ յորժամ գնացին, ելին դարանամուտքն և սպանին զնոսա. և իմացեալ Պարսից զնենգութիւն առնն, բարկացան և

---

(1) Այն է Վարդ սպարապետն Հայոց՝ եղբայր Վահանայ։

(2) Միքայէլ Չամչեանց Պատմ. Հայոց. Հտ. Բ. յեր. 252։

տասն հազար այր 'ի քրիստոնէիցն արգելին 'ի տեղի մի, և այնչափ սովեցուցին, մինչ կերան 'ի սովոյն զկօշիկս իւրեանց. և ինքեանք (Պարսիկք) 'ի գիշերի միում ելին և գնացին յաշխարհն իւրեանց:

Ի *քսան և երկու ամին Անաստասայ առաքեցաւ 'ի նմանէ զօր յաշխարհն Հայոց, և արարին զնոսա ընդ ինքեամբք՝ 'ի բաց կալ 'ի Պարսից. իսկ Անաստաս թագաւորեալ քսան և ութն ամ, մեռաւ 'ի քսան և յինն Թամուզ ամսոյ:*

Ի ՊԼԲ (832) *թուին Ասորւոց թագաւորեաց Յուստինիանոս Թրակացի. և սա եղեւ սկիզբն Յոյն թագաւորի, որ էր 'ի գեղջէ Բեդրինեայ, որ յետոյ արարին զնա քաղաք՝ յանուն իւր կոչեալ. և զջուրն այդր ասեն թէ այնպիսի ապիղծ է, որ թէ շատ եփեն՝ լինի արիւն: Եւ Յուստինիանոս էր այր սպառամիկ՝ անվարժ գրոց. և յաւուրք 'ի Թրակիս ծածկաբար մնացեալ էին աղանդոյն Քաղկեդոնի, որք խաբեցին զնա և ասեն. “Թէ դաւանես զժողովն Քաղկեդոնի, ամենայն տիեզերք հնազանդ լինին քեզ:” Եւ ասացին՝ թէ “Գրած է 'ի ժողովն թէ՝ որ ընդունի զերեք ժողովսն, թող ընդունի և չորսն, զի այս է կատարումն և գլուխ երից:” Եւ վաղվաղակի ել հրաման 'ի նը-*

մանէ և քարոզ ժողովոյն Քաղկեդոնի զօրօք հեծելօք ընդ ամենայն երկիր. և հալածեալ լինէին ուղղափառքն և յաթոռուց զըրկեալք. և Սեւերիոս պատրիարքն Անտիոքայ գնաց յԱղէքսանդրիա զկնի վեց ամի եպիսկոպոսութեան իւրոյ. և կսկծեալ նզովեաց զԹագաւորն, և առաւել զեկեղեցականսն, Զի որք հաւանէին չար ժողովոյն, լուծեալք էին ՚ի քահանայութեան աստիճանէ։ Եւ ընդ ելանելն նորա յԱնտիոքայ, ելեալ հուր այրեաց զարքունիսն որ յԱնտիոք, և վեց ամիս ոչ շիջաւ հուրն, մինչև այրեաց զամենայն քաղաքն, և թուէր թէ կենդանի է հուրն։ Եւ յետ ամի միոյ գնալոյն Սեւերեայ, Պօղոս անուն Հրեայ, որ էր անօթ չարութեան, նստաւ յաթոռն Անտիոքայ. և սա ժողովեաց զամենայն եպիսկոպոսունս Ասորւոց և նեղէր զնոսա ընդունել զժողովն Քաղկեդոնի, և զհաւանեալսն՝ յաթոռսն իւրեանց առաքէր, և զանհաւանսն՝ յաքսորս։ Եւ որք աքսորեցան և կացին յուղղափառութեան՝ այսոքիկ են, զոր ասէ Յովհաննէս ասիացին։

Անդիքիւրոս՝ Անաւարզոյ, Յուլիոս՝ Հանդոնի(1), Յովհաննէս մետրապօլիտ՝ Սանուեատիայ (Սամեստատիս), Պօղոս՝ Եբերայ(2), Յովհաննէս՝ Յարապօլսի, Պօղոս՝ փոքր Աղէքսանդրու, որ է Սկնդրուն (Իսկէնտէրուն) . Նիկոլայոս՝ Տարսոնի : Եւ ՚ի Կապադովկացւոց երկրէն Պրոկղ՝ Կոմնիայ . Մասիմոս՝ Երմավասնիկայ (1) . Նիկեփորոս՝ Սեբաստիոյ Հայոց: Եւ ՚ի յԱնտիոքայ Ասորւոց , Կոստանդին՝ Լաւկին (Լաւոդիկեայ) եպիսկոպոս, որ վասն առաքինութեան և սրբութեան իւր մերձ պատրիարքաց նստէր աթոռով և քարոզեալ լինէր ՚ի պատարագս ամենայն զինի պատրիարքին : Անտոնինէ՝ Հալպայ, Փիլաքսին՝ (Փելիքսիանոս) արհիեպիսկոպոս Մնբէճայ , զոր յետ բազում խոստման և խոշտանգանաց ՚ի Գանգրա այրեցին ՚ի կրափուռն : Բադրա՝ Եփիմոյ (Ապամիոյ). Թէոդոսիոս և Մնեսիմոս՝ Օրղմոյ () և Սուրէմին . Նոնոս՝ Սելեւկիոյ . Իսգորակ՝ Կնշրի (Կեսարիոյ). Մարի (Մարաս՝) Եմթայ . Թումա՝ Դամասկոսի , այր ճգնաւոր որ զքասնևութ ամ հաց ոչ եկեր, այլ բանջար : Աղէքսանդրոս՝ Արբէլ քաղաքի, Թումա՝ Նարդաքայ . Յովհան՝ Թէուրայ (Թուրէր) . Յովհան միւս՝ Ահուրանի . Սարգիս՝ Կիւրիուայ . Թումաս՝ Գերմանիկոյ , որ է Մարաշ . Պօղէ՝ Ուռհայոյ , որ յետոյ թուլացաւ և դարձաւ յաթոռ իւր . Յովհաննէս՝ Խառանու . միւս այլ Յովհաննէս՝ Եմրլնու . Եւստաթէ՝ Փիւրնին . Պատրէ՝ Բոալին. Նոնա Կարկիսոնի (Կոկկիսոն ?). Պօղս՝ Կալինիկոսի (Կալանիկոս). Մարին՝ Հռոմքարին, որ է Հռոմկլայն. Յովհաննէս՝ Թլացին. Թովմա՝ Տարսոյ. Ահարոն՝ Աշմուշայ։ Եւ յերկրէն Ասիացւոց ՚ի Կարիոյ՝ (Կարիա, Այդըն) եպիսկոպոսապետն Ոփումիոս. Անտիոքոյ Պիսիդեայ՝ Ոմինիբանոս. յԻկոնայ քաղաքէ՝ Զուքսիս. յԻշանոյ՝ Պետրէ. Յուլիէ Աղիկառնացի, որ յետոյ հերձուած խօսեցաւ. Թուսեպիոս՝ Եփեսոսի, որ արար սքանչելիք ՚ի Կոստանդնուպօլիս, որ յետ թաղումն վիճմանց կանգնեցաւ երեք օր յառն և հրեշտակն Տեառն աւանդեաց զհոգին. և մարմին նորա վառեցաւ երկնաւոր լուսով զտիւ և զգիշեր, և զարհուրեցաւ քաղաքն, և կամեցան զնա դնել ընդ Մարտիւրոսս. և եղեւ ձայն ՚ի մարմնոյն թէ՝ “յիմ աթոռն տարէք թաղեցէք։” Եկրինէ՝ Նիոկեսարու. Եղափիտ՝ Կաստուրանայ. Թէոդորոս՝ Աւլիքիոյ. Դուկաս՝ ՚ի Մնիրու (Զմիւռնիա ?) քաղաքէ. Հեփսիբայ՝ Հեդրոնոսի. Պատրէ՝ Մալուդի. Պիկաստուր՝ Փիլադելփիայ. Պատրէ՝ Մանդէի. Ակաթոդոր՝ Աոնի. Փաղէկ՝ Մանտարի. Բուստինոս՝ Աքսենիայ. Աղեքսանդրոս՝ Բանքարայ։ Թող զայլ մանր տեղեաց եպիսկոպոսունսն զորս թողաք. և երիցանց և սարկաւագաց թիւ ոչ գոյ, որք ընդատացեալ եպիսկոպոսունս գլխաւորս գնացին յաքսորս 'ի Կոստանդնուպօլիս և յԱղէքսանդրիա · եւ յետ բազում քննութեանց և խոստմանց և սպառնալեաց և ոչ հաւանելոյ , միով խեղդեցան ։

---

(1) Միւս թարգմանութիւնն ունի Հագոնի. որ թուի եթէ իցէ Հարգան քաղաքն, որ է Հաճէն մերձ ՚ի Կոկիսոն։
(2) Միւս թարգմանութիւնն Եբերիոյ, գուցէ Բերիոյ։

---

(1) Միւս Թարգմանութիւնն Եւրձասոյ , կամ Արձասոյ :

Եւ որք 'ի տեղիս և յաշխարհն Ասորւոց սպանան և չքնացին յաքսորս , են այսքիկ ։ Օսփրինոս` 'ի գաւառէն Անտիոքու և Աղրիանէ` Սասուփոսմի չարչարանօք 'ի զօրագլխէն Անտիոքայ սպանան ։ Յովհաննէս և մասսուտն փախեաւ 'ի Սելեւկիա 'ի Ըլրավանք , և հասեալ սպանին վանօրն հանդերձ ։ Եւ Կիրիոս գլուխ վանացն Անտիոքայ ամեն եղբարքն սպանան . և վանականքն Թղհատայ 'ի տեղւոջն չարչարանօք կատարեցան ։ Եւ վանքն սուրբ Ռոմանոսի և սրբոյն Միխէօնի վանքն և Շիլոյ աւագերոյ վանքն յերկիրն Բեանոյ , և Եգիպտոսն` գլուխ ամենայն վանորայն , յետ բազում վիճմանն ընդ Քաղկեդոնիկան , ինքն և ամենեքին 'ի միասին մեռան ։ Եւ Յովհաննէս Բաբրայի վանապետն սրբայն , և վաներ բազում շուրջ զՈւռհայ քաղաքաւ , ամենեքեան 'ի տեղիս իւրեանց կատարեցան ։ Եւ վանքն սուրբ Յովհաննիսի , որ է յարեւելից կողմանէ Խառանու , և վանքն Մակլանոսի և վանքն սրբոյն Սարգսի , և մեծ վանք լերինն որ ասեն Թուման առաքելոյն հիմնարկեալ , 'ի տեղւոջ իւրեանց սպանան ։ Եւ մեծ վանքն սուրբ Սահակայ , և մեծ վանքն Անփոսայ և Վեղարայ և Բէգուգէլ, և հինգ վանք առաքելակիր յԱմթայ երկիրն, խուրեանց եպիսկոպոսօքն և վանականօքն կատարեցան ՚ի միասին ։ Եւ վանքն սուրբ Անանիանց և վանքն սուրբ Աբրահամու և վանքն սրբոյն Դանիէլի և վանքն սրբոյն Սամուէլի, և սոքա միապէս նահատակեցան ։ Եւ վանքն սուրբ Աբամայ. և վանքն Թորայի առընթեր Ուռհային, զորս կոտորեցին. և յՈւռհայէն մինչ ՚ի Պաղտատ անապատ արային, զքաղաք և զգեօղ և զվանք ընկեցին. բայց թէ ոմանք փախչէին և զերծանէին առ ժամն, յետոյ ՚ի բռուն անկեալ մեռանէին ։

Եւ վարդապետք որ ՚ի գրոց վկայէին և քաջալերէին զհաւատոն, են այսոքիկ ։ Եղիա՝ Խոկաւնոյ, և Սամի և Կողմայ և Յովհաննէս և Սարուն յարեւելից, և Կափթայ և Սարգիս այր սուրբ և սքանչելագործ, և Անտոն և Եղիա միւս, և Սիմէոն և Կայշր և Սարգիս միւս, և Յովհաննէս և Սիմէոն այլ, և Անանիա այր Աստուծոյ սքանչելագործ ։ Սոքա ամենեքեան ՚ի միասին գնացին առ թագաւորն յանդիմանել զնա. և եհան զբազումս ընդդէմ նոցա, և յաղթահարեալ եղեն ՚ի սրբոյն. և սպանին զամենեսեան սքանչելի արսն, և զվաներն որ կայ շուրջ Ուռհայ՝ զսուրբ Զաքէ և զսուրբ Աբէ և զսուրբ Սոգէ ևպիսկոպոսօքն և կրօնաւորօքն իւրեանց կոտորեցին : Եւ կայր անդ Սիւնակեաց մի, որ զամենայն աւուրս կենաց իւրոց հաց ցանկութեան չէր կերեալ, Յովհաննէս անուն(1), բայց միայն արմատս և բանջարս, զոր տային աշակերտքն, և Թէոդորիտէ որոյ միտքըն վերացեալ յաճախ և 'ի զարմացման լինէր, և երթեալ առ նա զուաջիկայն հարցանէին և լսէին : Եւ Թուման տարացին Սիւնակեաց մեծ վարդապետն, յորմէ և երկնաւորք պատկառէին, զնոսա յետ բազում հարցափորձի սրով կատարեցին :

Իսկ անօրէն չեպիսկոպոսն Ուռհայոյ՝ Պօղէ, դարձեալ 'ի յաղանդն Քաղկեդոնի, արեամբ շաղախեաց զամենայն Միջագետս, և գնային 'ի նմանէ փախստական 'ի Պարսիկս և 'ի նոցանէ մեռանէին. և ամենք մերկ և բոկ 'ի լերինս շրջէին զամառն և զձմեռն. և ոչ կարեմք զչարիս նորա ընդ գրով արկանել: Սա բազում աղաչանօք կոչեաց առ ինքն ըզսուրբն Յակոբ Սրճոյ եպիսկոպոսն. և նա աղօթեաց զի ճանապարհ նորա կամօք Տեառն լիցի, և յարեաւ գնաց. և հասեալ 'ի վանքն որ Պարսից կոչեն, և անդ երևեցաւ նմա հրեշտակ և ասէ. “Դարձիր և պատուիրեա աշակերտացն քոց վասն ուղղափառութեան, զի յետ երկու աւուր կատարիս :” Եւ դար-

---

(1) Միւս Թարգմանութիւնն ունի Սիմէոն անուն:

ձաւ և արար պատրաստութիւն ելից իւրոց, և զգուշացոյց զհօտն իւր և զաշակերտսն, և փախձանեցաւ ընդ բանի հրեշտակին յետ երկուց աւուրց ։

Յայսմ ժամանակի խնդրեաց Կուատ (Կաւատ) Թագաւորն Պարսից 'ի Յունաստանէ հինգ հազար հինգ հարիւր կենդինար ոսկւոյ տալ զօրականին որ պահէր զդուռն Ճորայ, և ոչ կամեցաւ տալ ։ Եւ եկ Թագաւորն Պարսից 'ի Միջագետս և 'ի կողմանս Անտիոքայ և գերեաց, և պատու 'ի գերեացն չորս հարիւր կուսանս, և զոհեաց զնոսա Ուզի կռոց իւրոց (1) ։

Եւ յայսմ ժամանակի կործեաւ և անյայտ եղև ջուրն Մելիտինոյ ամս հնգետասան ։ Եւ 'ի նոյն ժամանակս անկաւ հուր յերկնից և այրեաց զՊաղբաք քաղաք, զոր շինեալ էր Սողոմոն 'ի լեառն Լիբանանու, և զարքունիքն որ անդ էին . բայց զերէք վէմն զոր եդեալ էր Սողոմոն 'ի խորհուրդ Երրորդութեանն՝ ոչ վնասեաց (2) ։ *Եւ յայսմ ժամանակի երևեցաւ կին մի որ երկայն էր քան զամենայն մարդ գիրկ մի . լեզուով ոչ խօսէր, և կերակուր մարդոյ ուտէր, և յամենայն խանութ առնոյր փող մի . և կեցեալ բազում ժա-*

---

(1) Միւս թարգմանութիւն՝ Կուռէոյ նորոյ իւրոյ ։

(2) Երևելի էր 'ի քաղաքին տաճար կռոցն Երէքքարեան կոչեցեալ զոր Թէոդոս մեծն կործանեաց։ Մովսէս խոր. Գ. 33 ։

մանակս՝ անյայտ եղեւ, և ասէին բազումք թէ՝ յաւերժահարսանցն էր։

Ի թուին Յունաց ՊԼԶ (836) էր յՈւռհա Ասկղեպ եպիսկոպոս, և սա նեղէր զհաւատացեալն հաւանել անօրէն ժողովոյն։ Սա ժողովեաց քսան այր՝ միայնակեացս սքանչելիս, և չարչարեաց զնոսա անողորմն, և արկ զնոսա ՚ի բանտ. և ՚ի յերրորդ ժամ գիշերոյն եղեւ հեղեղ սաստիկ եկեալ ՚ի լերանցն, և ընդդէմ պարսպին բախեալ՝ դարձաւ յետս. և դարձեալ եկն և եղարկ և փլոյց զպարիսպն, և անցաւ ՚ի վերայ քաղաքին և ելից զքաղաքն, և սպան զմարդ և զանասուն, և առեալ տարաւ ելից յԵփրատ գետ։ Եւ ՚ի Կլայն (յամրոցն) քաղաքին զերծաւ Ասկղեպ, և թուով արքն որ զերծան՝ կամեցան քարկոծել զԱսկղեպ և փախեաւ յԱնտիոք։ Եւ Եփրեմ աղանդակիցն իւր, պատրիարքն Անտիոքու (1) ասէր. “Տեսէք, եղբարք, զերկրորդ Նոյ զերծեալ ՚ի հեղեղացն որ վասն մեղաց ոչ ընդունողաց զժողովն Քաղկեդոնի եղեւ։” Եւ Յուստինիանոս առաքեաց ոսկի բազում շինել զՈւռհա. և ՚ի պեղելն գտաւ գիր մի ՚ի վէմ մի, թէ “Երբեք անգամ ջրհեզեղ կրէ Ուռհա քաղաք .» և էր քաղդէացի գրով. և գտանեալ մարդիկն խեղդած՝ սկսան թաղել, և էր թիւն երեսուն և վեց հազար, և՚ի թուելն զմնացորդսն՝ հաշուեցան որ տարեալ էր հեղեղն երկու հարիւր հազար:

---

(1) Եփրեմ ամթեցի էր իշխան Անտիոքայ, իսկ պատրիարքն կոչէր Եւփրասիոս, որոյ ընդ կործանելն ընդ աւերածովք քաղաքին ՚ի պահու սասանութեան, կացուցաւ նմա Եփրեմ իւր տեղակալ, յամի 526։

Իսկ Ասկղեպ և Եփրեմ ածեցին զՆոնաք ՚ի չար աղանդն, և շարժեցաւ նոր բարկութիւն Աստուծոյ ՚ի վերայ Անտաքոյ, և շարժեցաւ ամենայն քաղաքն հինգերորդ շարժումն, և ամենայն շինուած տան և ապարանաց և եկեղեցեաց ՚ի վայր շրջեցաւ. և բորբոքէր երկիրն հրով, ջուր և հուր ՚ի վեր գայր յանդնդոց և բերէր խեցեմորթս և գորտս և խեչեփառս և ոսկերս, և հոտ մահաբեր բուրէր, և մեռանէին մարդ և անասուն ՚ի պէսպէս չարեաց. և աւուրս ինչ հուրն իբրեւ անձրեւ տեղայր յօդոյ: Եւ զամ մի և կէս ոչ կարեցաւ շարժն և ոչ հրեղէն անձրեւքն. և մեծ եկեղեցին զոր շինեալ էր Կոստանդիանոս, դողայր զեւթն օր իբրեւ զհասկ ՚ի հողմոյ, և ապա պատառեալ գետնոյն ել հուր և այրեաց զեկեղեցին, և այրեալքն ՚ի պատուհասէն էին հազար երկերիւր և յիսուն այր: Եւ երեւեցաւ յանկարծ լուսեղէն Խաչ յերկինս յետ երեք աւուր կործանեալն, և աղաղակեցին. "Տէր ողորմեա, Տէր ողորմեա." և ծածկեցաւ (1). և ՚ի շրջելն ընդ քաղաքն կենդանեայն մնացելոց, տեսանէին զպատառուածն 'ի տեղւս տեղւս, և լսէին ձայն հեծութեան յընկղմելոյն յելանել ոգւոց նոցա. բայց զԱսկղիպ և զԵփրեմ ոչ գտանէին զի խնդրեցեն խոյս և աղօթս, և ամենք ընտանիք նոցա ասէին թէ՝ Աստուած յերկինքն էառ զնոսա 'ի բարկութենէս. և ապա գտին զնոսա 'ի պղինձ մի կպրեփեցաց, և կային մարմինքն 'ի պղինձին՝ մերկացեալ ոսկերքն 'ի մսոյն և գլուխքն 'ի դուրս, զի ճանաչիցեն թէ ով ոք իցեն: Եւ Սելեւկիա Ասորւոց որ կայ 'ի վերայ ծովուն և Գաբինի քաղաք և բազում այլ շուրջ զԱնտիոքաւ ապականեցան. նոյնպէս և Անաւարզա Կիլիկիոյ գլուխ, և Կորնթոս՝ գլուխ Եղլադայ ընկղմեցան շարժմամբ:

---

(1) Սամուէլ անեցի յամի փրկչին 527, ասէ "Ալն դակի

Բամիրացւոց երկիրն կայ յարեւելից Եփրատի, և Հնդկաց 'ի հիւսիսոյ կողմն (1): Հրեայ ոմն (2) թագաւորեաց 'ի վերայ նորա

ամենեւինք նուաղեցաւ. յետ որոյ ոչին խաղաղոյն:»

(1) Բամիրացւոց երկիրն է կոչեցեալն 'ի գրոց Սաբա, յերջանիկն Արաբիա, այն է Եմէն. ըստ Յունաց երկիր Հոմերացւոց անուանեալ: Իսկ Հնդիկք ըստ հնոյն իմացուածոյ, են հարաւային կողմանք Արաբիոյ՝ յեզերս Կարմիր ծովուն, անդ ուր միանայ վերջնոյս այս ընդ Հնդկաց ովկիանու, և կոչէին Հնդիկք կամ երկիր Հնդկաց վասն գոլոյ 'ի վերայ Ճանապարհին Հնդկաստանի:

(2) Ըստ Յովհաննու պատմագրի ասիացւոյ՝ կոչէր անուն հրեայ թագաւորին Տիմիոն կամ ըստ այլոց Տիմիանոս: Իսկ

՚ի ժամանակս Յուստինեայ, և լուաւ եթէ Հռոմայեցիքն նեղեն զՀրեայսն ՚ի գաւառն իւրեանց, և կոտորեաց զվաճառականսն Հռոմայեցւոց որք երթային ՚ի Հնդիկս, և փակեցաւ ճանապարհն յերթևեկացն ։ Եւ առաքեաց առ Հրեայ թագաւորն՝ Հնդաք թագաւորն Քուշանաց այսինքն Հաբաշից, և մեղադրեաց վասն կորելոյն զճանապարհորդացն, և Հրեայն արար նմա ընդդէմ պատասխանի ։ Եւ ժողովեաց զօրս Հնդաքն և ուխտեաց Աստուծոյ՝ որ թէ յաղթէ Հրէին՝ լինի քրիստոնեայ ․ և գնաց ՚ի վերայ Հրէին և յաղթեաց նմա երկիցս անգամ և հալածեաց յերկրէն զՀրեայսն, և առաքեաց երկուս իշխանս առ Յուստինոս և ծանոյց նմա զիրողն, և եպիսկոպոս խնդրեաց զի արասցեն զնոսա քրիստոնեայս ։ Եւ նորա խնդացեալ առաքեաց իւր աղանդոյն եպիսկոպոս Յովհաննէս անուն (1), որ երթեալ մկրտեաց ըզնոսա և եղեւ երկիրն քրիստոնեայ ։ Եւ առաւել զօրացեալ և խրախուսեալ ՚ի Քրիս-

Թագաւորն Հաբէշից ըստ նորին Յովհաննու՝ կոչէր Այտուկ, այլ իսկական անուն նորա էր Էլա—Ասպեայ ․ և քաղաք նորա աթոռանիստ՝ էր Աքսում ։ Տես ՚ի գիրս Տիմոթէոս վարդապետի Սափրիչեան ․ Երկամեայ ուղեւորութիւն ՚ի Հաբէշստան ․ Գիրք Ա ․ յեր ․ 125 ․ Տպեալ յԵրուսաղէմ ․ 1871 ։

(1) Այն է Յովհաննէս Պարամոնարիոս, զոր Պատրիարքն Աղեքսանդրիոյ ձեռնադրեաց եպիսկոպոս ՚ի վերայ Աքսում քաղաքի ․ որոյ եկեալ մկրտեաց զԹագաւորն և զաւագանին յամի իբր 524 ։

տոս, արար հնազանդ զերկիրն Քամիրայ, և եդ նոյա թագաւոր Սերոհամ անուն, և կային յոլով քրիստոնեայք 'ի Քամիրա։ Եւ առաքեաց Սերոհամ թագաւոր յԱղէքսանդրիա առ Տիմոթէոս պատրիարք և խնդրեաց հովիւս այնր հօտի. և նա առաքեաց ուղղափառ հաւատով եպիսկոպոս և քահանայս որք երթեալ հակառակեցան և Աստուածաշունչ վարդապետութեամբ յաղթեցին ուղղափառքն Յովհաննիսի, և ձգեցին զնա և դարձուցին յուղղափառութիւն զերկիրն Քուշանացւոց և Քամիրացւոց։

Եւ գիտել պարտ է զի երեք թագաւորութիւն է Հնդկաց, և չորք թագաւորութիւն Քուշանացւոց (1), որք կան 'ի հարաւոյ և ունին զաւելի մասն երկրին հարաւոյ և արեւելից։ Քանզի քան և չորս ջերմ է աշխարհս և զչորեքտասանն Քուշացիքն ունին որ են Հապաշիք։ Եւ այժմուն Քաղկեդոնի անկաւ 'ի մէջ ներքին և արտաքին Հնդկաց թագաւորին՝ Եքսանոսն անուն, և ներքագունին՝ Ինծուք (Ինտուկ կամ Հնդուք). և 'ի սոյն ազգէն դարձեալ զօրացան Հրեայք և եղին իւրեանց թագաւոր յերկիրն Քամիրայ.

---

(1) Յաղագս բաժանման երկրին Հապէշից 'ի զանազան թագաւորութիւնս, տես 'ի գիրս Տիմոթէոս վարդապետի Սափրիչեան, Երկամեայ պանդխտութիւն 'ի Հապէշստան. Գիրք Ա. յեր. 38։

և արար հալածումն և յաճախ մահ քրիստոնէից քաջալերելով զնա Յուստինեայ, զի առաքեալ առ Հրեայ թագաւորն և ասաց. «Բարձ զաղանդդ զայդ, զի դոքա ոչ ընդ մեզ են և ոչ ընդ ձեզ. և որպէս ուսանիմք՝ մեր և ձեր ասելս վասն Քրիստոսի՝ ի մէկ ելք հայի. զի դուք ասէք՝ որ հայրն ձեր յԵրուսաղէմ մարդ խաչեցին, և մեք ասեմք զնոյն՝ թէ զմարդն խաչեցին Հրեայքն. իսկ այդ աղանդդ ասեն Աստուած խաչեցաւ ։» Եւ նա լսեալ զպատուէրն Յուստինեայ՝ չոգաւ ի վերայ Նեգրան քաղաքի, և կոտորեաց զքրիստոնեայսն որ անդ կային, որպէս և գրեալ պատմութիւնն ծանուցանէ. և զմնացեալսն ի թըղթէն Յուստինեայ և ի դեսպանացն ուսցին ։ Եւ այն դեսպանքն որ գնացեալ էին առ Մնդուր (Մունդիր) թագաւորն Տաճկաց (Արաբացւոց) սիրոյ աղագաւ, գրեցին առ Յուստինէ նախ քան զդառնալն՝ զայս օրինակ ։

«Գիտասցէ ձեր ինքնակալութիւնդ, որ եկաք Աստուծոյ յաջողելովն ի Հերեթա քաղաք թագաւորանիստ Տաճկաց, և չգտաք անդ զթագաւորն. ապա ելաք գնացաք առաջնորդ առեալ մեզ՝ ընդ անապատ աւարոս տասն ընդ աւազուտ լեառն, և հանդիպեցաք Մնդուր թագաւորին. և ի տեսանելն զմեզ՝ սկսան ծաղր առնել զմեզ և կատակել ասելով. "Ո՞ւր է Քրիստոսն ձեր, որ ասարէք Տէր և Աստուած երկնի և երկրի . և այժմ որպէս լուսք՝ առիք յիւրմէ (1) և զթագաւորութիւնն Հռոմայեցւոց, և դաւանեցիք զնա մարդ մեռեալ և կենդանացեալ ։ " Եւ 'ի շատ կատակաքանելն նոցա՝ եկին դեսպանքն 'ի Հռոմէից թագաւորէն , և բերին աւետիք թէ՝ զօրացաք մեք Աստուծով և հալածեցաք զՊարսկեացին և զհաստատեալն 'ի նա կորուսաք . գնացաք և 'ի Նիզբին և Նենգիւ երդուաք և առաք զքաղաքն , և ստեցաք զերդումն՝ գիտելով թէ չմեղադրէ զմեզ Աստուած ընջելով զթշնամիս նորա ։ Բայց չկարեմք տալ զսէրն զոր ունէին առ Քրիստոսն իւրեանց , զի մանուկ մի չկարացի պատրել և դարձուցեալ յետս 'ի Քրիստոսէն , և ոչ եկին մի և ոչ ծառայ ոք։ Զի էր անդ կին թագաւորի չորս դստերօք, և խնայեցի 'ի նա և զամենայն հնարս փորձեցի , և ոչ հաւանեցաւ ինձ 'ի բաց կալ 'ի Քրիստոսէ , և ապա ասացի նմա թէ՝ "Մի՞ արասցէ Տէր թէ ես ապականեմ զքեզ երեսացդ քոյ . միայն ասա զոր ասէ թագաւորն քո Յուստինիանոս թէ՝ մարդ էր Քրիստոս և մարդ խաչեցաւ ։ " Եւ պայրացեալ եթուք յիս և չարամահ սպանին զնոքն ընդ դստերան իւր։ Եւ արդ մի՛ արասցես սէր ընդ Հռոմայեցիս, այլ գնասցուք և բարձցուք զԹագաւորութիւնն Հռոմայեցւոց։ Եւ զայդ յառաջագոյն գրեցաք առ ձեզ ՚ի ձեռն Աբրահամու երիցու որ է ընդ մեզ, և զինչ կամին տալ մեզ պատասխանի ոչ գիտեմք։» Եւ յետ այնորիկ միաբանեալ ընդ միմեանս Տաճիկքն և Պարսիկքն, եկին մինչ յԱնտաք և յԱփամիա և գերեցին։

---

(1) Միւս թարգմանութիւնն յաւելու , ոչ միայն զապականացուցանելն , այլ և ։

Յայսմ ժամանակի եղեւ շփոթ ՚ի Կոստանդինուպօլիս և սպանին զդատաւորն, և ՚ի նմին ժամու այրեցաւ մեծ կաթողիկէ եկեղեցին. և այս ամենայն պատուհասք էին չարեացն Յուստինիանեայ, զոր մեք զատկան գրեցաք զոր ինչ անցոյց նա ընդ աշխարհ և ընդ եկեղեցի, որ էր այր ծեր ՚ի Թագաւորելն իւրում, և արար զքուերորդին իւր Յուստինոս (Յուստինիանոս) կեսար, իւրով անուամբն կոչելով. և ետ նմա իշխանութիւն ՚ի Թագաւորութեանն, և առաքեաց զնա ընդդէմ Պարսից. և յորժամ եկն ՚ի Մնբէճ և լուաւ վասն կուսի մի որ էր դուստր երիցու, և խնդրեաց ՚ի կնութիւն, և նա ոչ կամէր տալ ասելով թէ՝ «Հանես զնա յիւր դաւանութենէն։» Եւ երդուաւ նմա թէ՝ «Թող պահէ իւր կրօնիւքն իւր եպիսկոպոս և քահանայս, և թէ լինի հնար՝ քարոզեսցի զդաւանութիւնդ ձեր ընդ աշմենայն երկիր։» Եւ ետ նմա զաղջիկն ուրում՛ անուն էր Թէոդորիա. եւ եղեւ ՚ի ձեռն նորա բազում դիւրութիւն ուղղափառաց, եւ տարաւ ընդ իւր եպիսկոպոսունս եւ քահանայս ՚ի Կոստանդինուպօլիս. եւ յետ երեք ամաց մեռաւ անօրէն ծերն Յուստիանոս՝ Թագաւորեալ ամս ինն։ Եւ էառ ըզԹագաւորութիւնն այլն Յուստիանոս(Յուստինիանոս) եւ Թագաւորեաց ամս երեսուն եւ ութ եւ ամիս եւթն։

Յայսմ ժամանակի Թագաւորն Պարսից Կուա՛ն (Կաւատն) ետ զորդին իւր ՚ի դարոց ՚ի Մանիքեցւոյն յերկիրն իւրեանց, որ եւ ուսաւ զկրօնս նոցա եւ ուխտեաց վարդապետացն իւր որ թէ Թագաւորէ՝ պաշտէ զաղանդն նոցա, եւ նոքա ասացին՝ աղօթենք որ Թագաւորես։ Եւ մայր ողջոյն աղաչէր ըզԿուա՛ն Թագաւորեցուցանել զորդին ՚ի կենդանութեան իւրում, եւ խոցաւ Թագաւորն զպատճառն եւ երկեաւ, թէ գուցէ լինի այլ Թագաւորք մոգուց, եւ ասեն թէ՝ ՚ի ժամանակս նորա բարձաւ մոգութիւնն։ Եւ արար մեծ ժողով եւ կոչեաց զՄանիքեցւոյն զամենեսեան իւրեանց եպիսկոպոսօքն եւ կոտորեաց զամենեսեան, եւ զորս եգիտ արտաքոյ՝ այրել հրամայեաց, եւ ետ զեկեղեցիս նոցա քրիստոնէից։ Եւ կային ՚ի Մանիքեցւոյն ՚ի Կոստանդինուպօլիս բազումք, եւ ջանացին դարձուցանել զնոսա յաղանդոյն և ոչ կարացին, և այրեցին զնոսա առհասարակ:

Յայսմ ժամանակի առաքեցաւ Վալիսարիս (Բելիսարիոս) 'ի Պարս մեծի զօրու՝ յաւագ շաբաթն մեծի Զատկին, և խնդրեաց թագաւորն Պարսից թէ՝ « Պատուենք զտօնս Հրէից և Քրիստոնէից, և չպատերազմիցք 'ի տօնիս վասն ձեր և վասն Հրէից որ ընդ մեզ են:» Նա ոչ լուաւ, այլ արարին մարտ 'ի մեծի շաբաթուն ճրագալուցին: Նա եղեւ բարկութիւնն Աստուծոյ 'ի վերայ Հռոմայեցւոյն, և բազումք գետամոյն եղեն և յոլովք սրով մեռան: Նա յետ այսորիկ մեռաւ Կաւատն և թագաւորեաց Խոսրով որդի նորա. և մայր նորա չարչարէր 'ի դիւաց, և չկարէին օգնել մոգքն, և գնաց առ Մովսէս միայնակեաց, մկրտեցաւ և բժշկեցաւ:

Նա յայնմ ժամանակի Հրեայքն որ 'ի Սամարիա՝ կացուցին իւրեանց գլխաւոր և կոտորեցին զՆիկոպօլիս (1) և բազում վնասս գործեցին. և եկեալ զօրքն Հռովմայեցիք ընկեցին զնոսա(2): Իսկ Թէոդորիա թագուհին աղաչէր զԹագաւորն վասն ուղղափառութե՟. Եւ Թագաւորն առաքեաց Թուղթ յանապատն Եգիպտոսի առ կրօնաւորսն զի եկեսցեն և իւրեանց պարկեշտութեամբն և առ Աստուած համարձակութեամբն ընտրեսցեն քրինութեամբ զլաւն և զհաճոյսն Աստուծոյ: Եւ առաքեաց առ սուրբն Սեւերիոս որ կայր յԱղեքսանդրիա, զի աշխատ լիցի և եկեսցէ 'ի գործ եկեղեցւոյ: Եւ եկին յոյժ բազմութիւն մենաստանաւորաց և սուրբն Սեւերիոս 'ի Կոստանդինուպօլիս: Եկին և 'ի գաւառաց գաւառաց եպիսկոպոսունք յերկուց կողմանցն՝ յուղղափառացն և 'ի չարափառաց, և արարին մարտ մի քննութիւն. և այնչափ շահեցան ուղղափառքն՝ զի դադարեաց հալածումն: Եւ Անթիմոս պատրիարքն Կոստանդինուպօլսի դաւանեաց զուղղափառութիւն յաղթեալ 'ի ճշմարտութենէն, և գրեթէ ամենայն բազմութիւն քաղաքին դաւանեցին զճշմարտութիւնն՝ բաց յեկեղեցականացն, որք ամպարտաւանեալք աքացէին ընդդէմ ճշմարիտ աստուածպաշտութեան:

---

(1) Ընթերցիր Նէապօլիս, այն է Նապլուս քաղաքն արդի, ուր գտանին ցարդ Սամարացի Հրեայք:

(2) Պատմագիրք Յունաց ասեն, եթէ ապստամբեալ Սամարացւոց 'ի հալածանացն Յունաց և ընդ խիստ օրէնս զոր ետ Յուստինիանոս 'ի վերայ ամենայն ազգացն այլակրօնից, ապստամբեալ կացուցին իւրեանց թագաւոր զոմն Յուլիանոս անուն որդի Սաբարայ, որ ած բազում աւերս երկրին,

---

յաւարի առ և զՍիկիլթուպօլիս և տիրեաց Նաբլուս քաղաքի: Թէոդոր Սկենաս, իշխան Պաղեստինի և զօրավար բանակին Յունաց, բախեցաւ զօրօք ընդ Յուլիանոսի. սպա և Իրենէոս կոմս ըստ կարգի իւրում եկ 'ի վերայ Սամարացւոց մինչդեռ ապստամբեալ կային 'ի լերինս, և սատակեցոյց զՎԸԵ խաւարս Նոցա որք բանակից լինէին ընդ Պարսս, յուսալով օգնութիւն առ 'ի Նոցանէ գտանել:

Եւ մինչ յայսմիկ էին, եկն եհաս համբաւ ասպատակի Թշնամեաց. և ելեալ բանհազար արանց գնաց ՚ի պատերազմ, և գնային խնդութեամբ յուսով դառնալոյ ամենեցուն յուղղափառութիւն։ Եւ Թագաւորն ելեալ յուղարկել զզօրսն և դարձաւ աղօթել յեկեղեցւոջն, և շարժեցաւ քաղաքն և լցան փողոցք և տանիք և վերնայարկք և գաւիթք եկեղեցւոյ արամբք և կանամբք որք աղաղակէին. «Բարեպաշտ Թագաւոր, միադաւան՝ միահաւատ արա զամենեսեան։» Եւ ելաց Թագաւորն զբազում ժամս, և պատասխանի ետ ժողովոյն, թէ «լինի ըստ կամաց ձերոց։» Եւ նոքա այլ աղաղակեցին. «Փութա՛ Թագաւոր, և ՚ի կեանս քո արա խաղաղութիւն եղբարց բաժանելոց, որ միաւորելով Աստուծոյ Բանին ՚ի մի բնութիւն՝ միաբանեմք ամենեքեան։» Եւ դարձեալ ելաց արքայ լալիւն մեծ. և ապա ասէ ցնոսա. «Գնացէք և Թոյլ տուք, լինիցի որպէս հայցէք։» Զի յորժամ գիտացին ժողովրդականքն, թէ միաբանեցաք որք երկնային վարուք են և աստուածախօսք, մի բնութիւն դաւանեն, այն է ճշմարիտն։ Եւ կամէր Թագաւորն հաստատել զուղղափառութիւնն, զի գիտաց թէ ուրացողք են Քաղկեդոնականքն. բայց զի մտանէին Քաղկեդոնիկքն ծածկաբար առ Թագաւորն և երկիւղ արկանէին նմա հօգեւոր և մարմնաւոր, ասելով թէ՝ «Աւելի կամիս լինիլ Աստուծոյ և մարդկան հաւանելով կռոցդ. զի վեց հարիւր երեսուն և վեց եպիսկոպոսքն քանադրեալ են զոչ հաւանողս նոցա բանիցն, և յամեն երկիր տարածեալ է զաւանութիւնդ այդ, ոչ կարեն հանդարտալ քեզ աշխարհք ամենայն։» Եւ երկեաւ թագաւորն և կայր ՚ի տարակուսի։ Եւ զայս լուեալ Սեւերիանի ասաց. «Ապաքէն Պետրոսի տուաւ իշխանութիւն կապել և արձակել, իսկ որք ոչ ունին զՊետրոսի զաւանութիւնն, ոչ կարեն կապել և արձակել, այլ նոքեանք են դատապարտք և կապածք. զի Պետրոս երկութիւն ոչ դաւանեաց, այլ ասաց միաւոր՝ «Դու ես Որդի Աստուծոյ, այդ ոչ մեզ երեւիս.» և երանեցաւ ՚ի Տեառնէն։ Իսկ անապատականքն տեսեալ թէ յամեաց բանն և ոչ լինի կատարեալ խաղաղութիւն, ասեն ցթագաւորն. «Ով թագաւոր, հաւատս մեր չէ մանկագոյն և փոքր՝ որ մեծանայ, և ոչ ծերացեալ՝ որ թէ նորանայ, և ոչ թերի՝ որ լնու, և ոչ առաւելեալ՝ որ պակասի. այլ զոր Հոգին Սուրբ սերմանեաց մարգարէիւքն և ժողովեաց առաքելօքն, և Տէրն մեր Յիսուս Քրիստոս Աստուած Ճշմարիտ կատարեաց և հաստատեաց, մեք յայնմանէ ոչ թիւրիմք, ոչ պարգեւօք և ոչ փաղաքշանօք, ոչ մահուամք և ոչ կապանօք, այլ կամք և միամք առաջի մարդկան որպէս և եմք առաջի Աստուծոյ։» Եւ զայս ասացեալ գնացին յանապատն իւրեանց, և Սեւերիանոս զԱնթիմոս առեալ գնաց յԱղեքսանդրիա։

Եւ լուաւ զայս սուրբ Մոր Զօրաւ (Զոհար) սիւնակեացն որ 'ի սահմանս Ամթայ, և գնաց տասն աշակերտօք 'ի Կոստանդնուպօլիս յանդիմանել զԹագաւորն։ Եւ յանդիման եղեալ Թագաւորին ասաց. «Մինչեւ յե՞րբ է անիծեալ ժողովոյն Քաղկեդոնի չարիքն, ընդէ՞ր քառնաս և սրբես զեկեղեցի։» Եւ զայրացաւ Թագաւորն ընդ անարգանսն և ընդ անէծս ժողովոյն, և եհար ձեռօքն զկուրծս սրբոյն և ասէ. «Զի՞նչ նշան ցուցանէք դուք զի գիտասցուք թէ ձերդ է ճշմարիտ. և զիա՞րդ իշխեցէք առաջի իմ նզովել զսուրբ ժողովն։» Եւ նա ասաց. «Նզովեցի և եղիցի նզովեալ և հաւանեալքն նմա. և զի խնդրես նշանս տեսանել, հաւատամ յԱստուած կենդանի որ զքեզ առնէ նշան։» Եւ ել բարկութեամբ 'ի Թագաւորէն, և երեւեցաւ այն Թագաւորին մեծ անարգանք, և ետ գրել վաղվաղակի, թէ ոք յայսմ հետէ իշխէ նզովել զժողովն Քաղկեդոնի, նոյն ժամայն սպանցի։ Եւ տարածեցաւ հրամանն, և հրեշտակ Տեառն յայտնեաց զտեսիլն իւր Թագաւորին, և եհար ձեռամբ զգլուխ Թազաւուրին և անկաւ թագաւորն և անշնչացաւ և թաւալեցաւ 'ի խելացն . և գնացեալ թագուհին անկաւ յոտս որդոյն, և աղաչեաց զայլ և աղօթել և դնել զձեռնն 'ի վերայ՝ զի կենդանացեալ արասցէ զկամս նորա ։ Եւ եկեալ որդոյն եդ ձեռն և աղօթեաց և յարեաւ վաղվաղակի և խնդրեաց ժողով զի հաստատեսցէ զուղղափառութիւնն . և եկն Սեւերիանոս և Թէոդորէ պատրիարքն Աղէքսանդրու և Նիթիմոս և այլք բազումք, և չարափառ պատրիարքն Անտիոքու 'ի ձեռն Սարգսի բանսուորի ծանեաց Ագաթոնի Հռոմայ պապուն և եկն 'ի Կոստանդնուպօլիս, և մեծարեաց թագաւորն և քաղաքն զմուտ նորա . և երեք պատրիարքունքն ոչ եկին ընդդէմ նորա , Սեւերիանոս և Նիթիմոս (1) և Թէոդորոս ։ Եւ յետ աւուրց սկսաւ մեղադրել թագաւորին, թէ "Ո՞վ է այն խաբեբայն Զօրաւ որ վասն նորա շարժես զկրօնս սուրբ ժողովոյն Քաղկեդոնի . տուր զնա 'ի ձեռս իմ ." և հրամայեաց թագաւորն ։ Իսկ սուրբն առանձնացեալ էր 'ի պահս և'ի ճգնութիւն, զի առաջին շաբաթն էր աղուհացից ։ Եւ առաքեաց առ նա և ասէ . "Կամ եկ դու առ մեզ , կամ ես և թագաւորն գամք առ քեզ ։" Եւ գնացեալ ասացին 'ի դրանէն

---

(1) Յօրինակին Տիմոթէոս ։

'ի ներքս. ետ պատասխանի և ասէ. « Ես մինչև յաւուր հինգշաբաթ օրն ոչ ես երթամ առ ոք և ոչ ընդունիմ առ իս զայլս:» Եւ նա բարկացեալ արար ատեան և նզովեաց զՍեւերիոս և զԱնթիմոս և զԹէոդորոս և ըզսուրբն Զօրաւ (Զոհար) և դաւանեաց երկու-բնութիւն և զԱկեսարի աղանդն, և վաղվաղակի ժամանեաց բարկութիւն Աստուծոյ 'ի վերայ նորա, և թանձրացաւ լեզուն և չառնէր զնա բերանն և թափէր արտաքս, և երբէք անդամ կարեցին բժիշկք և ոչ դադարէր կեղն և բորբոսն մինչև 'ի մեծ հինգշաբաթ օրն, և չարամահ սատակեցաւ (1): Յայնժամ եբարձ թագաւորն ;եդե ; սահմանն աղանդեան նզովեալ Քաղկեդոնի ժողովոյն, և գնացին սուրբքն 'ի տեղիս իւրեանց:

Եւ ապա յայտնեցաւ նշխարք սրբոյն Սարինեայ 'ի գաւառին Անախրքու, 'ի Ճէնաէրիս գեղ, անփուտ և մածեալ ընդ տախտակացն, և էր ամենայն մարմինն վէրք. և եղև բազում բժշկութիւն, և բեր ս Անուսք:

Եւ յայսմ ժամանակի եկին Պարսիկք և գերեցին զՀալպ և զԱնտաք, մինչև տարան կամակարութեամբ սիւնս մարմարեայս 'ի Պարս. և գնացին Հռոմայեցիք և առին զվրէժն գերելոյ զաշխարհն Պարսից ։ Եւ յետ այնորիկ եկն Խոսրով Թագաւորն Պարսից 'ի վերայ Ուռհայոյ և չկարաց առնուլ, և գերեաց զՍուրճ և քակեաց զՆոսաք՝ գընաց ։

---

(1) Զանակնկալ փոխման Ակաթոնի պապի 'ի Կոստանդնուպօլիս, հաստատեն և արեւմտեան պատմագիրք: Տես Փլէօրեայ, Պատմ. Եկեղ. ԼԲ. 52-54:

Յայսմ ժամանակի Քաղկեդոնի աղանդոյն եղեալք 'ի Կոստանդնուպօլիս, Եսայի՝ Ուգոսի, և Աղէքսանդրոս՝ Միջքասափ ըմբռնեալք յարուածողութիւն, Հատան երանք նոցա 'ի Թագաւորէն, և մերացեալ 'ի ձող՝ ցուցաւ քաղաքին, և քարոզքըն աղաղակէին թէ՝ "Այս է դատաստան որք զայնպիսին գործեն ." և կատարեցաւ բանն Պաւղոսի թէ՝ "Որովհետեւ ոչ խնացան զԱստուած ունել 'ի գիտութեան, մատնեաց զնոսա Աստուած գործել զանարժանսըն (1) ։ "

Ի հնգետասան ամին Յուստինիանեայ եկին Պարսիկք և գերեցին զԴիմիոն և զԿալանիկոս, և զՊեղխս քակեցին և 'ի Պեղխայ տարան զնշխարս սրբոյն Բագոսի և զոսկին որ 'ի վերայ տապանին սրբոյն Սարգսի (2) ։

---

(1) Թուղթ առ Հռոմայեցիս . Ա . 28 ։

(2) Ապուլֆարաճ կոչէ զանուանս քաղաքացս Դէյչմըն, Կալլինիկոս, Բէէր—Բողոս ։ Իսկ 'ի Վարս Սրբոց գրի . եթէ սուրբն Բագոս նահատակեցաւ 'ի Բարբալիսոն քաղաքի . և սուրբն Սարգիս 'ի Ռուծափի քաղաքի Ասորւոց մերձ յԱպամիա , որ է Համա ։

Ի թուին Ասորւոց ՊԽԸ (848) *եղեւ նշան ի վեր քան զհաւատալ, որ թէ չէր գտեալ ի բազում գիրս այլոց գրեալ, (և ոչ ես կարէի գրել)։ Խաւարեցաւ արեգակն ութ և տասն ամիս, զի երեք ժամ՝ աւուրն լոյս տայր և զայլն որպէս ոչ լոյս և ոչ գիշեր. և ոչ հասան պտուղք տարւոյն, և ամենայն բնակիչք աշխարհի եղեն իբրեւ զկիսակենդանս և որպէս այլակերպս։ Նա յետ այնորիկ եղեւ մահ տարաժամ, որ բնաւ չէր լեալ յաւիտենից. նախ սկսաւ ի Կոստանդնուպօլիս ընդ երկնել որբոյն ի նմանէ։ Յառաջին օրն մեռան հինգ հազար, և միւս այլ օրն տասն հազար, և միւս այլ օրն հնգետասան հազար, և յայլում աւուր ութ և տասն հազար. և եդ թագաւորն թուղթ ի դրան քաղաքին և համարեցան մինչեւ յերեք հարիւր հազարն, և ապա թողին զհամարն։ Նախ սկսաւ յաղքատսն և ապա ի մեծատունսն և յիշխանսն և ի տունն թագաւորին, և ունէր ցաւքն (անութք) և պատառէր, և երթայր շարաւն. և հոտեցաւ քաղաքն և լնուլին ի ծովն ոչ կարելով թաղել։ Զի ի վերայ միոյ յաճախէր չարն, յառաջ երեք սեաւ պտեր (չիպաններ) երեւէր ի մէջ ափին և այլ ոչ ժամանէր փախել զոտն։ Բազումք այս նշանով մեռանէին. և զոր ընկենուլին ի ծովն, դարձեալ արտաքս բերէր* ծովն. և նեխեցաւ քաղաքն և Թագաւորն քառասուն դահեկան հրամայէր տալ որ մի մեռեալ հանէր ընդ քաղաքն, և նորա 'ի տանել զմեռեալսն՝ անկանէին և մեռանէին։ Եւ բազումք մտանէին 'ի տունս Թափուրս 'ի մարդոյ և լի գանձիւք և հանդերձիւք, և բառնային շալակով, և 'ի հանելն ընդ դուռն՝ անկեալ մեռանէին (1)։

Եւ տարածեցաւ մահն յերկիրն Եգիպտոսի, և ջնջեցաւ քաղաք մի, ուր եւթն այր և տղայ մի մնացին, և 'ի շրջելն ընդ քաղաքն՝ յանկարծ անկան եւթն այրքն և մեռան, և տղայն ետես զհրեշտակ Աստուծոյ 'ի կերպարանս ծերոյ. և տեսեալ զի լայր տղայն, եհան զնա 'ի քաղաքէն և ասաց. «Գնա և մի լար, զի բարկութիւնս վասն հերձուածոց և մեղաց է։»

Եւ 'ի Փղշտացւոց երկիրն գնացեալ պատահեցաւ 'ի քաղաք մի՝ երեւեցան դեւք և ասացին, թէ «Գտանէք պատկեր մի պղնձի, երկրպագեցէք նմա և ոչ մեռանիք։» Եւ շրջեալ գտան զպատկերն և երկրպագեցին. և յաճախեաց մահն, և ոչ մնաց 'ի նոցանէ և ոչ մի։ Եւ եհաս բարկութիւնն 'ի

---

(1) Զայս դէպս կատարածի մահտարաժամին հաստատեն և Յովհաննէս Ասիացի և Զաքարիա Մելիտինացի. և պատմագիրք Յունաց. և պատահեցաւ յամի 524, առ Թագաւորութեամբ Յուստինիանոսի, և տեւեաց ամս տասն։

Հայս և 'ի Պարս ։ Բայց Հէմս քաղաք, ուր կայր գլուխ Յոհաննու Մկրտչին, և բնակչայն ապաւինեալ 'ի նա և 'ի բարեխօսութիւն նորա, ապրեցան ։

Յինն և տասն ամին Յուստինեայ բարբարոսք առին զՀռոմ և աւերեցին, այնչափ զի մնացեալքն էին յառընթերակայ աւերակսն, որ չէին կարող բնակել 'ի քաղաքն ։ Եւ յայսմ ժամանակի փոխեցաւ 'ի Քրիստոս սուրբն Սեւերիանոս Աղեքսանդրիա, և եդաւ պատուով 'ի տապանի. և ուղղափառքն եդին պատրիարք զՍարգիս Ճգնաւոր Ըհոփրայ ։ Յայսմ ժամանակի այրեցաւ վանք սրբոյն Սիմէօնի Անոսք և թափուր եղեւ 'ի բնակչացն ։ Եւ 'ի սոյն ժամանակս (պատահեցաւ) խանգարումն Զատկի ։ Եւ 'ի քսան և երեք ամին Յուստինեայ գետն Տարսոնի ելաւ և տարաւ զքաղաքն ։ Եւ 'ի սոյն ժամանակս 'ի շարժմանէ կործան 'ի Լատիկն եւթն հազար այր ։ Եւ 'ի Միւսիա ընկղմեցաւ կէս քաղաքն Պոնապօլսի (1) և իջին բնակիչքն կենդանւոյն 'ի խորս, և ձայն հեծծմանն գայր զաւուրս, և ոչ կարէին օգնել ։ Եւ 'ի Փիւնիկէ ընկղմեցաւ Տրապօլիս և Պիւսոս (2) և Տրովլաս և ամենայն քաղաքն Գալիլեայւոց . և 'ի ներքս գնաց ծովն երկու միլ և նաւքն մնացին 'ի ցամաքի ։

---

(1) Միւս թարգմանութիւնն Պոնտապօլսէ, զոր ոմանք իմանան զՊենտապօլիս քաղաք ։

(2) Այն է Բիբղոն, կամ Բիբլոս, որ ըստ Տաճկաց

Յայսմ ժամանակի առաւ Պատրաս (1) 'ի Պարսից և ամրացաւ, և լուեալ Հոռոմայեցւոյն գնացին պաշարեցին զքաղաքն զեւթն ամ և դարձեալ առին ։ Եւ յայսմ ժամանակի եղեւ սով սաստիկ, մինչ զի ուտէր մարդ հինգ լիտր հաց և ուռնոյր և ոչ յագենայր։ Եւ եղև մահ անասնոց երկու ամ, և էր ընդ ամենայն երկիր, և ապականեաց եզին վաստակ յերկրէ ։ Եւ եղեւ շարժ 'ի Կոստանդինուպօլիս զքառասուն օր, և բազում տուն գերեզման եղեւ բնակչացն, և տապալեցան յոլով եկեղեցիք, և մասն ինչ 'ի Նիկոմիդիայ կորեաւ ։ Եւ 'ի յերեսուն ամին Յուստինեայ երկու պարիսպքն Կոստանդինուպօլսի շիջեցան՝ շինեալքն 'ի Կոստանդինէ և 'ի Թէոդոսէ ։ Եւ Ռիկոն քաղաք 'ի վայր շիջեցաւ, և զոտան օր շարժեցաւ երկիր որպէս աներեւ։ Եւ յայսմ ժամանակի երեւեցաւ սուրբն Յակոբ անուանեալն Կուրդնկար (2) ։

Յայսմ ժամանակի առաքեաց Թագաւորն Արաբկաց քրիստոնէից Հերեթն առ

Ճեպեւ կոչի ։ Իսկ Տրոյլան Թուի Թէ՝ ասիցէ Տերրա ։

(1) Միւս Թարգմանութիւնն Սպարթա ։

(2) Այն է Յակոբ Ասորի Ծանծալոս կոչեցեալ 'ի Յունաց և Պուրտուռնօ յԱսորւոց, և 'ի սուրբս համարեալ առ Ասորիս ։

Յուստինոս մեղադրանք, թէ ընդէ՞ր աւերեցիք զքրիստոնէութիւնս ժողովոյն Քաղկեդոնի և արարէք զԵրրորդութիւնն չորրորդութիւն։ Եւ Յուստինոս առաքեաց արս իմաստունս պատասխանել նմա. և յորժամ գնացին՝ տեսաւ զնոսա Թագաւորն և ասէ. «Եւ դուք յաշակերտացն անիծեալ ժողովոյն էք։» Եւ նոքա ասեն. «Ընդէ՞ր հրամայէ ձեր Թագաւորութիւնդ՝ զայդպիսի իրս, նզովել զվեց հարիւր և զերեսուն և վեց սուրբքն. զի թէ վայրապարք և աշխարհականք էին, պատկառել արժան էր, թող թէ եկեղեցւոյ առաջնորդք և սուրբ մարդիկ։» Եւ ասէ Թագաւորն. «Ես բարբարոս մարդ եմ և չգիտեմ (խօսել) ՚ի գրոց, բայց ասեմ ձեզ բան մի. թէ լինի յոլովութիւն կերակրոց և անկանի ՚ի ներքս մուկըն մի, պղծի՞ թէ ոչ.» և ասեն՝ «պղծի։» Եւ ասէ ցնոսա. «Եւ զիա՞րդ ոչ ապականէին վեց հարիւր երեսուն և վեց եպիսկոպոսունք տումարովն Լեւոնի, որ ՚ի Հրէութիւն դարձոյց զՔրիստոնէութիւնս։» Եւ յետ բազում բանից ասեն արքն. «Հրամայեսցէ ձեր քաջութիւնդ՝ և առնեմք պատարագ որ հաղորդէք, ցոյց սիրոյ և խաղաղութեան ձեր և Թագաւորին մերոյ։» Եւ ասէ ցնոսա Հերեթն. «Մ՛եք ՚ի ձէնջ ոչ հաղորդիմք և ոչ զձեզ հաղորդեմք։» Եւ հրամայեաց հաց պատրաստել և ռոճիկ՝ միս ըղտու. և ՚ի բերելն առաջի՝ ասէ. «Կերայք.» և նոքա ասեն. «Մեք զայդ ոչ ուտեմք, զի պիղծ է։» Եւ թագաւորն ասէ. «Եւ զի՞նչ ոչ պղծիմք մեք ՚ի մարդոյ մնէ, զի այդ է պատարագն ձեր։» Եւ ապա արձակեաց զնոսա ամօթով։

Յայնժամ մեռաւ Թէոդորա թագուհին ուղղափառ խոստովանութեամբ, և թագաւորեցին զնա Ընթիմոս և Թէոդորոս պատրիարքունք։

Եւ յայտնեցան հերձուածք ՚ի ժամանակս Յուստինեայ՝ այսոքիկ։—Առաջինն՝ հասեալքն ՚ի Մանիքեցւոյն, որք եկին ՚ի Պարսից՝ կերպիւ աբեղայից, որք արեամբ սպիտակ հաւոյ և սպանեալ տղայոյ հաղորդին, և ՚ի տարւոջն մի անգամ առնեն ոճրագործութիւն զՄանիքեցւոյն։—Եւ երկրորդն՝ Ստեփաննոս Ուռհայոյ, որ ասէր՝ ըստ չափոյ մեղացն զտանջանքն մեղուցելոյն, և յետ այնորիկ հաւասարին արդարոց։—Եւ երրորդն՝ Յովհաննէս յԱփեմիոյ (յԱպամիոյ), որ նիւթ ասէր զԱստուած իբրեւ զմի ՚ի տարերացս։—Եւ չորրորդ՝ Յուլիանէ ալիկառնացին, որ ասէր՝ թէ Քրիստոս զանապական մարմինն Ադամայ որ յառաջ քան զմեղսն՝ էառ, և ոչ զապականացուն որ յուղղափառ խոստովանութիւնն ունի։ Զի Ադամ կրկին է. զառաջինն չունէր խառնուած, և զկնի մեղացն խառնեցաւ ապականութիւն ։ Զսա յանդիմանեաց սուրբն Եւսեբիոս ՚ի յաստուածային գրոց, և նա ոչ զղջացաւ, և մնաց խմորն (1)։ — Հինգերորդ՝ Յովհաննէս որբիթացին որ երեք բնութիւն ասէր զաստուածութիւնն. սա աշակերտ էր Սամուէլի ռասայեցւոյն ։ Զսա կոչեաց Յուստիանէ Թագաւոր, և լուեալ զհերձուածն՝ հալածեաց զնա. և գնացեալ արար գրեանս, վկայութիւն որսալով յԱստուածաշունչ գրոց իւրում աղանդին ։ — Վեցերորդ՝ Փաւլինէ անտիոքացին, նոյնպէս երեք բնութիւն և էութիւն և անձնաւորութիւն ասէր, և արար գրեանս ՚ի Կոստանդինուպօլիս ։ — Եօթներորդ՝ Թէոդորոս կապադովկացին, զնոյն աղանդն հաստատէր թէ՝ Քրիստոսի աստուածութիւնն չէ Հօր աստուածութիւն ։ — Ութերորդ՝ Աթանասիոս որդի դստերն Թէոդորիոյ Թագուհւոյ, որ աշակերտեցաւ Ամնի ուռհայեցւոյ և յետոյ Սարգսի երիցու, որ եղեւ պատրիարք Անտիոքայ ։ Սա զՅովհաննիսի աղանդն քարոզէր՝ երեք բնութիւն ասելով Երրորդութեանն.

---

(1) Զաղանդաւորացս այսոցիկ Յուլիանիտաց խօսի և Յովհաննէս Ասիացի ՚ի գիրս իւր Հտ. Բ. ԳԼ. ԺԱ. յորոց ոմանք, ասէ, եկին և ՚ի Հայս յաւուրս Մովսէս կաթողիկոսի ՚ի տարածել զաղանդն իւրեանց, զորս ետ արտաքսել. Նոյնպէս և յետ ժամանակի ՚ի կաթողիկոսութեան Յովհաննու Իմաստասիրի ժողովով դատապարտեցաւ սոյն աղանդչարափառ ։

և Թագաւորն աղաչեաց զԹէոդորոս պատրիարքն առնել զնա երէց, և ոչ հաւանեցաւ. և զկնի մահուանն Թէոդորոսի կամեցաւ առնել զԱթանաս պատրիարք Աղեքսանդրի, և գրեաց Թագաւորն յԱղեքսանդրիա և ոչ առին յանձն: Եւ Կոնոն Տարսոնի եպիսկոպոսն և Ուգէն Սելեւկիոյ, աճեցուցին զաղանդն Աթանասի, և վասն այսր աղանդոյ և այլ ամենայն հերձուածոյ արար ընդդէմ ճառս Թէոդորոս պատրիարքն Աղեքսանդրի: — Իններորդ՝ Անթիկոս (Անթիմոս) կոստանդինուպօլսեցի, ասաց թէ՝ "Որ ոչ խոստովանի երեք անձանցն յատուկ բնութիւնս, նա հրեայ է և հակառակ ուղղափառութեան:"

Յայսմ ժամանակի եկն Հերեթ Թագաւորն Տաճկաց առ Յուստինոս (Յուստինիանոս) և ունէր գիր հաւատոյ զարեւելեան եպիսկոպոսաց Հայոց Մեծաց, և զՅակոբեայ Կուրդնկարին և զԱղեքսանդրու պատրիարքին, և ասաց. "Որ ոչ ձեռագրէ 'ի գիրս յայս, նա հերձուածող է և չարափառ." և ոչ ձեռագրեցին բազումք. և բարկացաւ Հերեթն 'ի վերայ Յուստինոսի և ասաց. "Անզգամ և ափշեալ, ո՞չ իմանաս եթէ այս ամենայն ցասումն երկնաւոր 'ի վերայ երկրի վասն չար ժողովոյն է. վասն է՞ր ոչ բառնաս զնիւթ բարկութեանն Աստուծոյ:" Եւ պատասխանի եւ (Յուստինիանոս) եւ ասէ. «Աղաչեմ զքեզ մի՛ զայրանար, չկարեմ զայդ առնել եւ ունել զթագաւորութիւնս. այլ վասն քո երեսաց չտամ վստահութիւն եւ հպարտութիւն Քաղկեդոնացւոցն 'ի վերայ ուղղափառաց, եւ դադարէ հալածումն ուղիղ խոստովանողացն՝ վասն քո, զի զքեզ պատճառ գտնեմ եւ չմեղադրէ որք ինձ վասն ուղղափառացն, եւ աճեն եւ բազմանան, եւ Աստուած հոգասցէ 'ի ձեռն կարող ժամանակաց եւ թագաւորաց:» Եւ ապա Հերեթն թագաւոր առ ինքն կոչեաց եպիսկոպոսս ուղղափառս եւ զՅակոբ, եւ ձեռնադրել ետ 'ի Կոստանդնուպօլիս պատրիարք ուղղափառացն, նոյնպէս եւ յԱնտիոք եւ յԱղէքսանդրիա, եւ ետ 'ի վերայ սպառնալիս՝ զի մի՛ որ նեղեսցէ զնոսա:» Եւ գնաց Հերեթն 'ի թագաւորութիւն իւր: Բայց զի ասէին ուղղափառքն ընդ Քաղկեդոնիսքն, թէ դուք զՆեստորին, զԹէոդորէտոսին եւ զԹէոդորին հաստատեցիք զաղանդն, վասն այնր պատճառի ժողովեաց թագաւորն բազմութիւն եպիսկոպոսաց պատասխանի առնել ուղղափառացն. եւ պատրիարքունք էին՝ Դոմնոս Անտիոքայ, Ապողինար Աղէքսանդրի, Եւտիքէս Կոստանդինուպօլսի: Եւ Բաքիլոս (Վիգիլիոս) Հռոմայ կայր 'ի Կոստանդինուպօլիս, վասն զի աւեր էր Հռոմ: Եւ ոչ գայր նա 'ի ժողովն, ամպարտաւանեալ թէ՝ ես չեմ գոցա ընկեր . և յորժամ կամեցան նզովել զՆեստոր և զԹէոդոր (Թէոդորետոս) և զԹէոդոր Մամուեստացին և զՏարսոնացին, ոչ ետ թոյլ Վիգիլոս նզովել զնոսա, ասելով թէ՝ «Ոչ է արժան զկնի հարիւր երեսուն ամի հանգստեան Արբոյն նզովել զնոսա։» Եւ զի ոչ նզովեցին զնոսա, ոչ ոք ընկալաւ զժողովն զայն (1)։

Ի Թուին Հոռոմոց ՈԿԷ (667) յայտնեցաւ աղանդն Յուլիանեայ առ աչօք ասողին ըդտնօրինականն Քրիստոսի, յԵփեսոս, յաշակերտացն Յուլիանեայ։ Եւ եկն առ նոսա եպիսկոպոսն Պրոկոպոս և յանդիմանեցաւ 'ի բազմաց՝ և ոչ զղջացաւ, և 'ի ծերութեան նորա աղաչէին զնա աշակերտքն նորա զի արասցէ եպիսկոպոս իւր փոխանորդ, և ոչ առ յանձն ասելով՝ թէ «Ես մի եմ և չէ պատեհ. երեք արքեպիսկոպոս պիտի՝ որ ձեռնադրեն եպիսկոպոս»։ Եւ 'ի մեռանիլն նորա կալան աշակերտքն զմի ոմն՝ որում անուն էր Սւտրուպիոս (Եւտրոպիոս), և եդին զձեռն (Պրոկոպիոսի) 'ի վերայ գլխոյն, և արարին զնա եպիսկոպոս, և նա արար տասն եպիսկոպոս, և առաքեաց ընդ ամենայն երկիր սերմանել զաղանդն։ Եւ մի ոք 'ի նոցանէ, Սարգիս անուն, գնաց յերկիրն Քամիրացւոց (1) և խաբեաց զբազումս, և արար նոցա եպիսկոպոս Սոլխէս անուն, և յետ երից ամաց մեռաւ ։ Եւ այլք յայլ տեղիս գնացին և զբարբառէին զսուրբն Սեւերիանոս՝ թէ զՔրիստոսի մարմինն ապականեալ և որդնեալ ասէր ՚ի գերեզմանն. բայց Սեւերիանոս զայս ասէր, թէ ապականացու և մահկանացու մարմին զգեցաւ, և ոչ թէ ՚ի գերեզմանին ապականեցաւ, և նզովէր զայնպիսիսն որ ասեն՝ ապականեալ ։ Իսկ Յուլիանիտքն ասեն թէ՝ ՚ի յորովայնի Կուսին անմահ և անապական մարմին էառ և անչարչարելի. և այն որ չարչարեցաւ և մեռաւ, կերպարանօք և առաչօք էր և ոչ ճշմարտութեամբ ։ Եւ ոմն ՚ի նոցանէ գնաց յԱղեքսանդրիա, և խառնեցան ՚ի նա այլ աղանդք, Գայանիտացիք և Լագինտացիք, և ձեռնադրեցին իւրեանց պատրիարք, և նա արար բազում եպիսկոպոս և առաքեաց յամեն Լիբիա. և սոքա յետոյ կանգնեցան միմեանց հակառակ ։ Եւ երկու-

---

(1) Երկրորդ ժողովն Կոստանդնուպօլսի եղեւ առ Յուստինիանոսիւ, յամի 553, 'ի ներկայութեան Եւտիքիոսի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսի, Ապողինարոյ՝ Աղէքսանդրիոյ, և Դոմնոսայ՝ Անտիոքայ։ Անդ 'ի մայրաքաղաքն գտանէր և Վիգիլիոս հայրապետ Հռոմայ, այլ առ ամպարտաւանութեան՝ ոչ հաղորդեցաւ ժողովոյն, անսաստելով հրաւիրանաց Յուստինիանոսի։ Ի սմին ժողովի նզովեցաւ մերժին գիրք Թէոդորոսի Մոպսուեստացւոյ, Թէոդորետոսի Կիւրացւոյ և Իբասայ Եդեսացւոյ, որ կոչին Երեք գլուխք։ Նշանակեա և նոյն ինքն Թէոդորոս նզովի 'ի նմին ժողովի, թէպէտեւ կանխաւ իսկ վախճանեալ էր նա. քանզի վճիռ հան ժողովին, եթէ արժան է նզովս դնել 'ի վերայ ուրուք հերետիկոսի զկնի վախճանի Յարբին։

---

(1) Քամիրացիք են Համիրք կոչեցեալ ազգն, որոց երկիրն է յարեւելից հարաւոյ [illegible]—Արաբիոյ։ Այս ազգ, որպէս յիշատակէ Միքայէլ Ասորի և պատմագիրք Յունաց, էին քրիստոնեայք, և գլխաւոր քաղաք նոցա էր Կասսան և Հիրա զոր բնագիրք մեր Հերեթա կոչեն։ Յառաջնում քառորդի վեցերորդ դարու Եթովպացիք տիրեցին Քամիրացւոց. իսկ Հրէայք որ բնակէին անդ, յարուցեալ 'ի վերայ նոցա կոտորեցին և կացուցին թագաւոր զմի ոմն 'ի Հրէից անտի. որոյ զօրացեալ սպան զքրիստոնեայս արաբացիս, և յարձակեալ 'ի վերայ Նիգրան քաղաքի, առ զայն, և զքահանայս և զմիանձունս որ ապաստանեալ կային յեկեղեցւոջ, խողխողեաց և զեկեղեցին այրեաց. որպէս յիշատակեցաւ վերագոյն յէր. 231։ Մի էր 'ի թագաւորաց քրիստոնէից Հարէա (Հերեթ) հինգերորդ 'ի կարգի համանուն իշխանաց, և նստէր 'ի Կասսան, զոր Ասորիք կոչեն թագաւոր Արաբաց, իսկ Յոյնք Արեթաս զնա անուանեն։ Զսա Յուստինիանոս կայսր դիմակաց արար Մունդիրայ Գ. թագաւորին Հիրայ, և կոչեաց զնա գլուխ ամենայն Արաբաց Ասորւոց՝ Պատրիկ անուամբ, յամի 539։ Այն սա եկն 'ի Կոստանդնուպօլիս յաւուրս Յուստինիանոսի, յամի 562, առաջի առնել կայսեր ինչ ինչ խնդիրս քաղաքականս. իսկ թէ արդարեւ բանք եղե՞ն զկրօնից և զդաւանութենէ, ոչ ինչ յիշատա-

---

կեն յոյն մատենագիրք ։ Ըստ պատմութեան Միքայէլի՝ Քամիրացիք հակառակք էին չորրորդ ժողովոյն ։ Առ նոսա գնաց Սարգիս ոմն աղանդաւոր և ուսոյց նոցա զաղանդ իւր. թերևս նա իսկ Սարգիսն նեստորական որ ուսուցիչ եղեւ Մահմետի ըստ աւանդութեան ։ Եւ թուի ամենայն հաւանութեամբ, եթէ ՚ի տարածել մահմետականութեան յԱրաբիա, թողին և Քամիրացիք զքրիստոնէութիւն և դարձան ՚ի նոյն դէն ։ Յամի յորում կամքս (1871), ապստամբեալ սոցա ընդդէմ Օսմանեան տէրութեան, յարձակեալ կան յԱսիա, այլ զօրութիւն Բ. Դրան ընդ փոյթ նուաճեսցէ զնոսա ։

'ի նոցանէ 'ի բանտի կային 'ի Մծբին, և խնդրեաց զնոսա Թագաւորն Պարսից և արձակեցան, և ոմն 'ի նոցանէ գնաց զհիւսիսիւ և խաբեաց զբազումս, և եկն յԱրզուն և 'ի Հայս, և ոչ ընկալան Հայք· այլ առաքեցին յերկուց կողմանցն թուղթ առ պատրիարքն Թէոդորոս ուղղափառացն, և նա կատարեալ էր զկեանս: Եւ ապա գրեցին թուղթ մի Քաղկեդոնիաքն և թուղթ մի ուղղափառքն, և միմեանց չէին վկայ գրեալքն և հալածեցին զնոսա: Եւ 'ի Կապադովկիա յոլովք խաբեցան և ասեն, թէ առ ժամանակ մի զատեղի կոչաւ 'ի մասն ինչ Հայոց, մինչև 'ի կատարելոյն սրբեցաւ չարութիւնն:

Եւ յայնմ ժամանակի կամեցաւ Յուստիանոս նորոգել զեկեղեցին որ յանուն Առաքելոյն և զտապանատուն Թագաւորացն, և 'ի բրելն գտան երեք տապան արճճած, և գիր 'ի վերայ տապանացն. Անդրէաս, Ղուկաս, Տիմոթէոս, և յոյժ ուրախութիւն եղեւ քաղաքին ընդ գիւտ սրբոց առաքելոցն Քրիստոսի: Եւ յայս ժամանակս Սեւաստոսան որ 'ի Կեսարիա Պաղեստինոյ, առաքեաց աջ մի 'ի Կոստանդինուպօլիս, ասացեալ թէ Յովհաննու Մկրտչի է, և եղեւ կարծիք թէ իցէ՞ նորա, թէ ոչ. սակայն պատուեցաւ ոսկեղէն յարկօք:

Եւ Յուստիանոս շինեաց երկոտասան

վանք և ժամատուն և շէն եկեղեցի. և ոչ դադարեաց սա յիւր ժամանակին ՚ի շինելոյ եկեղեցիս և հիւրանոցս և աղքատանոցս:

Ի ՊՀԱ (871) Թուին Նարուոյ, սկիզբն է Թուականիս Հայոց:

Յետ քառասուն ամի հալածմանն և սերմանելոյ աղանդին Պաւղիկեանի, քաղաքն Ամիթ կրեաց սով սաստիկ զութ ամ. և յետ յագենալոյն հացիւ, (պատահեցաւ ՚ի մարդիկ) ցաւ մի դիւական մոլեգնութիւն և կատաղութիւն և թափումն ՚ի խելաց, մինչ ոչ ճանաչել նոցա զինչս և զտունս իւրեանց. այլ բառ պատահման մտանէին ՚ի տունս, և հրապարակս և յեկեղեցիս գործէին շնութիւն. և ելեալ ՚ի քաղաքէն ընդ վայր հաչէին որպէս շունք, և կանչէին որպէս անբան անասունք և իբրեւ զաքաղաղս, և մերկանային և փախչէին առանց պատճառի, ասելով. "Գան Պարսիկք, գան, փախիք:" Եւ շրջակայ գաւառն և Ուռհա գային և պահէին զնոսա, և խնդրէին Աստուծոյ ողորմութիւն. և յետ տարւոյն զգաստացան և զգեցան սեաւս, և զաստ զաստ գնային յԵրուսաղէմ և յայլ ուխտս: Եւ յետ այսորիկ եղեւ մահտարաժամ, և մեռան երեսուն և վեց հազար մարդ ՚ի սակաւ ժամս:

Իսկ Թագաւորն Յուստինիանոս յամեն ժա-

ժամանակս իւր ընդունէր զժողովն Քաղկեդոնի, բայց զթուղթն Հիբասայ ուռհայեցւոյ ոչ ընդունէր, և ոչ հաւատայր որք ասէին թէ՝ “Քաղկեդոնի ժողովն ընկալաւ զթուղթն նորա:” Իսկ յորժամ ասաց Բաքիլոս (Վիգիլիոս) պապն Հռոմայ թէ՝ “Ժողովն Քաղկեդոնի ընկալաւ զթուղթն Հիբի (Իբասայ),” կանգնեցաւ (թագաւորն) և երեք անգամ ասաց. “Ժողովն Քաղկեդոնի նզովեալ է:” Բայց խաբեցաւ նա ՚ի յաղանդն Յուլիանեայ յեպիսկոպոսէն Եփեմիոյ. և գրեաց առ Անաստաս (1) պատրիարքն Անտիոքու զաղանդն, և հրամայեաց ժողով առնել և ձեռագրել զնա: Եւ ժողովեցան հարիւր յիսուն և հինգ եպիսկոպոս յԱնտոք, և ոչ ընկալան. և գրեցին առ թագաւորն վկայութեամբ գրոց՝ չար հերձուած զասելն առ աչօք զչարչարանսն Տեառն: Եւ տարան ըզթուղթն առ թագաւորն. ոմանք ասեն զղջացաւ տեսանելով զթուղթն, և յերկոցունց աղանդոյն դարձոյց զերեսս, ՚ի Քաղկեդոնէ և ՚ի Յուլիանեայ, և ուղղափառ կատարեցաւ մահուամբ, թագաւորեալ ամս երեսուն և ութ և ամիս հինգ: Եւ ՚ի մեռանելն Յուստիանեայ, մի ոմն ՚ի սքանչելի արանց տեսաւ տեսիլ և պատմեաց, թէ “Տեսանէի դաշտ մի ընդարձակ, և ՚ի մէջ դաշտին հնոց մի բորբոքեալ հրով, և գոչացի և ասեմ. «Ո՞ւմ է այս գուռն տանջանարանքս.» և ասէ ինձ ոք. «Սա Յուստինեայ էր պատրաստած, բայց իւր եկեղեցասիրութիւնն և աղքատասիրութիւնն չեթող զինքն հերձուածով մեռանել, այլ դարձաւ յուղղութի̄ և ՚ի տեղիս ուղղափառացն գնաց։»

---

(1) Միւս թարգմանութիւն Անթոս:

Իսկ յետ նորա Թագաւորեաց քեռորդին նորա իւրով անուամբն Յուստինոս (1) և Թագաւորեաց ընդ նմա և կին իւր. և էր անհաւկու և ոչ եղեւ ժխոր ուրեք, այլ և խոյս ետուն ամենայն չարագործք. և էր Թրակացի և այր քաջ, բայց յաւէլին ոտքն նորա։ Յառաջին ամին սորա երեւեցաւ յօդս հուր բորբոքեալ, և յոլովք ասէին թէ նշան արեան է (2). և Թագաւորն առաքեաց և եբեր ՚ի Զամբրիէ և ՚ի Մանգանէ արուեստաւորս, որք կանգնէին փայտ՝ և զանձինս վառէին հրով. և ելանէին ՚ի փայտն եւ իջանէին օծեալ զանձինս տայլով և ոչ այրէին։ Իսկ դարձեալ երեւեցաւ յարեւելս

---

(1) Այս է Յուստինոս Բ. որ Թագաւորեաց յամի 565։ Արեւելեան պատմագիրք Հայք և Ասորիք միով անուամբ կոչեն զերկոսին եւս Յուստինիանոս, որով և շփոթութիւն արկանեն ՚ի պատմութեանն։

(2) Ի սմին ամի, այն է 566—567 ամի Քրիստոսի. ասէ Սամուէլ անեցի (՚ի Քրոնիկոնին.) «Աջ աստուածային երեւեցաւ ՚ի սուրբ մատրանն, այլ և նշան ահեղ հրաշափայլ և արիւնատեսակ յերկինս։»

և 'ի հիւսիս այնպիսի հուր՝ որ բազումք 'ի տեսլենէն մեռան, և բերէր օդն եղէգն այրեցած և թուղթ այրեցած, և բազումք ժողովեցին 'ի զամբիղս. և զարհուրեցաւ Թագաւորն, և գնաց յեկեղեցին յաղաչանս, նոյնպէս և քաղաքն ամենայն: Եւ 'ի յինն ժամ աւուրն եկն ամպ մի հրախառն, և կայր 'ի նման խաչ մի նկարեալ, և տեսեալ զայն բազմութիւնն աղաղակեցին. "Տէր, ողորմեա. Տէր, ողորմեա ըստ մեծի ողորմութեան քում:" Եւ պատրիարքն ասաց ցԹագաւորն. "Տեսանես զինչ եղեւ յաւուրս քո. որպէս յաւուրս մեծին Կոստանդիանոսի՝ նշան խաչի փայլատակեալ երեւեցաւ. արդ առաքեա և տուր բերել յԱփեմիայէ (Ապամիա) Ասորւոց զխաչափայտն Քրիստոսի որ կայ առ եպիսկոպոսի մի:" Եւ առաքեաց Թագաւորն և բռնութեամբ առին զխաչն և բերին յԱնտաք, և խիզարեալ ընդ մէջն, զկէսն թողին յԱնտաք և զկէսն տարան 'ի Կոստանդինուպօլիս. և ելին քաղաքացիքն և Թագաւորն և պատուով տարան 'ի քաղաքն և եդին յաւագ եկեղեցին:

Եւ յերկրորդ ամին Յուստինանեայ առաքեաց զպատրիկն Յովհաննէս պատարագօք 'ի Պարս սիրոյ աղագաւ առ Խոսրով Թագաւորն Պարսից, գնաց և դարձաւ պատուով: Եւ յայնմ ժամանակի ոչ գոյր Թա-

դաւոր Հայոց, քանզի մտեալ էին ընդ Պարսից իշխանութեամբ. և Խոսրով Թագաւորն Պարսից սկսաւ նեղել զՀայս՝ երկրպագել կրակի. և ապստամբեցին Հայք և խնդրեցին օգնութիւն ՚ի Յուստինիանոսէ զօրք, և յաղթեցին Պարսից և հալածեցին յաշխարհէն: Եւ առաքեաց Խոսրով առ Յուստինոս՝ մի օգնել Հայոց, և տալ հրաման դառնալոյ ՚ի Պարսիկս և կամ տալ զհարկն: Եւ Յուստինիանոս արար ընդդէմ պատասխանի և ասէ. "Տուր յիս զՄծբին որ քրիստոնէից լեալ է, և վասն սիրոյ դարձուցին առ ձեզ:" Եւ զայս լուեալ լռեաց Խոսրով(1): Եւ պատրիկն Յովհաննէս հրաման առեալ ՚ի Թագաւորէն խօսել վասն միաբանութեան հաւատոյ ընդ Հայս և ընդ Նարիս. և եկն յՌաղա պատրիկն և ասաց ընդ Յակոբ Կուրդնկարն: Եւ եղեւ ժողով ՚ի Կալանիկէ, որ է Ռաղա(2) և ոչ միաբանեցան, նոյնպէս և Հայք քամահեցին զբանիւք նոցա:

Եւ ՚ի չորրորդ ամին Յուստիանեայ եղեւ խանգարումն Օտանկի, և Թիւր Օտանիկ ա-

---

(1) Զպատերազմունս Յունաց և Հայոց ընդ Պարսս՝ տես ՚ի Պատմ. Հայոց. Հտ. Բ. յեր. 283—288:

(2) Կալանիկոն որ և Ռաղա կամ Ռակա կոչի. զորմէ բազմիցս լինի յիշատակութիւն ՚ի պատմութեանս, էր քաղաք ՚ի Միջագետս Ասորւոց ՚ի վերայ Եփրատ գետոյ, յարեւելից կուսէ, և անկանի ՚ի հարաւակողմն Խառանու: Սեբէոս Կաղնիկոս անուանէ զայս քաղաք. յեր. 51:

բորին Յոյնք ։ Յաւուրս յայսոսիկ Յովհաննէս եպիսկոպոս Սարմիացի (1) այր ապականիչ և աներկիւղ յԱստուծոյ, եդ 'ի կամս թագաւորին առնել խռովութիւն եկեղեցւոյ ուղղափառացն, առնուլ 'ի նոցանէ զաթոռ և զեկեղեցի և զհամարձակութիւն, և մտանել կապանաց և բանդից և մահուան, որ եղեւ իսկ զկնի քառասուն ամի հալածանացըն. և շրջէին եպիսկոպոսք զօրականօք, և զհաւանեալսն վերստին մկրտէին և եկեղեցական ձեռնադրէին, և զոչ հաւանեալսն պէսպէս չարչարանօք տանջանէին և յաքսորս և 'ի բանտս տային ։ Եւ լցաւ երկիր մեծ բարկութեամբ և խռովութեամբ, զոր ոչ կարեմք 'ի գրի առնել զաղէտս անցիցն այնոցիկ զոր կրեաց սուրբ եկեղեցի ։ Եւ յետ հազարաց և բիւրուց սպանելոց 'ի յանաստուած Յովհաննիսէն որ էր պատրիարք Կոստանդինուպօլսի, տաղտկացաւ թագաւորն ընդ անհնարին աղէտսն, և ասաց ընդ նա. "Տուր ձեռնագրով զդաւանութիւն քո յիս." և գրեաց Յովհաննէս և ետ ցթագաւորն ։ Եւ ընթերցեալ թագաւորն՝ ճանաչեաց թէ Նեստորի աղանդոյն է, և բարկացաւ 'ի վերայ նորա և ընկէց զնա յաթոռոյն և եդ ըզնա յաքսորս, և ասաց ընդ Անաստաս զօրապետն իւր. "Դարձո վաղվաղակի զուղղափառսն որ կենդանի իցեն, և այլ մի տացես երեւել առաջի իմ քաղկեդոնականացդ։» Բայց զոր ինչ նախ քան զայս եղեւ, ոչ է արժան անտես առնել։

---

(1) Միւս Թարգմանութիւնն՝ Սարմատացի ։

Մեծ այրն Աստուծոյ Յովհաննէս հռչակաւորն, որ զգիրս հարանցն գրեաց, և յոլով գիրս գրեաց և եթող 'ի զարդ եկեղեցւոյ, աքսորած և 'ի բանտի կայր 'ի Կոստանդնուպօլիս, և պատկառելով յառաքինութենէ նորա՝ առաքէին առ նա Թագաւորն և Յովհաննէս պատրիարքն ելանել 'ի բանտէն, և ոչ ելանէր. և աղաչէին բազում աղաչանօք լինել միջնորդ խաղաղութեան եկեղեցւոյ և ընդունել զժողովն չորրորդ. և նա սաստիկ նզովէր զժողովն և զպատրիարքն և զԹագաւորն։ Նա բարկացան և արգելին 'ի նմանէ զերթեւեկսն, և արկին 'ի տուն գէջ. և անկաւ սուրբն յատամնացաւութիւն և 'ի գլխացաւութիւն, և եռային 'ի նա ոջիլք և բորբոսք և վէրք 'ի մարմինն, և ուտէին ձանձք և մոծակք զայգ և զցերեկ, և նա ոչ կարէր ծածկել զվէրքն և կայր որպէս զմեռեալ 'ի բազում ժամս։ Նա յետ յոլով ժամանակի եկն առ նա երիտասարդ մի գեղեցիկ պատմուճանաւ զարդարեալ, և թուեաց նմա 'ի զօրականաց Թագաւորին՝ ուղղափառ գոլով. և երթեալ համբուրեաց զնա և զայեաց, և սկսաւ 'ի հանգչիլ և փարատիլ 'ի ցաւոցն, և ել ընդ փուռնն։ Իբրև դարձեալ եկն և եբեր նմա գինի և սէր, և օրհնեաց զնա և ասէ. «Օրհնեալ ես դու, որդեակ, որ հանգուցեր զիս։» Իբրև այսպէս ութ օր ծառայէր զնա և ողջագուրէր և քաջալերէր ասելով. «Հայր համբերեա, և երանելիք են որ այսպիսի պատահումն լինին վասն ուղղափառութեան.» և բերէր մխիթարութիւնս 'ի գրոց վասն հաւատոյ և վասն առաջնոյն համբերութեան։ Իբրև Յովհաննէս զուարճանայր ընդ խնդութիւն նորա և ասէ. «Որդեակ ուստի՞ է քեզ այդ ամենայն գիտութիւն 'ի տղայութեանդ՝ զոր ես ծերութեամբս իմով ոչ գիտեմ». և ասէ զնա. «Հայր, ամենայն ինչ հնարաւոր է Հոգւոյն Սրբոյ. այլ դու աղօթս լեր զի ելանես աստի և զբազումս լուսաւորես։» Իբրև յետ այսորիկ եկն առ նա արհի եպիսկոպոսն պատրիարքին և ասաց. «Սուրբ Հայր, լաւ է և հնազանդեսցես թագաւորին, և լինի միաւորութիւն անդամոցն Քրիստոսի։» Իբրև սուրբն պատասխանի ետ և ասէ. «Քրիստոս Աստուած նզովէ զձեզ. զի՞րդ չամաչէք, որ թէ ճշմարիտք էիք՝ յետ այսքան վշտացս զոր անցուցէք ընդ եկեղեցի Աստուծոյ, չէր պարտ հաշտել ընդ ձեզ, թող թէ հերետիկոսք և ատելիք Աստուծոյ։» Իբրև գնաց 'ի նմանէ եպիսկոպոսն. և եկին և հանին զնա 'ի բանտէն հրամանաւ թագաւորին և տարան 'ի կղզի մի բարբարոսաց կուապաշտից, և անդ արգելին զնա, որ և 'ի վարդապետութենէ նորա և 'ի նշանագործութենէ դարձան առ Քրիստոս անձինք քանեւութ հարիւր բիւր (՛) 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Այս համբաւ հալածանաց ուղղափառաց եհաս յերկիրն Պարսից, և ժողովեցան մոգքն և գնացին առ թագաւորն իւրեանց Խոսրով, և ասեն. « Ընդէ՞ր ոչ առնես դու՝ որպէս առնեն Հոռոմայեցիքն, որք ոչ դաւանան 'ի կրօնս իւրեանց՝ չարաչար սպանանեն, և ընդ քո թագաւորութիւնդ խաղաղացեալ կան՝ որք ոչ պաշտեն զհուր իբրեւ զքեզ: » Եւ լուեալ թագաւորին Պարսից՝ և արար հալածումն մեծ ընդ ամենայն աշխարհ իշխանութեան իւրոյ. և ըմբռնեալ երեք եպիսկոպոս և եհան զմորթս նոցա, և զայլսն ազգի ազգի տանջանօք սպան և բազում վանորայս քակեաց, և թիւ ոչ գոյր սպանելոցն. և առաքեաց 'ի Հայս շինել անդ տուն կրակի, և նոքա զայրացեալք սպանին զնոսա անողորմ՝ խրախուսեալք յԱստուած: Եւ Կաթողիկոսն մեծ՝ որ նստէր 'ի Դուին, գնաց 'ի Կոստանդինուպօլիս ածել զօրք ընդդիմանալ Պարսից: Եւ գնացեալ 'ի Կոստանդինուպօլիս, եկին ընդառաջ նմա Պատրիարքն և ամենայն քաղաքն ընդունել ըզնա. և զայս պատիւ լուան 'ի Հայք զի Քաղկեդոնիկքն այնպէս փարէին զնովաւ, և պատրիարքն առ իւր ունէր զնա հանապազ, երկեան թէ գուցէ խաբիցի. և առաքեցին առ նա մի հաւանել կալ ընդ նոսա վասն կարեաց իւրեանց, զի յոյն մեր Քրիստոս է, և զուղիղ հաւատս ոչ տամք վասն երկեղի մեռանելոյ: Եւ մինչ գնացին և տարան զթուղթն, և նա վաղագոյն իմացեալ էր ըզհերձուածոյ նոցա չարութիւն, և մեկնեալ 'ի նոցանէ՝ կայր առանձին, որ և յաւելով նորա 'ի Կոստանդնուպօլիս, նենգեաց ուղղափառ խոստովանութեամբ, և մեծ պատուով ամփոփեցաւ յուղղափառացն, որոյ եղեւ մեծ ամրութիւն և հաստատութիւն հաւատոյ և պարծանք ուղղափառացն, մնալ Հայոց 'ի ճշմարտութեան յերկուց կողմանց՝ 'ի Պարսից և 'ի Քաղկեդոնացւոց, Աստուծով միայն զօրացեալ և օգնական 'ի մարդկանէ ոչ ոք (1):

Իսկ Սոփիա կին Թագաւորին՝ քորադուստր (դուստր քեռ) էր Թէոդորիայ Թագուհւոյն, ուղղափառութեամբ սնեալ, որ էր առաքինի և երկիւղած, մինչ զի հոգեւոր տեսիլ տեսանէր և հաղորդէր յուղղափառ երիցուէն Անդրէասայ ։ Եւ եղեւ զի հաւանեցուցին զնա մեծարել զՔաղկեդոնականն, և հաղորդել ՚ի նոցանէ. և երեւեցաւ նմա սուրբ կոյսն Մարիամ և ասէ ցնա. “Կուսար, ընդէ՞ր թողեր զիս և գնացեր առ հերետիկոսն.” և նա ասաց. “Զի ոչ գիտեմ զաւանութիւն, ուսո ինձ ։” Եւ ասէ սուրբ Կոյսն. “Ուսանելի է քեզ ասել՝ Հայր և Որդի և Հոգին Սուրբ, և չհաղորդիլ ՚ի Քաղկեդոնացւոյն ։” Եւ զայս տեսեալ և լուեալ, ՚ի բաց եկաց ՚ի նոցանէ և այլ ոչ հաղորդեցաւ ։

---

(1) Բանք Միխայէլի անհարկին 'ի Մովսէս կաթողիկոս Եղիվարդեցի. այլ սա ոչ չոգաւ 'ի Կ. պօլիս. խնդրել ձեռն օգնականութեան ընդդէմ Պարսից, այլ Վ. արդան զօրավար փախստեայ անկաւ անդ, և յունական զօրօք դարձեալ 'ի Հայս՝ պատերազմեցաւ ընդ զօրս Խոսրովու: Իսկ Մովսէս կաթողիկոս վախճանեցաւ 'ի Հայս՝ յԱթոռ իւր յամի 593ն առ Թագաւորութեամբ Որմզդայ՝ որդւոյ Խոսրովու:

Եւ յայնժամ զՄարկիանէ՝ թագաւորն (Յուստինիանոս) արար կեսար, զմօր քեռ որդին իւր, ՚ի յութ ամին իւրոյ, և առաքեաց ՚ի վերայ Մծբնայ։ Եւ գնացեալ ՚ի Տարա Մարկիանէ, առաքեաց զզօրսն յերկիրն Պարսից, և ասպատակեալ առին աւար բազում և դարձան ՚ի Տարա. և զարհուրեցան Պարսիկքն ։ Եւ մարզուանն (մարզպանն) որ կայր ՚ի Մծբին, կաշառօք և ծառայական խոնարհութեամբ յամեցոյց զՄարկիանէ ՚ի քաղաքին, մինչ բերին ՚ի քաղաքն (Մծբին) ռոճիկս և ազդեցին Թագաւորին իւրեանց, և զքրիստոնեայն հանին ՚ի քաղաքէն ։ Եւ 'ի Օսանի տօնին պատեցին զքաղաքն, և եդեալ կռիւ յամենայն կողմանց՝ առին յանուլ զնա։ Եւ յայնժամ գայ Ակակիոն հրամանաւ թագաւորին՝ փոխանակ Մարկիանէի, հանել զնա. և աղաչեալ Մարկիանէի թէ՝ «Ներեա ինձ աւուրս երկու,» և ոչ լուաւ, այլ ընկեց 'ի նմանէ զպատիւն և 'ի բաց եհան զնա ամբարտաւանութեամբ։ Եւ արտամեցան զօրքն և թողին զքաղաքն, և քաղաքացիք կարծեցին թէ՝ մեռեալ է թագաւորն. և ցրուեցան և ամրացաւ քաղաքն և զպատճառ հանելոյն Մարկիանէի ասել արժան է։

Երկիրն Տաճկաց (Արաբաց) ընդ երկու բաժին էր. կէսն ունէին թագաւոր քրիստոնեայ և էին քրիստոնեայք, և կէսն էին կռապաշտ և ընդ թագաւորութեամբ Պարսից. և քրիստոնէից թագաւոր էր յայնմ ժամանակի Մնդուր՝ զկնի հօր իւրոյ Հերեթ թագաւորին. և էին բարեկամք և օգնականք Հռոմայեցւոցն միշտ հայրենեօք։

Արդ գնաց Մնդուր յերկիրն Պարսից և գերեաց, և եկն նստաւ վրանօք յերկիրն Տաճկաց (Արաբաց), որք գիտացին թէ Պարսից թագաւորն է՝ որում հնազանդն էին, և եկին առ նա առանց զինուց. և նա կոտորեաց զնոսա, և առ զերկիրս Տաճկաց և աւերեաց և գերեաց և դարձաւ ծանր աւարաւ։ Եւ լուեալ զայս Պարսիցն, եղեն ժողով մեծ և խորհեցան գնալ յերկիրն Մնդուրայ։ Եւ խնայեալ Մնդուրն առաքեաց առ Յուստիանոս և խնդրեաց ոսկի բազում՝ առնուլ զօրս ՚ի վարձու ընդդէմ Պարսից. և տրամեցաւ Յուստիանոս վասն խնդրոյն, կարծելով թէ հարկս խնդրէ։ Եւ նոյն ժամայն գըրեաց երկուս թուղթս։ Առ Մնդուրն գըրեաց, թէ “Եկ առ Մարկիանէ և առ ոսկի և զօրք, ես պատուիրել եմ նմա։” Եւ առ Մարկիանէ գրեաց թէ՝ “Յորժամ գայ առ քեզ Մնդուրն, գաղտ առ զգլուխ նորա, և առաքեա ինձ աստ։” Եւ ՚ի խնամոցն Աստուծոյ փոխեցան թուղթքն. որ առ Մնդուր էր (գրեալ) առ Մարկիանէ տարան, և որ առ Մարկիանէ՝ առ Մնդուր։ Եւ յորժամ ընթերցաւ Մնդուրն, ասաց. “Այս որ չարի փոխարէն է՝ զոր կամեցան առնել ինձ.” և օրհնեաց զնախախնամն Աստուած, որ փրկեաց զնա ՚ի չար խորհրդոյն Յուստիանոսի։ Եւ լուեալ Յուստիանոսի կարծեաց թէ Մարկիանէ առաքեաց զիմ գրեալ թուղթն առ Մնդուրն, և արար նմա բարեկամութիւն. Եւ առաքեաց զՆկան գնել զՄարկիանէ յերկաթս։

Իսկ Պարսից զօրքն իմացան թէ ՚ի բաց եկաց Մնդուր ՚ի Հռովմայեցւոց միաբանութենէն, և Հռովմայեցիքն պաշարեալ էին զՄծբին քաղաք, թողին զգնալն առ

Անդուր և դարձան 'ի Միջագետս, և կոտորեցին զզօրսն Հռոմայեցւոց, և զայլսն փախուցին. և գնացին մինչև յԱնտաք և յԱփեմիա, և գերեցին զամենայն Միջագետըս որ ընդ Հռոմօք. և ապա գնացին 'ի վերայ Տարսոյ. և բազմութիւն զօրացն Հռոմայեցւոց որք փախստեամբ զերծան 'ի Պարսից, անկան 'ի Տարս, և երթեալ Պարսիցն նստան շուրջ զքաղաքաւն: Եւ ապա ընտրեաց Խոսրով Թագաւորն Պարսից հինգ հազար կուսանս աղջկունս 'ի գերեացըն, և պատրաստեաց զօրականս և տայր տանել զհինգ հազար կուսանսն յերկիրն Թետալացւոց 'ի Թուրքաստանն (1) պատարագըս նոցա բազում գանձիւք զի եկեսցեն օգնեսցեն նոցա երթալ 'ի վերայ Հռոմայեցւոցն և Հայոց և Անդուրաց: Եւ յուղի անկեալ տանէին զաղջկունսն, և նոքա լընուին զճանապարհն արտասուօք, զի զաւրինքն Քրիստոսի գնային կերակուր գայլոց. և գնացին իջան առ մեծ գետովն Պարսից: Եւ խորհեցան կուսանքն ընդ միմեանս խորհուրդըս, և ասացին ընդ զօրսն. «Արարէք մեզ ողորմութիւն և 'ի բաց գնացէք յաչաց մերոց, զի լուանամք 'ի գետս վասն աշխատութեան ճանապարհիս ." և հաճոյ թուեցաւ նոցա , և յարուցեալ մեկնեցան և գնացեալ հեռացան ։ Եւ նորա յարուցեալ աղօթեցին և ասացին. «Քրիստոս Աստուած, փրկութիւն քրիստոնէից և պսակ և սուրբ փեսայ կուսից, եկ առ մեզ և ընկալ զմեզ յառագաստ քո սուրբ , և գազանաց մի՛ մատներ զանձինս որ խոստովանիմք զքեզ ։ Աղաչանօք սրբոյ Կուսի անարատ մօր քո Աստուածածնին և աղօթիւք ամենայն սրբոց քոց և արեամբ ծնողաց մերոց սպանելոց յանօրինացն որ բաղքեն առ քո մարդասիրութիւնդ ։ » Եւ ելեալ ամենեցուն 'ի կամուրջն՝ լցան 'ի գետն առ համարակ և մեռան 'ի ջուրն։ Եւ խնմացեալ զօրացն եկին և մի ոչ պրծաւ 'ի նոցանէ կենդանի , և դարձան պատմեցին Թագաւորին իւրեանց . և զարմացաւ յոյժ և խափանեցաւ խորհուրդն (1) ։ Եւ զօրքն Պարսից երկու ամ պաշարեցին զքաղաքն Տարս , և ելեալ զօրքն Հոռոմոց 'ի դուրս՝ արարին առաւել քաջութիւնս . և զօրքն Պարսից խաբէութեամբ մեկնեցան 'ի քաղաքէն . և Հոռոմայեցիքն աշխատեալ էին, թողին զպարիսպն և նստան յուտել և ըմպել . և յանկարծ բաղխեցան դարձեալ Պարսիկքն և փութանակի եղեալ սանդուխս յամենայն կողմանց և առեալ ըզքաղաքն կոտորեցին ։

---

(1) Թետալիա է յերկրին Պարսից սահմանակից Խորասանայ. ոչ կարի 'ի բացեայ 'ի Կասպից ծովէն: Մովսէս Խորենացի. Ա. Ծ:

---

(1) Յայսմաւուրք, Սեպտեմբեր 7։—Միքայէլ Չամչեան, Պատմ. Հայոց, հտ. Բ. յեր. 245։

Յետ այսորիկ Թագաւորն Յուստինէ հալածեալ ընդ Յովհաննէս պատրիարքին , և 'ի նմանէ և յայլոց Քաղկեդոնացւոց չարժեալ` դարձաւ 'ի հալածումն ուղղափառաց, և մահ և ազգի ազգի տանջանարանք և նախատինք , որ և զանցոյց զկուապաշտ Թագաւորօքն, և գիր ոչ տանի և լեզուք ոչ բաւեն զառ 'ի նմանէ գործեալ չարութիւնն ընդ ուղղափառսն` գրել և հաստատել։ Վասն որոյ առաքեաց Աստուած ախտս մոլեկանս և դեւս 'ի Թագաւորն , նմանապէս և 'ի պատրիարքն. երբեմն հաչէին նման շան , և էր զի իբրեւ զկատու մալէին , և տասն մատամբ ձեռացն կեղեքէին զերեսն և զմօրուսն , և վիժէին 'ի բարձր տեղւոյ և ոչ կարէին արգելուլ պէսպէս հնարիւք . և յետ բազում խայտառականաց և ծանականաց` խեղդմամբ 'ի գլուացն բարձան երկոքին 'ի կենաց ։ Եւ նախ քան զմահն նորա , յորժամ սակաւ մի դիւրէր նըմա, հարցանէին թէ ո՞վ նստցի յաթոռ թագաւորութեանս . և նա բազում անգամ` անուանէր զխօսար մի Թրակացի Տիբերիոս անուն . և զնա եդին Թագաւոր, ազգաւ Յոյն. զի 'ի Գայիոս Յուլիանէ մինչեւ 'ի վերջինս Յուստիանոս` յիւրուն Թագաւոր Ֆռանգ էին ազգաւ , և զօրք և Թագաւորութիւնն

Հռոմայեցիք կոչէին, նախ վասն Հռոմայ և ապա վասն Կոստանդինուպօլսի. վասն զի՝ Կոստանդիանոս նոր Հռոմ՝ զնա կոչեաց. և խառն էին ընդ միմեանս լեզուաւ և գրով, և չէին զատած մինչև ՚ի Տիբերիոս, որ և ՚ի նմանէ սկսանի Յունաց թագաւորութիւնն։ Եւ նախ եղեւ ՚ի հին ժամանակին Մակեդոնացւոյ թագաւորք երեսուն և ութ, որք և Յունաց կոչէին, ՚ի Կռանոսէ Մակեդոնացւոյ մինչև ՚ի Արասաս (Պերսէոս), ՚ի թուականին Ասորւոց ՄՁԸ (288)։ Եւ ապա երկրորդ անգամ սկսաւ ՚ի թուին Ասորւոց ՊՁԶ (886), և ՚ի թուին Հայոց ՚ի ԺԵ (15)։

Յայսմ ժամանակի հզօրացաւ թագաւորն Պարսից (Խոսրով) յաղթութեամբն որ եղեւ նմա ՚ի Միջագետս. և եկն յերկիրն Հայոց և ցուցին մեծ քաջութիւնս Հայք՝ սատարելովն Յունաց, երկիցս անգամ դարձուցին հարմամբ։ Այս երրորդ անգամ ժողովեալ թագաւորն գնաց զկողմամբն հիւսիսի առ լերամբն պատելով, թողեալ զՀայս և եկն ՚ի Կապադովկիա, և ընդդիմացան նմա Յոյնք։ Եւ եկն ՚ի Սեբաստիա և էառ զնա և այրեաց հրով. և դարձեալ զօրացան Յոյնք և եկին առին զբանակն նոցա և զտուն կրակին զոր շրջեցուցանէին զկնի իւրեանց, և քակեցին. և թէ չէին պատառեալ ՚ի միմեանց Յոյնք, սպառեալ էին զՊարսիկս, զի անկաւ ազնուկ ինչ 'ի Յոյնս , և զօրացան Պարսիկք և գնացին առին զՄելիտինէ Հայոց և այրեցին։ Եւ առաքեցին առ նա զօրքն Յունաց և ասացին. «Օ ի՞նչ է այդ զոր առնես՝ աւերումն և այրումն. այդ չէ թագաւորի օրէնք. այլ զանէգի առ և պատերազմեաց, և թէ յաղթես՝ քո լինի երկիրս. և զայդ մեք ոչ արարաք 'ի քո երկիրն՝ զինուորքս առանց թագաւորին։» Եւ լուեալ զայս ամաչեաց Պարսիկն, և զանէգի առ յարեւելից կուսէ քաղաքին. գնացին և զօրքն Յունաց և կանգնեցան հանդէպ նոցա յառաւօտէ մինչեւ 'ի յինն ժամ աւուրն և ոչ կռուեցան։ Եւ ապա Պարսիկքն սկսան գնալ անցանել ընդ Եփրատ , և եկին Յոյնք զինի և շապկեալք 'ի յանցանս՝ բազումք գետամոյր եղեն. և Պարսիկքն գնացին յաշխարհն Հայոց և յերկիրն իւրեանց։ Եւ եա օրէնս Խոսրով չերթանել թագաւորի յաւար և 'ի պատերազմ երկրի և հեծելոյ , բայց թէ ընդդէմ թագաւորի։

Իսկ զօրքն Յունաց գնացին առ Հիւսիսիւ պատերազմել ընդ մասն ինչ Հայոց աշխարհին և առնուլ աւար 'ի նոցանէ. և զի քրիստոնեայք էին , եղանէին վաներն և գեղերն խաչիւ և աւետարանաւ ընդ առաջ Յունականացն. և նոքա լրբութեամբ ընկենուին զխաչսն 'ի գետին , և մերկացուցանէին զեկեղեցականսն և զաշխարհականսն սպանա-

նէին և գերէին, և զհաստատուն կուսանս խայտառակէին. և զգլխոց կանանցն ականջօքն կախէին, և 'ի չկարելն հանել զապարանջանն՝ զձեռսն կտրէին և կորզէին, և այլ բազում չարիս գործէին. և տուեալ աւար՝ դարձան ուրախութեամբ որպէս 'ի մեծ յաղթութենէ: Եւ թողեալ զերկիրն և թափեալ յինքեանց զկազմած զինուցն, նստան յուտել և յըմպել: Եւ դարձան զօրքն Պարսից. և ժամանեցոյց բարկութիւնն Աստուծոյ զչարիս իւրեանց 'ի գլուխս իւրեանց զոր արարին ընդ քրիստոնեայսն: Եւ եկեալ Պարսկացն կոտորեցին զնոսա, տուեալ բովանդակ զձիսն և զզէնսն և զոր ինչ ունէին, և դարձան մեծաւ յաղթութեամբ:

Յայնմ ժամանակի ժողովեցան եպիսկոպոսք և քահանայք և միայնակեացք Միջագետոց և Հայոց որ ընդ իշխանութեամբ Յունաց էին, և գնացին առ Տիբերիոս խնդրել զխաղաղութիւն, զի կալցեն համարձակութեամբ զուղղափառութիւն: Եւ ոմանք 'ի Քաղկեդոնականացն ջանային բարկացուցանել զԹագաւորն վասն ուղղափառացն. իսկ Թագաւորն արար առեան և ասէ մեծաձայն. "Լուարուք ինձ ամենեքեան զոր ասեմս. քանզի յոլովք 'ի ձէնջ ոչ գիտեն թէ որպէս մեռաւ Թագաւորն Յուստինոս, զի չէիք 'ի մօտ, և զիս առ իւր ունէր զայդ և ցերեկ, և յոլովք 'ի ձէնջ գիտեն և վկայեն. քանզի Թագաւորն զատ 'ի դիւին չարեացն՝ ունէր ցաւս չարաչարս. և յորժամ դեւն թողոյր, գայր 'ի զգաստութիւն, և տեսանէր զի հրեշտակ Աստուծոյ կայր առ գլուխն և 'ի յիշատակ բերէր նմա զամենայն գործն իւր զոր արարեալ էր նորա ընդ ուղղափառսն, և ասէ Թագաւորն. “Աստուած ողորմած, հատո նոցա որք արարին զիս հալածիչ ուղղափառացն։” Եւ ասէ ցիս. “Տես, որդեակ իմ Տիբերիոս(1), զհատուցումն զայս, զի կենդանւոյն զրկեաց զիս Աստուած 'ի Թագաւորութենէս, զի ես զրկեցի զԹագաւորութիւն նորա ըստ իմում չափոյ. մի՛ նմանիլ դու չարեաց իմոց, այլ պատկառեա յԱստուծոյ, պատկառեա յուղղափառացդ յինէն հալածելոց. պատուեա զԹագուհիդ որ Թագաւորէր քո և այժմ եղեւ քեզ մայր։” Եւ որ ինչ այսպիսի բանք են՝ պատուիրէր ինձ. և զցաւն որովայնի և զպատուհասն գիտէք դուք և զդիւին չարաչար լլկելն, որոյ պատճառ նմա մահուան այն էր. մի՛ ոք զչարն Յուստիանեայ յիս դարձուցէ չար խրատովքն իւրովք, զի ոչ լսեմ զկորստական բանսն։” Եւ ասէ ցըժողովեալ ուղղափառսն. “Գնացէք, հարք իմ սուրբք, կացէք անհոգութեամբ և խընդութեամբ ՚ի սահման հաւատոյ ձեր, և արարէք ՚ի վերայ մեր աղօթս»:

---

(1) Յօրինակին Տէմոթէոս։

Բայց Սոփիա թագուհին ոչ թողոյր ըզկինն Տիբերեայ ՚ի Կոստանդինուպօլիս, և պատրիարքն ասէ ընդ Տիբեր. «Թող զքո կինն և առ զթագուհին»: Եւ նա ոչ կամեցաւ և ասաց. «Արդ գիտեմ եթէ երկիւղ Տեառըն ոչ գոյ յաչաց ձեր, Քաղկեդոնականք. զկինն իմ օրինաւոր, որ երեք զաւակ ծնեալ է ինձ և յաղքատութեան խնամ՝ պանդխտակից էր ինձ, արդ ասես զնա թողուլ, և զԱստուծոյ սիրոյն զուրացուցանե՞լ ինձ»: Եւ գնաց պատրիարքն ամօթով մեծաւ: Եւ լուաւ Սոփիա և ետ ածել զկինն Տիբերեայ ՚ի քաղաքն. և սիրէր զնա, և կոչեաց զանուն նորա Հեղինէ: Իսկ Տիբեր նախ ՚ի հիւանդութեան թագաւորին կեսար եղեւ. և էր առատաձեռն և ողորմած, և յորժամ թագաւորեաց, եդ իւր սահման յամենայն աւուր եւթանասուն և երկու կենդինար զանձ բաշխել աղքատաց:

Յայսմ ժամանակի լուաւ Մնդուր (Մունդիր Գ.) զմահն Յուստինեայ և զթագաւորելն Տիբերեայ, և եկն առ նա, և եղեւ ուրախութիւն մեծ. և մեղադրեաց Տիբեր՝ թէ ընդէ՞ր թոյլ ետուր Պարսից յարձակիլ ՚ի վերայ մեր: Եւ նա հանեալ զթուղթն Յուստինեայն առ Մարկիանէ վասն սպանման նորա, և ետ 'ի Տիբեր: Եւ ընթերցեալ Տիբեր՝ զարմացաւ յոյժ: Յայնժամ ասէ Մնդուրն. “Ես վասն քո բարեացն զոր արարեր ընդ ուղղափառսն, հաշտեցայ և եկի. և արդ աղաչեմ զի քարոզեսցի յայտնապէս ուղղափառութիւն ընդ ամենայն երկիր:” Եւ ետ հրաման Տիբեր, և գրեցին զքարոզութիւն ուղղափառութեանն: Եւ գնաց Մնդուր 'ի Անտաք զի հաստատեսցէ զուղղափառութիւն նախ անդ, և խօսեցաւ ընդ պատրիարքին Գրիգորի: Եւ մինչ 'ի յայս էին, եկն թուղթ յորդւոյն, թէ Պարսիկք կամին գալ 'ի վերայ մեր. և գնաց Մնդուր յերկիրն իւր:

Երրորդ ամին Տիբերիոս եկին Աւարքն (Ակարաւռնացիք) և առին աւար բազում 'ի Թրակիոյ և 'ի Թեսաղոնիկէ, և առին զերամակ Թագաւորին և հեծան, և ժողովեցին յերկրէն զէնս և ագանէին, զի մինչեւ ցայն վայր չէին կալեալ ոչ ձի և ոչ զէն և ոչ պատրաստութիւն ձիաւորի. և եկին նստան 'ի Սերմի (Սերմիոն) քաղաք, և առաքեցին առ Տիբեր՝ տալ նոցա զքաղաքն Սերմի: Եւ Թագաւորն յամեցոյց զնոսա երկու ամ, ակն ունելով Լունգբարտացն (1) գալոյ, և յորժամ ոչ եկին, 'ի հարկէ ետ նոցա զքաղաքն և զինչսն և ոչ զմարդիկն, և մտեալ 'ի քաղաքն տեսին լքեալ և ներքեւեալ 'ի սովոյ, զի կերեալ էին զշուն և զկատու 'ի հեսարն ('ի պաշարմանն), և արարին նոցա բազում մարդասիրութիւն Սկլաւքն, տալով հաց և գինի. և 'ի յուտելն յաճախ՝ մեռանէին, և նոցա իմացեալ սկսան կակղագոյն և սակաւ կերակրովք 'ի հոգի ածել զնոսա։ Եւ յորժամ հաստատեցան, հանին զնոսա 'ի քաղաքէն և ինքեանք բնակեցան։ Եւ յետ միոյ ամի այրեցաւ քաղաքն, և ելեալ գնացին բարբարոսքն։

---

(1) Են բնակիչք Լոնգոբարտիայ գաւառի, որ 'ի հիւսիսոյ Իտալիոյ:

Յայսմ ժամանակի արար Տիբեր կեսար զՄօրիկ(1) և առաքեաց 'ի Պարսս. և նա գընացեալ գտաւ զկամուրջն մեծ 'ի գետոյն քակեալ, և կարծեաց թէ Մնդուրն է ազդեալ Պարսից։ Եւ եկն առ Տիբեր և չարախօսեաց զՄնդուր, և անկան 'ի հնարս թէ որպէս որսասցեն զնա։ Եւ ոմն իշխան Մանգանա (Մագնոս) անուն յանձն էառ ըմբռնել զնա, և գնաց զօրօք որպէս թէ 'ի Պարսս երթայ.

---

(1) Մօրիկ էր ազգաւ Հայ, յԱրագածոտն գաւառէ, յՕշականն գեղջէ, որ կացեալ 'ի ծառայութեան կայսերական Դրան, եղեւ ընդհանուր զօրավար. և յաղթեալ Պարսից, փառաւորեցաւ 'ի Տիբերեայ. և զկնի փոխանի կայսեր, ամուսնացաւ ընդ դստեր նորա. և յամի 582 եղեւ կայսր. Ստեփան Ասողիկ. Բ. 6.- Կիրակոս, յեր. 27. տիպ Մոսկուայ. և այլք. Իսկ Միխայէլ, որպէս և բազումք 'ի պատմագրացն Յունաց, Կապադովկացի ասէ զնա լինել, և յոյն ազգաւ.

և աղաչեաց գալ տեսանել զնոսա և սահմանել։ Եւ Մ՚նդուր առանց կասկածանաց եկն առ նոսա. և արարեալ բազում խրախուսութիւնս, և 'ի գիշերի ըմբռնեալ զնա առաքեցին առ Տիբեր, և եդաւ 'ի բանտի. և լուեալ զայս որդին Մ՚նդուրայ Նուման (1), ել զօրօք յերկիրն Հռոմայեցւոց առնուլ զանձս և չորքոտանիս բազումս, բայց մարդոյ ոչ վնասէր. և խորհեցան վասն նորա չարիս՝ ոսալ և զնա։ Իսկ նա յորժամ գիտաց թէ ոչ արձակեն զհայրն, նեղեալ 'ի գթոյ հօրն՝ մահ յանձն առեալ եկն առ Տիբեր երդնուլ նմա կալ ընդդէմ Պարսից՝ եթէ արձակեսցէ զհայրն. և յանձն առ Տիբեր, և արարին երդումն. և ապա ասաց անօրէնն Մօրիկ, թէ “Այս է նշան պահել զերդումն քո՝ եթէ հաղորդիս ընդ մեզ։” Եւ նա ասաց. “Զայդ ոչ կարեմ առնել, զի բազում է ազգն իմ և բարկանան ինձ. թող զայն որ ոչ ասեմ՝ զի մի՛ տրտմեցուցից զձեզ. աւելի լինել Աստուծոյ ոչ կարեմ։” Եւ յորժամ զայս լուան՝ բարկացան, և կալեալ զնա առաքեցին առ հայրն յաքսորս։ Եւ այս համբաւ հասեալ յերկիրն Տաձկաց (Արաբացւոց), եղեն հնգետասան բաժին, հաստատելով իւրեանց առաջնորդս. և միմեանց ոչ հնազանդէլին . և ոմանք 'ի նոցանէ եղեն ընդ Պարսից իշխանութեամբ , ոմանք 'ի Բամիրական երկիրն ետուն ձեռն , և կէսք եղեն ընդ Հռոմայեցւովք . և 'ի պատճառս չար ժողովոյն Քաղկեդոնի բարձաւ վայելուչ թագաւորութիւնն այն ։

---

(1) Այն է Նուման Ե. Աբու-Քաբուս կոչեցեալ որ թագաւորեաց յամի Տեառն 583—605։

Իսկ Տիբեր յաւել յողորմածութիւն , զի զչորրորդ մասն յամենայն ստացուածոց իւրոց տայր աղքատաց ։ Եւ երբեմն զբաժն յամենայն իշխանութենէ իւրմէ . և էր բարեխորհ և անցատումն և աննենգ . և սա թագաւորեաց չորս ամ և հիւանդացաւ , և ետ զդուստր իւր Օգոստիա՝ Մօրկայ կայսեր 'ի կնութիւն (1) , և արար զնա թագաւոր , որ էր 'ի Կապադովկիայ , յԱրբիսուս քաղաքէ (2)։ Իսկ Տիբեր մեռաւ և տրտմութիւն ոչ սակաւ եթող աշխարհի . և Մօրիկ առ զթագաւորութիւնն ։

Բայց Հռոմ ապստամբեալ 'ի Մօրկայ , եդին իւրեանց թագաւոր զԳարամնոս (Գերմանոս) (3) ։ Եւ թագաւորն Պարսից Խոսրով մեռաւ և թագաւորեաց Որմիզդ որդի նորա , և առաքեաց 'ի Հռոմ՝ զի հնազանդեսցին նմա . և ոչ ընկալան զբանն նորա Հռոմայեցիքն , այլ գնացին յերկիրն Պարսից և գերեցին , և երեք հազար գերիս առաքեցին Սօրկայ . և հնազանդեցաւ Կումարիոս Սօրկայ , և յոյժ ուրախ եղև Սօրիկ ։ Եւ հրամայեաց ընդարձակել զԱրիսուս քաղաք ուստի ինքն էր , որ է յերկրորդն Հայք . որ զկնի չորս ամի չքեցաւ ’ի շարժմանէ , և դարձեալ շինեաց լաւագոյն քան զառաջինն մեծաւ հոգաբարձութեամբ , և վերստին ընկղմեալ եղեւ շարժմամբ ։

---

(1) Դուստրն Տիբերեայ կոչէր Կոստանդինա ։

(2) Այն է որ կոչի այժմ Եարփուս , մերձ 'ի Զէյթունն . և է գիւղ փոքրիկ հայաբնակ և ունին եկեղեցի մի ։ Առ պատմագիրս ուրեք կոչի քաղաքս այս և Եփեսոս ։

(3) Գերմանոս էր աներ Թէոդոսի՝ որդւոյ Մօրկայ ։

Յայսմ ժամանակի Սօրիկ եդ զօրս գլուխ զՓիլիկոսն (Փիլիպիկոս) փեսայ իւր , որ էր քեռայր իւր , և առաքեաց զնա ընդդէմ Պարսից . և Պարսիկքն առաքեցին ’ի Մծբնայ բաղում գանձս ’ի Մուփարղինն , և առին զնա . և գնաց Փիլիկոսիոս և դարձեալ էառ զնա , և կոտորեաց զՊարսիկսն որ ’ի նմա ։ Եւ ’ի նոյն ամի յարեան Պարսիկքն ’ի վերայ Որմզդի Պարսից արքային և հանին զաչս նորա , և մեռաւ յութ ամին Սօրկայ ։ Եւ ’ի յինն ամին Սօրկայ Թագաւորեաց Խոսրով որդի Որմզդին (1) ։

Եւ Սօրիկ արար զԹէոդոս որդին իւր կեսար , և արար նմա հարսանիս (հանդէս) մեծ, և պատրիարքն կապեաց զԹագ նորա։ Եւ 'ի նոյն ամի իշխանն Պարսից Վահրամ ապստամբեաց 'ի Խոսրովայ. և երկեաւ Խոսրով և եկն յՈւռհա, և առաքեաց առ Մօրիկ լինել նմա հայր, և կալ նմա օգնական՝ առնուլ զՊարսս(1)։ Եւ Մօրիկ առաքեաց զզօրս Թրակիոյ և զզօրս Հայոց, և տարան հաստատեցին յաթոռ իւր, և պարգևօք դարձան, և դարձուցին ըզՏարա և զՍաալյն (Մծբին) 'ի Հռովմայեցիս(2)։ Եւ Մօրիկ ետ զդուստր իւր Մարիա(3) Խոսրովու 'ի կնութիւն, առաքելով ընդ նմա եպիսկոպոսս և քահանայս. և Խոսրով երեք եկեղեցի շինեաց 'ի Պարս վասն կնոջ իւրոյ. և պատրիարքն Անտիոքու գնաց և օրհնեաց զնոսա, զմին յանուն Աստուածածնին, և զմեկն յանուն սուրբ Առաքելոցն, և զերրորդն յանուն սուրբ Սարգսին. և եղև մեծ խաղաղութիւն։

---

(1) Սեբէոս, յեր . 56—57 ։ Միքայէլ Չամչեան . Պատմ . Հայոց հտ . Բ . յեր . 295—296 ։

Եւ Մօրիկ թագաւորեալ ամս քսան, և

---

(1) Թովմա Արծրունի (յեր. 94), և Սեբէոս (յեր. 57) 'ի մէջ բերեն զպատճէն թղթոյն Խոսրովայ առ Մօրիկ։

(2) Ի սմին պատերազմի գտանի Ներսէս հայ իշխան և Մուշեղ Մամիկոնեան հայեցի քաջ զօրօք 'ի կողմանէ Մօրկայ եկեալ 'ի վերայ Վահրամայ ապստամբի. զորոց տես հանդերձ պարագայիւք 'ի Պատմ. Հայոց. Հտ. Բ. յեր. 296—300։

(3) Պատմագիրք Յունաց ասեն զմանէ դուստր լինել քրիստոնէի ուրուք և ոչ Մօրկայ, և կոչեն զնա Սիրի, յորմէ Շիրինէ երգքն առ արևելեան բանաստեղծս 'ի վերայ սիրոյ նորին ընդ Խոսրովու արքայի։ Իսկ Սեբէոս յայտնագոյն ևս ասէ՝ լինել դուստր քրիստոնէի 'ի Խուժաստան աշխարհէ։ յեր. 76։

հպարտացեալ արհամարհէր զզօրսն . և եղև գալ Բուլղարացն 'ի Թրակիա, և ելեալ զօրքն Հռովմայեցւոց՝ և հալածեցին զնոսա , և եկին 'ի Կոստանդնուպօլիս և առաքեցին առ Մօրիկ և ասացին . "Աստուած խաղաղութիւն արար յաւուրս քո . բայց խաղաղութեամբ զօրքն ոչ ապրին, այլ հռոգօք . կամ տուր ընկարգեալ ռոճիկսն անթերի, կամ տես յայսմ հետէ զմեզ թշնամիս քեզ :" Եւ նա խստացաւ ընդդէմ նոցա , և ասացին զօրքն ցՊետրոս եղբայրն Մօրկայ . "Սպանցուք զեղբայրն քո և թագաւորեա դու :" Եւ նա ոչ կամեցաւ , այլ գնաց պատմեաց Մօրկայ : Եւ զարհուրեալ Մօրկայ փախեաւ 'ի Քաղկեդոն . և երթեալ զօրացն անդ , սպանին զնա , և թագաւորեցուցին զՓոկաս զոմն 'ի զօրագլխացըն (1) :

Եւ լուաւ զայս Խոսրով թագաւորն Պարսից՝ եթէ սպանին զՄօրիկ և զորդիսն , յոյժ տրտմեցաւ և զգեցաւ սեաւ ամենայն տամբն Պարսից, և ելաց զնա աւուրս բազումս. և յետ այնորիկ ծանուցանէր զերախտիսն զոր արար Մօրիկ Պարսից. «Ո՛ ի նա հատուցանեաց զխախտեալ թագաւորութիւնս ՚ի ձեռս իմ. արդ ո՞վ է ՚ի ձէնջ որ առնու զվրէժ արեան նորա ՚ի դիւրութիւն սրտի իմոյ:» Եւ յառաջ եկն ոմն ՚ի մեծ իշխանացն, որում անուն էր Ռոմիզան, և ասէ. «Ես երթամ և կատարեմ զկամս քո ՚ի վերայ Հռոմայեցւոցն, և լնում արեամբ զերկիր նոցա զորս գտանեմ ՚ի Հռոմայեցւոցն:» Եւ ասէ ցնա թագաւորն. «Ոչ կոչեսցիս դու այսուհետեւ Ռոմիզան, այլ Շահրպարզ (Շահրվարազ), զի այր քաջ ես դու:» Եւ առաքեաց զնա ամենայն զօրօքն Պարսից, որոյ եկեալ էառ զՏարս և զԱպամայն և զՄերոնին, և ձմերեաց ՚ի Միջագետս. և առ զԽառան և զՈւռհայ և զՆուաք, և այլ առն ոչ մեղանչէր՝ բայց միայն Հռոմայեցւոց: Եւ յութերորդ ամին փոխեալ եղև ամենայն Միջագետք Պարսից. և ապա անցին ՚ի Կապադովկիա և ՚ի Գաղատիա և յԱնկիւրիա և յԱսիա, և մինչեւ ՚ի Քաղկեդոն գնացեալ յաւարի հարին (1): Եւ ՚ի միտս իւր խորհէր Խոսրով ՚ի վերայ Հռոմայեցւոցն այլ թագաւորել, զի որդեգիր էր Մօրկայ կայսեր և փեսայ:

---

(1) Փոկաս էր 'ի զօրավարացն Մօրկայ . որում յանձն լեալ բանակն կայսերական առ դէմ ունել ապստամբութեան Բուլղարաց , նա ընդհակառակն խաղաղոյց զզօրսն 'ի վերայ Կ . Պօլսի . և կալեալ զՄօրիկ հանդերձ հնգեքումբք որդւովք խողխողեաց անխնայ , և յինքն առաւ զաթոռն : Սեբէոս պատմէ (յեր . 85—86) , թէ յառաջնում ապստամբին զօր ետուն Յոյնք ընդդէմ [illegible] ացւոց (Բուլղարաց . Աւարաց) . գտանէին և զօր [illegible] զօրավարութեամբ Մուշեղայ Մամիկոնէի . [illegible] զհետ թշնամեաց պնդեալ մետանգեր [illegible] լեալ սպանանա .

---

(1) Սեբէոս, յեր. 121—122:

Իսկ Թագաւորն Փոկաս արար բազում ապստամբութիւնս զօրավարաց և զօրաց, և եղեւ ատեցեալ յամենեցունց։ Եւ յայնմ ժամանակի երկու պատրիկք էին յԱփրիկէ՝ և բեւեկլք և քաջք 'ի մարտս պատերազմաց, անուն միոյն Գրիգոր և միւսոյն Հերակլ. և խորհեցան երկոքին զման Թագաւորին, և պատրաստեցին զօրականս և առաքեցին զորդիս իւրեանց զօրօք՝ զմինն ընդ ծով և զմիւսն ընդ ցամաք։ Որդին Հերակլի անուամբ հօրն Հերակլիոս անուն, եհաս նորա վիճակ ընդ ծովն երթալ, և որդին Գրիգորի ընդ ցամաք. և ուխտեցին նոցա թէ որ վաղագոյն երթայ 'ի Կոստանդնուպօլիս՝ նա Թագաւորէ, և որ յետոյ երթայ՝ լինի նմա կեսար։ Եւ դրեցին 'ի քաղաքն և յաջողեսին զխորհուրդն՝ զի սպանցեն զՓոկաս, և զհախամամանեայն առ նոսա յորդւոց իւրեանց Թագաւորեցուցին։ Իսկ Հերակլիոս յաջողակ հողմոյ դիպեալ գնաց յառաջագոյն, և տեսեալ ընթուղթմն՝ վաղվաղակի սպանին զՓոկաս։ Եւ Թագաւորեաց Հերակլ այր քաջ և իմաստուն, և եղեւ խնդութիւն ամենեցուն և հանդարտութիւն։

Իսկ Թագաւորն Պարսից յաժամ տիրեաց Միջագետաց, առաքեաց 'ի Պարսից եպիսկոպոսս Նեստորականս և Քաղկեդոնիկս, որոց գլխաւորին անուն էր Ըչխիմիս (1), իսկ ուղղափառքն որ 'ի Միջագետս, ոչ ընկալան զնոսա, և գրեցին աղաչանս առ թագաւորն Պարսից՝ զի մի խափանեսցէ զհայրենիս սահմանս նոցա։ Եւ լուաւ թագաւորն և անդրէն կոչեաց. և նոքա խնդրեցին 'ի Խոսրովայ զի հրամայեսցէ նոցա քննութիւն առնել, թէ վասն էր ոչ ընկալան զմեզ։ Եւ առաքեաց Խոսրով 'ի Հայս և 'ի Միջագետս գընալ առ ինքն իմաստնոց և աստիճանաւորաց և պատասխանի առնել Քաղկեդոնացւոցն և Նեստորականացն։ Եւ գնաց մեծ կաթողիկոսն Հայոց Ներսէս(1), և պատրիարքն Ասորւոց ուղղափառաց Աթանաս և Սեւերիանոս եղբայր իւր, որ հրաշալի նշանօք կոչեցեալ էր 'ի քահանայապետութիւն այսպիսի օրինակաւ ։

---

(1) Միւս թարգմանութիւնն Ախշիմիա։

---

(1) Զայս ժողով յիշատակէ և Սեբէոս, յեր. 188-195· յորմէ առնու Ասողիկ 'ի պատմութեան իւրում (յեր. 94-99)· 'ի մէջ բերեալ և զնամակն զոր գրեաց Ներսէս Գ. առ Կոստանդ կայսր, յորում յիշէ՝ եթէ և յաւուրս Խոսրովու Բ որդւոյ Որմիզդի եղև ժողով 'ի դուռն արքունի յաղագս բանի հաւատոյ։ Զայս պատմութիւն թերևս չփոթեալ Միխայելի ընդ անուան Ներսէսի որ յետոյ է իբր 20 ամօք և աւելի քան զժողովն որ յարքունիսն Խոսրովու, համարի եթէ առ նովին իսկ Ներսէսիւ եղեալ իցէ։ Քանզի առ թագաւորութեամբ Խոսրովու Բի նստան յաթոռն կաթողիկոսական՝ Աբրահամ, Յովհան Գ., Կոմիտաս և Քրիստափոր։ Դարձեալ Ասողիկ այլազգ իմն պատմէ զպատճառս ժողովոյն։ Լուեալ, ասէ, Խոսրովու ըզհանապազօրեայ վէճս և զխռովութիւնս որ լինին 'ի մէջ Հայոց և Յունաց վասն բանի հաւատոյ, հրամայեաց ժողովել 'ի դուռն արքունեաց իւրոց եպիսկոպոսաց արևելեայց և Ասորեստանեայց ընդ վերակացութեամբ Սմբատայ Բագրատունւոյ։ Ի ժողովին յայնմիկ գտաւ և Զաքարիա պատրիարք Երուսաղէմի որ 'ի գերութեան կայր և գերեկիցք նորին եպիսկոպոսք Աղէքսանդրիոյ, այլ և կաթողիկոսն Աղուանից՝

Այր մի էր 'ի Սամոսատիա(1) բարեպաշտ և ողորմած, որ մեռաւ և եթող երկուս որդիս, զԱթանաս և զՍեւերիանոս, ընդ մօրն՝ բազում ստացուածօք. և մայր նոցա Սանի ըսպասաւորեաց զամենայն ինչս իւր աղքատաց, և ետ զորդայսն 'ի դպրոցս. և ուսուցանէր զնոսա աղօթիւք և հաւատովք, մինչ զի յորժամ տեսանէր եպիսկոպոս և քահանայս և միայնաւորս, ասէր. " Խաչ հան յիմ վերայ ." եւ ինքն տարածանէր զթեւսն առաջի. և որպէս զգուշաւոր իրք ծրարէր, և երթեալ 'ի տունն թափէր զթեւսն 'ի վերայ գլխոյ տղայոցն. և

եւս և Նեստորականք և Սեւերիանոսեանք։ Եւ 'ի լինել հարցաքննութեան՝ հերետիկոսք ամենայն 'ի բաց մերժեցան, նոյնպէս և Քաղկեդոնականք պարտեցան. իսկ դաւանութիւնն Հայոց որ զերիս և եթ ժողովսն ընդունէին, իբրեւ ուղղափառական ճշմարիտ դատեցաւ առաջի ժողովոյն և խոսրովու արքայի, որում վկայեաց և Զաքարիա պատրիարք Երուսաղէմի՝ յաղթեալ 'ի ճշմարտութենէ, որպէս ասէ Ասողիկ. վասն որոյ և Խոսրով հրամանն, եւ եթէ " Ամենայն քրիստոնեայք որ ընդ իմով իշխանութեամբ են, զհաւատս Հայոց կալցեն ։" Եւ այսպէս հաստատեաց կրկին զվճիռս հարց իւրոց Կաւատայ և Խոսրովու Ա., որք գրեալ էին 'ի թուղթս և պահեալ 'ի տան գանձուց, կնքեալ մատանեաւ իւրեանց ։

(1) Յօրինակիս մերում 'ի Սամոս ։

ասէին տղայքն, թէ «Այդ ի՞նչ է մայր.» և մայրն ասէր. «Օրհնութիւն է, որդեակք, զոր առի ձեզ ի սրբոց Աստուծոյ:» Եւ զարգացեալ մանկանցն գնացին ի վանս սուրբ Յովհաննիսի: Եւ յետ բազում ամաց եղին զԱթանաս ուղտապան, և երթեալ բերէր ըզպէտս վանիցն: Եւ ի սահմանս Սուծանիայ վանք մի էր ուղղափառաց, և գնաց առ նոսա յամենայն ուղղափառաց աղաչանք, զի ընտրութեամբ ըստ Աստուծոյ կամացն դիցեն պատրիարք: Եւ ընտրեցին երեք, և գրեցին զանուանս նոցա յերեք թուղթ, և ի թուղթ մի զՔրիստոսի անունն. և եդին ի ժամ, և եդին ի սեղանն, և մատուցին պատարագ. և զկնի պատարագին առնուլ ետուն երեք օր զկնի միմեանց, և գայր Քրիստոսի անունն. և փոխեցին զմարդիկն յայլս, և նոյնպէս գայր Քրիստոսին առ ի ցուցանել թէ Քրիստոս է քահանայապետ, մինչև այլ արժանաւոր ընտրեք: Եւ զՔրիստոսին վասն այնորիկ դրեն, որ թէ յերեքս անուանցն մի անունն գայ, մեկ մի այլ ևս ոչ Քրիստոսին գայ, գիտենան թէ վայել է աթոռ սրբութեանն: Ապա թէ ոչ գայ Քրիստոսին, յայլ անուանելոցն գայ, չէ ընդունելի, և թէ միայն Քրիստոսի գայ, ամենեն են խոտան: Իսկ այն վանքն երեք օր և երեք գիշեր հսկեցին և լացին առաջի Աստուծոյ. և յերրորդ աւուրն երևեցաւ Քրիստոս և ասէ.

«Վաղիւն առաւօտուն գայ այր մի ուղտուք, անուն Աթանաս, զնա ձեռնադրեցէք»։ Եւ նոքա ուրախացեալ սպասէին նմա 'ի վաղիւն. և 'ի բանալ դրանն կայր Աթանաս կանգնեալ, և հարցեալ զանունն և իմացեալ, մեծաւ աղաչանօք և երդմամբ և երկիւղիւ Աստուծոյ ածին 'ի հաւան և ձեռնադրեցին. և յետ ձեռնադրութեանն ասէ. «Սիրելի Քրիստոսի պաշտեմ զձեզ, ծածկեցէք զբանս և թողուք ինձ իմ հանդերձիւն տանել զուղտսն և լնուլ զառաջին իմ»։ Եւ հազիւ հաւանեցան. և արար այնպէս։ Եւ 'ի լնուլ տարւոյն խնդրեցին և գտին։

Եւ եղ համբաւ զնմանէ մինչեւ 'ի Պարսից թագաւորն։ Եւ կոչեցաւ Աթանաս պատրիարքն և գնաց, և եղբայրն զկնի. և տեսեալ զնա հայրապետին Հայոց՝ սիրեաց զնա և մեծարեաց, նոյնպէս և թագաւորն Խոսրով։ Եւ յետ բազում հարցափորձի և քննութեան յաղթեցան Պարսից եպիսկոպոսքն և Նեստորականքն և Քաղկեդոնիկքն։ Եւ զգացուցին Խոսրովու, և կոչեաց առաջի իւր զժողովն, եհարց և ասէ. «Զի՞նչ է ձեր հակառակութիւնդ, ասացէք»։ Եւ ասեն Քաղկեդոնացիքն և Նեստորականքն. «Մեք ամեն քրիստոնեայքս Աստուած խոստովանիմք զՔրիստոս որ մարմին էառ, բայց դոքա ասեն զԱստուած և զմարմինն մի բնութիւն, և զԱստուած խաչեալ ասեն՝ և առանձինն մեք ասեմք, թէ մարմինն որ մեղաւ՝ նա մեռաւ, և Աստուած որ ոչ մեղաւ՝ նա ոչ մեռաւ։» Եւ ասեն ուղղափառքն ցԹագաւորն. «Այդ շատ բան է և բազում ուսմունս և յերկար ժամանակաց պէտք են, և արարեալ են վասն այդորիկ քննութիւն առաջին Թագաւորքն։» Եւ ասաց Թագաւորն. «Ո՞վ էին Թագաւորքն.» և նոքա ասեն. «Կոստանդիանոս և Թէոդոսքն՝ առաջինն և երկրորդն.» և այլքն ասացին՝ «Եւ Մարկիանոս.» և ուղղափառքն ասացին. «Մեք զՄարկիանին ոչ ընդունիմք։»

Եւ Խոսրով ասէ. «Դուք որ յաղթեցարուք դուք որ զՄարկիանին ընդունիք. այլ և ես ասեմ, որ Մարկիանէ չէ հաւատոյ այնց Թագաւորացն. և յորժամ ասէք միաւորիլ Աստուծոյ և մարդոյն, բաժանել չէ պարտ, զի ինձ ճշմարիտ թուի ասելդ, թէ մահ մարդոյ չկարէր փրկութիւն առնել։ Քանզի ես յորժամ եկի յաշխարհն ձեր, բազում անգամ լուայ վասն այսորիկ, և տեսի 'ի նոցանէ բազում նշանս և սքանչելիս՝ որ մահ Աստուծոյ ասեն։ Այլ և պատմեցին ինձ զօրքն իմ, թէ «Մտաք յեկեղեցին մի զոր ուղղափառքն անուանեն, և քահանայն կայր 'ի պատարագի և կամէր հաղորդել զժողովուրդն, և վասն այնորիկ յոլով էր պատրաստեալ զհացն և զբաժակ գինւոյն ըստ իւրեանց խորհրդոյն. և 'ի մտանելն մեր յեկեղեցին, ոչ հայեցան 'ի մեզ և ոչ ուտեան, և մեք հրամայեցաք՝ որ կոտորեցին զոմանս 'ի ժողովրդոցն, և այլոց թոյլ տուաք փախչել. և հայելով մեր 'ի պատարագողն (որ) կերաւ զբազմութիւն հացին միայն և արբ զգինին, և յետ այնորիկ հարցաք թէ՝ «Ի՞նչ խոստովանիք դայդ կերակուրդ»: Եւ նա ասէ. «Մի՛ս և արիւն Քրիստոսի»: Եւ ասացաք. «Հոգևո՞ր է՝ թէ մարմնաւոր կերակուրդ»: Եւ նա ասէ. «Հոգևոր»: Եւ բացաք զփոր երիցուն և ամենևին ոչինչ գտաք նշան 'ի նմա՝ թէ կերեալ ինչ էր»: Եւ թէ այսպէս է, իրաւ են միաւորդքն»: Եւ զայս տեսեալ թագաւորին ոչ յիւրմէ՝ այլ յՔրիստոսի յաղթմանէն, որպէս Փարաւոն և Նաբուգոդոնոսոր և Բաղտասար և Կայիափա տեսին զճշմարիտն և խնայեան վասն օգտի աստուածպաշտութեանն, նոյնպէս և Խոսրովիւ ասէր՝ 'ի վերայ ճշմարտութեանն, զի զօրաւոր է ճշմարտութիւնն ըստ Եզրի սրբոյ (1): Վասն որոյ պատուեաց թագաւորըն զհայրապետն Հայոց՝ տալով զորդին իւր նմա սան և զաշխարհն Հայոց 'ի հրամանս նորա, և պարգևս մեծամեծս ետ նմա և Սթանասայ, և զաշխարհն Պարսից ետ 'ի ձեռս նոցա իշխանել զքրիստոնեայսն ըստ իւրեանց օրինացն, կարգել եպիսկոպոսս և քահանայս և սարկաւագունս , և չինել եկեղեցիս , և ապրանք եկեղեցեացն . և այսպէս Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ . և նմա փառք յաւիտեանս :

---

(1) Ա. Եզրաս Դ. 35.

Իսկ Հերակլ Թագաւորեալ 'ի քսան և մի ամին Խոսրովու , և առաքեաց առ Խոսրով խնդրել սէր առնել , թէ "Սպանաք զՓոկաս զսպանողն Մօրկայ , և դու արա ընդ մեզ խաղաղութիւն :" Եւ ոչ կալաւ Խոսրով յանձն , այլ յարուցեալ եկն 'ի Կեսարիա Հայոց , և առ զնա և կոտորեաց զբիւրս բիւրուց (1) : Եւ 'ի չորրորդ ամին Հերակլեայ հնազանդեաց Շահրպարզն զԴամասկոս՝ Պարսից . և 'ի գալ տարւոյն առ զԳալիլիա , և 'ի վեց ամին Հերակլեայ առ զԵրուսաղէմ և սպան 'ի նմա արս իննսուն հազար (2) : Եւ Հրէայքն զգերեալ քրիստոնեայսն գնէին սակաւ գնոց , և սպանանէին վասն չարութեան իւրեանց : Եւ զօրավարն Պարսից առ զխաչն Քրիստոսի և առաքեաց 'ի Պարս , և ընդ նմա զԶաքարիա պատրիարքն Երուսա-

---

(1) Սեբէոս , յեր . 125 : — Վարդան , յեր . 86 . տիպ Մոսկուայ :

(2) Խոսրով առ զԵրուսաղէմ յամի 616 , զոր Միքայէլ Ջամչեան դնէ երկու ամօք յառաջ 'ի 614 ամին . և սպան արս յիսուն հազար կամ ըստ ոմանց՝ յիսուն և եւթն . և գերեաց անձինս երեսուն հազար : Սեբէոս , յեր . 130 : — Մովսէս Կաղանկայտուացի . Գիրք Բ . Գլ . Ժ : — Թովմա Արծրունի , յեր . 98 : — Սամուէլ :

զէմի քաղկեդոնիկ . և յետոյ զամենայն Հըրեայսն ընչեաց յԵրուսաղէմէ և յամենայն սահմանացն և առաքեաց 'ի Պարս : Եւ 'ի գալ միւսոյ տարւոյն գնաց յԵգիպտոս և առ զնա, և հնազանդեաց զամենայն Լիբիա Պարսից Շահրպարզն մինչեւ 'ի Քուշացին : Եւ 'ի նոյն ամի եկն Շահէն զօրավար մի այլ Պարսից 'ի վերայ Քաղկեդոնի, և առ զնա և կոտորեաց (1) : Եւ դարձաւ առ զԿիլիկիա և բաղում գերութեամբ և աւարաւ գնաց 'ի Պարս . մինչեւ զսիւնս մարմարեայս և զանօթս պղնձի և երկաթի տարան 'ի Պարս : Եւ եղեւ հնազանդ Պարսից ամենայն իշխանութիւնն Հռոմայեցւոց 'ի ծովէ մինչեւ 'ի ծով : Իսկ Հերակլ զորդին իւր Կոստանդին արար օգոստոս , և առաքեաց ընդդէմ Պարսից (2) :

Յայսմ ժամանակի երեւեցաւ Մահմէտ

---

(1) Սեբէոս (յեր . 141) յորմէ առեալ և Թովմա Արծրունի , զՇահրվարազայ ասէ եկեալ 'ի Քաղկեդոն , և աւերեալ զաշխարհն , ուր 'ի մէջ բերէ և զբանս Հերակլի վասն խաղաղութեան խօսեցեալ առ մեծ զօրավարն Պարսից, և ըզպատճէն հրովարտակին Խոսրովայ առ Հերակլ կայսր ուղղեալ լի ամբարտաւանութեամբ . յեր . 100—101 :

(2) Սեբէոս (յեր . 144), Թովմա Արծրունի (յեր. 102), և Մովսէս կաղանկայտուացի (Գիրք. Բ . Գլ. Ժ.) ասեն՝ եթէ Հերակլ Թագ կապեալ որդւոյ իւրում Կոստանդնի , եթող 'ի ձեռս նորա զկառավարութիւն Գրանն , և ինքն ընդ ծով ել 'ի Ճանապարհ յաշխարհն Եգերացւոց և Պարսից , և անձամբ մղեաց պատերազմ ընդ Շահրվարազայ և Խոսրովու :

որդի Աբդլայի յԱթրպատէ (1) Արաբիոյ։ Եւ է Արաբիա՝ 'ի հիւսիսոյ և յԵփրատ գետոյ մինչեւ 'ի ծովն հարաւոյ, և 'ի յարեւմտից 'ի Կարմիր ծովէն մինչեւ յարեւելս 'ի Պարսից ծովն. և բնակիչքն կոչին Իսմայելացիք վասն Իսմայելի, և Սարակինոսք վասն Սառայի, և Հագարացիք վասն Հագարայ, և Մադիանացիք վասն Կենդուրայ որդւոյ Մադիանայ։

Այս Մահմէտ եղանէր յԱթրպատ քաղաքէն և վաճառականութեամբ գայր 'ի Պաղեստինէ և յԵգիպտոս, և եղեւ ծանօթութիւն նմա ընդ միանձնի ումեմն՝ որ էր Արիանոս, և 'ի քարոզութենէ նորա հաւատաց յԱստուած՝ և գնաց քարոզեաց ազգին, և զամենս հաւանեցոյց. և ել նոքօք յանապատ, և զանհնարին գերէր և աւերէր, և յոլովք յարեցան 'ի նա, և երթային արշաւէին 'ի կողմանս Պաղեստինի, գերէին բերէին. և փարթամացան, և յաճախեաց և բազմացաւ զօրքն, և ել համբաւ զնմանէ։ Եւ միաբանեցան Հրեայքն ընդ նմա, և ետուն նմա կին յազգէն իւրեանց, և հալածէին զզօրսն Պարսից և տիրեցին բազում աշխարհաց (2)։ Եւ սկիզբն երեւման նորա յերկոտասան ամին

---

(1) Աթրպատ է նոյն՝ որ կոչեցաւ յետոյ Քաղաք մարգարէի. և այժմ հասարակաբար կոչի Մէտինէ։

(2) Մովսէս կաղանկայտ. Գիրք Գ. Գլ. Ա։—Ստեփան Ասողիկ. Գիրք Բ. Գլ. Գ։—Կիրակոս, յեր. 32. տպ. Մոսկուայ։—Թովմա արծրունի, յեր. 109։—Վարդան, յեր. 88։

Հերակլեայ, և 'ի ՋԼԳ (933) Թուին Նաւրուզ և 'ի Հայոց Թուին Կ (60)։

Յայսմ ժամանակի խաւարեցաւ կէս արեգականն Մերեգ ամսոյ աշնանն մինչև 'ի Քաղոց ամիս՝ սկիզբն ամարան, և ասէին մարդիկ՝ թէ այլ ոչ դարձի արեգակն յաւիտեան։

Իսկ 'ի հնգետասան ամին Հերակլեայ առին Պարսիկք զՌոդոսն կղզի և գնացին Շահրպարզն և Դարատոզն (1) իջան 'ի վերայ Աղեսանդրիաւոյն, և զօրքն սփռեցան 'ի Թրակիա, և ոմանք յարեւմուտս կոյս, և ամ մի պաշարեցաւ Աղեսանդրիաւոյքս և անյուսացաւ յամենայն կողմանց։ Իսկ յանկարծ եղեւ նոցա դիւրութիւն այսպիսի պատճառաւ։ Յայնըմ ժամանակի քանսարկեցին առաջի Խոսրովու թէ հպարտացեալ է Շահրպարզն ընդդարձ իւր. և ասէ. «Նմանոյն Խոսրով նըստեալ է 'ի մէջ հարճից և փարձակաց, և կարծէ թէ ինքն է թագաւոր. և զայս ոչ իմանայ թէ ես առի զթագաւորութիւնս Հռոմայեցւոց և յաւելի 'ի Պարս, և արարի նմա հանգիստ։» Իբրեւ լուեալ զայս Խոսրով՝ բարկացաւ և գրեաց թուղթ առ Դարատօզան երկրորդ զօրավարին, եթէ յորժամ ընթեռնուս զգիրս՝ հատ զգլուխ Շահրպարզի, և առ իս առաքեա(2)։ Թուղթն անկաւ 'ի ձեռս ծառայից Հերակլեայ, և նա ազդ արար զիրսն զօրագլխին (Շահրվարազայ) և ձայնեաց առ ինքն և եցոյց նմա զթուղթն, և հնարիմացութբ փոխեաց զթուղթն Շահրվարզն և գրեաց 'ի Խոսրովու երեսաց թէ՝ “Շահրվարզ և Պարատօղան, 'ի գալ թղթոյդ առ ձեզ՝ սպանէք երեք հարիւր իշխանս”. գրեաց և զանուանս իւրաքանչիւրոց իշխանացն, և եցոյց Պարատօղին զթուղթն և յայտնեաց զբանն մեծամեծացն և շարժեցան. 'ի բարկութիւն ընդդէմ Խոսրովու, և ապըստամբեալ 'ի Խոսրովայ՝ արարին սէր ընդ Հերակլ, և ետուն նմա պատանդ զորդին Շահրվարզին և դարձան 'ի Պարսս՝ թողեալ զերկիրն Հոռոմայեցւոց։ Եւ առաքեաց Հերակլ առ թագաւորն Հիւսիսոյ Խաքան (1), և խոստացաւ նմա տալ կին զդուստր իւր Եւդոքսիա՝ եթէ նա յանձն առցէ տալ նմա քառասուն հազար հեծեալ 'ի վերայ Պարսից։ Եւ Խաքանն խոստացաւ կատարել զխնդիրսն նորա, առաքել զզօրսն ընդ դուռն Կաղբից։

---

(1) Մովսէս կաղանկատուացի Քրոաջարին անուանէ ըղսա. (Գիրք Բ. Գլ. ԺԱ.) զոր և Յոյնք Քարդարիգան կոչեն։

(2) Նոտարագրեալքն եղծեալք էին 'ի մերում բնագրի

Եւ եկեալ Հերակլ գնաց ընդ Հայս 'ի վերայ Պարսից։ Եւ լուեալ զայս թագաւորն

զոր առաք 'ի միւս թարգմանութենէն։

(1) Այն է թագաւորն Խազրաց Զեբու Խաքան որ ընդ Հերակլեայ միաբանեալ մարտ եդ ընդ Խոսրովու զամս երիս։ Մովսէս Կաղանկատուացի երկար բանիւք պատմագրէ զանցս աղէտից պատերազմացն և մահուն Խոսրովու։ Գիրք Բ. Գլ. ԺԱ—ԺԳ։—Կիրակոս, յեր. 30, և այլք։

Պարսից, ժողովեաց զօրս և եդ գլուխ զօրացն զՌուզի—Բահան (1), և առաքեաց ընդդէմ Հերակլեայ. և յաղթեցան Պարսիկք 'ի դիմացն Հերակլեայ, և սպանաւ Ռուզի—Բահան. և լուաւ Խոսրով և փախեաւ 'ի Սակարգա յամուրն իւր (2)։ Եւ Շիրի որդին Խոսրովու որ կայր 'ի բանտին, ել 'ի բանտէն կամաւ Պարսից և սպան զհայրն 'ի ձեռն հրամանի իւրոյ, և թագաւորեաց Շիրի (3)։ Եւ Հերակլ դարձաւ ձմերել 'ի յԱթուր (4). և

---

(1) *Մովսէս Կաղանկայտուացի զզօրավարն զոր առաքեաց Խոսրով բանակաւ ընդդէմ կայսեր, Ռոձմէհ կոչէ. յայս անուն փոխեալ, ասէ, զառաջին անուանակոչութիւն նորին։*

(2) *Քաղաքն ուր ապաւինեցաւ Խոսրով յերեսաց զօրութեան Հերակլի, էր Վեհ—Կաւատ, տեղի ամրութեան, յայնկոյս Տիգրիս կամ Դկլաթ գետոյ, ուր կային ամրացեալ և ամենայն տիկնայք և որդիք և գանձք արքային։ Սեբէոս. յեր. 150։—Թովմա Արծրունի, յեր 104—105։ Իսկ Մովսէս Կաղանկայտուացի (Գիրք Բ. Գլ. ԺԳ) Վեհ—Արտաշիր կոչէ զանուն քաղաքաբերդիս։*

(3) *Շիրի, կամ Շիրուշ ըստ Պարսից, կոչէր և Կաւատ, որ էր անդրանիկ որդի Խոսրովու, և ըստ գրելոյ Մովսէսի Կաղանկայտուացւոյ (Գիրք Բ. Գլ. ԺԲ.) դայեակ սորին՝ որ մի էր 'ի նախարարացն, խորհրդակցեալ ընդ Կաւատայ և գրաւեալ զսիրտս ամենայն աւագացն, հան զնոսա ընդդէմ Խոսրովու որք միաբանեալ թագաւորեցուցին զԿաւատ. և նա յետ կատարելոյ զամենայն եղբարս իւր ըստ թելադրելոյ դայեկին իւրոյ, և զհայր իւր որ թագուցեալ կայր 'ի բուրաստանս ընդ մթաւօք, կալեալ եդ 'ի զգուշութեան. և զկնի քանի ինչ աւուրց եբարձ 'ի կենաց։—Թովմա Արծրունի, յեր. 105։*

(4) *Աթուր, յորմէ Աթուրացիք կոչին Ասորիք. նշա-*

Շիրի առաքեաց առ նա խնդրել սէր, և խոստացաւ նմա կոչել զզօրսն իւր յաշխարհէն Հռովմայեցւոց։ Եւ Հերակլ հաւանեցաւ և դարձաւ ՚ի Միջագետս յառաջ քան զինքն առաքեալ զԹէոդորիկէ (զԹէոդոր) զեղբայրն իւր։ Իսկ զօրքն Պարսից որ յՈւռհա՝ ոչ հընազանդէին Շիրէին (1), և Հրեայքն վասն ատելութեան քրիստոնէից օգնէին Պարսից և զԹէոդորոս ոչ ընդունէին յՈւռհա. և նորա մարտ եդեալ յաղթեաց Պարսից և առ զքաղաքն։ Եւ Հրեայ մի կախեալ ընդ պարիսպն, գնաց առ Հերակլ ՚ի Թիլմօղ (2) և եբեր հրաման չկոտորել զՀրեայսն, որ մինչ ՚ի գալն նորա զբազումս սպանեալ էին։

Եւ եկն Հերակլ յՈւռհա, և ել ընդառաջ նորա եկեղեցականաց բազմութիւն յոյժ և վանորայք լերինն Ուռհայոյ, զորոց ասեն զԹիւն իննսուն հազարաց։ Եւ ՚ի տեսանելն՝ զարմացաւ Հերակլ ընդ բազմութիւնն, և խոնարհեցոյց զերեսն յերկիր առաջի նոցա. և յորժամ իմացաւ թէ ոչ ընդունին զժողովն Քաղկեդոնի, ասաց՝ թէ “Չէ արժան զոկել

նակէ զքաղաքն Նինուէ, զոր շինեաց Ասուր որդի Սեմայ։ Ծննդոց. Ժ. 11։

(1) Ոչ հնազանդէին զօրքն Պարսից դաշանցն որ հաստատեալ էր ՚ի մէջ Հերակլեայ և Կաւատայ, որով Ուռհա լինէր մասն իշխանութեան Յունաց

(2) Թիլմօղ կամ Թլմուղ, է քաղաք հին և աւերակ ընդ մէջ Ուռհայի և Սրճոյ, և իբր տասն մղոն հեռի ՚ի Ուռհայէ։

զմեզ յաղօթից այսքան բազմութեան վասն ժողովոյն Քաղկեդոնի :» Եւ ՚ի տօնի Ծնընդեանն մտաւ ՚ի տաճարն Սոփի յեկեղեցին ուղղափառաց, և պատուեաց յոյժ զքահանայսն ընծայիւք. և ՚ի ժամ հաղորդելոյն յառաջ գընաց հաղորդիլ, և արգել զնա արհի եպիսկոպոսն Եսայի և ասէ. «Նախ նզովեա զժողովն Քաղկեդոնի և զտումարն Լեւոնի :» Եւ բարկացաւ թագաւորն վասն այնր բանի, և առ զեկեղեցին ուղղափառաց և ետ ՚ի Քաղկեդոնիկսն :

Եւ ինքն եկն ՚ի Մնբէճ և ել ընդառաջ նորա պատրիարքն Աթանաս երկոտասան եպիսկոպոսօք, որ նախ եկեալ յԱնտիոքայ՝ մընային նմա. և անուանք եպիսկոպոսացն են այս. Թումա՝ Թրմուրին, Վասիլ՝ Հեմայ, Սարգիս՝ Արխայ, Յովհաննէս՝ Կուրիայ, Թումա՝ Մնբէճայ, Դանիէլ՝ Խառանայ, Եսայի՝ Ուռհայոյ, որ եկին առ պատրիարքն յառաջ քան զգալ թագաւորին. Սեւերէ (Սեւերոս) Կընշրոյ, Աթանասիոս՝ յԱրապկայ կողման՝ Եպիփանիայ քաղաքի Կիլիկիոյ, Սեւերէ՝ Սամոսատայ : Եւ ընկալեալ զնոսա թագաւորն և նստան ՚ի քննել զերկոտասան օր. և ապա խնդրեաց թագաւորն դաւանութիւն գրով. և նոքա ետուն ըստ սահմանի ուղղափառաց, և գովեաց և գոհացաւ զԱստուծոյ և ասէ. «Այս է ճշմարիտ խոստովանութիւն

Նզովեալ է ժողովն Քաղկեդոնի և տումարն Լեւոնի(1)։” Եւ դրան եպիսկոպոսն իւր հակառակեցաւ նմա, և թագաւորն հրամայեաց կտրել զքիթ նորա. և զպատրիարքն մեծ պատուով արձակեաց։

Եւ յետ աւուրց եկն Հերակլ յԱնտիոք, և ժողովեցան Քաղկեդոնականքն և իշխանք և տուին նմա խորհուրդ և խրատ, թէ “Տարածեալ է դաւանութիւնդ այդ, և մեծն Հռոմ'ի յայդ կայ, և ոչ ընդունեին զքեզ և ոչ կարես յերկարել 'ի թագաւորութիւնդ, եթէ ոչ յայտնապէս յարուցանես հալածանս աղանդոյդ զոր ատեն Հռոմայեցիք։” Եւ պատրեալ զթագաւորն՝ սիրեաց զփառս մարդկան քան զփառս Աստուծոյ, և ետ հրաման այլ մի երեւել առաջի նորա՝ որ ոչ դաւանէ զՔաղկեդոնին, և այսուհետեւ ոչ գոյ դատաստան և իրաւունք՝ որք սպանանէին և կողոպտէին և հալածէին զնոսա։ Եւ մի կաթուղիկէ Եկեղեցի, և մի համարձակութիւն։”

Եւ ժողովեցան 'ի Թէոդուպօլիս և դարձոյց զբազումս 'ի Հայոց յաղանդն իւր 'ի ձեռն Եզրի, զոր կաշառեաց զագահութիւն նորա և խաբեաց զանմտութիւն նորա(2)։ Այլ ոչ հնազանդեցան նմա վանորայքն արեւելից և իմաստուն եպիսկոպոսքն և զբաղում աշխարհս պահեցին յուղղափառութիւն անշարժելիս, մինչեւ յաղթեցին ճշմարիտքն և բարձաւ աղանդն չարութեան ՚ի ձեռն բաքանչելագործ և իմաստուն առն Աստուծոյ Յովհաննու օձնեցւոյն, որ յետ ութսուն և չորս ամաց ապխտաբար հաւանեցոյն Եզրայ, Յովհաննէս օձնեցին կաթողիկոսն Հայոց Մեծաց, պայծառ կարգօք զարդարեաց զեկեղեցի աղօթիւք սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչին և սուրբ որդւոյն իւրոյ (1) :

---

(1) Միւս թարգմանութիւնն այլ ինչ ասացուած բանից տայ կայսեր, որ յարմարագոյն եւս թուի. “Եւ ասէ թագաւորն. բիծ ինչ ոչ գոյ 'ի ձեզ, այլ զմերս պահեցուք։”

(2) Ամենայն պատմագիրք մեր միաբան հաստատեն զա-

նորի բարս և զթուլամտութիւն Եզրի և զագահութիւնն, վասն որոյ ոչ առեալ ընդ իւր զՅովհան մայրավանեցի (մայրագոմեցի), որ աստուածային գրոց բանիբուն ճանաչէր, որպէս ասէ Սամուէլ, և ոչ զեպիսկոպոսն Սիւնեաց զՄաթուսաղայ, զբարեհամբաւեալն իմաստութեամբ և աստուածաբանական հմտութեամբ, այլ զոսա աշակերտն առեալ ընդ իւր գնայ, ուստի և տկարացեալ ՚ի բանս՝ ընդ ունի զսահմանադրութիւնս ժողովոյն Քաղկեդոնի, փոխարէն ընկալեալ ՚ի պարգեւ զաղահանան կողբայ: Սեբէոս, Գլ. ԻԹ:—Ստեփ. Ասողիկ, Գիրք Բ. Գլ: Բ:—Սամուէլ:—Վարդան, յեր. 86:—Կիրակոս, յեր. 31:—Ստեփ. օրպելեան, Գլ. ԻԸ:

(1) Ստեփան Ասողիկ (յեր. 104) համաձայն Միխայէլի ասէ եթէ Յովհաննէս իմաստասէր, զոր փիլիսոփայ կոչէ, այն է Օձնեցին, արար, ասէ, ժողով ՚ի Մանազկերտ, սրբելով յաշխարհէս (Հայոց) զՔաղկեդոնականացն երկաբնակ խոստովանութիւն և այլն, որ յաւուրսն Եզրի մինչև ցայն վայր մնացեալ էր յաշխարհիս Հայոց ՚ի բաժնին Յունաց։ Միքայէլ Չամչեան երկար քննութեամբք բանից ջանայ ցուցանել թէ այս ժողով եղեալ իցէ ՚ի տեղապահութեան Յովհաննու Մանազ-

Իսկ Շիրի թագաւորն Պարսից զկնի ին ամսոյ թագաւորութեան իւրոյ մեռաւ, և թագաւորեաց Արտաշիր որդի նորա երկու ամ. և ապա Շահրվարազն սպան զնա և ինքն թագաւորեաց, և ապահեաց սէր ընդ Հերակլի(1): Իւր Պարտօզմառար ընդ ինքեան զամենս և պատառեցաւ թագաւորութիւն Պարսից, և օգնեաց Հերակլ Խոռխանէի (Շահրվարազ) և սպան զՊարտօզն: Խոռեան ամ մի թագաւորեաց սպանաւ և նա, և

Հերացւոյ՝ որպէս ինքն ասուանէ. և թէ նախորդն Օձնեցւոյ Եզրա կաթողիկոս որ պարտ էր հաստագոյն լինել Քաղկեդոնականաց. ընդհակառակն թշնամի էր նոցա որպէս գրի 'ի պատմութեան Մովսէսի կաղանկատուացւոյ (Հտ. Բ. յեր. 11-18). զի զՆերսէս կաթողիկոսն Աղուանից ժողովով նզովեաց վասն ընդունելոյ զժողովն Քաղկեդոնի: Ասեմք, եթէ զկնի Եզրի ցայն վայր, հաղորդութիւնն զոր ունէին Հայք ընդ Քաղկեդոնականացն՝ էր 'ի բաժնին և եթ Յունաց. իսկ այնոքիկ որ էին 'ի բաժնին Պարսից, պահէին զնախնական դաւանութիւն իւրեանց. վասն որոյ Յովհաննէս խոստանայր 'ի ժողովն անդ զոր կալաւ ընդ Ասորիս, ջանաց խափանել զհաղորդութիւն զոր ընդ Քաղկեդոնականսն ունէին՝ այնոքիկ որ էին 'ի բաժնին Յունաց, որպէս բացայայտ ասէ Ասողիկ:

(1) Հերակլ 'ի կենդանութեան Արտաշրի գրեաց առ Շահրվարազ և խոստացաւ տալ նմա զթագաւորութիւն Պարսից՝ օգնութեամբ զօրաց իւրոց. և 'ի փոխարէն խնդրեաց 'ի նմանէ դարձուցանել առ ինքն զսուրբ խաչն որ կայր 'ի գանձն արքունի: Երթեալ Շահրվարազայ 'ի Տիզբոն սպան զԱրտաշիր և յինքն առ զթագն, և զխաչն դարձոյց առ Հերակլ: Սեբէոս, յեր. 435: Յորմէ առեալ գրէ և Թովմա Արծրունի, յեր. 104—107:

թագաւորեաց Պարամ (1) դուստր Խոսրովու սակաւ աւուրս՝ և մեռաւ։ Եւ թագաւորեաց Զարմանդուխտ քոյր իւր (2)։ Եւ զհետ նորա թագաւորեցին Շահրօրի, Դաբուրան Խոսրով, Պերող, Զրուանդուխտ, Որմիզդ, ազգականք թագաւորին Պարսից, ամենն յերկու ամի վճարեցան (3)։

Եւ Մահմէտ բազում աշխարհաց տիրեալ զեւթն ամ (4), մեռաւ և առ զիշխանութիւնն Բուբաքր (Աբուպէքր) ամս երկու և ամիս հինգ։

Իսկ Հերակլ ՚ի վերայ ամենայն չարեաց իւրոց ՚ի ծերութեան իւրում առ զՄարտինէ զեղբօր իւրում դուստր ՚ի կնութիւն իւր, և ծնաւ ՚ի նմանէ զՀերակլէ անօրէն որդի (5)։

Իսկ զկնի Բուբաքրայ թագաւորեաց Ումար (6)։ Եւ սա բազում զերիս առաքեաց յՐրաբիա։ Եւ սա էառ զՆասր (Նասրա) յՄսրի իշխանէ, և աւերեաց քաղաքս բազումս։ Եւ առաքեաց զօր 'ի Պարսիկս, և գտան զնոսա ամբոխեալս, զի ոմանք զԱղտաձատ (Յաղկերտ) և ոմանք զՈրմիզդ առէին թագաւոր։ Եւ սպանաւ Որմիզդ, և թագաւորեաց Աղտաձատ։ Եւ զօրն Տաճկաց բազում աւար առեալ՝ դարձան և զօրացան 'ի վերայ Պարսից և 'ի վերայ Հռոմայեցւոցն։

---

(1) Այն է ըստ հայ պատմագրաց՝ Բօր կամ Բոր՝ դուստըր Խոսրովու և կին Շահրվարազայ։

(2) Ըստ ոմանց՝ Ազարմիդուխտ կամ Զամիկէ։

(3) Սեբէոս այսպէս ունի զկնի և զկարգ թագաւորացն որ յաջորդեցին մեծին Խոսրովու. Կաւատ, Արտաշիր, Խոռեամ, Բօր, Խոսրով յազգէ Սասանայ, Ազարմիդուխտ, Որմիզդ և Յազկերտ։ Վարդան ոչ յիշէ զԽոսրով և Կիրակոս՝ զՈրմիզդ։ Իսկ ժամանակք տէրութեան սոցա մինչև ցՈրմիզդ են ամք հինգ։

(4) Մահմէտ Ա. վարեաց զիշխանութիւնն ամս տասն պակաս աւուրս յիսուն։

(5) Մարտինէ դուստր էր քեռ Հերակլի։

(6) Ի բնագրին մերում անխտիր դնի Ոմար և Ոմար։

Եւ առաքեաց Հերակլ զեղբայր իւր ըղ-Թէոդորիկէ 'ի վերայ Տաճկաց, և եկն յերկիրն Անտիոքու 'ի գեղն որ կոչի Կօսիտ։ Եւ կայր անդ սիւնակեաց մի աղանդոյն Քաղկեդոնի, Սիմէօն անուն, և գնաց առ նա Թէոդորիկէ և իշխանք իւր. և ասաց Սիւնակեացն. « Ուխտեցէք ինձ որ 'ի դառնալն յաղթութեամբ ջնջէք զոչ ընդունողսն Քաղկեդոնի ժողովոյն, և հաւատամ ես թէ տացէ ձեզ Աստուած յաղթութիւն։ » Եւ երդուան նմա, և ասացին թէ՝ « Եւ մեք ունիմք պատուէր 'ի թագաւորէն սատակել զնոսա և կորուսանել։ » Եւ ոմն իշխան ուղղափառ յոյժ տրտմեցաւ, զի գիտաց եթէ հասեալ է 'ի վերայ նոցա բարկութիւն յԱստուծոյ։ Եւ ելեալ գնացին մեծաւ փքացմամբ, և 'ի ցասմանէն Աստուծոյ հարան և դարձան 'ի փախուստ յոյժ սակաւք, և այլն անկաւ 'ի սուրն Տաճկաց և առաւ ամենայն *պատրաստութիւն նոցա: Եւ եղբայր թագաւորին մաղապուր եղեալ և յամօթոյն չիշխէր յակն անկանել մարդկան: Եւ դարձեալ զօրաժողով արարեալ Հերակլեայ 'ի ձեռն Սըկլարայ զօրապետի*(1)*, և հանեալ զորդին Խուքանէ (Խուեմոյ) և առաքեաց զնոսա 'ի վերայ Տաճկաց եւթանասուն հազարու, և երթեալ կռուեցան առ գետոյն Դամասկեայ. և յաղթեցան Յոյնք, և անկան 'ի նոցանէ քառասուն հազար հեծեալ*(2)*: Եւ որդին Խուքանէ մտեալ 'ի Հեմս առ Օմար՝ տալ նմա զօր երթալ 'ի Պարսս և հնազանդել նմա զՊարսս. այլ զի կային առ Օմար դստերք Խոսրովու թագաւորին Պարսից 'ի գերութեան, ասացին ցնա. «Որդի ապստամբի է, և երթայ որ ընդդէմ քո թագաւորէ. մի հաւանիր:» Եւ առաքեաց Ումար և սպան զնա խաչիւ մահու: Եւ յետ այնորիկ առ զԴամասկոս*(3) և զերջանիկ պաւատոն և զքաղաքն, և զօրացաւ յոյժ :

---

(1) *Միւս թարգմանութիւնն չունի զանուն Սալար զօրավարի: Թէոփանէս և Նիկեփոր պատմիչք Յոյն, յիշատակեն 'ի սմին ժամանակի 'ի ծառայութեան կայսեր լինել և Թէոդորոս Ըշտունի և Վահան կամսարական որդի Սմբատայ՝ զօրավարութեան պաշտօնիւ: Իսկ անուանդ Սկլար թերեւս իցէ Սալար, որ նշանակէ զօրավար:*

(2) *Սեբէոս պատմէ զայս պատերազմ, և զտեղի ճակատամարտին ասէ լինել յայնկոյս Յորդանանու և ոչ առ Դամասկեայ գետովն. (յեր. 166):—Ղեւոնդ Երէց, տպ. փարիզու, յեր. 21: Թովմա արծրունի, (յեր. 113):*

(3) *Դամասկոս առաւ յամի 634, ձեռամբ Հալեդայ և Աբու—Օպէիդայ:*

Յայսմ ժամանակի ելեալ Սադն (1) զօրավարն Տաճկաց՝ 'ի յԱթրաբայ, և եհար զբանակ խուր 'ի վերայ Բուբար քաղաքի: Եւ լուեալ Եզդաճառ Թագաւորն Պարսից, և եկն բանակեցաւ ընդդէմ նորա 'ի վերայ Նիփատայ. և յետ այնորիկ եղեւ պատերազմ սաստիկ, և յաղթեցին Տաճիկքն Պարսից, և փախստական տարան զնոսա մինչեւ 'ի Կատիզբոն, սակաւք և անզէնք 'ի Տաճկաց՝ զբազումս և զզինեալս 'ի Պարսից. մինչ զի՝ ոմն իշխան 'ի Պարսից, սպառազինեալ յոյժ, երթայր փախստեայ առաջի մերկ և անթամբ ձիաւորի Տաճկի, և բազում անգամ զանայր և հարկանէր 'ի վերայ սրով Տաճկին և ոչ բանէր նմա. և մինչ երթայրն, հանդիպեցաւ իշխանին բահ ցցեալ 'ի ճանապարհին, և փորձով եհար զբահն, և թափ անցոյց ընդ նմա, և գիտաց թէ յԱստուծոյ է, և անկաւ յերկիւղէն և սպանաւ 'ի մերկ Տաճկէն և կողոպտեցաւ: Եւ ոմանք ասեն, թէ պատմեաց Արաբիկն թէ՝ «Կուան(այսպէս ձիոյ) կայր մի կայր 'ի դրապանս, և տասն անգամ ձգեցաւ նետն և դիպէր յայն, որ և ինձ ինչ ոչ մեղանչէր։"

---

(1) Սադ էր որդի Մելիք Ապու—Վաքքասայ. որ հրամանաւ Ոմարայ չոքաւ 'ի պատերազմ ընդդէմ Պարսից յամի 636 մերձ 'ի Տիզբոն, և զօրավար բանակին Պարսից էր Ռոստամ իշխանն Ատրպատականի՝ որդի Խուռոխ Որմզդի, զոր յիշատակէ և Սեբէոս, (յեր. 159):

Եւ յաւուրսն յայնոսիկ եղեւ տօն վկայիցն Սիմէօնի, և ժողովեցան անդ տօնողք. և իմացեալ Տաճկացն, գնացին և կոտորեցին զնոսա։ Եւ բազումք գայթակղեցան, թէ Աստուած ընդէ՞ր մատնեաց, և զայն ոչ իմանան՝ թէ սահման առաջին տօնողացն բարձաւ. զի նորա պահօք և արտասուօք տօնէին, և այժմ ուտելով և արբեցութեամբ. յորս ոչ հաճի Աստուած, և 'ի մեղս և յոչ աստուածպաշտութիւն համարեալ է այնպէս տօնեալն։

Յետ այսորիկ եկն Աբուճաառ 'ի Տիգրիս գետ. գնացին և Տաճիկքն. և յորժամ տեսին զբազմութիւն նորա Պարսիկքն, փլուցին զկամուրջն։ Եւ ասեն Տաճիկքն. "Եկայք անցցուք, զի Աստուած որ օգնէ մեզ 'ի ցամաքի, օգնէ մեզ և 'ի ջուրս։" Եւ անցին՝ և մի 'ի նոցանէ ոչ ապականեցաւ, և հարին զՊարսիկքն և փախուցին։ Եւ Աբուճաառ չորից անգամ եկն 'ի վերայ Տաճկաց և յամենայնն յաղթեցաւ. և ապա իմացաւ եթէ հասեալ է նոցա կատարածն, և փախեաւ գնաց 'ի Սիկխատան յերկիրն Սարագանի, 'ի սահմանս Թուրքաց, զոր Սագաստանն կոչեն. և թաքեաւ անդ ամս հինգ, և սպանաւ 'ի Թուրքացն (1)։ Եւ այսու օրինակաւ բարձաւ թագաւորութիւնն Պարսից, տեւեալ ամս չորս հարիւր ութ և տասն, որ կոչէրն Սասանեայ. և առին Տաճկունք (Արաբացիք) զիշխանութիւն Պարսից։

Իսկ Հերակլ ՚ի զօրանալն Տաճկաց սկսաւ յԱնտաքեայ մինչեւ ՚ի Կոստանդնուպօլիս բազում կողոպուտս առնել ՚ի քրիստոնէից, զի ասէր՝ լաւ է մեզ քան Տաճկաց։

Իսկ Ոմար գնաց յԵգիպտոս, և եղ ընդդէմ նորա եպիսկոպոսն Կաւրոս, և խոստացաւ տալ նմա յամենայն ամի երկու հազար դահեկան՝ զի մի՛ մտցէ նա յԵգիպտոս, և դարձաւ։ Եւ Հերակլ բարկացաւ և եհան ըզԿաւրոս յեպիսկոպոսութենէն, և առաքեաց զօրագլուխ մի Մանուիլ անուն, Հայ ազգաւ, պահել զերկիրն. և յորժամ գնացին հարկաւորքն զի առցեն զհարկն, ասաց. “Ես չեմ Կաւրոս որ տամ ձեզ ոսկի. զի նա փիլոն ունէր և ես թուր։” Եւ շրջեցան զօրքն Տաճկաց յԵգիպտոս և առին զԵգիպտոս, և դարձաւ. եկին յԵրուսաղէմ Ոմարն. և եկն առաջի նորա Սոփրինոս (Սոփրոնիոս) եպիսկոպոսն Երուսաղէմի, և ետես զՈմար զի զգեցեալ էր հին հանդերձ և հին մուշտակ, և եբեր նմա պատուական հանդերձ, և աղաչէր ըզնա զգենուլ, և նա ասէր. "Ես Աստուած 'ի ձեռս իմ զամենայն գանձս Պարսից 'ի Տիսբոն, և նոյնպէս զՀռոմայեցւոցն և զԴամասկեայ և զամենայն գաւառաց Եգիպտացւոց, և ոչ փոխեցի զհանդերձ աղքատութեան իմոյ՝ զի մի՛ մոռացայց զիս և հպարտացայց." և ոչ առ 'ի նմանէ: Եւ ետ եպիսկոպոսին զիշխանութիւն աշխարհին. և խնդրեաց 'ի նմանէ եպիսկոպոսն հանել ըզՀրեայսն յԵրուսաղեմէ, և ետ 'ի հրամանս նորա (1): Եւ ետ հրաման շինել 'ի Տաճարին տեղն մզկիթ նմա: Եւ անտի եկեալ յԱսորիս, և Յովհաննէս զօրապետ Հերակլի որ կայր յՈւռհա, գնաց առ նա 'ի Կընշրի, և ետ նոցա հարկս հազար դահեկան հարկ տարւոյ միոյ, զի այլ մի՛ մտցեն 'ի Միջագետս յարեւելից կողմանէ: Եւ լուաւ Հերակլ և բարկացաւ և տարեալ զՅովհաննէս ետ 'ի կապանս. զի Աստուած որ կամէր հանել 'ի նըմանէ զաշխարհն, ետ նմա միտս դառն և հպարտ: Եւ 'ի գալ տարւոյն եկեալ մտին

---

(1) Սեբէոս (յեր. 168—169) ասէ՝ փախեաւ ՚ի զօրս հարաւոյ. և (յեր. 214—215) ասէ՝ փախեաւ ՚ի զօրս Թետալաց և ՚ի նոցունց սպանաւ։—Ղեւոնդ, Գլ. Բ. յեր. 23։—Թովմա արծրունի, (յեր. 115)։

---

(1) Ի հրովմարտակին զոր ետ Օմար՝ Հայոց, ոչ միայն յիշատակի արտաքսումն Հրէից 'ի սուրբ քաղաքէ, այլ և ոչ ոք, ասէ, 'ի Յունաց որ 'ի շրջակայս Երուսաղէմի իցեն, 'ի գալ իւրեանց յուխտ, մի՛ բնակեսցին 'ի քաղաքին. քանզի Յոյնք ապըստամբք համարեալ էին:

՚ի Միջագետս Տաճկունք. և ՚ի գալն յՈւռհա եկին ընդ առաջ եկեղեցականքն սիրով. և իմաստութեամբ իւրեանց հանեին զզօրականքն սիրով՝ զՀռոմայեցւոյն որ անդ էին: Եւ տիրեցին Տաճիկք Միջագետաց: Բայց Թլմօզն և Տարս ոչ հնազանդեցան սիրով, և առին զնոսա բռնութեամբ և կոտորեցին զզօրսն որ ՚ի նոսա: Եւ յամին յայն եդին գլխահարկ ամենայն քրիստոնէի որ ընդ իւրեանց իշխանութեամբ:

Եւ յայսմ ամի մեռաւ Հերակլ՝ թագաւորեալ ամս երեսուն և ամիսս հինգ: Եւ թագաւորեաց Կոստանդիանոս որդի նորա ամիսս չորս: Եւ ունէր Հերակլ երեք որդի, միոյն անունն Կոստանդիանոս (Հերակլ—Կոստանդին) և միւսոյն Երակլես, և կրսերոյն Երակլեակ: Եւ Մարտինէ կինն Հերակլեայ դեղով սպան զԿոստանդիոս (Հերակլ—Կոստանդին), և թագաւորեցոյց զկրսեր որդին Երակլեակ, և դժուարեալ իշխանքն սպանին զԵրակլեակ և եդին թագաւոր զԿոստաս զորդին Կոստանդիոսի՝ զթոռն Հերակլեայ (1):

Իսկ Ոմար յետ յաղթութեանն Պարսից

---

(1) Հերակլեայ յառաջին կնոջէ ծնաւ Հերակլ—Կոստանդին, և ՚ի Մարտինեայ յերկրորդէն ծնան Հերակլեակ, Դաւիթ և Մարինոս. իսկ Կոստաս, որ և յանուն հօրն Կոստանդին կոչեցաւ, էր թոռն առաջնոյն Հերակլեայ: Սեբէոս, յեր. 164:

և Հռոմայեցւոց՝ սպանաւ 'ի ծառայէ միջէ որ աղաչէր առնել նմա դատաստան, և նա յամեցուցանէր. և յաւուր միում յորժամ աղօթէր Օմար, եհար զնա դանակաւ, և մեռաւ՝ Թագաւորեալ ամս երկոտասան։ Եւ առու զիշխանութիւնն Օթման. և էր սա ագահ և անցանէր զսահմանաւ առաջնոցն, և խորհեցան իշխանքն սպանանել զնա. և իմացաւ Օթման և աղաչեաց զի ներեսցեն նմա, և կացցէ 'ի սահմանի առաջնոցն, և թողին զնա։ Եւ եդին զօրագլուխ զՄաւի (1). և եկն Մաւի զօրօք 'ի Կեսարիա Ստրատոնեան (2), և առ զնա և կոտորեաց զՀռոմայեցիսն որ 'ի նմա։ Եւ 'ի հինգ ամին Կոստանդիանոսի յաւարի հարեալ զերկիրն՝ գնաց։ Եւ Թագաւորն Կոստաս ժողովեաց զօրս և արար բաժինս երկուս, զմինն ետ 'ի ձեռս Հայկազնոյ ումեմն, որում անունն Դաւիթ էր (3), և զմիւսն 'ի ձեռս Վաղինեայ(1), որ գնաց ընդ Կիլիկիա և սպանաւ 'ի Տաճկացն որք եկեալ էին հնազանդել զԿիլիկիա, և ելին ընդդէմ նորա և սպառեցին զՅոյնսն, սակաւ ինչ թողեալ փախստեայս։ Եւ Դաւիթ գնաց վերին կողմանսն, և զօրքն Հռոմայեցիք որք ընդնմա, ոչ ինչ պակաս քան զՀագարացիսն գործէին կողոպտելով զքրիստոնեայսն, և առնուին ոսկի և արծաթ և հանդերձս, այլ և զկանայս խայտառակէին յանդիման արանցն։ Եւ ոմն գնացեալ առ Դաւիթ՝ ասաց. “Ընդէ՞ր տաս գործել զօրացդ այդպիսի չարիս. զի՞նչ պատասխանի տաս առաջի Աստուծոյ։” Իսկ նա զայրացեալ սաստեաց Յունականացըն, և ասէ. “Այս է պատճառ քրիստոնէից կորստեան, զի ոչ ինչ է խտիր ընդ մեզ և ընդ անհաւատոն գործովք և լրբութեամբ։” Եւ առեալ զնոսա դարձաւ 'ի Կոստանդինուպօլիս։

---

(1) Մաւի կամ Մաւիա (Մուավիէ). էր որդի Աբու—Սոֆիանայ իշխանին Սիւրիոյ.

(2) Կեսարիա Ստրատոնեանն էր յերկրին Պաղեստինացւոց, որ և կոչի Կեսարիա Պաղեստինի. զոր շինեաց Հերովդէս. և կոչէր յառաջագոյն տեղին՝ Աշտարոն Ստրատոնեան, զոր ինքն 'ի պատիւ Օգոստեայ կայսեր անուանեաց Կեսարիա. և է այժմ աւերակ և երեք ժամաւ հեռի 'ի Յոպպէ է։ Յովսեպոս, Պատմ. պատերազ. Հրէից. Գիրք Ա. Գլ. ԺԶ.

(3) Այն է Դաւիթ Սահառունի, զոր Հերակլ Ա արար Կիւրապաղատ 'ի վերայ աշխարհին Հայոց յամի 631. և զնա յաղթեաց Թէոդորոս Ռշտունի յամի 636։ Իսկ Սեբէոս՝

Յայսմ ժամանակի Պատրիկն Գրիգոր ապստամբեաց 'ի Ափրիկէ. և յանկարծ մտին Տաճիկքն յԱփրիկէ և գերեցին, և Գրիգոր

Թուման անուն զմի իշխան, ասէ, արձակեաց 'ի Հայս. (յեր. 179)։

(1) Վաղէնտինիանոս, քանզի օգնեաց Կոստասայ որ և Կոստանդ, ունել զաթոռն կայսերութեան, կարգեցաւ 'ի նմանէ զօրավար։ Զսա Արշակունի լինել ասէ Սեբէոս, յեր. 175։ Եւ սպանաւ յաղմկի ուրեք յամի 644, կամ ըստ Սեբէոսի՝ արկաւ 'ի հուր 'ի ժողովրդոցն՝ յետ գլխատելոյ զնա, (յեր. 179)։

հնազանդեալ գնաց 'ի Կոստանդինուպօլիս :

Եւ 'ի սոյն ժամանակս հրամանաւ Մաւեայ եկին հազար և եւթն հարիւր նաւ յԵգիպտոսէ, և առեալ զնոսա Մաւի՝ գնաց 'ի Կիպրոս կղզի և խնդրեաց 'ի նոցանէ հարկս. և ամրացան 'ի քաղաքս և ոչ կամեցան տալ. և յարձակեցաւ 'ի վերայ նոցա սուրն Հագարու և կոտորեաց բազմութիւն յոյժ : Եւ չոգաւ 'ի քաղաքն Կոստանդիա որ գլուխ էր կղզւոյն, և լցեալ կայր մարդով և գանձիւք, և նստեալ շուրջ զնովաւ՝ էառ զնա և կոտորեաց և եղից զնա աւերակ. և արար պղծութիւնս յեկեղեցի նոցա 'ի կաթուղիկէն զոր շինեալ էր սուրբն Եպիփան(1), փոխանակ զի ոչ պահեցին զուղղափառ հաւատն Եպիփանու և ոչ զսահմանեալ կանոնս նորա և զգործս : Եւ լցան զօրքն Հագարու յաւարէ նոցա, և տուեալ մասն եկեղեցին Եգիպտոսէ՝ գնացին յերկիրն իւրեանց :

Եւ յայնմ ժամանակի գրեաց սուրբն Աթանաս պատրիարքն Ասորւոց ուղղափառաց 'ի սուրբն Քրիստափոր (Գ.) կաթողիկոսն Հայոց, զի խնամ տարցի կողմանցն Պարսից և Աթուրացւոց (Ասորւոց) քրիստոնէից՝ զգուշացուցանել զնոսա յաղանդոյն Նեստորի և Քաղկեդոնացւոյն. «Քանզի գտաք մեք, ասէ, թուղթ զորբոյն Մարութայի, եթէ որպէս շնորհօքն Աստուծոյ ապրեցայք ազգդ Հայոց ի Բարսումայէ ապականչէ (1)։ Յորում թըղթի գրեալ կայր այսպէս, եթէ Բարսումա մի էր յաշակերտացն Նեստորի և կայր ի Մրծբին, և յորժամ լինէր ժողովն Եփեսոս առ Թէոդոսիւ, ոչ գնաց Բարսումա ի ժողովն, այլ ասաց՝ եթէ «Ես ընդ իշխանութեամբ Պաւեայ կաթողիկոսի եմ զոր ձեռնադրեալ են Հայք ի Պարսից աշխարհէն»։ Եւ զի առաքեալ էին Եփեսոսէ ի Պարս խնդրակս Պաւեայ և այլոց եպիսկոպոսացն որ ընդ ձեռամբ նորա էին, և Պաւի գրեալ թուղթ ուղիղ դաւանութեան և ի ձեռն երկու աբեղայի առաքելոյ յԵփեսոս։ Եւ գրեալ էր ՚ի Թուղթն թէ՝ «Մի՛ մեղադրէք զմեզ վասն չգալոյս, զի ընդ իշխանութեամբ անօրինաց կամք, և երկեաք եթէ պատճառս կարկատեն ՚ի վերայ մեր, և սուրն սպանող հարցն մերոց գայցէ և զմեզ. այլ զոր ինչ սահմանէք ուղիղ դաւանութիւն, հաւանիմք մեք։» Եւ Թղթաբերքն առ գայլ Բարսումա եկին ՚ի Մծբին, և տեսեալ զԹուղթն՝ էառ և դարձոյց զնոսա և ասէ. «Ես առնիմ զԹուղթըս, դուք դարձարուք և գնացէք զի մի՛ կարծիս խռովութեան տայք Հռովմայեցւոցըն։» Եւ նոքա պարզմտութեամբ դարձան, և ոչ մեղադրեաց նոցա կաթողիկոսն, այլ ասաց՝ «Բարիոք արարիք լսելով եղբօրն մերոյ։»

---

(1) Կոստանդիա, որ և Սալամինա, և արդ կոչի ըստ Տաճկաց Թուզլա : քաղաք է ծովեզերեայ, յորում շինեաց Եպիփան զհին եկեղեցին և մեծագոյն 'ի ժամանակս եպիսկոպոսութեան իւրում այնր քաղաքի : Վ. արք սրբոց, յեր. 271 :

---

(1) Այն է Բարծումա եղեռնագործ չքմեղ աշակերտն Նեստորի, որոյ ուսումն մոլար վարդապետութեանն հասեալ և ի Հայս յաւուրս Քրիստափորի Ա. գրեաց կաթողիկոսն առ Բաբուէ (Պաւլէ), որ էր կաթողիկոս քրիստոնէիցն՝ որ ի Պարս և յայլ տեղիս, առ ի զգուշացուցանել զնոսա յաղանդոյն Բարծումայի։ Իսկ սա զձեռամբ ածեալ զթուղթն, որպէս և զայն զոր Բաբուէ գրեաց առ եպիսկոպոսունս արեւմտեայց և առ այլն առաքեալ զայնս Պերոզի, բազում ինչ ատութեամբ խօսեցաւ զՀայոց և զԲաբուէ իբրու եթէ ապստամբել խորհիցին ի տէրութենէ, և Պերոզ ետ սպանանել զԲաբուէ. իսկ Հայոց ոչ ինչ կարաց Բարծումա հասուցանել չարիս այլ և ի բաց մերժեցաւ անտի ապաւինակեօք Ներշապուհ իշխանին Արծրունեաց։ Թովմա Արծրունի, յեր. 88։ Տես և ի պատմութեան Միքայէլի Չամչեանց. հատ. Բ. յեր. 152-155։

» Եւ յորժամ իմացաւ Բարսումա՝ թէ նզովեցաւ Նեստոր, բարկացաւ և գնաց առ Թագաւորն Պարսից և ասէ ցնա. «Այր մի ՚ի Կոստանդինուպօլիս, առաջնորդ եկեղեցւոյ, խորհէր հանապազ բարիս առ Պարսիկս, և արգելոյր զՀռովմայեցիսն ասպատակել ՚ի Պարս, և վասն այսր պատճառի առաքեցին զնա յաքսորս, և զսահմանեալսն ՚ի նմանէ զկարգն խոտեցին և նզովեցին։ Եւ կաթողիկոսս այս (Պաւլի) լրտես է առ ձեզ Հայոց և Հոռոմոց, և ահա Թուղթս որ գըրեալ է զձեզ անօրէնս և արիւնասէրս։» Եւ հաւատաց նմա Թագաւորն։ Եւ խընդբեայ 'ի նմանէ (Բարսումա) և ասէ. «Տուր ինձ իշխանութիւն 'ի վերայ ամենայն քրիստոնէից որ ընդ քո իշխանութեամբ են, զի հաստատեցից զկրօնս Նեստորի բարեկամի Պարսից, և յանհաւանելոյն ժողովեցից քեզ զանձս:» Եւ ետ նմա իշխանութիւն և զօրք: Եւ ասէ. «Տուր 'ի ձեռս իմ զկաթողիկոսս զայս:» Եւ ետ նմա հրաման առնել զոր ինչ կամի. և գնաց առ կաթողիկոսն և ասէ ցնա. «Դաւանեա զՆեստորին.» և նա ասաց. «Լաւ այ որ նզովեցաւ Նեստոր, և եղեցի նզովեալ:» Եւ կորեաց զբերան նորա: Եւ լուաւ Թագաւորն և սրտմեցաւ, և կոչեաց զԲարսումա և ասէ. «Ընդէ՞ր արարեր զայն:» Եւ ասաց՝ «Զի հայհոյեաց զքեզ:» Եւ ասէ Թագաւորն. «Թէ այդպէս է, գնա և զգլուխն այլ կորեա,» և չոգաւ կորեաց:

» Եւ եկն 'ի Բաղդադ և հնազանդեաց Նեստորի զնոսա, և անտի գնաց 'ի Նինուէ. և կալաւ զՄարութաս արհի եպիսկոպոսն երկոտասան եպիսկոպոսօք և իննսուն երիցամբք և ասէ ցնոսա. «Կամ հաղորդեցէք զիս, կամ հաղորդեցարուք յինէն:» Եւ նոքա ասեն. «Ոչ տամք զսրբութիւն շան, և ոչ առնումք զսրբութիւն 'ի շանէ:» Եւ նա զայրացեալ սպան զքահանայսն և զեպիսկոպոսունսն, բերեալ 'ի Մծբին եդ 'ի բանտի 'ի տան Հրէի միում, և յետոյ քարկոծել ետ զօրացն, և ապա կախեաց զփայտէ, և երևեցաւ նշան երկնաւոր 'ի վերայ նորա, և հաւատաց Հրէայն և մկրտեցաւ։ Եւ եղ անուն և կամեցաւ մտանել 'ի Հայք, և իմացեալ Հայոց առաքեցին և հալածեցին զնա և սպառնացան նմա, թէ կրկնէ զգալն՝ հրով մաշել ըզնա և զզօրսն իւր։ Եւ առաքեաց Բարսաւմս 'ի Պարսս, և գրեաց առ Թագաւորն՝ թէ ապստամբեցին Հայք 'ի քէն։ Եւ առաքեաց Թագաւորն Պարսից 'ի Հայս առ զօրապետսն՝ զի հրամանաւ Թագաւորին իւրեանց եկեսցեն 'ի Պարսս՝ թէ Թագաւորն ոչ կամեսցի գալ. և առ Թագաւորն նոյնպէս գրեաց գալ և պատասխանի առնել վասն հաւատոյ։ Եւ գրեաց Թագաւորն Հայոց պատասխանի և ասէ. «Մեք քեզ վասն հաւատոյ չպարտիմք ինչ, ոչ գալ և ոչ պատասխանել. բայց թէ երթաս 'ի վերայ բարբարոսաց, մեք երթիցամք և խաչիւ գամք. այս է քո երդումն և մերն։ Ապա թէ ոչ կամիս կալ 'ի բանն քո, և ոչ մեք կամք 'ի բանն մեր։(1)» Եւ լռեաց Թագաւորն։

---

(1) Միխայէլ պատմագիր անգէտ թուի լինել պատմութեան Հայոց, քանզի 'ի սմին ժամանակի, այն է՝ առ Պերոզիւ, մարզպանք կռուափարէին զՀայս 'ի կողմանէ Պարսից, և երևելի էր յայնժամ Վահան Մամիկոնեան։ Դարձեալ զպայման դաշինն եդեալ 'ի մէջ Պերոզի և նախարարացն Հայոց, ոչ ուրեք գտանեմք առ պատմագիրս մեր աւանդեալ. Պերոզ 'ի թախանձելոյ Աշուշայի Վրաց բդեշխի և Հզօր

”Եւ սուրն սատանայի և երկրորդ ջրհեղեղն աշխարհի այսու պատճառաւ ոչ եմուտ ՚ի Հայս, այլ դարձաւ ՚ի վերայ Ասորւոց վասն բազում մեղաց մերոց։ Եւ արար երեք ժողով, ՚ի Կասիղեան, ՚ի Գադրի, ՚ի Գրումիա, և գրեաց զանօրէնութեան (1) սահմանն Նեստորի՝ կանոնս։ Եւ զոչ հաւանեալսն սատակէր անողորմաբար, կամ նահատակիլ արժան է ասել ճշմարտապէս՝ պայծառագոյն պսակաւ քան որ ՚ի կռապաշտից կատարեցան։ Քանզի՝ որպէս լսեմ, եւթն հազար և ութ հարիւր եկեղեցական եպիսկոպոս և երէց և ուխտաւոր կատարեցան ՚ի նմանէ, և աշխարհականացն թիւ ոչ գոյ. և վասն այսորիկ աղաչեմք զձեր սրբութիւնդ, զի լաւ կարի երթայ ՚ի ձեռն բժիշկ ուր յաճախեաց հիւանդութիւնն, կատարելով զԱռաքելոյն թէ՝ “Դուք որ կարող էք, զտկարութիւնս տկարացն բարձէք.” զի մի պակասեսցի ցորեանն սուրբ ամենեւին հեղձեալ յորոմանցն բազմութենէ։ Աղաչեմք զամենայն աթոռակիցս ձեր մերովք աթոռակցօքս։ Ողջ լերուք ՚ի վէմս հաւատոյ ուղղափառութեան ՚ի Տէր մեր Յիսուս Քրիստոս։”

Ի թուին Ասորւոց ՋԿԵ (965) և Հայոց

Շապհոյ Պարսկի և այլոց միջնորդաց հետզհետէ եթող յազատութիւն զնախարարսն առանց թէութեան, յամի 466։

(1) Յօրինակին՝ զանօրէնութեան։

ՂԲ (92) (1) Կրկին աւերեցաւ Կիպրոս ՚ի Տաճկաց. զի լուան թէ դարձեալ ժողովեցան ՚ի նա բնակիչք, և գնաց Բզուր (Աբու-էլ-Ճավուար) զօրավարն Տաճկաց (Արաբաց) և արար զնա գետնափոր և եղև ծախամուտ, և ինչ ՚ի նմա ոչ եթող ստացուածս, բայց սակաւ մարդիկ, յորոց երկուսն առեալ եթող անդ։ Իսկ Մաւի գնացեալ ՚ի Ռոդոն կղզի և առ զնա և աւերեաց. և անտի գնացեալ ՚ի Կրետէս, առ զնա փութանակի. նմանապէս և զՄարութ և զԿու (2), որ են կղզիք ամրագոյնք, առեալ և (եւս) քակել զնոսա։ Իսկ ՚ի Ռոդոս կղզի տեսեալ կռապատկերն պղնձի մարդակերպ, որ մի էր յեւթն հրաշիցն, զոր քակում պարանօք և նգօք շրջեցին. և գտաւ չափ երկայնութեան նորա հարիւր և հինգ ոտըն, և վառեալ ՚ի ներքոյ հուր՝ թուլացան շամփուրքն և քակեցին և կապեցին երեք հազար բեռն. և գնեաց զնոսա Հրեայ մի ՚ի Հեմսայ։

Յայսմ ժամանակի եղեւ սով սաստիկ, մինչև կերան և ընդ այլ գարշելիս՝ զմիմեանս։ Եւ ՚ի Գերմանիկէ, որ է Մարաշ, այր մի անունն Եղիշէ՝ բնակէր յայրի մի, և զինի ավասն ոչ եթող զանօրէնութիւնն, այլ գողանայր մանկունս և ուտէր. և կարծէին զնա մինակեաց, և ինքն մխիթարէր զծնողսն մանկանցն. և յետ ուտելոյ նորա յիսուն և մէկ մանկունս, յայտնեցաւ և կախեցաւ։ Եւ 'ի այն ժամանակս հողմ ուժգին հիւսիսային եկեալ փլոյց բազում եկեղեցիս և բրգունս բազումս, և քակեաց անտառս բազումս։

---

(1) 965 թիւն Ասորւոց պատասխանէ 102 թուոյն Հայոց։

(2) Մարութ է Արադոս կղզին, և Կու է Կով կղզի յիշատակեալն ՚ի Գործս Առաքելոց (ԳԼ. ԻԱ. 1), որ ՚ի Տաճկաց կոչի Գոզ ադասը։

Եւ յաւուրս Կոստանդեայ որդւոյ Հերակլեայ երեւեցաւ այր մի 'ի Կոստանդնուպօլիս Մաքսիմոս անուն, որ խօսեցաւ հերձուածս 'ի Քրիստոս՝ երկուս կամս և երկուս ներգործութիւնս, և ոչ ընդունեցաւ, բայց 'ի Հռոմ ոչ արհամարհեցաւ յորժամ լուան(1)։ Իսկ յայսմ ժամանակիս յաւուրս Կոստասի Թոռինն Հերակլեայ, 'ի Կոմանս Հայոց կոմս մի անուն Թէոդորէ խնդրեաց 'ի պապէն Հռոմայ, որում անուն էր Ագաթոն, զի վասն այսորիկ արասցէ քննութիւն, զի չնջեն ասէ ոմանք վասն երկու կամաց և երկու ներգործութեանց։ Եւ Ագաթոն արարեալ ժողով հաստատեաց զհաւատն Մաքսիմոսի յետ հարիւր քսան և հինգ ամի ժողովոյն Քաղկեդոնի, զի ասացին թէ՝ բնութեանն յատուկ կամք պիտի և ներգործութիւն, և զայս ոչ զգացին յիմարեալքն այն, թէ և անձն այլ պիտի առանձինն և յատուկ՝ որ է Նեստորին (1)։

---

(1) Մաքսիմոս էր երէց վանացն Խրիսոպօլսոյ. որ խոստովանէր 'ի Քրիստոս երկուս կամս, վասն որոյ 'ի ժողովի ուրեք գումարելոյ 'ի Կոստանդինուպօլիս յամի 675. դատապարտեցաւ և աքսորեցաւ 'ի Լազիկէ։ Զկնի հնգից ամաց (680) եղեւ ժողովն Կոստանդինուպօլսի, յորում որոշակի ընկալան դաւանել 'ի Քրիստոս երկուս կամս և երկուս ներգործութիւնս ըստ երկուց բնութեանցն, և դատապարտեցին զմիակամադաւանսն։

Ի թուին Յունաց ՋԿԶ (966) և Հայոց ՂԳ (93), և յերեսուն և եւթն ամի Արաբկաց թագաւորութեանն, և 'ի տասն ամի Կոստասի և յինն ամի Օթմանայ. Մաւի զօրապետն կազմել էր 'ի Տրապօլիս յոյժ բազմութիւն նաւաց՝ երթալ 'ի Կոստանդինուպօլիս։ Եւ էին ընդ վերակացուն երկու զինուորք՝ որդիք հաւատացելոց, (որք) հանին զՓրանգ ծառայսն որ կային անդ, և սպանին զամենայն զզօրսն և այրեցին զնաւսն առհասարակ, և ինքեանք եղեալք 'ի մի նաւոյն՝ գնացին 'ի Հռոմ (2)։ Եւ զայս լուեալ Մաւեայ՝ արար այլ պատրաստութիւնս նաւաց, և կազմեաց զօրս և ետ 'ի ձեռն Պուլղուրի (Պուլ-Էլ-Հաւուար) երթեալ 'ի Կոստանդինուպօլիս։ Եւ զայս լուեալ Կոստասի, եկն 'ի Փիւնիկէ, որ է Աքայ (3) և էր ընդ նմա Թէոդոսիկ եղբայր իւր բազմութեամբ նաւաց ընդ ծով եկեալ։ Եւ յորժամ գիտացին Հոռոմայեցիքն, առեալ զնաւն ելին ընդդէմ նոցա. և յայնմ գիշերի որ վաղիւն լինելոց էր մարտն, կոչեաց Կաւատ Թագաւորն երազահան, և ասէ. « Տեսանէի զիս յերազի ՚ի Թեսաղոնիկէ։ » Եւ ասէ երազահանն. « Լաւ թէ չէիր ննջեալ, ոչ գրեր յայն տեղին անուան. զի Թեսաղոնիկէ յաղթութիւն այլոց թարգմանի (1)։ » Եւ արհամարհեաց ըզբանս նորա Թագաւորն, և եղեւ պատերազմ ՚ի վերայ ծովուն սաստկագոյն՝ մինչև փոշին որպէս ՚ի ցամաքի պղտորէր զօդն, և յաղթեցաւ Կաւատ և հազիւ զերծաւ սակաւուք. և թիւ անկելոցն զօրս գտին յերես ծովուն՝ քան երեք հազար արանց։ Եւ կամեցան դնալ Հոռոմայեցիքն ՚ի Կոստանդինուպօլիս և ելին Պողոմէոս հրամանաւ Թագաւորին և խոստացաւ տալ հարկս և առեալ, և գնացին Հոռոմայեցիքն յերկիրն Սաւրայցւոց. և ելին Պողոմէոս և եբեր հարկս երեք տարւոյ, և Դրիւսոր զորդին իւր պատանդ, և գնաց (2)։

---

(1) Այս ժողով եղեւ յաւուրս Կոստանդնի Պողոնատոսի յամի 680, այն է զկնի երկերիւր քսան և ինն ամաց ժողովոյն Քաղկեդոնի, զոր թերեւս թարգմանիչք սխալեալ են։

(2) Սեբէոս, յեր. 185։—Ստեփան Ասողիկ, յեր. 123—124։—Վարդան, յեր. 98։

(3) Բառքս՝ որ է Աքայ յաւելեալ թուի 'ի թարգմանչէն, զի ոչ 'ի Պտղոմայիս եկն կայսրն, այլ մերձ 'ի լեառն Ոլոմպիա որ և կոչի Փիւնիկ, մերձ 'ի Պրուսա քաղաք։

Եւ Կաւատ վասն երկեղի Թագաւորելոյ՝

---

(1) Թեսաղոնիկէ նշանակէ ըստ Յունաց Աստուածայաղթ, այսպէս կոչեաց զայն Փիլիպպոս արքայ Մակեդոնացւոց յանուն զնա յաղթութեանն ։

(2) Սեբէոս (յեր. 185—186), և այլ պատմագիրք Հայոց Պուռկայ կոչեն զՊողոմէոս զօրավարն Յունաց, որ կատարեաց ընդ Մաւեայ զպայման հաշտութեանն ՚ի Դամասկոս

սպան զեղբայր իւր Թէոդոսիէ, և եղեւ ատեցեալ յամենեցունց, և գնաց 'ի Հռոմ. և կոչէին զնա 'ի Հռոմայ 'ի Կոստանդինուպօլիս: Եւ եկեալ 'ի Հռոմայ՝ եկն 'ի Սիրակուսս. և հաճեցաւ ընդ տեղին, և առաքեաց կոչեաց զորդիսն, և ոչ ետուն զօրքն, այլ արարին զնոսա Եւտուկարտոր՝ զԿոստանդինոս, զՏիբերիոս, զՀերակլ, և նստան 'ի Կոստանդինուպօլիս. և Թագաւորն ոչ իշխեաց ելանել 'ի Սիրակուսայ, զի լսէր թէ կոչեն զնա զօրքն Երկրորդ Կային՝ սպանող եղբօրն:

Եւ յայսմ ժամանակի սպանաւ Աթման Թագաւորն Տաճկաց յԱթրապ քաղաքի վասն պիղծ գործոց, և պատառեցաւ իշխանութիւնն յերկուս, 'ի Բաբելոն և յԵգիպտոս: Ալի՝ փեսայ Մահմետի թագաւորեաց 'ի Բաբելոն և յԱսորիս, և յԵգիպտոս Մաւի թագաւորեաց: Եւ փախեաւ Մաւի զթագաւորութիւնն յԱթրապոյ 'ի Դամասկոս, և թագաւորեաց ամս քսան: Եւ զկնի եւթն ամի խաղաղութեանն գնաց Մաւի և աւերեաց զԳաղատիա և զԱսիա և զԲիւթանիա:

Եւ 'ի սոյն ժամանակս սպան Անդրէ սարատերաս զԿոստաս 'ի Սիրմի (1), 'ի ժամ բաղանեաց լուեալ զգլուխն սապոնաւ, և 'ի փակել աչացն՝ եհար դանակաւ և մեռաւ, և թա-

---

(1) Կոստաս որ և Կոստանդ, սպանաւ 'ի Սիրակուսս քաղաքի Սիկիլիոյ և ոչ 'ի Սիրմիոն:

գաւորեցուցին զպատրիկ մի Հայ ազգաւ, Մէժէժ անուն, և էր բարեպաշտօն ։ Իսկ որդին Կոստաս Կոստանդին զօր ժողովեալ՝ սպան զՄէժէժ և ինքն թագաւորեաց ընդ եղբարս իւր ։

Եւ ՚ի սկիզբն թագաւորութեան նորա գերեցան յՄելիտինէ ՚ի Տաճկաց ութսուն հազար անձինք, և դարձեալ եկին Տաճիկքն ՚ի Կիլիկիա (1) և կոտորեցան ՚ի Յունաց երեսուն հազար անձինք, և այս էր առաջին պարտութիւն նոցա ։

Յայսմ ամի այր մի ՚ի Բալբաքոյ Կաղանիկէ անուն, Ասորի ազգաւ, առաջին իմացաւ ընդ Նափոն (2), և այրեաց զնաւսն ՚ի վերայ ծովուն՝ լցեալ զօրօք Տաճկաց։ Եւ յայսմ ժամանակի երեւեցաւ ծիածանդ զոլանդակ գիծ մի ՚ի երկնիւք՝ բոլորեալ և պարագրեալ զգունդն երկնից, և զարհուրեցաւ ամենայն աշխարհ ։

Ի նմին ամի Կոստանդիայ ելին ՚ի Յունաց զօրք և բնակեցան ՚ի լեառն Լիբանանու և կոչեցան ապստամբք, և Ասորիք կոչեցին զնոսա Ջուռաճանք ․ և առին ՚ի Լիբանանու լեռնէն՝ մինչեւ 'ի սեաւ լեառնն . և թուի թէ՝ այսու պատճառաւ կոչին Վրացիք Ճուռճանք (1), զի ապստամբեցին 'ի Հայոց ծառայութենէ և 'ի հաւատակցութենէ։ Եւ եկին Տաճիկք և ջնջեցին զապստամբսն ։

---

(1) Միւս թարգմանութիւնն ունի ԿԻԼԻԿԻԱ, ըստ մեզ կարծի թէ իցէ Լիւտիա գաւառ յարեւմտից Փռիւգիոյ ։

(2) Նափոն է Նաֆթ, այլ աստ կամի նշանակել զյունական հուրն, որ վառէր և ՚ի մէջ ջրոյ, որով Յոյնք յաղթող լինէին ՚ի ծովամարտս՝ այրելով զնաւս Թշնամեաց ․

Եւ յայսմ ամի Յովհաննէս որդին Մէժեժայ հալածեաց զԿոստանդին զեւթն ամիս վասն սպանութեան հօրն, և ապա սպանաւ և ինքն ։ Եւ հպարտացաւ Կոստանդին յաղթութեամբն, և արհամարհեաց զերկոսին զեղբարսն և ընկէց 'ի թագաւորութենէ . և իշխանն Լեւոն ասաց նմա . “Ոչ տամ քեզ միայն թագաւորել ։” Եւ նա կաշառօք կուրացոյց զկօրսն և կարել ետ զլեզուն և զձեռն և զոտն Լեւոնի ։ Եւ եղեւ նմա որդի և կոչեաց Յուստինիանէ ։

Եւ զկնի Մաւեայ թագաւորեաց Տաճկաց Եզիտ որդի նորա՝ ամս երեք և ամիս վեց, և մեռաւ ։ Եւ ապստամբեաց Մուխթար 'ի Բաբիլոն, այր կեղծաւոր և սուտ որ ասէր զինքն տեսող և մարգարէ . և 'ի յԸթրաք թագաւորեաց Աբդլա (2) ։ Եւ 'ի Դամասկոս զորդին Եզիտայ խորհեցան դնել Թագաւոր. և եղեն պատերազմունք, և այր մի ծեր յՄ. Թրաքոյ(1) անկեալ 'ի մէջ նոցա աղաչէր խաղաղանալ. և ետ նոցա խրատ՝ 'ի յերեք նետ գրել երեք մարդոյ անուն, և իցէ յերիցն մի՝ ինքն, և ձգել զնետսն 'ի գետինն (և) տացեն առնուլ զնոցանէ զմինն տղայի մի, և որոյ նետն առցի՝ այն Թագաւորէ։ Եւ ել զվիճակն ինքեան՝ և Թագաւորեաց, որ և յետ ամի միոյ մեռաւ։ Եւ դարձեալ բաժանեցան, բայց Թագաւորեաց Աբդլմլքք որդին Մրուանայ։ Եւ յայսմ ամի մեռաւ Կոստանդին և Թագաւորեաց Յուստինիանոս որդի նորա։ Իսկ Աբդլմլքքն նեղեալ յապստամբացըն՝ արար սէր ընդ Յուստինիանոս ամս տասն, և խոստացաւ նմա տալ յամենայն ամի հազար դահեկան և ձի մի և ծառայ մի, և Կիպրոս տացէ հարկ Տաճկաց և Յունաց։ Եւ Հայք ձեռն ետուն 'ի Յոյնս։ Եւ զի երկրորդ անգամ բնակեցան 'ի Լիբանան երկոտասան հազար ապստամբք, հանին զնոսա Հռոմայեցիք և տարան 'ի Հռոմ(2)։

---

(1) Վերք առ Եւրոպացիս կոչին Ճիօրճիանօ, և առ Մահմետականս Կիւրճի . իսկ Վրացիք կոչեն զինքեանս Քարթուէլի, ելեալ 'ի Քարթլոս բառէն, որ համարի առաջին նախահայր իւրեանց ։

(2) Մուխթար որդի էր Ապու—Օբէիդայ . և տիրեաց Քուֆայ՝ յամի 685 ։ Իսկ Աբդլա էր որդի Զօպէիրայ, որ էր խալիֆայ Մէքքէի ։

---

(1) Ան է Մրուան որդին Հաքեմայ, որ ել յիշխանութիւն խալիֆայութեան յամի 684։

(2) Աբդ—ըլ—Մելէք որդին Մրուանայ նեղեալ յապստամբացն որ 'ի Լիբանան լերին 'ի Մարդայիտաց, զորս Սեբէոս (յեր. 216) Մարդոցէք անուանէ. տեսեալ և զյաջողուածս Յունաց, կռէ դաշն խաղաղութեան ընդ Յուստինիանոսի Բ։ Աբդ—ըլ—Մելէք յանձն առնու հատուցանել նմա

Ի նոյն ժամանակս էր սուրբ վարդապետն Յակոբ ուռհայեցին 'ի գաւառէն Անտիոքայ, որ ուսաւ լեզու և գիր յունարէն և եբրայեցերէն, որ գնաց և եմուտ պատճառաւ ընդ հրէութեամբն, և թարգմանեաց զծածուկն հրէից յասորի լեզու: Եւ արար մեկնութիւնս բազում գրոց, և եղեւ եպիսկոպոս Ուռհայոյ, և կատարեաց զկեանս իւր յերկիրն Քեսնոյ, 'ի վանսն որ կոչի սուրբ Յակոբայ:

Իսկ Աբդլայն հնազանդեաց զապստամբսն: Եւ 'ի ժամանակին յայնմիկ գերեաց Յուստինիանոս զԿիպրոս. և եղեւ սէր ընդ միմեանս Պարսից (Արաբաց) և Հոռոմոց: Եւ առաքեաց զՄահմէտ Աբդլայն՝ զամիրայն Ջզիրոյ յերկիր(1) Հոռոմոց 'ի Կեսարիա: Եւ Հոռոմք 'ի վարձու առեալ զՍկլաւսն, եկին պատերազմել ընդ Մահմէտ, և կոտո-

---

տոր յամէ հազար դահեկան ոսկի, նժոյգ մի և ծառայ մի, և Յուստինիանոս շնորհէ Ամիրային զկէս հարկացն Կիպրոսի, երկրին Հայոց և Վրաց. նոյնպէս յանձն առնու կայսրն ազատել զԱրաբացիս յարշաւանացն Մարդայիտաց, ընդ որս անդադար 'ի կռուի կայր ձեռնտուութեամբ Հայոց, որոց զօրավարէր Թէոդորոս Ռշտունի՝ ըստ պատմելոյ Սեբէոսի, և 'ի լրումն այսր յօդուածոյ դաշինն Յուստինիանոս 'ի բաց հանեալ 'ի Լիբանանէ երկոտասան հազարս յապստամբացն Մարդայիտաց, ցրուէ զնոսա 'ի Հայս, 'ի Պամփիլիա և 'ի Թրակիա:

(1) Այս Մահմէտ էր որդի Մրուանայ եղբօր Աբդ—ըլ—Մելէք ամիրայի, որ յամէ 692—708 կառավարեաց ըզՄիջագետս, զՀայս և զԱտրպատականն:

րեցան Հռոմայեցիք, և մնացեալ Ակլուքն եղեն ընդ Տաճկաց՝ եւթն հազար անձինք, և եգին զնոսա Տաճիկքն յԱնտաք և 'ի Կուրխ(1) տուեալ նոցա կանայք և ապրանք:

Ի ՌԶ (1006) թուին Ասորւոց և 'ի ՃԼԳ (133) թուին Հայոց եկին Հռոմայեցիքն յերկիրն Անտաքայ պատերազմել ընդ Տաճկաց, և կոտորեցան 'ի նոցանէ բազումք, և մնացեալքն 'ի նոցանէ փախեան. բայց և յերկոցունց կողմանցն անկան բազումք զառաջինն, և ապա յաղթեցան Հռոմայեցիք. և թիւ սպանելոցն յերկոցուն կողմանցն գտաւ քառասուն բիւր, յերեքն Ապրիլ ամսոյ, և տեղի պատերազմին Գուշիրիքն, ուր մինչեւ ցայսօր երեւին ոսկերքն 'ի հերկել անդաստանացն:

Ի յեւթանասուն և հինգ ամին իւրեանց Տաճկունք բարձին զպատկերս 'ի դրամէ և 'ի դահեկանէ, և չինեցին միայն գրով առանց պատկերի դահեկանս և դրամս և փող՝ վասն նախատանաց պատկերապաշտութեան: Ի սոյն ժամանակս Յուստինիանոս խաղացեալ սպան զբազումս յիշխանացն և 'ի զօրացն, և զչարեալ կալան զնա և կտրեցին զքիթն և եդին 'ի բանտի, և թագաւորեցուցին զոմն Լեւոն անուն(2): Իսկ Ափսիմրոս (Աբսիմարոս) զօրապետն որ էր 'ի Կիլիկիա, եկն և եհան զԼեւոն և ինքն թագաւորեաց ․ և սա հնազանդեցոյց զՍկլաւսն ․ և սա ելեալ ՚ի վերայ Տաճկաց յերկիրն Սամիսոն, և սպան ՚ի նոցանէ հինգ հազար այր, և առեալ աւար և գերի՝ դարձաւ ։

---

(1) Կուրխ քաղաք է 'ի սահմանս Եփրատացւոց:

(2) Ղեւոնդ. Գլ. Ե. յեր. 37:

Իսկ Աբդլա (1) կացոյց երկու զօրավարս, զՄահմէտ և զՀաջաջ, որք անողորմաբար կային և վարէին զիշխանութիւնն ։ Այս Մահմէտ նենգիւ ժողովեաց զարքայազունսն Հայոց ՚ի Նախիջաւան, և ջանայր դարձուցանել ՚ի կրօնս իւր․ և յոչ հաւանելն նոցա, ածեալ ՚ի մեծ եկեղեցին՝ հրով այրեաց զնոսա (2) ։ Յայսմ ժամանակի գովեցաւ իմաստութեամբ և աստուածպաշտութեամբ այր մի ՚ի յՈւռհա՝ Աթանաս անուն, որդի Գումայի, և տարան զնա առ Աբդլա և մեծարեաց զնա, և եդ ՚ի տան թագաւորութեան իւրոյ մատակարար և վերակացու տան և ամենայն ընչից իւրոց․ և տայր նմա յամենայն ամի վաթսուն հազար դահեկան, և թիւ զօրացն տային նմա ամեն մին՝ դահեկան մի ՚ի տարին ։ Եւ սա արար բազում դիւրութիւնս քրիստոնէից ուղղափառաց ։ Եւ սա շինեաց յՈւռհա երկուս եկեղեցիս, զմինն յանուն Աստուածածռյն և միւս եւս յանուն սուրբ Թէոդորոսին, բերեալ զնշխարս նորա յՈւխայիտոյ՝ որ է Աւքաթայն(1) և եդ անդ։ Նա և ՚ի մէջ երկու եկեղեցւոյն շինեաց գետնափոր տեղի Դաստառակին, և գնեաց զսուրբ Դաստառակն ՚ի Տաճկաց ՚ի յիսուն հազար դահեկան, զի ընդ իշխանութեամբ նոցա էր յայնժամ, և եդ զայն անդ ՚ի ծածուկ. և իջանէին սանդղօք և ՚ի տօնին հանէին ՚ի տեսիլ ժողովրդոցն, մինչև ՚ի ժամանակս Յովհաննէս պատրիարքին, և նա ամփոփեաց եւս խորագոյնս, եդեալ ՚ի մէջ վիմաց, և ոչ ուրեք գտանի. որ և գրեալ կայ ճշմարտապէս որ ամփոփեացն թէ՝ «Ես պահեցի առանց գտանելոյ վասն երկեղի անօրինացն.» և թէ՝ ո՞ր է այր համայեցիք ունին, ոչ գիտեմք։

---

(1) Կոչի սա և Աբդ—ըլ—Մելէք ։

(2) Ղեւոնդ Գլ․ Զ․ յեր․ 56։—Ստեփ․ Ասողիկ, Գիրք Բ․ Գլ․ Գ․ յեր․ 127։—Յովհ․ Կաթ․ Գլ․ ԻԱ․ յեր․ 125։—Սամուէլ։—Վարդան, յեր․ 99։—Կիրակոս, յեր․ 57։

Եւ յայսմ ժամանակի թագաւորեաց Աբդըլմէլքին որդին Մասլամա յերկրին Կինչոյ, որ է Հալպ։ Ի քսան և հինգ ամին իւրոյ Աբդըլմէլքը առաքեաց զՄսլիմ(2) ՚ի վերայ Մամուեստիոյ և առ զնա։

---

(1) Աւքաւթայն է Աւքադա կոչեցեալն ՚ի Հնոց, որ հասարակ անուամբ Եւխայիտա Ճանաչի. և է գիւղ ՚ի սահմանս Ամասիոյ Պոնտացւոց, ուր ծնաւ սուրբն Թէոդորոս ստրատելատ, և անդ ամփոփեցաւ մարմին նորա։

(2) Մասլամա կամ Մսլիմ, ըստ Յունաց Մասալմաս, էր արդարև որդի Աբդ—ըլ—Մէլիքայ, որ վարեաց զկնի եղբօր իւրոյ Վլիթայ՝ զիշխանութիւնն խալիֆայութեան, և ըստ կարգի պատմութեանն համարի եթէ առ կենդանու-

Եւ ՚ի սոյն ամի ել Յուստինոս ՚ի բանտէն զկնի տասն ամի արգելմանն, և գնաց առ Խաքան Թագաւորն Խազրաց. և նա խնդութեամբ ընկալաւ զնա, և ետ զդուստր իւր նմա ՚ի կնութիւն. և ձեռն ետ ՚ի Բուլղարն, և եկն ՚ի Կոստանդնուպօլիս և Ափիմրոս (Տիբերիոս) փախեաւ, և զԼեւոն սպան և զբազումս կոտորեաց յազգունեաց և զայլսն աքսորեաց, և արար զաղքատանիսն դատարկս. և գտեալ մեծ հարուստ Տաճիկ գերի՝ ազատեաց զնոյն խաղաղութեամբ։ Եւ բազում զօրս առաքեաց ՚ի խնդիր կնոջն և խեղդեցան յալիս ծովուն. և լուեալ Խաքան տրտմեցաւ և առաքեաց մեղադրեաց նմա և ասէ. «Ընկեր, ընդէ՞ր բազմութիւն զօրաց առաքեալ ՚ի խնդիր կնոջ քո. կարծէիր թէ արգելո՞ւլ կամիմ. արդ առաքեմ ծառայս և առ զնա։» Եւ լուեալ ուրախացաւ, և ա-

---

թեամբ հօրն վարեաց և պաշտօն զօրավարութեան, նոյնպէս և եղբարցն Վլթայ և Սուլէյմանայ։ Ղեւոնդ գրէ, թէ Սուլէյման յորժամ փոխանորդեաց զիշխանութիւնն, առաքեաց զՄսլիմ զօրավար ՚ի դրունս Կասբից ՚ի Դարբանդ (Գլ. Զ. յեր. 64)։ Յովհաննէս կաթողիկոս (՚ի պատմութեան Գլ. ԻԱ. յեր. 126). Վլթաղիման անուանէ, եթէ չիցէ խանգարեալ յօրինակչաց, զոր մարթ է ընթեռնուլ Մսլիմն և Սուլէյման, բայց յետինն ուղղագոյն երեւի, քանզի յաջորդ դնէ զնա Վլիթայ։ Տես և ՚ի Մովսէս Կաղանկատուացի (Հտ. Բ. յեր. 46)։—Ստեփան Ասողիկ (յեր. 126), որ գրէ համաձայն Ղեւոնդայ։—Իսկ Կիրակոս (յեր. 37. տիպ Մոսկուայ) Սուլէյման, ասէ, առ զԴարբանդ։

ռաքեաց եբեր զկինն իւր և զորդին Տիբերիոս (1) ։

Ի թուին Ասորւոց ՌԺԵ (1015) և Հայոց ՃԾԲ (152) (2) և շինեաց Մսլիմն զՄանուեստիա ընդարձակս՝ բարձր և ամուր պարսպով, և կացոյց 'ի նմա զօրս՝ կալ ընդդէմ Հռոմայեցւոցն ։ Եւ 'ի նոյն ամի մեռաւ Աբդլմլիքն և թագաւորեաց Վլիթ ամս ինն և ամիսս հինգ ։ Յայսմ ժամանակի հալածեաց Յուստինիանոս զազգս Հայոց յիշխանութենէն իւր 'ի ձեռն Փիլիպպիկոսի, և խնդութեամբ ընկալան զնոսա Տաճիկք 'ի Մելտինի և 'ի Միջագետս ։ Եւ եղեւ մեծ ամբոխութիւն ուղղափառաց Յունաց՝ կալով ընդդէմ երկաբնակացն, և շինեցան վանորայք և անապատք և գիւղօրէք Հայաստանեայց, և կան մինչեւ ցայսօր ։

Իսկ անօրէնն Մահմէտ յարոյց սաստիկ հալածանս հաւատացելոց Արաբկացն, և ըմքրտնեալ զգլխաւորն նոցա և չարչարեալ ազգի ազգի հարուածօք վասն հաւատոյ և սպան զնա, և ձգեցաւ մարմին նորա զաւուրս երեսուն, և ոչ հոտեցաւ և ոչ մերձեցաւ թռչուն և ոչ գազան, և յամօթ եղեւ Մահմետ։ Եւ հաստատեցան քրիստոնեայքն 'ի մեռանելն նահատակութեամբ վասն անուանն Քրիստոսի՝ բազմութիւն յոյժ. և նա անխնայ կոտորէր։

---

(1) Յուստինիանոս փախուցեալ առ Թագաւորն Խազրաց, ամուսնացաւ ընդ դստեր նորա Թէոդորայ, յորմէ եղեւ Տիբերիոս ։ Իսկ Աբսիմար երկուցեալ 'ի նիզակակցութենէ նորա, խորհեցաւ կաշառել զԹագաւորն Խազրաց առ 'ի սպանանել զՅուստինիանոս. որոյ իմացեալ փախեաւ առ Բուլղարս, և առեալ 'ի նոցանէ յօգնականութիւն հնգետասան հազար զօրս, դիմեաց 'ի վերայ Կոստանդինուպօլսի և առ զնա, (Թէոփանէս, յեր. 512։—Նիկեփոր, յեր. 27)։ Ղեւոնդ՝ խաքանայ զօրօքն, ասէ, եկեալ և մտեալ Կոստանդինուպօլսի. յեր. 38 ։

(2) Յօրինակին ՃԽԴ ։

Ի սոյն ժամանակս գնաց Մելիք յերկիրն Կապադովկացւոց և սպանին 'ի Հոռոմեցւոց քառասուն հազար անձինս 'ի զօրացն Յուստիանեայ. և առին զՏօնա (Տիանա) քաղաք և առ Մելիք զՏարանդա, և եկեալ 'ի Կիլիկիա առ զՈւձոմ և զՊաւտանդա, և այլ բազում քաղաքս. և զօրն Տաճկաց կայր 'ի Տարանդա յայնմ հետէ։ Իսկ Փիլիպիկոս սպանեալ զՅուստիանոս և զՏիբերիոս որդի նորա, և թագաւորեաց ինքն։ Եւ 'ի սոյն աւուրս ել հրաման 'ի Վլիթայ՝ զքրիստոնեայս ածել յեկեղեցի և սպանանել՝ եթէ ոչ ուրանան 'ի հաւատոյ. և անթիւ կոտորեցան 'ի հրամանէ նորա 'ի Քրիստոս հաւատացեալք։ Եւ Փիլիկոսս (Փիլիպիկոս) թագաւոր վարժեալ էր գրովք սրբովք, այլ և արտաքնոցն ևս. սա ջանաց և արհամարհեաց զվեցերորդ ժողովն զաղանդն Մաքսիմոսի, և ոչ կամեցան խմորեալքն յաղանդն։ Ի սոյն ժամանակս առ Մսլիմ զԱմասիա, և առին զԱնտիոք Պիսիդեայ. և յետ երկու ամին Թագաւորելոյ Փիլիպիկոսի, հանին զաչս նորա և աքսորեցին. և թագաւորեաց Անաստաս ամս երկու: Եւ մեռաւ Վլիթ և թագաւորեաց Սուլէման ամս երկու: Եւ 'ի սոյն ամի առ Մսլիմ զերկիրն Գաղատացւոց և զբերդսն որ 'ի նմա: Եւ առաքեաց Անաստաս զօր 'ի կողմն արեւմտից, որ և ամբոխեալք սպանին զօրագլուխն իւրեանց. և թագաւորեցուցին զԹէոդոսիէ, և փախեաւ Անաստաս 'ի Նիկիա:

Եւ Մսլիմ գնաց յերկիրն Թուրքաց և դարձաւ բազում աւարաւ. և գնաց 'ի վերայ Ասիոյ և առ զՆաղամիա(Պերգամոն)և զՍարդիա և գերեաց: Եւ հրապարակեաց Մսլիմ և ժողովեաց երկու հարիւր հազար հեծելոյ և հինգ հազար նաւ լի պաշարանօք, և առ ընդ իւր այլ ևս երկոտասան հազար զօր 'ի Բուլղարաց, և վեց հազար ուղտ և վեց հազար էշ բարձեալ կերակրօք եւ պատրաստութիւն բազում ամաց. և եդ զօրագլուխ զՍմար և երդուաւ քակել զԿոստանդնուպօլիս. և կային ընդ նմա զեհիդք(1) երեսուն հազար. և եղեն երկու բանակք, մինն ընդ ծով և միւսն ընդ ցամաք: Եւ Լեւոն զօրագլուխն Թէոդոսիէ(2) եկն առ Մսլիմ և եդ ընդ նա ուխտ

---

(1) Զէհիտ նշանակէ աստ կամաւոր զինուոր:

(2) Թէոդոսիէ, ընթերցիր Թէոդոսեայ: Մատենագիրք

Սալիմ, որ թէ առնու զքաղաքն, զնա դիցէ թագաւոր. եւ եմուտ (Մեւոն)՝ի Կոստանդնուպօլիս։ Եւ Տաճկունք ընդ որ գաւառ եւ ընդ քաղաք անցանէին, տային բան խաղաղութե։ Եւ ինքն Սուլիման թագաւորն եկն զկնի նոցա երկոտասան հազարաւ, եւ նստաւ ՚ի Նիկիա. եւ պաշարեաց զնա։ Իսկ թագաւորն Թէոդոսիոս խնդրեաց զօրաւն Մեւոնի, եւ կալաւ զիշխանս նոցա եւ արկ ՚ի յարգելս. եւ Մեւոն փախեաւ եւ եկն առ Սուլիման, եւ առ վեց հազար հեծեալ իջաւ ՚ի վերայ Աճուրին(1) եւ ասաց ընդ քաղաքն գաղտ երդմամբ թէ «Նենգութեամբ չիջիմ ընդ ազգս։» Եւ նոքա գնացին բերին զիշխանսն եւ ետուն ցնա. եւ սկսան գնալ ՚ի Կոստանդնուպօլիս երկոքեան կողմանքն. եւ ՚ի յառաջանալն նոցա՝ եկին զօրք քաղաքին ընդ առաջ Մեւոնի եւ հնազանդեցան նմա, եւ ետուն ՚ի ձեռս նորա զորդին Թէոդոսի եւ քարոզեցին թագաւոր, եւ դարձան ՚ի քաղաքն։ Եւ կալաւ Թէոդոս եւ գերծեաց զգլուխն եւ եղեւ եկեղեցական։

Եւ Մեւոն թագաւորեաց, եւ յուեալ Սուլիման խնդրեաց՝ կարծելով թէ տայ զքա-

---

ԺԱ. ԺԲ դարուց յատուկ անուանքն վերջաւորեալք ՚ի Է. ՚ի գործ ածեն եւ փոխանակ սեռականի. ՚ի տեղի էայ մասնկան, որպէս Պաղէստինէ, Խորիանէ. առ որս մեք յաւելաք ուրեք զտառն է։

(1) Աճոր կամ Աճորէոն կամ Աճուրէա է քաղաք ՚ի Գաղատիա։

ղաքն 'ի ձեռս նորա . և նա սկսաւ խաբել զնա բանիւք , և ամրութիւն առնէր քաղաքին . և գիտաց Սոլիմ՝ թէ խաբէ զնա , էանց 'ի միւս կողմն և զօրքն երթային առաջի , և ինքն չորս հազարօք զկնի , և ելին 'ի վերայ նորա Բուլղարք վարձաւորք և կոտորեցին զչորս հազարսն , և զերծաւ Սոլիմ , և էանց 'ի միւս բանակն . և բախեցին զօրքն Տաճկաց յարեւմտից կողմն քաղաքին հանդէպ Ոսկի Դրանն . և կային 'ի ծովու կողմանէն երեսուն հազար արանց որ պահէին զնաւսն , և քսան հազար պահէին 'ի Բուլղարաց կողմանէ , և պատերազմէին 'ի ծովէ և 'ի ցամաքէ ընդ քաղաքին . և ելեալ Բուլղարք յոլով կոտորեցին 'ի Տաճկաց : Եւ երկեան Տաճիկքն զի եհաս ձմեռնն , և էառ զնոսա տարակոյս ահի 'ի ծովէն և 'ի Բուլղարացն և 'ի քաղաքէն . և եղեւ սով 'ի Տաճիկքն որ ուտէին զաղբ և ըմպէին զմէզ իւրեանց : Եւ մինչ յայս նեղութիւնս կային , մեռաւ Սուլիման թագաւորն Տաճկաց , և առ զթագաւորութիւնն Ոմար , և առաքեաց առ Սոլիմն թողուլ զքաղաքն և երթալ . և դարձաւ սակաւուք և այլքն ջնջեցան սովով : Եւ յայնմ հետէ Ոմար (1) սկսաւ նեղել զքրիստոնեայսն վասն քինու՝ թէ զօրք նորա անցան (ջնջեցան)

---

(1) *Միւս թարգմանութիւնն Սոլիմայ ասէ՝ նեղել զքրիստոնեայս 'ի վրէժ քինու սպանման զօրաց իւրոց :*

՚ի պատճառս նոցա , և ջանայր դարձուցանել ՚ի կրօնս իւր :

Եւ յայսմ ժամանակի այր մի Սեւերոս անուն , Ասորի ազգաւ , սկսաւ ասել ընդ Հրեայսն՝ թէ “Ես եմ Քրիստոսն . ժողովեցէք ինձ , որպէս զի պատրաստեմ զօրս և երթամք թագաւորեմք յԵրուսաղէմ :” Եւ հաւատացին ՚ի նա , և ժողովեցին զանձս բազումս . և խնդրեալ Ամիրայ՝ կոչեաց ըզնա և առ զժողովեալ գանձն և եթող զնա : Եւ այս Ամիրս եդ օրէնս չառնուլ զքրիստոնէին վկայութիւն, և ոչ հեծանել քրիստոնէից ՚ի թամբօք գրաստս . և թէ սպանանէ Տաճիկն զքրիստոնեայն , ոչ մեռանի փոխան նորա , այլ տայ զարեան գինըն հազար դրամ: Եւ ազատ արար զեկեղեցականսն ՚ի հարկէ , որ ոչ տան յամենայն ստացուածոց իւրեանց ՚ի յարքունիս : Եւ սա եդ օրէնս ոչ ըմպել գինի Տաճկի :

Եւ մեռեալ սորա՝ թագաւորեաց Եզիտ ամս չորս : Ի վերայ սորա ապստամբեաց այր մի ՚ի Հեր , որ ասէին և նմա Եզիտ , և յոլովք եղեն ընդ նմա , և առաքեաց Եզիտ թագաւորն և սպանին զնա : Ի սոյն ժամանակս բազում աշխարհ անմարդ եղեւ ՚ի սովոյ՝ ՚ի գալ մարախոյ : Այս Եզիտ առաքեաց ընդ ամենայն երկիր ջնջել զպատկերս յեկեղեցեաց , ՚ի հանգերձից , ՚ի դրոց և յամենայն իրաց :

Այնպէս և Լեւոն ընչեաց յեկեղեցեաց Հռոմայեցւոց. և եղեւ տրտունջ զնմանէ, և յարոյց հալածանս 'ի վերայ ամենայն ազգմարդոյ որք ոչ դաւանէին զնորայն, և բազում Հրէայք մկրտեցան և եղեն քրիստոնեայք և այլքն փախեան։ Եւ մեռաւ Իզիտ և Թագաւորեաց Հեշմ ամս ինն և տասն. և էր նենգիչ և հարկապահանջ։ Եւ սա եհան յԵփրատ գետոյ ջուր 'ի վեր քան զԿալանիկէ՝ ոռոգանել զդաշտս։ Եւ սա գնացեալ 'ի Նեոկեսարն, և առ զնա. և առին 'ի նոյն ամի զանառիկ բերդն յերկիրն Կիլիկիոյ, որ կոչի Շեղէ (Շիկուին ՞)։

Յայսմ ժամանակի էր Աթանաս պատրիարքն Ասորւոց և Յովհաննէս հայրապետն Հայոց (1). և կողմանքն Վասպուրականի և Սասնոյ և Աղուանք և Սիւնիք և Յակոբիկ Ասորիք էին 'ի մի դաւանութիւն առաքելական հիմանն։ Եւ վասն այնորիկ երթային Ասորիք առ կաթողիկոսն Հայոց և ասէին. «Մեք 'ի սուրբ Գրիգորի դաւանութեան եմք.» և առնուին ձեռնադրութի. և չկայր հակառակութիւն 'ի նոսա։ Եւ յայնմ ժամանակի երէց մի Բարշապուհ անուն և սարկաւագ մի Գաբրիէլ անուն 'ի Սուփանկաց, եղեն բանսարկուք 'ի մէջ Հայոց և Ասորւոց.

---

(1) Նա ինքն է Յովհաննէս կաթողիկոս Օձնեցի, իմաստասէր կոչեցեալ։

գնային և տային ընդ կաթողիկոսն Հայոց, թէ «Յակոբիկքն զմարմինն Քրիստոսի ապականացու ասեն.» և գային առ Աթանաս և տային, թէ «Հայք Յուլիանոսք են։» Եւ գրեցին առ իրեարս երկու պատրիարքքն Հայոց և Ասորւոց՝ մեղադրութիւնս։ Եւ ապա խնդրեցին դաւանութիւնս ՚ի միմեանց. և գրեցին դաւանութիւն և տեսին՝ զի մի էին երկուցն, բայց յամենա մնացեալ էր պղտորումն Եղիայ։ Իսկ Յովհաննէս պատրիարքն Հայոց, այր սուրբ և սքանչելագործ և յոյժ վարժ ածային գրոց, այլ և արտաքնոցն։ Սա խնդրեաց (առնել) ժողով աշխարհախումբ հանդիսիւ ՚ի գեղաքաղաքն Մանծկերտ՝ յերկուց կողմանց՝ Հայոց և Ասորւոց. և արարին քննութիւն ուղղափառութեամբ, և բանսարկուքն՝ երէցն և սարկաւագն Յուլիանիտք(1). և չկայր ինչ մէջ ընդ Հայք և ընդ Ասորիք, բայց միայն արարողութիւն՝ որ չարարին ոչինչ փոյթ։ Բայց ոմանք յԱսորւոց ասացին, թէ ՚ի Գործս առաքելոցն գրեալ է թէ՝ «Աստուած յարոյց զՅիսուս ՚ի մեռելոց, և այսուհետև ոչ դառնայ յապականութիւն(2)։» Եւ արտմեցաւ հայրապետն Հայոց, և ասաց թէ՝ «Այդ այնպիսի է, որ թէ նախ ապականացու էր։» Եւ խնդրեաց

(1) Բառքս՝ և բանսարկուքն՝ երէցն և սարկաւագն Յուլիանիտք աւելորդ թուին, եթէ չգուցէ այլ բառ կամ բայ պակաս։

(2) Գործք Առաքելոց. Բ. 31. 32.

զօրինակն Հայոց, և գտաւ ճշմարիտն՝ որպէս և էրն, և բերեալ զԱսորւոցն՝ նոյնպէս գըտին. և այն որ ասէին թէ՝ “Այսուհետև ոչ դառնայ յապականութիւն,” չգտաւ ուրեք գրեալ. և ամաչեաց ագիտութիւն նոցա, և ուրախ եղեն. և զթիւրութիւնն Եղիայ որ ՚ի սակաւս մնացեալ էր, ուղղեցին: Եւ ըզԲարշապուհ և զՊաքրիկէլ նզովեցին. և եդին դաշն սիրոյ և խաղաղութեան չառնուլ չարախօսութիւն ՚ի միմեանց Հայք և Ասորիք: Եւ եղև այս ՚ի թուին Հայոց ՃԿԴ (164) (1), և Ասորւոցն ՚ի ՌԼԵ (1035) (2):

Յայսմ ամի ապստամբեաց Եգիպտոս ՚ի Տաճկաց, և գնաց Տաճիկն և սպառեաց ըզնոսա, զի որք զերծանն ՚ի կոտորածէն, ՚ի նաւ մտեալ փախեան: Եւ ՚ի գալ ամին ել Թուրքըն յերկիրն Տաճկաց յԱրտուզին (3) և առին քաղաքս բազումս. և այս է սկիզբն ելանելոյ Թուրքացն (4): Եւ գնաց ընդդէմ նոցա Մըռ-

---

(1) Միւս թարգմանութիւնն դնէ ՃԿԶ, կամ ՃԼԵ. որ երկոքեան ևս սխալ են, քանզի ըստ պատմելոյ Սամուէլի և Կիրակոսի Գանձակեցւոյ (յէր. 38—39) ժողովս այս Մանազկերտի եղև ՚ի թուին Հայոց ՃՀԵ (175):

(2) Կիրակոս, յէր. 38:

(3) Արտուզն է Ատրպատական երկիրն, յորում է քաղաքն Արտաւիլ, և թերևս զայս քաղաք կամի ցուցանել Միխայէլ: Ղևոնդ յիշատակէ զԹարգու քաղաք, ուր երթեալ բանակեցաւ, ասէ, Մոխմ. (յէր. 65):

(4) Թուրքն իմա աստ զխազիրքն կամ զՍկիւթացիս, որ են Թաթարք, ՚ի հիւսիսակողմն Կովկասու:

լիմ, և յերկուց կողմանցն անկան հազարք և բիւրք ։ Եւ ապա արարին սէր քաղաքաւն զոր առեալ էին Թուրքն (1). զի թողլին զայն նոցա և ինքեանք դարձան ։

Եւ 'ի սոյն ամի եղեւ անձրեւ սաստիկ, որ թուէր բանալ սահանաց երկնից. և վերստին փլոյց զպարիսպն Ուռհայոյ և տարաւ զքաղաքն ։ Եւ 'ի գալ ամին գնացին Տաճիկքն յերկիրն Հռոմայեցւոց և առին զՃենճերա (2) քաղաք և զՆիկիա և քակեցին զնա. և ել հրաման 'ի Հեշմայ ապականել զամենայն գերեալսն. և եղեն քննութիւն յՈւռհա վասն սպանելոյն թէ մկրտք են՝ թէ ոչ, և ոչ յայտնեցաւ ճշմարիտն ։

Լեւոն թագաւորն Հռոմոց ած զդուստրն Խաքանայ Խազրաց թագաւորին՝ կին որդւոյ իւրոյ Կոստանդիանոսի (Ե), մկրտեալ

---

(1) *Միւս թարգմանութիւնն ասէ, Տաճիկքն (Արաբացիք) թողլին խազրաց զառեալ քաղաքսն. իսկ աստ իմանել ընդհակառակն խազրաց թողուլ զքաղաքս 'ի ձեռս Արաբացւոց ։ Քանզի ասէ Մովսէս կաղանկայտուացի (Հտ. Բ. յեր.* 46) *եթէ Ջառահ որդի Աբդըլլահայ, յամի Տեառն* 729. *երկրորդ անգամ մտեալ զօրօք 'ի խազիրս, սպանաւ յԱսարգինայ. և 'ի թուին Հայոց ՃՁ,* (731) *դարձեալ Մսլիմն շինէ զԴարբանդ յանուն Տաճկաց ։ Սամուէլ Սուլիման կոչէ զՄսլիմն ։ Տես և 'ի գիրս Ղեւոնդայ, յեր.* 64, *և* 131-132, *ուր անունդ Ջառահ փոխեալ է 'ի Հարաշէ, կամ Սէթ Հարաշի, որ է Սայիտ Ջառահ ։*

(2) *Ճենճերա է Գանգր քաղաք, այն է Չանղըրը ըստ Տաճկաց ։*

զնա նախ, և ետ զթագաւորութիւնն որդւոյ իւրոյ։ Եւ մեռաւ Լեւոն թագաւորեալ ամս քսան և չորս։ Եւ Արտաւազ(1) փեսայ թագաւորին ապստամբեալ եմուտ 'ի Կոստանդինուպօլիս. և Կոստանդին փախեաւ յԱնատոլիկոն (յԱնատոլիան), և խօսեցան օգնել նմա, և եկն յԱմուրին քաղաքն մեռնել(2)։ Եւ լուաւ Արտաւազ, զոր ժողովեալ և 'ի վերայ Կոստանդիանոսի գնաց, և եհար և փախոյց զնա, և մնացեալքն եկին առ Արտաւազ. և թագաւորեաց Արտաւազ։*

Իսկ Հեշմ զկնի իննևտասն ամի թագաւորութեանն իւրոյ մեռաւ։ Եւ թագաւորեաց Վլիթ, և արար չար տանն Հեշմայ. և արար զօրապետ իւր՝ զԱբաս, և եհարկ ըզնա յոսկի և 'ի գանձ թագաւորութեանն Տաճկաց իբրև 'ի ծով. որ և զամենայնն բաշխեալ զօրացն՝ առ զթագաւորութիւնն. բայց ոչ ընդունէին զնա յոլովք, զի հարճորդի էր(3), և Վլիթ չարագործ և գինարբ էր և ոչ զնա ընդունէին։ Եւ թագաւորեցուցին զԻզիտ եղբայր (հօր եղբօրորդի) սորա 'ի Դամասկոս. և նա առաքեաց կտրեաց զգլուխ եղբօրն(4), և ցցեալ 'ի ցից զգլուխ եղբօրն, և առեալ զկինն շրջեցուցանէին ընդ քաղաքն ։ Եւ յետ այնորիկ յարեան ՚ի վերայ միմեանց ամիրայքն [illegible] նոյն խնդրելով իւրեանց թագաւորութիւն, և կոտորէին զմիմեանս . զերկիրն Պարսից Վահիդն էառ , և Միրուան ընդՀայս , և զԽորասան Սարիգ . և զՄիփիկէ Աբդէհ (Սպու—Նուտիլ). և Իղիան զկնի հինգ ամաց մեռաւ . և առ զտեղին Իրէհիմ (Իպրահիմ), այր բարեբարոյ և աղօթասէր։ Եւ սա զկնի սակաւուց մեռաւ ։ Եւ եկեալ Միրուան ՚ի Հայոց՝ հանդիպեցաւ եղբօրն Սուլիմանայ ՚ի վերայ Եփրատայ , և ՚ի մէջ նոցա պատահեաց երկոտասան հազար այր . և փախեաւ Սուլէման յԱռուծափ, և Միրուան եկն ՚ի Դամասկոս և թագաւորեաց . և առեալ զգանձ թագաւորութեանն երեք հազար բեռն ուղտու, եբեր ՚ի Խառան. և այնպէս գնաց ՚ի Հէմս և էառ զնա յամիսս չորս ։ Եւ քակեաց զպարիսպ նորա , և քակեաց զպարիսպն Բաղբաքու ։ Եւ գնաց յԱթուր՝ որ է Նինուէ , և ՚ի Պարթեւս՝ որ է Բահլ։ Եւ Աբդլա Ալէ (Ալեայ) որդին եկն ՚ի Խորասանայ (1) ՚ի վերայ

---

(1) Արտաւազդ էր Հայ ազգաւ, և սիրեցեալ յաչս Լեւոնի՝ տուեալ էր նմա զդուստր իւր Աննա։

(2) Թերեւս՝ յՃեռէլ։

(3) Աբբաս էր բնական որդի Իզիտի և եղբայր Վլիթայ։

(4) Ղեւոնդ (Գլ. Ը. եր. 146) այսպէս պատմէ ըզ-

մահ Վլիդայ . „ Համառօտ նախարարացն առեալ զգործ իշխանին իւրեանց . զի փոքր անկման զաղքալից ադժութեամբք . հարցին յհաւատարիմս հաւատոյն իւրեանց որ անուանին կուռուք (կուրդացողք) . . . . և ըստ հրամանին նոցա մտեալ յարքունական ապարանս՝ գտին զնա թմբրեալ գինեզեղխութեամբ , և սպանին զնա սրով ։„ Տես և ՚ի Սամուէլն Անեցի . յեր . 133 ։—Վարդան . յեր . 102։

(1) Մերս թարգմանութիւնն ունի այսպէս . „ Եւ Աբէ

Ազաբայ՝ որ է գետ Աթուրայ, որ՚նա ինքն է Տիգրիս, և փախեաւ Մրուան և առին Պրտոյիքն (այլ. Արաբայ) ՚ի Մրուանայ եւթն հարիւր բեռն դահեկան և դրամ(1):

Եւ Կոստանդինոս առեալ զօգնականս իւր եկն ՚ի Կոստանդինուպօլիս, և եհան զաչսն Արտաւազդայ և սքարեաց, և ինքն հաստատեցաւ. և եղեւ նմա որդի և կոչեաց զնա յանուն հօր իւրոյ Լեւոն: Եւ ՚ի Տաճկաց պատերազմին խաղաղացան Հոռոմայեցիքն, եւս առաւել Հայք: Եւ ՚ի ժամանակս յայս եղեն նշան մեծամեծք ՚ի Մարտի ամսեան մինչեւ ՚ի յԱպրիլ. օդ. հող և փոշի տեղաց և արիւն գիշեր թուէր: Եւ այլս երեւեցան երեք սիւնք ամպեղէնք հրախառն ՚ի կողմն հիւսիսոյ երեք օր, և երևէին ՚ի վեր և իջանէին ՚ի խոնարհ: Եւ զկնի այնր երեւեցաւ

որդին գնաց ՚ի Խորասան: »

(1) Զայս կատարած զոր ետուն զօրք Խորասանայ ամիրապետին Մրուանայ, յորում և մեռաւ իսկ, յիշէ և Ղեւոնդ (Գլ. Ը. յեր. 157—158), որ եղեւ առ ՚ի ձեռն Աբդլայի. որոյ հասեալ մինչեւ յԱկուլա, որ թուի թէ նշանակիցէ զՔուֆա քաղաք մերձ ՚ի Բաղդատ, եգիտ ձեռն օգնականութեան և ՚ի բնակչաց տեղւոյն, այն է Պետուքեն: (Տես և ՚ի Ստեփան Ասողիկ, յեր. 134): Այս Աբդլա՝ էր Ապուլ Աբբաս Աբդալլահ Իբն—Սաֆֆահ կոչեցեալն, որդի Մահմետի, որդւոյ Ալեայ, և յանուն սորա կոչեցաւ հարստութիւնն Աբբասեան, և էր իշխան Պարսկաստանի և Իրաքայ՝ յորժամ հրապարակեաց զինքն խալիֆա յամի 750, և մեռաւ զկնի չորից ամաց:

աստղ մի անծանօթ՝ լուսնին չափ, ամեն առաւօտ ելանէր յարևելից և գնայր յարևմուտս՝ զտիւն ամենայն տեսանելով մարդկան։ Եւ լինէին ցոլմունք աստեղաց զամենայն գիշեր որ թռչէին ընդդէմ յարդգողին (1)։ Եւ յետ այսորիկ եղև շարժ սաստիկ, և պատառեալ երկրի ելին աղբիւրք ՚ի գոյն արեան. և զկնի այնորիկ խառնակութիւն մեծ եղև ՚ի վերայ ծովուն մեծի, և բարձրանայր ալին և թուէր մերձ առ երկինքն վերացեալ. և ապա որպէս ՚ի կաթսայս. և բազում մարդիկ և անասունք մեռան ՚ի ճայթմանէ որոտմանն որ առ ծովեզերբն կային։ Եւ բերդ մի որդւոյն Եմանայ՝ որ կայր ՚ի ծովու, և ջերմուկն որ գտաւ յաւուրս Սաղովմանի ՚ի ծովուն և շինեաց ՚ի վերայ նորա Սաղովման բուրգն և պատրաստութիւն յոլով, այն փլաւ և ընկղմեցաւ։ Եւ եղև յետ այնորիկ սով սաստիկ, և ապա մահտարաժամ փորացաւութեամբ, որ ՚ի Խառան քաղաքն մեռանէր յաւուրն քան հազար անձինք։ Եւ լուաք թէ՝ յերկիրն Մագիամու կոտորեցան կապիկք և բազում վնաս գործէին՝ ապականելով զմարդ և զանասուն։ Եւ զայս ամենայն տեսեալ Մրուան թագաւորին Դամասկոսի, որ փոխեաց զարքունիսն իւր ՚ի Խառան, զղջացաւ և անկաւ մահ 'ի վերայ նորա , և գրեաց ընդ ամենայն տեղիս ապաշխարութիւն . և սասանեցաւ երկիր և յորդեցին արտասուք և հեծմունք և աղօթք ամենայն ուրեք , զի կարծէին թէ հասեալ է կատարած աշխարհի յազգի ազգի նորանշան պատուհասիցն . քանզի նորանշան հրաշք լինէին, մինչ զի գետ մի յան լերինն Թափօրայ 'ի շարժմանէն յիւր տեղւոյն 'ի բաց փախեաց երկու միլ և ինչ ոչ խախտեցաւ շինուած , և ոչ պակասեաց հատ մի . և Մնբէճ քաղաք ընկղմեցաւ 'ի տեղւոջ իւրում : Եւ 'ի Կոստանդնուպօլսէ երրորդ մասն անկաւ , և Նիկիա բովանդակ փլաւ , և բազում քաղաքք 'ի Բիւթանիա կործանեցան : Յայնժամ կաշառեցին զՄրուան Քաղկեդոնիկքն և եդին իւրեանց պատրիարք զԹէոփիլէ մաղմնի որդի , և գնաց 'ի Խառան և դարձեալ կաշառօք էառ զեկեղեցին Ասորւոց ուղղափառաց . և արքեպիսկոպոսն Թէոփիլէ եհար զձեռնն 'ի խորանն և ասաց . “ Մի՛ պղծեալ խորան , վաղիւ սրբիս օրհնութեամբ և ուղղափառ պատարագաւ :” Եւ նոյն ժամայն մինչ կայր յան , վառեցաւ հրով և այրեցաւ , և եղև երկիւղ մեծ 'ի վերայ պատրիարքին Թէոփիլի , և առեալ զայրեցած ոսկերսն 'ի գիշերի փախեան. և մնաց եկեղեցին ուղղափառաց :

---

(1) Սամուէլ ասէ, ՚ի թուին Հայոց ՄԹ., և Փրկչին 762, երկու աստեղք երևեցան. մի յարևելս և մի յարևմուտս։

Եւ յայսմ ժամանակի եկն Աբդլէ որդին

Ալէ (Ալեայ) ՚ի Խառան, և փոխեաց Մրուան յԱնկարին վեց ուղտուք բարձեալք ոսկւով և արծաթով. և անտի եկեալ գնաց յաշխարհն Նուբեաց. և Աբդլա ընդ նորա. և հասեալ նմա ՚ի Նուան ՚ի վերայ Նեղոս գետոյ, և պատերազմեալք ընդ միմեանս սպանաւ Մրուան(1). և առեալ զգանձն Մրուանայ զոր ժողովեալ էր ագահութեամբ, զամենայն ստացուածս նորա գրաւեաց ՚ի յինքն Աբդլլայն և թագաւորեաց միայն: Եւ մինչ նստաւ ՚ի վրանն իւր, յանկարծակի եղեւ ամբոխ յոյժ, և սկսան գնալ ամբոխն ՚ի գերեզմանսն. գնաց և Աբդլա, և տեսին զի ելանէին ՚ի գերեզմանացն այրք ութ ներկեալ մօրուօք և միջօք չափ ելեալ՝ զտեղի առեալ կային զերիս տիւս և զերիս գիշերս, և կացոյց Աբդլլէն պահապանս ՚ի վերայ նոցա, և կային կենդանիս, և հանապազ հարցանէին, և ոչ ետուն պատասխանի և ոչ խօսեցան ամենեւին. և նոքա նեղեալք՝ դարձեալ թաղեցին զնոսա հրամանաւ թագաւորին և ինչ ոչ իմացան:

Իսկ թագաւորն Կոստանդիանոս այր իմաստուն էր և հմուտ գրոց, և ՚ի ծածուկ ունէր զուղղափառութիւնն. և մեռաւ կին նորա դուստր Խաքան թագաւորին, և այլ ոչ կամէր առնուլ կին ըստ օրինաց քրիստոնէից թագաւորաց. և բռնադատեցին զնա երիս ամս՝ առնուլ կին, և ապա ասէ ցնոսա. «Չէ պարտ երկրորդ կնու թագաւորել ինձ. և ապա թէ այդ կամիք ինձ, դիք զորդին իմ՝ թագաւոր, յայնժամ ես առնում կին:» Եւ արարին այնպէս. և թագաւորեաց Լեւոն, բայց հայրն խնամէր և հոգայր զաշխարհն և զտուն թագաւորութեանն: Եւ առեալ նորա կին և ժողովեալ զօրս, եկն ՚ի Մելտինի Հայոց և ՚ի մերձակայ գաւառսն, և առեալ զՀայս և զԱսորիս որ ընդ իշխանութեամբ Տաճկաց էին (1) տարաւ՝ ասելով ցՅոյնս. «Քրիստոնեայք են, ասէ, ընդ մեզ լիցին իբրև եղբարք և որդիք մեր:» Եւ տեսեալ զնոսա Քաղկեդոնացւոցն, մատեան առ թագաւորն և ասեն. «Ընդէ՞ր բերեր զդոսա, զի հայհոյեն զմեզ և ատեն և նզովեն զժողովն չորրորդ:» Եւ Կոստանդիանոս խնդրեաց ՚ի նոցանէ դաւանութիւթիւնս գրով. և նստեալ Հայոց գրեցին, նոյնպէս և Ասորւոցն, որ էին միաբան և մի կամաց և մի ներգործութիւն Քրիստոսի (2): Եւ տեսեալ թագաւորն և ամենայն իշխանք նորա, հիացան և գովեցին, և ասացին. «Այս է ճշմարիտ քրիստոնէութիւն և ուղղափառութիւն.» և վասն այնորիկ հրամայեաց ժողով լինել, զի յայն դաւանութիւն դարձուցէ զամենայն երկիր. և եղեւ ժողովն զոր Եւթներորդ կոչեն: Եւ ասաց թագաւորն. «Աղաչեմ զձեզ՝ երկու իրք բարձէք, մի՛ զժողովն Քաղկեդոնի, և մի՛ն՝ զպատկերագրութիւն յեկեղեցիս առնել.» և ոչ կամեցան, և անկան յոտս թագաւորին և աղաչէին՝ զի մի՛ հարկեացէ զնոսա վասն երկու խնդրոցն: Եւ տրամեցաւ յոյժ թագաւորն, և դարձաւ և ասէ. «Իսկ ո՞վ է Մաքսիմոսի աղանդն անիծեալ Նեստորականին, բարձէք զնա.» և լուան նմա, և նզովեցին զՄաքսիմոս՝ որ երկու կամք և երկու ներգործութիւն ասաց Քրիստոսի: Եւ վասն այսորիկ յորովք ՚ի Յունաց ոչ մեծարեն զժողովս զայս(1): Բայց թագաւորն ՚ի ծածուկ պաշտէր զուղղափառութիւն, և ետ հրաման Հայոց գնալ յերկիրն իւրեանց, «Օ՛ն ի մի՛, ասէ, յետ մահուան իմոյ չարչարեսցեն զձեզ.» և ետ պարգեւս և պա-

---

(1) Ղեւոնդ զտեղի մեծի բանակին Մրուանայ դնէ մերձ յԱնկողա քաղաք և ՚ի Պասրա, ուր և ՚ի վրանի իւրում սպանաւ ասէ, առանց ուրեք յիշելոյ զփախուստ նորա յերկիրն Նուբիա, (Գլ. Ը. յեր. 158):

---

(1) Ղեւոնդ. յեր. 161:

(2) Իմա՛ դաւանեցին ՚ի Քրիստոս մի բնութիւն, մի կամք և մի ներգործութիւն:

---

(1) Այս ժողով եղեւ յամի Տեառն 754. յորում գտան երեք հարիւր երեսուն և ութ եպիսկոպոսունք, և միաբանեցան կռապաշտութիւն համարել զպատկերացն պատիւ, և նզովեցին զպատկերապաշտսն. և յանուանէ նզովեցան Գերմանոս պատրիարք որ վախճանեալ էր, Յովհաննէս Դամասկացի և Գէորգ Կիպրացի:

չար ՚ի ճանապարհն և օգնականս՝ տանել զնոսա խաղաղութեամբ :

Յայսմ ամի եկն մարախ և եկեր բազում գաւառս. և ՚ի գալ միւսոյ ամին եկն կարկուտ անտանել և անդուր՝ որ փլոյց բազում շինուածս, և սպան կենդանիս բազումս, և կշռեցին ըզմէկն ութ լիտր: Եւ մեռաւ յայսմ ամի Աբդլա Թագաւորն Տաճկաց՝ Թագաւորեալ եւթն ամ, որ զկնի միւս Աբդլային Աբբասեանց (Ապուլ—Աբբաս)(1) տիրեաց Պարսից և Արաբացւոց: Եւ Թագաւորեաց Ապու—Ջաֆր, որ և շինեաց զՄլտենի և զԿարին քաղաք՝ զոր Յոյնք Կոլոնիկէ կոչեն և Արաբացիք Արզրում, որ է մօտ ծաւալի(2), և ըզԿամախ՝ զորս աւերեալ էր զնոսա Կոստանդ (Կոստանդին) Թագաւոր(3): Եւ ՚ի նմին ամի առին Տաճկունք զԱփրիկէ, և առին ՚ի Տաճկաց (՚ի Պարսից) աշխարհն զԱտրպատական և զշրջակայն ամենայն, և առին զԱրէ:

Ի Թուին Ասորւոց ՌՀԳ (1073) *և ՚ի Հա-*

---

(1) *Աբդլա՝ որ մեռաւ ՚ի սմին ամի* 755, *նոյն է որ կոչի Ապուլ—Աբբաս, որոյ նախորդն էր Մրուան Բ, և Ապուլ—Աբբասայ յաջորդեաց Ապու-Ջաֆար Ալ—Մանսուր (յաղթող) որ էր եղբայր Ապուլ—Աբբասայ. և ՚ի գիրս Հայոց կոչի Ջաֆրէ Ա. կամ Աբդլա Բ:*

(2) *Արզրում նշանակէ երկիր Հռոմոց:*

(3) *Ղեւոնդ յիշէ զնորոգութիւն Կարնոյ ՚ի ձեռն Իզիդի. որ էր կարգեալ ոստիկան ՚ի կողմանէ Ջաֆրայ ՚ի վերայ Հայոց. (յէր.* 161):

յոյն Մ (200) շինեաց Ջափար 'ի վերայ Տիգրիս գետոյ 'ի վեր քան զԿատիղէան քաղաք, և անուանեաց զնա Պաղտատ՝ որ թարգմանի միջոյ, զի ընդ մէջ է Պարսից և Ասորւոց (1)։ Յայսմ ամի եկաւ Քուրդն և գերեաց 'ի Գոզանայ յիսուն հազար անձինս։

Եւ 'ի սոյն ամի համբաւեցաւ կին մի 'ի Քուքրայ, որ ասէին թէ 'ի ծնանելն կաթն ոչ եկեր 'ի մօրէն. և զարգացաւ և եղև կին կատարեալ, և ոչ եկեր ինչ և ոչ կերաւ ամենևին. և բերին զնա 'ի Պաղտատ առ Ջափր, և փորձեաց և գտաւ այնպէս։ Եւ արար Ջափրն ժողով գիտնոց, եթէ լուալ իցէ այնպիսի ինչ երբէք. և ասացին՝ թէ ոչ (2)։ Եւ յայսմ ժամանակի ապստամբեցին Սոգքն և եղին իւրեանց թագաւոր (3). և գնաց Տաճիկն 'ի վերայ նոցա, և յաղթեցան 'ի Սոգուցն. և երկրորդ անգամ չոգաւ Տաճիկն 'ի վերայ Սոգուցն, և կոտորեցին 'ի նոցանէ քառասուն հազար անձինս, և հնազանդեցոյց զՄոգան և դարձաւ ։ Եւ ելեալ Դաւիթն 'ի Միջագետս, և կացոյց երկու հարկահանս, Տաճիկ մի Սլիման անուն և Հրեայ մի Մուսէ անուն, որ և դադարկ արարին զաշխարհս յսկւոյ և յարծաթոյ ։ Եւ բազումք փորէին զգերեզմանս՝ գտանել ինչ և տալ նոցա, զի կեղեքեալ և տանջեալ լինէին 'ի բռնութենէ նոցա ։ Եւ լուեալ Յունաց սկսան և նոքա պեղել զգերեզմանս հնոց մեռելոցն. և մինչ փորէին 'ի Նիկոմիդայ քաղաքի, գտին զգերեզմանն Նիկոմիդեայ շինողի քաղաքին, և բազմութիւն ոսկւոյ և ականց պատուականաց ընդ նմա ամփոփած. և ազդ արարին Կոստանդիանոսի, և գնաց և ետես, և ոչ կամեցաւ առնուլ ինչ 'ի նմանէ, այլ կոփածու վիմօք փակեաց, և ասաց. “Օ՜ ինչ պարշաւագոյն քան կենդանեաց կողոպտել զմեռեալս և այնու փայլել.” և սաստեաց նոցա զի այլ մի՛ արասցեն զայն ։

---

(1) Ըստ Միքայէլի Չամչեան (Հտ. Բ. յեր. 408)։ Ջափրէ շինեալ զքաղաքն Բաղդատ. կոչեաց զնա Մէտինէթ Ասսալամ, որ է քաղաք խաղաղութեան. այլ զի բնակէր անդ յառաջագոյն և իշխան ոմն Բաղտ անուն, անուն առաւ կոչիլ Բաղդատ։

(2) Զայն պատմէ և Կիրակոս, թէ յաւուրս իշխանութեան Ջափրայ ծնաւ կին մի, որ եկաց ամս երեսուն և ոչ ինչ կերաւ, յեր. 44։

(3) Միւս թարգմանութիւնն ասէ, եթէ յայսմ նշանէ խաբեալ Սոգուցն՝ ապստամբեցին ընդդէմ տէրութեան Արաբացւոց։

Իսկ 'ի չարաչար ագահութենէն Դաւթի այնչափ պակասեաց արծաթն, զի զեզն և զէշ դրամի միոյ վաճառէին, և զոզայն հինգ դրամի տային պահանջողացն ։ Եւ սա զկնի քսան ամի սատակեալ, հանգեաւ երկիր 'ի չարեաց պղծութենէ նորա ։ Եւ 'ի նոյն ամի մեռաւ Կոստանդիանոս Թագաւորեալ ամս երեսուն և չորս ։ Եւ Լեւոն (Դ) որդի նորա հաստատեցաւ 'ի տեղի նորա ։ Եւ 'ի վերայ Տաճկաց թագաւորեաց Մահադի որդի Ջաֆրի , և ցրուեաց զամենայն ինչսն որ գանձեալ էր հայրն , և ետ զինքն կախարդութեան , և աստեղօք վարէր ։ Եւ լուեալ Լեւոնի՝ առաքեաց նմա զգիրս Յանէսայ և Յամբրեայ կախարդացն՝ զոր ինչ գործեալ էին ընդդէմ Մովսէսի ․ և ընկալաւ խնդութեամբ ։ Եւ եկն Մահադի 'ի Հալապ , և ելին ընդդէմ նորա երկոտասան հազար Ասորի պատուել զնա ․ և զարմացաւ ընդ բազմութիւնն , և յարժամ նոսա՝ կոչեաց զնոսա և ասէ ․ “ Մի յերկուց առաջի կայ ձեր , կամ մեռանել՝ կամ դառնալ 'ի կրօնս մեր ։ ” Եւ տաճկացան հինգ հազար այր , և այլն ամենն մեռան վասն հաւատոցն որ 'ի Քրիստոս ։ Եւ կանայք և մանկունք ուրացողացն թողին ըզնոսա և փախեան ։ Եւ գնաց Մահադի յերկիրն Արաբիոյ 'ի Հռոմայեցիսն․ և զԱհարոն որդի իւր առաքեաց յաւարի ․ և գնացեալ յԵփեսոս գերեցին եւթն հազար անձինս , և պակասեաց 'ի նոցանէ չորս հազար այր (1) ։

Եւ Լեւոն առաքեաց զօր 'ի Միջագետս , և տարան զքրիստոնեայսն՝ Հայս և Ասորիս ուղղափառս , և բնակեցոյց ընդ ինքեան 'ի Թրակիա (2) ։ Եւ գնաց սա 'ի Ճանապարհ հօր խւրոյ, եւ ոչ երկրպագեաց պատկերաց եւ ոչ ետ երկրպագել, եւ ոչ հաղորդեցաւ 'ի Քաղկեդոնացւոցն. վասն որոյ 'ի Յունաց ժամանակագրացն տրտնջելով Յակոբիկ կոչեն ըզսա։ Եւ սա թագաւորեաց ամս տասն՝ մեռաւ. եւ թագաւորեաց Կոստանդիանոս (Ե) որդի նորա երկոտասանամեայ, եւ Իրինէ մայրն նորա ընդ նմա. քարոզեալ լինէր թագաւոր վասն տղայութեան նորա։ Եւ Ահարոն եկն յերկիրն Հռոմայեցւոց եւ դարձաւ անօթիւ։ Յայսմ ամի շինեաց Ալի հրամանաւ Մահադի կՀադ քաղաք յերկիրն Մարաշայ։ Եւ մեռաւ Մահադի եւ թագաւորեաց որդի իւր Մուսի ամս երկու։ Եւ եկեալ Հռոմայեցւոցն զկնի երկու ամի շինելոյն զՀադ, քակեաց զնա։ Եւ մեռաւ Մուսի, եւ թագաւորեաց Ահարոն եղբայր նորա որ կոչեցաւ Ռաշիտ։ Եւ դարձեալ շինեաց Աբդլմէլէք զՌաշիդ (1), եւ պատերազմեաց երկու հազար այլ, եւ քակեաց զեկեղեցին որ կային յարեւմտից Շնձէ դեսայն (2) որ է

---

(1) Իմա՝ 'ի զօրաց իւրոց ։

(2) Ածել Լեւոնի զաղթականս 'ի Հայոց և յԱսորւոց՝

'ի Թրակիա, զոր արար ձեռամբ Միքայէլի զօրապետի Թրակացւոյ. որպէս եւ Կոստանդին Ե գաղթեցոյց յառաջ քան զսա 'ի Կոստանդնուպօլիս, ոչ յաղագս այլոյ իրիք պատճառի էր, բայց եթէ առ 'ի լնուլ զտեղի բնակչացն որք մեռան 'ի մահտարաժամն, որ տեւեաց յամէ 747—750։

(1) Ամենայն օրինակք ունին Հաշէր։ Այս քաղաք շինեցաւ հրամանաւ Հարուն Էլ—Ռէշիտայ։

(2) Տես 'ի ծանօթութեան մերում 268. 'ի գիրս պատմութեան Մատթէոսի Ուռհայեցւոյ, յեր. 576։

մերձ Սամուսատայ, և քակեցին զառաքելաշէն եկեղեցին ՙԲեանոյ հնդետասանն խորանին, և տարեալ սայլիւն զքարն շինել զՀադ:

Յայսմ ժամանակի գտաւ տապան մի յՈւռհա՝ Հրէի, որ գրեալ էր թէ՝ «Հաւատամ որ գայ ՙՔրիստոս, ՚ի կուսէ ծնեալ. և ծագեսցէ լոյս նորա ՚ի վերայ իմ:»

Ի յայսմ ամի խնդրեաց Կոստանդիանոս, եթէ Փիլիպէ (Հերակղիոս) պատրիկն Սիկիլիոյ շնայր ընդ մայրն նորա, և կամեցաւ ըմբռնել և հանել զաչս նորա. և փախեաւ Փիլիպէ և եկն առ Տաճկունս, և առեալ քառասուն հազար զօրք՝ գնաց դարձուցանել զՍիկիլիա ՚ի Տաճիկս: Եւ գնացեալ նոքա ձիւնարգել եղեն, և յոլովք մեռան և մնացեալքն եկին ՚ի Կոստանդնուպօլիս և արարին նոցա մարդասիրութիւն, և թողին ըզնոսա. և Կոստանդիանոս այլ ոչ ետ քարոզել զմայրն յեկեղեցին յետ չուեթեանն: Եւ մեռաւ կինն Կոստանդիանոսի, և նա արհամարհեաց զկանոնս Առաքելոցն, և առ այլ կին (1), և ասելի եղեւ բազմաց: Եւ ապականէր զդստերս իշխանացն. և մայրն լուեալ զտրտունջ իշխանացն, կուրացոյց զաչս որդւոյն և թագաւորեաց ինքն, և արար երկրորդ իւր զներքինին իւր Փիլադի (Նէդլոս՞)։

---

(1) Կոստանդին Ե ամուսնացաւ նախ ընդ Մարիամայ դստեր նախարարի միոյ հայկազնոյ յերկրէն փափլագոնից, և էր Մարիամ սքանչելի գեղով. այլ յամի 795 թողեալ զնա կայսեր՝ եմուտ ՚ի վանս կուսանաց, և ինքն առ զԹէոդոտա նաժիշտ մօր իւրոյ Եռինեայ, յորմէ ծնաւ Լեւոն:

Ի ժամանակի յայս կային ՚ի թոռանցն Աթանասայ Կոմսի որդւոց, որք փորեցին զտունս իւրեանց, և գտին բազում գանձս և ոսկեղէն օձս և կարիճս փորածոյս շինած, և մէջն լցեալ քեմիայիւ, որ ցանէին ՚ի վերայ հալեալ պղնձոյ և դառնայր յոսկի. և գրած էր ՚ի նոսա բաժինս աղքատաց և եկեղեցեաց։ Եւ զայս գտեալ՝ մեծացան յոյժ և ստացան ձիս և ջորիս և շունս և բազէս, և ելանէին որսային։ Եւ եհաս բանս այս ՚ի թագաւորն Տաճկաց, և տարաւ զնոսա առ ինքն, և չարչարեաց և էառ զոր ինչ ունէին. և առեալ զօձսն և բացեալ և զլցեալ քեմիայն գիտէին թէ հող է, և թափէին ընդ վայր, և յետոյ իմացեալ զպատուականութիւն իւրացն և յոյժ տրտմեցան։ Եւ կուսան մի սուրբ ՚ի նոյանէ տունէն ՚ի Բաղկեդանացի մի ՚ի պահուստ, և եհան զնա ՚ի վերնատուն մի և եդ պահապանս Տաճիկս. և նա երկուցեալ ՚ի խայտառակութենէ՝ մեռաւ ընկենլով զինքն ՚ի բարձր տեղւոյն ՚ի վայր. և լուեալ թագաւորն Տաճկաց տրտմեցաւ և եթող զայլսն (1)։

Եւ Տաճիկքն սկսան արհամարհել զքր

---

(1) Իմն զեղծարան կուսին՝ զթոռանն Աթանասայ։

ռոմայեցիան վասն կնոջն Իրինեայ, և առին խորհուրդ զօրքն Թագաւորեցուցանել զՆիկիփոր Կապպադովկացի · և լուեալ Իրինէ, կամեցաւ հանել զաչս նորա, և ներքինին Թագոյց զնա · և գտեալ զնա զօրայն Թագաւորեցուցին · և սա պատուով ունէր զդշխոյն և զներքինին։ Եւ դարձեալ իմացաւ Նիկիփոր թէ խորհին նմա չարիս, առաքեաց զԻրինէ յաքսորս յԱթէնս, և թոյլ ետ ներքինւոյն, և չարար նմա չար վասն երախտեացն առ ինքն ։

Յայսմ ժամանակի շինեաց Թագաւորն Տաճկաց քաղաք մի յերկիրն Տաճկաց և կոչեաց զնա Զուպատրա (1), և եկին Հռոմայեցիք և յաւարի առին զերկիրն Տաճկաց ։ Եւ Նիկիփոր էր այր հզօր և խորհրդաւոր · և ասեն վասն սմա՝ թէ ՚ի Տաճիկ ազգէ էր, որք արհամարհանս գտեալ յազգէն իւրեանց՝ քրիստոնէացեալ էին յառաջագոյն և ՚ի նոցանէ ծնեալ էր Նիկիփոր։ Եւ Ալփի (Փիլիտէ՞) տրուեալ զՍիկիլիա ՚ի Տաճիկք, եկն առ նոսա և պատմեաց՝ թէ Նիկիփոր այր քաջ է և պահող և աղօթող · և գրեցին առ Ահարոն ։ Եւ ժողովեալ բազմութիւն յոյժ՝ գնաց յերկիրն Հռոմայեցւոց · և ել ընդդէմ նորա Նիկիփոր, և նստան ամիսս երկուս հանդէպ միմեանց և խօսեցան 'ի խաղաղութիւն , և արարին սէր և խառնեցան զօրքն 'ի միմեանս. և տուեալ Ահարոն Նիկիփորայ զամենայն վրանն և դարձաւ (1):

---

(1) Զայս քաղաք շինեաց Հարուն Էլ—Ռէշիտ ամիրայ ՚ի փոքր Հայս, մերձ Մալաթիոյ ։

Եւ շինեաց Ահարոն քաղաք 'ի վեր քան զԿալանիկոս և անուանեաց զնա Երակլիա (Հրակլիա) (2), զի առեալ էր կին Երակլեայի. և Նիկիփոր շինեաց զՆիկիւրիա :

Յայսմ ժամանակի Անանիա եպիսկոպոսն Մերտինայ , որ էր 'ի լեռնէն Հազարուորաց , որ է լեառն Միսուէի . սա շինեաց զվանքն սուրբ Անանիանցն . գտեալ աւերակ բերդ մի և գնեաց զնա 'ի Տաճկաց , և փորեաց 'ի մէջ նորա և արար սրբատուն ծանր ծախիւք, և բերեալ 'ի Տարսոյ զնշխարս Անանիանցն և եդ 'ի նմա . և բերեալ զնշխարս Բարթուղիմէոսի Առաքելոյն 'ի Հայոց և զՓիլիպպոսի (3) 'ի Մանբէճայ. և գնացեալ 'ի Հռոմ՝ եկաց հանդէպ սրբոց Առաքելոցն , և տուաւ նմա մասն 'ի Պետրոսէ և 'ի Պօղոսէ , և բերեալ զայն . և գնացեալ 'ի Բաբելոն՝ եգիտ անդ զնշխարս Դանիէլի մարգարէին և զԵզեկիէլին և զՍեմայ որդւոյ Նոյի, և այլ բազում նշխարս ,

---

(1) Այս դէպք այլազգ պատմի 'ի միւս Թարգմանութեան :

(2) Այն է Էրէկլէ 'ի վերայ ճանապարհին Իկոնիոյ՝ որ տանի 'ի Տարսոն :

(3) Չնօտրագիր բառս որ պակաս էին 'ի մերումս բնագրի , լցուցաք 'ի միւս Թարգմանութենէ :

և բերեալ զնոսա եդ 'ի սրբատունն զոր շինեաց, և 'ի վերայ նորա շինեաց եկեղեցի գեղեցիկ, և մինչև ցայսօր կատարին աղօթք խնդրողացն ։

Իսկ Ահարոն թագաւոր Տաճկաց արար համար գանձուն իւրոյ և գտաւ առաւել քան զոր Դաւիթն էր հաւաքեալ, հազար բիւր. և յոյժ ուրախացաւ, և կրկնեաց երեք ծունր Աստուծոյ և զթագաւորութիւնն խոստացաւ Մահմետի աւագ որդւոյն իւրոյ, և զկնի նորա Մամունդին, և յետ նորա Կասումայ (1). և այս եղեւ պատճառ խախտելոյ թագաւորութեանն նոցա ։ ԶՄահմէտ եդ 'ի Բաղտատ և զԿասում յԱսորիս և զՄամունն տարաւ զհետ իւր 'ի Խորասան ։ Եւ ետ նմա զգանձն իւր. և անդ մեռաւ թագաւորեալ ամս քսան և երեք ։

Իսկ Նիկեփոր գնաց զօրու ծանու 'ի վերայ Բուլղարաց, և եհաս 'ի քաղաք թագաւորութեան նոցա, և արար բազում կոտորածս, մինչև արկանէր տարածոց զմանկունս նոցա և անցուցանէր կամնասայլս 'ի վերայ նոցա անողորմաբար. և զայրացեալ Փռանգ մի, եհար և սպան զնա ։

---

(1) Անուանք երից որդւոցն Հարուն Էլ—Ռէշիտայ են այսոքիկ ըստ աւանդութեան Արաբաց. առաջինն՝ Ապու Մուսա Մոհամմէտ Ալ—Ամին. երկրորդն՝ Ապու Ճաֆար Ապտ—Ալլահ, այն է մականուանեալն՝ Մամուն կամ Մամաուն. երրորդն՝ Էլ—Քասէմ Իսլահիմ Պիլլա ։

Եւ թագաւորեաց Տաճկաց Մահմէտ, և եհան զգանձս հօր իւրոյ 'ի Կոլանիկոյ և տարաւ 'ի Բաղդատ, զի թագաւորեալ էր Սամունն 'ի Խորասան, որ էր կիրթ ուսմամբ և իմաստութեամբ : Եւ կամեցաւ Մահմէտ խռովութիւն առնել և ատել ուխտի հօրն, և ոչ տայր զգանձն Սամունդին (Սամոունին) և սկսան պատերազմիլ ընդ միմեանս Մահմէտ և Սամունդն . և լուեալ զայս բազումք ապստամբեցին 'ի Փղշտացւոցն . և Մահմէտ արար ժողով և եդ զօրավար զԱլի(1) . և առաքեաց 'ի վերայ Սամունդին . և նա առաքեաց զօրս ընդդէմ նորա և պատերազմեցան , և յաղթեցաւ զօրքն Սամունդին և փախեան և ոմանք գերեցան եղեն : Եւ եկեալ Մահմէտ 'ի Սամուսատ , և չինեաց ըզբերդն և ամրացաւ , և 'ի ձեռն Աբդլմելէքի հնազանդեաց զապստամբսն . և չինեաց ըզպարիսպն Ուռհայոյ կրկին և զՍամուսատայ պարիսպն և զԲեսնոյ՝ քրիստոնէից ստացուածօք զորս կողոպտէրն : Եւ Հիւսէն զօրավարն ապստամբեաց , և կալեալ զՄահմէտ՝ եդ 'ի կապանս , և գնաց նստաւ 'ի Բաղդատ : Եւ Մահմէտ առաքեաց աղաչանօք առ Հիւսէն , զի միայն թողցէ զնա կենդանի և ոչ պիտի նմա թագաւորութիւն .

---

(1) Նա է որ 'ի միւս թարգմանութեան կոչի Հիւսէինս որպէս և աստ փոքր մի յետոյ կոչէ Հիւսէն :

և խղճացեալ ետ նմա կեանս և զթագաւորութիւնն։ Եւ գնաց Մահմէտ ՚ի Խաղատ, և Մամունդն առաքեաց զՀորթամ զօրապետըն իւր, որ երթեալ պաշարեաց զԽաղատ. և սպառեցաւ քոր ՚ի քաղաքէն, և քակեցին զեկեղեցիսն և ձգէին ՚ի դուրս։ Հասաւ և այն և մտին ՚ի քաղաքն, և գտին զՄահմէտ թագուցեալ ՚ի տան միում, կալան և սպանին զնա։ Եւ եկն Տահիրն (Դահիր) միւս զօրապետըն Մամունդին չորս հազարաւ ՚ի Կալինիկոս, և սկսաւ սպառել զապստամբսն։

Յայսմ ժամանակի եղեւ շարժ ահագին, և լերինքն Կողոստու որ կան աստի և անտի, հպեցան առ միմեանս, և տեսին մարդիկ. և փլաւ լեառն մի և անկաւ յԵփրատ, և արգելեաց զնա օր մի, որ գնայր գետ ՚ի վեր. և բազում լերինք խլեցան, և յոլով աղբիւրք բացան ջրոյ և կպրոյ և նաւթոյ, և բազումք խցան յաղբիւրականց։

Եւ Կուրիշացիք ազգ մի են Տաճկաց որք գրին իւրեանց թագաւոր ՚ի Պաղտատ զԻբրէհիմն (1). և Տահրն (Դահիր) յորժամ լուաւ զայս՝ իշխանացաւ ՚ի Խառան և ՚ի Կալանիկոս, և հրաման ետ՝ թէ իցեն կռապաշտք՝ յայսմ ժամանակի յայտնապէս զոհեսցեն և անհոգ լիցին. և գտան բազումք։

---

(1) Իպրահիմ պէն Էլ—Մէհտի՝ որ էր հօրեղբայր Էլ—Մամունայ։

Եւ զՄուրզա կոչոյց Տահիրն յՍուահա, որ նեղէր զքրիստոնեայսն ասելով. "Եթէ գնայցէք առ ձեր քրիստոնեայ թագաւորն, զի հանգիցուք մեք. փոխանակ զի մինչ ՚ի յայս ժամանակս անապատաբնակք եւ բացօթեայք էաք, եւ այժմ առաք զերկիրս թրով, եւ մեր է այսուհետեւ:" Եւ տրտմէին քրիստոնեայք՝ զի ոչ գոյր տեղի ապաստանի:

Իսկ զկնի Նիկեփորայ թագաւորեցուցին զԼեւոն. եւ Միխայէլ զօրավարն Հռոմայ սպան զԼեւոն եւ ինքն թագաւորեաց (1): Եւ յայսմ ժամանակի ապստամբեաց Նասրն (2) ՚ի Սրուճ եւ առաքեաց առ Միխայէլն տալ նմա ձեռն, եւ առաքեաց Միխայէլ դեսպանս առ Նասրն, եւ թիւրեցին զՆասրն ազգն իւր, եւ սպան զդեսպանսն:

Իսկ Մամունն ունէր առ ինքն իշխան մի Հռոմայեցի Թոմաս անուն, որ եկեալ էր առ Ահարոն հայրն իւր եւ ասացեալ թէ՝ "Ես Կոստանդինոս թագաւորին որդի եմ." եւ ունէին զնա պատուով, եւ Մամունն ետ զօր նմա գնալ ՚ի Կոստանդինուպօլիս կամ թա-

---

(1) Զկնի Նիկեփորայ եւ յաթոռն Ստաւրակի ամիս վեց. որում յաջորդեաց Միքայէլ Ա. Ռանգաբէ կոչեցեալ, որ էր փեսայացեալ Նիկեփորայ, ամ մի եւ ամիս ինն: Զսա փոխանակեաց Լեւոն Ե. Արծրունի՝ ամս եւթն. եւ զսա Միքայէլ Բ. Թլուատն կոչեցեալ, որդի Հրէի, յամի 820:

(2) Նասր էր մի ՚ի գլխաւոր կուսակալաց Մահադիի կամ Բարանայ. զորմէ զկնի:

դաւորել, կամ առնել զնոսա անհանգիստս : Եւ գնաց Թումաս և պաշարեաց զԿոստանդինուպօլիս վեց ամիս(1)*: Եւ Միխայլն հանեալ զՏաճիկ ծառայն խոստացաւ ազատութիւն նոցա՝ եթէ սրտի մտօք կռուեսցին ընդդէմ Տաճկաց . և կռուեցան և փախուցին զԹոմաս, և կալան զնա և կտրեցին զոտսն և զձեռսն, և շրջեցուցին ընդ քաղաքն . բայց զծառայսն ոչ ազատեաց Միխայլն :*

Յայսմ ժամանակի եկն Մամունն 'ի Բաղդատ, և գնաց Տահիրն առ նա և առաքեաց զնա իշխան 'ի Խորասան, և Պրէհիմն փախեաւ և անյայտ եղեւ : Եւ յայսմ ամի ծովն Եգիպտոս ընկեց յերկիրն Կիլիկիոյ ձուկն մի, որ քառասուն գիրկ երկայն էր և նոյնչափ լայն և հաստ, ոչ էր իբրեւ ձուկն՝ այլ որպէս բլուր մի սոսկալի տեսլեամբ : Եւ ժողովեցաւ երկիրն և կտրատեցին և աշխատեցին և կերան և ձէթ բազում հանին և վաճառեցին յԱնտաք, և այրէին և ուտէին զնա բազում ժամանակս :

Ի թուին Յունաց ՌՃԽ (1140) *և Հայոցն* ՄԿԷ (267)(2)*, մեռաւ Միխայել թագաւորն*

---

(1) *Սամուէլ յիշէ զգալ սուտ թագաւորին Թումասու 'ի կայսեր քաղաք 'ի թուին Հայոց* ՄԾԳ (253) :

(2) *Միւս թարգմանութիւնն դնէ* ՄԾԶ (256) *և երկոքին են սխալ փոխանակ դնելոյ* ՄՀԷ, *այն է 'ի թուին Քրիստոսի* 828 *կամ* 829, *յորում ամի մեռաւ Միխայել* Բ:

Յունաց, եւ Թագաւորեաց Թէոփիլոս։ Եւ եկին Բուլղարք 'ի հնազանդութիւն նմա և Բուրտանք և մասն ինչ Արաբացւոցն, որք էին լեզուք առանձինն Բուրտանքն (1)։ Եւ 'ի հին ժամանակացն կայր 'ի մէջ Բուրտանացն բան ինչ դիւթական, եթէ յայտնելոց է այր մի Մահադի անուն, և տիրէ ամենայն երկրի. և որ հաւատայ 'ի նա և մեռանի, յետ քառասուն աւուր յառնէ, և ժամանակ ինչ կեցեալ՝ փոխի յանմահական աշխարհն։ Եւ ոմանք ասէին՝ թէ Աստուած է, և այլք՝ թէ թագաւոր է, և սպասէին նմա։ Եւ յայսմ ժամանակի երևեցաւ ոմն Մահադի անուն, և կարծեցին թէ նա է. և ինքն հաւատայ թէ ինքն է, և սկսան ժողովիլ առ նա, և թագ եդ և ձգէր քող երեսացն. և ել համբաւ զնմանէ, և զարհուրեցաւ Մամուն 'ի նմանէ։ Եւ գնաց Մահադի և արար զբնակութ՟ի իւր 'ի լերինս Արարադայ յաշխարհն Հայոց և երթայր յամենայն կողմանս և զամենայն ազգ միապէս կոտորէր. և եկն 'ի Ճգլկոյ սահմանն, և հարկանէր և աւերէր առհասարակ։ Եւ լուեալ Հասան զօրապետըն Մամունայ, և պնդեալ զինքն խաղաց գնաց 'ի վերայ նորա և սկսաւ կոտորել։ Եւ փախեան 'ի նմանէ բազմութիւն ամբոխին։

---

(1) Թուի թէ ասիցէ զՄարաց, որ են Քուրդք։

Եւ ինքն Մահադի ընկեցեալ զթագն և ըզքողն՝ փախչէր, և անկաւ յերկիրն Հայկազնոյն Սահակայ, և Տաճիկքն առին զբանակըն նորա և դարձան. և Սահակ իշխանն Հայազուն ըմբռնեաց զՄահադի և կտրեաց զգլուխ նորա. և չոգաւ Սահակ և կոտորեաց զբազումս ՚ի Տաճկաց, և Քուրտանքն պատեալ էին զերդն Սահակայ, և նա դարձեալ ՚ի կոտորածէն՝ եգիտ պաշարեալ ըզտուն իւր և կոտորեաց զնոսա, և սակաւք ՚ի նոցանէ զերծեալք եկին առ Թէոփիլոս այսու պատճառաւ: Եւ այն Տաճիկքն որ ընդ Քուրտանին գնացին, և նոքա հաւատացեալ էին ՚ի Մահադի, որ երբեմն ասէր՝ թէ ես եմ Քրիստոսն, և երբեմն՝ թէ ես եմ Հոգին սուրբ. և այնպէս հայէին ՚ի նա՝ որպէս լսէին ՚ի նմանէ (1): Իսկ յորժամ ետես Թէոփիլոս զփախուցեալսն որ գնացին առ նա, ուրախ եղեւ. և ել նոքօք յիշխանութիւնն Տաճկաց, և գնաց ՚ի Զուպատրա և առ ըզնա և քակեաց, և զընակիչսն տարաւ գերի։

---

(1) Վարդան յիշատակէ զՄահադին զայս և կոչէ զնա Բաբ կամ Բաբան. զորմէ ասէ եթէ ՚ի սուր սուսերի ըսպանանելով զիսմայելացիսն, եկն մինչեւ ՚ի Գեղարքունիս. Սահլ (Սահակ՞) որդի Սմբատայ, ըմբռնէ զնա և ընդունի փոխարէն պարգեւս յոյժ յԱփշնէ, որ էր յայնժամ ոստիկան կարգեալ ՚ի Հայս. և զոտս և զձեռս Բաբանայ հատեալ՝ կախէ զնա զփայտէ: (Եր. 107—109):—Միքայէլ Չամչեան, (Հա. Բ. յեր. 441).

Եւ ՚ի գալ միւսոյ ամին դարձեալ շինեցին Տաճիկքն զՕշուպատրա :

Եւ պատրիկն Մանիլ(1) ապստամբեալ ՚ի Թէոփիլէ, եկն առ Մամուն և տայր զնա մատնել յերկիրն Հոռոմայեցւոց. և յորժամ եկն ՚ի Խառան՝ արգել ՚ի քակելոյ զեկեղեցին : Եւ եկեալ Մամունն ՚ի յՈւռհա և հայցեալ զմուտս կաթողիկէ եկեղեցւոյն, և ասացու թէ՝ հարկատու է Տաճկաց, և ել հրաման ՚ի նմանէ արգելման հարկի եկեղեցւոյ : Եւ ՚ի ժամանակս ամարան գնաց Մամունն ՚ի Կապադովկիա, և առ անառ բերդս չորս, և դարձաւ ձմերել ՚ի Դամասկոս : Եւ ՚ի գալ միւսոյ ամին՝ Ապրիլ ամսեան եկն դարձեալ ՚ի Հոռոմայեցիսն, և իջաւ ՚ի Լուլայ բերդն(2), և ոչ կարաց առնուլ զնա և դարձաւ ՚ի Քեսուն. և ել ընդ առաջ նորա Դիոնէսիոս պատրիարքն, և արար նմա մեծ պատիւ, և ետ նմա գիր ազատութեան եկեղեցւոյ : Եւ մինչդեռ խօսէր ընդ պատրիարքին, բերին աւետիս՝ թէ առին զԼուլան զօրքն զոր թողեալ էր ՚ի վերայ բերդին, և յաւել 'ի սէր պատրիարքին ։

---

(1) Մանիլ կամ Մանուէլ էր յազգէ Մամիկոնէից ըստ Վարդանայ (յեր. 107), որ ընդ քաջութեան լծորդեալ ունէր և զոգի բարեպաշտութեան : Սա ինքն ապաշխարեալ եկաց ընդդէմ պատկերամարտից, և հաստատեաց ժողովով կրկին զպատկերապաշտութիւն յամի 842 :

(2) Այն է Լուլայ բերդ ՚ի Կիլիկիա, ընդ հարաւակողմ Իկոնիոյ.

Եւ յայնժամ Մանիկ պատրիկն Թողեալ զՄամունն գնաց առ Թէոփիլոս. և առաքեաց Թէոփիլոս խնդրել սէր 'ի Մամունայ, և ասէ Մամունն. “Թէ տայք ինձ հարկս և անուանէք զիս Թագաւոր 'ի վերայ ձեր, արարից ընդ ձեզ սէր ։” Եւ Թէոփիլոս այլ ոչ ետ նմա պատասխանի ։ Եւ գնաց Մամունըն 'ի Կիլիկիա. և եկն ոմն Հռոմայեցի առ նա և ասաց զինքն որդի Թագաւորի. և Մամունն հաւատաց և արար նմա Թագ յերէք հազար դահեկանէ, և ասաց ընդ Յոյն պատրիարքն Անտիոքու՝ օրհնել զնա Թագաւոր ըստ օրինի քրիստոնէից. և արար այնպէս ։ Եւ լուեալ 'ի Կոստանդնուպօլիս նզովեցին զՅոյն ։ Իսկ խաբեբայն երկու ամ կեցեալ 'ի մէջ Տաճկաց և ոչ արար ոք նմա հոգ, և նա ուրացաւ զՔրիստոս և տաճկացաւ ։

Եւ Մամունն գնաց յերկիրն Հռոմայեցւոց և սիրով խաբէութեան զամենայն աշխարհն հնազանդեցուց մինչ 'ի Տայանա (Տիանա) քաղաք զոր քակեալ էին Տաճիկք, և սկսաւ շինել 'ի հարկաց երկրին զոր պահանջէր խստութեամբ, մինչ ամենայն լեզու նզովէր զնա. և եհաս յականջս Տեառն զօրութեանց, և սպան զնա Աստուած և մեռաւ ։ Եւ Թագաւորեաց Աբուսահակ եղբայր նորա, որ և այրեաց զշինուած քաղաքին և զամենայն կազմուածն . և գնաց ինքն 'ի Բաղտատ և հնազանդեաց բռնութեամբ, թէպէտ ոչ էին ընդ նմա : Եւ յայնժամ եկին 'ի Բասրայ, և տրտնջեցին զկղզին` որ կոչի Բանատի, թէ միշտ ապստամբանոց է, և կասորեն զվաճառականսն որ գնան յԵթովպիա և 'ի Հնդիկս : Եւ կայ կղզին այն 'ի մէջ ծովուն հանդէպ աղուոյն ուր խառնի Եփրատ և Տիգրիս 'ի ծովն որ կոչի Պարսից : Եւ առաքեաց Թագաւորն զօրս 'ի վերայ նորա, և ոչ ինչ կարացին առնել վասն ամրութեան տեղւոյն և հնարիմացութեան նոցա և քաջութեան արանցն. ապա յայնժամ առաքեաց Թագաւորն յԵգիպտոս և 'ի Սաքա և ետ ածել անտի արուեստաւորս և ծովամուտք, որ ծածկէին զզգայարանն սաղմով մանկանց և առեալ ձէթ փչով լնուին 'ի ծովն, և որ տեղաց հանդէպ պիտէր` մտանէին 'ի ծովն և ելանէին : Եւ առաքեաց զնոսա ընդ զօրան` զի յորժամ ելցեն բնակիչք կղզւոյն նաւօք 'ի կռիւ ընդ նաւուն Տաճկաց, մտցեն նոքա յանկարծակի 'ի քաղաքն և այրեսցեն զնա, զոր և արարին իսկ . և բարձան ապստամբքն և լինէր դիւրութիւն վաճառականաց և երթեւեկաց և աշխարհին Բասրայոյ շինութիւն և ընդարձակութիւնս յոլով :

Յայսմ ամի ել Աբուսահակ և շինեաց 'ի մէջ Նինուէի և Բաբիլոնի զգեղն Շամրա արքունիք մեծ և ընդարձակ, և բերեալ յԵգիպտոսէ բալասանի տունկ և այլ բազում ազգս տնկոց, և չինեաց անդ դրախտս և փայելչութիւնս զբօսանաց։ Եւ գիտասցես՝ զի այլ է Բաբելոն և այլ է Բաղդատ, չորս աւուր է միջոց նոցա։

Յայսմ ժամանակի առաքեաց Աբուսահլն դեսպան 'ի Նուբիոն այսու պատճառաւ։ Ի հին ժամանակաց կայր խաղաղութիւն 'ի մէջ Տաճկաց և 'ի մէջ Նուպեացն, և Տաճկունք տային Նուպեացն ցորեան և գինի և ձէթ և հանդերձս շատ յոյժ։ Եւ թէ ելանէր թագաւորն Նուբեաց յերկիրն Տաճկաց, հնազանդէին նմա Տաճկունք յամենայն իրս որպէս իւրեանց թագաւորին։ Եւ Նուբիքն տային Տաճկաց երեք հարիւր սեաւ ծառայ, և տասն ապուզնայ և զուրափէ մի, որ է կենդանի գոմիշոյ չափ և խայտ, և առաջքն բարձր, որ է գինն քան հազար դահեկան, և փայտս անփուտս։ Եւ յորժամ անկաւ բաժանումն 'ի Տաճկունք, խափանեցաւ սահմանն այն զոր խնդրէր Աբուսահլն. և յորժամ գնաց դեսպանն, իշխան մի Զաքարիա անուն որ գրեալ էր զորդին թագաւոր Գէորգի անուն, որ էր 'ի կնոջէ թագաւորազնէ. զի առ նոսա օրէնք է հայրենեօք թագաւորել, և որ լինի յազգէ թագաւորի։ Հաճոյ թուեցաւ Զաքարիայի առաքել զորդին առ

Եբուստահըն։ Եւ յորժամ լուաւ զգալուստն նորա Թագաւորն Տաճկաց, արար ուրախութիւն մեծ, և առաքեաց և արար պատրաստութիւն ճանապարհին ծախք մեծամեծք՝ մարդոյ և գրաստուց. և եհան հրաման ելանել ընդ առաջ նորա Տաճկաց և քրիստոնէից եկեղեցականաց և աշխարհականաց. և յորդեալ ընթանայր աշխարհն ամենայն ընդ որ գայր նա՝ առաջի նորա, զի տեսանէին նոր իրք. մանուկ քսանամեայ վայելուչ հասակաւ նստեալ յուղտու, որ զարդարած էր նոր և անգին Թամբօք և կուբայ(1) ոսկեղէն ականակապ և մարգարտաշար 'ի վերայ նորա զմբեթայարդ, և 'ի վերայ զմբեթին խաչ ոսկեղէն։ Եւ ունէր հանդերձ անասելի բանիւ, և Թագ 'ի գլուխն անգին, և խաչ ոսկի 'ի վերայ խնձորոյ 'ի մի ձեռնն, և գաւազան ոսկի 'ի միւս ձեռնն, և չորք եպիսկոպոսք ընդ նմա և բազմութիւն քահանայից, և չորս քահանայս աստի և անտի բարձեալ խաչս ոսկիս. և զօրքն զարդարունք պէսպէս հանդերձիւք, և հիանային տեսողքն։ Եւ Թագաւորն Տաճկաց ել ընդ առաջ նորա վառեալ բազում զօրօք, և տարաւ զնա 'ի Բաղդատ, և նստաւ 'ի միում բարձի։ Եւ կոչեցաւ Դիոնէսիոս պատրիարքն և արար պատարագ և հաղորգեցաւ թագաւորն Գէորգի . և զարմացաւ պատրիարքն ընդ իմաստութիւն պատանւոյն և ընդ հանճարեղ դաւանութիւն նորա ուղղափառութեամբ , և օրհնեաց զնա : Եւ թագաւորն Տաճկաց եւս թագաւորին քրիստոնէից պարգևս անկշիռ և անթիւ , զի գիտէր թէ այնպէս յառաջ քան զնա ոչ ոք փառաւորեցաւ 'ի թագաւորացն որպէս ինքն՝ գալստեամբ թագաւորին Նուբեաց : Եւ հաստատեցին զդաշինսն և զքաղաքսն որ կոչի Նըաւան և Գուշան՝ արարին կիսաքաժինս , որ կան 'ի վերայ Նեղոսի 'ի մէջ Տաճկաց և Նուբեացն : Եւ գնաց թագաւորն Գէորգի մեծապատիւ փառօք . բայց երկու եպիսկոպոսք և այլ բազումք մեռան 'ի նոցանէ , զի չէին սովոր փոփոխական օդոյ ամառան և ձմերան :

---

(1) Կուբայ է գահն կամ հովանոցն կազմեալ 'ի վերայ ուսոյ ուղտու կամ փղի.

Եւ յայնժամ երկու զօրագլուխքն Տաճկաց Նասրն և Պալաքն հաճեալ ընդ կրօնս քրիստոնէից զոր տեսին 'ի Նուբեացն , բազում զօրօք գնացին առ Թէոփիլոս թագաւորն Յունաց և եղեն քրիստոնեայք : Եւ Թէոփիլոս հպարտացեալ նոքօք և առեալ զօր եկն 'ի Զուպատրա և քանդեաց զնա , և կոտորեաց հաւասարապէս զՏաճիկսն և զքրիստոնեայսն . և ապա գնաց 'ի Մելտենի և գերեաց . և եկաւ յԱշմուշա և 'ի Հանձիթ և գերեաց զքաղաքն և գնաց : Եւ լուեալ զայս Աբուսահլայն՝ էջ յերկիրն Հոռոմայեցւոց երկու բանակօք որ կային ընդ նոսա, երեսուն հազար Մուղրի (1) եւ երեսուն հազար վաճառական, եւ յիսուն հազար ուղտ եւ քսան հազար ջորի բարձեալ ոսկիս. եւ գնացեալ էառ զԱնկուրիա։ Եւ եկ յԱմուրին քաղաք մեծ եւ բազմամարդ, ամուր եւ վայելուչ, որ ոչ գոյր նման նմա ՚ի վերայ երկրի, եւ երկոտասան օր պաշարեաց զնա սաստիկ պատերազմաւ, եւ առ զնա մատնութեամբ իշխանի միում Ճոռճան անուն. եւ կային ՚ի նմա հազար վանք կուսանաց, զորս ետ կանայս ծառայից իւրոց. եւ սպանին ութեւտասան հազար անձինս, եւ այրեցին զքաղաքն եւ զեկեղեցին. եւ անճառ է իրաւունք դատաստանին Աստուծոյ եւ ոչ ոք է հասու նմա (2)։

Եւ կայր որդի մի Աբուսահլայ Դաւութ անուն։ Սա խնդրեաց ՚ի հօրէն բառնալ ըզքրիստոնէից համարձակութիւնն, ոչ բառնալ մեռեալ վերամբարձ, եւ ոչ հարկանել ժամահար, և ոչ երեւել խաչ արտաքոյ եկեղեցւոյ, և ոչ պաշտել յայտնապէս զպաշտօն խորհրդոյ եկեղեցւոյ, և ոչ մտանել գինի ՚ի քաղաք. և ջնջել զկոչումն յերկրէ. և այսպէս ատեայր զքրիստոնեայս Դաւութն :

---

(1) Մուղրիք են Մաւրիտանացի Արաբք. Մաղրըպցիք։

(2) Ղեւոնդ յիշէ պաշարումն քաղաքիս լեալ ՚ի ձեռն եղբօրորդւոյ նորին՝ Աբաս զօրավարի. որ տեւեաց, ասէ, ամիսս երիս. եւ ոչ ինչ կարացեալ վնասել քաղաքին ՚ի պատճառս Սագառիս (Զախարիա) գետոյ, որ շուրջ զնովաւ ոռոգեալ անկոխելի առնէր զնա. թողին զպաշարումն եւ ՚ի բաց գնացին։ Յեր. 190—191։ Այլ ամենայն պատմագիրք Յունաց եւ Ասորւոց ասեն եթէ մատնեցաւ քաղաքն ՚ի ձեռն ուրումն մարդոյ, զոր կոչեն Պոյիտիցէ, եւ զոր պատմագիրս Ճորճ կամ Ճորճան կոչէ։

Յայնմ ժամանակի յայտնեցաւ Աբուսահլայ թէ Աբաս եղբօրորդին իւր կամի սպանանել զնա, և բազում իշխանք ուխտեալ են առնուլ օգնական զՀոռոմայեցիս և բառնալ զթագաւորութիւնն Տաճկաց, և լինել ընդ Հոռոմօք. և եդ զնոսա ՚ի կապանս և մեռան ՚ի նոյն. և գրեաց ընդ ամենայն Տաճկունք թէ Աբաս կամէր եղծանել զիշխանութիւնն Տաճկաց, և վասն այնր պատճառի ատեն զԱբաս անունն Տաճկունք:

Յայնմ ամի երեւեցաւ ՚ի կողմանս Հիւսիսոյ կարմիր ամպ իբրեւ զհուր, երեք գիշեր, և ապա եկն անձրեւ անլուր և անտես, որ բերէր քարինս և կեղեւեաց զծառս, և մերկացոյց հեղեղն զդաշտս երկրի ՚ի հողոյ, և եկաւ հեղեղն ՚ի վերայ Խառանայ և խեղդեաց անթիւ բազմութիւնս մարդոյ և անասնոց, և տապալեաց գիւղս և գաւառս բազումս, և տարաւ ելից զնոսա յԵփրատ :

Յետ այսորիկ առաքեաց Թէոփիլոս թագաւորն նուէրս Աբուսահլայ և խնդրեաց ՚ի նմանէ փոխել զգերիսն, տալ զՀոռոմայեցին և առնուլ զՏաճիկսն: Եւ առաքեաց նմա

(Եբուսահլ) կրկին պատարագս՝ յիսուն բեռն ուղտու, և ասաց. «Չէ օրէն Արաբկաց փոխել զմարդ Արաբ ընդ Յունի, զի պատուական են Արաբիկք. բայց թէ տաս զմերն, առնեմք ընդ դարձուածս բազումս:» Եւ արձակեաց (Թէոփիլոս) զբազում Տաճիկս, և եղեւ խաղաղութիւն 'ի մէջ նոցա:

Բայց երեւեցաւ զայսու ժամանակաւ 'ի Պաղեստին այր մի Թամամ անուն, և ասէր զանձնէ պատգամաւոր Աստուծոյ և նախանձախնդիր պատգամաբերին առաջնոյ. և ասէր թէ՝ «Չէ արժան 'ի քրիստոնէից հարկ առնուլ, բայց միայն չորս դրամ.» և խնդային քրիստոնեայք, և ժողովեցան երեսուն հազար այր մերկ և բոկ և աղքատք. և ել նոքօք յԵրուսաղէմ և քակեաց զսուրբ Յարութիւնն: Եւ եկն առ նա Ջափր (1) զօրագլուխն 'ի Դամասկէ և սպան զնա: Եւ յայն ժամն մեռաւ Եբուսահլն և թագաւորեաց Ահարոն որդի նորա (2):

Եւ 'ի նոյն ամի մեռաւ Թէոփիլոս, և թագաւորեաց Միխայէլ որդի նորա երեք ամաց, և Թէոդորա մայր նորա կարգաւորէր զթագաւորութիւնն:

Իսկ Ահարոն թագաւորն (էր) այր կերող և

---

(1) Յօրինակին Ջափ.

(2) Ահարուն Բ. Ապուճաֆար Հարուն էլ—Վաթէք կամ Վասէք կոչեցեալ, թագաւորեաց յամն 842—847:

արբեցող, և ինչ ոչ իմանայր 'ի յանցից և 'ի պատահմանց աշխարհին, թողեալ զթագաւորութիւնն 'ի ձեռն արանց ոմանց, (թագաւորեալ) զհինգ ամ և մեռաւ :

Եւ Թէոդորա վարեաց զթագաւորութիւնն չորեքտասան ամ ընդ որդւոյն և մեռաւ և հաստատեցաւ Միխայէլն : Եւ 'ի ժամանակս սորա վեց թագաւոր փոխեցաւ Տաճկաց. Ահարոն, Ջափար, Մահմադ, Ահմադ և միւս Ահմադ, Ապու—Աբդլա՝ որ յարբեցութեան խրում սպանանէր զբազումս առանց պատճառի. զկնի նորա Մուհդի(1) որ եղ 'ի Խորասան և եկն 'ի Բաղտատ :

Իսկ Միխայէլն զքսանևհինգ ամ թագաւորեալ մեռաւ, և զի ոչ գոյր սմա որդի, թագաւորեաց ոմն Վասիլ անուն երկու ամ(2). և զհետ սորա թագաւորեաց Լեւոն (Զ) որդի իւր ամս քսանևհինգ և ամիս ութ։Եւ մեռաւ Մհուդ (Ալ—Մահդատի) յաւուրս սորա, և թագաւորեաց Ահմատ ամս քսան երեք :

---

(1) Այն է Ալ—Մոհդատի Մահմէտ, որ թագաւորեաց յամէ 869—870 : Զսա յաջորդեաց Ալ—Մութամէտ Ահմէտ յամէ 870—892 :

(2) Վասիլ էր Արշակունի ազգէ. և էր սենեկապետ Միխայէլի կայսեր. յամի 866 արար զնա իւր գահակից, այլ զկնի միոյ ամի կացոյց փոխանակ նորա զոմն յաննշանից Վասիլիկիանոս անուն. վասն որոյ և Վասիլ զերկոսին եւս սպանեալ՝ ինքն թագաւորեաց ամս ութ և տասն, և ոչ բաց առելոյ Միխայէլի՝ ամս երկու :

Իսկ Թէոփանա մայրն Լեւոնի զկնի մետասան ամի թագաւորութեանն կամեցաւ սպանանել զորդին, և որդին զմայրն. և յանկարծ մեռաւ մայրն վկայեալ բարի գործովք։ Եւ յետ ամի միոյ մեռաւ կինն Լեւոնի, և նա կոխեաց զկանոնս Առաքելոցն և էառ այլ կին, և եղեւ ատելի ամենեցուն. և թողեալ զկինն առանց պատճառի, և առ մի կին այլ. և էառ այլ երրորդ կին, զի ոչ գոյր յանդիմանիչ, և առ չորրորդ կին կենդանի. և ըսկըսաւ կանոնել՝ թէ պարտ է առնուլ չորս կին ամենայն մարդոյ. և յետոյ ինքն աղէցաւութեամբ մեռաւ։ Եւ յայն ժամն յայտնեցաւ ’ի պատրիարքն Կոստանդնուպօլսի կախարդութիւն, և հանին զնա և դրին միւս այլ, և գտաւ նա կախարդ և կռապաշտ, զի եդեալ էր ներքոյ վարագուրին կուռք եւ պաշտէր զնա ’ի ժամ խորհրդոյն. և յայտնեցաւ չարիքն և վասն այսր պատճառի բարձաւ վարագոյրն յեկեղեցեաց նոցա ժամանակս յոլով։ Եւ եդին պատրիարք մի այլ. և նա պաշտէր կուռս և ձգեցին զնա, որ ասէր թէ՝ «Ի ձեր հայրապետացն եմ ուսեալ զայս, թէ ոչ՝ մինչ ’ի յայս ոչ գիտէի զայս։» Եւ այս եղեւ նոցա՝ զի ոչ ունէին զկատարեալ սահման հաւատոյ, թոյլ ետ նոցա Աստուած գործել զանարժանն։

Զկնի այսորիկ թագաւորեաց Աղէքսանդրոս որդի Լեւոնի ամ մի (1). և էր սա հետեւող կախարդաց. և 'ի ժամանակս սորա եղեւ շարժ 'ի Թրակիա, և պատառէր երկիր և կլանէր բազում եկեղեցիս և շինուածս. և մեռաւ Աղէքսանդրոս հարուածօք, և թագաւորեաց կիսեղբայր նորա Կոստանդին (Է) ամս յիսուն և եւթն. և զի տղայ էր, եդին նմա դաստիարակս և օգնականս մինչեւ հաստատեցաւ։

Ի սորա ժամանակս փոխեցաւ թագաւորութիւնն Տաճկաց (Արաբաց) 'ի ցեղն Մահմետի 'ի ցեղէն Ալեայ (2), և թագաւորեաց Աբլաբաս (Ապուլ-Աբբաս) ամս քսան։ Եւ յայսմ ամի ել գլխաւորն Բուլղարաց և զօրացաւ 'ի վերայ Յունաց, և արկ զնոսա 'ի Կոստանդինուպօլիս և նեղեաց յոյժ, և ոչ հանդարտեաց պատերազմն նորա զամենայն ժամանակս Կոստանդեայ։

Յերեքտասան ամին Կոստանդեայ թագաւորեաց Արաբկաց Մահմէտ ամս վեց։ Եւ 'ի քսան և հինգ ամին Կոստանդեայ թագաւորեաց Ջափար ամս քսան և չորս։ Ի յիսուն երեք ամին Կոստանդեայ թագաւորեաց Աբունասր (Ապուլ-Մանսուր) 'ի վերայ Արաբացւոցն ամս երկու. և 'ի յիսուն և չորս ամին Կոստանդեայ թագաւորեաց Աբլաբաս (Ապուլ—Աբբաս) ամս հինգ։ Եւ Ջյիաուն և հինգ ամին հիւանդացաւ Կոստանդին և մեռաւ, և թագաւորեաց փեսայ նորա Ռոմանոս (1)։ Եւ յայսմ ամի եկն Սիմոն գլխաւորն Բուլղարաց և գերեաց զԹրակիա, և չոգաւ նստաւ 'ի վերայ Անդրիանուպօլսի և նեղեաց զնա յոյժ և առ զնա և քակեաց։ Եւ առաքեաց Ռոմանոս առ Սիմոն և խնդրեաց սէր, և ած 'ի հաւան և տեսին զմիմեանս 'ի վերայ ծովուն և եղեւ խաղաղութիւն նոցա յարեւմտից կողմանէ, և դարձան 'ի կողմն արեւելից։

---

(1) Ալէքս կամ Ալէքսանդր էր կրսեր եղբայր Լեւոնի․ որում յաջորդեաց եղբօրորդի իւր Կոստանդին Է, ամս ԽԷ։

(2) Յօրինակին՝ և 'ի ցեղն Ալէայ։

Եւ վասն զի Կապադովկիա Հայոց և Միջագետք Ասորւոց և Կիլիկիա ընդ ձեռամբ Տաճկաց էին 'ի Հերակլեայ (հետէ), բայց այժմ տկարացան վասն արբեցութեան և շնութեան իւրեանց։ Եւ եղ Կիրակոս զօրավարն Ռոմանու և եկն 'ի Մելտենի փոքր Հայոց, և քաղաքն խնդրեաց ներել նոցա զքառասուն օր, զի առաքեսցեն առ թագաւորն իւրեանց եթէ զինչ հրամայեսցէ. և լուաւ նոցա Կիրակոս։ Եւ հանին դեսպան որ գնայր, և կալան և ածին զդեսպանն առ Կիւրակոս. և նա վասն երկեղի սպանման երդուաւ նոցա ազատով տալ նոցա զքաղաքն. և յանձնեաց առ նոսա. և ապա մտեալ ՚ի քաղաքն ետ նոցա աւետիս թէ՝ «Այսօր հասանեն զօրքն մեր, և ՚ի ժամ երեկոյին բացէք զդուռն որ մտանեն ՚ի քաղաքս։» Եւ հաւատացին նմա։ Եւ կազմեցան Հոռոմայեցիքն իբրեւ զզօրս Տաճկացն, և եկին ՚ի ժամ երեկոյին և մտին ՚ի քաղաքն. և լցաւ քաղաքն զօրօք, և առին զնա. բայց ոչ սպանին զՏաճիկսն զի երդուեալ էին, և հանին զնոսա և գնացին (1)։ Եւ զԿարնոյ քաղաք առին և զԲեսուն և զամենայն երկիրն. և գնացեալ ՚ի Կիլիկիա առին զնա և աւերեցին նմա։ Եւ ելեալ գնացին յԱնտաք և ՚ի Ծովեզերայս և յԵրուսաղէմ, և հաւանեցան փութանակի զի տկարացեալ էր Տաճիկն։

---

(1) Այս Ռոմանոս Ա. էր աներ Կոստանդնի կոչեր Պերփիրուժենայ, և որդի Վաշտակայ հայկազնոյ, որ 'ի կենդանութեան փեսայի իւրոյ թագաւորեաց ամս 26։ Միքայել Չամչեան, Հտ. Բ. յեր. 816։

Եւ յայսմիկ մեռաւ Ռոմանոս (Ա) և թագաւորեաց Կոստանդիանոս փեսայ նորա որ էր այր վարժ գրոց և բարեգործ։ Եւ ՚ի չորրորդ ամին նորա թագաւորեաց Աբուսահլ ՚ի վերայ Արաբկաց. և առաքեաց Կոստանդիանոս զորդի իւր զՎասիլն որ եկն և էառ զՍամուսատ։ Եւ եկն հանքաւ գուժկին՝ թէ մեռաւ Կոստանդիանոս (Ը) և թագաւորեաց Ռոմանոս (Բ) որդի իւր։ Եւ ՚ի նոյն ամի մեռաւ Աբուսահլն՝ թագաւորն Տաճկաց, և թագաւորեաց Ապու Լխանամ ամս վեց։

---

(1) «Յաւուրս Աբասայ և Ռոմանոսի առաւ Մելտենի ՚ի Տաճկաց յՅՁԳ թուին։» Վարդան. յէր. 120։

Իսկ Ռոմանոս թագաւորեալ՝ արար պատիւ զօրացն և ետ պարգևս առատաձեռն, և առաքեաց զօր և առին զՀալպ և Նեղջին զՏաճիկսն։ Եւ մեռաւ Ռոմանոս (Բ) և զօրքն թագաւորեցուցին զՆիկիփորոս 'ի վերայ իւրեանց. այր ատեցող ուղղափառաց՝ 'ի բազմաց պատրեալ։ Սա ելեալ 'ի Մելտենի ետես աւերեալ զքաղաքն և զաշխարհն, և առեալ խորատ 'ի հաւատարմացն իւր թէ՝ “Առաքեա առ Աթանաս (1) պատրիարքն Ասորւոց որ բերէ զազգն և շինէ զաշխարհս, որ թէ դարձեալ զօրանան Տաճիկք, լաւ է մեզ զի նոքա կորիցեն և անկցին 'ի ձեռն Տաճկաց։” Եւ առաքեցաւ (առ) տէր Յովհաննէս յԱնտաք և երդուաւ նմա, որ թէ լինի զաշխարհն ուղղափառացն, կամ դարձուցանէ զամենայն երկիրն յուղղափառութիւն, և կամ ոչ՝ երկաբնակացն տացէ արհամարհել զնոսա։ Եւ հաւատաց նմա Պատրիարգն, և գնաց ժողովեաց յամենայն տեղեաց ուղղափառս հրամանաւ թագաւորին, և շինեաց զՄելտենի և զերկիրն և վանորեայս բազումս, և արար զբնակութիւն իւր 'ի Պերի-

---

(1) Աթանաս. սխալ համարի Թարգմանիչն փոխանակ գրելոյ Յովհաննէս, որ էր յայնժամ կաթողիկոս Ասորւոց. որպէս փոքր մի զկնի ուղղէ գրիչն։

տըն (1) ։ *Եւ յորժամ յաջողեցաւ իրքն, կոչեաց Թագաւորն զնա 'ի Կոստանդնուպօլիս պատճառանօք խոստմանն. և գնաց Տէր Յովհաննէս բազում եպիսկոպոսօք 'ի Կոստանդինուպօլիս ։*

Ի Թուին Ասորւոց ՌՄՁ (1280) *և Հայոցն* ՆԷ (407) *ժողովեալ էին անդ երկաբնակք բազում, և արարին քննութիւն բազում վասն հաւատոյ երկու ամիս. և այնչափ սուտեցան Քաղկեդոնիկքն, որ չմնաց կարծիք ճշմարտութեան 'ի նոսա յամենայն լողացն ։ Եւ ապա դարձեալ խաբեցաւ Թագաւորն յոմանց և սկսաւ ողոքել և խոստանալ աթոռըս և պատիւս եպիսկոպոսացն թէ հաւանին և ընդունին զդաւանութիւն նոցա, և սպառնալիք՝ թէ ոչ հաւանեսցին ։ Իսկ նոքա ոչ յողոքանացն պատրեցան և ոչ 'ի սպառնալեացն երկեան, այլ ասացին. « Մեք ոչ կարեմք բաժանել զմիաւորեալ բանն Աստուած յերկուս և բաժանիմք 'ի նմանէ կամ վասն պատւոյ և կամ վասն երկեղի ։ » Եւ լուեալ զայս Թագաւորն բարկացաւ 'ի վերայ նոցա և եդ զնոսա կապանօք 'ի բանտի չորս ամիս։*

Եւ բարկութեամբ եհար Աստուած ըզԹագաւորն և մեռաւ, և առ զԹագաւորութիւնն Յովհաննէս այր պատերազմող և անձնեայ. բայց սակս թէ կնին Նիկեփորայ Թէոփանէ զայրն իւր սպան, զի չէր ամուսնացեալ ընդ նմա, և առ զՅովհաննէս, որ յառաջագոյն բառնայր և զնէր զչմուշկ(1) Թագաւորին և շնայր ընդ Թագուհին. և Թէոփանէ առ զնա այր և եդ նմա Թագ, և կոչեցաւ վասն այսորիկ Չմշկիկ (2): Սա եղեալ աջողակ՝ էառ գաւառս բազումս 'ի Տաճկաց. և սա եհան զպատրիարքն Ասորւոց և զեպիսկոպոսն իւր 'ի քաղաքէն և գնացին 'ի գաւառս իւրեանց:

---

(1) *Պերիան է անուն վանացն զոր շինեաց Պատրիարքն Ասորւոց ։*

Ի յայսմ ժամանակի եղեւ պատրիարքըն Անտիոքու Քաղկեդոնիկ՝ Ագապի (Ագափիոս) անուն, որ արար հալածանս ուղղափառաց ձեռնտուութեամբ ոմանց իշխանաց՝ զորոց որդիսն սան էր առեալ յաւազանէն. որ և առեալ զՄետրապօլիտն Ասորւոց և զմեռոնն և զհաղորդն երեք կղերն ջանայր այրել հրով բորբոքելով, և ոչ այրեցաւ 'ի շնորհացն Աստուծոյ պահպանեալ. և ոչ զղջացաւ անօրէնն, այլ ասէր լրբութեամբ թէ՝ "Կախարդութեամբ դոքա ոչ այրին." որ և չարագոյն գտաւ սա քան զՆաբուգոդոնոսոր, որ 'ի տեսանելն զերիս մանկունսն ոչ այրեցեալ՝ զզջացաւ և փառաւորեաց զԱստուած։ Եւ սա յանդգնեալ 'ի տանէ Յարութեան եհան յեկեղեցեացն և 'ի քաղաքէն զՀայք և զԱսորիք՝ արամբք և կանամբք, և արտաքոյ քաղաքին արարին զտօնն։ Որ և խնդրեցին յԱստուծոյ արտասուօք և եդին ուխտ ոչ մտանել 'ի քաղաքն մինչև տեսցեն առեալ զվրէժ իւրեանց։ Եւ կատարեաց Աստուած փաղփաղակի զհայցուածս նոցա, և եհար ցասմամբ և չարաչար ցաւօք զայրն ամբարիշտ և մեռաւ, և դարձուցին զնոսա աղաչանօք և պատուով 'ի քաղաքն՝ փառաւորելով զանունն Աստուծոյ. և գործեցաւ այս 'ի թուականին Յունաց՝ հազար երկերիւր ութսուն և հինգ, և Հայոցն՝ չորս հարիւր երկոտասան։

---

(1) Յօրինակիս եղեալ էր նախ՝ զմուշկ, որպէս ունի և միւս Թարգմանութիւնն, և յետոյ յաւելեալ էր 'ի մերումս տառս չ: Բայց թէ մին և թէ միւսն անյայտ է մեկնութիւն զոր տայ Միխայէլ Չմշկիկ անուան որ էր մականուն Յովհաննու կայսեր:

(2) Տես 'ի գիրս Մատթէոսի ուռհայեցւոյ. Ա. 7. յոր. 6. տպեալ յԵրուսաղէմ:

Իսկ Չմշկիկ թագաւորն էր 'ի Հանձիթայ գաւառէ և զայնր կողմամբ առնէր ըզբնակութիւն իւր. սա ազատեաց զծառայսն ամենայն, և էր առատաձեռն և ողորմած սրտիւ, և սիրեցաւ յամենայնէ։ Սա շինեաց մեծ եկեղեցի 'ի Կոստանդնուպօլիս. և ասեն զնմանէ թէ Հայ էր ազգաւ։ Սա թագաւորեաց ամս երեք (1) և մեռաւ. և եղև սուգ մեծ առ հասարակ ընդ ամենայն աշխարհն

(1) Յովհաննէս Չմշկիկ թագաւորեաց ամս վեց և ամիսս ինչ։

Հռոմայեցւոց ։ Եւ թագաւորեցին Վասիլըն և Կոստանդին որդիքն Ռոմանոսի թագաւորին. և կային սիրով առ միմեանս, քանզի Վասիլն կացոյց զեղբայրն ՚ի թագաւորութեանն, և ինքն կայր ընդդէմ Տաճկաց, որ և թագաւորեաց ամս յիսուն և հինգ, և զամենայն աւուրս իւր յաղթութիւնս բազումս կատարեաց և հնազանդեաց զբազում աշխարհս, և կայր ընդդէմ Հայոց և արեւմտից և արար հնազանդ զՀայս և զԲուլղարս (1). և մեռաւ, և Կոստանդին եղբայր նորա եկաց ՚ի տեղւոջն երկու ամ և կէս և մեռաւ ։

Եւ յաւուրս սորա թագաւորեաց Տաճկաց Ալխաղ ամս քսան և ինն, և զկնի նորա Բուքաքր ամս տասնևինն, և յետ նորա Ապլաքաս (Ապուլ Աբբաս) ամս քառասուն երկու ։

Եւ զկնի Կոստանդիանոսի (Ը) թագաւորեաց Յունաց Ռոմանոս (Գ) եղբօր որդին Կոստանդեայ (2), և ելեալ ՚ի պատերազմ ՚ի վերայ Տաճկաց և յաղթեցաւ և եղեւ փախստական ։ Եւ սա արար հալածումն մեծ ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ և սա գոչեաց զտէր Յովհաննէս 'ի Կոստանդինուպօլիս և գնաց ընդ եպիսկոպոսօք և բազմութեամբ քահանայից. և եգիտ ժողովեալ 'ի Կոստանդինուպօլիս երկերիւր եպիսկոպոս քաղկեդոնիկ, և արարին քննութիւն հաւատոյ։ Եւ յոտն ունէին զՊատրիարքն և ինքեանք նստէին. և Պատրիարքն այր ծեր էր և աշխատէր յոտն, և երկու եպիսկոպոսք աստի և անտի անցեալ դիմէին ընդ նա. և նա խօսէր գրոց վկայութեամբ և յանդիմանէր խստագոյնս. և խոստացան տալ նմա զաթոռն Անտիոքու թէ խօսք մի ասէ՝ երկու բնութիւն յետ միաւորութեանն։ Եւ պատասխանի ետ և ասէ. "Ես զաթոռն Պետրոսի ունիմ յերկրի և յերկինս, և մարմնաւոր աթոռոյ ոչ ցանկամ. և զայդ որ մի խօսք ասիցէք զիս ասել՝ երկու բնութիւն, Երրորդութեանն ուրացութիւնն այլ ինչ է՝ քան մին խօսք։" Եւ Մելտենոյ եպիսկոպոսն Թէոդորոս ած նմա ապտակ 'ի ծնօտն աջոյ. և նա մատոյց զմիւսն. և յարեաւ ոմն եպիսկոպոս (Սարդի) և եհար զԹէոդոր, և կայր յոտն առ ընթեր Պատրիարքին. և ասէին նմա նստիլ, և նա ասէ. "Ես զՔրիստոս ապտակեալ տեսանեմ և յոտն, և ես նստիմ։" Եւ դարձան արձակեցին զժողովն վասն տրտմութեանն, զի սկսան 'ի լալ Թագաւորն և իշխանքն։ Եւ յետ այնորիկ սկսան դնել ատեան, և ասեն․ «Դուք քրիստոնէութիւն կատարեալ ոչ ունիք․ առէք մկրտութիւն և ապա քահանայութիւն և գնացէք։» Եւ ասէ Պատրիարքն․ «Մկրտութիւնն Քրիստոսի և քահանայութիւնն առ մեզ է, զոր ետուն մեզ սուրբ Առաքեալքն և պահեցին Դիոսկորոս և Սեւերիոս, և դուք իսկի ոչ ունիք, բայց թէ միայն նզովք 'ի գլուխ ձեր։» Եւ բարկացան և ետուն հրաման երթալ յարեւմուտս յաքսորս․ և տարան զնոսա քսան և ութ օր, և դարձեալ զղջացան և դարձուցին 'ի Կոստանդնուպօլիս և եդին զնոսա 'ի բանտի, որ լինէին յոլով բժշկութիւն, և ել համբաւ սքանչելեացն, և ոչ մնաց իշխան և ժողովրդական որ ոչ զարմացան, և բազում կոյրք բացան և դիւահարք բժշկեցան։ Եւ անդ 'ի բանտին կատարեաց ըզկեանս իւր երանելին Յովհաննէս պատրիարքն մարտիրոսական հանդիսիւ 'ի փառս Աստուծոյ, և ամփոփեցաւ յաշակերտաց իւրոց, և եդաւ ընդ սուրբս յիշատակ նորա և ընդ մարտիրոսս մարմին նորա։

---

(1) Զգործս պատերազմացն Վասլի տես ՚ի գիրս պատմութեան Ստեփ. Ասողկայ. Գիրք Բ. Գլ. ԺԴ. և այլն ։

(2) Ռոմանոս Գ էր փեսայ Կոստանդնի Ը. զորոյ զդստերն Զոյի առեալ էր ։ Մատթէոս Ուռհայեցի Ա. 41. յեր. 63 ։— Սմբատ. յեր. 50. տիպ փարիզու ։

Եւ բարկութիւն Տեառն եղեւ 'ի վերայ Օսմանոսի և մեռաւ չարապէս․ և թագաւորեաց Միխայէլն (Դ) ամս ութ․ և յայնժամ Տաճկաց թագաւոր Աբլաքաս (Աբդալլահ) էր։ Եւ սմն ազգային Միխայէլի Կալափատ անուն, ապստամբութիւն խորհեցաւ հինգ ամիս, և խաւարեցին զաչս նորա ։ Եւ յաւուրս Միխայէլի Սուլիման տաճիկ եառ զՈւռհա ՚ի Հոռոմք(1). և մեռաւ Միխայէլ, և կալան զթագաւորութիւնն Զոյի և Թոտոռն (Թէոդորա) դստերքն Կոստանդիանոսի ։

Դ

Պարտ է զի յայսմ միջոցի գրեմք սակաւուք սակս Թուրքաց եղիցմ թէ յորմէ՞ ազգէ են, եւ կամ ո՞ր է բնակութիւն նոցա, եւ կամ զիա՞րդ բնակեցան առ մեզ, զաչոմ յերկիրս յայս։

ԱՍԷ սուրբն Մովսէս ՚ի գիրս արարածոցն(2), թէ “Թորգոմ ծնաւ զԳոգ և զայլս ընդ նմա ․” յայտ է՝ զի յազգէ Յաբեթի է Թուրքդ, որ է Գոգ և Մագոգ ։ Եւ Թուրքք վասն Թորգոմայ ասին, որ յետ աշտարակին գնացին յարեւելս և դարձան 'ի կողմն Հիւսիսոյ, և առին բնակութիւն 'ի մէջ երկուց լերանց մեծաց և երկայնից. և ձգեցան տարածեցան յարեւելից Հիւսիսոյ մինչեւ յարեւմուտս Հարաւոյ. և ունին երկու դրունս, մին դուռն բանայ 'ի Պարս և մին դուռն 'ի Վիրս, զորս փակեաց Աղեքսանդր Մակեդոնացին: Եւ են նոքա պարկեշտ 'ի ցանկութիւն կանանց և հեզ գնացիւք և անագահք, և պաշտեն մի Աստուած, և կարծեն թէ երկինքն է այն մի Աստուածն. զի ասեն կօն թանգրի, և կօնն բառ նոցա լեզուին կապոյտ կոչի, որ է կապոյտ Աստուած, զոր կարծեն վասն երկնից: Եւ ուտեն զամենայն մեռելոտի և զզարշելի, և ագանին բրդեղէնս և մորթեղէնս, զի այլ ինչ ոչ լինի առ նոսա. և ոչ ունին օրէնս ինչ գրով և ոչ աւանդութեամբ, զի ոչ գնաց առ նոսա Մարգարէ կամ Առաքեալ(1): Եւ վասն այնորիկ դրամբք արգելին զնոսա, զի մի ապականութեամբ լցցեն զերկիր և բազմութեամբն իւրեանց աւերեսցեն զաշխարհս: Եւ զդուռնն զայն՝ որ բանայ 'ի Պարս, առաւել ամրացուցին Պարսիկք զշինեալն յԱղեքսանդրէ բերդ մի, և շինեցին բերդս վեց և կացուցին պահապանս. և յորժամ պէտս ունէին զօրացն, հանէին 'ի նոցանէ Պարսից Թագաւորքն վարձուք, և 'ի վճարմանն պատերազմին դարձեալ տանէին արկանէին 'ի ներքս :

---

(1) Մատթէոս Ուռհայեցի (Ա. 43. յեր. 65—72)· երկար բանիւք ճառէ զանցս Ուռհայոյ, և ասէ եթէ Սալման (Սիւլէյման) բերդապահ քաղաքին ձանձրացեալ ՚ի ներքին խռովութեանց և պատերազմաց, յանձնէ զքաղաքն ՚ի ձեռս Մանիակայ որ էր իշխան կարգեալ ՚ի կողմանէ կայսեր ՚ի վերայ քաղաքաց Եփրատայ ։ Եւ այս եղեւ առ կայսերութեամբ Ռոմանոսի Գ. և ոչ Միխայէլի ։ — Սմբատ, յեր. 51 ։

(2) Ծննդոց, Ժ. 2, 3 ։

---

(1) Սամուէլ: -Վարդան, յեր. 127: -Կիրակոս, յեր. 135:

Յետ վասն նորա Եզեկիէլ մարգարէն բանիւ Տեառն, ելանել Գովգայ և Մագովգայ՝ իշխանաց Թուբէլայ և Մոսոքայ, նոքօք սպառնայ ազգին Հրէից, և անդէն կոտորել ասէ յԵրուսաղէմ. և երկիցս կրկնէ մարգարէն զպատուէրն Գոգայ և զապականութիւն նոցա (1) : Այլ և՝ թէ ուսումնասէր կամօք միտ դիցէ ոք, երեք անգամ կրկնէ զելիցն նոցա, որ առաջինն եղեւ յաւուրս Կամբիւսեայ Պարսից արքայի, զոր ոմանք երկրորդ Նաբուգոդոնոսոր կոչեն : Սա վարձեաց 'ի Թուրքաց և յաղթեաց Թագաւորին Եթովպացւոյ, և առաքեաց 'ի ձեռն Հողամիռանայ (Հողոփեռնեայ)'ի Պաղեստինէ : Եւ զկնի նորա այլք 'ի Թագաւորացն Պարսից հանին և բերին օգնական խուրեանց 'ի Մակեդոնացւոցն 'ի Սասանեանցն, որք գային և տային (տանէին) յաշխարհն խուրեանց ոսկի և արծաթ և հանդերձս և պտուղս և այլ բարութիւնս բազումս, և զնոցա ցանկութիւն շարժէին ելանելոյ՝ թէ լինի հնար : Եւ նախ քան զգալուստն Քրիստոսի հինգ հարիւր և մետասան ամաւ դիպեցաւ նոցա ելանել այսպիսի պատձաւաւ։ Յորժամ ըստ սովորութեանն դարձուցին զնոսա զհանեալ Թուրքն յերկիրն իւրեանց և գնացին մերձ 'ի դուռն, դարձան 'ի վերայ սարողացն Պարսից և սպանին զնոսա, և յափշտակեցին բերդ մի և մտեալ 'ի ներքս ամրացան, և ազդ արարին ազգին իւրեանց, և եկին բաժին մի և առին զայլ բերդսն և արարին ընդ իւրեանց հրամանաւ ըզդուռն. և յաձախեաց յայնժամ եղանել բազմութեանցն որ կային 'ի ներքս։ Եւ յայնժամ գիտացեալ՝ դարձեալ ամրացուցին զդուռնն, և ելեալ եկին յերկիրն Արաղդ․ յաշխարհն Պարսից, և ասեն՝ թէ սպիտակ կենդանի ինչ իբրեւ զշուն առաջնորդէր նոցա, և յորժամ ցրուիլ ջանային՝ կանչէր կենդանին և դառնային առ նա և երկրպագէին նմա․ և այսպէս յաշխարհէն իւրեանց մինչեւ յԱրաղս առաջնորդէր նոցա, և ապա եթող զնոսա, և անյայտ եղեւ երեւումն։

---

(1) Եզեկիէլ Գլ. ԼԸ. 2. ԼԹ. 1.

Եւ նոքա եղեն երեք բաժին, և ձգեցին վիճակ երեք դաւազան․ մինն անկաւ 'ի կողմն Հարաւոյ, և գնացին բաժին մի 'ի նոցանէ 'ի կողմն Հնդկաց և խառնեցան 'ի նոսա հնազանդութեամբ։ Եւ երկրորդն անկաւ յարեւմուտս հիւսիսոյ, և գնաց միջի բաժինն նոցա յարեւմտից Թրակիոյ և բնակեցան անդ, և յանուն աշխարհին կոչեցան Կոմանիք։ Եւ երրորդն անկաւ 'ի միջոցս երկրի, և եկին խառնեցան 'ի Պարսիկս ։ Եւ յետոյ եկին այլք բազումք, և դարձեալ փակեցին զդուռնն ։ Եւ էին 'ի նոսա եւթանասուն գլխաւորք, որք եկին 'ի յԱրաղայ և արարին 'ի մէջ իւրեանց ծիր եւթանասուն իշխանքն, և կանգնեցան բոլորեալ զծրաւն, և իւրաքանչիւր գաւազան 'ի ձեռին իւրում, եւ սահմանեցին և ձգեցին զգաւազանսն վեր 'ի յերկինս եւթանասուն գլխաւորքն և ասացին՝ թէ “Որ գաւազան անկանի 'ի մէջ ծիրին, նա թագաւորէ.” և իբրեւ ձգեցին, ինն գաւազանն անկաւ 'ի ծիրն և մէկն ցըցեցաւ ։ Եւ կանգնեցին 'ի տեղւոջն ինն թագաւորութիւն, և ութն հնազանդեցան միոյն՝ որոյ գաւազանն ցցեցաւ, և կան անդ հաստատուն և ունին զդուռնն. եւ տիրեն ներքոյ երկու լերանցն, որոց անուանք լերանցն կոչին Սոփիք աշխարհի. և նոյնպէս տիրեն արտաքոյ լերանցն բազում աշխարհաց. և անուն գլխաւորին իւրեանց հանապազ կոչի Խաքան, զի այն էր առաջնոյ թագաւորին անունն, և գայ ազգէ յազգ ։ Եւ վասն զի բազումք 'ի նոցանէ խառնեցան յԱրաբացիս, և նոցա անուանքն կոչին Մսլիման, 'ի Մսլմայ առեալ զանուանակոչութիւն, որ էր առաջնորդ զօրացն որք գնացին 'ի Կոստանդինուպօլիս ։ Եւ այսու մանաւանդ յարեցան 'ի նոսա, զի մի Աստուած քարոզեն

Տաճիկք իբրեւ զնոսա ։ Եւ լուան 'ի նոցանէ թէ մի՛ երկրպագէք արարածոցս . վասն այնորիկ անարգեն զխաչն ։ Իսկ այլքն որ գնացին 'ի Հնդիկս , որք յարեցան 'ի քրիստոնեայս՝ քրիստոնեայք եղեն , և որք 'ի կռապաշտսն յարեցան , նոյնպէս կռապաշտք եղեն . այսպէս և որ յարեւմուտս՝ պէսպէս օրէնս առին ։

Նմանապէս և ժամանակաւ ընդ միւս դուռըն հանին Հայք և Վիրք , օգնական իւրեանց , և յարեցան 'ի նոսա , և եղեն քրիստոնեայք ։ Ի նոցանէ են և Խէ-չախն անուանեալք ըստ բառին Վրաց . զի ըստ նոցա լեզուին խէ-ն ձոր կոչի , և չախն աման , որպէս թէ՝ 'ի ձոր ամանած կան , և հանեն որպէս յամանոյ ։

Արդ , առաջին եղանելն Կամբիւսիւ է , որպէս ասացաւ . և երկրորդն՝ որ առ Տաճկաց (Արաբաց) թագաւորօքն եկին 'ի Պաղեստինէ , և որպէս Յովհաննէս ասխացին ասէ , թէ “ Զորս հազար Թուրք կային զհետ Աբու Սահակայ(1), յորժամ էառ զԱմուրիա քաղաք ։ ” Իսկ երրորդն դեռ եւս լինելոց է մօտ 'ի կատարած աշխարհի . որպէս մարգարէն Եզեկիէլ ստուգէ երեք անգամ գալ նոցա ընդ միջոցս աշխարհի 'ի Հրէաստան երկրի ։ Եւ ասեն , թէ յորժամ Տիբեր կայսր առաքեաց դեսպանս առ նոսա , նոյնպէս և Յուստինոս և Հերակլ , 'ի տեսանելն ըզնոսա՝ լայր Խաքանն . և հարցեալ նոցա ըզպատճառն լալեաց , և ասէ . « Այդ առ մեզ նախագիտութեան բան 'ի հարցն աւանդից, թէ յորժամ Հոռոմոց թագաւորքն ընծայիւք և կաշառօք հնազանդին Թուրքաց , յայնժամ մերձեալ է աւերն աշխարհի։» Եւ եհարց Խաքանն , թէ « Դուք Հռոմայեցիքդ հարկս տա՞յք Պարսից՝ թէ ոչ ։» Եւ նոքա ասեն . « Ոչ , այլ Պարսիկք հարկին Հոռոմոց, զի Տրայիանոս հարկ եդ 'ի վերայ Պարսից ։» Եւ զարմացաւ Խաքանն ։ Բայց դեսպանքն որ գնան առ նոսա , ոչ թէ 'ի բուն աշխարհն նոցա երթան , այլ 'ի դուրս կոյս աշխարհն որ ասի Մարազա ։ Եւ զհինգ հազար կուսանսն Շապուհ Խաքանայ առաքէր (1) , որ արտաքոյ բուն աշխարհին իւրեանց նստի յընդարձակ վայրի ։ Բայց կան նոքա բուն օրինօք աշխարհին իւրեանց , զատ անտի որ մարդ ոչ ուտեն իբրև զգաւառինս իւրեանց։

---

(1) *Այն է Աբուսահլ զորմէ տես 'ի վեր յեր . 372 և Ղեւոնդ վարդապետ (188) Մահմետ կոչէ , փոխանակ Ահմատայ ։*

Իսկ 'ի թուին Ասորւոց ՌՅԿԱ (1361), և Հայոցն ՆԶԸ (488) թագաւորեաց Յունաց Կոստանդիանոս (Ժ.) Մոնոմախն՝ ամս երկուտոտան, այր մեծահոգի և առատաձեռն. և ունէր զնա ցաւն 'Նիքս (1)։ Եւ զՏաճկաց թագաւորութիւնն Աբլաբաս (Ապու-լ-Սէվուար) (2) ունէր ։

---

(1) Տես 'ի վեր յերես 269 ։

Յայսմ ժամանակի ընկղմեցաւ Եզնկայ քաղաքն Հայոց ջրով, և մնաց միայն տուն մի հաւատացելոյ և ողորմած առն, որում անունն Կիրակոս էր, և հոգետուն մի ։ Եւ 'ի սոյն ամի եղեւ շարժ սաստիկ 'ի պահքն Առաջաւորաց (3)։ Եւ 'ի նոյն տարւոջն եղեւ հակառակութիւն յԱնտիոք եկեղեցականաց ուղղափառաց վասն իրաց ինչ, և ոմանք 'ի նոցանէ գնացին առ պատրիարգն Երկաբնակի, և նա դարձոյց զնոսա յաղանդն իւր, և զայլ ուղղափառսն բովանդակ հալածեաց 'ի քաղաքէն . և առ 'ի նոցանէ զեկեղեցին որ շինեալ էր 'ի վերայ գերեզմանին Ղուկասու Աւետարանչին, զկնի առնլոյն զսուրբն Պետրոս ։ Եւ 'ի զատկի տօնին՝ 'ի նոյն աւուրս եհան Աստուած ընդ կառափն նորա . անկաւ հուր յերկնից և այրեաց զեկեղեցին պատրիարգաւն և աշակերտօքն իւրովք, և այլ բազում ժողովրդով, այնպէս զի և ոսկր մի ոչ կարացին հանել 'ի տեղւոջէն . և հաւատացաւ թէ դատաստան 'ի Տեառնէ եղեւ ճշմարտապէս . և դարձուցին զուղղափառսն 'ի տուն իւրեանց . և որք մնացեալ էին յուրացողացն յայրեցմանէն , դարձան և նոքա 'ի կրօնս իւրեանց (1) ։

---

(1) Ոտնացաւութիւն ։

(2) Մատթէոս Ուռհայեցի, Ապուսուար կոչէ զնա . Ա. 54 . որ էր ամիրապետ Պարսից և նստէր 'ի Գուին, և առեալ էր զդուստր Դաւթի Անհողինի ։

(3) Մատթէոս ուռհայեցի, Ա. 67։—Սմբատ, յեր. 63. տիպ փարիզու ։

Իսկ յորժամ լուաւ թագաւորութեանն Տաճկաց չորս հարիւր և երեսուն ամ, յայնժամ սկիզբն էառ թագաւորութիւնն Թուրքաց 'ի Խորասան , և անուն նորա Տուղրիլբաք , և առաքեաց զօրս 'ի սահմանս Հայոց· և եկին 'ի Մելտենի և առին զնա և գերեցին և դարձան . և կալաւ զնոսա ձիւն սաստիկ 'ի լերան Սասնոյ և անկան 'ի պաղէն երեք հազար անձինք . և գերիքն ազատեալ դարձան , զի կիրթք էին պաղոյ և ցրտոյ և ոչ մեռան (2) ։ Եւ մեռաւ Մոնոմախն և առ ըզթագաւորութիւնն դուստրն իւր Թոդոռն (Թէոդորա) (3) ամ մի . և զկնի նորա Միխայէլ (Զ) այր ծեր , ամ մի ։ (Էր սա) այր սուրբ և պահող և ոչ ուտէր զայլոց վաստակ , այլ ձեռօք իւրովք առնէր դրգալս և վաճառէր և անտի ուտէր։ Սա յորժամ ետես թէ զօրանայ Թուրքն, եհան զքրիստոնեայսն՝ որ յայսմ կողմէ ծովուն և անցոյց յայնկոյս, և եկեալ Թուրքն եգիտ զերկիրն անմարդ, և բնակեցան ՚ի տեղին։ Եւ բազում մեղադրեն նմա, բայց նա մարդասիրութիւն արար։

---

(1) Զնոյն պէտս պատմէ և Մատթէոս Ուռհայեցի ճոխագոյն եւս բանիւք, Բ· 77 ։

(2) Տես զարշաւանս ուղրիլ պէկի զոր արար յաշխարհն Հայոց, 'ի դիրս Մատթէոսի Ուռհայեցւոյ, Ա· 69· 75· 78։

(3) Թէոդորա էր քենի Կոստանդնի Մոնոմախի, և քոյր Զոյեայ ։ Մատթէոս ուռհայեցի, Բ· 79 ։

Եւ յայնմ ամի յարեաւ ոմն իշխան Կոմանոս, և առ զթագաւորութիւնն. և Միխայլն գերծեալ զգլուխն գնաց ՚ի վանք, և Կոմանոսն թագաւորեալ երկու ամ (1), և յետ նորա թագաւորեաց Կոստանդիանոս Տուկիծն յերկրէն Պամփղագոնայ որ զօրացաւ ՚ի վերայ Թուրքայ և շինեաց զՄլաւենոյ պարիսպն, և յետ ինն ամի թագաւորութեան իւրոյ մեռաւ։

Եւ յայսմ ամի եկն Բոխարի (2) զօրապետն Տուղրիլին ՚ի Հալապ և առ զնա։ Եւ այս եղև. սկիզբն առնլոյ նոցա քաղաք ՚ի խորին Ասորւոց Միջագետաց, ՚ի Դամասկոսէ և 'ի Հալպայ 'ի կողմն Եփրատայ մինչեւ 'ի ծովն Ադրիանու, որ է Կիլիկիոյ. և զնոյն զօրապետն Տուղրիլին մինչեւ 'ի ծովն Պոնտոսի:

---

(1) Տես ՚ի գիրս Մատթէոսի Ուռհայեցւոյ· (Բ. 79) ըզգործս պատերազմացն զոր յարոյց Կոմանոս (Իսահակ—Կոմնենոս) ՚ի վերայ թագաւորութեան Յունաց մինչև զըռամբած զայն։

(2) Բոխարի թուի աղաւաղեալն Ալար—Խորասան անուան, զի այս էր գլխաւոր զօրապետ բանակին Տուղրիլայ, նոյնպէս և Սամուխ, Ամիր—Քաֆր, Գիձաձի, Մձմձ և Իսուլք, զորոց անհնարին արշաւանս և զաւերս զոր ածին Հայոց աշխարհին և փոքուն Ասիոյ յամս թագաւորութեան Տուկիծայ և Դիոժինի ունիս ուսանել ՚ի պատմութեան Մատթէոսի Ուռհայեցւոյ, Բ. 83, 86, 91, 92։

Յաւուրս յայսմիկ հնչեաց սատանայ 'ի միտս Պատրիարքին Կոստանդնուպօլսի, որ արար գործ մի սոսկալի հրեշտակաց և մարդկան. զի զգրեանն և զմեռոնն ուղղափառաց Հայոց և Ասորւոց այրել տայր և կոխել ոտիւք, որ անգամ հացի և ձիթոյ պատիւ ոչ առնէին՝ հաղորդին և մեռոնին. և ետ տանել զպատրիարքն Աթանաս քանև հինգ եպիսկոպոսօք 'ի Կոստանդնուպօլիս. և նախ քան զերթալն նոցա պատառեցաւ անաստուածն այն նախատիչն Քրիստոսի իբրեւ զԱրիոս: Եւ փոխանորդ նորա Պատրիարքն արար քննութիւն, և նոքա զայրացեալ և այրեցեալ սրտիւ խստագոյնս յանդիմանեցին զնոսա, և 'ի վերայ այսորիկ արգելան 'ի Պլիոս կղզի(1), և հրամանաւ թագուհւոյն դարձան 'ի տեղի իւրեանց(2): Իսկ զկնի Տուկիծին թագաւորեաց Դէօժանն Ռոմանոս:

---

(1) Ընթերցիր՝ 'ի Ջնա Գաղատիոյ, ուր սովոր էին Յոյնք աքսորել զեկեղեցականս:

(2) Առ թագաւորութեամբ սոյն կայսեր Կոստանդին Տուկիծայ ածաւ Յակոբ սանահնեցի ընդ Ատոմայ և Աբուսահլի իշխանաց Հայոց 'ի Կոստանդնուպօլիս, առ 'ի միաբանել զերկոսին եկեղեցիսն. և ետ Յակոբ վարդապետ զգիր դաւանութեան, զոր արքայն Գագիկ հասեալ 'ի Կ. Պօլիս, պատառեաց զթուղթն զայն առաջի կայսեր: Մատթ. Ուռ. հայեցի. Բ. 93:— Սմբատ. յեր. 7:

Եւ յայսմ ժամանակի մեռաւ սուլտանն Թուրքաց Տուղրիլն, որ ասի Դողրուբէգ (1)։ *և սուլտանացաւ Ալփասլան (Ալփ—արսլան) և եկն անձամբ ՚ի Հայս և ՚ի Յոյնս. և հալան Յոյնք յԱլփասլանայ և բռնեցաւ Դէօժանն* (2). *և լուեալ ՚ի Կոստանդնուպօլիս՝ թագաւորեցուցին զՄիխայլն. և զերծեալ Դէօժանն խաւարեցաւ աչօք, և սպանաւ հրամանաւ Միխայլին*։

Եւ առաքեաց Ալփասլան զքեռորդին իւր զՍուլիման, և առ զաշխարհն Հայոց և թագաւորեաց. և եղեն երկու սուլտանք, մին ՚ի Յոյնք և ՚ի Հայք, և մին ՚ի Խորասան՝ ազգաւ Թուրքք։ *Եւ եկն Սուլիման և ՚ի գիշերի մտաւ յանկարծակի յԱնտիոք և առ զնա, և արար զսուրբ Պետրոս մզկիթ* (3)։

Եւ ՚ի սոյն ժամանակս ամիրայ մի անունն Դանշման, ելաւ ՚ի Թուրքաց և եկն եմուտ յերկիրն Կապադովկացւոց, և առ զՍեւաստ և զԿեսարիա և իշխանացաւ ՚ի վերայ երկրին։ *Եւ այս է սկիզբն ազգին Դանշմանայ* (4)։

---

(1) *Վարդան ճշտագոյն եւս արտաբերէ զանունն գրելով Դօղրւլբէկ, որ է Տուղրիլ—պէկ. (յեր. 127). Նոյնպէս և զծագմանէ նորա բացայայտ խօսի, առեալ ՚ի բանից Միխթարայ անեցւոյ*։

(2) *Մատթէոս Ուռհայեցի*. 103, *յեր*. 242։— *Վարդան, յեր*. 136։—*Կիրակոս, յեր*. 58։—*Սմբատ, յեր*. 84—*Սամուէլ*։

(3) *Մատթէոս Ուռհայեցի*. Բ. 123։

(4) *Տես վասն Դանիշմանայ ՚ի պատմութեան Մատթ*.

Եւ յորժամ եղեն պատահմունքս այս, ելին ոմանք 'ի Հայոց որք թուով յիսուն եւ բնակէին յանապատս եւ ծեծէին զԹուրքն եւ առնուին 'ի նոցանէ ինչս 'ի պէտս իւրեանց։ Եւ եկին յերկիրն Մարաշայ, եւ գտին անդ այր մի հայ ազգաւ՝ Փիլարտոս անուն, այր անձնեայ եւ գեղեցիկ, եւ եղեւ նոցա գլուխ եւ մտին յերկիրն Կիլիկիոյ, եւ տիրեալ էր Թուրքն երկրին, եւ առին 'ի նոցանէ բերդ մի եւ ամրացան 'ի նմա. եւ անտի առին զամենայն երկիրն քաղաքօք եւ բերդօք, եւ առին շուրջանակի Կիլիկիոյ աշխարհս բազումս, զՄարաշ, զՔեսուն, զՆպլթայն եւ ըզՄլտենի եւ զՈւռհա՝ յայնկոյս Եփրատայ, եւ զայլս բազումս։ Եւ լուան Յոյնք եւ տուին Փիլարտոսին պարգեւս, եւ կոչեցին Սեւաստոս։ Եւ յետ այսորիկ ժողովեցան 'ի վերայ Փիլարտոսին յամենայն կողմանց Թուրքք եւ առին 'ի նմանէ զկէս աշխարհի նորա. եւ գնաց 'ի Բաղտատ առ խալիփայն եւ ուրացաւ 'ի հաւատոյն վասն երկրին, եւ առ 'ի նմանէ գիր զի տացէ զերկիրն դարձեալ. եւ մինչ նա եկն, առեալ էին եւ 'ի մնացեալ աշխարհացն եւ ոչ ետուն նմա. եւ ասեն թէ՝ զղջացաւ եւ դարձաւ 'ի հաւատն իւր, եւ գնաց յապաշխարութիւն 'ի վանս (1)։

Ուռհայեցւոյ, Բ. 167. եւ 'ի ծանօթութեան 200.

(1) Մատթէոս Ուռհայեցի ընդհակառակն պարսաւանէ զ

Եւ յայնմ ժամանակի յորժամ զօրացան Թուրքն, հնազանդեցան նոցա Արաբացիքն որ Տաճիկք կոչէին վասն իշխանին իւրեանց փառաւորի և իմաստնոյ, որում անուն էր Տայաւ։ Եւ խառնեցան Թուրքք և Տաճիկք և եղեն ազգ մի։ Եւ որ ՚ի Բաղտատ իշխանն էր յազգէն Մահմետի, զայն Թողին անդ և խալիփա անուանեցին, որ է յետ մնաց, այսինքն մնացորդ ՚ի Մահմետէ. և կալաւ պատիւ ՚ի Տաճկէ և ՚ի Թուրքէ, և անտի առնուն օրէնք և պատիւ, և անտի սկսան ամիրայք ՚ի Խորասանոյ ելանել Թղրուլ սուլտանին և խալիփային, և գային առնուին իւրեանց աշխարհ և տիրէին։ Եւ եկն այսու պատճառանօք ՚ի կողմանս Հայոց ամիրայ մի Սուգման անուն, ազգաւ Թուրք, և կոչեցին զնա Շահի արմէն, որ է Թագաւոր Հայոց։ Եւ այն ամիրա եկն ՚ի Միջագետս, նոյնպէս Թուրք ազգաւ, Արթուխ անուն և կոչեցան ազգաւ Արթուխիք (1)։

Իսկ Թագաւորն Յունաց Միխայլն՝ Թոյլ և կնատ, կայր անհոգացեալ ՚ի պատերազմաց, յուտել և յըմպել. և յարեաւ ՚ի վե-

---

խօսի զփիլարտոսէ, և ասէ զնմանէ՝ թէ իցէ հայորդի, այլ յունադաւան կրօնիւ, (Բ. 106, 107, 111, 122, 125, 128)։

(1) Յաղագս Սուգմանայ և Արթուխեանց, տես ՚ի գիրս Մատթէոսի Ուռհայեցւոյ, Բ. 146 և ՚ի հետեւեալս, և ՚ի ծանօթութիւնն մեր անդ՝ 179։

քայ նորա՝ Նիկիփոր (Գ. Վոտանիատ), և եկն ՚ի Կոստանդնուպօլիս զօրօք և առ զնա, և սպան կատարել զքաղաքն. և Միխայլն առ զթագն ՚ի ձեռն իւր և գնաց ընդ առաջ նորա և ասէ. «Ա՛ռ զսա զոր խնդրես և արգել զսուրդ ՚ի քրիստոնէից։» Եւ առ զթագն, և հրամայեաց գերծուլ զգլուխն և տանել ՚ի վանք. և առ զկին թագաւորին իւր ՚ի կնութիւն (1), և կրտեաց զերկու որդիս նորա, և վասն այնորիկ ատեցաւ յամենեցունց։ Վասն որոյ ոմն յիշխանացն Աղեքս անուն, արար իւր խորհրդակիցս բազումս, և առ զթագաւորութիւնն. և նոյնպէս արար Աղեքսն Նիկիփորայ՝ որպէս և նա Միխայլին։ Եւ թագաւորեաց Աղեքսն ՚ի վերայ Յունաց ամս քսան և հինգ (2)։

Սկիզբն թագաւորութեան սորա Ալբասլամ առ զԴամասկոս և սպան զԱքսիս (3)։

Եւ յայսմ ամի եկին ՚ի Հռոմայ կողմանց, և կուտեալ զօր բազում եկին ՚ի Կոստանդինուպօլիս և պաշարեցին զնա զեւթն ամ. և այս է պատճառ եկանելոյ նոցա։ Յորժամ Արթուխ ամիրայն առ զԵրուսաղէմ հրամանաւ Մելիք շահին, և արար զԳերեզմանն ընդ հարկաւ, զի առնուին յաղօթականացն յամէն մէկէ կարմիր մի(1)։ Եւ յայնըմ ժամանակի եկն ՚ի Փռանկաց կոմս մի Զնջիլ(2) անուն՝ յԵրուսաղէմ յերկրպագութիւն անօրինական տեղեացն. և յորժամ մտանէր ՚ի Գերեզմանն՝ աւելի պահանջէին ՚ի նմանէ քան զեդեալ հարկն, և ՚ի յոչ տալն զարկին զնա և հանին զմէկ աչն նորա ՚ի սաստիկ զարկուցմանէն։ Եւ առեալ իշխանն ըզհանեալ աչն՝ եկ ՚ի Փռանգստան, և տարաւ զնա ՚ի Հռոմ, և շրջեցոյց ընդ կոմսունսն ամենայն, և շարժեաց զնոսա ՚ի նախանձ Տեառն(3). և ելին և եկին նախ ՚ի Կոստանդինուպօլիս։ Եւ մինչ կային նոքա ՚ի վերայ Կոստանդինուպօլսի, եղեւ շարժ ՚ի յԱնտիոք և անկաւ պարիսպն և խլեցաւ բուրգն մի յարմատոյ(4), և գտաւ ՚ի նա քարոզում պատկերք պղնձիք, և էին որպէս պատկերք Փըռանգի, որ կային 'ի վերայ ձիոց, և ագուցած էին 'ի բերանս նոցա երկաթք և փակած. և ետ բերել զնոսա ամիրայն առաջի իւր, և ետ քննել թէ զի՞նչ իցէ: Ոմանք ասէին թէ՝ կուռք են 'ի հին ժամանակաց. և հրաման ետ մանրել զնոսա. և փշրեցան և ցրուեցան պատկերքն: Եւ լուաւ կին մի ծեր և կոյր, և ասաց. "Այն պատկերքն տըլսմեր էին 'ի Յունաց շինեալ՝ զի մի՛ զօրասցի Փռանգն և թագաւորեսցեն և տիրեսցեն յաշխարհս ծովու: Իսկ ամիրայն յորժամ լուաւ այս՝ յոյժ արտմեցաւ վասն խորտակման պատկերացն. և նոյն ժամայն առին (Փռանկք) զԿոստանդնուպօլիս և անցին յաշխարհս և զօրացան, և եկին նաւօք յԱնտիոք:

---

(1) Մատթէոս Ուռհայեցի, Բ. 109, և ՚ի ծանօթութեան 148։

(2) Աղէքս Կոմնենոս էր որդի Յովհաննու Կոմնենոսի, որ կալաւ զաթոռն ամս իբր 37։ Մատթէոս Ուռհայեցի, Բ. 117։

(3) Զ Դամասկոս քաղաք ոչ Ալբ—Արսլան՝ այլ որդի նորա Դդուշ առ ՚ի ձեռաց Աքսիսի, այն է Ազիզ Իպն—Աւք, որ էր կառավարիչ կարգեալ Դամասկոսի ՚ի կողմանէ Մելէք շահ սուլտանին Պարսից։ Մատթէոս Ուռհայեցի. Բ. 127։

---

(1) Կարմիրն է անուն ոսկի դահեկանի։

(2) Այն է կոմսն Ռեմոնտ որ Սէն—Ժիլ (Raymond de Saint-Jilles)։

(3) Զայս դէպս և Վարդան յիշատակէ, (յեր. 146)։

(4) Յիշէ և Մատթէոս Ուռհայեցի զայս շարժ ահագին որ եղեւ յԱնտիոք, յորում բազում անձինք մեռանին ընդ փլատակօք, և եղեւ սոյն յամի փրկչին 1092, յամսեան Սեպտեմբերի, (Բ. 135)։ — Սմբատ, յեր. 87։

Երկու 'ի նոցանէ յազգէ թագաւորաց էին, Պեմունդն և Տանկրի, և եւթն կոմսունք էին, Ռոջէլն (Ռոժէր), Պեմունդն, Պաղտին, Ճօսլին, Կալարանն (Վալերան), Կոնդոփրի (Կոտֆրուա), Սալկէան(1): Իսկ Թէոդորոսն(2) զոր եդեալ էր զնա 'ի յՈւռհա Փիլարտոս հայն, և կայր 'ի նորա ժամանակայն անդ, և առաքեաց 'ի յԱնտաք առ Ֆռանգն և խոստացաւ տալ զքաղաքն 'ի Կոնդոփրի. և խնդացին նոքա յուրախութիւն մեծ, և ասացին. “Որպէս Ուռհա քաղաքն նախ քան զԵրուսաղէմ հաւատաց 'ի Քրիստոս, և ինքն Քրիստոս հաւատովն Աբգարու արքային Հայոց յառաջ յՈւռհա թագաւորեաց, նոյնպէս և յողորմութենէն Քրիստոսի նախ քան զառնելն մեր Երուսաղէմի, Ուռհայի տիրեցաք:” Եւ առաքեաց Կոնդոփրի զեղբայրն իւր զՊաղտին, և իշխանացաւ յՈւռհա. և այլքն նստան 'ի վերայ Անտաքոյ ինն ամիս: Եւ կային 'ի քաղաքն Կիսան և Ալիսան ամիրայք(1). և ել Կիսանն 'ի քաղաքէն և գնաց, և հանդիպեցան նմա արք երկու ազգաւ Հայք, և սպանին զԿիսանն և բերին զգլուխն առ Ֆռանգն: Եւ կային 'ի պուրճ մի երկու եղբարք՝ նոյնպէս ազգաւ Հայք, որք քաջացան և սպանին զԹուրքսն որ կային առ նոսա, և ազդեցին Ֆռանգին, և մտին ընդ պուրճն ընդ այն և առին զքաղաքն, և յետ այնորիկ տիրեցին նմա: Եւ 'ի նոյն ժամանակս սպանաւ Սուլիման յԻկանխոն, և Թագաւորեաց Խլիճ ասլան ։

---

(1) Անուանք գլխաւորացն խաչակիր բանակին այլափոխեալք են ըստ մեծի մասին, և ոմանք անիմանալի լեալք: Տես և 'ի գիրս Մատթէոսի Ուռհայեցւոյ, Բ. 150:

(2) Թորոս կիւրապաղատ էր որդի Հայոյ Հեթումի կոչեցելոյ, որ ըստ ասելոյ Մատթէոսի Ուռհայեցւոյ (Բ. 145.154), կացուցաւ իշխան Ուռհայոյ 'ի Դդուշ ամիրայէ, յամի 1094:

---

(1) Կիսան և Ալիսան ցուցանեն զմի և զնոյն անձն, այն է՝ Աղեսիանն Մատթէոսի Ուռհայեցւոյ (Բ. 144, 151). որ էր զօրապետ Դղուշի, և իշխան Անտիոքայ, որ յետ առման քաղաքին 'ի Պեմունտայ, յամի 1098, փախուցեալ 'ի քաղաքէն սպանաւ 'ի գեղացւոց (Բ. 155):

Եւ լուաւ սուլտանն որ 'ի Խորասան զելն Ֆռանգին 'ի վերայ Նիաւքոյ, և առաքեաց ընդ Կիւրապաղատան հարիւր հազար հեծելով(1), և եկն պաշարեաց զՖռանգն 'ի յՆիաւք · և այնչափ նոր էին առեալ զՆիաւք, որ մինչ մտաւ Ֆռանգն 'ի քաղաքն, զօրքն Թուրքաց հասին 'ի Պաղրաս(2), վասն որոյ շատ նեղեցին զնոսա սովով ։ Եւ նոքա ապաւինեալք յԱստուած աղօթիւք և արտասուօք՝ գտին զգեղարդն Քրիստոսի, և ելեալ կոտորեցին զԹուրքն և տարան զնոսա կոտորելով օր մի և դարձան(3) . և եղեն փախստական 'ի Միջագետաց Թուրքաստանք ։ Եւ գնացին զօրքն Ֆռանգաց և առին զծովեզերայն և զՅոպպէ և գնացին յԵրուսաղէմ ։ Եւ նախ քան զՖռանգին գնալն առեալ էին զԵրուսաղէմ Եգիպտացիքն և տիբեալ էին նմա, և 'ի նոցանէ առին Փռանգքըն և առ հասարակ կոտորեցին զնոսա. և ոմանք փախեան 'ի Տաճկաց և մտին 'ի տաճարն, և հանեալ զնոսա սպանին։ Եւ թագաւորեաց Երուսաղէմ Կնդոֆրի ամս երկու. և յետ նորա Պաղտինն ամս հնգետասան։

---

(1) Կերպողա զոր Միխայէլ, կամ լաւ եւս Թարգմանիչ նորա վրիպակաւ գրէ Կիւրապաղատ, էր զօրավար Պարկիարուխի որդւոյ Մելիք շահի սուլտանին Պարսից ։ (Մատթէոս Ուռհայեցի · Ե 155 ։)

(2) Պաղրաս, որ և Պաղրա, էր դղեակ մեծ յԱմանոս գաւառի յերկրին Կիլիկիոյ ·

(3) Մատթէոս Ուռհայեցի երկար պատմէ զգիւտ գեղարդանն և զպատերազմ զոր ետուն Ֆռանկք ընդ Կերպողայ · (Ե · 155 · յեր · 322) ։ իսկ Վարդան ասէ, թէ էր գեղարդն այն որով Հրեայք խոցեցին 'ի Պերութ քաղաքի ընդ կատակս պատկերին փրկչական, և ել անտի արիւն և ջուր ։ Տես զկնի յեր · 416 ·

Յայսմ ժամանակի եկն Խլիճ ասլան 'ի վերայ Մլտենոյ, և լուաւ զզօրանալն Փռանգին և դարձաւ։ Եւ յայն ժամն եկն Դանիշմանն 'ի Մլտենի և այրեաց զմուաքն և դարձաւ. և նոյնպէս առնէր զերիս ամ։ Եւ Գաբրիէլ յոյն էր 'ի Մլտենի, զոր կացուցեալ էր Փիլարտոսն հայ, և խստագոյն նեղէր զքաղաքն քան զարտաքոյն։ Եւ յայն ժամ կային գլխաւոր իշխանք 'ի Հայոց՝ Վասիլն, որ 'ի ժամանակին Փիլարտոսին ունէր զՔեսուն և զՌաբան, և ոմանք 'ի Կիլիկիա՝ որք կոչին որդիք Ռոբինայ, 'ի Փիլարտոսէ իշխանացեալ 'ի տեղիս տեղիս, որք առաւեցին և տարան զկաթողիկոսն Հայոց 'ի Կիլիկիա։ Եւ յայսմ ամի ետ Գաբրիէլ յոյն զՄլտենի 'ի Դանիշմանն, և ստեաց Փռանգքին և ոչ ետ 'ի նոսա ըստ խոստմանն (1)։ Եւ արար դիւրութիւն և շինութիւն Մլտենոյ Դանիշմանն, և խնամ արկ 'ի վերայ նոցա՝ տալով նոցա հաց և անասունս և ազատութիւնս, և չինեցան: Եւ այս Դանիշմանս էառ գերի զՊեմունդ Թագաւորն և վաճառեաց ՚ի հարիւր հազար դահեկան(1):

---

(1) Մատթէոս Ուռհայեցի, Բ 167։ Վարդան, յէր. 148։

Եւ յաւուրս յայսոսիկ ամբոխեցաւ Թուրքաց Թագաւորութիւնն ՚ի Խորասան, և դարձեալ ամբարձին զգլուխս իւրեանց Տաճիկք. և եկաւ ՚ի Հռոմայ Մողաղիք տաճիկ և էառ զՃիփեմիս և ամբարձաւ ՚ի Դամասկոս: Իսկ Դոգաս և Ուրասոն (Ոստուան°) ամիրայք ՚ի Հալպ և Ուսմար առ զՄնճարն և զԽաբուրն (Խաբրան°), և անկան Թուրք և Տաճիկք (Արաբացիք) ՚ի յիրար մեծով(2): Իսկ ՚ի Բիւթանիա և ՚ի Կապադովկիա ոչ գոյր Տաճիկ. այլ Թուրքքն ունէին և մեծէին ընդ Յունաց, և զՃոգիտտոս Տաճիկքն ունէին. և եղեւ Թշնամութիւն ընդ Դանիշմանն և ընդ Խլիճ ասլան և պատերազմէին ընդ միմեանս: Եւ ՚ի յայսոսիկ (աւուրս) մեռաւ Դանիշմանն յետ առնլոյն երկուց ամաց զՄելտենի. և եղ Խլիճ ասլան ՚ի վերայ Մելտենոյ. և Աղուսինն կայր ՚ի Մելտենի՝ որդին Դանիշմանայ, և առ զնա երդմամբ:

Եւ յայսմ ժամանակի անուանեցաւ սուլ

---

(1) Մատթէոս Ուռհայեցի ասէ, եթէ միջնորդութեամբ Գող Վասլի գնոյ առնին փռանկք զՊեմունդն (Բոէմոնտ)՝ և թէ՝ տասն հազար դահեկանս եւս ինքն Վասիլն ետ (Բ. 178):— Վարդան. յեր. 149:

(2 Զյառնել ամիրայից այսոցիկ ՚ի վերայ միմեանց յիշատակէ և Կիրակոս յիւրում պատմութեան. որոց անուանքն անծանօթ են մեզ, ասէ: (Յեր. 69:)

տանն Խորասանայ Խիաթատին, և առաքեաց զՉաւլի զօրօք ընդդէմ Փռանգին, և եկն 'ի Մօսլ(1)*։ Եւ էր անդ ամիրայն Նգարմիշ (Ճկրմիշ), որ ել ընդդէմ Չաւլին և պատերազմեցան, և յաղթեցաւ Չաւլի, և ըմբռնեցաւ և ածաւ կապանօք 'ի քաղաքն։ Եւ զկնի սակաւուց մեռաւ Նգարմիշ (Ճկրմիշ). և ազատեցաւ Չաւլի, որ և գնացեալ ժողովեաց այլ զօրս բազումս, կամէր դարձեալ գալ 'ի վերայ Մօսլայ, զի կացուցին նորա զորդին Նգարմշին (Ճկրմիշ) ամիրայ. և իմացեալ Մօսլիք զգալ Չաւլայ, առաքեցին առ Խլիճ ասլան և բերին զնա և տուին զքաղաքն 'ի նա։ Եւ Չաւլի գնաց և առ զԽաբուրն, և Խլիճ ասլան գնաց 'ի վերայ Խաբուրին. և 'ի յանցանելն ընդ գետն՝ ընկղմեցաւ և մեռաւ*(2)*. և Չաւլի թագաւորեաց 'ի վերայ Մօսլայ և Մծբնայ, և ժողովեալ զանձս՝ գնաց 'ի Խորասան։ Եւ 'ի Մելտենեի լուեալ զմահն Խլիճ ասլանայ, եդին թագաւոր զորդին նորա զՏուղ ասլան (Տուղրիլ—Արսլան).*

---

(1) Չաւլի, այն է Ջաւալի—Սաքաուա, էր նախ կառավարիչ Մուսուլայ, և ապա եկաց Ֆարս գաւառին Պարսից և խնամակալ (Աթաբէկ) դեռահասակ մանկանն Ճաղրիայ որդւոյն Մոհամմետի։ Իսկ Ճկրմիշ էր իշխան Ճզիրէի, և կոչէր Շէմս-Էտտովլա Ճկրմիշ, յաջորդ Կերպողայի. Մատթէոս Ուռհայեցի, Գ. 194։)

(2 Մատթէոս Ուռհայեցի մեռաւ, ասէ, 'ի պատերազմի. (Գ. 196)։

և արար զօրագլուխք երկու, զԵղ ասլան և ըղԳիզմիշն՝ թէ անկաւ ընդ մօրն իւր՝ և մեռաւ։ Եւ առ զմայր նորա Տուղ ասլան։ Եւ կային երեք որդի այլ Կլիճ ասլանայ, Արաբ և Շահան շահ և Մասուտ։ ԶԱրաբն եսպան Ամիր Ղազի որդին Դանիշմանայ, և Շահան շահ եսպան զՄասուտն։

Իսկ ՚ի յայնմ ժամանակի յորժամ էր Պաղտինն երկրորդ թագաւոր Երուսաղէմ, եկն ՚ի Հռոմայ իշխան մի Կուտափի(1) անուն՝ երեսուն ձիաւորօք Երուսաղէմ. և ուխտ էր առեալ՝ որ ոչ դառնար անդրէն։ Եւ յետ ամի միոյ եղեւ աբեղայ, և երեսուն ձիաւորքն իւր ընդ իւրեանն փոխեցին զհանդերձս իւրեանց և կային սրբութեամբ և աղօթիւք։ Եւ զի Թուրքն նեղէին զքրիստոնեայսն, աղաչեցին զնոսա ելանել ՚ի պատերազմ ՚ի վերայ . . . նոցա ընդ զօրս քրիստոնէից ասելով թէ այն առաւել հաճոյ է Աստուծոյ և շահ հոգւոյ։ Եւ ետուն նոցա ապրանք գեղեր՝ թագաւորն և պատրիարքն. և ետուն ՚ի նոսա զՏաճարն ՚ի բնակութիւն, և եկին այլք յարեցան ՚ի նոսա, և ապա հաստատեցին իւրեանց կանոնք. և եղեն միաբանեալ եղբարք, և որ կենան սրբութեամբ և կուսութեամբ, և չունէին առանձնական ինչս.

---

(1) Թերեւս կամի ասել Հուկս տը Փէն (Hugues de Pains) զի այս էր անուն գլխաւորին կարգի Տաճարականաց։

և կռուեցին ընդդէմ . . . նայ։ Եւ եղ բանս այս ՚ի Հռոմ և ամենայն ուրեք, և սկսան միաբանել ընդ նոսա աղքատք և մեծատունք և իշխանք, և ստացան բերդս և փարթամացան։ Եւ այս եղեւ սկիզբն Ֆրերացն (1)։

Եւ յայնմ ժամանակի զօրացաւ Պաղակն որ էր Մարթուխեցին. և սա տիրեաց բազում գաւառաց։ Եւ սա սա գնաց կինն խիճ ասպանայ և եղեւ նմա կին, թողեալ զօրդիքն. և յամենն Արթուխքն չեղեւ որ իբրեւ ընդ Պաղակին։

Ի թուին Արարուոյ ՌՆԼ (1430) և Հայոց ՇԾԷ (557) Ամիր խանի թագաւորեաց և գնաց եւթն հազարաւ ՚ի վերայ Ասորւոց, և եղ ընդդէմ նորա Մոճէին (Մաժէր) և հարաւ ՚ի նոցանէ։ Եւ լուեալ Պաղտինն՝ թագաւորն Երուսաղէմի, և եկն և կոտորեաց զնոսա, և զմնացեալսն փախստական արար։

Եւ յայսմ ամի թագաւորն Մեքսենոյ Տուզաղան (Տուզըկ—Արզան) եառ զԱպլաթայն, և եկն Ջուանդէն և գերեաց զաշխարհն Միլենոյ. և թագաւորն Միլենոյ և Պաղակին գնացին ՚ի վերայ Կամախայ և գերեցին, և առին Կամախայ Մանկուճակն (Մանուչէ) փախեաւ ՚ի Տրապիզոն՝ յուսացեալ ՚ի

---

(1) Ֆրէր նշանակէ եղբայր. այսպէս կոչէին միաբանեալքն կարգին Տաճարականաց, կամ օսպիտալիէ, զի ունէին օսպիտալ այն է հիւրանոցս կարգեալ վասն ուխտաւորաց։

Յոյնս ։ Եւ առեալ զօր ՚ի Յունաց և ըզխաւուռազն գլուխ, և եկն ՚ի վերայ Պաղակին. և յաղթեցան Յոյնք, և ըմբռնեցաւ Մանկուճակն և խաւուռազն, և վաճառեցին զխաւռազն երեսուն հազար դահեկան ։

Ընդ այն ժամանակս արքայազունքն Հայոց, որ յաւուրս Վասլի կայսեր եկեալ էին ՚ի Վասպուրականէ և բնակեալ ՚ի Սեբաստ և ՚ի Կեսարիա և ՚ի Խաւատանէքն, և բռնացեալ ունէին զբազում տեղիս, մտին յերկրին Կիլիկեցւոց ։ Սմանք ՚ի նոցանէ Ռուբինեանք կոչեցեալք, որք էին յերկուց մեծամեծաց զարմից, Հայկազունք և Սենեքարիմեանք, խնամութեամբ խառնեալ ընդ միմեանս, որք թագաւորեցին ՚ի Վասպուրական յորժամ և Բագրատունիքն թագաւորեցին ՚ի մեծ Հայս, և այժմ սկսան տիրել երկրին Կիլիկեցւոց. և թագաւորեալ արիական քաջութեամբ Ռուբէն նախ և Կոստանդին և Լեւոն և Թորոս, և այլքն մի ըստ միոջէ ։

Ի թուին Ասորւոց ՌՆԼԴ (1434) և Հայոցըն ՇԿԱ (561) եղեւ մեծ պատերազմն թռչնոց, զի կռունկք և արագիլք զբազում աւուրս ժողովեցան յերկիրն Ամթայ ՚ի Թըլխմաւ ։ Եւ սկսան եւթն եւթն դեսպանս արձակել ՚ի միմեանս. և յետ բազում երթեւեկաց կռուեցան յերրորդ ժամէ աւուրն մինչեւ ցինն ժամն. և յերկոցունց կողմանցն անկան կուտոյք մեծամեծ սպանեալք. և յաղթեցան արտաքինքն և փախեան, և խաղաղացաւ պատերազմն, և զպատճառն Արարիչն միայն գիտէ (1) :

Ի հինգ հարիւր ամի իշխանութեանն Տաճկաց լուաւ Խիաթարին սուլտանն Խորասանայ, եթէ թագաւորեաց Սադաղս (2) Տաճիկ 'ի վերայ Թկրթայ. և ել ամենայն ուժով իւրով 'ի վերայ Սադաղայ և պատերազմեցան 'ի վերայ Տիգրիս գետոյ, և յաղթեցան Տաճիկք և սպանաւ Սադաղա. և անդանօր բարձաւ թագաւորութիւնն Տաճկաց, որ և տեւեաց հինգ հարիւր ամ: Եւ Ասորւոց թիւն էր ՌՆԼԳ (1433), և Հայոցն ՇԿ (560), զկնի եւթանասուն ամի ելանելոյն Թուրքաց:

Յայնմ ժամանակի լուաւ Խաղի զմահն Պաղակին, և եկն 'ի վերայ Մելտենոյ և ոչ կարաց առնուլ զնա. և դարձաւ Խաղի որդին Դանիշմանայ՝ թողեալ զորդին իւր 'ի վերայ նորա զօրօք, որ և արկին զնոսա 'ի մեծ կարօտութիւն սովոյ և առին զնա : Եւ գթացեալ 'ի վերայ նոցա՝ ոչ ինչ մեղաւ նոցա, այլ ետ նոցա հաց և ոսպն. և եդ նոցա ուխտ խաղաղութեան, և գնաց անտի : Եւ զօրացեալ Միր Խազի՝ ջնջեաց զԹուրքսն որ կային յերկրին Կապադովկացւոց, և ինքն միայն թագաւորեաց : Եւ յաւուրսն յայնոսիկ լուաւ թէ՝ Յոյն մի Կասիանէ անուն, ունի բերդեր յեզր ծովուն, և գնաց 'ի վերայ նորա, և հնազանդեցաւ Յոյնն և ետ զբերդերն, և ինքն եղ առ նա և կայր ընդ ձեռամբ նորա : Եւ սա սպան զՄասուտն Արթուխեան. և լուեալ զքաջութիւն նորա խալիփայն և սուլտանն Խորասանոյ, առաքեցին նմա թագ և պատիւ և կոչեցին զանուն նորա Մելիք Խազի, և անուանեցին թագաւոր ամենայն հիւսիսոյ :

---

(1) Զայն դէպս պատմէ և Մատթէոս Ուռհայեցի (գ. 257), և Սմբատ (յեր. 92). իսկ տեղի այսր տեսարանիս ասեն լինել դաշտն Մելիտինու: Մատթէոս դնէ 'ի թուին Հայոց ՇՀԲ, և Սմբատ ՇՀ. իսկ Միխայէլ ՇԿԱ. քանզի նա համեմատութեամբ Ասորւոց թուոյն պակաս դնէ միշտ ամս տասն կամ մետասան:

(2) Յաղագս Սադաղայի տես 'ի ծանօթութիւն մեր 266, 'ի պատմութեան Մատթէոսի Ուռհայեցւոյ, տպեալ յԵրուսաղէմ:

Յայնմ ժամանակի դարձեալ թագաւորեաց Յունաց Իւանէ, և էառ զԿաստամանի և երկու բերդ այլ : Եւ լուաւ Մելիք Խազի և գնաց և էառ դարձեալ զԿաստամանի :

Յայնմ ժամանակի եկն Զանգի ամիրայն Մօսլոյ 'ի վերայ Հալպայ, և ետուն յօժարութեամբ 'ի նա վասն համբաւոյ իրաւադատութեան նորա :

Եւ 'ի սոյն ամի առաքեաց խալիփայն և խիաթարին Մելիք Խազէ, չորս ալամնեաւ և շղթայ մի ոսկի պարանոցին և գաւազան ոսկի որ հարկանէին զնա 'ի նշանակ թագաւորելոյն նմա յորդւոց յորդիս. և բերին նմա նաղարայք և փողք. և յորժամ ելին, մեռաւ նա, և կատարեցին զբանն 'ի վերայ որդւոյ նորա Մահմուդին, և քարոզեցին զնա Մելիք: Եւ էր նա ատեցող քրիստոնէից, և կայր նա օրինօքն Տաճկաց, գինի ոչ ըմպէր, և վայրապար ոչ գնայր 'ի վարս իւր: Եւ նա շինեաց զկեսարիոյ աշխարհն, և քակեաց բազում եկեղեցիս 'ի նմա: Եւ յայսմ ժամանակի Զանգի ամիրայն Մօսլայ արար պատերազմ ընդ Արթուխին և յաղթեաց նոցա:

Եւ յաւուրս յայսմիկ ելին Փռանգն Հռոմայ[1] Երուսաղէմ և եկին Անտիոք և կային ընդ Յոյնք քաղկեդոնացիք որ չարախօսեցին զԱսորիս և ասացին. “Խաբեբայքս ատեն զժողովն Քաղկեդոնի, և ունին զաջն Պարսամայ որ նզովեաց զժողովն չորրորդ. և ասեն՝ թէ ունէ նշանս և սքանչելիս: Եւ յորժամ ասեմք թէ՝ բացէք որ տեսանեմք, ասեն թէ՝ ոչ իշխեմք զի մի լիցի հեղեղ և կարկուտ.” և զայս ասէին և ծիծաղէին: Ապա կոչեաց Փռանգն զհայրապետն վանացն Մօր Պարսամայ, և ասաց. “Բերէք զաջն որ տեսանեմ:” Եւ յաւուրսն յայնոսիկ մորախ ապականէր զերկիր, և ասաց թէ՝

---

[1] Թուի ակնարկել 'ի Լատին պատրիարք Երուսաղէմի կամ յայլ ոք 'ի կարտինալաց:

«Բերէք զնա վասն մարախիս, զի նովաւ ողորմեսցի Աստուած աշխարհի»: Եւ նոքա ասացին. «Ոչ իշխեմք հանել զնա 'ի տեղւոջէ իւրմէ»: Յայնժամ տեսանէր նոցա և ասէ երազմամբ. «Թէ ոչ բերէք զնա, ոչ մնայ ձեզ աստ յիշատակ 'ի քաղաքիս մերում. այլ հանեմ զձեզ աստի և զամենայն ժողովուրդս ձեր»: Իսկ նոքա բանադատեալք գնացին և բերին, և տարան 'ի տուրք Վերոյա. և ասաց Պաւղն. «Արդ բացէք որ տեսանեմք.» և նոքա ասեն. «բայց եթէ դու բացցես հայրդ»: Եւ նա առեալ եբաց. և յանկարծակի 'ի բըթթել աչաց ծածկեցաւ երկինքն ամպով, և սկսաւ գալ անձրև առատին, և լինէր փայլատակմունք և կարկուտք և հրձգութիւնք մինչ աւանել կամէր զքաղաքն: Եւ ասաց Պաւղըն և ամենայն եկեղեցականքն անկան 'ի վերայ երեսաց իւրեանց և լային լալիւն մեծ: և շարժեցաւ քաղաքն ամենայն, այր և կանայք առ հասարակ յորժամ լուան, և դիմեցին յեկեղեցին: Եւ անդ յետ բազում ժամուց արգելեալ սրտառուհան, և հրամանեաց Պաւղն առնել հսկումն Ասորեացն և խնդրել վասն մարախին 'ի ձեռն բարեխօսութեան սրբոյն: Եւ ասաց Պաւղն ըմբռնել զչարախօսքն, և ոչ գտին զնոսա, զի փախուցեալ էին: Եւ ժողովեցան ուղղափառքն Ասորիք և Հայք ընդ նոսա և արարին հակումն, և հանին զաջն և պահպանեցին զաշխարհն. և նոյն ժամայն ողորմութեամբն Աստուծոյ գնաց մարախն և լցաւ 'ի ծովն, և փառաւորեցին զԱստուած և զծառայ նորա զՄոր Պարսամա, և առին նմա եկեղեցւոյ տեղի և շինեցաւ, և կարգեցին ապրանք եկեղեցւոյն, և նզովք եդ Պայն զի մի՛ որ իշխեսցէ նզովել զատեցողն Բաղկեզանի ժողովյն. զի Աստուած հանդուցեալ է 'ի նոսա, այն որ քննէ զծածուկս և ինքն է պաշտեցեալն և պատուեալն. և մեք ինչ ոչ գիտեմք, այլ միայն մարտիցուք ընդ անօրէնսն և խաղաղութիւն կայցուք ընդ անդամսն Քրիստոսի:

Եւ յետ այնորիկ խնդրեաց զգտեալ գեղարդն, և եղեւ քննութիւն թէ ո՞ր է այս: Եւ վկայեցաւ 'ի գրոց, թէ այն գեղարդն որով Քրիստոս խոցեցաւ, Թադէոս առաքեալն զայն 'ի Հայք տարաւ: Իսկ այս գեղարդս ոչ է այն, այլ այն է որ 'ի Տաբարիս Հրեայքն յաւուրս ուրբաթուն մեծի գողացան քրիստոնեայ մի և տարան յանապատ և խաչեցին բեւեռօք. և զամենայն կատականս և զայպանութիւնս զոր արարին Քրիստոսի անօրէն և կատաղի Հրեայքն, նոյնպէս և արարին այն քրիստոնէին, զփշեղէն պսակն և զքղամիդն և զծեծումն գըլխոյն և զթուքն և զամենայն օրինակ անարգանայն Տեառն. և խոցեցին գեղարդեամբ զկողն և ել արիւն և ջուր, և խաւարեցաւ արեգակն, նոյնպէս և շարժեցաւ երկիր։ Եւ խնդացին քրիստոնեայքն, և փախեան Հրեայքն և առաքեցին պատգամս զի Թողցեն նոցա՝ և նոքա դառնան առ Քրիստոս. զի հաւատամք ասեն՝ թէ ճշմարիտ Աստուած էր խաչեալն 'ի Հրէից Քրիստոս։ Եւ ներեցին նոցա և դարձան 'ի Տէր բազմութիւն Հրէից, խոստովանեալք զմեղս իւրեանց։ Եւ այս է գեղարդն որ պահեցաւ և պատուեցաւ 'ի քրիստոնէից մեծամեծ նշանօք և սքանչելեօք։

Յայնմ ժամանակի յորժամ դարձան եկեալքն 'ի Խորասանայ առ Մելիք Խազի, եղեւ շարժ ահագին 'ի Խորասան յաւուր ուրբաթու, և պատառեցաւ երկիր և կլաւ մզքիթ մի ութ հազար արամբք և կանամբք՝ որ ժողովեալ էին յաղօթս և 'ի լսելութիւն քարոզութեան իւրեանց։

Ի թուին Ասորւոց ՌՆԾԵ (1455), և Հայոց ՇՁԲ (582)(1), մեռաւ Իովաննէ (Յովհաննէս) Թագաւորն Յունաց 'ի Կիլիկիա, և Թագաւորեաց որդի նորա կրսեր Մանուէլին որ կայր առ նմա, և գնացեալ ՚ի Կոստանդինուպօլիս ընկալաւ զնա, և ոչ աւագ եղբայրն եկաց հակառակ նմա ։ Եւ ՚ի նոյն ամի մեռաւ Երուսաղէմի թագաւորն Պաղտինն, և թագաւորեաց որդի նորա Պաղտնոյն՝ որ էր տղայ և մայրն խնամէր զթագաւորութիւնն (1) ։ Եւ ՚ի սոյն ամի մեռաւ Դաւութ ամիրայն տէրն Խարբերդոյ՝ Արթուխի, և առ զիշխանութիւնն Խարասլանն (Կարա—Արսլան) որդի իւր. և Մասուդն առ զԱբլսթայն (2) ։

---

(1) Յովհաննէս կայսր Պերպեռոժեն մեռաւ 'ի թուին Հայոց ՇՂԲ, կամ յամի Տեառն 1143, որպէս դնէ շարայարողն Մատթէոսի Ուռհայեցւոյ (Գ. 256)։ Որպէս ասացաք 'ի վեր յէր. 412 'ի ծանօթութեան, Միխայէլ Ասորի 10 ամաւ պակաս դնէ զհայ թուականն։

Ի թուին Յոյնաց ՌՆԾԶ (1456), և Հայոց ՇՁԳ (583) (3), առաւ Ուռհա ՚ի Զանգեայ Աթաբակէ՝ ՚ի Ջօսլէն (Ժոսլէն), և զորպիսութիւնն ոչ գրեցաք, զի գրեալ են այլք՝ ընդարձակ։ Իսկ Զանգի զկնի ամի միոյ առնլոյն զՈւռհա՝ սպանաւ ՚ի Խլիճայ (4), և առ զիշխանութիւնն նորա ՚Նորադինն (Նուրէտտին) որդի նորա ՚ի Մօսլ:

---

(1) Թագաւորն Երուսաղէմի կոչէր Ֆուլք ա'Անժու, որոյ սպանեալ ՚ի յորս՝ թագաւորեաց որդի նորա Պաղտին (Բոդուէն) ընդ խնամակալութեամբ մօր իւրոյ Մելիսանդեայ։ Մատթէոս Ուռհայեցի, Գ. 256։— Վարդան, յեր. 164։

(2) Մասուտ էր որդի Ղլիճ—Արսլանայ Ա. որ թագաւորեաց յամէ 1119—1155. և ըստ ասելոյ Գրիգորի երիցու (՚ի գիրս Մատթէոսի Ուռհայեցւոյ, Գ. 261), առ յամի փրկչին 1149 զՔեսուն, զՊեհեսնի, զՌապան։

(3) Յօրինակին՝ հինգ հարիւր յիսուն և երեք, թէպէտ և երկոքեան սխալք են, քանզի Ուռհա քաղաք առաւ ՚ի Զանգի ամիրայէ ՚ի թուին Հայոց ՇՂԳ ։ Գրիգոր երէց, Գ. 256 ։ —Վարդան, յեր. 164 ։— Ներսէս Շնորհ. յողբմն։

(4) Ոչ ոք ՚ի պատմագրաց յիշէ զանուն սպանողին Զան-

Եւ յայսմ ժամանակի երևեցաւ ՚ի Կոստանդնուպօլիս առ պատրիարքն և առ բազում ընկերս իւր՝ առ կրօնաւորս և առ աշխարհականս, հերձուած մի որ չար էր քան զՆեստորին և զայլոց չարափառացն առաջնոց. զի ասէին թէ Քրիստոս դիւօք և կախարդութեամբ հնազանդեցոյց զաշխարհս. և յոլովք անկան ՚ի նոսա և եղեն դիւապաշտք: Եւ իմացեալ զայս Թագաւորին՝ սպան ըզբազումս, և ոչ բառնայր աղանդն այն, մինչև եհաս յաւուրս մեր նոցին չարիքն ՚ի նոյն Կոստանդնուպօլիս:

Իսկ Ջօսլինն յորժամ լուաւ զմահն Զանգէ, արար ժողով և եկն յՈւռհա, և էառ զնա ՚ի գիշերի և մտան ՚ի ներքս. և լուեալ զայն Թուրքաց՝ ձայն ետուն միմեանց և ժողովեցան ՚ի վերայ Ուռհայոյ, և զարհուրեցաւ Ֆռանգն և անգիտացան անգիտութիւն Ուռհայոյ կորստեան իսպառ. և հանին բռնութեամբ զբազմութիւն քաղաքին անցուցանել զնոսա յայնկոյս գետոյն Եփրատայ, և իսպառ ջնջել ետուն զնոսա Թուրքաց, որ ասեն զթիւ սպանելոցն երեսուն հազարաց,

---

դեայ և ոչ միւս թարգմանութիւնն գնէ զանուննս. Գրիգոր երէց շարայարողն Մատթէոսի (գ. 257) ասէ՝ ՚ի կորճէն իւրմէ սպանեալ եղեւ ՚ի գիշերի:

եւ զգերելոցն վեշտասան հազար։ Եւ եղն այսպիսի կատարած Ուռհայոյ, զոր յայլոց պատմագրաց ուսանիս զբովանդակն(1)։ Բայց թէ զիա՞րդ և յումէ՞ շինեցաւ զառաջինն Ուռհա և անուանեցաւ, ասասցուք։

Զկնի ջրհեղեղին Նեբրովթ թագաւորն շինեաց զնա և անուանեաց Ուռհաւի, ուռն՝ գիւղ կոչի, և հայ՝ Քաղդէացւոց, որ է գիւղ Քաղդէացւոց. որպէս և Մելքիսեդեկ շինեաց քաղաք ՚ի Պաղեստին և կոչեաց զանուն նորա Ուրշլէմ, որ թարգմանի Գիւղ խաղաղութեան, և մեք Երուսաղէմ ասեմք։ Եւ շինուածն Նեբրովթի տեւեաց յոլով ժամանակս. և ապա՝ թէ Սենեքերիմ թագաւորն Աթուրայւոց քակեաց զնա և մնաց աւերակ մինչեւ յաւուրս Աղեքսանդրի Մակեդոնացւոց. և յորժամ անցանէր ընդ նա Աղեքսանդր, հաճեցաւ ընդ տեղւոյն վայելչութիւնն և ասաց ընդ Սելեւկոս. “Շինեա զաս քաղաք։” Որ և զկնի մահուանն Աղեքսանդրու շինեաց զնա Սելեւկոս, և կոչեաց զնա Եդեսիա, որ թարգմանի Մակեդոնացւոց լեզուովն [illegible] զաս։ Զի Աղեքսանդր ասաց, թէ «Սիրեմ զսա. շինեա զդա քաղաք։» Եւ Յոյնք ՚ի գիրս ժամանակաց իւրեանց անուանեն զսա՝ Սօրատու Մակեդոնիոս, որ է՝ Ասորւոյ Մակեդոնիա. և թիւն Ասորւոց ՚ի նմանէ սկսաւ։ Եւ զհետ եւթանասուն ամի (1) Աբգար Թագաւոր որդի Արշամայ նորոգեաց զնա։ Եւ զկնի Աբգարու և որդւոյ նորա եղեւ ընդ Հռոմօք (Հռոմայեցւովք) ՚ի կռապաշտութեան նոցա, որ տիրեցին նմա երեք հարիւր ամ։ Եւ նահատակք որ ՚ի նըմանէ եղեն՝ Շմոնի, Կուրի, Ապիպ (2), Կոզմա, Դամիանէ, և այլք բազումք ընդ նոսա։ Եւ առ Կոստանդիանոսիւ բազմացաւ ՚ի նմա վանորայք և քրիստոնեայք, և Յուլիանոս ամպարիշտն չկարաց հնազանդեցուցանել զնա և ոչ Վաղէս հերետիկոս, և մնաց խաղաղութեամբ մինչեւ ՚ի Մարկիանոս, որ նեղեաց զնա վասն ուղղափառութեանն. և եղեւ ընդ ձեռամբ Տաճկաց յՈւմար թագաւորէն մինչեւ յելանելն Թուրքաց՝ չորս հարիւր ամ։ Եւ յաւուրս Տաճկաց անկաւ պարիսպ նորա՝ շինեալն ՚ի Սելեւկոսէ (3)։

---

(1) Ապուլ Փարաճ ՚ի Քրոնիկոնին իւրում ասորական պատմէ ընդարձակ, եւս և զկործանումն վերջին որ եղեւ յամի 1147։ Տես և ՚ի Գրիգոր երէց շարայարողն Մատթէոսի Ուռհայեցւոյ, (Գ. 258), և ՚ի Դամբանական Ճառն Բարսեղ վարդապետի, որ խոստովանահայր էր Բաղդուենի իշխանին Քեսնոյ։

---

(1) Ի մահուանէ Աղեքսանդրի մինչեւ ցամ Տեառն 17, յորում շինեաց Աբգար զԵդեսիա, լինին ամք 343, և ոչ եւթանասուն։

(2) Այն է Սամոնաս, Գուրիաս և Աբիբ սարկաւագ եդեսացիք, զորոց զվկայաբանութիւնն տես ՚ի Վարս սրբոց, յեր. 836։

(3) Չէ յայտ թէ յորմէ առեալ Մատթէոս Ուռհայեցի

Ի թուին Սորուոց ՌՆԾԹ (1459) և Հայոցն ՇՁԶ (586) եկն Պարոն Թորոս զկնի մահուան հօրն իւրոյ Լեւոնի 'ի Կոստանդինուպօլսէ յերկիրն Կիլիկեցւոց, և չոգաւ առ տէր Սթանոս Մետրապօլիտն Սորուոց՝ հետեւակ, և ետ նմա զիւր ձին և երկոտասան այր յաշակերտացն իւրոց, և ած զնա յԱմուտայն՝ (1) որ կայր ընդ ձեռամբ նորա՝ 'ի գիշերի. և վաղիւն տեսին զնշանակ նորա և ծանեան թէ ողորմութիւնն Աստուծոյ եհաս 'ի վերայ քրիստոնէից, և ուրախացան յուրախութիւն մեծ: Եւ անտուստ ընդարձակեցաւ և էառ զբազում տեղիս, և անկաւ ահ նորա 'ի վերայ Թուրքաց և Յունաց, և ել համբաւ զնմանէ ընդ ամենայն աշխարհ (2): Եւ ասեն թէ՝ երկոտասան ձիաւորօք երթայր նա 'ի ժամանակին յայնմիկ յԱնապան

տաէ 'ի սկիզբն պատմութեան իւրոյ, եթէ “Տիգրան արքայ Հայոց կանգնեաց զհռչակաւոր մայրաքաղաքն Ուռհայ”. Թուի ամենայն հաւանութեամբ՝ եթէ անզգուշութեամբ գրեալ է Տիգրան փոխանակ գրելոյ Աբգար:

(1) Ամուտա է բերդ յերկրին Կիլիկեցւոց՝ մօտ 'ի Վահկայ, 'ի մէջ Անարզաբայ և Մամեստիոյ (Մըսիս):

(2) Այս Թորոս Բ, իշխան Կիլիկիոյ, էր որդի Լեւոնի Ա. որ ձերբակալ լեալ 'ի կայսերէն Յունաց, ածաւ 'ի Կոստանդինուպօլիս յամի Տեառն 1137: Թորոս Բ 'ի դարձին իւրում զօրացաւ յիշխանութեանն՝ ընդարձակեալ զերկիր տէրութեան իւրոյ: Գրիգոր Երէց, Գ. 263—265: —Վարդան, յեր. 164:— Սիրակոս, յեր. 61: —Սմբատ, յեր. 95:— Վահրամ:

առնուլ կին զդուստր Ջօսլինին (Ճօսլէն), և հանդիպեցաւ նմա հեծեալ բազում Թուրքաց, որ գերեալ էին զաշխարհն և դարձեալ. և Մասուծոլ զօրացեալն այն եհար զնոսա և կոտորեաց երեք հազար անձինս, և գողացին ՚ի նմանէ շրջակայքն և թշնամիքն ամենայն. և առեալ անուն քաջութեան դարձաւ, և առ զՆաւարզա. և ապա եղև ամենայն երկիրն առ սակաւ սակաւ ՚ի ձեռս նորա։

Ի նոյն ժամանակս գնաց Ջօսլինն ՚ի վանքըն Մոր-Բարսամաւ, և ելին ընդ առաջ նորա խաչիւք, և տարան զնա յեկեղեցին. և նա էառ զամրոց նորա և կացոյց ՚ի նա զօրք, և ինքն ել ՚ի Թլպաշարն։ Եւ ՚ի նոյն ամի անկաւ ՚ի ձեռս Թուրքաց ընդ վայր և ընդ ոչ ինչ. զի ասեն թէ՝ ելաւ յորս և հեծեալն ցրուեցաւ ՚ի նմանէ. և ձին եղարկ զնա ընդ ծառ և անկաւ և կորոյս զխելսն. և գտան զնա երկու Թուրքք և տարան զնա ՚ի Հալպ, և ծախեցին զնա Հրէի մի՝ անծանօթ, և յետոյ գիտացեալ տարան առ Նորադինն⁽¹⁾, և եդեալ զնա ՚ի բանտի էառ զամենայն աշխարհն ՚ի նմանէ՝ զԱզազն, զԹլպաշարն, զԲիրըն, զՌապան, զՄարաշ, զԲեհեսնի, զՀարանմուր (Հիսն–մանսուր), զՍամուսատ, զԿարկառ, զԿաղթայն և զայլսն, և մնաց միայն Հռոմկլայն ուր կայր կինն նորա դստերօքն, և

---

(1) Գրիգոր երէց. Գ. 259.

նախախնամութեամբն Աստուծոյ ետ զնա տէր Գրիգորի Հայոց կաթողիկոսին, և եղեւ աթոռ նոցա յաւիտեան։

Ի նոյն ամի յառաջ քան զհամբարձումն Տեառն միով աւուրբ, եղեւ անձրեւ ՚ի Պաղեստինէ և լինէր ՚ի նմա կաթլիւք արեան. և ՚ի Մայիս ամսոյ յառաջ ցօղ առաւօտուն Երուսաղէմ լինէր ՚ի գոյն արեան, առ ՚ի նշանակելոյ զարիւնն քրիստոնէից որ հեղլոց էր Երուսաղէմ ՚ի յառնուլն զնա։ Եւ յամառնային յեղանակն եկն ձիւն կարմիր, և իջաւ յերկիր իբրեւ երկու մատն։

Ի թուին Ասորւոց ՌՆԿԴ (1464), և ՚ի Հայոց թուին ՇՂԱ (591), ՚ի զարգանալ թագաւորին Երուսաղէմի Պաղտնին, կամեցաւ հանել զմայրն իւր ՚ի հոգալոյ զթագաւորութիւնն. և եղեն ոմանք ՚ի զօրացն ընդ մօրն և մտին ՚ի բուրգն Դաւթի և ամրացան, և կռուէին ընդ բուրգն. և մայրն խօսեցաւ անտի ՚ի դուրս ընդ թագաւորին, և խղճաց ՚ի սիրտն և երդուաւ մօրն և ետ զԵրուսաղէմ ՚ի հրամանս մօրն. և ինքն առեալ զզօրսն գնաց ՚ի վերայ Նուրադնի փղշտացւոց, և փլոյց մասն ինչ ՚ի պարսպէն. և եկին ՚ի պատառուածն յայն քան հազար Տաճիկք հագած, և ասէին ընդ միմեանս. "Այս քաղաք է գլուխ Տաճկաց, և սովաւ զօրացաւ Մահմետ. պինդ կացցուք ՚ի սմա և մեռ ցուք, և բաց 'ի սմանէ զլոյս մի տեսցուք։» Եւ չորս հարիւր Փռանգ դիմեցին 'ի վերայ քսան հազարացն և սպանան 'ի նոցանէ ամենեքեան. և տրտմեցաւ յոյժ Թագաւորն և զօրք իւր, և զողջ գիշերն ջանային Տաճիկքն չինել զփլած պարսպին և Սիր Ռընաղդն⁽¹⁾ մեծ իշխան Թագաւորին, ջան 'ի վերայ եղեալ ոչ ետ թոյլ չինել նոցա։ Եւ 'ի լուսանալն առաւօտուն Թագաւորն Եւրուսաղէմի առ զխաչն 'ի ձեռն և մն՛ա գնացեալ՝ ձգեաց զնա 'ի մէջ քաղաքին և ասաց. «Ահա, որ քրիստոնեայ էք ու հաւատ ունիք, խնդրեցէք զնշանն Քրիստոսի.» և փարեցան քրիստոնեայքն որպէս հրով, և դիմեցին յամենայն կողմանց և մտին 'ի քաղաքն, և կոտորեցին 'ի նմա վեշտասան հազար անձինըս, և առին գերի բազում, և այլքն մըտեալ 'ի նաւ փախեան յԵգիպտոս։ Իսկ Օ Ռընաղոն որ եցոյց մեծ քաջութիւն ընդդէմ Տաճկաց, իշխանացուցին 'ի վերայ Անտիոքու, և արարին գլուխ զօրաց, և ետուն նմա զկինն Պոռուեայ (Ռեմոնտ տը Բոադիէ) 'ի կնութիւն։

Յայսմ ժամանակի մեծ իշխանաց իշխանն Թորոս (Բ) որդի Լեւոնի որդւոյ Կոստանդեայ՝ որդւոյ Թագաւորազինն Ռուբինեայ,

---

(1) Այն է Ռենալտոյ կամ Ռընոյ տը Շադիյեոն, որ կայր 'ի ծառայութեան Ռեմոնդայ իշխանին Անտիոքայ։

եւ յերկիրն Կապադովկացւոց, եւ դարձաւ անուանի յաղթութեամբ ։

Իսկ Մասուտ սուլտանն որ էր յորդւոցն Խաքանայ արքային Թուրքաց, եւ ընդ դուստր իւր Նուր ասլանայ Դանիշմանեանց. եւ արարեալ միաբանութիւն խորհեցան գնալ ՚ի Կիլիկիա. եւ յորժամ գնացին մերձեցան յերկիրն, եւ ահա փակեալ ամրացեալ էր եղերօք սահմանացն, եւ դարձան մեծ ամօթով ։ Եւ Թորոսն մեծ առաւել զօրացեալ էառ զմնացեալ դղեակսն ՚ի ձեռանէ Յունաց ՚ի յերկիրն Կիլիկեցւոց ։ Եւ լուեալ զայս Թագաւորն Յունաց (Մանուէլ) եւ բարկացաւ ՚ի վերայ Պարոն Թորոսի եւ առաքեաց զԱնդրոնիկոս զօրագլուխն մեծ ամբոխիւ ՚ի Կիլիկիա. եւ ել ընդդէմ նորա Պարոն Թորոս, եւ պատերազմեցան ընդ միմեանս առ ընթեր Տարսոնի, եւ յաղթեցան Յոյնք եւ անկաւ ՚ի նոցանէ երեք հազար անձինք անուանիք, եւ մնացեալքն փախեան նաւուք եւ գնացին ։ Եւ էառ զբանակն եւ զծանրոց նոցա մեծն Թորոս, եւ ուրախ եղեն գոհանալով զՏեառնէ. եւ փառաւորէր ընդ ոսկւոյ զմեծամեծս Յունաց (1) ։

---

(1) Ըստ Գրիգորի երիցու ՚ի գիրս Մատթէոսի Ուռհայեցւոց. Գ. 263) Անդրոնիկոս էր իշխան Սսոյ և Մոփսայ կարգեալ ՚ի կայսերէն Յունաց, այր ամբարտաւան և լի նախանձու ընդդէմ Հայոց, այլ ՚ի գալ նորա ՚ի Կիլիկիա, Թորոս

Ի Թուին Ասորւոց ՌՆԿԵ (1465) և Հայոցըն ՇՂԲ (592) որդիքն Զանգեայ որ ՚ի Մօսլ, Մեփարղինն և Խուզբադինն՝ որ ուխտեալ էին խալիփային, ստեցին ուխտին և ձեռն տուին ամիրային որ նստէր ՚ի Թկրիթ ապստամբութեամբ. և բարկացեալ խալիփային եկն ՚ի վերայ Մօսլայ և ոչ կարաց առնուլ զնա, և դարձաւ ՚ի վերայ Թակրիթայ, և ետ զնա յաւար զօրաց իւրոց, և առին ըզնա և քակեցին ՚ի հիմանց, և յետոյ տուին զբերդն ՚ի Հասամադինն (Հէմս–էտտին) որ էր այր բարի և սիրող քրիստոնէից, և վաղվաղակի շինեաց զքաղաքն և զեկեղեցիսն, և կայր ՚ի հնազանդութիւն խալիփային ։

Ցայսմ ժամանակի Նորադինն՝ տէրն Հալպայ չոգաւ ՚ի վերայ Դամասկոսի և առ ըզնա երդմամբ և կորոյս զհայրենեօք իշխանս նորա, և քակեալ զաղիւսաշէն պարիսպն և շինեաց քարամբք ամրագունիւք ։ Եւ ՚ի նոյն ամի մեռաւ Դամուրտաշն՝ տէրն Մերտնայ, որ էր յԱրթուխեաց անտի, այր բարի և սիրող քրիստոնէից և շինող բաղում եկեղեցեաց՝ վասն այսու պատճառի ։ Հիւանդացաւ սա

տիրեալ էր արդէն Մսիսայ, և առ խորտակել զեղջիւր ամբարտաւանութեան Անդրոնիկեայ, յարձակեալ ՚ի դուռս ՚ի քաղաքէն Մսիսայ, ետ քաջութեամբ պատերազմ ընդ նմա և խորտակեաց զնոսա իսպառ ՚ի վրէժ մահուան հօր իւրոյ Լեւոնի Ա ։

հիւանդութիւն մահու, մինչեւ բժիշկքն յուսահատեցան և թողին. և նա յուսացաւ յաղօթս քրիստոնէից և առաքեաց ի վանքն Մառ Աբայի (1), և բերին զաջ նորա: Եւ յորժամ մտին ի տունն, տեսանէր այր մի հրեղէն, որ գնաց կալաւ զձեռանէ նորա և ասաց. «Ո՞վ ես տէր.» և նա ասէ. «Քրիստոնեայքն առաքեցին զիս՝ զի մի մեռցիս:» Եւ յարոյց զնա, և նստաւ և փառաւորեաց զԱստուած և ողջացաւ. և եղեւ մեծ մխիթարութիւն քրիստոնէից ընդ իշխանութբ նորա, ի Մերտին և ի Նսեբին և ի Մուփարկին և յԽալայն և ի Տարս, և յայլ քաղաքս տեղիս: Եւ նոյնպէս պատուիրեաց որդւոց իւրոց յետ մահուան իւրոյ զնոյն խնամ ունել ի վերայ քրիստոնէից: Եւ ետ զՄերտինն և զՄուփարկինն ի Նաջմադինն (Նէճմ–էտտին) յաւագ որդին, և զԽանի քաղաք ետ ի Քամալադինն (Քէմալ–էտտին) ի միւս որդին, և զՏարս ի Շամսադինն (Շէմս–էտտին) ի կրսեր որդին:

Յայսմ ժամանակի թագաւորն Յունաց (Մանուէլ) ըստ սովորութեան բարուց իւրեանց որ ունէին առ ամենայն քրիստոնեայք, առաքեաց առ Մասուտ սուլտանն և աղաչեաց զնա մեծաւ պատարագօք զի մոցէ յերկիրն Կիլիկեցւոց և աւերեսցէ զնա։ Եւ նա ժողովեալ զամենայն զօրսն Կապադովկիոյ և զՄիջագետաց, գնաց ամենայն պատրաստութեամբ և եմուտ յերկիրն Հայոց։ Եւ նոքա նախագէտ եղեալ յառաջագոյն՝ ամրացեալ և զաղթեալ էին 'ի լերինս և յամուր տեղիսն։ Եւ սուլտանն գնաց իջաւ 'ի վերայ Թլին Համդնոյ (1), և եհար զնոսա Տէր Աստուածն քրիստոնէից՝ ոչ հրեղէն հրեշտակօք որպէս զզօրսն Սենեքարիմայ, և ոչ 'ի ձեռն կնոջ որպէս զՀողոփեռնէս, այլ ակար կենդանեօք՝ մժղկի և ճանճոյ, այնպիսի՝ որ ասէին բազումք, թէ այն սաստիկ բարկութիւն է քան զհարուածս խստասրտին փարաւոնի. և եղեւ սպառուհան 'ի մարդ և յանասուն։ Եւ սկսան փախչել. և իջին զօրքն Հայոց ամրացեալքն 'ի լերինս, և կոտորեցին զբազումս 'ի նոցանէ, և առին աւար զմեծութիւն անօրինացն, և լցին զտունս իւրեանց գոհանալով և փառաւորելով զԱստուած։ Եւ եղ վաղվաղակի պարոն Թորոս ընդ միջոցս լերանցն 'ի Խուստանէան (2), և եհար զԹուրքն որ բնակեալ էին անդ. և դարձաւ բազում գերեօք և աւարաւ և անուանի փառօք յամենայն մարդկանէ (1)։ Իսկ Մասուդ սուլտանն գնացեալ մազապուրծ յորդւոցն Հայոց մեծ ամօթով, և հասեալ 'ի Կօնն (Իկոնիա) կրկին հարեալ 'ի Տեառնէ մեռաւ (2)։

---

(1) Մառ Աբայ. խմ՝ Մար Իբաս. իսկ Մառ կամ Մար նշանակէ ի լեզու Ասորւոց՝ տէր:

---

(1) Թլին Համդնոյ էր տեղի ամրութեան 'ի դաշտին Անարզաբայ, որ 'ի Կիլիկիա։

(2) Խուստանէք էր ամրոց 'ի սահմանս երկրին Սեբաստիոյ ընդ արեւմտակողմն հարաւոյ։

Ի թուին Հոռոմոց ՌՆԿԶ (1466), և Հայոցն ՇՂԳ (593), թագաւորեաց որդին Մասուդին՝ Կլիճ Ասլանն (Բ). և էին նորա երկու եղբարք, զմինն խեղդել ետ 'ի ծածուկ, և միւսն փախեաւ յեզր ծովուն, և ամրացաւ 'ի բերդսն՝ զոր տուեալ էր նմա հայրն իւր նախ քան զմահն իւր. և էր անուն նորա Շահանշահ, և նա էր փեսայ տանն Դանիշմանայ, և են սոքա ազգ մի, և վասն այնորիկ ձեռն ետ նմա Եաղուբ ասլան հօրեղբօրորդին իւր, և աւերէր զերկիրն Կլիճ Ասլանայ։ Իսկ լուեալ զայս Նորըդինն (Նուր-էտտին) տէրն Հալպայ և Դամասկոսի, եկն և էառ զՓարզման (3) և զԱնթափ։ Իսկ առաքեաց Եաղուբ ասլան առ Նորադինն և առ Խար ասլան (Խարա-ասլան) տէրն Խարթբերդոյ, զի առցեն զամենայն երկիր Կլիճ Ասլանայ, որ կայ 'ի սահմանս նոցա 'ի Միջագետս և յայնկոյս Եփրատ գետոյ. որ և ընդ խորձեռն 'ի յառնուլ զերկիրն և բաժանել, կռուեցան ընդ միմեանս և Թողին ։

---

(1) Վահրամ, յեր. 208։

(2) Գրիգոր երէց (գ. 265). — Սմբատ, յեր. 97։ — Վահրամ։

(3) Փարզման էր քաղաք 'ի փոքրն Հայս 'ի սահմանս Եփրատացւոց։

Իսկ զերկիրն Եգիպտոսի Տաճիկք (Արաբացիք) ունէին ընդ իւրեանց իշխանութեամբ 'ի ժամանակաց անտի Մահմետականացն որ տիրեցին նմա, և ոչ կարացին մուտ գտանել 'ի նա Թուրքաց Թագաւորքն. Եւ լինէր նոցա խալիփայ յազգէն Ալեայ, որպէս այն որ նստէր 'ի Բաղտատ յազգէն Մահմետի ։

Ե

Թէ ո՞յք են, կամ ուստի՞ են Աբդլմումնիքն որք կան յարեւմուտս ։

ԽԱԼԻՓԱՅՔ որ կային յԵգիպտոս, (էին) յազգէն Ալեայ մինչեւ 'ի ժամանակս Նորադինին, որ և այս բարձաւ 'ի նմանէ ։ Ի կարգէ անտի խալիփայիցն ասէին ումեմն Աբդլա, և էին նորա երկու որդիք, որոց անուանքն Աբդլմինի և Ալուբ, որք անկան պոռնկութեամբ ընդ կին հօր իւրեանց. և իմացեալ հօրն՝ կամեցաւ սպանանել զնոսա(1) ։

(1) Միւս Թարգմանութիւնն փոքր մի այլազգ պատմէ. չորրորդ խալիփայն ասէ, Եգիպտոսի որ էր յազգէն Ալեայ, ունէր երիս որդիս, և 'ի մեռանել իւրում աւագն առ զխալիփայութիւնն և խորհէր սպանանել զերկոսին եղբարս իւր

Եւ նոքա իմացան և փախեան՝ առեալ 'ի տանէ հօրն երկու գիրք , անուանք նոցա Բեմիա և Սեմիա ։ Բեմիան ուսուցանէր նիւթս խառնուածոյ , որով կարողութիւն իցէ առնել ոսկի և արծաթ , ակն և մարգարիտ ։ Եւ Սեմիայն ուսուցանէր հրաշագործութիւնս և տլսմ, որով հմայեն մարդիկ ։ Առեալ նոցա զգիրեանն գնացին յարեւմուտս կոյս 'ի սահմանս Ափրիկոյ , և անցին անդր քան զնա , և գտին աշխարհ մի բարբարոսոյ այլալեզուաց կորձէից ազանց Փռանգաց , որք էին առանց ուսման և դպրութեան և օրինաց , և աղքատք . և յարեցան 'ի նոսա և չինեցին տունս յամրագոյն տեղւոջ 'ի քարաժայռս ։ Եւ արարեալ զարուեստն 'ի ծածուկ և ստանային գանձս և վաճառէին առատապէս ։ Եւ ունէին ընդ իւրեանս ծառայս բազումս , ստացան և 'ի նոցանէ յոլովութիւն ծառայից ։ Եւ հեզութբ յարեցուցանէին յիւրեանս զբնակիչս տեղւոյն առատաձեռն լինելով նոցա . և առին 'ի նոցանէ կանայս և ստացան որդիս , և ուսուցանէին դպրութիւնս և ուսումն աստեղագիտութեան և հնարից ։ Եւ չինեցին բերդըս և քաղաքս , և մեծացան . և ապա սկը-

որոց անուանքն էին Աբդլա և Մամունիք , և խնդրեալ սոցա զխորհս. րդ եղբօր իւրեանց՝ փախեան յարեւմուտս , և յանուն իւրեանց կոչեցաւ ազգն Աբդլմունիք ։

սան քարոզել նոցա զուսումն և զպաշտօն իւրեանց, և հաւանեցուցանէին աղանդով և ալամօքն զոր առնէին. և ուսուցանէին նոցա զլեզուս և զգիրս իւրեանց։ Եւ մեծացան և արարին զօրս և զօրացան, և առին քաղաքս բազումս. մինչեւ առաւել բազմացան, և գնացին առին զՍիկիլիա կղզի, և աւրեցին բազում աշխարհաց, և արկին 'ի նեղութիւն զՀռոմայեցիս յոյժ։ Եւ ասեն թէ՝ այսու պատճառաւ առին Ալամանքն զկայսերական պատիւն 'ի Փրանկաց. զի նեղեալ 'ի Տաճկաց (յԱրաբացւոց) Հռոմ, առաքեցին առ նոսա՝ զի եկեսցեն փրկեսցեն զնոսա 'ի Տաճկացն։ Նոյնպէս և Փրանկէսքն առաքեցին աղաչանս, զի թէ տայէ նոցա Տէր յաղթութիւն հալածել զայլազգիսն, առցեն զկայսերական պատիւն. և երդուան նոցա։ Եւ նոքա յուսացեալ յԱստուած՝ գնացին 'ի վերայ . . . նացն և կոտորեցին զնոսա և հալածականս արարին զմնացեալսն, և առին զկայսերութիւն Ալամանքն։ Իսկ Տաճիկքն, զի տիրեալ էին բազում աշխարհաց և բերդից, հաստատեցին իւրեանց սուլտան և խալիփայ, և կան մինչեւ ցայսօր ժամանակի։

Ի թուին Ասորւոց ՌՆԿԶ (1466), և Հայոց ՇՂԳ (593) մեռաւ խալիփայն Եգիպտոսի, և իշխանն (փոխարքայն) Եգիպտոսի կամեցաւ ինքն նստիլ խալիֆայ, և նա չէր յազգէն Ալեայ, և վասն այսորիկ ոչ կամէին աշխարհն զնա, այլ զԱբաս ոմն ընտրեցին, որ էր որդի մեռեալ խալիֆային. և Աբասն յորժամ գիտաց թէ իշխանն ոչ կամի ի դնել զնա խալիֆա, էառ զամենայն զանձս տանն խալիֆայութեան, և եհան երեք հազար ծառայս ազգաւ հայս, և կազմեալ զնոսա զինուք և ել ՚ի գիշերի և առ ՚ի Պրոյեանցն ընդխուր առաջնորդ ձեռնադրեցին զի նստցէ առ Նորադինն ՚ի Դմիշկ։ Եւ վաղվաղակի իմացեալ իշխանն Եգիպտոսի, պնդեցաւ զհետ նորա զօրօք, և դարձան զօրքն հայոց ազատեալ ծառայքն՝ և հարին զԵգիպտացիսն հարուածս մեծամեծս, և մնացեալքն փախեան։ Եւ եկեալ նոցա ՚ի Պաղեստինէ, չոգաւ ոմն ՚ի Պալտեանցն յԵրուսաղէմ, և ազդ արար Ֆռանգացն, նոյնպէս և յ[illegible]. և ժողովեցան և եկին ընդդէմ նոցա։ Եւ տեսեալ Աբասայն՝ կոչեաց զօրսն հայոց և ասէ. “Ահա որդեք իմ, հարէք զնոսա նման Եգիպտացւոցն, և մեծացուցից զձեզ յոյժ յոյժ.” Եւ կազմեցան նոքա. իսկ յորժամ տեսին զնշան խաչին առաջի զօրացն Ֆռանգաց, յարտասուս հարան, և ՚ի վայր իջեալ ՚ի ձիոցն որպէս կարօտեալք՝ փափաքանօք գնացեալ ընդառաջ խաչին երկրպագեցին։ Եւ Ֆռանգն էառ դիւրաւ զանչափութիւն զանձուն, և ըմբռնեցին զՆըսան և ծախեցին զնա իշխանին Եգիպտոսի ընդ բազում ոսկւոյ, և նա գնեալ զնա տարաւ կախեաց զփայտէ. և զզօրսն Հայոց Թողին ազատս գնալ ուր և կամիցին և այլ ինչ ոչ ետուն նոցա բայց 'ի հանդերձիցն զոր ունէին, ամարդիք եղեալ աներախտիս նոցա զոր արարին քրիստոնէիցն առ քրիստոնեայքն դժնեալք, և իւրեանց կամօքն լցին զնոսա մեծութեամբ տուգանածոյ (1) :

Յայսմ ժամանակի Նուրադին (2), որ կոչեցաւ Նըլնձ (իշխան), վիճէր ընդ պարոն Թորոսի վասն բերդին որ կայր 'ի ս—նօ—ն ('ի սահմանս) Անկիլէյ, զոր առեալ էին 'ի Ֆրերացն Յոյնք, և պարոն Թորոս առեալ էր 'ի Յունաց. և ասէր Մնաւղոն թէ՝ «Դարձո առ Փրերան՝ զի վասն քրիստոնէից 'ի կռուել են, զառաջագոյն կալեալ բերդն նոցա.» և վասն այսորիկ կռուեցան 'ի Սկընդրուն(1), և անկան յերկոցունց կողմանցն յոլովք, և դարձան 'ի միմեանց: Բայց յետոյ հաւանեցաւ պարոն Թորոս և ետ նոցա իւրով կամօք, և նոքա երդուեցան նոցա յամենայն կարիս մահու չափ ջանացեալ:

---

(1) Պատմագիրք Արաբացւոց այլազգ պատմեն զպարագայս արարքն : Արդ ոչ որդի խալիֆայի, այլ էր որդի կընոջ Ատէլայ փոխարքայի, որոյ հրամանն ընկալեալ խաղալ ընդդէմ Ֆռանգաց որք անհանգիստ առնէին զեգիպտացիսն մերձ յԱսկալոն, խորհեցաւ 'ի մտի առնուլ 'ի բաժին զիշխանութիւն փոխարքայութեանն. վասն որոյ սպանեալ զԱտէլ յաջորդեաց զնա : Այլ այսու յինքն ձգեաց զատելութիւն և զարտմտութիւն բովանդակ երկրին. և երկուցեալ 'ի վըրէժխնդրութենէ, բարձեալ զամենայն գանձս արքութեանն խոյս ետ յԵգիպտոսէ, թողեալ զխալիֆայն 'ի ձեռս սիկարեանց. Իսկ Աբաս ի փախչել իւրում անկաւ 'ի ձեռս Ֆռանգաց և սպանաւ մահուամբ. և զորդին նորա յանձնեցին Տէլայեայ փոխարքայի, որ կախեաց զնա զփայտէ : Եւ ինքն Տէլայի որ նա ինքն է Մէլիք—Սալէհ իշխանացաւ փոխանակ Ֆէյզ—Պիլլահայ խալիֆային որ սպանաւ 'ի ձեռաց սիկարեանց:

(2) Որդին որ Զանգիեան իշխան Անտիոքայ :

Ի թուին Ասորւոց ՌՆԿԸ (1468), և Հայոց ՇՂԵ (595), ել Ստեփանէ եղբայրն պարոն Թորոսի յերկիրն Մարաշայ, և 'ի գիշերի եմոյծ զզօրսն 'ի Մարաշ 'ի տունս քրիստոնէիցն կամօք քահանայի միոյ, և ընդ լուսանալն առ զքաղաքն և կոտորեաց զԹուրքն. և հպարտացեալ քրիստոնեայքն յայտնապէս ճայլին ընդ կանայս Թուրքացն. և բարկացաւ Տէր և ոչ ետ զբերդն 'ի ձեռս նոցա, այլ այրեցին զքաղաքն և առին զՀայերն որ անդ՝ և մտին յերկիրն: Բայց ամիրայն Մարաշայ ըմբռնեաց զերէցն որ եմոյծ զզօրսն գաղտապէս 'ի քաղաքն, և կենդանւոյն քերթեաց զնա և այրեաց հրով(2):

---

(1) Այն է Աղէքսանդրիա քաղաքն Ասորւոց, ծովեզերեայ, և այժմ կոչի Իսքէնտէրուն:

(2) Գրիգոր Երէց (Գ. 268) զայս դէպս առնէ լեալ 'ի Գեհեանի: Իսկ Վահրամ համաձայն Միխայելի՝ Գերմանիկոյ, ասէ, տիրեաց Թորոս:

Ի սոյն ամի Ռնաղտն, տէրն Անտաքոյ, խորհրդակցութեամբ պարոն Թորոսի՝ զօրօք խռամբք գնաց (1) ՚ի վերայ Կիպրոս կղզոյ վասն երկու պատճառաց. մի՝ վասն Թագաւորին Յունաց քինու, որ յորդորէր զայլազգիսն ՚ի կորուստ Հայոց, և միւսն՝ վասն Յունացն որ ՚ի Կիպրոս կոտորէին զՀայն և զՖռանգն։ Վասն որոյ գնացեալ Ռնաղտն գերեաց զամենայն կղզին և էած զմարդ և զանասուն յեզր ծովուն, և թուեաց զնոսա և կտրեաց քիթս ամենեցունց, և եթող զնոսա և էած ընդ ինքեան զպատանդս՝ եպիսկոպոսս և աբեղայս քահանայս և մեծատունս, մինչև բերցեն զկտրեալ գինն։ Իսկ Ստեփանէ կալաւ Թուրք մի ՚ի Բերդուսէն (2) և խնդրեաց ըզբերդն, և նա ասաց. «Թէ երդնուս մեզ որ թողուս զմեզ կենդանի, մեք տամք զԲերդուսն.» և երդուաւ ՚ի խաչն և յԱւետարանն զի առաքեսցէ զնոսա խաղաղութեամբ ՚ի Հալպ. և ետուն նախ զԲերդուսն, և եհան զնոսա գնալ խաղաղութեամբ։ Եւ ոմանք ՚ի տարողացն լուան զի սպառնային Թուրքերն թէ՝ “Դարձեալ զօրանամք եւ գամք աւերեմք զաշխարհս զայս։” Եւ պատմեցաւ պարոն Ստեփանեայ. եւ եհարց պարոն Ստեփանէ զեկեղեցականսն, եւ նոքա ասեն. “Թէ այդպէս սպառնան, անխիղճ ես դու վասն երդմանն։” Եւ առաքեաց զհետ նոցա եւ կոտորեաց զնոսա։ Եւ լուան զայս ամենայն այլազգիքն եւ դառնացան ընդդէմ քրիստոնէից, վասն որոյ եւ մեծամեծ վնասք լինէին։

---

(1) Սմբատ պատմագիր (յեր. 98) ասէ՝ եթէ Ռնաղտ ՚ի գրգռութենէ պարոն Թորոսի յարձակեցաւ ՚ի վերայ Կիպրոսի, և թէ ինքն իսկ պարոն Թորոս ընկերացաւ նմա յարշաւանսն։ — Գրիգոր Երէց (գ. 373)։

(2) Բերդուս է Բերդունք դղեակն ՚ի Կիլիկիա մերձ ամրոյն Կապանոյ։

Յայնմ ամի մեռաւ աւագ սուլտանն Խորասանայ Մասուդն, եւ ոչ ունէր որդի՝ բայց մանկիկ մի փոքրիկ փոխանորդ իւր, վասն որոյ եղեւ աթոռապահ նմա ամիրայ մի Եւտկուզ անուն, որ առ զկին սուլտանայ իւր ՚ի կնութիւն՝ զմայր տղայոյն. եւ յետ փոքր աւուրց մեռաւ տղայն, եւ մնաց սուլտանութիւնն Եւտկուզին, թերեւս լիցի որդի ՚ի նոյն կնոջէ ժառանգ սուլտանութեանն. եւ զի (Եւտկուզ) աթաբակ եդաւ զառաջինն տղայոյն, թէպէտ սուլտանացաւ, բայց մնաց անունն նոյնպէս աթաբակ. եւ վասն այսորիկ յայնմ հետէ թագաւորքն Խորասանայ եւ Նինուէի եւ Միջագետաց աթաբակ կոչին եւ ազգքն տուն Աթաբակեայ. նոյնպէս որ ՚ի Կապադովկիա լինէին թագաւորք, զի ընդ ձեռամբ Եւտկուզին մտին, Աթաբակեանք կոչին։

Ի թուին Ասորւոց ՌՆԿԹ (1469) եւ Հայոց

ՇՂԶ (596) Խլիճ՛ ասլան արար սէր ընդ Խարասլան տէրն Սեւաստոյ, և եկն յերկիրն Միջագետաց և առ զանեզին զոր յառաջագոյն կալեալ էր հայր նորա. և արար սէր ընդ պարոն Թորոս և ընդ Ստեփաննէ, և կայր խաղաղութեամբ ։

Յայսմ ամի Թագաւորն Երուսաղէմի եկին յԱնտոք, և ժողովեալ զօրս գնացին առին զՀերիմն (1) և պերեցին մինչև 'ի Հալպ և դարձան ։ Եւ յայսմ ժամանակի չմորեցան ընդ միմեանս Խլիճ՛ ասլան և Խար ասլան, և պարոն Ստեփաննէ անդադար աւերէր զաշխարհ երկոցունցն ։ Եւ եղեւ քսութիւն յոմանց առ պարոն Թորոս՝ թէ եղբայրն քո կամի ապստամբել զքեզ. և հաւատաց նոցա, և կալաւ զեղբայրն և զնդանեաց տասն ամիս. և ապա միջնորդութեամբ բազմաց դարձեալ եհան զնա 'ի բանտէն, և կային սիրով ընդ միմեանս ։

Իսկ Խլիճ՛ ասլան արար սիրելի իւր զՏանուն ամիրայն Կեսարիոյ, և եհան զնա 'ի 'ի Խարասլանայ. և նա եղեւ սկիզբն քակման տանն Դանիշմանանց (2) ։

---

(1) Հարէմ կամ Հարենկ՝ էր ամրոց յերկրին Անտիոքայւոց 'ի հիւսիսոյ և աւելի միոյ ճանապարհաւ հեռի յԱնտիոքայ ։

(2) Տանուն էր որդի Մելիք Մոհամմետայ ամիրային Մելիտինոյ. իսկ 'ի յաջորդել որդւոյն զհայրն, Խլիճ—արսլան

Ի Թուին Ասորւոց ՌՆՀ (1470) և Հայոց. ՇՂԷ (597), Տաճիկքն (Արաբացիք) որ կոչին Աբդլմուժնիք, ասպատակեցին 'ի Սպանիա, և եկին մինչեւ 'ի Սպանիա. և ելին ընդդէմ նոցա զօրքն Փռանգաց, և յերկարեաց գործ պատերազմին ։

Իսկ Թագաւորն Յունաց Մանիլն դիպող ժամ գտեալ՝ եկն ապաւինալեօք յերկիրն Կիլիկեցւոց 'ի վերայ պարոն Թորոսի. և Թորոս խոյս ետ 'ի նմանէ զօրօք իւրովք 'ի կողմն լերինն ։ Եւ Մանիլին հնազանդեցան դաշտակողմանքն. և գնաց մինչեւ յԱնտաք, և լուաւ գոյժ թէ՝ ոմն 'ի զօրապետացն կամի Թագաւորել 'ի տեղի նորա ։ Եւ փութացաւ 'ի գնալ. և արար հաշտութիւն ընդ պարոն Թորոս և ընդ Ստեփանէ, և դարձաւ (1). *և առաքեաց առ Խլիճասլան և խնդրեաց ճանապարհ, և ետ նմա ճանապարհ. այլ սակայն 'ի գնալն զբազումս կոտորեցին 'ի զօրացն՝ յայտնի և 'ի ծածուկ* (2). *և գնաց 'ի*

Բ տիրեաց Կեսարիոյ յամի 1169. *և ինքն Տանուն փախեաւ առ Մանուէլ կայսր. և այսպէս սկիզբն եղեւ անկման ազգին Տանիշմանեանց, որք տիրեցին մասին միոյ փոքուն Ասիոյ ամս* 122 ։

(1) *Վարդան յաւելու աստ (յեր.* 165), *եթէ Մանուէլ կայսր սիրով նուաճեալ զԹորոս, առեալ և զամենայն զօրս Փռանգաց՝ և գնաց 'ի վերայ Հալպայ, և անդ լուեալ զհամբաւ խռովութեան մայրաքաղաքին՝ դարձաւ յետս։ Գրիգոր երէց (Գ.* 276) ։

(2) *Գրիգոր երէց (Գ.* 274) ։

Կոստանդինուպօլիս ոչ յաջողեալ 'ի խորհուրդըս իւր զոր կամէր առնել ։ Բայց յորժամ ետես Մանիկն զպակասութիւն զօրաց իւրոց 'ի Թուրքէն, առաքեաց այլ զօրս աւերել զգաւառն Թուրքաց զոր կարասցեն. և եղեն պատերազմունք 'ի մէջ Յունաց և Թուրքաց ։ Իսկ Նորադինն իմացեալ զպատճառս նոցա, զօրաժողով լեալ 'ի վերայ գաւառացն Խլիճ ասլանայ, և առ զՊեհեսնի և զՔէսուն. և զՄարաշ և զվանէրն և զայլս բազումս ։

Ի թուին Յունաց ՌՆՀԱ (1471) և Հայոցն ՇՂԸ (598), Եղուբ ասլան (Եաղուպ—արսլան) և Նորադինն հաշտեցան ընդ Խլիճ ասլան սուլտանին, և դարձուցին զաշխարհն զոր առեալ էին 'ի նմանէ՝ առ ինքն ։ Եւ 'ի նոյն ամի զօրքն Հալպայ ըմբռնեցին զՋօսլինն զտէրն Հերմին՝ զորդի Ջօսլինին, որ մեռաւ 'ի ծառայութեան 'ի Հալպայ. և եղեւ մեծ ուրախութիւն 'ի Հալպայ, զի յոյժ նեղէր նա զերկիրն Հալպայ վասն քինու հօր իւրոյ, զոր եդին 'ի կապանս և անդէն մեռաւ ։

Եւ յետ ամի միոյ աւերեցին զՊարիշա գիւղ յերկիրն Հերմին, ուր բնակեալ էին Հայք, և կոտորեցին զնոսա և գերեցին ։

Եւ յայսմ ժամանակի ել թագաւորն Եւրուսաղէմի Պաղտինն առ սահմանօքն Դամասկոսի, և Պոոյլքն որ էին ընդ Նորադինին և բնակէին յերկիրն Փղշտացւոց, աապստամբեցին 'ի Նորադնէն և եղեն ընդ Փռանգքին, և առին զնոսա և գնացին ընդ անապատաւ յերկիրն Եգիպտոսի. և առին աւար և գերի բազում յոյժ, և եդին հարկ 'ի վերայ նոցա հարիւր վաթսուն հազար դահեկան, և դարձան յԵրուսաղէմ մեծաւ փառօք:

Յայսմ ժամանակի Թագաւորն Վրաց Գէորգի եհար զՍալտուխ ամիրայն, և կալաւ զՍալտուխն և վաճառեաց զնա. և էառ զԱնի քաղաք (1): Եւ դարձեալ ժողովեցաւ բազմութիւն Թուրքաց ընդդէմ Գէորգեայ, և կոտորեցան 'ի նմանէ հազարք հազարաց և բիւրք բիւրուց:

Ի Թուին Սարկաւագ ՌՆՀԲ (1472), և Հայոցն ՇՂԹ (599), եղեւ պատերազմ ընդ Կլիճ ասլան և ընդ Շղուբ ասլան վասն դստերն Սալտուխին, զոր կամէր կին առնուլ սուլտանն, և տուաւ նա 'ի կնութիւն տեառն Մելիքնոյ կամօք Շղուբ ասլանայ. և ժողովեցաւ 'ի վերայ նորա սուլտանն: Եւ ել ընդդէմ նորա Շղուբ ասլան և զօրացաւ ընդդէմ սուլտանին, և յաղթեաց նմա և փախոյց զնա, և էառ զբանակետղ նորա զգահոյն ոսկեղէն և զամենայն պատրաստութիւն նորա . բայց երեւեցաւ մեծահոգի, և դարձոյց անդրէն զոր ինչ առեալ էր, և խնդրեաց ՚ի նմանէ սէր և արարին խաղաղութիւն, և սիրով կային ընդ միմեանս :

---

(1) Վարդան (յեր. 165) դնէ 'ի ՈԺ Թուոյն Հայոց առնուլ Գէորգի զԱնի քաղաք 'ի Փադլուն ամիրայէն. Իսկ Սալտուխ էր փեսայ Շահի—Արմէնի Թոռին Սուքմանայ:

Ի սոյն ժամանակս ազդ եղեւ Թագաւորին Երուսաղէմի եթէ Ճիրաքո տէրն Սաքնոյ կազմեալ է նաւս ՚ի ծովուն լցեալ ռազմիկօք, և յանխնայ կոտորէ զքրիստոնեայս և զՏաճիկս . և վասն այսր պատճառի բարկացաւ ՚ի վերայ նորա և էառ զՄայիղա և հալածեաց զնա, և եկեալ նորա առ տէրն Նոսիքոյ և ետ նմա զՊաղրաս(1): Եւ նա ոչ դադարէր ՚ի չարեաց խորոց ՚ի ծովու և ՚ի ցամաքի մեծամեծ վնաս գործելով . և յորժամ լուան եւս իմացան, առին ՚ի նմանէ և զՊաղրաս . և նա գնացեալ առ Նորադինն և ուրախ արար զնա յոյժ , զի խոստացաւ առ նա դարձուցանել զամենայն ծովեզերայսն . և ետ ՚ի ձեռս նորա զզօրս իւր , և գնաց նա և եմուտ յերկիրն Փռանգաց , և սկսաւ առնել աւերումն և կոտորումն քրիստոնէից : Եւ ժողովեալ զօրացն Փռանգաց և անուամբն Քրիստոսի դիմեցին ՚ի վերայ նորա և ձերբակալ արարին զգլուխ չարեացն, և կոտորեցին զզօրս Թուրքացն , և զանօթն սատանայի (Ճերարա) տարան յԵրուսաղէմ և հրով այրեցին ։

---

(1) Պաղրաս որ և Պաղրաս , էր գղեակ մեծ յԱմանու՝ յերկրին Կիլիկիոյ :

Յաւուրս յայսմիկ Մանիլ Թագաւորն Յունաց սպան զկին իւր դեղով վասն ամլութեան նորա, և էառ արտաքոյ օրինացն կին երկրորդ զդուստր տեառն Անտիոքայ ։

Ի Թուին Ասորւոց ՌՆՀԳ (1473) և Հայոց Թուին Ո (600) մեռաւ Տուղ ասլան ամիրայն Մելտենոյ և նստաւ որդի նորա տասնամեայ ՚ի տեղի հօրն. և լուաւ Աղուբ ասլան և եկն ՚ի վերայ Մելտենոյ և պաշարեաց զնա և ոչ կարաց առնուլ, և եթող ՚ի վերայ նորա զօր և չոգաւ. և Խորասան տէրն Խարթբերդոյ առնէր բազում ընդունելութիւն փախստականացն ՚ի գաւառէն Մելտենոյ։ Յետ այնորիկ դարձաւ ՚ի բարկութենէ իւրմէ Աղուբ ասլան և արար հաշտութիւն ընդ ամիրայացեալ տղային և եթող նմա զաշխարհն Մելտենոյ, որ էր որդի եղբօր իւրոյ ։ Յայսմ ժամանակի լուաւ Կլիճ ասլան եթէ Աղուբ ասլան միաբանութեամբ բազում ամիրայից խորհեալ է ընկենուլ զնա ՚ի Թագաւորութենէ և դնել զեղբայրն նորա, երկեաւ և առաքեաց զՔրիստափոր դպրապետն իւր առ Մանիլն խնդրել ՚ի նմանէ օգնութիւն և կամք սիրոյ, զի գնասցէ առ նա ՚ի Կոստանդնուպօլիս (1) ։ Եւ ուրախ եղեւ Մանկըն, և երդուաւ նմա. և գնաց սուլտանն հազար հեծելօք առ Մանկըն 'ի Կոստանդինուպօլիս, և ընկալան զնա մեծ պատուով։ Եւ եղեւ անդ աւուրս ութսուն, և այնչափ պատուեաց զնա, զի յայնքան աւուրս յամեն օր երկու անգամ առաքէին նմա հայկերոյթ ոսկեղէն և արծաթեղէն ամանօք, և այն ամենայն մնայր սուլտանին և այլ ոչ դառնայր։ Եւ 'ի յետին օրն կերան հաց 'ի միում սեղանի և զամենայն պատրաստութիւն ետ սուլտանին։ Եւ յորժամ կամէր գնալ, ծածկեաց զհասակ նորա ոսկւով՝ կալով նորա յոտն 'ի մէջ տաճարին, և ետ նմա ըզզօրս իւր և չոգաւ և վարձեաց այլ բազում զօրս 'ի Թուրքաց։ Եւ ժողովեցան ամիրայքն ամենայն Միջագետաց զօրօք իւրեանց առ Աղուբ ասլան և եկին ընդդէմ նորա 'ի պատերազմ. և յորժամ եկին առ միմեանս, երկեան երկոքին կողմանքն 'ի բազմութենէ միմեանց, և արարին խաղաղութիւն և ցրուեցան յիւրաքանչիւր տեղիս։

---

(1) Գրիգոր երէց (գ. 282) համառօտակի յիշէ զերթն

Ի ժամանակին յայնմիկ պարոն Ստեփանէ կոչեցաւ 'ի պատիւ սիրոյ Անդրոնիկոսէ իշխանէն՝ որ էր Յոյն, և յորժամ դարձաւ երթալ 'ի տուն իւր, սպանաւ նենգութեամբ

խլիճ—Արսլանայ առ Մանուէլ կայսր 'ի Կոստանդինուպօլիս և տարաւ, ասէ, ընդ իւր զԱմիր Միրան զեղբայրն Նուր—էտտինի։

ճիքն և որ ընդ նմա էին ։ Ոմանք ասեն թէ խաշեցին 'ի պղինձ (1) ։ Յայնժամ շարժեցաւ բարկութեամբ պարոն Թորոս 'ի վերայ Յունաց և սպան 'ի նոցանէ որպէս ասեն՝ աւելի քան զտասն հազար անձինս ։ Եւ Անդրոնիկոս երդնոյր՝ թէ չէ պատճառ սպանման եղբօրն. և աղաչեաց զԹագաւորն Երուսաղեմի գալ և առնել խաղաղութիւն, և խոստանայր նմա բազում ոսկի 'ի Կոստանդնուպօլսէ ։ Եւ գայ առ նմա Թագաւորն (Պաղտուին Գ.) և եկն և աղաչեաց զպարոն Թորոս և զորդին Ստեփանեայ, և հաշտեցին 'ի կատարելոյ զՅոյնսն ։ Եւ յետ այնորիկ էառ պարոն Թորոս զԱնաւարզա և զԹիլն ։

Յայնմ ժամանակի Թագաւորն Վրաց Գէորգի էառ զԱնին և կոտորեաց զՊարսիկսն որ 'ի նմա, և քակեաց զմզկիթսն զոր շինեալ էին Պարսիկք ոսկերօք և արեամբ քրիստոնէից (2) ։

---

(1) Սմբատ (յեր. 98)· և Վահրամ (յեր. 200) հաստատեն զբանս Միխայէլի ։—Կիրակոս (յեր. 59) զանց առնէ յիշել զեղանակ վախճանին ։

(2) Վարդան ասէ (յեր. 166) թէ Գէորգի առեալ ըզԴուին, զշագաթունս (ազանեղքս) որ կային 'ի մինարէն, զարդարեալ ոսկեթել հանդերձիւք և եդեալ 'ի շաղախս այս Մուղրի արարեալ, բառնալ յուս խրբեաց և տանել 'ի Տփխիս, 'ի թուին Հայոց ՈԺԴ (1165) ։ —Գրիգոր երէց. Գ. 284 ։— Սամուէլ ասէ, յառաջնում աւուր օգնութեամբ առ զԴուին, և վաթսուն հազար գերեաց և քանդեաց զտուն աղօթանոցս նոցա ։

Յաւուրս յայսոսիկ ըմբռնեցաւ Ռնաղտըն տէրն Անտիոքայ 'ի զօրաց Նուրատտանին հարիւր քսան ձիաւորովք եւ հինգ հարիւր հետեւակօք՝ դարան գործեալ նմա, ուր բազում եցոյց քաջութիւնս, եւ թէ ոչ էր խընայեալ 'ի հետեւակսն, դիւրաւ էր փախուցեալ. բայց այրեցաւ սիրտ նորա եւ զանձն էառ, եւ յետ բազում մարտից ետ զինքն 'ի ձեռս Թուրքացն, եւ կալեալ զնա տարին 'ի Հալապ, եւ եղեւ մեծ տրտմութիւն քրիստոնէից եւ ուրախութիւն Թուրքաց (1). վասն որոյ նոյն ժամայն արշաւեցին 'ի Լատիկն (Լաոդիկէ) եւ առին եօթն հազար քրիստոնեայս եւ վարեցին 'ի գերութիւն։ Եւ լուեալ զայս Թագաւորն Երուսաղէմի, եկն եւ արար սէր ընդ Հալպայ, եւ դարձաւ գնալ յԵրուսաղէմ. եւ հասեալ յԱ՟քայ վախճանեցաւ եւ ետ զթագաւորութիւնն եղբօր իւրոյ Ամորեայ (Ամաւրեայ) (2) 'ի թուին Ասորւոց ՌՆՀԴ (1474) եւ Հայոց ՈԱ (601)։ Եւ

---

(1) Գրիգոր երէց (Գ. 281) ասէ, եթէ յափշտակել Ռնաղտի զերկիրն Խարբերդու, ըմբռնի 'ի Մահմուտայ որ էր կառավարիչ Հալպայ, հանդերձ երեսուն ձիաւորօք։

(2) Պաղտուին Գ. Թագաւորին Երուսաղէմի յետ գերութեան Ռնաղտի եկն յԱնտիոք ոչ այնչափ առ 'ի ազատել զնա 'ի գերութենէ, որչափ նախորհէր 'ի ձեռն զբռամբ ունել զիշխանութիւն Անտիոքայ. ուր եւ հիւանդացեալ ջերմամբ առ 'ի մահ, եհաս 'ի Պէրութ եւ անդ վախճանեցաւ։ Իսկ Ռնաղտ մնաց 'ի գերութեան մինչեւ ցամ Տեառն 1178։

տարաւ զեղբայր իւր յԵրուսաղէմ և թաղեաց անդ. և սգացին զնա աւուրս բազումս. և թագաւորեաց ամս մետասան(1): Եւ Նորադին եմուտ յերկիրն Երուսաղէմի և արար աւերումն, և առեալ աւար և գերի դարձաւ: Եւ եղ զհետ նորա Եմերիս (Ամաւրի) և փախոյց զնոսա և զբազումս կոտորեաց 'ի նոցանէ և դարձաւ:

Եւ 'ի սոյն ամի Աղուբ ասլան հնազանդեաց զՏանուն եղբօրորդի իւր, որ ապըստամբեալ էր 'ի Կեսարիա Հայոց, և չոգաւ 'ի Կամաւխ որ է Կոմախս, և սպան զապստամբ ամիրայն որ կայր անդ:

Եւ յայսմ ամի Խարասլան գնաց 'ի յԱմիթ և ոչ կարաց առնուլ զնա, և դարձաւ 'ի Հարմնքէփ(2) և կոչեաց 'ի սէր զԱղուբ ասլան. և նա կարծեաց թէ նենգէ զնա, և գնաց բարկութեամբ 'ի յերկիր նորա և առ զՄշկածակն (Զմշկածագ °) և գերեաց յերկրէ նորա հարիւր հազար անձինս և երկու եպիսկոպոս, զտէր Իգնատիոս և զտէր Դիոնէսիոս, և յետոյ զերծան կենդանիք:

Իսկ զկնի գերութեան Անազորինն՝ կին նորա իշխէր Անտաքոյ. և սա եկն պարոն

---

(1) Ամաւրի թագաւորեաց յամէ 1162—1175. ամս մետասան:

(2) Հարմնքէփ (Հիսն—քէյֆ) է աւան յարեւելեան եզերս Տիգրիսի և 'ի հարաւոյ Ամթայ:

Թորոս և եդ բրինձ Ստեփանայ զՊեմունդն զորդի Ռնալտին՝ ոչ կամելով մօրն ։

Ի ժամանակին յայնմիկ Նորադինն զօրաժողով լեալ չոգաւ և գերեաց զերկիրն Տըրապօլեայ (1). և պատահեցին նոցա երեք հարիւր ձիաւոր Փռանգ, և ոչ գիտացին զմիմեանս, բայց կարծեցին Թուրքն՝ թէ թագաւորն Երուսաղէմի հասաւ, և թողին զորս առեալ էին և փախեան. և Փռանգն կոտորէր զնոսա մինչ 'ի տեղի ինչ ընդարձակ ։ Եւ յորժամ տեսին Փռանգքն զբազմութիւն Քուրդացն և իմացան թէ Նորադինն է, զարհուրեցան և եկին 'ի բլուր մի, և իջան յերիվարացն և եդին ծունր և աղօթէին զվերջին աղօթսն՝ ակն ունելով մահու 'ի նըմին ժամու ։ Եւ տեսեալ Թուրքացն զաղօթելն նոցա, անկաւ երկիւղ Տեառն 'ի վերայ նոցա, և փախեան յերեսաց նոցա թողլով զծանրութիւնս իւրեանց ։ Եւ սրտապնդեալ քրիստոնեայքն զօրացն, զհետ մըտեալ կոտորեցին յոյժ զբազմութիւն . . . նացն զօրութեամբն Քրիստոսի, և Նորադինն զերծաւ սակաւուք ։

Եւ 'ի սոյն ամի գնաց Աղուբ ասլան առ Շէրան շահ եղբայր(2) սուլտանին և դարձաւ

---

(1) Տրապօլիս, այժմ կոչի Շամ—Տարապլուս, որ է ծովեզերեայ քաղաք յԱսորիս.

(2) Այսպէս յօրինակն, որ թուի ասել Շահն շահ, որ

ուրախութեամբ . և հասեալ 'ի Գանգրա որ է 'ի վերոյ Ալիս գետոյ՝ մեռաւ (1)։ Եւ փութացուցեալ զօրացն թագաւորեցուցին զԻսմայիլն զեղբօրորդին Աղուբ ասլանայ, և արարին միաբանութիւն ընդ Տանուն ամիրային Կեսարիոյ ։ Իսկ զօրքն որ կային յՄալաթայն, թագաւորեցուցին զՄահմուդն զորդին Մահմատին (Մահմատի)։

Եւ 'ի նոյն ամբում թագաւորն Երուսաղեմի (Ամաւրի) չոգաւ յԵգիպտոս, և եղեն Եգիպտացիքն ընդ երկուս . կէսքն հնազանդեցան Երուսաղեմի թագաւորին, և կէսքն հըպարտացեալ փախստեան 'ի Նուրադինն, և առաքեցին առ նա։ Եւ Նուրադինն առաքեաց զՇերքուհ (2) զօրավարն իւր զօրօք յօգնականութիւն նոցա, և դարձան ընդդէմ թագաւորին Երուսաղեմի և մատնեցան 'ի կորուստ 'ի բարկութենէն Աստուծոյ, և մաշեաց զնոսա 'ի սուր սուսերի թագաւորն Երուսաղեմի ։ Եւ գնաց նստաւ 'ի վերայ Պըլպէս քաղաքի (3) ամիսս հինգ . և լուաւ եթէ

էր եղբայր Խլիճ ասլանայ Բ. որդւոյ Մասուտի, և եղբայր կնոջ Եաղուպ—ասլանայ ։

(1) *Ալիս գետ, այն է որ կոչի 'ի Տաճկաց Քըզըլ Ըրմախ, որ ելեալ 'ի փոքուն Ասիոյ՝ թափի 'ի սեաւ ծով։*

(2) *Շերքուհ, այն է Շիրքու, էր եղբայր Էուպայ՝ հօր Սալա—էտտինի ։*

(3) *Պըլպէս է Պիլպիս կամ Պիլուսիա քաղաքն յեզր միջերկրեայ ծովուն, որ բաժանէ զԱսիա 'ի Լիբիոյ ։*

Նորադինն ամենայն բազմութեամբ Թուրքաց պաշարեալ է զՀերիմն, և եթող ընՊլկէս և ելն. և նախ քան զգալն նորա առաւ Հերիմն յանդիմանութենէ զօրաց Ֆռանգաց՝ որ ոչ լուան նմա խնամատարական խրատին զոր գրեաց առ նոսա՝ զի մի ելցեն ընդդէմ Թուրքաց մինչև ՚ի գալն նորա. այլ ժողովեցան և գնացին յարուցին ՚ի քաղաքէն զԹուրքն, և ինքեանք նստան ՚ի բանակս և անհոգացան: Եւ դարձան ՚ի վերայ նոցա Թուրքքն, և կոտորեցին և առին զքաղաքն, և տարան գերի զիշխանն Անտաքու (Բոեմնտոս Գ.) և զայլս բազումս ՚ի գլխաւորացն(1):

Ի թուին Յունաց ՌՆԿԶ (1466) և Հայոցն ՈԳ (603), զօրացաւ աւազակն Խլիճ ասլան և առ զԿաստուկն և զԱպլստայն և զՏարանդա ՚ի ձեռն Տանուշին, և հալածեաց զորդին Դանիշմանց:

Յայնմ ամի առաքեն Թորոս ասպետաց ոսկի և արծաթ ՚ի Հայոց՝ գնել զայն յիշխանացն իւրոց որ կայր անդ ՚ի ծառայութիւն. և նոքա առին զսակն և չետուն զծառայն: Եւ Թորոս աւարեաց ասպատակս Նորադինին, և ինքն ել յերկիրն Մարաշայ. և ժողովեցան ՚ի ՚ի վերայ նորա բազմութիւն Թուրքաց, և եհար զնոսա զօրութեամբ Տեառն, և կալաւ ՚ի նոցանէ այր գլխաւոր և նշանաւոր. և զարհուրեցաւ Նորադինն յերեսաց նորա, և առաքեաց առ նա զոր խնդրէրն, և խնդրեաց խաղաղութիւն։ Եւ բազում բերանն Ֆռանգաց, և խնդրեցին զՆրինճն, և վաճառեաց նոցա ընդ հարիւր հազար դահեկանի։ Եւ ելեալ Նրինճն գնաց ՚ի Կոստանդինուպօլիս առ քոյրն իւր, և դարձաւ բազում գանձիւք։ Եւ երեք ամսոյ Յոյն պատրիարք Անտիոքու, որում անուն էր Աթանաս, և եմուտ ՚ի յԱնտաք։ Եւ տեսեալ զայս Ֆռանգ պատրիարքն Հերմի անուն, և ել ՚ի քաղաքէն և գնաց նստաւ ՚ի Խուսայրն, և բանադրեաց զքաղաքն ։

---

(1) Գ. եղոր երէց, Գ. 281:

Ի թուին Ասորւոց ՌՆՀԷ (1477) և Հայոցն ՈԴ (604) Մանիլ թագաւորն գնաց ՚ի վերայ Բուլղարաց և ըմբռնեցաւ յանէ միջէ, որ կամեցաւ տանել զնա առ թագաւորն. և նա խոստացաւ նմա մեծամեծ խոստումն՝ թէ թողու զնա, և գայ ընդ նորա ՚ի Կոստանդինուպօլիս ։ Լուաւ նմա այրն և դարձոյց և փախոյց զնա և ած զնա ՚ի Կոստանդինուպօլիս, և (Մանիլ) արար նմա զոր խոստացաւն։

Ի թուին Ասորւոց ՌՆՀԸ (1478) և Հայոցն ՈԵ (605), թագաւորն Երուսաղէմի գնաց դարձեալ յԵգիպտոս, և յաղթեաց զօրացն Նուրադինին՝ որ կային ՚ի Սար, և այլ դարձաւ յԵրուսաղէմ։ Եւ լուաւ եթէ նեղել սկսան Տաճիկքն զքրիստոնեայսն, և գնաց երկրորդ անգամ յԵգիպտոս. և ել ընդդէմ նորա Հերակլ, որ կայր 'ի Միր, և դարձեալ յաղթեցաւ և փախեաւ յերեսաց նորա ։ Եւ թագաւորն Երուսաղէմի էառ զՄիր, և եղեւ ուրախութիւն մեծ քրիստոնէից . և եղեն հարկատուք Երուսաղէմի ամենայն Եգիպտոս ։

Եւ յայսմ ամի մեռաւ ամիրայն Խարթբերդոյ Ղարասլան, և առ զիշխանութիւնն որդի նորա Նարադին (1) ։

Ի թուին Յունաց ՌՆՀԹ (1479) և Հայոց ՈԶ (606). Անդրոնիկոս յոյն՝ պատանոյն պարոն Ստեփանէի, որ էր հօր եղբօր որդի Մանիլ թագաւորին, փախեաւ 'ի Կիլիկիոյ և գնաց յԱքայ, զի անդ էր եղբօր իւրոյ դուստրն (Թէոդորա), որ էր լեալ կին հանգուցեալ թագաւորին Երուսաղէմի. և եղեւ հոգաբարձու տան նորա ։ Եւ անկաւ անօրէնն այն պոռնկութեամբ ընդ եղբօր դստեր իւրոյ և յղացաւ, և յայտնեցաւ չարն և փախեան և գնացին 'ի Խառան. և անդ ծնաւ նոցա չար ծնունդն. և զարշեցան ազգն Թուրքաց 'ի քրիստոնէից յորժամ լուան զբանն զայն. և անտի գնաց 'ի Մերտին, և ոչ ընկալան զնա. և չոգաւ անտի 'ի Կարնոյ քաղաք, և առնոյր զօր ՚ի Թուրքաց և երթայր գերէր զքրիստոնեայսն և բերէր վաճառէր անօրինացն :

---

(1) Նուր-էտտին Մահմուտ որդի Փաքր-էտտին Ղարա-արսլանայ սուլտան Օրթուքեա, որ տիրէր Ամթայ և Հիսն—քէյֆայ, մեռաւ յամի 1183 ։

Ի նոյն ամի մեռաւ մեծ իշխանաց իշխանն պարոն Թորոս, կեցեալ երեւելի փառօք և մեծաւ յաղթութեամբ. և մօտ ՚ի կատարած կենացն զգեցաւ զգեստ կրօնաւորութեան և մեծաւ յուսով կատարեցաւ ՚ի Քրիստոս. յիշատակ նորա օրհնութեամբ եղիցի ՚ի Քրիստոս յեկեղեցիս ուղղափառաց : Եւ ետ զիշխանութիւնն որդւոյ իւրոյ յոյժ տղայոյ. և յանձնեաց զնա յիշխանսն : Եւ եղբօր իւրոյ Մլեհին ոչ ինչ ետ՝ գիտելով զչարութիւն նորա, որ նախ քան զմահ նորա գնացեալ էր առ Նորադինն և ետ նմա զԿուրիս. և արարեալ յոլով չարիս քրիստոնէից ձեռնտուութեամբ անօրինացն, գողացաւ և զՎանաւեր(1) ՚ի Հայոց և գերէր յանխնայ զհաւատացեալս ՚ի Քրիստոս, զորս ոչ կամիմք ընդ գրով արկանել զաղէտսն :

Յետ այսորիկ իշխանքն Հայոց և Թոմաս մանկակալ տղայոյն, առին ՚ի նմանէ (՚ի Մլեհէ) երդումն՝ զի մի՛ զրկեսցէ զեղբօրորդին իւր, և նոքա տացեն նմա զկէս երկրին և դարձցի անդրէն. և նա երդուաւ և դարձաւ յերկիրն, և ոչ եկաց յերդումն, այլ մեծամեծ չարեօք զօրացաւ և տիրեաց ամենայն երկրին (1) :

---

(1) Վանաւեր, եթէ չիցէ անուն տեղւոյ, թուի եթէ առիցէ վանաւրեր, այսինքն՝ վանօրեր, վանքեր :

Ի թուին Յունաց ՌՆՁ (1480) և Հայոց ՈԷ (607), բարձաւ թագաւորութիւնն Տաճկաց յԵգիպտոսէ, որ սկսեալ էր յՄուիզայ ՚ի թուին Յունաց ՋԽԹ (949), և աստ բարձաւ. զի անկաւ ՚ի նոսա երկպառակութիւն, և եղեն երկու հերձուած : Տաճիկքն որ յԵգիպտոս Ալաւիտէք կոչին՝ որք են Շեխիք, որք ասեն թէ՝ չարն չէ յԱստուծոյ. և մի է Աստուած, և չարն բազում է, և սատանայ է պատճառ չարին: Եւ որք յԱթուր և ՚ի Միջագետս էին, ասէին թէ՝ չարն և մեղքն յԱստուծոյ է. և կոչին նոքա Սալսաբիք (2). և այսու պատճառաւ ատէին զմիմեանս : Սալսաբիքն էին ընդ Փռանգաց և Շեխիքն ընդ Նորադնին, և յերկուց կողմանցն կային յԵգիպտոս : Եւ առաքեաց Նորադին առ երկոքեան կողմանսն պատգամ և խոստացաւ նոցա ապաստանութիւն՝ եթէ ամենեքեան զնա

---

(1) Թովմաս աներն Թորոսի, որ խնամակալ էր մանկան Ռուբենի, սպանեաց զնա առ ժամանակ մի յերկիւղէն Մլեհի որ կամէր գրաւել զառանձնական իշխանութիւնն Կիլիկիոյ, որ և իշխանացաւ իսկ. այլ ոչ կացեալ ՚ի խաղաղութեան ընդ ազգին՝ սպանաւ յիշխանաց, և ածաւ փոխանակ նորա յաթոռն Ռուբէն Գ որդին Ստեփաննեայ. յամի 1174 :—Սմբատ յեր. 100—102 : Վահրամ. յեր. 210 :

(2) Սալսաբիքն են Սիւննիքն. ՚ի սոյն աղանդոյ էր և Նուրէտտին և ամենայն Միջագետք.

կամիցին, և ոչ տային հարկս Փռանգին. Եւ լուան նմա և արգելին զհարկն 'ի Թագաւորէն Երուսաղէմի, և ամրացուցին զՊըլպէս և եդին երկոտասան հազար ձիաւոր և հետևակ երկու հարիւր հազար։ Եւ լուաւ Թագաւորն Երուսաղէմի և գնաց և առ զՊլպէս, և կոտորեաց առ հասարակ բաց 'ի քրիստոնէից։

Եւ Շաւուրն իշխեցող 'ի վերայ Մսրայ, այրեաց զքաղաքն (1), և առ զբազմութիւնն և գնաց ամրացաւ 'ի Խարհէ քաղաք (2) և առաքեաց առ Նորադինն զեղբայր իւրն։ Եւ Թագաւորն Երուսաղէմի դարձաւ բազում աւարաւ։ Եւ Նորադինն առաքեաց զՇերաքու զօրավարն հարիւր հազար հեծելովք յԵգիպտոս, որ ընդ երթալն սպան զիշխանն Տաճկաց (զՇաւեր). և յետ այնորիկ ըմբռնեաց զխալիփայն (Ադէտ լէտին իլահ) և ըսպան զնա, և ջնջեաց զանուն նորա. և այսպէս բարձաւ իշխանութիւնն և խալիփայութիւնն Տաճկաց (3) յԵգիպտոսէ և տիրեցին ազգն Թուրքաց յայսմ հետէ ։ Եւ յետ երեք ամաց մեռաւ Շէրքուհ , և առ զիշխանութիւնն նորա Յուսուփն , որ է Սալահադինն՝ եղբօրորդին Շէրքուհի . և էին սորա ազգաւ Քուրդ ՚ի Դվնայ քաղաքէ Մեծաց Հայոց , որդիք աղքատաց , և հայր սորա կոչէր Էյուբ(1)։ Այս Էյուբս որդի Սուլիմանայ և Շէրքուհ եղբայր իւր եկեալ ՚ի Դվնայ վասն աղքատութե՟ եկին ՚ի Միջագետս և գնացին ՚ի Թկրիթ և առին զնոսա ՚ի բերդն ՚ի ծառայութիւն։ Այս Էյուբս ՚ի գիշերի միում տեսանէր , զի ելանէր ՚ի մարմնոյ նորա հուր և այրէր զբոլոր աշխարհս . և պատմեաց զերազն Ջհուդի միում , և (նա) մեկնեաց նմա թէ՝ ծնանի որդի որ տիրէ բազում աշխարհաց . և գրեաց զժամն , որ թէ եղէ ՚ի գլուխ երազն , տացէ նմա և որդւոց նորա յամեն ամի հազար կարմիր այն որդին որ թագաւորէ ։ Եւ ՚ի նոյն ամի ծնաւ Յուսուփն. և յորժամ զարգացաւ՝ էառ զնա Շէրքուհ հօր եղբայրն իւր , և գնաց առ Նորադինն ։ Եւ Շէրքուհ էր այր յառաջադէմ և իմաստուն , և արար զնա Նորադինն զօրապետ և առաքեաց յԵգիպտոս։ Եւ Սալահադինն՝ որ էր Յուսուփն , էր ճարտար առաջի Նորադնին , և էր հաճոյ յաչս նորա , և զինի մահուան հօրեղբօրն աւաքեաց զնա 'ի տեղի նորա, և Ջհուան այն եկն առ Իսուբն և խնդրէր զ ակին, և ասէ ցնա Իսուբն. «Էջ երթ՚ցուք առ Թագաւորեալն, և նա տացէ քեզ:» Եւ չոգան երկոքեանն Անգիպատոս. և խնդրեաց Յուսուփն, և եհարց ընդ Ջհուան՝ թէ քանի՞ ամք են երազոյն: Եւ նա ունէր զգիր Թուականին, եհան և եցոյց նմա. և նա ետ անցեալ ամացն ամենայն ամի հազար դահեկան կարմիր: Բայց հայր նորա յետ սակաւու ասացք ձիոյ հարեալ 'ի գլուխն՝ մեռաւ և Թաղեցաւ պատուով: Եւ Յուսուփն երեւայր և զօրանայր և յառաջանայր օր քան օրէ:

---

(1) Շաւուր կամ Շաւէր փոխարքայն Եգիպտոսի՝ որ դաշնակից էր Փռանգաց, տեսեալ զդրժումն նոցա այրմամբն Պլպէսայ, զօրաժողով եղեւ. և առ 'ի վառել զափխութիւն ոգւոյ զօրացն՝ այրեաց զքաղաքն Փոստատ. և խալիֆայն Եգիպտոսի առաքեաց առ Նուրէտտին խնդրել զձեռն օգնականութեան նորա։ Տես 'ի պատմութեան խաչակրաց Միշոայ. հտ. Բ. Գլ. 6։

(2) Խարհէ քաղաք՝ է Գահիրէն, Նոյն Մըսըր կոչեցեալ։

(3) Իմա՝ Արաբաց, որք էին 'ի Փաթիմեան ցեղէն։

---

(1) Սամուէլ — Վարդան , յեր. 161։ — Կիրակոս , յեր. 88։

Ի նմին ամի էառ Խլիճ ասլան զՄելտեսին և զՕանդրաւ յորդւոյն Դանիշմանայ: Իսկ Յուսուփն հրաման եհան յ'երկիրն Սեբաստոսի՝ զի միշտ զօտեկապ երեւեսցին քրիստոնեայքն՝ նշանակ ծառայութեան, և մի հեծցեն 'ի ձի և 'ի ջորի:

Եւ յայսմ ամի միաւոր եկեղեցին ուղղափառաց առաւ 'ի Նեոկեսարիոյ եպիսկոպոսէն ('ի Նիկսար). և եղեւ բարկութիւն Տեառն 'ի վերայ նորա, և նոյն ժամէն դարձաւ (եկեղեցին) առ տեարս իւրեանց: Յաւուս սա յայտնիկ պայծառանայր աստուածային կարգօք և շնորհօք վարդապետութեամբ սուրբն Յակոբ որ եղեւ եպիսկոպոս և կոչեցաւ Գրիգորիս: Սա էր որդի Սալիպի՝ առն արդարոյ : Սա արար յոլով գիրս խրատուց և կրօնից . և սա մեկնեաց զամենայն հին և նոր կտակարանս . և լինէր նովաւ նշանք և սքանչելիք ՚ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ :

Ի Թուին Ասորւոց ՌՆՁԱ (1481) և Հայոց ՈԸ (608), առաքեաց Թագաւորն Յունաց Մանուէլ առ տէր Ներսէս կաթողիկոս Հայոց և առ իս Միխայէլ պատրիարքս Ասորւոց, որ ժողովողս եմ՝ գրոցս , վասն միաբանութե կրօնից և դաւանութեան՝ նախ ՚ի ձեռն Քրիստոփորի և երկիցս անգամ ՚ի ձեռն Թօրիանեայ : Իսկ գրեաց առ մեզ տէր Ներսէս , թէ խնդրեցելն ՚ի մէնջ երկու բնութիւն ասել Քրիստոսի . և չորրորդ ժողովն մեծարել , և զԾնունդն ՚ի դեկտեմբերի ԻԵ առնել , և խմոր դնել ՚ի նշխարն և ջուր խառնել ՚ի բաժակն . և ՚ի սուրբ Աստուածն խաչեցար չասել : Իսկ մեք գրեցաք առ նա , թէ "Այդ կրօնքդ ՚ի մերս մերձ է . բայց ես ոչ կամիմ զճշմարտութիւն կրօնից հարցն ձերոց փոխել . զի թէ մեծ և կամ փոքր(1) և կամ դաւանութիւն փոխէք , երեւի թէ թերի էիք մինչև ցայժմ և արդ լնույք և դեռ կատարեալք եղերուք՝ ակն առեալ մարդոյ . այլ մեք կատարեալ տեսանեմք զձեզ առաքելա-

---

(1) Ի բնագրին գոյր աստ այլ ուրեք բառս , զոր ոչ կարացաք իմանալ :

կան հիմամբ, և թերի ինչ ոչ գոյ 'ի ձեզ։ Եւ առաքեցաք առ նա զմի յաշակերտաց մերոց որ փորձ էր արտաքին գրոց, զի ընդ մեր պատասխանի տացէ. զի լուաք թէ արտաքնովքն խրատեալ է այրն որ եկեալ է 'ի թագաւորէն։ Եւ գնացեալ աշակերտոյն մերոյ, մեծ Կաթողիկոսն Հայոց հրամայեաց խօսել ընդ Թէորիանէի վասն բնութեանց առաջի իւր. և եհարց մեր աշակերտն ընդ Յոյնն թէ՝ "Ի քանիս բաժանի բնութիւնն։" Եւ նա ասէ՝ "յերկուս". և ասէ՝ "յո՞րս." և Թէորիանէ ասէ. "յանձնաւորութիւն և յանանձնաւորութիւն։" Եւ նա ասէ. "Ա՞յդ երկու բնութիւնդ որ դուք ասէք, ո՞ր է, անձնաւո՞րն թէ անանձնաւորն։" Եւ կարկեցաւ զբերան՝ ժամս տարակուսեալ, և ապա ասէ. "Օ ի՞նչ կայ մեր և արտաքնոցն կարգի և հարցափորձութեանց. թող զայդ։" Եւ Կաթողիկոսն պարսաւեաց զնա և ասէ. "Դու ընդէ՞ր վաղվաղես, երկուցեալ 'ի կասկանաց երկոցունց. եթէ ախոյեան եկեալ ես, զի՞նչ խորշիս 'նմանապէս յերկոցունցդ՝ Աստուածաշունչ գրոց և յարտաքնոցն՝ որպէս զերկչոտ։" Եւ այսպէս խօսելով զբազում աւուրս՝ յամօթ լինէր անուանեալ իմաստասէրն Թէօրիանէ (1)։

---

(1) Թէորիանեայ գիրք որ զայն ինչ գրոյ. գլխովին ընդհանրականն ստամէ, զյաղթանակել իւր 'ի բանս և դրչաւ-

Գրեալ էր և առ մեզ Մանիլն և խնդրեալ 'ի մէնջ դաւանութիւն. և մեք գրեցաք և առաքեցաք, և հաւանեալ էին, և գրեցին առ մեզ վերստին գովութիւն և գոհութիւն բանիցն մերոց: Եւ զնին աղաչանք՝ զի գնասցուք առ նոսա, և 'ի բերանոյ մեր լուիցեն. և մեք ոչ առաք յանձն զգնալն, այլ գրեցաք՝ եթէ "Մեր դաւանութիւն այդ է. մի բնութեամբ և կամօք և ներգործութեամբ փառաւորել զՔրիստոս ըստ Առաքելոց և Մարգարէից և ուղղափառաց հարցն մերոց, և յայդր վերայ հաստատեալ եմք անշարժելի. և որ ոք այդու ընդ մեզ զխաղաղութիւն կայցէ և սիրէ զմեզ, կայցուք և մեք և սիրեսցուք. և եթէ վասն այդորիկ ատեն զմեզ և պատերազմին, մեք ընդ Աստուծոյ և ընդ հարցն մերոց գնասցուք. և մատուսցուք զպարանոցս մեր 'ի վկայական հանդէս նախնեացն մերոց:" Նոյնպէս և Կաթողիկոսն մեծ ըստ իւրում իմաստութեանն արար պատասխանի. զնորայն լուեալ մեք ոչ իմացաք զպատասխանին, բայց զայս գիտացաք՝ զի խոափանեաց տէր զջան Թագաւորին զոր առաջի եդեալ էր մեզ Քաղկեդոնիկ լինել. զի անկաւ Մանիլն այլ մեծագոյն հոգք 'ի Թուրքաց, այլ

տութիւն սրբոյն Ներսեսի: Տես 'ի գիրս նորին՝ Թարգմանեալ 'ի Կղեմէսէ Գալանոսէ: Ի ձեռագիրս Գրատան սուրբ Յակոբայ. Համար 838. Գլ. Ժ:

և մեռաւ մեծն Ներսէս կաթողիկոսն Հայոց առաքինութեամբ և պարկեշտ վարուք զարդարեալն, և եկաց մեզ սահման հարցն մերոց հաստատուն հիմամբ (1).

Այլ և ՚ի նոյն թուին Ասորւոց ՌՆՁԱ (1481) և Հայոց ՈԸ (608). խնդրեաց թագաւորն Երուսաղէմի օգնութիւն ՚ի թագաւորէն Յունաց որ էր աներ նորա, և առաքեաց զօր բազում ընդ ծով և գնացին ՚ի վերայ Եգիպտոսի: Բայց յորժամ հասին յԵգիպտոս Յոյնք, ըստ նենգաւոր բարուց իւրեանց նենգեցին թագաւորին Երուսաղէմի, և կամէին ինքեանց առնուլ զԵգիպտոս: Եւ իմացուցին Եգիպտացիքն թագաւորին զխաբս իւրեանց և զՅունացն, և տուին նմա ոսկի և պատանդս, զի տայցեն նմա հարկս. զի տակաւին չէր բաւական Յունացին կռուիլ ընդ Թագաւորն Նուրատտինի։ Եւ հաւանեալ Թագաւորին, և առեալ զոսկին և զպատանդսն դարձաւ, թողեալ զՅոյնսն անդէն, որ և ոչ իշխեցին յամել անդէն, այլ առեալ զնաւսն դարձան. և կորոյս զնոսա ձմեռն և բազումք կորեան ի ծովուն։

---

(1) Խնդրին միաւորութեան որ ընդ մէջ երկուց եկեղեցեաց Հայոց և Յունաց ՚ի ժամանակս Մանուէլի կայսեր և սրբոյն Ներսէսի Շնորհալւոյ. յայտնի է ընդհանուր ազգիս ՚ի գրոց նորին իսկ սրբոյ. յորում ոչ ինչ յիշատակի և զԱսորւոց մտանել ՚ի նոյն խնդիր: Իսկ Ասսեմանն պատմիչ ասէ եթէ ըստ խնդրոյ Շնորհալւոյն առաքեցաւ ՚ի Հռովմայ Յովհաննէս եպիսկոպոս տարսի, որոյ տեսեալ զհեզութիւն և զխոնարհութիւն բանից սրբոյ կաթողիկոսին Հայոց, համարեցաւ զի ս իբր հաւանեալ ընդ բանս Թէորիանեայ, մեղադրեաց զնա, և ոչ եւս կոչեալ անդ՝ դարձաւ ՚ի տեղի իւր: Զկնի մահուան Շնորհալւոյն, յորժամ գումարեցաւ ժողովն ազգային ՚ի Հռոմկլայ, առաքեցան և ՚ի Միխայէլ պատրիարքէ Ասորւոցն եկեղեցականք ոմանք նորին գտանել ՚ի նմին. -Վկրակոս, յեր. 67. որ և ՚ի մէջ բերէ պատճէն թղթոյն գրեալ առ Ալեքս փեսայ Մանուէլի:—Տես և ՚ի կարգս թղթոց միաբանութեան, յԸնդհանրականն, յեր. 180:

Ի նոյն թուին եղև շարժ ահագին յամառնային յեղանակին ի յունիսի ԻԹ, ի տօնի սուրբ առաքելոցն Պետրոսի և Պաւղոսի, յերրորդ ժամու ի ժամ պատարագին շարժեր երկիր ի հիմանէ, և թուէր թէ ի վեր է ի բարձրանալ և ի վայր է ի խոնարհել. և եռայր երկիրս մինչև ցինն ժամ աւուրն։ Եւ էաք մեք ի վանք Սուրբ Հանանեայ (Ք. Ընանիայի), և անկաք ի վերայ երեսաց մերոց, և հրամայեցաք զի յեկեղեցւոյն մի ոք ելցէ մինչ ի դադարել բարկութեանն. և զճշմարիտն արժան է ասել, դադարման ակն ոչ ունէաք, զի ամենայն ոք կարծէր եթէ հասեալ է վախճան աշխարհիս (1)։ Իսկ ի յինն ժամ աւուրն յիշեաց Աստուած զաբարչական խնամանն և հաստատեցաւ երկիր, և հոգիք կլաք և ուշաբերեցաք. և էր տեսանել զամենայն ակն յարտասուս և ամենայն լեզու բերէր գոհութիւն Աստուծոյ: Ապա եկն եհաս համբաւ ՚ի Հալպայ՝ թէ փլաւ պարիսպն և բերդն և պատառուածք երկրին կլաւ զբազումս, և սեաւ ջրով լցաւ քաղաքն, և մեռան ՚ի նմա անհամար բազմութիւնք, և փլան ամենայն ձեռագործ շինուածք, և մնաց մի եկեղեցի: Եւ խնդրեաց արդար դատաստանն Աստուծոյ զվրէժ արեան քրիստոնէիցն, զոր իբրեւ զանասուն վաճառեալ լինէին ՚ի նմա ազգք քրիստոնէից՝ գերիք արեանն Աստուծոյ. թողում աստ զգործն Սոդոմայ և զանօրէնութիւն ջրակորոյս հսկայիցն մինչև յուսահատէին բազումք ՚ի դատաստանէն Աստուծոյ տեսանելով ըզչարիս նոցա: Նոյնպէս և յԱնտաք, զոր բազում շինուածք փլան և եկեղեցին Յունաց փլաւ ՚ի վերայ պատարագողացն. փլաւ և սուրբ Պետրոս (եկեղեցին), և Բրինձն զգեցաւ քուրձ և ամենայն բնակիչք քաղաքին գնացին անկան առաջի Պատրիարքին իւրեանց՝ զոր մնացէ ՚ի քաղաքն: Եւ նա ասէ. «Մինչ ոչ ելանէ զպատրիարքն Յունաց, ես ոչ մտանեմ ՚ի նա.» և յորժամ գնացին հանել զնա, տեսին զի ՚ի փլմանէ եկեղեցւոյն խոցեալ էր և մերձ էր ՚ի մահ. և հրամայեաց

---

(1) Յայսմ ամի (1170) ոչ միայն զԱնտոքիա. այլ և զՏիւրոս. զՏրապոլիս զԵմեսս և զՃեբելա Վնասեաց շարժն շարաչար աւերմամբք շինուածոց և հաստատենին բերդից. յորս և բազումք կորուսին զկեանս իւրեանց. և երկիւղն դատաստանին Աստուծոյ, ասէ Գուլիէլմոս Տիւրացի. դադարեցուցաներ զպատերազմունս որ 'ի մէջ քրիստոնէից և իսլամաց։

(պատրիարքն Լատինաց) բառնալ և ընկենուլ յարտաքս, և արարին այնպէս. և մեռաւ արտաքոյ քաղաքին. և ապա եմուտ պատրիարքն Փռանկաց Հեմր (1) 'ի քաղաքն։ Էր սկսան շինել զփլածսն։ Նոյնպէս և յամենայն երկիր բազում աւեր և կործանումն եղեւ բերդից, եկեղեցեաց և քաղաքաց և գեղից 'ի նոր և յանկուր և յօտար շարժմանէն. բայց ողորմութեամբն Քրիստոսի յԱնտաք և յամենայն ծովեզերեայսն մնաց եկեղեցիքն ուղղափառաց՝ ոչ վասն բարի գործոյն մերոց, այլ վասն սուրբ հարցն աղօթից և նահատակութեանն նոցա։

Ի թուին Ասորւոց ՌՆՁԲ (1482) և Հայոց ՈԹ (609), մեռաւ Խուդբադին աթաբակըն Մօսլայ և ամենայն Աթուրացւոց. և լուաւ Նուրադինն եղբայր նորա և չոգաւ 'ի Մծբին և առ զնա առանց պատերազմի, նոյնպէս և զՍնճարն. և ուրախացան Փուկրքն (2) յոյժ, զի սիրէին զնա որպէս զօրինապահ, զի գինի ոչ ըմպէր, և ընդ սահման աղօթից նոցա ոչ անցանէր. և ասէին զնա մարգարէ։ Էր նա 'ի պատճառս ուրախութեան ազգին Թուրքաց և Տաճկաց ատեայր զքրիստոնեայսն, և աւերել տայր զնորաշէն եկեղեցիսն որ 'ի ժամանակս նորա շինեալ լինէր, մինչ մեռաւ խալիֆայն Մոսթնջն (1) և առ զպատիւն Մուստազին որդի նորա. և սա արգելեաց 'ի քակելոյ զեկեղեցիսն այսու պատճառաւ։ Քանզի յորժամ եղեւ նոր խալիֆայն, գրեաց առ նա Նորադինն՝ թէ “Այս սահման փեղամբարին Մահմետի, որ գրեաց թէ՝ զհինն հարիւր ամ ոչ կամի Տէր զՔնջումն քրիստոնէից. և արդ կատարեալ է թիւ սահմանին այն, պարտ է մեզ այսուհետեւ բառնալ զքրիստոնէութիւնն։ Եւ յԱստուծոյ ազդմանէն գրեաց 'ի թղթին թէ՝ “Հրամայեա ինձ գալ առ քեզ որ խորհինք վասն այսորիկ”։ Իսկ նա յորժամ ետեսաւ զթուղթն և հասկացաւ զբանն, թուեցաւ նմա թէ նենգութեամբ գրեաց առ նա՝ զի սպանցէ զնա և ինքն առցէ զպատիւ խալիֆայութեանն. որպէս եբարձ զԵգիպտոսի խալիֆայութիւնն հրամանաւ իւրով. վասն այսորիկ գրեաց առ նա խստագոյն պատասխանի, և պարսաւեաց զնա. և գրեաց և առաքեաց յամենայն աշխարհ՝ զի շինեսցին եկեղեցիք և համարձակ լիցին քրիստոնեայք յամենայն ուրեք ։ Եւ զայս արար հակառակ Նորադինին ․ և սպան զՈւլէրն (1) որ կամակից էր Նորադինին , և եհան ՚ի բանակէ զորդիսն Թուլմայի և ետ նոցա զեկեղեցին իւրեանց զոր առեալ էր զօրապետութեամբ ։

---

(1) Այն է Եմրի կամ Ամուրի պատրիարք, զորոյ և վերագոյն յիշատակեաց զատելութիւնն զոր ունէր ընդդէմ պատրիարքին Յունաց։

(2) Փուկրքն են Ֆաքիր կոչեցեալ ազգն կրօնաւորաց Տաճկաց։

---

(1) Մոսթէնճէտ Եուսուֆ որդի Մուքթաֆեայ որ իշխեաց ամս 24, և յաջորդեաց որդի նորա Մոստազաի Հասան յամի փրկչին 1169—1170.

Իսկ Նորադինն գնաց պաշարեաց զՄօսլ որ կային հինգ որդիք եղբօրն նորա, և ետես որ յայնմ ժամանակի պէտք էին առնուլ զքաղաքն , խօսեցաւ ընդ նոսա ՚ի խաղաղութիւն , և երդուաւ որ թողու զքաղաքն և զերկիրն եղբօրորդեացն՝ եթէ բացցեն նմա զքաղաքն և մտցէ ՚ի նա խաղաղութեամբ ։ Եւ լուան նմա և ածին զնա ՚ի քաղաքն ․ և ել ՚ի կլայն և էառ զամենայն գանձսն որ կային անդ , և եդ զիւր մարդիկն ՚ի կլայն՝ զի յանուն նորա պահեսցեն ․ և զաշխարհն և զքաղաքն բաժանեաց եղբօրորդեացն , բայց զամենայն ամուրսն արար ընդ ձեռամբ իւրով և գնաց ։ Եւ յայնմ հետէ սկսաւ ծանրել ընդ հարկ քրիստոնէից , և ետ հրաման մի՛ երկայնել քրիստոնէից զհերս իւրեանց զի ճանաչաւորք լիցին ․ Նոյնպէս հրամայեաց ջհուտ ազգին կարմիր կարկատան կարել ՚ի փակեղն կամ ՚ի յուսն զի ճանաչեսցին ։

Յայսմ ժամանակի գնաց Եմրի (Ամաւրի) թագաւորն Երուսաղէմի ՚ի Կոստանդինուպօլիս, և բազում գանձիւք դարձաւ յԵրուսաղէմ։

---

(1) Ուլէրն առանց երկբայութեան նշանակէ Ջուլէր , որպէս ունի օրինակ մի Վազէր ։

Ի թուին Ասորւոց ՌՆՁԳ (1483) և Հայոց ՈԺ (610), Խլիճ ասլան եկն 'ի Մելտենի և ոչ կարաց առնուլ զնա. և առեալ գերի անձինս երկոտասան հազար և դարձաւ անդրէն։ Իսկ Նորադինն ժողովեալ զամենայն ամիրայսն և զԻսմայիլն Դանիշմանայ և զՇահն շահ եղբայր Խլիճ ասլանայ և գնացին 'ի Կեսարիա. և սուլտանն ոչ կամեցաւ ելանել ընդդէմ նոցա, և առաքեցին առ նա զի տացէ յաշխարհէն բաժին եղբօր իւրոյ։ Եւ որդիք Շահն շահին կային առ նմա հինգ. և նա էառ զմի յորդւոց նորա՝ եղեն և խորովեաց և առաքեաց առ հայրն և ասաց. «Թէ ոչ երթաս այտի, զչորս որդին դոյնպէս առնեմ։» Եւ յորժամ տեսին զայն՝ երկեան, և արարեալ խաղաղութիւն՝ դարձան։ Եւ կալաւ ցաւ զՆորադինն և հիւանդացաւ, և անկաւ շփոթ մեծ, և բազում գործակալք յարեան 'ի վերայ իրերաց և կոտորեցին զմիմեանս. և եղեւ յոյժ վնաս և պակասութիւն քրիստոնէից վասն շփոթոյ իրացն այնոցիկ։

Ի թուին Ասորւոց ՌՆՁԴ (1484) և Հայոցն ՈԺԱ (611), 'ի Խաչին ամսին եղեւ պաղ և ձիւն սաստիկ, նոր 'ի լրոյ և 'ի տեսանելոյ. զի քսան և եւթն թիզ չափեցին զթանձրութիւնն. որ և 'ի Հնդիկս, որ բնաւ ձիւն ոչ գոյ, ասեն թէ չորեքտասան թիզ չափեցին զձիւնն. և պաղեցան աղբիւրք, և ձկունք ծովու մեռանէին, և ընկեցան թռչունք և երեք ՚ի ծմակ տեղւոյն, և ընտանի անասնոց եղեւ մեռանիլ ՚ի չգոյէ կերակրոյ, և այրեցաւ ամենայն բոյս սերման: Եւ ՚ի գալ ամին եղեւ սով մեծ և կարօտութիւն յոյժ, մինչ իշխանքն Կապադովկացւոց սպանէին զԽամայիլն զամիրայն Սեւաստոյ, և առին զամենայն ընտանիս նորա, և կոտորեցին անձինս հինգ հարիւր, և առին զամբարեալ ցորեանն և զամենայն ստացուածս նորա և ապրեցան ՚ի նեղութենէ սովոյն. և ծածկեցաւ գործ ըսպանման նոցա զչորս ամիս վասն ձմերնային յեղանակին. և ՚ի գալ գարնանն լուան ամենայն աղբերքն մերձակայ, և չար թուեաց և տարակուսեցոյց լուրն զբազումս: Եւ ոմանք ՚ի բնակչաց աշխարհին առաքեցին ՚ի Դամասկոս առ Տանուն ամիրայն Կեսարիոյ, զոր հալածեալ էր Խլիճ ասլան բազում ազգականօք, և կոչեցին զնա. և եկն և էառ զիշխանութիւն Սեբաստիոյ, և էառ ՚ի բազմաց ըզվրէժ ազգականաց իւրոց վասն անողորմ ըսպանման նոցա: Եւ լուաւ Խլիճ ասլան և եկն ՚ի վերայ Տանունին ՚ի Սեբաստիա. և Տանունն յուսացաւ ՚ի ՙՆորադինն՝ կանգնեալ ՚ի հիւանդութենէ իւրմէ որպէս յարուցեալ ՚ի մեռելոց. և անկաւ ահ նորա դարձեալ ՚ի *վերայ աշխարհի, և ժողովեալ բազմութիւն զօրաց գնաց 'ի Սեբաստիա. և զարհուրեալ սուլտանքն եթող զքաղաքն և գնաց: Եւ Նորադինն դարձաւ և էառ զՄարաշ և զԲեհեսնի և զՔեսուն: Եւ լուեալ զայս Կիլիճ ասլան, գայ բազմութեամբ յոյժ 'ի վերայ Նորադնին. և Նորադինն գնաց ընդ առաջ նորա և նստաւ 'ի վերայ Ջահնայ(1): Եւ եկն սուլտանն և նստաւ 'ի միւս կողմանն մերձ առ նմա. և երկեան 'ի միմեանց և ոչ պատերազմեցան զբազում աւուրս: Եւ անկաւ սով 'ի բանակն երկոցունց և բազումք մեռան 'ի սովոյ. և յետ բազում աւուրց անցելոց եթող սուլտանն զՏանունն կալ 'ի հընազանդութիւն Նորադնին, և արարին սէր և դարձան 'ի տեղիս իւրեանց:*

Ասացից փոքր ինչ վասն աղանդոյ միոյ որ երեւեցաւ յաւուրս մեր նախ քան զվախճան Կաթողիկոսին Ներսիսի, որ եղեւ այսպէս: Աբեղայք երկու, անուն միումն Յովսէփ և միւսոյն Գէորգ, և երէց մի Կարապետ անուն, գնացին 'ի կողմանց Մնջաւետայ առ սուրբն Ներսէս, և մեղադրեցան 'ի նմանէ վասն անկարգութեան համբաւոյ նոցա. և ելին 'ի նմանէ տրտմութեամբ, և ապստամբեցին և գնացին յՈւռհա, և սկսան բամբասել զտէր Ներսէս և հայհոյել՝ եթէ զօրանդն Սիմոնի կախարդի ունի, և առնէ արծաթով ձեռնադրութիւն. և ինքեանք եղեն Բաղկեդոնիկք, և խաբեցին չորս հարիւր տուն յՈւռհայոյ զկնի իւրեանց և անուանեցին զնոսա Յուսիկեանք։ Եւ լուաւ հայրապետն Ներսէս, և գրեաց առ իշխան քաղաքին զի հալածեսցէ զնոսա. և իշխանն Ուռհայոյ եհան զնոսա անտի, և նոքա գնացին 'ի Հալպ առ Նորադինն, և առին անտի համարձակութիւն և դարձան։ Եւ ես կոչեցի զնոսա առ իս և մեղադրեցի, և հաստատեցի զնոսա յուղղափառութի̃, և առաքեցի զնոսա իմ պատուաւոր արամբք առ տէր Ներսէս, և աղաչեցի հաշտել ընդ նոսա։ Եւ յորժամ գնացին նոքա, վախճանեալ էր տէր Ներսէս 'ի կենաց աստի և հանգեալ 'ի Քրիստոս 'ի Թըւին Ասորւոց ՌՆՁԵ (1485) և Հայոցն ՈԺԲ (612), յԱստուածածնին ամսեանն 'ի յութ, յաւուր հինգ շաբաթւոջ։ Եւ Յուսիկն այն անօրէն դարձաւ և գնաց յԱնտաք և մկըրտեցաւ և դարձեալ եղեւ Բաղկեդոնիկ (1)։

---

(1) Ջահան է Ճէհան գետ առ սահմանօք Կիլիկիոյ:

---

(1) Առ գլխաւորն այսր աղանդոյ թուին ակնարկել բանք թղթոյ սրբոյն Ներսէսի, մակագրեալ “առ Ժպիրհ ոմն”։ Եւ զի ասէ Միխայէլ՝ եթէ բամբասէին զսուրբն արծաթով առնել զձեռնադրութիւնն ըստ օրինակի Սիմոնի կախարդի· յայտնեն բանք երրորդ թղթոյ սրբոյն, յորում 'ի մէջ բերէ զբանս յանդուգն ժպրհին որ ասէր եթէ “Կաշառն զոր առնուս կուրացուցանէ զաչս քո, և վաճառես զաթոռն Աստուծոյ անոցիկ՝ որ բնաւ չարեօք լցեալ են”։ Տես 'ի գիրս

Իսկ տէր Ներսիսի կայր երկու եղբօր որդի եպիսկոպոսունք, և աւագ եղբօր որդին չէր մերձ մահու հօրեղբօրն, և կրսերն առեալ զմատանին նորա՝ քարոզեցաւ Կաթողիկոս։ Եւ յորժամ լուաւ զայն աւագն, եկն ՚ի Կլայն կաթողիկոսութեան, և ոչ թողին ըզնա ՚ի բերդն. և նա գնաց դարձաւ առ փեսայն իւր առ պարոն Մլեհն. և Մլեհն էառ զնա և տարաւ առ Նորադինն, և նորին օգնութեամբն եմուծ զնա ՚ի Հռոմկլայն. և նըստաւ յաթոռ հայրապետութեան հօրեղբօրն՝ Գրիգոր անուն։ Եւ ՚ի յաւուր ձեռնադրութեան իւրոյ կոչեաց զմեր եպիսկոպոսունսն զտէր Գրիգորէս Քեսնոյ եպիսկոպոս, և զտէր Վասիլիոս Ռաբնոյ եպիսկոպոս, և պատուեաց զնոսա, և կացոյց առընթեր ձեռնադրութե̄ իւրոյ։ Եւ յորժամ ձեռնադրեցաւ առաքեաց առ մեզ երկու եպիսկոպոս ըստ հին սահմանին մերոյ զոր ունիմք ՚ի միջի մերում, որ յորժամ Ասորւոց ուղղափառ պատրիարք ձեռնադրի, առաքէ առ Հայոց Հայրապետն զդաւանութիւնն իւր. նոյնպէս և Հայոց Կաթողիկոս լեալ, առաքէ առ պատրիարքն Ասորւոց զդաւանութիւնն իւր։ Եւ ես ուրախ եղէ և խնդացի, զի այր գովելի և գիտնական էր. բայց ընդ կանոնաց սակաւ

Ընդհանրական Թղթոց, յեր. 211, տպեալ յԵրուսաղէմ, յամի 1871.

մի մեղադրեցի, թէ յորժամ անուանեալ էր Հայրապետ մի, պարտ էր մնալ 'ի նոյնն ։ Այլ և աղաչեցի զնա՝ թէ բարձ զկեղծ անուն արծաթատուութեան յազգէդ երեւելի և հռչակաւոր, և ամենեւին անխոտան և պարկեշտ՝ բայց 'ի միոյդ ։ Նա յանձն էառ և խոստացաւ առնել ։ Այլ և աղաչեցի վասն անուանեալ կաթողիկոսին որ յառաջ քան զնա ազգականին իւրոյ, զի պատուով կալցէ զնա 'ի տեղւոջ ուրեք, զի բազմութեան ազգիդ պարտ է երկից և չորից հայրապետաց ։ Նա զայն եւս խոստացաւ և կատարեաց՝ առաքելով զնա 'ի Լամբրոն՝ յոլով մասն վիճակի հաւատացեալ 'ի նա, որում անուն էր Գրիգորէս (1) ։

---

(1) Ուր որ 'ի մերոց պատմագրաց յիշատակէ երկուց կաթողիկոսաց միանգամայն գրաւել զաթոռն զկնի Շնորհալւոյն․ քանզի ասէ Միխայէլ, եթէ Գրիգոր Ապիրատ (որդի Շահանայ եղբօր Շնորհալւոյն) կոչեցաւ յաթոռն․ կամ լաւ եւս՝ ինքնիշխանիր եղեւ, և Գրիգոր Տղայ (որդի Վասլի միւս եղբօր Շնորհալւոյն) պաշտպանութեամբ և հրամանաւ Ռուբ—Լեւոնի ձեռնադրեցաւ կաթողիկոս 'ի Հռոմկլա։ Իսկ Վարդան ասէ (յէր․ 169), Գրիգոր Տղայ առնու զքօղն կաթողիկոսութեան համաձայնութեամբ ազգին, և Գրիգորէս Ապիրատն կոչեցեալ չոգաւ 'ի Լամբրոն և խնամէր զՏարսոնի վիճակն, որ և յամի 1195 նստաւ յաթոռն զկնի Գրիգորի Ե Գահավիժի։ Նոյնպէս և Վահրամ դնէ նախ զԳրիգոր Տղայ, յետոյ զԳրիգորիս Գահավէժն, ապա զԳրիգոր Զ զԱպիրատն, զոր եւս ձեռնադրել Լեւոն Բ յետ օծելոյ ինքնակալի։ Սմբատ ասէ եթէ Ներսէս Շնորհալի պատուիրեալ էր զԳրիգոր Տղայն նստուցանել յետ մահուան իւ-

Ի նոյն թուականին ՌՆՁԵ (1485) և Հայոցըն ՈԺԲ (612), Նորադինն հրաման ետ զօր ժողովել յամենայն աշխարհաց Եմանացւոց (Եէմէն) և Եգիպտացւոց և Աթուրացւոց և ՚ի Կապադովկացւոց և ՚ի Հայոց և ՚ի Միջագետաց, զի բարձցէ զԹագաւորութիւնն որ յԵրուսաղէմ զՖռանգացն, և զԽլիճ ասլանայ զաւրութիւնն: Եւ ինքն հպարտացեալ էր, զբաղում ժամս կարդայր և աղօթէր լռութեամբ. և ոչ տայր ըմպել զինի ՚ի բանակին իւր, և ոչ ձայն երգոց և խաղուց և կաքաւչաց լսելի լինէր ՚ի զօրս նորա. և վասն այսպիսի առաքինութեան ակըն ունէր թէ Աստուած խօսի ընդ նմա. զի ասէին խաբեբայք Շէխեր, թէ “Տեսաք ըզքեզ զի ելանէիր յերկինս”. և այլք թէ “Տեսաք որ հրեշտակ խօսէր ընդ քեզ”. և նա հաւատայր նոցա: Եւ մինչ ՚ի յայսպիսի միտս հպարտացեալ էր և կայր ՚ի Դամասկոս Նորադինն, և ժողովէին յամենայն կողմանց հեծելոց բազմութեանց առ նա՝ որոց ոչ էր թիւ, յանկարծակի հարաւ ՚ի Տեառնէ և մեռաւ՝ թագաւորեալ ամս քսանևութ: Եւ առ զթագաւորութիւնն Մելիք Սալէհն որդի նորա, և ցրուեցան զօրքն յիւրաքանչիւր տեղիս: Եւ թագաւորին Երուսաղէմի (Ա-

յոյ: Տես և ՚ի ներբողեանն Ներսէսի Լամբրօնացւոյ ՚ի վարս Շնորհալւոյն:

մաւրի) եկն 'ի վերայ Դամասկոսի և գերեաց զաշխարհն, և խոստացան Դամասկացիքն տալ նմա հարկս իբրեւ զառաջինն, և նա ոչ կամէր դառնալ նախ քան զառնուլ քաղաքին. բայց մեղքն քրիստոնէից ոչ ետ թոյլ, զի կալաւ զնա ցաւ մահու, և առեալ հարկ 'ի Դամասկոսէ՝ դարձաւ 'ի Աքքայ և անդ մեռաւ՝ թագաւորեալ ամս երկոտասան, զկնի քառասուն աւուր մահուան Նորադնին. և եղեւ տրամութիւն ամենայն քրիստոնէից մահն նորա։ Եւ թագաւորեաց որդի նորա Պաղտին ամաց հնգետասանից, և առաքեաց արար սէր ընդ որդի Նորադնին։ Եւ յորժամ լուաւ Խլիճ Ասլան զմահն Նորադնին, եկն 'ի Սեբաստիա և առ զնա և զԿոմանա և զՆիոկեսարն, և ջնջեաց զմնացեալ ազգն Դանիշմանայ, և բարձաւ իշխանութիւն տանն Դանիշմանայ՝ որ սկսաւ 'ի թուին Յունաց ՌՅԿԶ (1366). և աստ վախճան էառ՝ տեւեալ ամս հարիւր քսան և երկու. և կացին վեց գլխաւորք զկնի միմեանց։ Նոյնպէս եւ 'ի Մօսլայ Մեփարղինն (Մէյֆա—Րատին Պալի) եղբայրն Նորադնին, և առ զՄծբին և զԽաբուր և զԽառան. և հնազանդեցաւ նմա եղբօր որդին իւր 'ի Հալպ, և դարձաւ և եբարձ զեդեալ կանոնք Նորադնին, որ գրեալ էր յամենայն մզկըթի վերայ՝ մի ըմպել գինի Մոլիմնի. և նա հրաման ետ տաշել զգիրն, և համարձակ եա խմել յամենայն տեղիս յայտնապէս ։

Յայսմ ամի Սալահադինն որ տիրեալ էր Եգիպտոսի, տիրեաց և իշխեաց Ներքսագոյն Արաբիոյ և մասին ինչ 'ի Նուբեաց աշխարհէն ։ Եւ 'ի սոյն ամի բերդեր զոր ունէին Հայք յերկիրն Սասնոց, նեղեալ 'ի Մուփարկնայ ամիրայէն, առին 'ի Շահի Արմէնն յամիրայն Խլաթայ, զայն որ ունէին 'ի հին ժամանակաց ։

Ի Թուին Ասորւոց ՌՆՁԶ (1486) և Հայոց ՈԺԳ (613), սպանաւ իշխանն (1) Կիլիկեցւոց կամօք իշխանաց իւրոց 'ի բերդն, և բերին զՌուբէն որդին պարոն Ստեփանէի որ էր 'ի Տարսոն, և իշխեաց 'ի վերայ աշխարհին։ Եւ չարչարեաց և սպան զսպանողսն հօր եղբօր իւրոյ, զի ասեն թէ սպանին և արկին շանց . և վասն այսր նախատանաց ոչ կարաց ներել նոցա (2) ։

Եւ 'ի նոյն ամի ել Սալահադինն յաշխարհէն Եգիպտոսի և եկն 'ի Դամասկոս 'ի պատճառս օգնութեան Մ՚ելք Սալէհին, և առ ըզԴամասկոս և գնաց ՚ի Հալպ. և զարհուրեցաւ Մ՚ելքն ՚ի նմանէ. և նա առաքեաց առ նա և ասէ. «Ես քո ծառայ եմ, և եկեալ եմ յօգնութիւն տեառնդ իմոյ՝ կալ ընդդէմ թշնամեաց քոց:» Եւ ոչ հաւատաց նմա, և ոչ եբաց զքաղաքն նմա. և նա դարձաւ ՚ի Հալպայ և էառ պատերազմաւ զՀամս և զՀամայ, և եհան զՖռանգ ծառայսն որ ՚ի Դամասկոս և փախուցեաց զիւրայքն: Եւ ետ բերել ոսկի բազում ՚ի Մսրայ, և կուտեաց զօրս բազում: Եւ Սեփադինն լուաւ զմոզալին Սալահադնին, և եկն ՚ի վերայ նորա խրոխտանօք, և կոչէին զնա շուն կատաղեալ որ հաչէ ՚ի տէրն իւր. և փութային ՚ի գալն զի մի փախիցէ ՚ի նոցանէ. և նա առաքէր առ նա և ասէր. «Մի՛ կռուիք, մէկ մարդիկ եմք և մէկ հաւատ, և հնազանդ եմ ձեր:» Եւ ոչ լուան նմա, այլ չոգան բախեցան ՚ի վերայ նորա. և նոքա մարտեան ընդ նոսա, և սկսան կոտորել զզօրսն Սեփադինին, և փախեան յերեսաց նոցա: Եւ յորժամ ետես Սալահադինն թէ յաղթեցան Մօսլիքն, արգել զզօրս իւր ՚ի կոտորելոյ զնոսա, և ասէ. «Խնայեցէք զի մէկ ազգ եմք:» Եւ անց ՚ի մէջ նոցա և արգելեաց զզօրս իւր, և զըմբռնեալ ծառայսն հանգոյց և ազատեաց. և վասն այսորիկ անկաւ ահ և երկիւղ ՚ի վերայ ամենեցունց ։ Նմանապէս խորհրդեցաւ Մելիք Սալէհն և եհան(1) զՖռանդ ծառայն և փախստեայ սակաւու, զկոմսն Տրապօլեայ ութսուն հազար դահեկանի, զՋօշլին որդի Ջօշլինին քսան հազար, զՄնալտ բրինձն հարիւր հազար ։ Եւ արար ուխտ ընդ Ընտաք զի օգնեսցեն նմա ։

---

(1) Նա նոյն է Մլեհ եղբայրն Թորոսի և Ստեփանեայ, որ զկնի միոյ ամի մահուան Թորոսի բռնութեամբ կալաւ զիշխանութիւնն Կիլիկիոյ, և վարեալ զամս իբր հինգ, ոչ կարացեալ տանել իշխանաց զխառնակեաց վարս և զանիրաւութիւնս նորին սպանին 'ի Թուին Հայոց ՈԻԳ. և զորդին Ստեփանեայ զՌուբէն որ կայր առընթեր Բակուրանայ իշխանին քեռւոյ իւրոյ 'ի Պապեռոն, դնեն յաթոռն ։ Սմբատ, յեր. 102 ։ —Վահրամ, յեր. 211 ։

(2) Սմբատ, յեր. 102—103 ։

Իսկ Սեփադինն դարձեալ արար ժողով և ած ընդ իւր զտէրն Մերտինայ և զՀասան-Քէֆայն, և եկն ՚ի վերայ Սալահադինին վաթսուն հազարաւ ։ Եւ Սալահադինն ունէր երկոտասան հազար, և առաքեաց առ Սեփադինն և ասէ . "Մի գար ՚ի վերայ իմ և մի կռուիր ընդ իս . զի ինձ չէ անարգանք թէ յաղթիմ ՚ի յիմ տեառնէդ . բայց քեզ մեծ կորանք է՝ թէ յաղթիս ՚ի ծառայէ քումմէ ." և ոչ լուաւ նմա ։ Իսկ ապա Սալահադինն գաղտ խօսեցաւ ընդ ամիրայսն խոստանալով նոցա բարի առնել . և յորժամ խմբեցաւ պատերազմն, դարձեալ զօրացաւ Սալահադինն և պարտեցաւ Սեփադինն, և փախեան առաջի նոցա . և Սեփադինն նստեալ յուղտ փախեաւ ՚ի Մօսլ . և Սալահադինն առ ըզՄնբէճ, և եկին ՚ի հնազանդութիւն նմա տէրն Ինթափայ և Թլպաշարայ ։ Եւ գնաց ՚ի Ազազն(2) և կռուէր ՚ի վերայ նորա . և ելին յանկարծակի Հաշիշիկք (1) 'ի վերայ նորա և խոցոտեցին զնա և ոչ մեռաւ. և ինքն բռնան զնոսա, և առաքեաց զօր 'ի վերայ Հաշիշեացն, և գերեաց զերկիրն նոցա, և զԱղաղն էառ պատերազմաւ և գնաց նստաւ 'ի վերայ Հալպայ: Եւ առաքեցին Հալպցիքն առ Փռանգն, և եկն Անաղոն որ վաճառեցաւն և կոտորեաց 'ի զօրացն Սալահադինին, և արար զնա փախստական. և Սալահադինն դարձոյց զԱղաղն 'ի Հալպ, և ինքն գնաց յԵգիպտոս:

---

(1) Ըստ պատմութեան Արաբացի պատմագրաց ոչ Մելիք Սալէհ, այլ Սալահատին հանեալ զգերիսն փախստեայ ։

(2) Ազազ քաղաք է մերձ ՚ի Հալապ ։

Ի թուին Ասորւոց ՌՆՁԷ (1487) և Հայոց ՈԺԴ (614), մեռաւ Նաջմադինն (Նէճմէտտին) տէրն Մերտինոյ՝ կեցեալ իշխան ամս քսանեւերկու, այր բարի և քաղցր 'ի վերայ քրիստոնէից. և առ զիշխանութիւնն Ղուտբդին որդի նորա:

Ի սոյն ամի վարակ մի եհար զԹագաւորն Յունաց 'ի յորս և համբաւեցաւ թէ մեռաւ անտի. և Ղլիճասլան ասպատակեաց յաշխարհն նորա և գերեաց զբազումս: Եւ Թագաւորն ողջացաւ 'ի խոցոյն և առեալ զօր բազում յոյժ, և կայր առ նմա յորդւոցն Դանիշմանայ փախուցեալ առ նա, արար ըննոսա զօրագլուխս, և առաքեաց առ նա յուռաջագոյն, և ասէ. «Դարձո զհայրենիսն Դանիշմանեանց առ տէրս իւրեանց՝ որ կան առ իս.» և ինքն զհետ դեսպանացն չոգաւ, և կոտորեաց զբազումս 'ի Թուրքացն։ Իսկ Թուրքն Ուձին գնացին ծածկապէս ընդ կողմն Հիւսիսոյ և գերեցին 'ի Յունացն հարիւր հազար կին և ողջ՝ բաց 'ի յորանցն զոր սպանին։ Իսկ լուեալ զայն թագաւորին Յունաց, խնդրէր զսուլտանն և վարէր զնա առաջի իւր, և ոչ կարէր դիպիլ նմա սուլտանն. և թագաւորն Յունաց ետ յիսուն հազար հեծեալ յանձն յորդւոյն Դանիշմանայ, և առաքեաց զնա 'ի վերայ Նիկսարու, և Թուրքերն արարին խաբէութիւն, և գրեցին թուղթ 'ի դիմաց քրիստոնէիցն և ձգեցին 'ի դուրս, և էր գրեալ թէ՝ «Դանիշմանդայդ զոր եդեալ էք ձեզ առաջնորդ, կամի մատնել զձեզ 'ի ձեռն Թուրքաց։» Իսկ լուեալ զայս հաւատացին և սկսան փախչիլ. և ելեալ զկնի նոցա կոտորեցին զբազումս և սպանին զմիւս զօրագլուխն որ էր քոր որդի թագաւորին։ Իսկ յորժամ գնացին առ թագաւորն, սրտմտեցաւ յոյժ, և գնաց զայրացմամբ և եմուտ 'ի մէջ Թուրքացն մերձ 'ի Կօնն (Իկօնիոն), իջաւ 'ի ձորակի միում 'ի մէջ երկուց լերանց դժուարագունից, և պատեցան զնոքօք Պոլի Թուրքմանք յոլովութիւն բաղում՝ յոյժ, և պաշարեցին զնոսա աւուրս հինգ, և խոցոտէին զնոսա գլօք քարանցն և նետիւք ՚ի տուէ և ՚ի գիշերի, և սպանին ՚ի նոցանէ հազարս և բիւրս՝ մարդ և գրաստ, և առին զուռձիկս նոցա հարիւր հազար բեռնաւոր ձի. և երկեան յոյժ, և տկարացան և առաքեցին առ սուլտանն և ետուն երեք քաղաք զոր ինքեանք չինեալ էին, և խնդրեցին սէր, և աղաչեցին զի զերծուսցէ զնոսա ՚ի նեղութենէ անօթի: Եւ կամեցաւ սուլտանն, և առաքեաց երեք ամիրայ հեծելօք՝ հանել զնոսա անօթի և տանել ՚ի Կոստանդինուպօլիս խաղաղութեամբ: Եւ եկեալ առնոսա ամիրայքն ՚ի գիշերի և հալածեցին զԹուրքմանն և հանին զնոսա անօթի, և յուղի անկեալ գընային: Եւ Թուրքմանն երթայր առաջի և անտի, և անարգէին զսուլտանն զի արար սէր ընդ նոսա՝ որ պաշարեալ էին ՚ի ձեռս նոցա, և հետզհետէ բախէին յանկարծակի և սպանանէին, և յափշտակէին. այլ և ՚ի հեռաստանէ նետաձիգս լինէին և սպանանէին: Եւ Յոյնք ասէին ընդ ամիրային որ տանէին ընդ նոսա, թէ՝ «Ի ձէ՞նջ է ծախուածն մեր՝ թէ յապականչացդ:» Եւ նոքա երդնուին թէ՝ «Ոչ է ՚ի մէնջ, այլ անհաւանք և վայրենամիտք են և ոչ լսեն մեզ:» Եւ մինչ ՚ի Կոստանդինուպօլիս պակասեաց ՚ի նոցանէ քան հազար այր: Եւ այսպէս պակասեալ ՚ի զօրաց և ըն ամօթով գնաց Մանիլն յերկիր իւր, այն որ ջանայր երևելի պատերազմաւ յաղթել աշխարհի, և իմանալի խորհրդով՝ ուղղափառաց եկեղեցւոյ։ Յետ այնորիկ առաքեաց գանձս բազումս առ սուլտանն, և գընեաց զկենդանի մնացեալսն 'ի զօրաց իւրոց որ կային 'ի գերութեան. և եղև այս 'ի թուին Ասորւոց ՌՆՁԸ (1488) և Հայոցն ՈԺԷ (617)(1)։

---

(1) Հաշիշիքն էին իբր աղանդաւորք ոմանք հպատակք գլխաւորի միում որ կոչէր Ծերունին լերին, որոյ կուրօրէն ամենայն հրամանացն հպատակէին՝ զմահ 'ի բաժին ունելով միշտ:

Զայսու ժամանակաւ քրիստոնեայք որ կային 'ի Մերտինի՝ անկան 'ի մեծ նեղութիւն յերկուց պատճառաց, 'ի սովոյ և 'ի չարութենէ, և 'ի խիստ բարուց ամիրային իւրեանց՝ որ մնացեալ էր յազգէն Դանիշմանայ. և ազդ. արարին նոցա եկեղեցականքն, եթէ թշուառութիւնս այս 'ի մեղաց է. զի կատարեալ է բանն Տեառն առ մեզ որ ասէ թէ՝ «Խառնակեցան ընդ հեթանոսս և ուսան ըզգործս նոցա, և եղեւ նոցա 'ի գայթակղութիւն։» Արդ եկայք դարձցուք 'ի չարեաց մերոց, և աղաչեսցուք զերեսս ողորմածին Աստուծոյ, զի սպառեցաք, պակասեցաք, իսպառ ընկեցաք։ Եւ լուան ժողովուրդքն և սկսան պահել և աղօթել արտասուօք, և հըսկել և պաղատել առ Աստուած։ Եւ դադարեաց Տէր 'ի բարկութենէ իւրմէ, և էարկ

---

(1) Սմբատ, (յեր. 103), յիշէ համառօտ զպարտութիւն Մանուէլի 'ի Կլիճ—Արսլանայ, և զդաշն զոր ընդ նմա կըռեաց։

՚ի սիրտ ամիրային և զղջացաւ ՚ի գործս իւր․ և առաքեաց առ սուլտանն և ած ՚ի նմանէ գանձս և ետ ՚ի նա զՄելիքն, և ինքն ել և գնաց ՚ի Խարբերդ․ և եղև մեծ դիւրութիւն քրիստոնէից և առատութիւն հացի, և ամենայն իրաց ընդարձակութիւն։

Ի թուին Ասորւոց ՌՆՁԹ (1489), ել Սալահադինն Եգիպտոսէ երեսուն հազար հագած հեծելով, զատ ՚ի ասակականացն և ՚ի հետևակացն, և յիսուն և երկու հազար բեռնակիրս զինաքարձս զինի իւր։ Եւ եկն ՚ի Պաղեստինէ, և կալաւ Զուանդ մի և զենեաց և արեամբ նորա լուացաւ աղօթից՝ և աղօթեաց, և պատրաստեցաւ պատերազմի և աւերման երկրին։ Իսկ թագաւորն Երուսաղէմի Պաղտին (Դ.) ժողովեաց զսակաւ զօրսն իւր, և առաջի նոցա անկաւ ՚ի վերայ երեսաց իւրոց ընդդէմ արեւելից, արարին և զօրքն նոյնպէս․ և լացին և կարդացին առ Տէր սրտի մտօք․ և երդուան զօրքն առաջի Աստուծոյ և առաջի թագաւորին ոչ դարձուցանել թիկունս ՚ի թշնամեաց, այլ մեռանել յօժարութեամբ ՚ի վերայ սուրբ Եկեղեցւոյ․ և գնացին ՚ի վերայ նոցա։ Եւ յորժամ տեսին զբազմութիւն . . . նացն և հայեցան ՚ի սակաւութիւն իւրեանց, իջան դարձեալ յերիվարացն, և մոխրամած երեսօք արտասուեցին և պաղատեցին առ Տէր, և կազմեցան պինդ հաւատով, և դիմեցին 'ի վերայ նոցա իբրև զարծուիս յերամս կաքաւաց։ Եւ տէր Յիսուս Քրիստոս Աստուածըն քրիստոնէից եհան հողմն մրրկեալ ընդհետ նոցա ընդդէմ երեսաց Այլազգեացն, և թափէր զնոսա յերիվարացն, և դարձուցանէր զնոսա 'ի փախուստ առաջի նոցա. և նոքա կոտորէին զնոսա յանխնայ և ոչ ապրեցուցանէին 'ի նոցանէ ։ Եւ փախեան և ցրուեցան Այլազգիքն ընդ կողմն հարաւոյ յանապատն, և յառաւօտէ մինչև 'ի մտանել արեգականն ոչ դարձան 'ի նոցանէ։ Նոյնպէս և 'ի վաղիւն, և մինչև 'ի հինգ օրն երթային և գտանէին 'ի նոցանէ լքեալ 'ի սովոյ և թաքուցեալս. և առին զամենայն ծանրութիւն ռոճկաց նոցա և զկահ և զկարասի, և լցան և փարթամացան. և ուրախ արար Տէր զհաւատացեալս իւր, և 'ի համբաւս յայս եբեկ զմէջս . . . նոցին ։ Իսկ Սալահադինն յոյժ սակաւուք անկաւ 'ի Մսր, և զգեցաւ սեաւ, և փակեցաւ 'ի տան խաւարի աւուրս բազումս ։

Եւ 'ի սոյն ամի ամիրայն որ կայր 'ի Հերիմն, կասկածեաց 'ի Հալպայ թէ խորհեցան նմա չարիս՝ սպանանել զնա. և խօսեցաւ ընդ բրինձն Անտաքոյ, և պահանջեաց 'ի նըմանէ երդումն զի մի հանցէ զնա 'ի բերդէն, և կացցէ նմա 'ի հնազանդութիւն.

և երդուաւ նմա 'ի խաչն և յԱւետարանն ։ Եւ ամիրայն դարձաւ 'ի Հալպայ և ապստամբեաց և եղև ընդ Անտաքու ։ Բայց յետոյ զղջացաւ բրինձն , և ստեաց երդմանն , և եբեր աղաչանօք զՌուբէն Կիլիկիոյ իշխանն, և գնաց 'ի վերայ Հերմին . և ոչ ետ Տէր 'ի ձեռս նորա վասն ստութեան նորա , այլ բազումք անկան 'ի զօրացն Փռանգաց և դարձաւ ամօթով, և զՀերիմն դարձուցին 'ի Հալպ՝ առեալ երդումն 'ի նոցանէ ։

Ի թուին Ասորւոց ՌՆՂ (1490) և Հայոցն ՈԺԷ (617), ժողովեցան Փռանգք 'ի Պաղեստինէ , և գնացին 'ի վերայ Յորդանանու իջան , և սկսան շինել անդ քաղաք 'ի տեղին որ կոչի անց Յակոբայ, զի նովաւ առցեն զԴամասկոս ։ Եւ լուաւ Սալահադինն , և ժողովեաց դարձեալ զօրս և եկն 'ի Դամասկոս ։ Եւ զի ամիրայն Բալբաքու որ կոչի Արեգական քաղաք , որ է Իլուպօլիս , ապստամբեալ էր , գնաց 'ի վերայ , և երդմամբ և սիրով և խոստմամբ առ զնա և զօրացաւ ։ Եւ գնաց 'ի վերայ նոր քաղաքին , զոր շինեալ էին Փռանգք . և զօրքն Փռանգաց մինչեւ 'ի գալն Սալահադնին՝ լսեցին զհամբաւ գալոյ նորա, և գնացին ընդդէմ նորա և փախուցին զնա մինչեւ 'ի Դամասկոս . և եկն զօրն Փռանգաց մինչեւ 'ի դուռն Դամասկոսի , և գերեաց զերկիրն ։ Եւ Սալահադինն քաջալեբեալ ելաւ զհետ նոցա , և կալաւ 'ի նոցանէ հարիւր փրեր . և դարձեալ սրտապնդեալ չոգաւ 'ի վերայ քաղաքին զոր շինէին՝ և կալաւ 'ի նոցանէ հարիւր փրեր , և պաշարեաց զքաղաքն և յաղթեաց նոցա , և ընկէց հուր 'ի քաղաքն և սկսաւ այրել . և կային անդ հինգ հարիւր փրեր Մեստրաւն (1) իւրեանց։ Եւ նոքա յորժամ տեսին թէ պարտեցան և յաղթեցան , ընկեցին զանձինս 'ի հուրն և 'ի գետն՝ զի մի անկցին 'ի ձեռս . . . նայն և զմնացեալսն 'ի նոցանէ կոտորեաց Սալահադինն ։

Ի թուին Ասորւոց ՌՆՂԱ (1491) և Հայոցըն ՈԺԸ (618) , մեռաւ թագաւորն Յունաց Մանիլն՝ թագաւորեալ ամս երեսուն և եւթն , և առ զթագաւորութիւնն Ալէքս (Բ) որդի նորա ամաց երկոտասանից . և երկոտասան իշխան կարգաւորէին զթագաւորութիւնն ։ Եւ մայր նորա եղև հաւատաւոր, բայց ընդ ձեռամբ ունէր զտունս գանձուցըն . և յետոյ անկաւ 'ի պոռնկութիւն ընդ մի յիշխանացն երկոտասանից , և յայտնեցաւ գործն , և խորհեցան մետասան իշխանքըն սպանանել զմայրն և զորդին , և դնել թագաւոր զդուստր Մանիլին , որ էր յառաջին կնոջէն յօրինաւորէն, և ոչ կարացին։ Եւ լուան մայրն և որդին, և ջանացին ըմբռնել զնոսա. և փախեան մետասան իշխանքն յեկեղեցին մեծ. և զեւթն օր կալաւ ամբոխ զքաղաքն, և սկսան ծեծել զեկեղեցին փելիկոնաւն (1). և յետ եւթն աւուր էառ ըզնոսա յերաշխի Պատրիարքն, և եհան յեկեղեցւոյն և տարաւ յարքունիսն, զի կայցեն ՚ի խաղաղութեան և յանհոգութեան, զի առեալ էր երդումն ՚ի նոցանէ։ Իսկ թագաւորն և մայրն ստեցին երդմանն և հանին զաչս նոցա։ Եւ բարկացաւ Պատրիարքն Թէոդորոս (Թէոդոս) անուն և անէծ զքաղաքն, և ինքն ելաւ և գնաց ՚ի քաղաքէն. և անմտութեամբ արար անիծելով զքաղաքն և զանմեղսն. որ և ութ ամիս պատարագ ոչ մատեաւ ՚ի նմա, և մեռեալ ոչ հաղորդեցաւ և թաղեցաւ։

---

(1) Մէստր նշանակէ ըստ հին գաղղիերէն լեզուին՝ գլխաւոր , պետ կամ տէր , որով իմանի գլուխն կամ կառավարն կարգի Տաճարականաց որք Փրերք կոչէին ։

Ի թուին Յունաց ՌՆՂԲ (1492) և Հայոց ՈԺԹ (619), եղեւ պատերազմ ընդ սուլտանն և ընդ Նորադինն ընդ տէրն Հարանքէփոյ և Քեսնոյ, զի ատեաց Նորադինն ըզդուստրն սուլտանայ որ էր կին նորա, և յուսացաւ ՚ի Սալահադինն։ Եւ սուլտանն չոգաւ քակեաց զՔեսուն. և ելեալ Սալահադինն ընդդէմ սուլտանայ առնուլ զվրէժ Նորադնին, և Հասան ամիրայն իմաստուն բանիւք արար խաղաղութիւն և ոչ կռուեցան, և դարձան խաղաղութեամբ 'ի տեղիս իւրեանց։

---

(1) Փելիկոնն կամ Փիլիկոնն, է գործի պատերազմական, որով ձգէին զմեծամեծ քարինս ՚ի կործանել զպարիսպս քաղաքաց։

Ի սոյն ամի ամիրայն Ուռհայոյ և Խառանայ ապստամբեցայ 'ի Մօսլցւոյն և հնազանդեցաւ Սալահադինին, և այսու պատճառաւ եղեւ Միջագետք Սալահադինին. զի ժողովեցան Մօսլցիք և ոչ իշխեցին կռուել ընդ Սալահադինին, և հնազանդեցան նմա. և գնաց Սալահադինն և էառ զԱմիթ, և ետ ըզնա Նորադինին զի խոստացեալ էր նմա։

Ի թուին Ասորւոց ՌՆՂԳ (1493) և Հայոց ՈԻ (620), մեռաւ Մելիք Սալեհն տէրն Հալպայ. մեռաւ և Սեփադինն տէրն Մօսլայ, և տուաւ Հալպ և Մօսլ աղբեր Սեփադինին. և Ազադինն ետ զՀալպ եղբօր իւրում, և էառ 'ի նմանէ զՍնճարն։

Ի թուին Ասորւոց ՌՆՂԴ (1494) և Հայոց ՈԻԱ (621), Անդրոնիկոսն անօրէն, սպանողն պարոն Մանուէլի, որ չոքեցաւ չարութեամբ 'ի տեղիս տեղիս, եմուտ այժմ խաբէութեամբ 'ի Կոստանդինուպօլիս, որպէս թէ գնայ 'ի հնազանդութիւն և 'ի խնամակալութիւն թագաւորին տղայոյ. և ապա յայտնի արար զչար կամսն չարածերին այն, և հալածեաց զՓռանգսն զոր եգիտ 'ի քաղաքին. և խեղդեաց 'ի ծովն զմայրն և զտղայն իւր, և սպան հազար այր յիշխանացն Յունաց, և չորեքտասան հազար գիւղ և վանք աւերեաց ՚ի Յունաց. և առ զկին Ալեքսին իւր ՚ի կնութիւն. հալածեաց զՓռանկսն զոր եգիտ ՚ի քաղաքին և ՚ի գաւառին, և ինքն թագաւորեաց: Եւ խորհեցաւ սպանանել զՓսիլկոս (1) իշխանն մեծ, որ էր յազգէ թագաւորացն, և առաքեաց կոչեաց զնա. և ոչ կամեցաւ գնալ, զի ազդեցաւ նմա խորհուրդ թագաւորին: Եւ թագաւորն առաքեաց զզօրագլուխն իւր բերել զնա. և նա քամեաց զթուրն և եհար զզօրագլուխն և սպան զնա: Եւ ինքն երթայր յեկեղեցին, և սուրն արիւնոտ ՚ի ձեռին իւրում և աղաղակէր. «Տեսէք և լուարուք ազգք և հասակք ամենայն, զի ջնջել կամի Անդրոնիկոս զթագաւորութիւնս Յունաց:» Եւ լուան զայս, և ժողովեցան յեկեղեցին իշխանք և զինուորք և ամբոխ քաղաքին, և ամենեքեան խոցեալ էին յԱնդրոնիկեայ և բարկութեամբ կային ընդ նմա. և ասացին ցՓսիլկն (ցԻսահակն). «Թագաւորեա դու ՚ի վերայ մեր, և անցցէ մրրիկս այս:» Եւ փութացուցանէին զՊատրիարքն օծել զնա թագաւոր. և քարոզեցաւ ընդ քաղաքն: Եւ լուաւ Անդրոնիկոս և եմուտ ՚ի նաւ և փախեաւ. և հասեալ նմա դարձուցին. և ՚ի բերելն պատառ

---

(1) Այն է Իսահակ Բ Անգեղոս կոչեցեալ, զի որդի էր Անդրոնիկոսի Անգեղոսի.

պատառ կոտորէին զնա, և բերեալ ՚ի քաղաքն այրեցին զնա հրով ՚ի Թուին Ասորւոց ՌՆՂԷ (1497)։

Իսկ ՚ի Թուին Ասորւոց ՌՆՂԳ (1493) և Հայոցն ՈԻԳ (623), իջաւ Սալահադինն և ամենայն ամիրայքն միջագետաց ՚ի վերայ Քարաքոյ(1). և ժողովեցան Փռանկք, և գնացին փախուցին զնոսա և ամրացուցին ըզքաղաքն։

Ի սոյն ամի Թագաւորն Երուսաղեմի Պաղտինն (դ) անկաւ ՚ի ցաւս գոգութեան, և արար իւր փոխանորդ զքորորդին իւր տղայ, ասէին և նմա Պաղտին. և յետ սակաւ աւուրց մեռաւ, և Թագաւորեաց տղայ Պաղտինն։

Ի սոյն ամի գնաց Սալահադինն ՚ի Մուփարկինն և առ զնա. և դարձեալ գնաց ՚ի Մօսլ, և ոչ կարաց առնուլ զնա. բայց յոյժ նեղեաց զնոսա, մինչեւ երդուան նմա որ տան նմա հեծել և կացցեն 'ի հնազանդութիւն։

---

(1) Քարաքէ Քերեկ քաղաքն՝ յարեւելից Երուսաղեմի, յայնկոյս Յորդանանու, յորում կային առաջնոյն հատուածք ՚ի Հայոց, որպէս ցուցանեն ցարդ Յոյն բնակիչք տեղւոյն զեկեղեցին իւրեանց որ էր Հայոց. և բազումք իսկ ՚ի Յունաց խոստովանին ցարդ եթէ նախահարք իւրեանց էին Հայ ազգաւ և ապա յարեալ ՚ի յունական եկեղեցին։ Գոյ ՚ի դրատան սուրբ Յակոբայ Յայսմաւուր ձեռագիր յիշատակ արարեալ Լեւոնի Ե արքայի Կիլիկիոյ՝ եկեղեցւոյն Քերեկոյ, ՚ի Թուին Հայոց ՉՀԹ։ Աստ եկեալ Ռուբէն Բ իշխան Կիլիկիոյ յամի 1181, առ զդուստր Ռենադեայ տէր Շադիկեան Փըռանգ իշխանին։ Սմբատ. յեր 105։

Եւ 'ի նոյն ամի մեռան Նորադինն և Խուդբադինն (1) տէրն Ամթայ և Մերտնայ, որ էին ազգականք միմեանց յԱրթուխեայ անտի. զի բազում եկեղեցիս քակեաց Նորադինն 'ի յԱմիթ, վասն որոյ և հարաւ բարկութեամբ 'ի Տեառնէ, և էառ զիշխանութիւնն հարձորդին իւր Խուդբադինն (2), և զՄերտինն էառ Հասամադինն որդին Խուդբադնին։ Եւ 'ի մեռանելն Նորադնին, Սումըդդինն տէրն Բալուայ էառ զԽարթբերդ։ Եւ յայսմ ժամանակի մեռաւ ամիր Սկրանն տէրն Խլաթայ, որ էր այր բարեմիտ և ողորմած առ աղքատս և կարօտեալս, և բազում դիւրութիւնս առնէր եկեղեցեաց և քրիստոնէից. և յետ մահուան սորա էառ զաւեզին նորա Բակտամուր (Պէք—Թիմուր) ծառայն իւր։

Եւ 'ի.այն ժամանակս բրինձն Անտաքոյ արար սէր ընդ Սալահադնին, և նենգիւ որսաց զՌուբէն զտէրն Կիլիկիոյ, և ըմբռնեաց զնա և եդ 'ի բանտի. և եմուտ 'ի Կիլիկիա և յամեաց ամառն մի բոլանդակ, և ոչինչ կարաց առնել նմա, զի պարոն Լեւոն եղբայր նորա իմաստապէս վարէր զիշխանութիւն երկրին։ Եւ բրինձն ել ամօթով յերկրէն. բայց յետոյ տուին կամաւ իւրեանց ոսկի և զԹիլն և զԱտանա, և հանին 'ի բանտէ զՌուբէն. որ և յետ այնորիկ առին զտեղիս իւրեանց և արհամարհեցին զբրինձն (1)։

---

(1) Քոթպ—էտտին Էլ—Կազի որդի էր Նէճմ—Էտտին Ալեայ որդւոյ Դիմուրտաշայ՝ Ուրդոքիա իշխան Մերտինոյ և Մուփարկինոյ։

(2) Իմա՝ զԱմիթն էառ միւս Խուդբադին հարձորդի Նուրէտտինի։

Յայնմ ժամանակի եղեւ պատերազմ 'ի մէջ Թուրքաց և Քրդաց, և յերկարեաց չմիրն զամս ութ զկնի միմեանց. և էր պատճառն այսպիսի։ Թուրքմանքդ որ խարանօք(2) և բայօթեայք շրջին, և զձմեռնային յեղանակին գային խարանօք իւրեանց 'ի կողմն հարաւոյ սակս կակղութեան օդոյն, և զամառնային ժամանակն ելանէին 'ի կողմն հիւսիսոյ վասն բարեխառն և անխորշակ օդոյն. և 'ի գնալն և 'ի դառնալն դողանային զնոսա Քրդերն և զօրանային։ Եւ յայնմ ամի դը-

---

(1) Սմբատ ասէ (յեր. 104) եթէ Ռուբէն առ 'ի հաճել զդեղխութիւն իւր եկեալ յԱնտիոք. ձերբակալ լեալ յիշխանէն արկաւ 'ի բանտ. որ և ապա արարեալ առ Բակուրան քեռի իւր՝ տէրն Պապեռոնի, առաքեաց մայրն Ռուբէնի ձեռ 'ի պատանդի փոխանակ որդւոյն՝ մինչեւ հատուցէ ըզփրկանս իւր և կարեաց. ասէ, Ռուբէն զին անձին իւրոյ և ետ զՍարուանդիքարն, զԹիլն և զՃկերն և հազար դահեկան ոսկի։ Եւ եղեւ այս 'ի թուին Հայոց ՈԼԴ (1185)։ —Վարդան. յեր. 174։ Միք. Չամչեան. Հտ. Գ. յեր. 141։

(2) Յօրինակին խարգահաւ։

ամին երկու. հարիւր Բուրդ դարձեալ յերկիրն Շաղթնայ վասն մխատու, և սպանին զնոսա. և վասն այսորիկ ժողովեցան տասն հազար Բուրդ, և Թուրքմանքն կրկին քան զնոսա, և եղեւ կռիւ մեծ յերկիրն Շաղթանայ, և յաղթեցաւ Բուրդն և իսպառ կոտորեցան: Եւ յետ այսորիկ ձայն եղեւ դարձեալ ազգն Բրդաց, և ժողովեցան ՚ի կողմանցն Ածրնայ և ՚ի Տուրաբդինայ երեսուն հազար, նոյնպէս և Թուրքմանքն առանց թուոյ. և կռուեցան մերձ Ածրնայ. և դարձեալ զօրացաւ Թուրքմանն և կոտորեցին զԲուրդն հարուածս մեծամեծս յոյժ, և իսպառ սատակեցին զնոսա. և գնացին առին զբանակատեղս նոցա: Եւ վասն այսորիկ հատաւ ազգն Բրդաց ՚ի Միջագետաց. քանզի սակաւ զերծեալք անկան յերկիրն Կիլիկեցւոց և յամուր տեղիս ուրեք ուրեք:

Բայց քրիստոնէից ոչ մեղանչէին Թուրքմանքն, մինչեւ գտան զոմանս Բրդեր թագուցեալ ՚ի տունս քրիստոնէից, և այսու պատճառաւ սկսան նեղել զքրիստոնեայսն ՚ի տեղիս տեղիս: Եւ էառ Թուրքմանն զԵրալթին և զԹըլպամէ (1). կոտորէին և վա-

---

(1) Աբուլֆարաճ՝ որ ՚ի Քրոնիկոնի իւրում (յէր. 406) հետեւի ասորական բնագրին Միխայելի. փոխանակ անյայտ բառիցս Արշալթէ և Թըլպամէ ունի՝ Կարբալէ և Թըլպամէ, որք էին մենաստանք երկու, զորս առեալ Թուրքաց այրեցին և զկրօնաւորսն ՚ի սուր հանին:

ձառէին զքրիստոնեայսն, մինչեւ ամենայն ամիրայքն սկսան զգուշանալ երկրի իւրեանց։

Ի Թուին Ասորւոց ՌՆՂԸ (1498) և Հայոց ՈԻԵ (625), ժողովեցաւ Սալահադինն ամենայն հնազանդելովք իւրովք՝ Եգիպտացօք, Աթուրացօք, Միջագետօք, և խաղաց գնաց 'ի վերայ Փռանգին մերձ 'ի Տաբարիա (1)։ Եւ ելին Փռանգքն և Թագաւորն Երուսաղէմի ընդդէմ՝ նոցա, և յիշեցաւ մեղք քրիստոնէից առաջի Տեառն, և քննեցաւ յարդար իրաւանց նորա, և եղեւ հարուած և բարկութիւն 'ի Տեառնէ 'ի վերայ Փռանգաց։ Եւ զօրացան Այլազգքն և կոտորեցին և առին 'ի սուր սուսերի իւրեանց զՔրիստոսսէր զօրքն Փռանգաց. և կալան զԹագաւորն Երուսաղէմի և զամենայն Փրերսն, և եղեւ ուրախութիւն մեծ Թուրքաց ազգին ։ Բայց նախ քան զպատերազմին փոխեաւ կոմսն Տրապօլեայ , և զնա ասեն պատճառ քրիստոնէից կործանման, զի բանս եդեալ էր յառաջագոյն ընդ . . . ան ։ Իսկ Սալահադինն եառ զՏաբարիա , և կոտորեաց և աւերեաց զնա . և սպան ձեռօք իւրովք ըղՌնաղան զբրինձն Շնապրոյ և երեք հարիւր Փրեր , և լուացաւ արեամբ նոցա . և ապա գնաց 'ի յԱքայ , և իշխանքն որ կային անդ , փախեան նաւով 'ի Սուր . և եառ զԱքայ , և եառ գերի բազում յոյժ ։ Եւ Կեսարիա և Նապլէթ և Յոպպէ թողին զքաղաքն , և դիւրաւ տիրեաց 'ի վերայ նոցա Սալահադինն ։ Եւ ոչ ոք կարէ պատմել զնախատինս քրիստոնէից՝ զլթուք եւ զանհարութիւն . . . նոցին ։

---

(1) Յաւուրս անոր արքային Երուսաղէմի Գաղոնի գոդն կոչեցելոյ, կուեալ էին Փռանգք դաշինս ուխտի ընդ Սալահատինի, զոր Ռինալտ ոմն Շադիլեօն իշխանն Քերեկոյ աւերեաց՝ աւազակելով զկարաւան ուխտաւորացն Մահմետականաց որ երթային 'ի Մէքքա. վասն որոյ և Սալահատին հրամանս արձակեաց յԵգիպտոս, յԱսորիս և 'ի Միջագետս ժողովել ամենայն խոլանոց ընդ դրօշու որբազան պատերազմին։ Եւ Սալահատին արշաւեաց բանակաւ իւրով 'ի Տիբերիա և առ զայն, ուր հասեալ Կին ոմն Լուսինեան Թագաւորն Երուսաղէմի հանդերձ իշխանօք, վտանգեալ 'ի պատերազմին անկաւ 'ի ձեռս թշնամեաց, գերեցաւ և խաչն սուրբ։ Իսկ Ռեմոնտ կոմս Տրապոլսի նախ քան զպարտել քրիստոնէից՝ փախուստ ետ 'ի պատերազմէն, և զկնի սակաւու մեռաւ յուսահատութեամբ։ Վարդան, յեր. 177։

Իսկ Սալահադինն գնաց 'ի յԱսկալոն և երդուաւ նոցա թողուլ զնոսա կենդանւոյն ուր և կամիցին գնալ ։ Եւ ետ նոցա զթագաւորն Երուսաղէմի , և առ զքաղաքն . և բնակիչքն առին զթագաւորն և գնացին 'ի Սուր ։ Եւ ապա եկեալ Սալահադինն 'ի վերայ Երուսաղէմի , և աւուրս ինչ պաշարեաց զնա . և զի ոչ գոյր նոցա ուստեք ակնկալութիւն , խորհեցան տալ զքաղաքն . և կտրեաց Սալահադինն գինս բնակչաց քաղաքին դահեկանս տասն , զի տացեն նմա ըստ գլուխ և երթիցեն յո և կամիցին (1)։ Եւ արարին այնպէս, և ետուն զքաղաքն. և որ ոչ կարաց գնել զանձն իւր, մնաց անդէն 'ի ծառայութեան։ Եւ ոչ ոք էր բաւական ժուժալ արտասուացն զոր հեղուին քրիստոնեայքն յելանելն յաստուածընկալ քաղաքէն. և որ մնացին 'ի տեղն՝ էին թուով քան հազար արք և կանայք. և 'ի նոցանէ չորս հազար ծերս և պառաւունս ազատեաց Սալահադինն, և եօթն հազար տղայս արու և էգ բաժանեաց զօրաց իւրոց. և հինգ հազար երիտասարդս առաքեաց 'ի Մսր գործել ազիւս 'ի շինութիւն պարսպաց, և հինգ հազար եթող Երուսաղէմ շինել զպարիսպ նորա։ Եւ զՏաճարն լուացին արեամբ քրիստոնէից, և դարձեալ լուացին վարդաջրով. և եղին սահման ոչ մտանել 'ի նա քրիստոնէից, և որ մտանէ՝ մեռանի։ Եւ արար ըզտաճարն Յարութեան ընդ հարկաւ, զի որ մտանէ՝ տացէ կարմիր մի։ Եւ դարձաւ գնաց Սալահադինն 'ի վերայ Սրոյ (Տիւրոս)։ Եւ եկն յաւուրսն յայնոսիկ կոմս մի Մարգիս անուն (2), այր հզօր և իմաստուն, և 'ի ձեռն նորա փրկեցաւ Սուր։ Եւ Սալահադինն գնաց և էառ զՍայդա և զՊէրութն և զՃէպէլն և զԹոպնին, և տիրեաց նոցա։

---

(1) Վարդան ասէ՝ յարուաց առ դահեկանս տասն և յիգաց՝ հինգ. յեր. 177։

(2) Մարքիզն ոչ է անուն մարդոյ՝ այլ պատուոյ, և կոչէր ինքն Գոնրադոս տը Մոնֆէրրա, որոյ հայրն 'ի բանտի կայր 'ի Դամասկոս։

Ի թուին Յունաց ՌՇ (1500) և Հայոց ՈԻԷ (627), էառ Սալահադինն զՇաւպաք և զՔարաք որ 'ի վերայ Ծովուն (1). և գտան 'ի Քարաք քարայր մի մեծ յոյժ՝ լցեալ թերապարզ արծաթով, որ հալ մի պակաս էր առ 'ի սրբել զնա ամենեւին, և ոչ կարացին 'ի պէտս առնուլ զնա, և ոչ գտաւ արուեստաւոր այնպիսի որ գիտէր զհանգամանս նորա։ Եւ անտի դարձաւ և եկն և էառ զԼատիկն և զՃէպէլէ և զՍեհունն և զՊաղրաս և զԴարպսակն։

Եւ 'ի նոյն ամի որդին Կլիճ առսլանայ ժողովեաց զօր պատերազմել ընդ հօրն. զի Հասան զօրապետն սուլտանայ գայթագուցեալ էր զսուլտանն 'ի վերայ որդւոյն. և յորժամ կամէին դիմել միմեանց պատերազմաւ, Ահամ՝ շահն փեսայ սուլտանին, տէրն Եզնկային, անցաւ 'ի մէջ և արար խաղաղութիւն. և բազումք որ ընդ որդւոյն էին, ամաչեցին 'ի ծերութենէ սուլտանին, և խափանեցաւ պատերազմն. բայց յետոյ սուլտանն կոտորեաց 'ի Թուրքէն որ միաբանեալ էին ընդ որդւոյն՝ չորս հազար անձինս, և զՀասան զօրապետն սպանին Թուրքն։ Եւ 'ի նոյն ամի ամիրեաց Մելիտինոյ մի 'ի յորդւոցն սուլտանին, որում՝ անուն էր Խայր շահ Ըզադին (1)։

---

(1) Քերեկ է անդր քան զմեռեալ ծով. իսկ Շաւպաք 'ի հարաւոյ նորա։ Զայսոսիկ քաղաքս ոչ Սալահատին՝ այլ Մալէք-Ադէլ եղբայր նորա առ ասէ Իպն-Ալադիր։

Ի Թուին Հոռոմոց ՌՇԱ (1501) և Հայոցն ՈԻԸ (628), շարժեցաւ տունն Փռանգաց, և ելին ընդ ծով առանց Թագաւորի բազմութիւն ազգաց յոյժ, և իջան 'ի վերայ Աքայոյ, և պատերազմեցան ընդ քաղաքն, և ոչ կարէին առնուլ զնա, զի կային անդ հարիւր հազար պատերազմող. և Սալահադինն ոչ իշխէր պատերազմիլ ընդ նոսա։ Եւ շինեցին Փռանգքն տունս բազումս և եկեղեցիս և չորս հազար ջաղացս։ Յետոյ եկն և Թագաւորն Ալամանաց 'ի վերայ Կոստանդնուպօլսի և պատերազմեցաւ ընդ նոսա, և ապա յետոյ արար ընդ նոսա սէր, և անց յայսկոյս. և եկին ընդ անձուր և ընդ դժուար ճանապարհ առաջնորդութեամբ Յունաց, և կուտեցան 'ի վերայ Թուրքմանց և կոտորեցին զբազումս։ Եւ սուլտանն արար սէր, և ետ նոցա ճանապարհ, և եկին 'ի Սելեւկիա. և անդ Թագաւորն նոցա խեղդեցաւ 'ի գետն, և բերաւ մարմին նորա յԱնտաք (2)։ Յետոյ եկին երկու Թագաւոր այլ (1) և գնացին յԱքայ և առին գերի բազում. և ապա խնդրեցին ՚ի Սալահադինէն փոխել զծառայսն որ ՚ի Դամասկոս զՓռանկսն՝ ընդ ծառայսն զոր նոքա ունէին. և Սալահադինն ոչ կամեցաւ։ Եւ ապա հանին Փռանկքն քսան և հինգ հազար ծառայս և կոտորեցին, և կուտեցին ՚ի վերայ միմեանց, և արարին ՚ի վերայ աղօթս՝ որպէս և արար Սալահադինն. և եղին զքորորդին Անկլթեր (Անգղիոյ) (2) թագաւորին կոմս Աքայոյ, և արարին խաղաղութիւն ընդ Սալահադինին. զի եհաս համբաւ ինչ յերկրէն իւրեանց և դարձան և գնացին։ Եւ Սալահադինն շինեաց զպարիսպն Երուսաղէմի ամրագոյն քան զառաջինն։

---

(1) Խայրշահ—Ազադին. այն է Մոհէլ—էտտին Քայսար—Շահ, էր որդի Խլիճ—ասլանայ Բ։

(2) Փրետերիկոս Ա Պարպարոսսա կոչեցեալ, որ 'ի լոգա-

Ի թուին Յունաց ՌՇԲ (1502) և Հայոց

նայն ՚ի գետն Սելեւկիոյ. այն է Կէօք-սու. հեղձաւ յամի 1190։ Ներսէս Լամբրոնացի։ — Հայրապետացն Սամուէլի։ — Վարդան, յէր. 179։

(1) Այս Լուսինեան ազատեալ ՚ի գերութենէ, հակառակ երդմանն զոր ետ Սալահատինի, երթեալ պաշարէ զՊտղոմայիդ։ Յայնմ միջոցի հասին յԵւրոպիոյ նոր խաչակիրք Տանիմարգացիք, Անգղիացիք, Ֆլամանդք, յորս կային այլք իշխանաւորք և արքեպիսկոպոսն Կանդուրբերիի։ Հուսկ ապա հասին անդ և Փիլիպպոս արքայ Գաղղիոյ և Ռիչարտ Թագաւոր Անգղիոյ։ Վարդան, յէր. 179։ Տես զընդարձակ պարագայս առման քաղաքին. ՚ի պատմութեան խաչակրաց Միշոտի. Հա. Բ. Գլ. 8։

(2) Հէնրի տը Շամբանեը, որ ընտրեցաւ ապա Թագաւոր Երուսաղէմի յամի 1192, և նստէր ՚ի Պտղոմայիդ (Աքքա)։

ՈԻԹ (629), *եղեւ հալածական յորդւոց իւրոց Խլիճ ասլան, և ժողովեցին զնա Կօնացիքն (Իկոնիացիք) առ իւրեանս. և աւագ որդի նորա ամբարձ զգլուխ իւր յԱղսարայն*(1), *և անհամբեր եղեալ հայրն ժողովեաց ըստ կարի զօրս գնաց 'ի վերայ որդւոյն, և 'ի ճանապարհին հիւանդացաւ և մեռաւ, և դարձուցին զնա 'ի Կօնն: Եւ էր ընդ նմա որդի մի կրտսեր, զոր եդին 'ի տեղի հօրն. և Խլիճ ասլան մեռաւ 'ի թուին Յունաց* ՌՇԴ (1504), *թագաւորեալ ամս երեսուն և ութ, և մնաց թագաւորութիւնն երկոտասան որդւոց իւրոց:*

Իսկ 'ի թուին Յունաց ՌՇԵ (1505) *և Հայոց* ՈԼԱ (631), *մեռաւ և Սալահադինն 'ի Դամասկոս, և եթող քսան և երեք որդի*(2), *որ և զաւագ որդին կացոյց 'ի Դամասկոս և զերկրորդն 'ի Մսր, և զերրորդն 'ի Հալպ. և անուանեաց զնոսա թագաւորս և սուլտանս, և զայլսն ընդ ձեռամբ նոցա*(3): *Եւ կայր եղբայր նորա Մելիք Ադէլ (Մալէք Ադէլ) անուանեալ և ետ նմա զՈւռհա և զԽառան* և զՄուփարկին և զՍամուսատ և զԽլձպար, և զՌապաք և զՇաւպաք, և զայս հոգացաւ մտօ ՚ի կատարած կենաց իւրոց ։ Իսկ Մօսլայ տէրն (1) արար միաբանութիւն ընդ եղբարսն իւր ընդ տէրն Ճզիրոյ և ընդ տէրն Մերտինայ և ընդ տէրն Սաղայ և ընդ Սնձարայ, և եկն նորօք առնուլ զԽառան . և հիւանդացաւ ՚ի ճանապարհին և դարձաւ ՚ի Մօսըլ, և այլքն ցրուեցան ։ Եւ Մելիք Յեսուն գնաց և էառ զՄծբին և զՍաղա և զԴապուրն, և այլ ամիրայքն հնազանդեցան նմա որպէս և եղբօր իւրում Սալահադնին ։ Եւ գնաց Մելիք Յեսուն ՚ի կողմանս Հայոց ՚ի Խլաթ, և ոչ կարաց առնուլ զնա, և դարձաւ ։ Եւ ՚ի նոյն տարւոջ մեռաւ Աշրաֆին (Ազզ—էտտաւլին) տէրն Մօսլայ և առ զտեղի նորա Նորադին որդին իւր ։

---

(1) *Աւագ որդի Խլիճ ասլանայ էր Քութպ—էտտին Մալէք Շահ, որ տիրեաց Մելետինի, Կեսարիոյ և Կողոնիոյ:*

(2) *Սալահէտտին եթող եւթն և տասն որդիս և եթ, և դուստր մի:*

(3) *Մալէք Աֆտալ սուլտանացաւ 'ի Դամասկոս, տիրելով և Պաղեստինի. երկրորդն Մալէք—Ազիզ՝ յԵգիպտոս. երրորդն Մալէք—Դահէր՝ 'ի Հալապ:*

Յայսմ ամի Լեւոն քաջ և անուանի իշխանն Հայոց ըմբռնեաց զԲրինձն Անտաքոյ (Պոէմոնտ), և արկ զնա ՚ի չարչարանս՝ փոխարինել նմա զչարչարանս եղբօր իւրոյ Ռուբինոյ ։ Եւ եկն կոմն Աքայոյ Միր Հեռի (Հենրի), մեծաւ աղաչանօք թափեաց զԲրինձն և առաքեաց յԱնտաք (2) ։ Եւ ինքն արիագոյն Լեւոն տիրեաց եւթանասուն և երկու բերդի, էր զոր նախնիքն իւր կալեալ էին և էր զոր ինքն էառ ՚ի Յունաց և ՚ի Թուրքաց։ Եւ անկաւ ահ և երկիւղ նորա ՚ի վերայ ամենայն ազգաց սահմանակցաց աշխարհին իւրոյ։ Եւ ապաւինեցան ՚ի նա որդիքն սուլտանայ. և եկն առ նա ՚ի հնազանդութիւն Մելիքն Աբլաւթին (Ալպխոթան) որ տիրէր վերագոյն աշխարհացն. և ել մեծն Լեւոն և էառ բերդ մի մերձ Կեսարիոյ և ետ նմա։

---

(1) Ազզ—էտտոլին Մասուտ՝ Թոռն Ջանգեայ ։

(2) Սմբատ. յեր. 108 ։—Միշոտ. պատմութիւն Խաչակրաց. Հտ. Բ. Գլ. 9. յեր. 178 ։

Իսկ թագաւորն Մարաց Մելիք Ադիլն եկն ՚ի Դամասկոս ՚ի վերայ եղբօրն (Աֆտալյ), և գնաց հօրեղբայրն Մելիք Յետլն առնել խաղաղութիւն ՚ի մէջ նոցա, և արար նենգութիւն մեծ, զի դեղեաց զՄելիք Ադիլն, որ և ընդ հասանելն ՚ի Մար մեռաւ. և առ զԵգիպտոս ՚ի յինքն և զՄելիք Սալէհն խաբեաց թէ՝ «Գնա կացիր խաղաղութեամբ ՚ի հանդարտագոյն վայրսն ՚ի Սամուսատ և ՚ի յՈւռհա և ՚ի Խառան և յՌաղս, և ես կացից ընդդէմ Փռանկին և այլոց ազգաց։» Եւ հաւանեցաւ նմա և ասէ. «Առից զգանձ հօր իմոյ և գնացից. և դու կալ զԴամասկոս։» Եւ նա ասաց. «Արի գնա, և ես զամենն բառնամ և առ քեզ յղարկեմ։» Եւ ել և գնաց ՚ի յՌաղս և ոչ ընկալան և ոչ յՈւռհա և ոչ յայլսն. և գնացեալ ՚ի Սամուսատ, և զայն ետուն ՚ի ձեռս նորա, զի այնպէս էր պատուիրեալ ծածկաբար։ Եւ Մելիք Յետլն շրջեալ և տեսեալ զտունս գանձուցն Սալահադնին՝ ագահեցաւ և ոչ ետ . այլ մտեալ ՚ի տուն մի լցեալ մատուտակ , և զայն եբարձ քսան բեռն և մատնեհարեաց ծածկաբար և առաքեաց առ նա ։ Եւ յորժամ ետես (Մէլիք Սալէհ) զխաբէութիւնն, խոցեցաւ անմխիթար և ամաչեաց յոյժ . այլ ոչ էր ձեռնհաս առնել նմա ինչ , և ընկէց զդատաստանն յԱստուած որ յամենայնի բաւական է հատուցանել ։

Իսկ պարոնն Լեւոն որդին Ստեփանէ օր ըստ օրէ երթայր և զօրանայր Աստուծով յաջողեալ և յամենեցունց փառաւորեալ . և յայնժամ յորժամ տկարացոյց Աստուած շուրջանակի զթշնամիս նորա և ՚ի կոր կործանեաց զամենայն հակառակորդս նորա , տիրեաց նա լիով երկուց Կիլիկէից լերամբք և դաշտօք , քաղաքօք և ամրական դղեկօք . և առ քաջութեամբ իւրով և զհասարակն Սուրացւոց և մասունս ոչ սակաւս յերկրորդ Կապադովկացւոց , յԵրրորդ Հայոց , զոր ումանք Առաջին անուանեն Հայք . գրաւեաց ընդ իւրով իշխանութեամբ և յԱսորեստանեաց գաւառաց ։ Եւ ցուցաւ ինքնագլուխ և ձոխ իշխանութեամբ , զի ոչ ոք տիրէր ՚ի վերայ նորա . և համբաւ արիութեան նորա թուլացուցանէր զջիլս անօրինաց և պարզէր զերեսս քրիստոնէից և լնոյր խնդութեամբ և ուրախութեամբ, վասն որոյ փութային պատուել զնա թագիւ. թագաւորն Յունաց վասն պատճառին՝ զի թերեւս հնար լիցի նովաւ յաղթել Թուրքացն որ բռնացեալ կային զիշխանութիւն նորա. իսկ թագաւորն Փռանգաց վասն դաշանց սիրոյն զոր ունէին ընդ Հայք ուխտիւք ՚ի հին ժամանակաց. և վասն այսորիկ երկոքին առաքեցին նմա թագ ոսկիակապ, և պատուեցին զնա յաղթութեան պսակաւն ըստ վայելչման և պատշաճի արժանաւորութեան իւրում (1): Եւ այսպէս վերստին նորոգեցաւ թագաւորութիւն Արամեան զաւակին, և թագն Հայկազանց և Սենեքերիմեանց եդաւ ՚ի գլուխ արժանաւորանց զարմին Լեւոնի ՚ի ՈԽԵ (645) թուին Հայոց. այր քաջի և ազատամիտ և արիական և հեզ և մեծահաւատ, որ և բազմացոյց զպարգեւս աստուածպաշտութեան, ելից վանօրայիւք և անապատաւորօք զաշխարհս իւր, և շինուածօք եկեղեցեաց, ըղմասն ազնիւ և զպայծառութիւն երկրի իւրոյ տալով նոցա և նուիրելով Աստուծոյ արժանաւորութեամբ և կտակօք անլուծիւք: Եւ էր ահագին առ օտարսն և բարեմիտ առ իւրմն․ ահաւոր առ անիրաւեալսն և ողորմած առ որբս և այրիս և առ աղքատս․ և հեզ և խոնարհ առ ամենեսեան։ Եւ այսպէս գրուատիւք թագաւորեալ ամս քսան երեք(1) հանգեաւ ՚ի Քրիստոս բարի անուամբ և ուղղափառ հաւատով կենցաղավարեալ, թողլով ժառանգ թագաւորութեանն դուստր մի Զապէլ անուն, յանձնելով զնա մեծ իշխանին Սիր Ադամայ(2) սոսկալի երդմամբ տալ զնա որդւոյ թագաւորին Ունկուայ՝ մկրտելով զնա Հայ դաւանութեամբ, զի դեռ երախայ էր, որոյ ննջել Ադամին(3) ըստ բնական ատելութեանն Յունաց ընդ ազգիս Հայոց, քանզի Հոռոմ էր ազգաւ, խորհէր ՚ի միտս յինքն առնուլ զիշխանութիւնն․ վասն որոյ փութապէս ՚ի խնամոցն Աստուծոյ առնու զարժանն պատուհաս, սպանեալ ՚ի Հաշիշեացն սակաւ ժամանակս ինչ կալեալ զպայլութիւնն։ Եւ յետ նորա տուաւ նա որդւոյ բրինձին Անտիոքու Փիլիպ անուն, որ սաստկութեամբ գնայր ընդ Հայոց՝ ՚ի խրատս հօր իւրոյ խաբեալ, և թագաւորեալ ամս երկու՝ (1) վախճան էառ ՚ի կապանս ։

---

(1) Սմբատ, յեր. 108—109:—Վահրամ, յեր. 215:— Կիրակոս (յեր. 91) պատմէ հանդերձ պարագայիւք զպայմանս որով հաճեցաւ կայսրն Ալամանաց և պապն Հռովմայ պատուել զԼեւոն արքայական թագիւ:

---

(1) Լևոն Բ․ թագաւորեաց ամս 24․ և ամենայն ամք իշխանութեան նորա եղեն 34․ տևեալ յամէ 1185—1219։

(2) Սիր Ադամ էր պայլ և տէր Պաղրասայ, զորմէ ասէ Միխայէլ որպէս և Կիրակոս (յեր․ 109) թէ էր ազգաւ Յոյն․ և սպանեալ ՚ի Հաշիշեացն՝ անդ ՚ի տեղի նորա Կոստանդին տէր Բարձրբերդոյ։ Իսկ անուն Ունկուայ, որով նշանակի ազգն ունկառացւոց, թուի եթէ սխալ իցէ օրինակչաց։

(3) Յօրինակին դնի ափփէն, որ յայտնի սխալ է փոխանակ դնելոյ Ադամին ըստ որում եդաք․ և է Ադամ պայլն։

Այլ թերեւս կամք վերին խնամոցն անօրէնէր և դարձուցանէր զմարդկօրէն անհաստատութիւնն և զչարաբարութիւն ոմանց ՚ի բարիս ․ քանզի զայն գաւառակն փոքրիկ զոր ետ Աստուած հայկազանց ՚ի մխիթարութիւն լքեալ և խոնարհեալ ազգին՝ փոխան բարձրացեալ թագաւորութե̄ նոցա, զայն ոչ կամեցաւ տալ ՚ի ձեռն օտար ազգի ․ վասն որոյ յետ բազում ժխորմանց և ամբոխից և վիճմանց՝ ընտրեցաւ որդին Պարոն Կոստանդնեայ ՚ի թագաւորութիւն, զոր ընտրեալ էր Տէր յորովայնէ գեղեցիկ հասակաւ և բարի խորհրդով, մեծահոգի և երկայնամիտ, հեզ և հանդարտ ՚ի տիս մանկութեան ․ և տուաւ նմա յամուսնութիւն շառաւիղն օրհնութեան ապառուհին Զապէլ, անթերին ՚ի գովութենէ աստուածապաշտ և երկիւղած կնոջ, ողջախոհ և ցածուն և անպճարդասէր և լալին, լիահաւատ և մեծայոյս, Քրիստոսասէր և որբասէր, աղօթասէր, և ծերունի հանճարով ՚ի տղայութեան հասակի ․ և լցաւ բանն Սողոմոնի թէ՝ “՚ի տեառնէ պատշաճի կին առն” ․ զի վայելէն նոքա ՚ի մի մարմին կատարիլ 'ի Քրիստոս օրինօք։ Վասն որոյ սիրեաց զնոսա Տէր և եհան 'ի միջոյ նոցա զմերենայն սատանայի, որ զառաջինն հակառակէր ըստ բնական խորոյ չարութեանըն. և յաջողեաց նոցա Տէր յամենայնի, և ետ նոցա ուստերս և դստերս ⑴։ Եւ է այժըմ թիւն Հայոց ՈՂԵ (695) ⑵։

---

(1) Կիրակոս դնէ ամս չորս, յէր ․ 109 ։ Իսկ Վարդան դնէ համաձայն Միխայէլի ամս երկու ․ յէր ․ 185 ։

Այլ որ ինչ 'ի միջոցի սոսա եղեն, և զայն ասասցուք համառօտ։

Ի ժամանակս թագաւորութեանն Հայոց Լեւոնի, յորում էր թիւն Հայոց ՈԿԵ (665) և 'ի տէրութեանն Կապադովկացւոց աշխարհին Խոսրով շահ սուլտանին ⑶ և 'ի ժամանակս Մելիք Յեադ սուլտանին որ բռնացեալ ունէր զԵգիպտոս և զԵրուսաղէմ և զԴամասկոս և զՄիջագետս Ասորւոց և զԽլաթայ իշխանութիւնն, եկին զօրքն Փռանգաց յԱքայ հրամանաւ պապուն Հռոմայ, առնուլ 'ի Տաճկաց զաստուածակոխ քաղաքն Երու-

---

⑴ Կիրակոս, յեր. 110. —Վարդան, յեր. 185—186։

⑵ Միւս թարգմանութիւնն աստանօր աւարտէ զպատմութիւն իւր, օրհնութիւնս մաղթելով նորապսակ ամուսնոյն թագաւորելոյ։ Իսկ որ ինչ յետ այսորիկ՝ պատմի հանդերձ կրկնութեամբ 'ի ժամանակակից արանց։ Իսկ Հայոց թիւն ՈՂԵ թուի թէ առաջին օրինակողին իցէ, որում համարի յաւելեալ և որ ինչ զՋալելէ և զՀեթմոյ պատմի. քանզի բանք պատմութեան Միխայէլի հասանէ մինչեւ ցառաջին ամ թագաւորութեան Լեւոնի Բ։

⑶ Կայխաթ—էտտին Քայխոսրու որդի Խլիճ—Ասլանայ Բ.

սաղէմ(1) *. զոր լուեալ զհամբաւ ելիցն նոցա ազգքն . . . նաց՝ սրտաբեկեալ լինէին . Իսկ որդի Մէլիք Յետլ սուլտանին զնացեալ յԵրուսաղէմ քակեաց զսուրբ Սիօն՝ որ կոչի մայր եկեղեցւոյ, և այլ բազում ուխտեր և եկեղեցիք , և զՆազարէթայ եկեղեցին , և Թողին զսուրբ գերեզմանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ՝ զՅարութիւնն և զԳողգոթայն, և զԲեթղահէմի եկեղեցին և զայլն ամենայն, և զպարիսպն Երուսաղէմի առ հասարակ քակեցին* (2) *: Եւ հայր նորա Մէլիք Յետլն արարեալ ժողով ամենայն զօրաց իւրոց առ ծովուն Տիբերական բանակեալ զանեղի առնայր : Եւ լուեալ Հռոմայեցի զօրացն՝ գե-*

---

(1) *Յայսմ արշաւանի գտանէր և իշխանն Կիպրոսի Լուսինեան և Թագաւորն Ունկարիոյ Անդրէաս, որոց տեսեալ զանյաջող ելս պատերազմին, առաջինն մինչ խորհէր դառնալ յետս՝ մեռաւ անդէն յԱսորիս, և երկրորդն դարձաւ յերկիր թագաւորութեան իւրոյ : Յետ մեկնելոյ նոցա հասին ՚ի Պաղեստին այլ զօրք խաչակրաց , Հռոմայեցիք, Գաղղիացիք, Իտալացիք, և մանն ընդ դրօշու Լէօպոլտի դքսին Աւստրիոյ, և անցին անտի նաւուք յարձակել ՚ի վերայ Տիմիաթու , յամի* 1217 *:*

(2) *Ըստ պատմութեան խաչակրաց Մալէք Մուազամ—Իսա որդին Մալէք—Ատէլայ յետ առնլոյ փռանգաց Տիմիաթու , ՚ի դիմել նորա յԵգիպտոս յօգնութիւն եղբօր իւրոյ Մալէք—Քամէլայ , չոգաւ նախ յԵրուսաղէմ և կործանեաց զամուրսն նորա և զաշտարակսն զորս Սալահէտտին շինեալ էր, բաց յամրոցէն Դաւթի. նոյնպէս և զամրոցն որ ՚ի Թափօրական լերինն և զայլ բերդորայս որ գտանէին ՚ի Պաղեստին . իսկ զկործանումն եկեղեցեաց ոչ ինչ յիշատակեն :*

մեցին գնալ 'ի վերայ նոցա պատերազմել. և որչափ սոքա մօտենային 'ի բանակն նոցա, նոքա օթևանօք մի ընդ կրունկն դարձեալ հեռանային։ Եւ յերկարէր այս 'ի բազում աւուրս, մինչև ձանձրացեալ քրիստոնէիցն կամեցան յետս դառնալ՝ երկուցեալք 'ի խաբէութեանց նոցա. և յաղագս անծանօթութեան աշխարհին խորհեցան դառնալ յԱկքայ, և համախմբութեամբ ամենայն զօրագլխացն խորհուրդ առեալ իջին յԵգիպտոս. և հասեալք 'ի քաղաքն որ կոչի Տիմիաթ պաշարեցին զնա և 'ի ներքս արկեալ ընդ յերկար, մինչև երրորդ մասն քաղաքին սատակեալ լինէր 'ի սովոյ և 'ի տարաժամ մահուանէ որ անկաւ 'ի նոսա. և ապա առին զքաղաքն և կոտորեցին զմնացեալսն առ հասարակ, և առին յաւարի զմթերս գանձուց նոցա, և լցան առ հասարակ ոսկւով և արծաթով։

Եւ յայսմ ամի մեռաւ Մէլիք Ադէլն. և որդիք նորա Մէլիք Քէմլն սուլտանն Եգիպտոսի և Աշրաֆն (1), և սուլտանն Դամասկոսի Մուղատամն (2), և այլ եղբարք նոցա առ հասարակ արարեալ ժողով բազում և անհամար զօրաց ։ Եւ ՚ի թուին Հայոց ՈԿԶ (666) մտին յԻգիպտոս, բայց յերկիւղէ լեալ ոչ իշխէին պատերազմել ընդ քրիստոնեայսն. և նոյն իսկ քրիստոնեայքն իբրև առին զՏիմիաթն (1), կամեցան երթալ առնուլ և զայլ քաղաքսն ։ Եւ էր ընդ նոսա թագաւորն Աքայոյ Ռէտձուանն (2) փեսայն Հայոց թագաւորին Լեւոնի և Դամիկին և Զապլիթայն, և այլք բազումք յիւրաքանչիւր կողմանց յարեցեալ ՚ի նոսա. և գնացեալ բազմութիւն զօրացն բանակեցան առ ափն Նեղոս գետոյ, ՚ի հարթայատակ դաշտի միում։ Եւ իմացեալ . . . նոցին լուծին զկապս ջրաքուխ տեղեացն, և եկեալ ջուրն շրջապատեաց զզօրսն և Մահմետականքն յարձակեալք ՚ի վերայ նետաձգութեամբ սկսան

---

(1) Մալէք—Աշրաֆ էր եղբայր Մալէք—Քամելայ և սուլտան Միջագետաց. Կիրակոս, յեր. 111.

(2) Անդրանիկն յորդիս Մալէք—Ադելայ՝ Մալէք—Քէմլն (Քամէլ) սուլտանացաւ յԵգիպտոս, երկրորդն Շէրիֆ—Էտտին Մալէք—Մոազամ—Իսա, զոր պատմիչք մեր Մուղատամ

անուանեն, եկաց իշխան Դամասկոսի. և այլք յորդւոց Մալէք—Ադելայ իշխանացն ՚ի վերայ Բաալպայու, Արեգ քաղաքի (Բաալբէք), Միջագետաց, և այլն։

(1) Տիմիաթ առաւ ՚ի փռանգաց յամի 1219 յամսեանն նոյեմբերի ։

(2) Ժան տը Պրիէն, զորմէ խօսի Միխայէլ կոչելով զնա Ռէտձուան, էր թագաւորն Երուսաղէմի, որ ամուսնացաւ ընդ դստեր Ամաւրեայ, որ էր ժառանգուհի անկեալ թագաւորութեանն Երուսաղէմի։ Եթող նա զՏիմիաթ ՚ի Մալէք—Քամէլ՝ դաշնաւորեալ ընդ նմա և առեալ փոխարէն զփայտ խաչին որ կայր առ նոսա ՚ի գերութեան յաւուրց անտի պատերազմին որ ՚ի Տիբերիա ընդ Սալահատնի, և դարձաւ յետս ՚ի Պտղոմայիդ ։

խոցոտել զամենեսեան մինչեւ անյոյս լինելոյ քրիստոնէիցն 'ի փրկութենէ . սուրն զքաղաքն զօր առին , եւ յանձն առին դառնալ յուրեանց աշխարհն. եւ դաշինս եդեալ հաստատութեամբ մնալ 'ի նոյն . երդուան եւ սուլտանայքն նոցա անխիստ պահել զամենեսեան : Եւ այսպիսի չիւթս հասեալ զօրացն քրիստոնէից՝ դարձան 'ի տուն իւրեանց :

Իսկ Մելիք Ադելն 'ի վախճանելն իւրում զաւագ որդին զՔէմիլն կացոյց իշխան 'ի վերայ այլոցն , եւ ամենեքեան հնազանդեցան նմա. զի էր բարեբարոյ եւ իմաստուն եւ առատաձեռն առ ամենեսեան . նոյնպէս եւ իւր եղբայրն Աշրաֆին , որք կացան զիշխանութիւն հօրն իւրեանց բազում ժամանակս (1) :

Ի թուին Հայոց ՈԿԷ (667) Քէքաւուզ սուլտանն Հոռոմոց , որդի Խոսրովշահ սուլտանին , յաղթող եղեալ քան զհայրն իւր , լինի պատճառ չարի ընդ թագաւորն Հայոց Լեւոն . եւ բազում զօրս ժողովեալ հասանէ 'ի Կիլիկիան Հայոց, եւ պաշարէ զամուր դղեկն որ կոչի Կապան , եւ բազում աւուրս մարտուցեալ ոչ կարաց առնուլ զնա : Եւ թագաւորն Հայոց Լեւոն զիւրոյ աշխարհին զօրքն գումարէր եւ փութայր ելանել ընդ առաջ նորա, և նորին զօրագլուխն Պարոն Կոստանդին գունդստապլն, որ էր քեռորդի Թագաւորին Լեւոնի, առեալ սակաւ ինչ գունդս ի զօրացն, յառաջ մատուցեալ ի կիրճս լերանցն, և պատահեալ գնդի միում ի զօրացն Թուրքաց, և անկեալ ի վերայ՝ զամենեսեան կոտորեաց, և ըմբռնեաց ի նոցանէ արս գլխաւորս՝ որք ազդեցին նմա զբուն զալուստ զօրացն սուլտանին, և աղաչէին դառնալ և բաւական համարել զյաղթութիւնն զոր արար։ Եւ նորա ոչ անսացեալ բանից նոցա և առաւել եւս յամառեալ և քաջալերեալ զզօրսն՝ հանդիպի ծանր զօրու կուռ վառելօք զինու, և ի պարտութիւն մատնի գունդստապլն և զօրքն որ ընդ իւր, և ըմբռնեցան ինքն և պարոն Կոստանդին լամբրոնցին և Կեռասին(1) և այլ մեծամեծ իշխանք, թող զորս կոտորեցան ի նմին տեղւոջ իբրև հազար այր պատերազմող, և ըմբռնեալ զնոսա դարձաւ ի Կեսարիա։ Իսկ Թագաւորն Լեւոն իբրեւ լուաւ զկոտորումն զօրացն և զըմբռնումն իշխանացն, առեալ զզօրս իւր արշաւէր ի միւս այլ կողմն աշխարհին Հոռոմոց, և բերէր աւար անթիւ և կոտորէր իբրեւ զաւազ առ ափն ծովու. և յետ սակաւ տուրց արարեալ սէր ընդ միմեանս, եւ Թագաւորն Հայոց | Լեւոն զերրդն | լուայ, եւ Թափեաց զիշխանսն որ ըմբռնեալ էին, եւ խոստացաւ տալ Հոռոմոց սուլտանին յամենայն ամի երեք հարիւր այր 'ի ծառայութիւն եւ հնազանդեցաւ նմա. եւ այս լինէր 'ի ծերութենէ եւ յանկարութենէ մարմնոյն, եւ իշխանքն ոչ էին ընդ նմա ուղիղ(1)։

---

(1) Այս Աշրաֆ որ զկնի մահուան հօրն տիրացաւ Խլաթայ , ետ 'ի կնութիւն զդուստր Իւանէի զԹամթա Վարդան , յեր . 182 : — Կիրակոս , յեր . 96 :

---

(1) Կեռասին. Թուի ասել Կիռ Սահակ. էր իշխան և տէր Մաղվայ և Սիկոյ բերդից. որ առաջիկայ գտաւ և հանդիսի Թագադրութեան Լեւոնի։ Սմբատ, յեր. 112։

Եւ 'ի սոյն իսկ յայսմ ամի արարեալ ժողով սուլտանին Քէքաուզ՝ զօրաց, առեալ եւ 'ի Թագաւորէն Հայոց օգնականութիւն, գայ յերկիրն Հալպայ 'ի Ռաբան, և առ ըզնա. Եւ անտի գնացեալ 'ի Թլպաշար, առնու և զԹլպաշար և զԱնթափ։ Եւ կամեցաւ գնալ 'ի վերայ Հալպայ. և երեք ամաւ յառաջ սուլտանն Հալպայ վախճանեալ էր՝ Մելիք Տահրն, և որդի նորա Մելիք Ազիզն մանուկ գոլով ամաց հնգից՝ ունելով զիշխանութիւնն։ Եւ էր նորա աթաբակ մի յոյժ իմաստուն, առաքեաց առ թագաւորն Հայոց Լեւոն, և խնդրեաց 'ի նմանէ օգնական լինել, թերևս զերծանիցին հնարիւք նորա 'ի հասեալ բարկութենէն. և խոստացան նըմա տալ բազում գանձս ոսկւոյ։ Եւ թագաւորն Հայոց այնուհետև 'ի հոգս անկեալ իւրով կորովամիտ իմաստութեամբն, առաքեաց զանխլաբար առ սուլտանն Հռոմոց մինչ 'ի սահմանս Թլպաշարոյ էր, գրեալ առ նա այսպիսի օրինակաւ. "Թագաւոր Հայոց Լեւոն, ողջոյն մերոյ Քէքաւուզ սուլտանիդ՝ 'ի տէր խնդալ։ Յուշ լիցի քեզ իբրև սիրելոյ մերում, զի իմացեալ հաստատեցաք եթէ քառասուն ամիրայ 'ի զօրաց քոց դաշինս եդեալ են տալ զքեզ 'ի ձեռն Աշրաֆին. և դու այսուհետև զօգուտ անձին քո խորհեաց, զի մի անկցիս 'ի ձեռս ատելեաց քոց. ողջ լեր։" Եւ իբրև ընթերցան առաջի նորա զպատճէն նամակին, խակոյն զարհուրեալ ահիւ մեծաւ, հրաման տայր զօրացն դառնալ անդրէն փութանակի. և ինքն յառաջ անցեալ աճապարէր գնալ։ Զոր իմացեալ Աշրափուն և զհետ մտեալ՝ արար փախստական. և ինքն դարձեալ էառ զՌապան և զԹլպաշար և դարձոյց 'ի Հալպ. և այսպիսի օրինակաւ այնքան մեծ սուլտանն շփոթեալ 'ի պարտութիւն մտանէր. և հասեալ 'ի Կեսարիա՝ զամիրայսն զայնոսիկ դքսառասուն խաշել հրամայէր։

---

(1) Սմբատ եւ Վահրամ փոքր մի տարբեր պատմեն զայսմանէ։ Սմբատ (յէր. 117), ասէ Ազզ—էտտին Քայքաւուզ սուլտանն Իկոնիոյ որ 'ի Սէլջուկեանց, 'ի ծերութեան Լեւոնի կամելով քինախնդիր լինել վասն հանելոյ նորա յիւրմէ զԱրակլիա եւ զԼարանդա քաղաքս, եկն եւ պաշարեաց զԿապան։ Եւ Լեւոն առաքեաց 'ի վերայ նորա զպարոն Կոստանդին սպարապետն իւր եւ զպարոն Ատան բազմութեամբ զօրաց. որք անխորհրդաբար 'ի մարտ մտեալ գերի անկանին Կոստանդին սպարապետ եւ Կեռասին եւ այլք յիշխանաց եւ 'ի հեծելազօրաց. եւ բազումք 'ի զօրացն խորտակին։ Իսկ Քայքաւուզ առեալ զգերիսն տանի յԻկոնիոն. եւ պահէ զնոսա 'ի բանտի ամ մի եւ ամիսս չորս. մինչեւ գթացեալ 'ի նոսա Լեւոնի, տայ սուլտանին զԼուլուայ բերդ եւ զգետն Իսաւրիոյ եւ զայլ տեղիս եւ զիշխանսն իւր ազատէ 'ի գերութենէ։ Եւ Վահրամ ասէ եթէ տեսեալ Լեւոնի զպարտութիւն զօրաց իւրոց, ոչ ինչ ընդ այն տխրեալ, դիմէ մնացեալ զօրօքն իւրովք յերկիրն սուլտանին, եւ ասպատակեալ քաղաքս աւարաւ եւ գերութեամբ դառնայ։ Լուեալ սուլտանին զաւեր աշխարհին իւրոյ, երդումն տայ Լեւոնի 'ի խաղաղութեան կալ ընդ նմա, եւ զիշխանսն Հայոց յետս դարձուցանէ։ (Յէր. 216)։

Եւ յայսմ ամի եկն դեղին մարախ, և ծածկեաց զերկիր և զդաշտս, և եկեր զամենայն ծառ սահմանաց մերոց մինչև խապառ զերկիր և զչորս ամս։

Ի ՈԿԸ (668) Թուականին Հայոց Լեւոն թագաւորեալ ամս քսան և երեք մեռաւ, և յանձն արարեալ զիշխանութիւն աշխարհին և զդուստր իւր զԶապէլն 'ի Սիր Ատանն, որ էր ազգաւ Հոռոմ; և զկնի սուղ ժամանակի սպանաւ 'ի Հաշիշեացն, որպէս վերագոյնն գրեցաւ. և առնու զհոգաբարձութիւն աշխարհին պարոն Կոստանդին, որ էր քեռորդին Թագաւորին Հայոց Լեւոնի։

Յայսմ ժամանակի ոմանք յիշխանացն Հայոց ապստամբեալք եղեն ընդ Ռոբինայ բրինձին Անտիոքու (1), կամելով զնա Թագաւորեցուցանել, յորոց էր Ճօսլին մարաջախտ և Լեւոն Կապնուն տէրն և Կեռասին, և այլք. որք առեալ զպրինձն Ռոբէն և մօրն ի Տարսուս և ամրացան։ Իսկ պայլն Կոստանդին և տէր Յովհաննէս կաթուղիկոսն գնացին զօրօք և պաշարեցին զնոսա սուղ ինչ ժամանակս, և յաղթեցին նոցա և առին զքաղաքն, և ըմբռնեցին զապստամբսն որ և ամենեքեան բանտարգելեալք եղեալ վախճանեցան ի կապանս, և հանդարտեցաւ երկիրն (1)։ Բայց տէր Յովհաննէս կաթողիկոսն յառաջ քան զառնուլ քաղաքին վախճանեցաւ ի Թուին Հայոց ՈԿԹ (669), և այս միաբանութեամբ ամենայն իշխանացն և եպիսկոպոսացն ընտրեցաւ յամենեցունց տէր Կոստանդին (Ա) որ էր եպիսկոպոս Մլճին (2).

---

(1) Ռուբէն բրինձ (իշխան) Անտիոքու՝ էր որդի Պալտնոյ (Պօտուէն) որդւոյ Պեմոնդայ (Պոհեմոնդ) կոմսին Անտիոքայ։ Եւ էր ծնեալ Ռուբէն 'ի հայազգի մօրէ Աղիսա (Ա-

---

լիս) անուն, դուստր Ռուբէնի Բ, զոր առեալ էր Պողտոյ այսու դաշամբ, զի Պեմունդ հայր նորա զինի վախճանին իւրոյ զնա ինքն զՊալտին կարգեսցէ յաջորդ. փոխանակ երեց եղբօրն Փիլիպպի, որ ամուսնացաւ յետոյ ընդ Զապելի դստեր Լեւոնի, և իշխեաց Հայոց ամս երկուս։ Գրէ Վահրամ ըստ մտաց Միխայէլի, եթէ Ռուբէն քաջուժ իշխանն յինքն յանդգնեցեալ զայս և առնու նախ զՏարսոն, և յառաջէ մինչև ի Մսիս. և Կոստանդին զօրավար գնդեալ զօրօք ի վերայ նորա, ըմբռնեաց ածէ զՌուբէն ի Տարսոն քաղաքի և զհամախոհս իւր և արկանէ զնոսա ի բանտ, ուր և մեռանին։ (Յեր. 217—218)։

(1) Այս դէպ հարկաւոր ոչ յիշատակի ի գիրս պատմութեան Միքայէլ վարդապետի Չամչեան, նոյնպէս և ոչ գործք Քայքայուղ ուրբանին որ նախ քան զմահն Լեւոնի։

(2) Կոստանդին կաթողիկոս էր ի Բարձրբերդոյ, մնեալ ի վանս Մաքրինոյ։

և եղաւ յաթոռ հայրապետութեանն Հայոց 'ի թուին ՈՀ (670). և եղեւ ուրախութիւն ամենեցուն յազգս առաքինի և բարբարոս և խաղաղասէր մոլայն , որով ամենեցուն հաճոյական լինէր : Իսկ իշխանայն Հայոց բազում անմիաբանութիւն լինէր վասն դնելոյ թագաւոր , զի ոչ հաւանէին միմեանց , և այս 'ի մի կամս եկեալ ընտրեցին զորդին բրինձին Անտիօքու թագաւորեցուցանել , զոր և արարին իսկ , և ետուն զդուստր թագաւորին Հայոց Լեւոնի նմա 'ի կնութիւն . և թագաւորեցուցին 'ի վերայ Հայոց 'ի թուին Հայոց ՈՀԲ (672) , և անուանեցին զնա Փիլիպ թագաւոր :

Ի թուին Հայոց ՈՀԲ (672) եղեւ երաշտ սաստիկ և յերկարեաց յոյժ , մինչ զի 'ի Դեկտեմբերի հասարակին նշենիք ծաղկեալ եղեն 'ի ջերմութենէ օդոյն , և անպատմելի վնասք տառապէր երկիր զերիս և զչորս ամ : Յայսմ ժամանակի մեռաւ սուլտանն Քէքաւուզն , և առնու զսուլտանութիւնն կրսեր եղբայր նորա Ալադինն (1) :

Ի թուին Հայոց ՈՀԳ (673) Փիլիպ թագաւորն Իփպղոլ հօր իւրոյ (Պեմունդայ) կամեցաւ ըմբռնել զերկուս մեծամեծ իշխանսն , զպարոն Կոստանդին որ էր թագաւորահայրն և զպարոն Կոստանդին Լամբրոնին տէրն (1). զոր իմացեալ յառաջեաց պարոն Կոստանդին (Թագաւորահայրն), և ըմբռնեաց զնա 'ի Թիլն Համտնոյ, և տարաւ 'ի Բարձրբերդ և անդ վախճանեցաւ (2)։ Իսկ հայր նորա բրինձն Անտաքու լուեալ՝ տրտմեցաւ յոյժ. և զի անկարանայր առնուլ ըզվրէժ որդւոյն, առաքէ առ Ալադին սուլտանն Հոռոմոց, որոյ եկեալ էառ զՃանճին և զԿանչին, և զՄազոտ խաչն (3), և արար վնաս բազում 'ի լեռնակողմանս. և բրինձն ժողովեալ զօրս եմուտ յերկիրն, եկն ընդ սահմանսն որ կոչի Ճկեր, և եհաս մինչև 'ի Թիլն Համտնոյ, և ոչ ինչ օգտեալ դարձաւ ամօթով յԱնտաք։

---

(1) Ալա—էտտին Քէյքապատ .

Ի թուին Հայոց ՌՀԵ (675) միաբանութեամբ ամենայն իշխանացն տուին զԶապէլ դուստր Լեւոնի Թագաւորին 'ի կնութիւն Հեթմոյ որդւոյ պարոն Կոստանդեայ, և Թագաւորեցուցին 'ի վերայ Հայոց, որ էր տղայ հասակաւ. և հայր նորա կարգաւորէր զԹագաւորութիւնն, որ և արար սէր ընդ

---

(1) Այս Կոստանդին էր որդի պարոն Հեթմոյ՝ որդւոյ Օշինի, որք էին տեարք անառիկ ամրոցին Լամբրոնի, վասն որոյ և ապստամբք էին միշտ ազգային իշխանութեան, զորս Լեւոն Բ նուաճեաց՝ առեալ 'ի նոցանէ զամրոցն։

(2) Սմբատ. յեր. 121։

(3) Ճանճի և Կանչի և Մազոտ խաչ էին առանձին ամրոցք, որոց իշխէին Պարոնք։

Ալադին սուլտանն և հնազանդեցաւ նմա՝ տալով նմա յամենայն ամի երեք հարիւր այր ՚ի ծառայութիւն (1)։

Յայսմ ժամանակի լուաք զհամբաւ երկուց ազգաց անաստուածից և գազանաբարոյից, որոց անուանքն Խորազմ և Տաթար, որք իբրեւ հուր ընդ խուխ ընթացեալ ապականեցին զերկիր ուր և հասան, և ոչ ոք ընդդիմացաւ նոցա, և սարսեցին ՚ի համբաւոյ նոցա ամենայն որ ՚ի ներքոյ երկնից։ Այլ սկիզբն ելից նոցա ՚ի բուն աշխարհէն իւրեանց ՚ի վաղուց ժամանակաց է, և զբազում աշխարհս և զազգս և զթագաւորութիւնս աւերեալ և քանդեալ հասին յաշխարհն արեւելից։

Եւ յայսմ ժամանակի թագաւորէր Վրաց դուստր Թամարին Ռուսուդուքան, և էր աթաբակ նորա Իւանէ եղբայրն Զաքարիայի, որ էին ազգաւ Հայք, և ՚ի հրապուրանաց Թամարին Վրացի եղեւ Իւանէ, և ՚ի հաւատս դառնայր կրօնից Հայոց (2)։ Եւ յայսմ ժամանակի ՚ի գաւառն Բձնոյ եղեւ նշան ինչ. զի կրօնաւոր մի սուրբ և ընտրեալ վախճանեալ, Հայ ազգաւ (3), որոյ գերեզմա-

---

(1) Սմբատ ասէ, թէ յանձն առ պարոն Կոստանդին հայր նորա տալ ամ յամէ չորեքհարիւր հեծեալ։

(2) Կիրակոս. յեր. 96։

(3) Վարդան (յեր. 188), ասէ թէ էր երէց Պարկեշտ

նըն երկնաւոր լուսովն վկայեցաւ և փառաւորեցաւ, որ ամենեքեան տեսին. և եղ համբաւ նորա ընդ ամենայն երկիրն։ Իսկ Իւանէի նախանձ շարժեալ ամենայն Վրացւոցն, նախատէին և թշնամանէին. և յետոյ զոսկերս սուրբ կրօնաւորին հրամայէին այրել հրով. և ՚ի տեղի պատուական ոսկերացն սատակեալ շուն թաղել։ Եւ եպիսկոպոսն Բջնայ տէր Յովհաննէս բազում բանիւք յանդիմանէր զանաստուածն Իւանէ. իսկ նա սպառնայր կամ դարձուցանել ՚ի վրացութիւն զամենայն Հայս, և կամ հանել յաշխարհէն։

Եւ մինչ յայսոսիկ էին, եհաս համբաւ Խորազմին (1), և նոքա փութով ժողովեալ զօրս կամէին ելանել ընդդէմ նոցա ՚ի դաշտամէջն Գառնի քաղաքոյ (2), ուր շինեաց մեծ արքայն Հայոց Տրդատ, բերդ և սարաւոյթ՝ ՚ի մեծամեծ վիմաց թագաւորութեան իւրոյ, որ կայ անխախտելի մինչև ցայսօր։

անուն, յորոյ գերեզմանին վերայ կառուցաւ յետոյ եկեղեցի։

(1) Խորազմիա է աշխարհ ՚ի հիւսիսոյ Խորասանու, յորոյ անուն և բնակիչքն կոչին Խորազմիք. կամ Խորազմեցիք։ Զայսու ժամանակաւ տիրէր այսմ երկրի Մոհամմէտ Խորազմշահ՝ հայր Ջալալադնի, որ և Ճէլալէտտին, որ կանգնեաց զթագաւորութիւնն Խորազմեայց։

(2) Գառնի քաղաք շինեցաւ նախ ՚ի Գեղամայ նահապետէն և անուանեցաւ Գեղամի, յետոյ նորոգեալ ՚ի Թոռանէ նորին Գառնիկ անուն՝ կոչեցաւ Գառնի։ Մովսէս Խորենացի, Ա. 12։ Իսկ Տրդատ շինեաց անդ տուն հովանոց զարմանաշէն վիման քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ. Անդ, Բ. 87։

Իսկ ամբարիշտն Իւանէ ամենայն զօրօքն Վրաց գնաց և իջաւ 'ի լեառն Գառնոյ, որ կոչի Եղուջերմն. և ապա խորհեցան միաբան առաքել զմեծ իշխանն քաջ և անուանի զԻւանէ զեղբայր Շալուային (1) փոքր ինչ զօրօք ընդ առաջ Խորազմին. որոյ հասեալ 'ի դաշտըն Գառնոյ որ կայր առաջի իւրեանց հարիւր մղոնօք 'ի զատէ. ապա ընդդէմ ելին անօրէն Խորազմիքն, և սկսան պատերազմել ընդ նմա. և յորժամ խառնեցան 'ի միմեանս Իւանէ եղբայր Շալուային (2) և Խորազմիքն, յայնժամ առաքեաց զմի 'ի զօրաց իւրոց առ մեծ զօրհեծելուն գալ փութանակի յօգնութիւն նմա. և նա 'ի գնալն ձայնէր որպէս սովորութիւն է, թէ՝ շուտով հասիք։ Եւ ձայնն ձիաւորին ումանց լսելի լինէր թէ՝ փախիք և մի՛ գայք, զի չե՛նք կարող դիմանալ սոցա. և ոմանց լսիւր թէ՝ փութանակի հասիք, կարող եմք յաղթել։ Եւ մինչ 'ի յայս էին.

---

(1) *Իւանէ և եղբայր իւր Շալւէ էին իշխանք աւագք Վրաց։*

(2) *Կիրակոս որ զայս պատերազմ պատմէ, (յեր. 131) ասէ զայսր Իւանէի, եթէ ուխտ եղեալ էր ընդ թագաւորին Վրաց, զի թէ յաղթեսցեն Խորազմեայց, զամենայն Հայս որ ընդ իշխանութեամբ իւրեանց կային, դարձուսցեն բռնի 'ի կրօնս Վրաց։ Այլ ընդ հակառակն զօրք նոցա անկեալ 'ի գերութիւն՝ բռնաբար թլփատեցան 'ի Խորազմեայց։ Եւ եղեւ այս ըստ Կիրակոսի 'ի թուին Հայոց ՈՀԴ. այն է* 1225.

փախեաւ աթաբակն Իւանէ անկանիլ յամուրս երկրի իւրոյ, և բազմութիւն զօրացն փախստեամբ անկանէին 'ի գիւղաքաղաքն Դառնի, որ շինեալ է 'ի վերայ բարձր քարախրամի, և գետ յորդ անցանի ընդ տակ խրամին։ Եւ յորժամ 'ի փախուստ դարձան անկանիլ յամուրս տեղեացն, նոյն ժամէն մրրիկ փոշւոյ մթացոյց զաչս փախուցելոցն, և առ հասարակ լցան ընդ բարձր և ընդ յոյժ ահագին խրամն Դառնոյ 'ի գետն յորձանուտ։ Եւ խորազմիքն յետոյ հասեալ զմնացեալն որոյ մնանէին, և ասացին թէ՝ ալամ (1) վրացւոյն հրով այրեցաւ, նշանակեալ թէ՝ աստուածային է բարկութիւնն։ Իսկ զքաջ իշխանն Շալւէ ըմբռնեցին կենդանւոյն, և տարան առ սուլտանն իւրեանց։ Եւ այսպիսի ահագին վրէժս էառ Աստուած յամբարտաւանն և 'ի կենցաղասէր ազգէն Վրաց, վասն անարգելոյ նոցա զհաւատս Հայոց։

Իսկ Պարսիկքն որ 'ի Դուին քաղաք, լուեալ զպարտութիւն Վրացւոյն, ըմբռնեցին զգլխաւորս քաղաքին և սպանին, և ապա սուր եդեալ կոտորեցին զամենայն քրիստոնեայսն որ 'ի քաղաքին։ Եւ զայսոսիկ լուեալ քաջ և անուանի իշխանն Հայոց որդին մեծին Վասակայ՝ Թոռն Հաղբակայ, Պռօշ անուն, և առեալ զզօրս իւր գնայ 'ի Դուին, և գտեալ պատճառս բանի մտէ 'ի քաղաքն սիրոյ պատճառաւ, և զուգէ սէր խաղութեամբ, և կոչէ զամենայն մեծամեծսն որ 'ի նմա. և 'ի սիրելն զնոսա՝ յանկարծակի յիշէ զկոտորումն քրիստոնէիցն՝ թէ զինչ պատճառաւ արարին. և ապա հրամայեալ զօրացն իւրոց, առ ժամայն սուր 'ի վերայ եդեալ կոտորեցին առ հասարակ, և ինքն դարձաւ խաղաղութեամբ 'ի տուն իւր։

---

(1) Այն է դրօշ. Սանճակ։

Յայնմ ժամանակի եկին Խորազմիքն և պաշարեցին զմեծ քաղաքն Վրաց զՏփխիս. և Պարսիկքն որ կային 'ի քաղաքին, ետուն ըզքաղաքն 'ի ձեռս Խորազմեացն. և Խորազմիքն խոստացան թողուլ զՊարսիկսն խաղաղութեամբ ստացուածօք իւրեանց։ Իսկ ապա առեալ զքաղաքն կոտորեցին զամենայն քրիստոնեայսն որ 'ի նմա, նոյնպէս և զՋհուտսն և զամենայն ազգ բաց 'ի Պարսիցն (1). և արարեալ ընդ ձեռամբ իւրեանց զքաղաքն գնացին։ Իսկ 'ի գալն գարնանային ժամանակին, եկն Թագաւորն Վրաց 'ի Տփխիս, և կոտորեաց զՊարսիկսն որ 'ի նմա. և մնաց քաղաքն աւեր 'ի մարդոյ և յանասնոց։ Յայնմ ամի աստղ մի գիսաւոր երեւեցաւ յերկինս, և անյայտ եղեւ։

---

(1) Կիրակոս, յեր. 132։

Ի Թուին Հայոց ՈՀԷ (677)․ Ալամանաց թագաւորն Ամբրուրն (1) ել բազում զօրօք ՚ի Կիպրոս կղզի․ և գնացեալ յԵրուսաղէմ երկրպագեաց սուրբ տեղեացն։ Իսկ Փրերք Դամբլունս(2) առաքեցին ՚ի Քէմլն, որ էր սուլտան Մսրայ, գալ նմա զօրօք, որպէս զի տացեն զԱմբրուրն ՚ի ձեռս նորա։ Իսկ Քէմլն առեալ զԹուխտ Փրերացն և յղեաց առ Ամբրուրն, և եցոյց նմա զնենգութիւն ազգին իւրոյ․ և ետ սիրով զԵրուսաղէմ յԱմբրուրն․ և հաստատեցին ընդ միմեանս դաշն և ուխտ սիրոյ յաւիտեան։ Եւ Ամբրուրն առեալ զԳերեզմանն(3) ետ ՚ի Փռանգն, և հանին զՏաճիկքն։ Եւ ինքն Ամբրուրն գնաց յաշխարհն իւր․ և յայնմհետէ սպառնայր Դամբլուն քակել զտունս նոցա որ յայնկոյս ծովուն։

---

(1) Այն է կայսրն (Ամբրուր․ Empreur) Ֆրետերիկոս Բ․, որդին Հենրիկոսի Զ։

(2) Դամբլուն փրերք՝ են եղբարքն Տաճարականաց կարգին որք մղէին և պատերազմ ընդդէմ Այլազգեաց․ և զօրաւորք էին յայնժամ բանիւ և մեծութեամբք․

(3) Ոչ միայն Գերեզմանն սուրբ, այլ և բովանդակ քաղաքն Երուսաղէմ տուաւ Ֆրետերիկոսի ՚ի սուլտանէն հանդերձ պայմանաւ և դաշամբ սիրոյ տասն ամաց և վեց ամսոց․ Իսկ կայսրն պսակեալ անդ առաջի Գերեզմանին թագաւոր Երուսաղէմի՝ առանց եկեղեցական արարողութեան, քանզի նզովեալ էր ՚ի պապէն, թողեալ և զՏաճարն սուրբ Յարութեան և զքաղաքն՝ չոգաւ ՚ի Պտողոմայիդ․ Տես ՚ի Միշոդ․ Պատմ․ խաչակրաց․ Հտ․ Գ․ Գլ․ 13․

Ի թուին Հայոց ՈՀԸ (678), Քէմլն էառ զԴամասկոս ՚ի Մէլքէ ՚Նասրէն, և ետ եղբօր իւրում Աշրաֆուն, և տայ ՚նմա տեղիք բնակութեան զՀաւրաք և զԲարաք և ըզՍամիուզ և այլ քաղաքում տեղիս. իսկ զՄիջագետս Ասորւոց զՈւռհա և զԽառան և զՍըրուճ, որ էր եղբօրն իւրոյ Աշրաֆուն, յինքըն առնու Քէմլն։

Յիշատակարան հին գրչագրիս

Ի Թուականին Հայոց ՈՀԸ, կատարեցաւ աշխարհապատում պատմութիւնս Տէր Միխայելի սուրբ պատրիարքին Ասորւոց, զոր ստուգիւ գրեալ ծայրաքաղ առնելով յաստուածաստեղծ մարդոյն Ադամայ. սկիզբըն առնելով ասաց մի ըստ միոջէ զկարգ և զծնունդ և զշինութիւն արարածոց զոր նախքան զՋրհեղեղն աշխարհակործան, և զոր յետոյ ջրհեղեղին յորդւոյն ՚Նոյի շինել և աճել ըստ հրամանի և ուխտին ամենակալին Աստուծոյ՝ որ ետ ընդ նոսա յետ ջրհեղեղին։ Եւ ՚ի վերայ այսորիկ զկարգ և զթիւ թագաւորացն Հռոմոց և Պարսից. և զկնի Պարսից թագաւորութեանն վճարելոյ՝ սկիզքըն առնէ Թագաւորութեանն Արաբկաց որ են Տաճիկք. և՚ի կատարածի սոցա զԹուրքաց սուլտանութիւնն և զտիրելն բազում աշխարհաց և գաւառաց, զոր դեռ այժմ ունին բռնացեալք ընդդէմ բազում ազգաց և ազանց: Որ են Թիւք ամացն յելիցն Ադամայ մինչեւ ՚ի ժամանակ կատարելոյ գրոցս ՚ի ձեռն Միխայելի Ասորւոց պատրիարքի, ամք վեց հազար չորս հարիւր և երեսուն. և այժմ է Թիւս Հայոց ՉԻԸ, որ գրեցաւ գիրքս ձեռամբ տառապելոյ Գրիգորոյ. զոր կամաւքն Աստուծոյ գրեցուք և մեք զպակասութիւն սորա ամաց քառասուն և չորից:

ՆՈՐԻՆ

ՏԵԱՌՆ ՄԻԽԱՅԵԼԻ ԱՄՈՐԻՈՅ

ՅԱՂԱԳՍ

ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ

ՆՈՐԻՆ
ՏՆ. ՄԻԽԱՅԵԼԻ ՊԱՏՐԻԱՐՔԻ
ԱՍՈՐԻՈՑ

Յաղագս քահանայութեան թէ ուստի սկսանի եւ ուր կատարի, եւ թէ զինչ է քահանայութիւնն։

ՍԿԻԶԲՆ քահանայութեան Աստուած է, անսկզբնաբար և տիրապէս ունելով զնա և ոչ յումեքէ առեալ, և ոչ զոք ունելով վերագոյն, որում քահանայասցէ և փառաւորեսցէ. և վասն այնորիկ միայն բաշխելով և պարգեւելով է քահանայութիւն, և ոչ է ընդ հարկիւ։ Իսկ արդ համարձակելի է մեզ 'ի ծանօթութենէ գրոց իշխել և ասել զամենասուրբն Հայր քահանայել զանհասական ծնունդն Որդւոյ, և 'ի բղխումն Հոգւոյն անթարգմանաբար և անսկզբնապէս, անժամանակ, անմիջնորդ, անհատապէս և անախտաբար, յէութենէ և 'ի բնութենէ իւրմէ. անձինք և դէմք կատարեալք, և 'ի նոյն բնութեան և յաստուածութեան և 'ի մի զօրութեան և 'ի համագոյութեան և 'ի համակամութեան կացեալ և միացեալ, անբաժանապէս բաժանեալք և անխառնաբար միաւորեալք ։ Այս է առաջին և անսպառական և 'ի բնութենէ քահանայութիւն, անվերագոյն և աննուաստական, հաւասարապէս և միափառ, որ ոչ առի անդ գործ և սպասաւորութիւն 'ի Հօրէ քահանայութիւն ։

Իսկ երկրորդ քահանայագործութիւն ըսկսանի 'ի յՈրդւոյ և 'ի Հոգւոյ առ զօրս հրանիւթս հրեշտակաց . զի նախ իմանայր զհրեշտակական զօրութիւնսն և զերկնայինացն, և իմաստքն գործ լինէին բանիւ կատարեալ և հոգւով լցեալ ըստ Դաւթայ . “Բանիւ Տեառն երկինք հաստատեցան, և հոգւով բերանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա ։” Նաև թէ զինչ է՞ աստիճանք նոցա, նոյն 'ի Դաւթայ ուսանիմք . “Արար, ասէ, զհրեշտակս իւր հոգիս, և զսարկաւագունս իւր 'ի հուր կիզելոյ ։” Որք են հզօր զօրութեամբ, որք սարկաւագեն Աստուծոյ փառաւորելով զնա . և առաքին 'ի սպասաւորութիւն այնոցիկ որ ժառանգելոց են զփրկութիւնն, և զնուաստագոյնն դայեկաբար սնուցանեն իմանալի կերակրօք յԱստուծոյ քահանայացեալք և քահանայագործեալք, և միշտ ըստ կարգի իմաստից հաղորդեալք 'ի նմանէ, յերիս երակս բաժանեալք, առաջին և երկրորդ և երրորդ, ՚ի փառս երեքեբեւեան Աստուածութեանն: Առաջինքն ՚ի նմանէ հայրորդեալք, և երկրորդն յառաջնոյն, և երրորդն ՚ի միջնոյն. և ՚ի նոցունց առ մարդիկ իջեալ, և առ կատարեալ և ընդարձակեալ, զի այլ բանական ՚ի վայր քան զմեզ ոչ գոյ. և Ադամ զնոցա բարբառն ուսաւ յԱստուծոյ առ նա բերեալ, և անուանեաց զնոսա հրեշտակս, որք են պատգամաւորք. այլ անուն բնութեան նոցա և թիւ համարոյ նոցա և ընդարձակութիւն իմաստից նոցա և փառք էութեան նոցա անդիտելի և անհաս միայն ՚ի մէնջ վարագուրածածկեալք:

Արդ քահանայութիւնն կարգ է բարձր և աստիճան սուրբ, որով բարձրանայ առ Աստուած ըստ կարի և լինի վերագոյն քան զայնոսիկ որոց քահանայէ. և միջնորդութիւն է ընդ վերնագոյնն և ընդ խոնարհականս: Եւ ոչ է կարելի քահանայութիւն ումեք արարածականի անձամբ առնուլ զնա ըստ Առաքելոյ, այլ պարգեւ և շնորհ է աստուածային և երկնաւոր, տուեալ և ոչ առնլոյ, բայց ՚ի յՈրդւոյ և ՚ի Հոգւոյ, որ անսկզբնաբար և բնաւորաբար ընդ ծնունդն անսասական և ընդ ելումն անիմացական իմանամբք զքահանայութիւն նոցա սեպհականայէս: Իսկ արարածականքս ՚ի պարգեւացն Աստուծոյ կոչին և անուն. որ և միանայ ընդ արժանաւորսն շնորհն, կարգն և պարգեւն տէրունական, որպէս հուր յերկաթ և լոյս ընդ օդ, և 'ի ներքուստ 'ի ներքս խօսի զկամս Տեառն Աստուծոյ։ Եւ քահանայութի՟ ըստ Ասորւոց լեզուին հաւաստութիւն թարգմանի, որ է փարթամութիւն երկնաւոր և հոգեւոր բարեաց, բանալի և փակ երկնից արքայութե՟ն, ծնօղութիւն հոգևոր և անախտ երկանց, դաստիարակութիւն և սնունդ աստուածային կենաց, նմանութիւն երջանիկ և բարեբաստիկ փառացն Աստուծոյ։ Իսկ ըստ Հայոց լեզուին՝ քաւիչ թարգմանի, զի քաւէ զանձն և զորս ընդ ձեռամբ ունի։ Եւ նախ տուաւ յատակ և անախտ և կուսական բնութեան հրեշտակաց. և անտի 'ի խոնարհ իջուցեալ զնա ետ պատկերի իւրոյ ձեռաստեղծի Ադամայ մարմ՟նոյ և արեան վլճակերպ, վասն որոյ և ցուցաւ մարդասէր երիս աստիճանօք բարձրագունիւք պատուելով զնա քահանայական և արքունական և մարգարէական փառաւորութեամբ. որ թէպէտ և ոչ զգուշացաւ 'ի պահելն, այլ յանարատութեան էառ ըզնա. և զկորուստ նորա անդրէն դարձոյց Տէր նորա, որ ողորմութեամբ եղեւ որդի նորա 'ի լրման աւուրց. և երկրորդ եղեալ Ադամ յուղեալ 'ի խնամոց իւրոց, և զանձըն պատարագեալ նոր և հրաշափառ ընծախիւք զպարտս նորա վճարելով։

Իսկ ՚ի յԱդամայ ճանապարհորդեաց կարգըս այս ընդ ամենայն դարս . որ և զկնի Ադամայ Հաբէլ քահանայական շնորհօք զարդարեալ մատուցանէր յանքանից պատարագ Աստուծոյ հաճոյական, նշանակ արժանաւոր քահանայից. այլ և անձամբ մատեաւ պատարագ յօրինակ Տեառն մերոյ անարժան ձեռօքն Կայենի պիղծ քահանային. բայց ըզԿայէն և զզոհել ընծայս նորա ՚ի պտղոյ երկրին ոչ ընկալաւ Աստուած, անարժան քահանայութեան շնորհի զնա համարեալ։ Եւ եբաց Կայէն լայն և մոլար և կորստեան ճանապարհ, և առանձնացաւ որդւովք իւրովք յԱստուծոյ և ՚ի զաւակաց Ադամայ ։

Իսկ զկնի Հաբելի երևեցաւ շնորհն այն յԵնովս, որ յուսով կոչեաց զԱստուած յօգնութիւն ակարացեալ բնութեանն, և զայսըն պատարագեաց Աստուծոյ։ Եւ յետ նորա Ենովք ցուցաւ յաստիճանս յայս, որ քահանայագործեաց Աստուծոյ պահք և խոնարհութիւն և աղօթս. և փոխեալ յարժանաւոր տեղիս, մնայ քահանայ ՚ի Տէր ։ Եւ յետ նորա ծածկեցաւ յանարժանիցն և ծագեցաւ Նոյիւ, որ արդար և կատարեալ կոչեցաւ ։ Սա նախ զկուսութիւնն և զարդարութիւնն Աստուծոյ ընծայեաց , և յետ ջրհեղեղին մատոյց դարձեալ յանասնոց որոց զՀաբելի պատարագն, որ է ստուերականն. և հոտոտիլ առի Աստուծոյ անուշահոտ վարուք և բարուքն Նոյի քան անբանիցն ձենձերօք : Եւ խոյս ետ դարձեալ և ամփոփեցաւ յանարժանիցն կռապաշտից՝ քահանայութիւնն, և բացափայլեաց առ Յովբ յորդւոց անտի Յեկտանայ, որ յաւուր աւուր քահանայագործէր ըստ թուոյ որդւոցն. և մատոյց զանձըն փրկութեամբն 'ի փառս Աստուծոյ. և զկնի փրկանացն հրամանաւ Աստուծոյ մատոյց պատարագ 'ի հաշտութիւն և 'ի քաւութիւն բարեկամացն :

Եւ յետ այնորիկ առաւել բացափայլեաց 'ի Մելքիսեդեկ, զոր և գիրն քարոզէ զնա քահանայ Աստուծոյ բարձրելոյ : Եւ սա մատուցանէր պատարագ Աստուծոյ զճշմարտութեանն զօրին, հաց և գինի. զոր և Աբրահամու ընծայեաց և օրհնեաց զնա Աստուծոյն երկնի և երկրի 'ի բարձրելոյն. զոր ասեն զսա յորդւոցն Քանանու, որոյ ոչ պատմի ազգ և ոչ հայր և մայր, վասն օրինակի Տեառն մերոյ. և զի թէպէտ և ունէր հայր և մայր և ազգ, այլ ոչ գրեցաւ, և ոչ օք գիտէ զատոյգն : Մելքին թագաւոր ասի, և Սեդեկն արդար և կամ քահանայ՝ 'ի խորհուրդ Տեառն մերոյ :

Մեծացաւ շնորհս այս և առ Աբրահամ, որ զորդին քահանայագործէր Աստուծոյ և զմիածինն, նմանեալ Հօրն երկնաւոր։ Եւ Իսահակ պատարագ Աստուծոյ անձամբ եղեւ 'ի հօրէն, և զկեանս իւր երկիւղիւ միշտ ընծայէր Աստուծոյ զկնի հօրն։ Եւ Յակոբ օծանէր արձան 'ի խորհուրդ եկեղեցւոյ, և 'ի դառնալն յԱսորւոց պատարագէր Աստուծոյ ըստ խոստմանն և ուխտին իւրոյ։ Այլ և Յովսէփ ընկալաւ զշնորհս զայս առաւելեամբ խորհրդոյն. և զողջախոհութիւնն մարդոյ Տեառն Աստուծոյ իւրոյ 'ի փառս անուան նորա։ Եւ յայնմ հետէ ոչ երեւեցաւ շնորհըս այս 'ի մտանելն նոցա յԵգիպտոս, որ է Մսր, որ ըստ մեզ թարգմանի մեղք։ Եւ չէ գրեալ թէ մատուցին անդ պատարագ Աստուծոյ, առ 'ի ցուցանելոյ թէ ոչ է արժան 'ի մէջ մեղաց պատարագ մատուցանել։ Բայց մերձ 'ի յելս նոցա բազմացաւ շնորհս այս, և տուաւ յԱստուծոյ ամենայն ազգին առհասարակ. և մատուցին զատիկս 'ի մէջ Եգիպտոսի, ստուերագրելով զճշմարիտ գառնըն Աստուծոյ զերկնաւորն՝ որ 'ի մէջ մեղաւոր ժողովրդոց և 'ի մէջ դժոխոց մատեաւ Հօր 'ի հոտ անուշից։ Եւ յելանելոյ անտի որդւոցն Իսրայելի եղեւ դառնաղէնութիւնըն այն 'ի կրօնս Իսրայէլի առնել միշտ յազգըս իւրեանց զստուերականն, որպէս նորս Իսրայէլ զճշմարտութիւնն զօրհանապազ։

Իսկ յութսունևեւթն ամին Մովսիսի ընկալաւ Ահարոն եղբայր նորա զպատիւ քահանայութեանն յԱստուծոյ կոչեցեալ. և Մովսէս ընկալաւ գիր և լեզու նոր ՚ի Տեառնէ, և ձեռամբ և միջնորդութեամբ նորա տուաւ ամենայն ժողովրդեանն Իսրայէլի: Եւ ՚ի նոցանէ առին դպրութիւն Փիւնիկեցիք. և ՚ի Փիւնիկեցւոցն առին Յոյնք ՚ի ձեռն Կադմոսի: Իսկ Ահարոն կեցեալ ՚ի քահանայութեան ամս երեսուն և ութ, և ապա ետ զքահանայութիւնն Եղիազար. և Նաբաթ և Աբիութ այրեցան առաջի Տեառն հուր օտար մատուցանելով: Եւ դուստրն Ամինադաբայ տուաւ ՚ի տունն Պեւեայ Եղիազարու. և պաշտելով զքահանայութիւնըն Եղիազարու ամս քսան, փոխեաց զնա նախանձաւորն Աստուծոյ Փենեհէս, որ սպան զԶամբրի և զԱմրի. և կեցեալ ՚ի քահանայութեանն երեսուն և ութ ամ, և որդի նորա Եղիազար ամս յիսուն և վեց, և յետ նորա որդի իւր Փենեհէս ամս ութսուն: Եւ զկնի նորա ապա Յեսու նոյնպէս յորդւոցն Ահարոնի, ամս յիսուն և հինգ: Եւ յետ նորա Աւագին, ամս վաթսուն. և էր սա ՚ի ժամանակս Բարակայ և Դեբովրայ: Եւ յետ սորա Ազարի՝ ամս քառասուն և երկու: Եւ զկնի սորա Զարեհ՝ ամս յիսուն և երկու. և է սա եւթներորդ յԱհարոնէ: Եւ յետ սորա Մարու, զոր Մերովխ կոչեն, ամին յիսուն ։ Եւ զկնի սորա Ամարիա , ամս երեսուն և երկու ։ Եւ յետ նորա Աքիտովբ ամս քսան ։ Եւ յետ նորա Փենեհէս և Ամարիա՝ ամս քառասուն և երկու ։ Զկնի սոցա Հեղի և որդիք իւր ամս քսան , իսկ այլք քառասուն ասեն ։ Յետ նոցա Աքիտովբ և Աբիաթար և Յովհաննէս և Փենեհէս և Աբիսաւ և Բոգի և Ոզիէլ և Ազարիա և Ամրայիլ և Ամարիա , և զկնի սոցա ապա թէ Սամուէլ, զի յառաջ քան զՍամուէլ չփոթեցան այնք ամենայն ։ Եւ զԱքիմելէք գտաք յետ Սամուէլի , զոր եսպան Սաւուղ հարիւր յիսունիւք . ասեն թէ 'ի Բեթնաւբայ կոտորեցան ։ Զկնի նորա Աբիաթար հնգետասաներորդ . և զհետ սորա Ակիտոբ . և ըզհետ նորա Սադովկ երկոտասան ամ։ Եւ զՍադովկ ասեն թէ չէ 'ի տանէն Ահարոնի յԱմրամայ, այլ 'ի ցեղէն Կահաթու, զի ըստ սպառնալեացն Աստուծոյ առ Հեղի՝ փոխեցաւ 'ի տունն Կահաթու ։

Այլ և 'ի Դաւիթ երեւեցաւ երրակի շնորհն Աստուծոյ քահանայութիւնն. զի եկեր զհացն քահանայական, և վերացոյց զեփուդն որ է ծածկոյթ սեղանոյն , և եհարց նովաւ 'ի Տեառնէ . զի վասն կասկածի և երդմանն ոչ ետ քահանայիցն հարցանել, և մանաւանդ վասն Աստուածահայր լինելոյն ոչ մեղադրեցաւ , զի ընդ օրինօք ոչ եմուտ իբրև զծաւոյ։ Իսկ սա կարգեաց Սաղմոսացս քսան և չորս դասս . և երգել հրամայէր յերրորդ ժամուն և ՚ի վեցերորդ ժամուն և ՚ի յիններորդ . և այս եղաւ յեկեղեցիս սուրբ։ Իսկ Սադովկ ապաշտեաց զքահանայութիւնն ամս հինգևտասն։ Զկնի նորա Ազարիա և Սողոմ և Մոփսիա և Ելիկա և Միւրիա և Ազարիա և Սադովկ . և ոչ գոյ ժամանակ սոցա արկեալ ընդ գրով։

Իսկ ՚ի ժամանակս Ռոբովամու որդւոյ Նաբատայ Աքիմելէք էր քահանայապետ . և զկնի նորա Սադովկ՝ ամս քսան։ Իսկ յետ նորա Սադուկ և Ազարիա և Ահիմէէս և Աքիմելէք և Իոդա և Իոադաք և Յեսու և Յիուդաք և Եղիշէ և Սողոմ և Յովիդա հայրըն Զաքարիա մարգարէի։ Իսկ ապա Մանասէ և Ամոփիա և Ազարիա և Անանիա և Շմաւոն և Մերարի և Յովսադաք և Ազարիա զոր ասեն Զաքարիա որդի Բարաքեայ,որ յանդիմանեաց զՈզիա Թագաւոր, և ՚ի տաճարին սպանաւ ՚ի ժողովրդենէն։ Զկնի սորա Իուդաս, և զհետ սորա Ուրիա և Յովհաննէս և Անդրոմաքոս, և Ոնիա այր պատուական և զովելի, և Եղեկիա և Շմաւոն զոր ամենայն այր (1) արդար և երկեղած . և զսա ասեն թէ զՔրիստոս եբարձ ՚ի գիրկն։ Այսոքիկ որ կարգեցաք քահանայապետ վասն յաճախ շփոթմանն Հրէից ոչ գրեցաւ 'ի պատմագրացս ստուգիւ, այլ մեք աշխատ եղեալ գտաք զկարգն, զի գիտասջիք թէ պարգեւքս այս ոչ չիջաւ յաշխարհէ խապառ՝ մինչեւ 'ի ճշմարիտն Քահանայապետս ։

---

(1) Թերեւս ընթեռնլի է զոր ասեն այր ։

Զհետ Շմաւոնի Ամարիա եւ Ազարիա ։ Այս Ազարիա եկեալ 'ի գերութենէ հրամանաւ Սաղմանասարայ 'ի Սամարիա, ետ՛ նոցա զհինգ գիրսն Մովսիսի ։ Զհետ սորա Ամարիա եւ Աքիտոբ եւ Սադովկ եւ Սողոմ եւ Եզեկիա եւ Ազարիա եւ Բեղկի հայրն Երեմիայ մարգարէի 'ի ժամանակս Ովսիայ թագաւորի որ եգիտ զերկրորդ օրէնսն ։ Զհետ սորա Ուրիա որդի Սամիայ, որ եւ սպանաւ 'ի Յովակիմայ 'ի թագաւորէ Յուդայ ։ Եւ զհետ սորա Սարրի եւ Յովսեդեկ, որ գնաց 'ի գերութիւն յաւուրս Սեդեկիայ։ Եւ եղեւ գերութիւնն Հրէից չորս անգամ, եւ թագաւորութիւնն բարձաւ յԵրուսաղէմէ · բայց քահանայութիւնն ոչ բարձաւ, զի գնացին ոմանք 'ի քահանայիցն զհետ ժողովրդեանն, եւ ոմանք 'ի տեղւն թողան ։

Եւ յերկրորդ ամին Նաբուգոդոնոսորայ ետես Դանիէլ զտեսիլն, եւ 'ի հինգ ամի գերութեանն Յեքոնիայ ետես Եզեկիէլ զհրաշալի տեսիլն, եւ յայնժամ սպանին զերեւելի իշխանսն Յուդայ, եւ ընդ նոսա սպանին զՈվսեդեկ եւ զՇիրիա եւ զՍոփոնիա · եւ յետ նորա եղին քահանայապետ զՅեսու որդի Նարա յԵրուսաղէմ. և զկնի տարան և զնա ՚ի Բաբելոն. և ՚ի դառնալն Հրէից ել ընդ Զօրաբաբելի յԵրուսաղէմ: Զկնի Յեսուայ Յովակիմ. յաւուրս սորա շինեցաւ տաճարն յԵրուսաղէմ. և զկնի նորա Եղիշէ որդի նորա, և ապա Յովիդա որդի նորա. և յաւուրս սորա կատարեցաւ շինութիւն տաճարին. և յետ նորա Յովհաննէս և Յովիդա, և ապա Յովհաննէս որ ապրեցաւ մինչեւ ՚ի ժամանակս Արտաշէսի Թագաւորին Պարսից. զկնի նորա Յովիդա: Եւ կայր քրմապետ մի Արտաշէսի Անդրոմաքոս անուն, յոյժ բարեկամ Հրէից: Զկնի նորա Մանասէ. սա շինեաց տաճար մի ՚ի լեառն Գարիզին: Զհետ սորա Անդրոմաքոս. սա էր յաւուրս Աղէքսանդրի Մակեդոնացւոյ, որ պատուեաց զԱղէքսանդր և սպանաւ ՚ի Սամարացւոց, և ինքեանք կոտորեցան յԱղէքսանդրէ: Զհետ սորա Ոնիա, և զհետ նորա Շմաւոն որդի նորա, և զհետ սորա Եղիազարոս եղբայր նորա. առ սա առաքեաց Պտղոմէոս և խնդրեաց զգրեանն, և առաքեցին ոսկի գրով: Զհետ սորա Մանասէ. զկնի նորա Ոնիա. յետ նորա Յովսեպոս, և զհետ նորա Շմաւոն. սա է հայր Յեսու Սիրաքայ: Սորիկք զայս Շմաւոն ասեն բարձօղ Քրիստոսի, երկերիւր և վեշտասան ամ կեցեալ յետ կապելոյն: Եւ յետ սորա եղեն քահանայապետք Մենեղայոս , Յասոն , Ղազարոս ։ Եւ Մենեղայոս եղեւ չար կամօք ընդդէմ օրինաց . և չէր սա յազգէն Ղեւեայ . և վասն սմա Ոնիա որդի քահանայապետին Ոնիայ գնաց յԵգիպտոս , և շինեաց անդ տաճար նման տաճարին որ յԵրուսաղէմ, և քաղաք ։ Եւ Յակիմոս քահանայապետ մարտեաւ ընդ Յուդայի և հարաւ բարկութեամբ ՚ի Տեառնէ և մեռաւ ։ Եւ առ Յուդա զքահանայապետութիւնն . և զհետ նորա Մատաթիա , և զկնի նորա Յուդա որդի նորա . և սա նորոգեաց զտաճարն և սպանաւ ։ Զհետ նորա Յովնաթան եղբայր նորա , և սպանաւ ՚ի Տրիփոնայ ։ Եւ զհետ նորա Շմաւոն եղբայր նորա և սպանաւ ՚ի Պտղոմեայ ։ Եւ զհետ նորա որդի նորա Յովհաննէս , որ է Հիւրկանոս ։ Յետ նորա Արիստաբուղոս . սա թագ եդ ՚ի վերայ քահանայութեանն զկնի չորեքհարիւր եւթանասուն և եւթն ամի բառնալոյն ։

Եւ ՚ի Յուդայէ մինչեւ ՚ի սա զօրապետք և քահանայապետք էին , և աստ սկսաւ դարձեալ թագաւորութիւն և քահանայութիւն յԱրիստաբուղոս , և կալաւ զթագաւորութիւնն նորա տարի մի, և սպանաւ ձեռամբ եղբօր իւրոյ Անտիգոնեայ , և առ ըզտեղի նորա միւս եղբայրն Յովհաննէս , որ կոչեցաւ Աղէքսանդրոս . և զկնի սորա կին նորա Աղէքսանդրա, և չփոխեցաւ կարգն քահանայութեանն՝ կնոջ եղեալ քահանայապետ. բայց յետոյ զքահանայապետութիւնն ետ Հիւրկանեայ որդւոյ իւրոյ, և եղբօրն նորա Արիստաբուլեայ ետ զթագաւորութիւնըն, որ և յետոյ գնաց 'ի գերութիւն 'ի Հըռոմ, և զՀիւրկանոս գերեցին 'ի Հայս:

Եւ Հերովդէս երթեալ 'ի Հռոմ թագաւորեաց Հրէից, որ և եկեալ սպան զԱնտիգոնոս միւս եղբայրն Հիւրկանեայ. և յետոյ և զՀիւրկանոս եւս եսպան որ եկն 'ի գերութենէն Հայոց, և եդ քահանայապետ զԱնանիէլ: Եւ զկնի Զաքարիա, և ապա ըզՇմաւոն, ամ ամի փոփոխելով զնոսա կաշառօք. և ապա զԱննա և զԿայիափա. և ապա փոխեցաւ հին քահանայութիւնն և ստուերականն 'ի նորս և 'ի ճշմարիտս Քրիստոսի: Քանզի 'ի ծնանելն նորա թագաւորն այլազգի էր Հերովդէս, զի ըստ Յակոբայ նահապետին եկն որ իւր է թագաւորութիւնըն. և յորժամ բաշխեաց զպաշտօն պատարագի նոր քահանայութեանն՝ զմարմին և զարիւն իւր, սկսաւ նորն և լռեաց հինն. որ թէև կային այլ քահանայք, այլ ոչ ըստ կամացն Աստուծոյ, և ոչ համարեալ է 'ի կարգս լուսոյն. վասն զի յանձնեաց Տէրն զթագաւորութիւնն 'ի յարքայն հեթանոսաց՝ հաւատացեալն 'ի նա մերձ 'ի չարչարանսն կամաւոր ։ Զի յայնժամ եկին պատգամաւորքն թագաւորին Հայոց և Ասորւոց, և աղաչէին զՏէրն գնալ և թագաւորել ընդ նոսա, և լինել բաժանակից և կցորդ իշխանութեան աթոռոյ նոցա ։ Իսկ Տէրն երանեաց զնա, և նովաւ յանձնեաց զարքայութիւնն որ տուաւ Ադամայ ըստ կամացն Աստուծոյ՝ հաստատելոյն ’ի նա և ’ի հայր նորա. և զաստիճան քահանայութեան որ կարգեալ գոյր ’ի ծնունդս Ադամայ ազգի ազգի նիւթով պատարագաց, ետ զնա Առաքելոցն ’ի վերնատանն, փոխեալ զնիւթ պատարագին յանձն իւր սուկալի և քամնելի և անճառելի խոնարհեաց և զգալեաց, այն որ անսկզբնաբար ’ի ծոցոյ Հօր քահանայացաւ, և նստի յերկինս երկնից ընդ աջմէ Հօր, քահանայ մշտնջենաւոր ։ Եւ աստ կատարեցաւ խորհուրդն հայրենի և գլխաւորեցաւ, գագաթն էառ քահանայութիւնն, որ ոչ է այնուհետև այլ և այլ պատարագ և ոչ բազմութիւն քահանայից փոխանակ մահու արգելման, և ոչ տաճար ձեռագործ և ապականացու, այլ նոյն և մի պատարագ և պատարագիչ և քահանայ. և տաճար է անձեռագործ վերինն Երուսաղէմ, որոյ դաւիթ է ձեռագործս այս և նիւթաւոր եկեղեցի և օրինակ ճշմարտին. և հաստատն է հանրական կաթողիկէ, որ ժողովէ զտիեզերս ’ի մի յոյս կոչման և ’ի մի դաւանութիւն և ’ի մի հոգեւոր կերակուր։ Եւ այս առաջնորդք եկեղեցւոյ անդամք են միոյ անմահական գլխոյն Յիսուսի, անմեկնելի, անմահ եւ յաւիտենական, հաւատով եւ յուսով պաշտեն զքահանայութիւնն կատարեալ, եւ կենաց 'ի կեանս փոփոխեալք կատարելով զընթացսն, ընդ աշակերտեալքն նովին պատարագաւ եւ հաւատով եւ իմանալի տաճարով զտեղիս նոցա. եւ կատարելով Տեառն մերոյ եւ Աստուծոյ զքահանայութիւն տանն Ադամայ կենդանացուցիչ մահուամբն եւ փրկագործ յարութեամբն, համբարձեալ յերկինս կատարեաց եւ զերկնաւորացն քահանայութիւնն, որ սարկաւագունք էին մինչեւ ցայժմ. եւ արդ եւս նոցա Տէր զնոր պաշտօն անօրէնութեան իւրոյ, եւ ձեռնադրեալ զնոսա ըստ կարգի 'ի տեղիս եւ յաստիճանս իւրեանց մեզ անճառելի, եւ ըստ իմանալի բնութեան իւրեանց աննիւթապէս. եւ նոքա քահանայագործեն եւ անմարմնաբար հաղորդեալ Յիսուսի աստուածաստեղծութեանն եւ աստուածարար խորհրդոյն, որպէս ասէ մեծն Դիոնէսիոս ուսեալ յաստուածընկալ առաքելոյն Պաւղոսէ, որ ամբարձեալ մինչեւ յերրորդ յերկինս՝ տեսող եղեւ անճառելեացն եւ լսող։ Իսկ զկնի համբարձման Տեառն մերոյ, հրամանաւ Հոգւոյն սրբոյ առաջին ձեռնադրեցաւ Երուսաղէմի եպիսկոպոս Յակոբոս եղբայր Տեառն. և եպիսկոպոսն տեսող լսի, որ է աստուածայնոցն. և է երից կարգաց գլուխ, քահանայից, սարկաւագաց և դպրաց:

Եւ յառաջին ամին վերացման Տեառն, աշակերտեցաւ և մկրտեցաւ ներքինին քուշայեցի Փոթանկոս անուն, ՚ի Փիլիպպոսէ առաքելոյ. և նա եղեւ սկիզբն մկրտութեան հեթանոսաց: Եւ ՚ի գլուխ տարւոյն աշակերտեցաւ Պաւղոս, և յերկրորդ ամին սկիզբն արար քարոզութեանն: Եւ Ագրիպպաս արքայ յառաջին ամին իւրոյ սպան զՅակոբոս եղբայրն Յովհաննու: Եւ Պետրոս ելեալ յԵրուսաղեմէ եկն յԱնտիոք աշակերտելով զհեթանոսս ՚ի ճանապարհին, զերկուս ամս յամելով ՚ի դայն. և յԱնտիոք եդ հիմն եկեղեցւոյ, և ձեռնադրեաց եպիսկոպոս ըզԵւոդիոս: Ասեն թէ զվարշամակ Տեառն ունէր, և զայն արկանէր ՚ի վերայ գլխոյ ձեռնադրելոյն. և անուանեաց զաշակերտեալն քրիստոնեայս. և եդ անդ աթոռ, և գնաց ՚ի Հռոմ, և կատարեցաւ ՚ի Ներոնէ Պաւղոսիւ հանդերձ, յերեքտասան ամի թագաւորութեան նորա, ՚ի Մայիսի ԻԹ. և Անդրոնիկոս ասէ թէ ՚ի ԻԵ, Ն քանուն(1): Եւ զկնի Պետրոսի եկաց եպիսկոպոս ՚ի Հռոմ Լինոս՝

---

(1) Անիմանալի է բառս, և թերեւս նշանակէ զամիսն Տաճկաց Քէնուն:

առաջին եպիսկոպոս, մետասան ամ։ Եւ յԵրուսաղէմ զկնի Յակոբայ Շմաւոն Կղէոպեանց՝ ամս քառասուն և երկու։ Եւ յԱղէքսանդրէ. Մարկոս աւետարանիչ քարոզեաց, չինեաց եկեղեցի. և յետ նորա եկաց Անանիա (1) ամս քսան և երկու. և զկնի նորա Աբիլոս 'ի չորրորդ ամին Դիոկղետիանոսի։ Եւ նախ քան զայլսն յետ համբարձմանն ըստ խոստման Տեառն առաքեցաւ Թադէոս 'ի Հայս. նախ 'ի Կեսարիա Հայոց եկեալ, արկ անդ հիմն եկեղեցւոյ, և ձեռնադրեաց եպիսկոպոս զԹէոփիլոս. և ապա եկն 'ի յՈւրհա. անդ բժշկեաց զԱբգար, և չինեաց եկեղեցի, և ձեռնադրեաց անդ զԱդդէ, և գնաց, և կատարեցաւ 'ի Սանատրկոյ արքայէ Հայոց։ Նմանապէս և Բարթողոմէոս եկեալ և շրջեալ ընդ Հայս՝ կատարեցաւ 'ի նմին Թագաւորէ։ Եւ Յուդա Յակոբեան զհետ նոցա եկեալ 'ի Հայս, կատարեցաւ յիշխանացն Հայոց 'ի յՈրմի քաղաք նոցին Հայոց, և կայ անդէն։ Եւ Սիմոն մի յորդւոցն Յովսեփու կատարեցաւ 'ի Հայս։

Եւ յԱսիա և 'ի կողմանս Բիւթանացւոց և յերկիրն Շանագլխաց գնաց Անդրէաս առաքեալ։ Եւ ասեն զնմանէ՝ թէ յորժամ արկին վիճակս Առաքեալքն յետ առնլոյ զՀոգին սուրբ 'ի վերնատունն, և բաժանեցին զաշխարհս 'ի մէջ իւրեանց, և անկաւ վիճակն Անդրէի հրամանաւ Հոգւոյն սրբոյ երկիրն Շանագլխաց. և դժուարեցաւ Անդրէաս և փախեաւ, և հանդիպեցաւ Փրկչին որ իջեալ կայր վրանօք որպէս վաճառական, և խօսեցաւ ընդ նմա, և ասաց զինքն յերկրէ անտի, և թէ կամիցի գնալ՝ տանի զնա դիւրաւ, և հեշտիւ լսեն նմա։ Եւ դարձաւ Անդրէն 'ի վերնատունն, և խնդրեաց աղօթս զի գնասցէ 'ի վիճակն իւր զհետ վաճառականին. և յուղարկեցին զնա խնդութեամբ։ Եւ գնաց Տէրն նովաւ հանդերձ 'ի Յոպպէ. և դիպեցաւ նաւ պատրաստական, և մտին 'ի նա և գնացին անդ. և վերացաւ 'ի նմանէ Տէրն յերկինս, և իմացաւ Անդրէաս և փառաւորեաց զԱստուած։ Եւ գնացեալ դարձոյց սքանչելեօք զաշխարհն, և դարձաւ քարոզեաց 'ի Միւսիա և 'ի Բիւթանիա, և յԱսիա քարոզեաց և շինեաց եկեղեցիս 'ի մէջերկեայս, և սերմանեաց անդ զբան հաւատոյն։ Եւ անց 'ի յԵլլադա և կատարեցաւ 'ի Պատրաս Ելլադացւոց յԵգիատայ խաչիւ. և նմա է համարեալ ասիական աթոռն, զի նա քարոզեաց զառաջինն մինչեւ եկն անդ զկնի երկոտասան ամաց Յովհաննէս յետ փոխման Տիրամօրն։

---

(1) Ի գաւազանագրին փոխանակ Անանեայ դնէ Անիաս.

Արդ ուր քարոզեցին Առաքեալքն երկոտասանք և չինեցին եկեղեցիս, աթոռք են. և ՚ի կատարածի աշխարհիս նստելոց են յերկոտասան աթոռս. և այս ՚ի Քրիստոսէ տուաւ։ Բայց յետոյ մարդիկ անուանեցին չորս աթոռ գլխաւոր զԱւետարանչացն։ Մատթէոս, ասեն, ունի զԱնտիոք. և Ղուկաս որդի Կոստանդեայ Ասորւոց և մօր Յունի, սա ունի զՀռոմ, որ էր անտիոքացի և արուեստիւ բժիշկ։ Իսկ զԱղէքսանդրիա ունի Մարկոս. և զԵփեսոս Յովհաննէս, որ յետոյ Անդրէի եկն յԵփեսոս. և զԵրուսաղէմին Յակոբոս եղբայր Տեառն։ Եւ մեք աղիւսակօք կարգեսցուք զհնգից Աթոռակալացս ըստ կարգի լուսաւորապէս, զի դիւրաւ կացցեն ՚ի վերայ ուսումնասէրքն. և վասն աշխատութեանս մերոյ ակնկալցուք հատուցման աղօթից՝ որոց օգտին աստուստ ՚ի փառս Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս.

ամէն։

ԱԹՈՌԱԿԱԼՔ ԱՆՏԻՈՔԱՅ

		ամ.
Ա.	Պետրոս վէմ.	
Բ.	Լուդիոս.	3
Գ.	Իգնատէ.	12
Դ.	Իրոն.	13
Ե.	Կուռնելիոս.	10
Զ.	Ուրիոն.	11
Է.	Թէոփիլէ.	17
Ը.	Մաքսիմոս.	18
Թ.	Սերապիէ.	10
Ժ.	Ասկղեպ.	12
ԺԱ.	Փիլիպպոս.	10
ԺԲ.	Սաբինոս.	12
ԺԳ.	Բաբելաս.	30
ԺԴ.	Բաւլոս.	20
ԺԵ.	Դեմետրիոս.	8
ԺԶ.	Պաւղոս սամոսատացի հերձուածող։	
ԺԷ.	Դոմանոս.	13
ԺԸ.	Տիմոթէոս.	5
ԺԹ.	Կիւրղիոս.	8
Ի.	Տուրիանոս.	1
ԻԱ.	Բաղալիոս.	8
ԻԲ.	Փիլիկիոս.	2
ԻԳ.	Եւստաթէ.	10
ԻԴ.	Յուլիոս.	1
ԻԵ.	Ոտալիս արիոսեան պիղծ։	
ԻԶ.	Ուբրոս արիոսեանն.	
ԻԷ.	Փլիբոս հերետ.	
ԻԸ.	Ստեփանոս հերետիկոս.	
ԻԹ.	Լեւոնտիս հերետ.	
Լ.	Եւդոքսի արիոսեան էր.	
ԼԱ.	Մելիտոս ուղղափառ.	
ԼԲ.	Ուղիոս.	2
ԼԳ.	Պուլիանոս.	1
ԺԴ.	Փլաբիանոս.	7
ԼԵ.	Եւագր.	1
ԼԶ.	Պորփիրիոս.	7
ԼԷ.	Աղէքսանդրոս.	10
ԼԸ.	Յովհաննէս.	38
ԼԹ.	Թէոդիոս.	32
Խ.	Դոմանոս արիոսեան.	
ԽԱ.	Մաքսիմոս արիոսեան.	
ԽԲ.	Ակակիոս երկաբնակ։	
ԽԳ.	Մուրտորիոս հերետ.	
ԽԴ.	Սուրբ Պետրէ հալածեալն.	
ԽԵ.	Մանիդոն.	
ԽԶ.	Մերսուրիոս երկաբընակն ։	
ԽԷ.	Յուլիանոս.	35
ԽԸ.	Ստեփանոս.	37
ԽԹ.	Ստեփանէ հերետ.	
Ծ.	Բելետիոս հերետ.	
ԾԱ.	Փլաբիէ որ ընկեցաւ.	
ԾԲ.	Սուրիակէ ուղղափառ.	
ԾԳ.	Պաւղէ հրէականն պիղծ.	
ԾԴ.	Ուբոլլիոս երկաբնակ 'ի տեղի Սեւերիոսի.	
ԾԵ.	Եփրեմ հերետ.	
ԾԶ.	Դամանոս հերետ։	
ԾԷ.	Սարգիս.	7
ԾԸ.	Պաւղէ սեաւն.	
ԾԹ.	Պետրէ կորդակեցին.	
Կ.	Յուլիանէ.	40

		ամք			ամք
ԿԱ․	Աթանասիոս․	41	ՁԱ․	Յովհաննէս․	
ԿԲ․	Յովհաննէս․	42	ՁԲ․	Յովհան․	
ԿԳ․	Դիոդորոս․	43	ՁԳ․	Դիոնէսիոս․	
ԿԴ․	Սեւերիանոս․	44	ՁԴ․	Աբրահամ․	
ԿԵ․	Յուլիէ․	45	ՁԵ․	Յովհաննէս	
ԿԶ․	Եղիա․		ՁԶ․	Աթանաս	
ԿԷ․	Աթանաս․		ՁԷ․	Յովհաննէս․	
ԿԸ․	Յովհան․		ՁԸ․	Դիոնէսիոս,	
ԿԹ․	Իսահակ․		ՁԹ․	Յովհաննէս․	
Հ․	Աթանաս․		Ղ․	Աթանաս․	
ՀԱ․	Գէորգ․		ՂԱ․	Յովհաննէս․	
ՀԲ․	Յովսէփ․		ՂԲ․	Վասիլիոս․	
ՀԳ․	Կիրակոս․		ՂԳ․	Աբրոն․	
ՀԴ․	Դիոնէսիոս․		ՂԴ․	Դիոնէսիոս․	
ՀԵ․	Յովհաննէս․		ՂԵ․	Աթանաս․	
ՀԶ․	Իգնատիոս․		ՂԶ․	Յովհան․	
ՀԷ․	Դիոդոս․		ՂԷ․	Գրիգոր․	
ՀԸ․	Դիոնէսիոս		ՂԸ․	Յովհան․	
ՀԹ․	Յովհան․		ՂԹ․	Աթանաս․	
Ձ․	Վասիլիոս․		Ճ․	Միխայլ եւ․	

ԱԹՈՌԱԿԱԼՔ ՀՌՈՎՄԱՅ

		ամք			ամք
Ա․	Պետրոս [illegible]․	25	ԺԱ․	Անիկտոս․	11
Բ․	Լինոս․	12	ԺԲ․	Սովտեր․	9
Գ․	Անիտոս․	11	ԺԳ․	Եպուրիոս․	8
Դ․	Կղեմէս․	9	ԺԴ․	Կեղեստիոս․	5
Ե․	Ուրստոս․	8	ԺԵ․	Ալութորոս․	15
Զ․	Աղէքսանդրիոս․	12	ԺԶ․	Բեկտոր․	70
Է․	Քսեստոս,	30	ԺԷ․	Ուրբանոս․	9
Ը․	Տաղեսփորոս․	11	ԺԸ․	Բունդիանոս․	5
Թ․	Սիղուփանոս․	4	ԺԹ․	Անտիտոս․ ամիս	8
Ժ․	Փիոս,	15	Ի․	Բուփանոս․	13

		ամ
ԻԱ·	Կոււռնելիոս·	2
ԻԲ·	Լուկիոս·	4
ԻԳ·	Ստեփանոս·	1
ԻԴ·	Քսեստոս·	11
ԻԵ·	Դիոնէսիոս·	8
ԻԶ·	Գիմէսիոս·	8
ԻԷ·	Ուտուկիոս·	1
ԻԸ·	Գայիոս:	2
ԻԹ·	Մարագլոս·	1
Լ·	Եւսեբի·	1
ԼԱ·	Մելտիանոս·	21
ԼԲ·	Սեղբեստրոս·	23
ԼԳ·	Մարկոս	2
ԼԴ·	Սիլիոս·	15
ԼԵ·	Լիբերիոս·	4
ԼԶ·	Փիլիքսոս·	1
ԼԷ·	Դամասոս·	18
ԼԸ·	Սիրիկիոս·	5
ԼԹ·	Անաստաս·	3

		ամ
Խ·	Անասնիտոս·	15
ԽԱ·	Զոսիմոս·	7
ԽԲ·	Կեղեստինոս·	9
ԽԳ·	Լեւոն երկաբնակն·	
ԽԴ·	Գաղոս·	8
ԽԵ·	Իլարիոս·	7
ԽԶ·	Սիբիլլոս·	1
ԽԷ·	Անաստաս·	11
ԽԸ·	Սիմաքէ· աստի յառաջ երկաբնակք էին:	
ԽԹ·	Թորմիստոս·	2
Ծ·	Որմիստէս·	10
ԾԱ·	Յովհան·	14
ԾԲ·	Փելիքս·	35
ԾԳ·	Բիքիլոս·	20
ԾԴ·	Ագաբոս·	1
ԾԵ·	Սեղբեստրոս:	1
ԾԶ·	Պղակիոս·	3
ԾԷ·	Մարտինոս·	

ԱԹՈՌԱԿԱԼՔ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ

		ամ
Ա·	Մարկոս	22
Բ·	Անկիոս·	22
Գ·	Միլոս·	13
Դ	Գարտոնիոս·	11
Ե·	Փրուգիոս·	12
Զ	Յուստոս·	11
Է·	Ամնիոս·	13
Ը	Մարկիանոս·	10
Թ	Կալերոս·	14
Ժ	Ագրիպաս·	12
ԺԱ·	Յուլիոս·	14

		ամ
ԺԲ·	Դեմետրիոս·	63
ԺԳ·	Իդիմոս·	16
ԺԴ·	Դիոնէսիոս·	7
ԺԵ·	Մաքսիմոս·	18
ԺԶ·	Թէոնիկաս·	19
ԺԷ·	Պետրոս· վկայն է ամ·	10
ԺԸ·	Աքիլաս·	6
ԺԹ·	Աղեքսանդր· առնէ ժողովն Նիկիոյ:	20
Ի·	Աթանաս·	46
ԻԱ·	Պետրոս	7

		ամք
ԻԲ.	Ղուկիոս արիանոս պիղծ.	
ԻԳ.	Տիմոթէ. եղբայրն Պետրոսի.	4
ԻԴ.	Թէոփիլոս.	28
ԻԵ.	Կիւրեղ Մեծ. սա է ժողովն Եփեսոսի.	26
ԻԶ.	Դիոսկորոս.	7
ԻԷ.	Պրոտեր հերետ.	
ԻԸ.	Տիմոթէոս հերետ.	20
ԻԹ.	Տիմոթէոս ուղղափ.	3
Լ.	Յովհաննէս հերետ.	
ԼԱ.	Պետրոս.	12
ԼԲ.	Աթանասիոս.	7
ԼԳ.	Յովհաննէս.	9
ԼԴ.	Յովհան.	11
ԼԵ.	Դէոսկորոս.	1
ԼԶ.	Տիմոթէոս.	11
ԼԷ.	Դիոդորոս.	38
ԼԸ.	Պետրոս.	1
ԼԹ.	Դայիանէ հերետ.	
Խ.	Պաւղոս.	40
ԽԱ.	Զուկլիոս.	1
ԽԲ.	Ապողինարոս	2
ԽԳ.	Թէոդորէ.	3
ԽԴ.	Պետրէ.	1
ԽԵ.	Յովհան երկաբնակ.	7
ԽԶ.	Դամիանէ.	7
ԽԷ.	Անաստաս.	1
ԽԸ.	Անդրոնիկոս.	2
ԽԹ.	Բենիամին.	30
Ծ.	Կաւրա քաղկեդոնիկ.	
ԾԱ.	Ագաթոն.	1
ԾԲ.	Յովհան.	2
ԾԳ.	Շմաւոն.	3
ԾԴ.	Սահակ.	1
ԾԵ.	Աղեքսանդրոս.	2
ԾԶ.	Կոզմա.	40
ԾԷ.	Յովհան.	
ԾԸ.	Մարկոս.	
ԾԹ.	Յակոբ.	
Կ.	Շմաւոն.	
ԿԱ.	Յովսէփ.	

ԱԹՈՌԱԿԱԼՔ ԵՓԵՍՈՍԻ

		ամք
Ա.	Անդրէաս.	12
Բ.	Եստիոս.	10
Գ.	Տիմոթէոս.	14
Դ.	Պոլիկարպոս.	17
Ե.	Պուլիդ.	15
Զ.	Սոաքէ.	8
Է.	Դիոգինիս.	8
Ը.	Անտաթէ.	15
Թ.	Ալոթորոս.	9
Ժ.	Փիլիպպոս.	10
ԺԱ.	Պոլիկարպոս.	11
ԺԲ.	Ուզլոս.	5
ԺԳ.	Լաւրանտիոս.	8
ԺԴ.	Աղուբանոս.	7
ԺԵ.	Պրոտոնիկոս.	18

		ամք
ԺԶ.	Մարկոս.	13
ԺԷ.	Կիւրեղ.	10
ԺԸ.	Կուռնելիոս.	8
ԺԹ.	Դիգոս.	7

		ամք
Ի.	Դոմետրիէ.	11
ԻԱ.	Պրոբաս, առ փոխեցաւ (անուան Բիւզանդիոն) 'ի Կոստանդնուպօլիս։	

ԱԹՈՌԱԿԱԼՔ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ

		ամք
	Պրոբաս.	5
ԻԲ.	Աղեքսանդրոս.	23
ԻԳ.	Պաւղոս.	1
ԻԴ.	Մակեդոն.	
ԻԵ.	Եւսեբիոս.	1
ԻԶ.	Եւդոքսի հերետ.	
ԻԷ.	Եւագրիոս հերետ.	
ԻԸ.	Դիմոփիլէ հերետ.	
ԻԹ.	Գրիգոր Նազիանզացին։	10
Լ.	Նեկտարիոս.	8
ԼԱ.	Յովհան ոսկեբերան.	7
ԼԲ.	Երեսկիոս.	1
ԼԳ.	Ատտիկոս.	10
ԼԴ.	Սիսինիոս.	2
ԼԵ.	Նեստոր չարափառ.	
ԼԶ.	Մաքսիմիանոս.	2
ԼԷ.	Պրոկղոս.	12
ԼԸ.	Փլաբիոս հերետ.	
ԼԹ.	Անատոլ հերետ.	
Խ.	Իգնատիոս հերետ.	

		ամք
ԽԱ.	Ակակիոս.	2
ԽԲ.	Պլաւիտոս.	4
ԽԳ.	Ուփիմիոս հերետ.	
ԽԴ.	Մակեդոն հայհոյիչ հոգւոյն։	
ԽԵ.	Տիմոթէոս.	5
ԽԶ.	Յովհաննէս երկաբնակ։	
ԽԷ.	Եպիփան.	23
ԽԸ.	Անթիմոս.	1
ԽԹ.	Յոհան. 'ի սմանէ յառաջ երկաբնակք էն։	
Ծ.	Յովհաննէս.	1
ԾԱ.	Կիւրիակէ.	1
ԾԲ.	Սարգիս.	1
ԾԳ.	Մինաս.	3
ԾԴ.	Գերմանիոս.	17
ԾԵ.	Նուգոսոս.	7
ԾԶ.	Բուրոս.	1
ԾԷ.	Պաւղոս.	1

ԱԹՈՌԱԿԱԼՔ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

		ամք
Ա.	Յակովբոս.	
Բ.	Շմաւոն.	42
Գ.	Յուստոս.	
Դ.	Զաքէ.	
Ե.	Տուբիա.	
Զ.	Բենիամին.	
Է.	Յովհան.	
Ը.	Մատթէոս.	
Թ.	Փիլիպպոս.	
Ժ.	Սենեկէս.	
ԺԱ.	Յուստոս.	
ԺԲ.	Ղեւի.	
ԺԳ.	Եփրեմ.	
ԺԴ.	Յովսէփ.	
ԺԵ.	Յուդա, ամենեքեան հրէայք էին։	
ԺԶ.	Նարկէսոս, (՞).	
ԺԷ.	Մարկոս.	
ԺԸ.	Կասիանոս.	
ԺԹ.	Պոպղիոս.	
Ի.	Մաքսիմոս.	
ԻԱ.	Յուլիանոս.	
ԻԲ.	Գայիոս.	
ԻԳ.	Սիմաքոս.	
ԻԴ.	Գայիոս.	
ԻԵ.	Յուլիանոս.	
ԻԶ.	Կիպիտոս.	
ԻԷ.	Վաղէս.	
ԻԸ.	Դոլիխիանոս.	
ԻԹ.	Նարկէսոս.	
Լ.	Դիոս.	
ԼԱ.	Գերմանիոն.	
ԼԲ.	Գորդիոս, (Գորդիանոս).	
ԼԴ.	Նարկէսոս վերստին.	
ԼԴ.	Աղեքսանդրոս.	
ԼԵ.	Մզաբենոս.	
ԼԷ.	Հիմենոս.	
ԼԸ.	Ըզբերդա, (Զաբդաս).	
ԼԹ.	Հերմոն.	
Խ.	Դապատոս, (՞).	
ԽԱ.	Հերմոն, ապա է ճգնութեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչին։	
ԽԲ.	Մակար.	
ԽԳ.	Մաքսիմոս, զորոյ աչսըն հանին անօրէնք։	
ԽԴ.	Կիւրեղ, ծէ ամ, և աքսորեցաւ.	
ԽԵ.	Ակակի, որ զԿիւրեղ աքսորեաց։	
ԽԶ.	Սեւերիանոս, ապա եղեւ փոխանակ Աթանասի, որ ՅՏ̄ եղեւնորս։	
ԽԷ.	Դամասոս.	
ԽԸ.	Կիւրեղ, սա արար ըզ Կոյսումն ընծայութեան։	
ԽԹ.	Յովհաննէս.	22
Ծ.	Պրաւլիոս.	
ԾԱ.	Պրովալիս.	5
ԾԲ.	Յոբնաղ.	40
ԾԳ.	Թէոդոս, զսա եդին ուղղափառացն փոխանակ Յոբնաղի։	
ԾԴ.	Անաստասիոս ուղղափառ։	

ամ.
ԾԵ. Մերտուրիոս հերե-տիկոս.
ԾԶ. Սեւաստիոս հերէտ.
ԾԷ. Վելիաս.
ԾԸ. Յովհաննէս.

ամ.
ԾԹ. Պետրոս.
Կ. Մակար, սա միշտ հրէաց ընդ ուղղափառայն.
ԿԱ. Եւստաթէոս։

Մինչեւ ցայժմ գրեցաք զաթոռակալքս հինգ աթոռոյս, զի կային 'ի նոցանէ ոմանք որք ողջունէին զուղղափառութիւն, և դեռ սակաւ էր չարն։ Իսկ վասն զի Մարտինոս հռոմայեցի յաւել 'ի վերան Քաղկեդոնի, և հաստատեաց զհաւատան Յովհաննիսի գրամատի և զՄաքսիմոսի, և բազմապատկեալ ըզչարն 'ի վերայ երկու բնութեանն՝ ասաց երկու կամս և երկու ներգործութիւնս, և վասն բուռն իշխանութեանն Հռոմոց տարածեցաւ անօրէնութիւնն յասացեալ աթոռքս, և չմնաց յոյս բժշկութեան և միաբանութեան սիրոյ առ միմեանս. այսուհետեւ զինչ հարկ է մեզ գրել զօտարացեալսն, զի ոչ կոչել արժան է մեզ զնոսա հայրապետս, և ոչ թուել զնոսա 'ի շար առաջին սրբոցն, և ոչ զապականեալ նիւթսն դնել 'ի վերայ սուրբ հիմանն։

Այլ եթող մեզ շնորհ գթութեանն Քրիստոսի զաւակ կենդանութեան և սերմն ազնուական անձման սրբութեան զկոյսն սուրբ՝ զեկեղեցին Հայաստանեայց, զանեալն յանախտ արմատոյն և զպատկերեալն 'ի նմին իսկ 'ի Փրկչէն մերմէ անդրանիկ հաւատով 'ի ձեռն Աբգարու, որ ունէր զՀայս և զԱսորիս թագաւորդեալ ճոխութեամբ, և նստէր 'ի Միջագետս յՈւռհա քաղաք, թագաւորեցուցեալ 'ի կողմն արեւելից զՍանատրուկ քեռորդի իւր, որ և խնդրեաց 'ի ձեռն հաւատոց և զերկնաւոր արքայութիւնն։ Քանզի լուաւ նա զլուր սքանչելեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զոր կատարէր յերկիրն Հրէաստանի, և առաքեաց թղթով զԱնանէ հաւատարիմ իւր՝ արամբք առ Տէր աղաչել զնա գալ առ նա և թագաւորել ընդ նմա 'ի յՈւռհա անհոգութեամբ, և ապրիլ 'ի սպանող և յապստամբ ազգէն Հրէից։ Եւ զայս մարգարէացաւ կանխաւ Երեմիա և ասէ. "Յաւուրսն յայնոսիկ եկին արք տասն յԵրուսաղէմ խնդրել զՏէր կարօտութեամբ 'ի սէր ջերմութեանն։" Եւ զայն յիշէ Յովհաննէս աստուածաբան և ասէ. "Մատեան առ Փիլիպպոս և ասեն. կամիմք զՅիսուս տեսանել. և Փիլիպպոս ասէ ցԱնդրէաս, և Անդրէաս և Փիլիպպոս ասեն ցՅիսուս։ Եւ Յիսուս պատասխանի ետ և ասէ. Եհաս ժամ զի փառաւորեսցի Որդի մարդոյ։" Այսինքն թէ՝ արքայն հեթանոսաց եկաց դուռն հաւատոյ ամենայն աշխարհի փառաւորել զիս։ Եւ դարձեալ զխաչն նշանակեաց, թէ եկեալ հասեալ է ժամանակ չարչարանաց իմոց զոր աստ կատարելոյ եմ. և չէ ժամ գնալոյ աստի ։ Եւ հրամայեաց Թումայի առաքելոյն գրել պատասխանի Աբգարու . և երանեաց զնա և խոստացաւ յետ յարութեան իւրոյ առաքել առ նա զմի յաշակերտաց իւրոց բժշկել զնա 'ի ցաւոցն զոր ունէր . և տալ նմա և աշխարհին իւրոյ կեանս յաւիտենականս և անպարտումն . զոր և արար իսկ , առաքեաց զԹադէոս , որ եկն 'ի Կեսարիա Հայոց զառաջինն, և արկ անդ հիմն եկեղեցւոյ. և ձեռնադրեաց անդ եպիսկոպոս Թէոփիլէ անուն , և գնաց 'ի յՈւռհա , և մկրտեաց զԹագաւորն և զամենայն քաղաքն , և զբազումս 'ի գաւառացն շուրջանակի . և հաստատեաց եկեղեցիս , ձեռնադրեաց իւր փոխանորդ զԱդդէ , և առեալ Թուղթ առ Սանատրուկ և 'ի գաւառն Հայաստանեաց ընդ կողմամբքըն արեւելից գնաց , և կատարեցաւ վկայութեամբ 'ի Սանատրկոյ , Թողեալ իւր փոխանորդ անդ զոմանս Զաքարիա և Եմենտոս անուն ։ Քանզի յետ սակաւ ժամանակի մեռաւ Աբգար, և անհոգացաւ Սանատրուկ, և սպան զԱռաքեալն ։

Եւ յետ այնորիկ Բարթողոմէոս գնացեալ 'ի նոյն վիճակ Հայաստանեաց , և 'ի նոյն Թագաւորէ կատարեցաւ . և յայնժամ բարձաւ համարձակութիւն հաւատացելոցն . սակայն ոչ պակասեաց հաւատն հիմնարկեալ առաքերթական, մինչեւ 'ի գալն Հռիփսիմեանցն և 'ի հաւատալն Տրդատայ արքայի 'ի նմին ցեղէ Աբգարու երանեցելոյն 'ի Տեառնէ, 'ի ձեռն մեծահանդէս նահատակին Գրիգորի, սքանչելի և նորանշան և տիեզերալուր վկայի. որ և առեալ զաստիճան Առաքելոցն որոց Թադէի և Բարթողոմէի, ելից զպակասութիւն նոցա, լուսաւորելով ծայրէ 'ի ծայր զամենայն Հայաստանեայս և զտունն Վրաց և զաշխարհն Աղուանից, և զամենայն գաւառսն շուրջանակի Հայոց ելից գիտութեամբ ճշմարտութեանն. և փոխեցին ըստ կարգի որդիք նորա զհաւատս ճշմարիտս և զվարս նորա զամբիծս, և զնահատակութիւն նորա համապազորդ ժրաջան ճգնութեամբ և անաչառ յանդիմանութեամբ, զանցաւորս պատուիրացն Աստուծոյ, խօսելով և խորհելով յօրէնս Տեառն 'ի տուէ և 'ի գիշերի։

Եւ թէպէտ և սրբութեամբ արեանառուք նորա, պարկեշտութեան զաւակքն ժամանակաւ զտեղի առին, այլ սերմն հաւատոյ նորա ուղղափառութեան, և ըստ հոգւոյ ծնունդքն նորա արմատացեալ եկաց և մնաց յաւիտեան, նախանձաւոր գործոյ բարութեան, և անյաղթելիք 'ի պէսպէս պատահմանց և 'ի դիպուածոց մնացեալք. կացեալք 'ի փոփոխական ժամանակս անփոփոխըս, զորս ոչ պատրեաց փառքն Յունաց *դիւրաթառամն զոր խոստանային նոցա . և ոչ զուռոզական խրոխտալն նոցա որ 'ի ժամանակի բարձրութեան իւրեանց սպառնային . այլ յուսովն Աստուծոյ և յաղօթս մեծի Լուսաւորչին տեւեցին և մնացին յառաքելադիր հիմանն : Եւ թէպէտ սակաւք 'ի նոցանէ ակարացան ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի , այլ արմատն նոցա անփոխելի և առողջ կացեալ տարածեցաւ վերստին կենդանութիւնն անմահական հաւատոյն . և եղեն մեզ 'ի մխիթարութիւն և 'ի սփոփանս և 'ի վկայութի : Զի թէպէտ և աթոռն Աղէքսանդրու յԵգիպտոս և ամենայն Եթէոպիա և Հնդկաստան , ազգքն ընդարձակ և բազմաթիւ և թագաւորութիւնք և ձոխութիւնք և փարթամութեամբ քան զամենեսեան զանազանեալք , այլ վասն զի նոքա և հեռաւորք և բացականք են , անկարանան զգլուխս մեր բարձրացուցանել , և զպարծանս մեր աճեցուցանել 'ի Քրիստոս : Իսկ սոքա բազում եղեն մեզ նպաստամատոյցք և ձեռնտուք , և գրեթէ նոքօք կարացաք տեւել այն ամենայն անցից որք եկին 'ի վերայ մեր , և եղեն մեզ սիւն և հաստատութիւն . և ուխտ խաղաղութեան և դաշն սիրոյ է 'ի միջի մերում մինչեւ յաւիտեան . վասն որոյ և մեր սկսեալ զխորհուրդ քահանայութեանն յԱստուծոյ Հօրէ , կատարեցուք 'ի նոցա քահանայու-*

թիւնն, որ ըստ կամացն Աստուծոյ կայ և մընայ յաւիտեան :

Եւ քանզի երեք Առաքեալք մտին 'ի Հայք, Թադէոս և Բարթողոմէոս և Յուդա Յակովբայն. և թէպէտ զառաջինն Թադէոս եկն և ապա Բարթողոմէոս և Յուդա, այլ զի ոմանք ասեն թէ Թադէոս 'ի յեւթանասնիցն է, վասն այնորիկ դիցուք զլուխ քահանայութեան նոցա զԲարթողոմէոս և ապա զԹադէոս և ապա զՅուդա և զայլ առաջնորդսն ըստ կարգի, և շնորհօքն Աստուծոյ հասուսցուք մինչև առ մեզ, և 'ի նոսա վըճարեսցուք զապարէզ աշխատութեանս մերոյ, և հանգիցուք 'ի նաւահանգիստ յուսոյ խոստմանն Աստուծոյ, որ է սկիզբն և աւարտ ամենայն բարեաց, որ է օրհնեալ յաւիտեանս յաւիտենից :

Ա. ԲԱՐԹՈՂՈՄԷՈՍ առաքեալ, մի յերկոտասանիցն :

Բ. ԹԱԴԷՈՍ, զոր Աւետարանն պատմէ՝ թէ զառաջինն կոչէր Ղեբէոս, և 'ի Տեառնէ անուանեցաւ Թադէոս :

Գ. ՅՈՒԴԱ Յակովբայն, որ և սա յերկոտասանիցն վկայի և կայ յԱրմի քաղաք Հայոց:

Դ. ՍԻՄՈՆ որդի Յովսեփու եղբայր Տեառըն մերոյ, և սա քարոզեաց 'ի Հայս. և անդէն կատարեցաւ, և կայ յԱրմի քաղաք Հայոց :

Ե. ՆԵՂԻՃԷ և ԽԱԴ. երկոքին սոքա յեւթանասնիցն են, և գնացին 'ի կողմանս Աղուանից հրամանաւ Թադէի, և անդ կատարեցան:

Զ. ԹԷՈՓԻԼՈՍ, առաջին ձեռնադրութիւն Թադէոսի 'ի Կեսարիա Հայոց 'ի Կապադովկիա:

Է. ԱԴԴԷ, կերպասագործ արքային Աբգարու, զոր կացոյց 'ի Միջագետս յՈւռհա քաղաք:

Ը. ԶԱՔԱՐԻԱ, զոր ձեռնադրեաց յարեւելս փոխան իւրեան, և ասաց՝ զսա ետու ձեզ վարդապետ, զոր ելից հոգին Տեառն:

Թ. ԹԱԴԷՈՍ, մի յեւթանասնիցն, որ գնաց հրամանաւ Թադէի 'ի մեծն Հայս, և 'ի կողմանս հիւսիսոյ. և լուեալ զմահն Աբգարու, դարձաւ և եմուտ 'ի փոքր Սիւնիք, և կրօնաւորեալ անդէն ծածկաբար՝ վախճանեցաւ, և տեղին շինեցաւ վանք և յանուն նորա կոչեցաւ:

Ժ. ՍՈՒՐԲՆ ԳՐԻԳՈՐ, լուսաւորիչն բովանդակ Հայաստանեայց, զամս 30:

ԺԱ. ՍՈՒՐԲՆ ԱՐԻՍՏԱԿԷՍ, կրտսեր որդին սրբոյն Գրիգորի որ 'ի ժողովն մեծ էր, ամս 7:

ԺԲ. ՏԷՐ ՍՈՒՐԲՆ ՎՐԹԱՆԷՍ, երէց որդին մեծին Գրիգորի, ամս 17:

ԺԳ. ՏԷՐ ՍՈՒՐԲՆ ՅՈՒՍԻԿ, որդին Վրթանայ, ամս 6: Եւ Գրիգորիս եղբայր նորա Ազուանից կաթողիկոս եկաց՝ 6 ամ։

ԺԴ. Տէր ՓԱՌՆԵՐՍԷՀ, ՚ի գաւառէն Տարօնոյ, յԱշտիշատոյ, ամս 3։

ԺԵ. Տէր ՍՈՒՐԲՆ ՆԵՐՍԷՍ, որդի Աթանագինեայ՝ որդւոյ Յուսկանն, ամս 34։

ԺԶ. Տէր ՅՈՒՍԻԿ, զոր կացուցին զկնի մահուան սրբոյն Ներսեսի, ամս 4։

ԺԷ. Տէր ԶԱՒԷՆ, զկնի Յուսկանն կալեալ զաթոռն ամս 4։

ԺԸ. Տէր ՇԱՀԱԿ, եղբայր Զաւէնի ՚ի Մանձկերտոյ, ամս 6։

ԺԹ. Տէր ԱՍՊՈՒՐԱԿԷՍ, եղբայր Շահակայ և Զաւէնի, ամս 7։

Ի. Տէր ՍՈՒՐԲՆ ՍԱՀԱԿ Պահլաւ, որդի սրբոյն Ներսէսի, թոռն Յուսկանն, ամս 50։ Եւ աստ կատարեցաւ ցեղն սուրբ Գրիգորի։

ԻԱ. Տէր ՍՈՒՐՄԱԿ, հակառակաթոռ սրբոյն Սահակայ, ամ մի։

ԻԲ. Տէր ԲԱՐԴԻՍՈՒ, ազգաւ Ասորի, ամս 3։

ԻԳ. Տէր ՍԱՄՈՒԷԼ, նոյնպէս Ասորի ազգաւ, ամս 3։

ԻԴ. Տէր ՍՈՒՐԲՆ ՅՈՒՍԷՓ, յաշակերտացն սրբոյն Սահակայ, ամս 3։ Սա վկայեաց Քրիստոսի, ՚ի Յազկերտէ Պարսից թագաւորէ ընդ սուրբ Ղեւոնդեայ։

ԻԵ. Տէր ԳԻՒՏ, վանանդացի, ՚ի գեղջէ Օթմսու, ամս 10։ Սա եդ զաթոռն ՚ի Դըւին քաղաքի։

ԻԶ. Տէր ՅՈՎՀԱՆ Մանդակունի հոգեկիր, ամս 6։

ԻԷ. Տէր ԲԱԲԳԷՆ, վանանդացի, ամս 6։ Յաւուրս սորա ամենայն Յոյնք եւ Վիրք նզովեցին զժողովն Քաղկեդոնի. ամս 43, յաւուրս Զենոնի եւ Անաստասայ թագաւորաց։

ԻԸ. Տէր ՍԱՄՈՒԷԼ, ՚ի գեղջէ Արծկէոյ, ամս 10։

ԻԹ. Տէր ՄՈՒՇԷ, ՚ի գաւառէ Կոտէից, ՚ի գեղջէ Այլաբերից, ամս 8։

Լ. Տէր ՍԱՀԱԿ, ՚ի Հարքայ, ՚ի գեղջէ Ուղկայ, ամս 5։

ԼԱ. Տէր ՔՐԻՍՏԱՓՈՐ, ՚ի Բագրեւանդայ, ՚ի գեղջէ Տիրառճոյ, ամս 6։

ԼԲ. Տէր ՂԵՒՈՆԴ, ՚ի գաւառէ Առուբերանոյ, ՚ի գեղջէ Առեստոյ փոքու, ամս 3։

ԼԳ. Տէր ՆԵՐՍԷՍ, ՚ի Բագրեւանդայ, ՚ի գեղջէ Աշտարակայ, ամս 9։

ԼԴ. Տէր ՅՈՎՀԱՆՆԷՍ, ՚ի Գաբեղենից, ՚ի գեղջէ Սիւնեղայ, ամս 17։

ԼԵ. Տէր ՄՈՎՍԷՍ, յԱրագածոտանէ, ՚ի գեղջէ Եղիվարդայ, ամս 30։ Ի տասն ամի սորա եղաւ թուականս Հայոց։

ԼԶ. Տէր ԱԲՐԱՀԱՄ, յՌշտունեաց, ՚ի գեղջէ Աղբաթոնից, ամս 23։ Յաւուրս սորա Վիրք ՚ի բաց կացին ՚ի միաբանութենէ Հայոց, եւ եղեն ընդ Յոյնս Կիւրիոնիւ։

ԼԷ. Տէր ՅՈՎՀԱՆՆԷՍ, ՚ի Գոկովտայ, ՚ի

գեղջէ Բագարանէ, ամս 26։ Սա եդ աթոռ 'ի Կոտայն, յաւուրս Մօրկայ թագաւորի։

ԼԸ. Տէր ԿՈՄԻՏԱՍ, 'ի գեղջէ Աղցից, ամս 26. շինող։

ԼԹ. Տէր ՔՐԻՍՏԱՓՈՐ, յԱղատ տանէ, յԱբրահամեան անուանեալ տոհմէ, ամս 4։

Խ. ԵԶՐ, 'ի Նգայ, որ տգիտութեամբ և կաշառօք հաւանեցաւ Հերակլի և քաղկեդոնիկ եղեւ, բայց մեծ մասն Հայոց և վանորայքն անշարժ մնացեն։

ԽԱ. Տէր ՆԵՐՍԷՍ, շինող մեծ եկեղեցւոյն 'ի Վաղարշապատ, և սրբոյն Սարգսի 'ի Դուին, և 'ի Վիրապին։

ԽԲ. Տէր ԱՆԱՍՏԱՍ, 'ի գեղջէ Ակոռւոյ, ամս 6։

ԽԳ. Տէր ԻՍՐԱՅԵԼ, 'ի Վանանդայ, յՕթմսու գեղջէ, ամս 10։ Սա եհան զՆերսէս 'ի Պարտաւայ կամօք Աղուանից։

ԽԴ. Տէր ՍԱՀԱԿ, հայրենեօք 'ի Ձորոփորոյ, 'ի գեղջէ Արքուայ, ամս 25։ Սա կատարեցաւ 'ի Խառան։

ԽԵ. Տէր ԵՂԻԱ, 'ի գաւառէ Աղէովտայ, 'ի գեղջէ Արճիշոյ, ամս 13։

ԽԶ. Տէր ՅՈՎՀԱՆՆԷՍ իմաստասէրն և սքանչելագործն, յՕձնայ, ամս 11։ Սա ջնջեաց զաղտորութիւն Եզրի յամենայն Հայոց։

ԽԷ. Տէր ԴԱՒԻԹ, 'ի գաւառէ Կոտայից, ամս 13։

ԽԸ. ՏԷՐ ՏՐԴԱՏ, 'ի Վանանդայ, 'ի գեղջէ Օթմու, ամս 23։

ԽԹ. ՏԷՐ ՍԻՈՆ, յեպիսկոպոսութենէն անկեալ 'ի կաթողիկոսարանն, ամս 8։

Ծ. ՏԷՐ ԵՍԱՅԻ, 'ի Նգայ, 'ի գեղջէ Եղապատրուշ, 'ի նոյն հայրապետանոցին սնեալ 'ի տղայութենէ, ամս 13։

ԾԱ. ՏԷՐ ՍՏԵՓԱՆՈՍ, 'ի Դունայ, այր սուրբ և գիտնական, ամս 2։

ԾԲ. ՏԷՐ ՅՈՎԱԲ, յՈստանէ կիւրապաղատին, ամիսս 6 միայն։

ԾԳ. ՏԷՐ ՍՈՂՈՄՈՆ, 'ի Գեղարքունեաց Գառնոյ (1), ամ մի։

ԾԴ. ՏԷՐ ԳԷՈՐԳ, յԱրագածոտանէ, 'ի բիւրակնեան գեղջէ, ամս 4։

ԾԵ. ՏԷՐ ՅՈՎՍԷՓ, յԱրագածոտանէ, 'ի մայրաքաղաքէ եկեղեցւոյն սրբոյն Գրիգորի, ամս 11։

ԾԶ. ՏԷՐ ԴԱՒԻԹ, 'ի Մազազայ, 'ի գեղջէ Կաղկաղայ, ամս 27։

ԾԷ. ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ, 'ի Կոտէից, 'ի գեղջէ Ովայից, ամս 22։

ԾԸ. ՏԷՐ ԶԱՔԱՐԻԱ, 'ի Կոտէից, 'ի գեղջէ Ձագ կոչեցելոյ, ամս 22։ Սմա ալամ ետ Յիսէ, խաչ բառնալ 'ի վերայ նորա։

ԾԹ. ՏԷՐ ԳԷՈՐԳ (2), 'ի Գառնոյ, ամս 21։

---

(1) Յօրինակին 'ի Գիւղ [illegible] Գառնոյ։

(2) Յօրինակին սխալմամբ գրի Տէր Գրիգոր։

Յաւուրս սորա թագաւորեաց Աշոտ բագրատունի։ Սա ըմբռնեաց ՚ի գերութիւն, և եհան զնա թագաւորն Աղուանից Համամ։

Կ. **Տէր ՄԱՇՏՈՑ**, *խոստովանողն, ամիսս* 7։

ԿԱ. **Տէր ՅՈՎՀԱՆՆԷՍ**, *ամս* 6 (1). ՅԽԶ *թըւականին Հայոց։*

ԿԲ. **Տէր ԵՂԻՍԷԷ**. *ամս* 7։

ԿԳ. **Տէր ԹԷՈԴՈՐՈՍ**. *ամս* 7։

ԿԴ. **Տէր ԱՆԱՆԻԱ**. *ամս* 23։ *Այր բարի և կատարեալ և լցեալ ամենայն առաքինութեամբ։*

ԿԵ. **Տէր ՍՏԵՓԱՆՈՍ**. *ամ մի։*

ԿԶ. **Տէր ՍԱՐԳԻՍ**. *ամ մի։ Սա կամաւ եթող զհոգս հայրապետութեան, պարապելով աղօթից։*

ԿԷ. **Տէր ՊԵՏՐՈՍ**։ *Զսա հանին և եդին ՚ի բանտի, և եդաւ Դիոսկորոս հայրն Սանահնին, և յետ միոյ ամի կաթողիկոսն Աղուանից դարձոյց յաթոռն իւր։*

ԿԸ. **Տէր ԽԱՉԻԿ**. *ամս* 2։ *Սա քեռորդի էր Պետրոսի, և երկուքն մեռան ՚ի Յունաց աշխարհն։*

ԿԹ. **Տէր ՎԱՀՐԱՄ**, *որդի Գրիգորի Մագիստրոսի։ Սա գնաց ՚ի Կոստանդինուպօլիս ՚ի Թարգմանութիւն, և անտի ՚ի Մսր, և դարձաւ,* 40 *ամ կեցեալ յետ ձեռնադրութեանն։*

---

(1) *Միւս Թարգմանութիւնն ուղղագոյն ևս դնէ ամս* 28։

Հ. Տէր ԳԷՈՐԳ, ամս 3, զկնի Վահրամայ։

ՀԱ. Տէր ԲԱՐՍԵՂ, ազգական տէր Վահրամայ, տեղապահ և կաթողիկոս կամաւ Տեառն Վահրամայ յետ գնալոյ նորա 'ի թարգմանութիւն, ամս 12։

ՀԲ. Տէր ԳՐԻԳՈՐ, ազգական տէր Վահրամայ և տէր Բարսեղի, ամս 54։

ՀԳ. Տէր ՆԵՐՍԷՍ, Շնորհաւորեալն վարդապետութեամբ, եղբայրն Տեառն Գրիգորի, ամս 7։ Սա արար յոլով երգս շարականաց։

ՀԴ. Տէր ԳՐԻԳՈՐ, եղբօրորդի նոցա, ամս 20։ Սա շինեաց զեկեղեցին գեղեցկապաճոյճ յանուն սրբոյն Գրիգորի։

ՀԵ. Տէր ԳՐԻԳՈՐԻՍ Տղայն, որ դիպուածով վախճանեցաւ։

ՀԶ. Տէր ԳՐԻԳՈՐԷՍ Ապիրատն կոչեցեալ, ամս 7։ Սա ունէր բան վարդապետութեան։

ՀԷ. Տէր ՅՈՎՀԱՆՆԷՍ, այր մեծամիտ և յաղթասէր, ամս 18։

ՀԸ. Տէր ԿՈՍՏԱՆԴԻՆ, յերրորդ մասնէ Հայոց, 'ի գաւառէ և 'ի գեղջէ Բարձրբերդոյ, որ հայի ընդ հարաւ 'ի դաշտն Կիլիկիոյ և 'ի ծոցն իւր Ադրիանոս կոչեցեալ։ Որդի առն արդարոյ և օրինապահի՝ Վահրամ անուն կոչեցելոյ. յորովայնէ ընտրեալ 'ի շնորհս և յաստիճան առաքելական. որ և օրինօք և վայելչական կենցաղավարութեամբ ճանապարհորդեալ ՚ի պատիւն բարձրագոյն, այսինքն վանից առաջնորդութեամբ և եպիսկոպոսութեամբ նախակրթեալ յառաջագոյն, արժանաւոր վարուք յաչս Աստուծոյ և մարդկան. վասն որոյ և շնորհն կոչեաց զարժանաւորն իւր յոլով թախանձանօք բռնադատեալ յեկեղեցականաց և յաշխարհականաց, յիշխանաց և յիշխեցելոց, ժառանգեաց զաթոռ սուրբ Լուսաւորչին Գրիգորի, և միաբանեալ ընդ շնորհին յերկարեցաւ ՚ի գործն յոր կոչեցաւ։ Նա է այժմ քսան և հինգ ամ հայրապետութեան սորա, յանառիկ ամրոցիս Հռոմկլայն անուանելոյ. խաղաղութիւն կալեալ առ հեռաւորս և մերձաւորս, վկայութիւն բարի և գովութիւն բազում յարտաքնոցն առեալ, և աղօթս առ Աստուած և փափագ բաղձանաց յընտանեացն ազգացն Հայաստանեայցս, յորոց վերայ հայրենի աղետիւք խնամարկէ, փարելով զամենեքումբք աղեխարշեալ յաղքատս, յորբս և յայրիս առատաձեռնութեամբ։ Նա առ գերեալս անխնայ ծախիւք դարձուցանելով. ՚ի վերայ զերծելոցն թևարկելով նման հաւու ՚ի վերայ ձագուց՝ զանցուցանելով զմարմնական ծնօղաց գթովք, զարդարելով և պճնելով զնոսա յամենայնի։ Որ և արար զանձն հաղորդ ամենայն երկեղածաց Աստուծոյ հաւատով և պէսպէս ծախիւք 'ի վանօրայս և յանապատս, պիտոյիւք և զարդիւք եկեղեցւոյ ։ Յորոց վերայ յաւել և զայս մատեան, և ես փոխել յասորւոց 'ի հայս, զոր վճարեցէ Աստուած բազմապատիկ փոխարինիւ աստ և 'ի հանդերձեալն ։

Որ թէպէտ և գրեալ ունիմք զժամանակս յԱդամայ հետէ, այլ այնք 'ի բազում գրեանս տարածեալ կան և յոլովաւուրց կարօտանամք ընթեռնլոյ . իսկ այս 'ի բազում պատմագրաց հաւաքեալ և համառօտեալ, ախորժելի և պիտանի է ուսումնասիրաց ։ Զի ոչ որպէս այլք 'ի պատմագրաց մեկուսի գնայ ընդ ազգ մի կամ ընդ թագաւորութիւն մի, և կամ սակաւ ինչ տանելով զբանն բովանդակէ թուով սուղ ժամանակաց . այլ սա բուռն հարկանելով զԱստուածաշունչ գրոց՝ բերէ ընդապէս, քաղելով զամենայն աշխարհաց և զթագաւորութեանց զորոց 'ի մի շար . և յամենայն ժամանակաց վերայ քայլելով զարժանաւորսն յիշատակի հաւաքելով հատուցանէ մինչեւ առ մեզ ։ Եւ բազում բանս անծանօթս գտաք 'ի սմա, և յոլով տարակոյս մեր լուծաք . վասն որոյ զյոլովիւք զանց արարաք զոր առ մեզ գիտ էր, և ոչ գրեցաք՝ զի մի աւելորդս թուեսցիմք աշխատել . և էր որ կրկնեցաք զայլոց գրոց ասացեալըն կարճառօտիւք՝ վասն զուեղըն լելոյ և զոճն պահելոյ։ Եւ ընդ անծանօթ բանիցն որ աստ՝ մի՛ զարմասցուք և սուտ կարծեսցուք. զի ազգն Ասորւոց մօտաւոր և ընտանի է միշտ լեալ Հրէից աշխարհաւ և ազգաւ և լեզուաւ, քան զամենայն ազգս և յարուեստից իմաստնոց (*), և վարժք 'ի յուսումն. զի և ինքեանք Քաղդէացիք են, և որպէս աստ գտանես՝ առաջին լեզու և գիր։ Նաեւ որ զայս քաղածոյս աշխատեալ է Տէր Միխայէլ, 'ի Յունաց և Եգիպտացւոց և Եբրայեցւոց և 'ի Հռոմայեցւոց և Ասորւոց պատմագրաց է ժողովեալ, վասն որոյ առաւել սիրելի և հաւատարիմ է. որոյ յիշատակն օրհնութեամբ յեկեղեցիս, և վարձըն բազմապատիկ առաջի Աստուծոյ։

Արդ՝ 'ի յամի անժամանակին Աստուծոյ ընդ ժամանակաւ լինելոյն ՌՄԽԸ (1248) թուահամարութեանս, և 'ի ՈՂԵ թուաբերութեանս Հայոց, փոխեցաւ գիրքս այս յասորւոց 'ի հայս հրամանաւ Տեառն Կոստանդեայ, 'ի քսան և հինգ ամի հայրապետութեան իւրոյ, և 'ի քսան և հինգ ամի թագաւորութեան Հայոց Հեթմոյ. որոյ Տէր Աստուած փառաւորեսցէ զհոգիս նոցա, և սուրբ հայրապետացն և թագաւորացն պսակակից և թագակից արասցէ յիւր արքայութիւնն. որում փառք և զօրութիւն *և երկրպագութիւն ամենասուրբ Երրորդութեան, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:*

Յիշատակարան երկրորդ:

ԲԱԶՄԱԴԻՄԻ է շնորհք մարդասիրին և բարերարին Աստուծոյ առ ազգս մարդկան, զի յորդորէ հանապազ զբնութիւն մարդոյ ՚ի գործս բարիս և ՚ի շինութիւն հաւատոյ, այսինքն ՚ի սէր և ՚ի պարծանս ամենասուրբ անուան իւրոյ. վասն զի որպէս ինքն Արարիչն և ամենազօրն Աստուած բնութեամբ բարի է, նոյն և սիրող է բարեսիրաց և բարեգործաց ազգի մարդկան, ըստ այնմ որ ասէ. "Բարի առնէ տէր բարեաց." և դարձեալ թէ՝ "Բարի է Աստուած և բարեաց արժանաւորացն տայ:" Եւ արդ զինչ է պտուղն բարւոյն, եթէ ոչ խաչն և եկեղեցին և գիրքն, որով յորդորին աստուածասէր և բանաւոր մարդիկ գործել և սիրել զբարիս վասն յիշատակի և փոխարինի հանդերձելոցն բարեաց: Վասն զի ոմանք շինեն եկեղեցիս՝ հրեշտակաց բնակարան և մարդկան քաւարան: Ոմանք կազմեն խաչս յանկւոյ սրբոյ, և զարդարեն պատուական և պայծառ ակամբք վասն յիշատակի և սիրոյ խա-

չելոյն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ արար խաղաղութիւն յերկինս և յերկրի արեամբ խաչին իւրոյ։ Ամենք զուգեն գիրք, այսինքն գրելով զյիշատակս մարտիրոսաց յաղագս բարեխօսութեան առաջի ահեղ ատենին Քրիստոսի։ Ամենք արձանագրեն զյաղթութիւն և զպատերազմունս թագաւորաց աշխարհականաց, յուշ առնելով ազգի մարդկան առ ժամանակ մի լինել զթագաւորութիւն մահկանացու թագաւորացս, իսկ անմահ թագաւորին Քրիստոսի Աստուծոյ մերոյ թագաւորութիւնն անանց և յաւիտենական։

Արդ՝ ես նուաստս յամենայնի Ստեփաննոս հայր Ակնեց անապատիս, ետու գրել զպատմութիւն Տեառն Միխայելի պատրիարքի Ասորւոց, զոր է գրել ծայրաքաղ յԱդամայ մինչեւ 'ի ծնունդն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. և 'ի ծննդենէն Քրիստոսի մինչեւ 'ի Հայոց թուականին ՈՀԸ. և զպատմութիւն Տաթարին, այսինքն ազգին Նետողաց ԽԴ ամաց գործելոց մինչեւ առ մեզ վասն իմանալոյ զանցաւորութիւն սուտ և պատրող կենցաղոյս ընթերցողացդ և լսողացդ. զի ոչ թագաւորութիւն, ոչ իշխանութիւն, ոչ այլ ինչ արարածական մնալոց է յայսմ աշխարհիս, այլ ամենն է ունայնութիւն ունայնութեանց, որպէս ասաց իմաստունն

Սողոմոն, անցանելով և տեսանելով զամենայն կենցաղս սուտ և ոչինչ, խաբող և անցաւոր:

Արդ՝ ես եղկելի գրիչս Գրիգոր, աղաչեմ զպատահեալսդ 'ի սմա, յորժամ ընթեռնուք զարարածապատում պատմութիւնըս, ասացէք՝ Տէր Աստուած ողորմեսցի հօր Ստեփաննոսի առաջնորդի սուրբ ուխտին Ակներոյս և ամենայն ննջեցելոց իւրոց: Ողորմեսցի Քրիստոս Աստուած փակակալ Վարդանայ և ծնողաց իւրոց: Տէր Աստուած ողորմեսցի ամենայն գործաւորաց և սպասաւորաց սրբոյ Ուխտիս, առաջնոցն և միջնոցս, այլ և վերջնոցն որ գալոց են զկնի մեր: Ողորմեսցի Քրիստոս Աստուած Կոստանդ և Սիոն քահանայիցն և համաշունչ եղբարցն որ ըղթաւղոս կոկեցին: Եւ 'ի վերայ այսր ամենայնի յիշեցէք յողորմութիւնն Աստուծոյ զտառապեալ գրիչս, զի բազում աշխատանօք և տկար մարմնով գրեցի : . . Յիշեցէք 'ի Քրիստոս և զպատուական քահանայն զՅովհաննէս, որ զվերջին տետրս գրեաց, զի մեք էաք յոյժ տկար և անխել: Յիշեցէք և զտէր Թադէոս զհայր Աւագ անապատին, որ զօրինակս շնորհեաց: Եւ Քրիստոսի Աստուծոյ մերոյ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբաս եղբայր Եզիտի 342.
Աբաս եղբօրորդի Ապուսահլի 373.
Աբաս որդի խալիֆայի Եգիպտոսի 434.
Աբբասեանք 344*
Աբգար 4. 85. 88. 105. 421.
Աբդիմելէք քուշացի 54.
Աբդլա խալիֆայ 431.
Աբդլա որդի Զոպէիրայ 325.
Աբդլահ (Ապուլ Աբբաս) 345. 346. 350.
Աբդլէհ (Ապու Նուտիլ) 343.
Աբդլմելէք որդի Մրուանայ 326. 329. 330.
Աբդլմենի 431.
Աբդլմումնիք 431. 440.
Աբդոն 38.
Աբէ (Ս) վ. 223.
Աբէլ 4.
Աբէլք. 220.
Աբիա 43.
Աբիա քահանայապետ. 91.
Աբիաթար 41.
Աբիմելէք 22. 26. 37.
Աբիու 55.
Աբիրոն 43.
Աբլաբաս որդի Իսհակայ 384.

Համառօտագիրք. բ. բերդ. դղ. գիւղ. գտ. գետ. գւ. գաւառ. եպ. եպիսկոպոս. լ. լեառն. թգ. թագաւոր. կթ. կաթողիկոս. մգ. մարզպան. պտ. պատրիարք. ս. սուրբ. վդ. վարդապետ. ք. քաղաք.

(*) *Աստղանիշք ցուցանեն զծանօթութիւնս.*

Աբլաբաս որդի Մուքդատեր Պիլլահայ 378 ·
Աբլաբաս (Ապուլ Աբբաս) որդի Մուաֆֆէքայ 377 ·
Աբլաբաս (Ապուլ Սէվուար) 394 ·
Աբունասր (Ապուլ Մանսուր) 377 ։
Աբրահամ 21—26 · 30 · 76 ·
Աբրահամ երէց 233 ·
Աբրահամու (Ս․) վանք 225 ·
Ագաթոն պապ 240 · 241 * 320 ·
Ադամեստր 51 *
Ադարմիշ ամիրա 408 ։
Ադրիպաս 46 ·
Ադամ 2 · 4 · 11 · 15 · 40 · 248 ·
Ադոնիա 41 ·
Ադրիանոս կայսր 116 · 117 ·
Ադրիանոս ծով (Կիլիկիոյ) 363 · 397 ·
Ադրիանուպօլիս 151 * 378 ·
Ազար (Տիգրիս) գետ · 344 ·
Ազատին (Ազզ էտտին) 488 · 501 ·
Ազալ · ք 423 · 478 ·
Աթաբէկեանք 438 ·
Աթանաս եպ · Անաւարզայ 150 ·
Աթանաս մեծ · Ասորւոց 422 ·
Աթանաս որդի Կուժայի 329 ·
Աթանաս պատ · Անտիոքայ 287 · 289 · 291 · 299 · 313 · 338 ·
Աթանաս յոյն պատ · Անտիոքայ 452 ·
Աթանասիոս եպ · 249 · 250 ·
Աթենացիք · 33 · 60 ·
Աթէնք 31 · 32 · 67 · 137 · 357 ·
Աթիոս (թէոփլաս) եպ · 130 · 135 ·
Աթուբան 30 ·
Աթուր }
Աթուրիա } ք · 21 · 23 · 59 · 297 · 343 · 455 ·
Աթուրացիք 11 · 23 · 54 · 62 · 313 · 389 · 474 · 494 ·
Աթրպատ ․ք · 294 · 323 · 325 ·
Աժդահակ 63 *
Ալամանք 433 · 498 · 504 * 524 ·
Ալանք 11 ·

Ալափի (Աղաբիոս) պտ· Անտիոքայ 382·
Ալբասալամ (Ալբ—Արսլան) 398· 400·
Ալէքս կայսր Ա· 401·
Ալէքս » Բ· 486· 489·
Ալէքս փեսայ Հերովդի 97·
Ալէքսանդր 376·
Ալի 323· 377· 431· 434·
Ալինէ (Հեղինէ) կին Յուլիանոսի 138·
Ալիս գտ· 450
Ալիւսան 404·
Ալկիատէ ք· 34·
Ալմիոն 7·
Ալութրաբուլս (Էլեւթերուպոլիս) 159·
Ալփառլ 384·
Ակադմոն ք· 34·
Ակակ եպ· Ամթայ 164·
Ակակ » Մելիտինու 165·
Ակակ պտ· Կ· Պօլսի 211·
Ակակ զօրապետ· 267· 268·
Ակդոն 217·
Ակիւղաս 117·
Ակոլս 33*
Ակրաքանիս 47·
Ահարոն եպ· Աշմուշայ 221·
Ահարոն (Հարուն ամիրայ) 3· 353· 354· 357—359·
Ահարոն որդի Ապուսահլի 374·
Ահերմոն լ· 5·
Ահմատ 375·
Աղապարոս 28·
Աղէքսանդր եպ· Աբէլ քաղաքի 220·
Աղէքսանդր » Երուսաղէմի 120·
Աղէքսանդր » Մնբէճայ 166·
Աղէքսանդր Մամեայ 121·
Աղէքսանդր մեծ 50· 69· 71· 77· 85· 144· 388· 420·
Աղէքսանդր պտ· Աղէքսանդրիոյ 131· 132·
Աղէքսանդրիա 85·

Աղէքսանդրոս որդի Յովնաթանու 84·
Աղէքսանդրոս " Հերովդի 98·
Աղիւոխան 404*
Աղորաս 7։
Աղուբ աւլան 426· 430· 441· 442· 444· 448· 449·
Աղուբ որդի Աբդլայ 431·
Աղուջերմ լ· 521·
Աղուանք 338·
Աղուսին որդի Դանիշմանայ 407·
Աղսարայ ք· 500·
Աղտադաս 28*
Ամաղունք 17·
Ամակարոս 7·
Ամաղեկացի 39·
Ամաղէկ 33· 67·
Ամանոն 7·
Ամասիա 48· 50· 334·
Ամարի } թգ· Երուսաղէմի 447· 450· 452· 462· 467·
Եմրի } 474· 510*
Ամբակում 63· 159·
Ամբիկոս (Անթիմոս) 250·
Ամբրոսիոս եպ· Միլանու 156·
Ամերես 59·
Ամենափիթիս 29*
Ամիթ ք· 138* 216· 223· 256· 411· 448· 488· 491·
Ամինադաբ 39·
Ամիր խաղի 409· 410· 412·
Ամիր Միրան 491·
Ամկողոս45·
Ամփիլիկոս եպ· 160· 205·
Ամմոն 27·
Ամմոնացիք 53·
Ամնափիթիս 29·
Ամուլիոս 52*
Ամոն թգ· Յուդայ 60· 345·
Ամոն ուռհայեցի 249·

Ամուլոս 52 ·
Ամուկասոս (Ամենեմէս) 37 ·
Ամուտոս բ · 422 ·
Ամուտոս (Ամենտաս) 69 ·
Ամուրիա ք· 335 · 342 · 372 · 392 ·
Ամրամ 28 ·
Ամրի 44 ·
Այիթալէս 130 ·
Անանէ դեսպան Աբգարու 106·
Անանէ քահանայապետ · 91 ·
Անանիա եպ · Մերտինոյ 358 ·
Անանիա վրդ · 223 ·
Անանեանց (Ս) վ · 223 · 258 ·
Անաստաս ուռեղայ 201 ·
Անաստաս երէց հերձուածող 164 ·
Անաստաս զօր · 261 ·
Անաստաս կայսր Ա · 2 · 213 · 214 · 218 ·
Անաստաս „ Բ · 334 ·
Անաստասիա (եկեղեցի) 154 ·
Անաստասուպօլիս · տես Տարա ·
Անարքոն ք · 8 ·
Անաւարզա ք · 228 · 423 · 446 ·
Անգէաս մգ · 67 :
Անգղիացիք 499 *
Անգիրիւլոս եպ · Անաւարզայ 219 ·
Անդրէ „ Սամոսատոյ 166 ·
Անդրէաս թգ · Ունկարիոյ 508 *
Անդրոնիկոս զօր · 426 · 445 · 453 · 488 ·
Անդրոնիկոս պատմիչ 21 · 90 ·
Անէս և Ամրէս 29 · 353 ·
Անթապ ք · 430 · 478 · 514 ·
Անթիմոս կայսր 208·
Անթիմոս պտ · Կ · Պօլսի 236 · 241 · 248 ·
Անթիպատրոս 74 ·
Անթիպատրոս հայր Հերովդի 86·
Անթիպատրոս որդի Հերովդի 98·

Անի ք. 442.
Անիաս 38.
Անիանոս աղէքսանդրացի 193.
Անկիւրիա ք. 284. 358. 372.
Անգլիթեր 499.
Անկոս Մարկոս 61*
Անոկտիոս պամփիլացի 179.
Անտիգոնոս թգ. Մակեդոնիոյ 75.
Անտիոք ք. 42. 50. 73. 80. 85. 123. 136. 141. 145. 150. 153. 155. 206. 219. 227. 241. 257. 284. 300. 379. 385. 398. 405. 410. 425. 448. 463* 498.
Անտիոք Պիսիդեայ 334.
Անտիոքոս Ա. 50. 73.
Անտիոքոս Ագրիպաս 83.
Անտիոքոս դաստիարակ Թէոդոսի փոքու 162.
Անտիոքոս Եպիփանէս 80. 81.
Անտիոքոս Կիւզիկոս 84.
Անտիոքոս մեծ 78—81.
Անտիոքոս որդի Աղէքսանդրայ 85. 88.
Անտիոքոս „ Յովնաթանու 84.
Անտիոքոս Սովտեր 75.
Անտոնինոս 87* 91.
Անտոնինոս (Աւենտինոս) 48.
Անտոնինոս կարակալլա 120.
Անտոնինոս Մարկոս 119.
Անտոնինէ եպ. Հալպայ 220.
Անտրոմաքոս (ընիա) 72.
Աշխիմիա եպ. Պարսից 285.
Աշմուշա ք. 371.
Աշուշա 317*
Ապամիա ք. 73. 269. 407.
Ապրթա ք. 399. 410. 418. 450. 451. 502.
Ապողոմէս 33.
Ապողինար եպ. Աղէքսանդրիոյ 251.
Ապողոն 32. 36.
Ապողոն կուռք 86. 142.

Ապողոնիոս 114.

